



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ
1/1(105/1) 2022



Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

1/1 (105/1)
2022

ISBN 1829-1155

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈՒՅԱՆ,
Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ, Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Է.
ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՎԱԴԱՐՇՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝

Ի.Գ.Ք., դոցենտ Ա. Փխրիկյան

Խմբագիր՝

Ս. Խաչատրյան

Տեղեկագրում տպագրվող գիտական հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և չեն նույնանում Մահմանադրական դատարանի պաշտոնական դիրքորոշումների հետ: Մահմանադրական դատարանը պատասխանատվություն չի կրում հոդվածների հեղինակների արտահայտած կարծիքների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1628-1646)

- ԱՂԱՍԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 6-ՐԴ ԵՎ 9-ՐԴ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1628, 1 փետրվարի 2022 թվականի)13
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ27
- ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 23-ՐԴ ՀՈԴԿԱԾԻ 7-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1629, 22 փետրվարի 2022 թվականի)38
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ54
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ա. ԹՈՒՆՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ60
- «ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՊԻ ՀԱՄԱՏԵՂ (ՄԻԱՎՈՐՎԱԾ) ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1630, 25 փետրվարի 2022 թվականի)66
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ71

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎՊԻՐ

- «ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՓՇՏԱԿՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՏԵՐԵՐԻ 25-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ - 1631, 25 փետրվարի 2022 թվականի)81
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ85
- «ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԻ ՄԱՏՁԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ - 1632, 25 փետրվարի 2022 թվականի)97
- ◆ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ103
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՏԵՐԵՐԻ 24-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ - 1633, 25 փետրվարի 2022 թվականի)112
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ119

- 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ԲԵՌԼԻՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ - 1634, 25 փետրվարի 2022 թվականի)129

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ135

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈՐՈՒՄ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈՐՈՒՄՆԵՐԻ
ԾՐԱԳԻՐ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ - 1635, 25 փետրվարի 2022 թվականի)145

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ155

- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-ԻՆ ԵՎ
ՀՈՒՆՎԱՐԻ 18-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ - 1636, 25 փետրվարի 2022 թվականի)165

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ168

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ «ՀԱՆՁՆՄԱՆ ՄԱՍԻՆ» 1957 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴՅՈՒՐԱՑՆԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1637, 15 մարտի 2022 թվականի)178
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ194
- «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՄՅՈՒՄ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1638, 15 մարտի 2022 թվականի)205
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ210
- ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 62-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1639, 15 մարտի 2022 թվականի)220
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԵՎ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ242
- 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ ՎԻԼՆՅՈՒՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ
 ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ «ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ» ՄԱՍԻՆ»
 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
 ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
 ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1640, 18 մարտի 2022 թվականի)265

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
 Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ273
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
 ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆՆԵՐԻ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆՆԵՐԻ ԱՌԱՆՑ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ
 ՓՈԽԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
 ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
 ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
 (ՍԴՈ – 1641, 18 մարտի 2022 թվականի)283
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
 Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ287
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
 ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
 ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
 ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
 ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1642, 18 մարտի 2022 թվականի)297
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
 Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ303

- 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎԻԱՑԻՈՆ ԳՈՏՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1643, 18 մարտի 2022 թվականի)313
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ325
- ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 90-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1644, 22 մարտի 2022 թվականի)335
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ355
- ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
 - ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԵՎ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....367
 - ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....380
- ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 - «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 69-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 11-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1645, 29 մարտի 2022 թվականի)385

- ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 137.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1646, 29 ապրիլի 2022 թվականի)409
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԵՎ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ443
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....457
- ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵՎ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի ԱԺՈ-Օ1-Ա ՈՐՈՇՄԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ-1647, 29 ապրիլի 2022 թվականի)..... 464
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ480
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ-1648, 3 մայիսի 2022 թվականի).....502
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ507
- «ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ԿԱՊԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԱԳԱ

9 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ 1/1 (105/1) 2022 ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ

- ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ-1649, 3 մայիսի 2022 թվականի).....517
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ521
 - ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 80-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 86-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ-1650, 6 մայիսի 2022 թվականի).....531
 - ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԵՎ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ553
 - ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....561
 - 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՅԻ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄԸ ԵՎ ՇԱՀՈՒՅԹՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ԱՌՆԶՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԲԱԶՄԱԿՈՂՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ-1651, 31 մայիսի 2022 թվականի).....568
 - ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ574
 - «ԽԱՂԱՂ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ-1652, 31 մայիսի 2022 թվականի).....584

- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ591
- 2021 թվականի նոյեմբերի 16-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՅԼ ՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ) ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԵԳՐԵԼՈՒ ԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ՈՐՊԵՍ ԵԿԱՄՈՒՏ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՐՅԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ-1653, 31 մայիսի 2022 թվականի).....601
- ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ609

II. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊՈՒՆԻ.....619
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊՈՒՆ ԼԻՆ ԹՐԵՅՍԻԻ ՀԵՏ620
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԴԵՍՊՈՒՆԻՆ.....621

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԷՋԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ.....622
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԴԵՄՊԱՆ ՍԵՐԳԵՅ ԿՈՊԻՐԿԻՆԻՆ.....624

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻՆ.....625
- ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻՆ.....626

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

- ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ.....627

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԵՐ

- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ Է ԿԱՏԱՐԵԼ ՍՏՐԱՍԲՈՒՐԳ.....629

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 1/1 (105/1) 2022



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ԱՂԱՍԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 6-ՐԴ ԵՎ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

1 փետրվարի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Ա. Դանիելյանի (ներկայացուցիչ Ջ. Ապրեսյան),

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսինյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Աղասի Դանիելյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 1/1 (105/1) 2022

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 27-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ին:

Օրենսգրքի «Դատական ակտին ներկայացվող պահանջները» վերտառությամբ 6-րդ հոդվածը սահմանում է.

«1. Դատական ակտը պետք է լինի օրինական:

2. Դատական ակտը պետք է լինի հիմնավորված և պատճառաբանված, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով»:

Օրենսգրքի «Դատական ակտի պատճառաբանվածությունը» վերտառությամբ 9-րդ հոդվածը սահմանում է.

«1. Դատական ակտը պատճառաբանված է, եթե դրանում արտացոլված են ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները:

2. Եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով, ապա դատարանը պարտավոր է դատական ակտում անդրադառնալ գործին մասնակցող անձանց կողմից դատավարական փաստաթղթերում, բանավոր բացատրություններում, հարցերին տրված պատասխաններում ներկայացված բոլոր էական փաստարկներին, վկայակոչված իրավական հիմքերին և ներկայացված ապացույցներին, բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացված փաստարկները կամ իրավական հիմքերն առերևույթ սխալ են, կամ կիրառման է ենթակա հայցային վաղեմության կամ որևէ դատավարական ժամկետ, և այդ փաստարկներին, իրավական հիմքերին կամ ապացույցներին անդրադառնալն անհրաժեշտ չէ տվյալ դատական ակտի կայացման համար:

3. Դատական ակտը չի կարող պատճառաբանվել ենթադրություններով՝ բացառությամբ այնպիսի ենթադրությունների, որոնք թույլատրելի են օրենքում ամրագրված կանխավարկածներով:

4. Դատական ակտը չի կարող պատճառաբանվել վերացական դատողություններով: Դատարանը չի կարող փաստել, որ գործին մասնակցող որևէ անձ չի կատարել որևէ փաստական հանգամանք ապացուցելու պարտականությունը՝ առանց ցույց տալու, թե տվյալ փաստական հանգամանքն ինչ պատճառով չի կարող ապացուցված համարվել գործում առկա ապացույցներով:

5. Այն դեպքում, երբ գործի քննության ընթացքում ծագել է վեճ կիրառման ենթակա նորմի վերաբերյալ, ապա դատական ակտում պետք

է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը»:

Վիճարկվող դրույթներն Օրենսգրքի ընդունումից ի վեր փոփոխությունների կամ լրացումների չեն ենթարկվել:

Գործի քննության առիթը Աղասի Դանիելյանի (այսուհետ՝ դիմող)՝ 2021 թվականի օգոստոսի 16-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴԱՈ-18 որոշմամբ Սահմանադրական դատարանը մասամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 27-րդ հոդվածի 3-րդ մասի, 381-րդ հոդվածի 7-րդ մասի և 397-րդ հոդվածի մասով, կարճել է սույն գործի վարույթը:

Ուսումնասիրելով դիմումը, դրան կից ներկայացված փաստաթղթերը, Դատական դեպարտամենտից ստացված թիվ ԵԴ/19367/02/18 քաղաքացիական գործի նյութերը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթներն ու դրանց հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Գործի դատավարական նախապատմությունը

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննելով թիվ ԵԴ/19367/02/18 քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Աղասի Շավարշի Դանիելյանի ընդդեմ համապատասխանողների, հայցվորի կողմում հանդես եկող և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձի, պատասխանողների կողմում հանդես եկող և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը մասնակի անվավեր ճանաչելու, անվավերության հետևանքներ կիրառելու, իրավունքի պետական գրանցումն ուժը կորցրած ճանաչելու, գումար և դրա նկատմամբ հաշվարկվող տոկոսներ բռնագանձելու, բռնագանձումը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի վրա տարածելու, դրա անբավարարության դեպքում՝ համապատասխանողներին պատկանող այլ գույքի վրա տարածելու վերաբերյալ պահանջների մասին, 2020 թվականի ապրիլի 10-ին վճռել է հայցը բավարարել:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2020 թվականի սեպտեմբերի 29-ին որոշել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին

1/1 (105/1) 2022
◆ ՏԵՂԵՎՈՒԹՅՈՒՆ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ատյանի դատարանի թիվ ԵԴ/19367/02/18 քաղաքացիական գործով 2020 թվականի ապրիլի 10-ի վճիռը բեկանել և փոփոխել՝ հայցը մերժել:

Վճռաբեկ դատարանը 2021 թվականի փետրվարի 17-ին որոշել է թիվ ԵԴ/19367/02/18 քաղաքացիական գործով վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2020 թվականի սեպտեմբերի 29-ի որոշման դեմ Աղասի Դանիելյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել օրենքի միատեսակ կիրառության համար էական նշանակության հիմքի առկայության մասով՝ վճռաբեկ բողոքում նշված փաստարկների հակիրճ շարադրանքից և Օրենսգրքի համապատասխան դրույթների մեջբերումից հետո նշելով. «Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև բողոք բերած անձը որպես բողոքը վարույթ ընդունելու հիմք մատնանշել է օրենքի միատեսակ կիրառության համար Վճռաբեկ դատարանի որոշման էական նշանակություն ունենալու հանգամանքը, սակայն բողոքում ներկայացված հիմնավորումը Վճռաբեկ դատարանը գտնում է ոչ բավարար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված պայմանի առկայությունը հիմնավորված համարելու, ուստիև այդ հիմքով բողոքը վարույթ ընդունելու համար»: Նույն որոշմամբ վճռաբեկ բողոքում մարդու իրավունքների և ազատությունների առերևույթ խախտման հիմքի առկայության մասով Վճռաբեկ դատարանը նշել է. «Վճռաբեկ դատարանի գնահատմամբ սույն գործով բողոք բերած անձի ներկայացրած հիմնավորումները բավարար չեն բողոքարկվող դատական ակտում նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման առկայությունն ու այդ խախտմամբ արդարադատության բուն էության խաթարումը հիմնավորված համարելու համար»:

2. Դիմողի դիրքորոշումը

Դիմողը, սույն սահմանադրաիրավական վեճին վերաբերող մասով ներկայացնելով թիվ ԵԴ/19367/02/18 քաղաքացիական գործի դատավարության պատմության հիման վրա իր փաստարկները, նշում է, որ Վճռաբեկ դատարանը 2021 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ մերժել է ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը՝ առանց նշելու նման եզրահանգման համար հիմք հանդիսացած դատողությունների ընթացքը՝ ըստ էության, չպատճառաբանելով հիշատակված որոշումը: Ըստ Դիմողի՝ Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը չպատճառաբանելու պրակտիկան ակնհայտորեն սահմանափակում է անձի արդար դատաքննության իրավունքը:

3. Պատասխանողի դիրքորոշումը

Ազգային ժողովը (այսուհետ նաև՝ պատասխանող), վկայակոչելով Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի վերաբերելի որոշումները և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ խնդրո առարկա հարցի վերաբերյալ իրավական դիրքորոշումները, առարկել է դիմումին այն բովանդակությամբ, որ դիմողը, ձևականորեն վիճարկելով Օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածների սահմանադրականությունը, բարձրացնում է Վճռաբեկ դատարանի՝ խնդրո առարկա որոշման իրավաչափության հարցը, մինչդեռ դատական ակտի իրավաչափության գնահատումը ենթակա չէ Սահմանադրական դատարանին: Վերոգրյալի լույսի ներքո՝ պատասխանողը խնդրել է սույն գործի վարույթն ամբողջությամբ՝ ներառյալ նաև վիճարկվող իրավական նորմերի մասով, կարճել կամ վիճարկվող դրույթները ճանաչել Սահմանադրությանը համապատասխանող:

4. Սահմանադրաիրավական վեճի շրջանակները

Սահմանադրական դատարանը սույն սահմանադրաիրավական վեճը քննում է Օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածներով նախատեսված դատական ակտերի պատճառաբանվածության պահանջի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումների մասով իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ Սահմանադրության 63-րդ հոդվածին համապատասխանությունը ստուգելու շրջանակում, պարզելով՝

- ա) արդյոք պատճառաբանված դատական ակտի իրավունքը ներառված է Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի ծավալում,
- բ) եթե այո, ապա արդյո՞ք վիճարկվող իրավական նորմերը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումների մասով համապատասխանում են այդ իրավունքի բովանդակությանը և, միաժամանակ, չե՞ն պարունակում արդյոք այդ իրավունքի սահմանափակումներ, իսկ նման սահմանափակումներ պարունակելու դեպքում արդյո՞ք իրավունքի այդ սահմանափակումների նպատակը սահմանադրական է, իսկ ընտրված միջոցը՝ պիտանի, անհրաժեշտ և համարժեք սահմանափակման նպատակին:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը

5.1. 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, (...) արդարության բոլոր պահանջների պահպան-

171 (105/1) 2022
 ♦ ՏԵՂԵՎՈՒԹՅՈՒՆ
 ♦ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

մամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք»: 2005 թվականի նոյեմբերի 27-ին ընդունված փոփոխություններով Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում էր նույնաբովանդակ դրույթ (դատաքննության ողջամիտ տևողության պահանջի մասին լրացմամբ): 2015 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված փոփոխություններով Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

Դատական ակտերի պատճառաբանվածության իրավական պահանջի նպատակներին և այդ պահանջն անտեսելու հետևանքներին անդրադառնալով՝ Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վերադարձնելու լիազորությանը և դրա կիրառմամբ կայացվող որոշմանն առնչվող վերլուծություններում 2007 թվականի ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշմամբ Սահմանադրական դատարանը, մասնավորապես, նշել է. «(...)սույն գործով վիճարկվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետի դրույթը՝ 10-օրյա ժամկետում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման վերաբերյալ, չնայած հետապնդվող անհրաժեշտ նպատակին, առանց այդպիսի որոշման պատճառաբանման նորմատիվ պահանջի չի կարող բավարարել արդարացի հավասարակշռության, որոշակիության, իրավահավասարության և իրավունքի գերակայության իրավական սկզբունքների պայմանները: Սահմանադրական դատարանի գնահատմամբ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարևոր երաշխիք է ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետի դրույթները հստակ չնախատեսելով վճռաբեկ բողոքը վերադարձնելու պատճառաբանման պահանջ, չեն կարող երաշխավորել անձի՝ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը»:

2010 թվականի հունիսի 15-ի ՍԴՈ-896 որոշմամբ անդրադառնալով դատական ակտերի պատճառաբանվածության պահանջին՝ Սահմանադրական դատարանը նշել է. «(...) օրենսդրությունն ընդհանրապես պետք է բացառի չպատճառաբանված դատական ակտի գոյությունը, որովհետև նման ակտը չի կարող համապատասխանել իրավական պետության հիմնարար սկզբունքներին, չի կարող երաշխավորել մարդկանց

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

իրավունքների արդյունավետ դադարակալ պաշտպանություն, ինչպես նաև ապահովել խախտված իրավունքների արդյունավետ վերականգնում»:

5.2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ) ներպետական դատարանների կողմից կայացված որոշումները չպատճառաբանելը ճանաչելով արդար դատական քննության իրավունքի խախտում, նշել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանների կողմից կայացվող որոշումները պետք է ողջամտորեն պարունակեն այդ դատական ակտերի կայացման համար հիմք հանդիսացած պատճառաբանություններ՝ կողմերի լսված լինելու հանգամանքը ցույց տալու, ինչպես նաև արդարադատության իրականացման նկատմամբ հանրային հսկողություն ապահովելու նպատակով (տե՛ս, օրինակ, *Սալովն ընդդեմ Ուկրաինայի* գործով (*Salov v. Ukraine*), թիվ 65518/01, § 89, ՄԻԵԴ 2005-VIII (քաղվածքներ), *Գարսիա Ռուիզն ընդդեմ Իսպանիայի* (*García Ruiz v. Spain*) [ՄՊ], թիվ 30544/96, § 26, ՄԻԵԴ 1999-1):

Դատական ակտի պատճառաբանվածությունը ՄԻԵԴ-ը դիտարկել է որպես արդարադատության պատշաճ իրականացման սկզբունքի պահանջ: Այս պարտականությունը ներառում է առնվազն հստակ անդրադարձ այն հանգամանքներին և փաստարկներին, որոնք կարող են որոշիչ լինել տվյալ գործի համար (տես՝ *Ռուիզ Տորիխան ընդդեմ Իսպանիայի* գործով (*Ruiz Torija v. Spain*), 1994 թվականի դեկտեմբերի 9, § 29-30, Շարք A թիվ 303-A), *Հիգգինսը և այլք ընդդեմ Ֆրանսիայի* գործով (*Higgins and Others v. France*), 1998 թվականի փետրվարի 19, § 42-43, Վճիռների և որոշումների հաղորդումներ 1998-1): Ավելին, այն գործերը, որոնք կարող են առնչվել Կոնվենցիայով նախատեսված իրավունքներին, ՄԻԵԴ-ի մի շարք վճիռներով մանրամասն ուսումնասիրության է ենթարկվել նաև այն հարցը, թե որքանով են դատական ակտերում բերված պատճառաբանությունները եղել բովանդակալից, այլ ոչ՝ ձևական բնույթի (տես, *mutatis mutandis*, *Պարադիսոն և Կամպանելլին ընդդեմ Իտալիայի* գործով (*Paradiso and Campanelli v. Italy*) [ՄՊ], թիվ 25358/12, § 210, 2017 թվականի հունվարի 24)՝ դատական ակտի պատճառաբանվածության սկզբունքի պահպանված լինելու նկատմամբ իրականացնելով բովանդակային վերահսկողություն:

ՄԻԵԴ-ի վերը նշված մոտեցումները դատական ակտերի պատճառաբանվածության պահանջի ընդհանուր կանոններն են, որոնք բարձր (մասնավորապես՝ վճռաբեկ) դատարաններին վերաբերելի մասով մասնա-

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 19

վորեցվել են ըստ այնմ, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը դատական ակտերը վերանայող դատարաններին չի պարտավորեցնում որոշումների պատճառաբանություններում արձագանքել կողմերի ներկայացրած բոլոր փաստարկներին, և, օրինակ, այնպիսի իրավիճակներում, երբ որոշումը վերանայող դատարանները համաձայնում են բողոքարկվող որոշումը կայացրած դատարանների որոշմանը, ապա համապատասխան բողոքները մերժելու մասին որոշումներում ընդունելի են ստորադաս դատարանների իրավական դիրքորոշումների հաստատումները, որպես դատարանի պատճառաբանություն (տես, օրինակ՝ *Գարսիա Ռուիզն ընդդեմ Իսպանիայի* գործով վերը նշված վճիռը, § 26, *Հելլն ընդդեմ Ֆինլանդիայի* գործով (*Helle v. Finland*), 1997 թվականի դեկտեմբերի 19, §§ 59-60, Վճիռների և որոշումների հաղորդումներ 1997-VIII):

Դատական ակտին առաջադրվող պատճառաբանվածության պահանջի կարևորությունն իր որոշումներում ընդգծել է նաև Միավորված ազգերի կազմակերպության միջազգային դատարանը՝ այն դիտարկելով որպես արդար դատաքննության հանրորեն ճանաչված բաղադրիչ և արդարադատության արդյունավետության չափանիշ (տես՝ Միավորված ազգերի կազմակերպության վարչական դատարանի թիվ 158 վճիռի վերանայման գործով միջազգային դատարանի 1973 թվականի հուլիսի 12-ի Խորհրդատվական կարծիք, §§ 92, 95):

5.3. Սահմանադրական դատարանը, վերահաստատելով արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ հանդիսացող դատական ակտի պատճառաբանվածության պահանջի մասին նախկինում արտահայտված դիրքորոշումները, գտնում է, որ Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի սույն բաղադրիչը դատական քննության որակի առաջնային չափանիշ է, իսկ դատական ակտի պատճառաբանության բացակայությունը կասկածի տակ է առնում դատարանի կողմից տվյալ դատական ակտի կայացմամբ արդարադատության նպատակին համահունչ գործունեությունը: Կոնկրետ գործով դատարանի կողմից կայացված դատական ակտի իրավաչափության գնահատման առաջնային չափանիշը, անկախ դատական ակտի նկատմամբ ձևավորված հանրային կարծիքից կամ կողմերի կամ հասարակության կամ դրա մի մասի վերաբերմունքից, տվյալ գործով փաստերի և իրավունքի հարցերի վերաբերյալ դատական ակտի հիմքում ընկած ողջամիտ և համոզիչ պատճառաբանությունն է: Ավելին, դատավարական կողմերի մրցակցող և հակասող շահերի բախման պայմաններում ընթացող դատական վեճերում դատական ակտի պատճառաբանության բացակայությունը նման պատճա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

ռաբանության առկայության իրավական պահանջի պայմաններում կարող է սասանել կողմերի և հանրության վստահությունն առ այն, որ բացակայում են տվյալ դատական ակտը կանխորոշող այլ՝ արդարադատության նպատակների հետ չառնչվող պատճառներ:

Բացի դրանից, դատական ակտի պատճառաբանվածությունը կողմի համար այն արդյունավետորեն բողոքարկելու և նման բողոքարկման հաջողության գնահատականի հիմք է: Այս կապակցությամբ դատական ակտի բողոքարկման ներքո նկատի է առնվում ոչ միայն դատական ակտի եռաստիճան դատական համակարգում բողոքարկման հնարավորությունը՝ փաստերի գնահատման կամ իրավունքի նորմերի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ, այլ նաև դատական ակտի պատճառաբանության մեջ վկայակոչված իրավական նորմերի սահմանադրականության ստուգման հնարավորությունը նման իրավունքն ունեցող անձի՝ Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումով, ինչպես նաև Սահմանադրության 61-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան միջազգային համապատասխան մարմիններ ներկայացվող բողոքին:

Միաժամանակ, դատական ակտի պատճառաբանվածության պահանջն ուղղված է դատարանների կողմից նույնանման գործերով ձևավորվող պրակտիկայի հստակ ուղենիշների ամրագրմանը, որի նպատակն է ապահովել իրավունքի մեկնաբանության և կիրառության կանխատեսելիությունը, բացառել կամայական որոշումների հավանականությունը՝ դատական ակտերի հիմքում ընկած պատճառաբանությունների հրապարակայնության պայմաններում բարձրացնելով դատարանների հաշվետվողականությունը:

Ի վերջո, վերը նշված բոլոր նկատառումներով հանդերձ, և բացի անհատի արդար դատաքննության սահմանադրական իրավունքից և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով (Կոնվենցիայի 6-րդ հոդված, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966 թվականի դեկտեմբերի 16-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի թիվ 2200 A (XXI) բանաձևով հաստատված միջազգային դաշնագրի 14-րդ հոդված) ստանձնած պարտավորության մաս լինելուց, դատական ակտի պատճառաբանվածությունը նաև դատավորի մասնագիտական վարքագծին առաջադրվող և միջազգայնորեն ճանաչված սկզբունք է (տես՝ *ԵԴԽԽ Դատավորների մագնա կարդա* (Հիմնարար սկզբունքներ), 17/11/2010թ., կետ 16):

Սահմանադրական դատարանը, վերահաստատելով դատական ակտերի պատճառաբանված լինելու սահմանադրական հրամայականի

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

վերաբերյալ նախկինում իր արտահայտած վերոհիշյալ դիրքորոշումները, շեշտում է, որ դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է համոզելու, որ դատական ակտի հիմքում ընկած են ոչ թե դատավորների անհատական կամ խմբակային մոտեցումներն ու շահերը, նրանց սուբյեկտիվ վերաբերմունքը վեճի լուծման որևէ տարբերակի նկատմամբ, այլ իրավունքը: Հետևաբար՝ ձախողելով տրամաբանական շղթայի մեջ արտացոլել վեճի լուծման համար նշանակություն ունեցող և կողմերի ներկայացրած փաստի կամ իրավունքի հարցերի վերաբերյալ փաստարկներն ընդունելու կամ մերժելու մասին դատարանի դատողությունների ընթացքը և դրանց եզրահանգումը դատական ակտում՝ վերջինս արդարադատություն իրականացնող հանրային իշխանության ատյանի ակտից վերաձվում է այն հեղինակող դատավորի կողմից վեճի լուծման վերաբերյալ սուբյեկտիվ մոտեցման շարադրանքի՝ վտանգելով Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված՝ անհատի արդար դատաքննության իրավունքը:

5.4. Վերոնշյալի լույսի ներքո վերլուծելով վիճարկվող իրավական դրույթները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դրանցով Օրենսգրքի ընդհանուր՝ հիմնարար դրույթներում նախատեսված է դատական ակտերի պատճառաբանվածության պահանջը՝ որպես քաղաքացիական դատավարությունում դատական ակտին ներկայացվող ընդհանուր պահանջ: Մասնավորապես՝ Օրենսգրքի 6-րդ հոդվածով սույն սահմանադրաիրավական վեճին վերաբերելի մասով նախատեսված է, որ դատական ակտը պետք է լինի հիմնավորված և պատճառաբանված, եթե այլ բան նախատեսված չէ օրենսգրքով (մաս 2), իսկ Օրենսգրքի 9-րդ հոդվածը մանրամասնում է դատական ակտին առաջադրվող պատճառաբանվածության պահանջի բովանդակությունը՝ սահմանելով, որ պատճառաբանվածության պահանջը ներառում է ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները (մաս 1): Օրենսդիրը դատական ակտին ներկայացվող նշյալ պահանջները պարտադիր է համարել բոլոր ատյանների դատարանների համար: Այսինքն՝ ցանկացած ակտ կայացնելիս դատարանը կաշկանդված է դրա պատճառաբանվածությունն ապահովելու օրենսդրական պահանջի սկզբունքով և չի կարող դատական ակտ կայացնել առանց այն պատճառաբանելու, եթե Օրենսգրքով նախատեսված չէ պատճառաբանվածության ընդհանուր պահանջից բացառություն:

Օրենսգրքի՝ դատական ակտերին առաջադրվող պահանջները պարունակող մյուս դրույթներում դատական ակտերի բովանդակությանը

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

վերաբերող հատուկ պահանջներով ավելի մանրամասնված է դատական ակտի պատճառաբանվածության ընդհանուր պահանջների բովանդակությունը (առաջին ատյանի դատարանի վճիռների մասով՝ Օրենսգրքի 192-րդ հոդվածի 4-րդ մաս, 196-րդ հոդվածի 1-ին մաս, և վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում կայացված դատական ակտերի մասով՝ Օրենսգրքի 381-րդ հոդվածի 5-րդ մաս, Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքի քննության արդյունքում կայացված դատական ակտերի մասով՝ 406-րդ հոդվածի 3-րդ մաս)՝ մատնանշելով այդ պահանջի պարտադիր բաղադրիչները: Միաժամանակ, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու, այն վերադարձնելու, վճռաբեկ բողոքը առանց քննության թողնելու և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումների նկատմամբ սահմանված է, որ դրանք պետք է համապատասխանեն Օրենսգրքի 200-րդ հոդվածի պահանջներին, որոնք, ի թիվս այլնի, նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանի կողմից առանձին դատական ակտի ձևով կայացվող որոշումների համար պարտադիր են համարում դրանցում ներառել *«հիմնավորումները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ»*: Այսինքն՝ Օրենսգրքի՝ սույն գործով դիմողի կողմից վիճարկվող, ինչպես նաև Օրենսգրքի որևէ այլ դրույթով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումների պատճառաբանված լինելու ընդհանուր կանոնից որևէ շեղում նախատեսված չէ:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման նկատմամբ դատական ակտի պատճառաբանվածության պահանջի վերը նշված ընդհանուր նկատառումներից բացի, այն ուղղակիորեն կիրառելի է նաև այն հանգամանքի հաշվառմամբ, որ այս որոշմամբ դատավարական կողմը, իր վճռաբեկ բողոքը Օրենսգրքով նախատեսված ընթացակարգային կանոններին համապատասխան ներկայացնելով, սպառում է իր իրավունքի դատական պաշտպանության հնարավորությունը Հայաստանի Հանրապետության եռաստիճան դատական համակարգում՝ այլևս չունենալով իր իրավունքի ենթադրյալ խախտման դեմ դատական պաշտպանության այլ միջոց: Հետևաբար՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման նկատմամբ ուղղակիորեն տարածվում է դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված

արդար դատաքննության իրավունքից բխող՝ պատճառաբանվածության պահանջը, որից որևէ շեղում օրենսդրի կողմից նախատեսված չէ:

Վերը նշվածի հետ մեկտեղ Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ Վճռաբեկ դատարանը, հանդես գալով Սահմանադրության 171-րդ հոդվածով նախատեսված սահմանադրական կարգավիճակով որպես Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյան, որի խնդիրը օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելը և մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելն է, նկատի ունենալով նաև, որ իր սահմանադրական լիազորությունների իրականացման բերումով առերեսվում է դատավարական բողոքների մեծ քանակի և եռաստիճան դատական համակարգում իր քննությանը ներկայացված իրավունքի և փաստի ամենաբարդ հարցերի քննությանը, պետք է բնականորեն ունենա իր կողմից կայացվող վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման պատճառաբանության խորության և ծավալի որոշման լայն հայեցողություն, որը Վճռաբեկ դատարանին կապահովի իր սահմանադրական գործառույթների արդյունավետ իրականացում՝ հաշվի առնելով արդարադատության արդյունավետության համար անհրաժեշտ գործոնների համադրումը:

Ամեն դեպքում, եռաստիճան դատական համակարգում նույնիսկ այլ դատական ատյանների համեմատ առանձին դատական ակտերի ձևով կայացվող որոշումների պատճառաբանվածությանն առաջադրվող պահանջի ապահովման առնչությամբ պատճառաբանությունների ծավալը և խորությունը որոշելու հարցում Վճռաբեկ դատարանին վերապահված լայն հայեցողությամբ հանդերձ, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշմամբ պատճառաբանությունների կամ դատողությունների կամ հիմնավորումների սուկ եզրահանգումների արձանագրումը չի կարող համարվել դատական ակտի պատճառաբանություն, եթե դատական ակտում շարադրված չէ նման եզրահանգման համար հիմք ծառայած դատողությունների ընթացքը:

5.4. Կիրառելով Սահմանադրական դատարանի վերը նշված դիրքորոշումը սույն սահմանադրաիրավական վեճի նկատմամբ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակներում Դատական դեպարտամենտից պահանջված և ստացված թիվ ԵԴ/19367/02/18 քաղաքացիական գործի ուսումնասիրությամբ պարզվում է, որ վիճարկվող դրույթները դիմողի նկատմամբ կիրառվել են այն մեկնաբանմամբ, որ Վճռաբեկ դատարանի 2021 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ՝ որպես դիմողի կողմից ներկայացված վճռաբեկ

բողոքում, ի թիվս այլնի, նշված՝ (1) վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 29-ի որոշման կայացման և հրապարակման հարցում ենթադրյալ խախտումների և այդ կապակցությամբ Վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած դիրքորոշումների կիրառության, (2) վիճարկվող գործարքում դիմողի կողմից վկայակոչված իր շահագրգռության, (3) դիմողի ներկայացրած ապացույցների՝ իր պնդմամբ բավարարության (4) և խնդրո առարկա ապացույցի արժանահավատության, (5) վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից դիմողի ներկայացրած ապացույցներից դիմողի պնդմամբ ընտրողաբար մեկի գնահատման, միաժամանակ՝ մյուսների անտեսման, (6) վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից քննվող վերաքննիչ բողոքի սահմաններից դուրս գալու մասին փաստարկներին ի պատասխան՝ 2021 թվականի փետրվարի 19-ի որոշումը պարունակում է միայն դատական ակտի հնարավոր պատճառաբանության եզրահանգումների արձանագրումն առ այն, որ ներկայացված հիմնավորումները բավարար չեն եղել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հետևության հանգելու համար՝ առանց շարադրելու այդ եզրահանգման հիմքում ընկած դատողությունների ընթացքը: Այսինքն՝ առանց անդրադառնալու դիմողի կողմից վճռաբեկ բողոքում նույն բողոքը վարույթ ընդունելու համար նշված փաստարկների վերաբերելիության և բավարարության մասին Վճռաբեկ դատարանի կողմից 2021 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ կատարված եզրահանգումների իրավաչափությանը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի նկատմամբ դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ Օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածները կիրառվել են այն մեկնաբանությամբ, որ դատական ակտի պատճառաբանությունների փոխարեն այն պարունակում է միայն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի անբավարարության մասին եզրահանգում: Հետևաբար՝ դիմողի գործով Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ վիճարկվող իրավական դրույթները մեկնաբանվել և կիրառվել են Սահմանադրական դատարանի սույն որոշմամբ նախատեսված դիրքորոշումների հիման վրա տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատա-

րանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածները համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանմամբ, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու որոշումը՝ դրա հիմքում դրված եզրահանգման հետ մեկտեղ, պետք է պարունակի նաև դրան հանգեցրած պատճառաբանությունը:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածները դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

1 փետրվարի 2022 թվականի
ՍԴՈ-1628

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ԱՂԱՍԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ 6-ՐԴ ԵՎ 9-ՐԴ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի ՍԴՈ-1628 ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Աղասի Դանիելյանի դիմումի հիման վրա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴՈ-1628 որոշմամբ (հրապարակվել է 2022 թվականի փետրվարի 4-ին) որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածները համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանմամբ, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու որոշումը՝ դրա հիմքում դրված եզրահանգման հետ մեկտեղ, պետք է պարունակի նաև դրան հանգեցրած պատճառաբանությունը (...):»:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴՈ-1628 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են իմ հատուկ կարծիքը՝ որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

Հարկ եմ համարում ընդգծել, որ Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴԱՈ-18 աշխատակարգային որոշմամբ «Աղասի Դանիելյանի դիմումի հիման վրա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 6-րդ և 9-րդ հոդվածների, 27-րդ հոդվածի 3-րդ մասի, 381-րդ հոդվածի 7-րդ մասի և 397-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասնակի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 27-րդ հոդվածի 3-րդ մասի, 381-րդ հոդվածի 7-րդ մասի և 397-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու մասով, կարճվել է:

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասից հետևում է, որ Սահմանադրական դատարանի դատավորի կողմից հատուկ կարծիք կարող է ներկայացվել օրենքների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ կայացվող որոշումների կապակցությամբ: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴԱՌ-18 աշխատակարգային որոշման՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածին վերաբերող մասը, իմ գնահատմամբ, անմիջականորեն կապված է Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴՌ-1628 որոշման հետ (հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 9-րդ և 397-րդ հոդվածների կարգավորման առարկաները), սույն հատուկ կարծիքում ՍԴՌ-1628 որոշման պատճառաբանություններին և եզրահանգումներին անդրադարձ կկատարվի ՍԴԱՌ-18 աշխատակարգային որոշման՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածին վերաբերող մասի հետ համակցության մեջ:

1. Հայաստանի Հանրապետությունում 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ներդրվեց անհատական սահմանադրական դիմումի (գանգատի) ինստիտուտը, որը ֆիզիկական և իրավաբանական անձանց համար ապահովեց սահմանադրական արդարադատության անմիջական հասանելիություն: Նշված ինստիտուտը Սահմանադրությունում տեղ գտավ նաև 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Միաժամանակ ներկայումս Սահմանադրական դատարան դիմում (գանգատ) ներկայացնելու իրավունքի իրականացման և դրա հիման վրա գործի քննության կանոնները սահմանված են Սահմանադրությամբ (168-րդ և 169-րդ հոդվածներ) և դրա հիման վրա ընդունված «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով: Հետևաբար վերոնշյալ իրավունքն անձի կողմից չի կարող իրականացվել ցանկացած միջոցի և ընթացակարգի ընտրությամբ, այլ այն կարող է իրականացվել բացառապես Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով ամրագրված կարգավորումների շրջանակում:

Այսպես՝ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերը նշված կարգավորումից հետևում է, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից Սահմանադրական դատարան անհատական դիմումի ներկայացումը թույլատրվում է, եթե, ի թիվս այլ պահանջների, այն վերաբերում է նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությանը՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումում առկա հիմնավորումները պետք է վերաբերեն վերջնական դատական ակտով դիմողի նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի՝ Սահմանադրությանն անհամապատասխանությանը, իր՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների խախտմանը, ինչպես նաև դրանց միջև պատճառահետևանքային կապի առկայությանը:

Փաստորեն, Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է ոչ թե ամբողջական, այլ՝ նորմատիվ սահմանադրական գանգատի ինստիտուտը, ինչը, մասնավորապես, ենթադրում է, որ թեև սահմանադրական գանգատը կապված է կոնկրետ գործի հետ, **սակայն այն կարող է միայն վերաբերել դատական ակտի հիմքում ընկած նորմատիվ իրավական ակտի, և ոչ թե դատական ակտի սահմանադրականությանը:** Հետևաբար անձը չի կարող Սահմանադրական դատարանի առջև բարձրացնել, իսկ վերջինս էլ իրավասու չէ անդրադառնալ նորմատիվ իրավական ակտի կիրառման իրավաչափության հարցին¹:

Վերոգրյալով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանում ենթակա չեն քննության նաև անհատական այն դիմումները, որոնք կապված են ոչ թե վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցի հետ, այլ վերաբերում են դրանց կիրառման իրավաչափության հարցին, նույնիսկ եթե դիմողը Սահմանադրական դատարանին ըստ ձևի ներկայացնում է վիճարկվող դրույթները՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ Սահմանադրությանը հակասող ճանա-

¹ Առավել մանրամասն՝ տե՛ս, օրինակ, European Commission for Democracy through Law (Venice Commission), Revised report on individual access to constitutional justice, CDL-AD(2021)001, 22.02.2021.

չելու խնդրանք¹: Ընդ որում, Սահմանադրական դատարանն իր հերթին կրում է պարտականություն՝ չանդրադառնալու վիճարկվող դրույթների կիրառման իրավաչափության հարցին:

Նման պայմաններում Սահմանադրական դատարանի կողմից նորմատիվ իրավական ակտի դրույթի կիրառման իրավաչափության հարցի քննարկման դեպքում Սահմանադրական դատարանը կստանձնի դատական ակտ վերանայող դատական ատյանի գործառույթ՝ դառնալով Վճռաբեկ դատարանի վերադաս՝ չորրորդ դատական ատյան, ինչը ոչ միայն չի բխում Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի կարգավորումներից, այլև փաստացի կվերացնի Սահմանադրական դատարանի և եռաստիճան դատական համակարգում ներառված դատարանների գործառույթների տարանջատումը:

Տվյալ դեպքում Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածների առնչությամբ դիմողը նշել է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի առանձին հոդվածում ուղղակիորեն ներկայացրել է դատական ակտի պատճառաբանվածության էությունը և նշել, որ այդ չափանիշին համապատասխանելու համար դատական ակտը պետք է արտացոլի ապացույցների գնահատման, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները: Օրենսդիրը սահմանել է դատական ակտի պատճառաբանվածության հասկացությունը, և այն պետք է պահպանվի նաև Վճռաբեկ դատարանի կողմից որոշումներ կայացնելիս: Օրենսդիրը նման կերպ փորձել է ապահովել յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքը, որը տվյալ պարագայում գործող իրավակիրառ պրակտիկայում ուղղակիորեն չի պահպանվում (դիմումի 17-րդ և 18-րդ էջեր):

Վերոգրյալից հետևում է, որ տվյալ դեպքում դիմողի կողմից Սահմանադրական դատարանի առջև բարձրացվող խնդիրն իրականում վերաբերում է Վճռաբեկ դատարանի կողմից նորմատիվ իրավական ակտի դրույթների կիրառությանը: Մասնավորապես՝ դիմողը, ուղղակիորեն փաստելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում դատական ակտերի պատճառաբանվածության պահանջի առկայությունը, պնդում է, որ նշված պահանջը Վճռաբեկ դատարանի կողմից իր գործով

¹ Տե՛ս, օրինակ, Սահմանադրական դատարանի 22.11.2011 թվականի ՍԴՈ-998, 19.05.2015 թվականի ՍԴՈ-1205, 11.04.2017 թվականի ՍԴՈ-1361 որոշումները, 17.03.2009 թվականի ՍԴԱՈ-21, 22.02.2019 թվականի ՍԴԱՈ-17 աշխատակարգային որոշումները:

չի պահպանվել: Այլ կերպ՝ դիմողը, չհամաձայնելով իր մասնակցությամբ գործով վիճարկվող դրույթի կիրառմամբ Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշմանը, այն համարելով չպատճառաբանված (ի հակադրումն օրենքի պահանջների), ըստ էության քողարկված ձևով բարձրացնում է այնպիսի խնդիր, որը վերաբերում է ոչ թե նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությանը, այլ՝ Վճռաբեկ դատարանի դատական ակտի օրինականության, այդ դատական ակտով նորմատիվ իրավական ակտի դրույթների կիրառման իրավաչափության հարցին:

Փաստորեն, դիմողը, Սահմանադրական դատարանին ըստ ձևի ներկայացնելով վիճարկվող դրույթները՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ Սահմանադրությանը հակասող ճանաչելու խնդրանք, ըստ էության բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց, ինչը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, **Սահմանադրական դատարանում քննության ենթակա հարց չէ:**

2. Նման պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանը, քննելով սույն գործը, ըստ էության քննարկման առարկա է դարձրել Վճռաբեկ դատարանի կողմից կայացված «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշման՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ուղղակիորեն ամրագրված դատական ակտի պատճառաբանվածության պահանջին համապատասխանությունը: Դրա մասին են վկայում, ի թիվս այլնի, Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1628 որոշման մեջ տեղ գտած հետևյալ դատողությունները.

- «(...) ցանկացած ակտ կայացնելիս դատարանը կաշկանդված է դրա պատճառաբանվածությունն ապահովելու օրենսդրական պահանջի սկզբունքով և չի կարող դատական ակտ կայացնել առանց այն պատճառաբանելու, եթե [ՀՀ քաղաքացիական դատավարության] օրենսգրքով նախատեսված չէ պատճառաբանվածության ընդհանուր պահանջից բացառություն»,

- «(...) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու, այն վերադարձնելու, վճռաբեկ բողոքը առանց քննության թողնելու և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումների նկատմամբ սահմանված է, որ դրանք պետք է համապատասխանեն [ՀՀ քաղաքացիական դատավարության] օրենսգրքի 200-րդ հոդվածի պահանջներին, որոնք, ի թիվս այլնի, նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանի կողմից առանձին դատական ակտի ձևով կայացվող որոշումների համար պարտադիր են համարում դրանցում ներառել *«հիմնավորումները,*

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 31

որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ»,

- «(...) [ՀՀ քաղաքացիական դատավարության] օրենսգրքի՝ սույն գործով դիմողի կողմից վիճարկվող, ինչպես նաև [ՀՀ քաղաքացիական դատավարության] օրենսգրքի որևէ այլ դրույթով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումների պատճառաբանված լինելու ընդհանուր կանոնից որևէ շեղում նախատեսված չէ»:

Վերոգրյալից հետևում է, որ Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1628 որոշմամբ ևս ուղղակիորեն փաստել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված է դատական ակտերը պատճառաբանելու պահանջ և միաժամանակ արձանագրել, որ այդ պահանջն օրենքը կիրառելի է համարում նաև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումների դեպքում: Վերոգրյալից հետևում է, որ Սահմանադրական դատարանն ըստ էության գնահատական է տվել կոնկրետ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտը պատճառաբանելու օրենսդրական պահանջը պահպանելու հարցին, որը չի բխում Սահմանադրությամբ ամրագրված՝ Սահմանադրական դատարանի լիազորություններից:

Ավելին, ՍԴՈ-1628 որոշմամբ Սահմանադրական դատարանի կողմից բացառապես նորմատիվ իրավական ակտի դրույթի կիրառման իրավաչափությանն անդրադառնալու հանգամանքի մասին է վկայում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածներին Սահմանադրական դատարանի կողմից տրված մեկնաբանությունը:

Այսպես՝ Սահմանադրական դատարանը որոշման եզրափակիչ մասում նշել է, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածները համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանմամբ, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու որոշումը՝ դրա հիմքում դրված եզրահանգման հետ մեկտեղ, պետք է պարունակի նաև դրան հանգեցրած պատճառաբանությունը»:

Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական ակտը պետք է լինի հիմնավորված և պատճառաբանված, եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքով: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածում բացահայտվում է դատական ակտի պատճառաբանվածության բովանդակությունը: Մասնավորապես՝ նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ակտը պատճառաբանված է, եթե դրանում արտացոլված են ապացույցների գնահատման, փաստերի

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 1/1 (105/1) 2022

հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելը» վերտառությամբ 397-րդ հոդվածի ուսումնասիրությունից հետևում է, որ այն նույն օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատճառաբանվածության պահանջից որևէ բացառություն չի նախատեսում: Սակայն նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ (...) Վճռաբեկ դատարանի որոշումը պետք է բավարարի նույն օրենսգրքի 200-րդ հոդվածով սահմանված պահանջները: Միաժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է, որ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն հիմնավորումները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ:

Վերոգրյալից հետևում է, որ օրենսդիրն ամրագրել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումների պատճառաբանված լինելու պահանջ, որպիսի օրենսդրական կարգավորման առկայությունը ՍԴԴ-1628 որոշմամբ փաստել է նաև Սահմանադրական դատարանը: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ գործող իրավակարգավորումների համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման պատճառաբանումը ենթադրում է, որ Վճռաբեկ դատարանը, իր որոշման մեջ վկայակոչելով համապատասխան օրենքներն ու այլ իրավական ակտերը, պետք է նշի իր հետևությունների հիմքում ընկած հիմնավորումները:

Տվյալ դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածներին Սահմանադրական դատարանի կողմից տրված մեկնաբանությունը դիտարկելով վերը վկայակոչված իրավական նորմերի լույսի ներքո՝ կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իր որոշման եզրափակիչ մասում ըստ էության վերարտադրել է այն, ինչն արդեն իսկ օրենքով ուղղակիորեն ամրագրված է: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածը, որին հղում է կատարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշմանը վերաբերող 397-րդ հոդվածի 2-րդ մասը, արդեն իսկ դատարանին պարտավորեցնում է դատական ակտում նշել այն հիմնավորումները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ:

ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄԻ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ Սահմանադրական դատարանը ոչ թե մեկնաբանել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածները, այլ ընդամենը վերարտադրել է հենց ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում արդեն իսկ ամրագրված կանոնը: Նշվածը ևս վկայությունն է այն իրողության, որ Սահմանադրական դատարանն ըստ էության ստուգել է ոչ թե վիճարկվող դրույթների սահմանադրականությունը, այլ Վճռաբեկ դատարանի որոշման համապատասխանությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումներին:

Ընդ որում, հարկ եմ համարում նաև ընդգծել, որ դատական ակտի պատճառաբանվածության գնահատումը սուբյեկտիվ ընկալման տիրույթում է: Որևէ անձի կամ մարմնի կողմից պատճառաբանված համարվող դատական ակտը մեկ այլ անձի կամ մարմնի կողմից կարող է որակվել ոչ բավարար չափով պատճառաբանված կամ որևէ կերպ չպատճառաբանված: Ուստի նշված տիրույթում դատողություններ կատարելով, որպիսի պարագայում գնահատական տալով Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության աստիճանին՝ Սահմանադրական դատարանը դուրս է գալիս իր առաքելության դաշտից:

3. Միաժամանակ ընդունելի չեմ համարում սույն գործի շրջանակում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածները Սահմանադրական դատարանի կողմից մեկնաբանելն ընդհանրապես: Հարկ եմ համարում ընդգծել, որ նշված դրույթները ներառված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի «Հիմնական դրույթներ» վերտառությամբ գլխում և որպես հիմնական դրույթ ամրագրում են դատական ակտի պատճառաբանվածության պահանջը (6-րդ հոդված) և բացահայտում դրա բովանդակությունը (9-րդ հոդված): Օրենսդիրը նշված պահանջը մանրամասնում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ առանձին դատական ակտերին վերաբերող դրույթներում, տվյալ դեպքում՝ 200-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում՝ փոխկապակցված 397-րդ հոդվածի 2-րդ մասի հետ:

Մինչդեռ Սահմանադրական դատարանը 2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴԱՈ-18 աշխատակարգային որոշմամբ կարճել է սույն գործի վարույթը նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի մասով՝ Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը ենթադրաբար չպատճառաբանելու վերաբերյալ դիմողի բարձրացրած խնդիրը համարելով նշված դրույթի կարգավորման առարկայից դուրս և արձանագրելով, որ այն ենթակա է

քննության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 6-րդ և 9-րդ հոդվածների սահմանադրականության ստուգման շրջանակում:

Նախ՝ կարծում եմ, որ պարզ չէ, թե ինչպես է Սահմանադրական դատարանը եկել այն եզրահանգման, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման պատճառաբանվածության հարցը դուրս է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի կարգավորման առարկայից այն դեպքում, երբ նշված հոդվածի 2-րդ մասն է սահմանում (հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածին), թե ինչ պահանջների պետք է համապատասխանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը: Իմ գնահատմամբ՝ քննարկվող որոշումների պատճառաբանվածության հարցը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով, ուստի տվյալ դեպքում ներկայացված դիմումի հիման վրա գործի ըստ էության քննության դեպքում անընդունելի եմ համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածներից նույն օրենսգրքի 397-րդ հոդվածի առանձնացումը և այդ մասով սույն գործի վարույթի կարծումը Սահմանադրական դատարանի նշած պատճառաբանություններով առ այն, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման պատճառաբանվածության հարցը դուրս է նշված դրույթի կարգավորման առարկայից:

Ավելին, հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 9-րդ և 397-րդ հոդվածների կարգավորման առարկաները՝ գտնում եմ, որ նույնիսկ եթե Սահմանադրական դատարանը դիմողի կողմից բարձրացված խնդրի շրջանակում անհրաժեշտ էր համարում մեկնաբանել համապատասխան դրույթը, ապա դա կարող էր լինել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ոչ թե 6-րդ կամ 9-րդ հոդվածը, այլ՝ հենց նույն օրենսգրքի 397-րդ հոդվածը: Վերոգրյալ եզրահանգումը բխում է այն հանգամանքից, որ ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածների, որոնք վերաբերում են քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործերի շրջանակում կայացվող ցանկացած դատական ակտի (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով այլ բան նախատեսված չլինելու դեպքում), նույն օրենսգրքի 397-րդ հոդվածը վերաբերում է միայն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշմանը ներկայացվող պահանջներին, որոնց թվին է դասվում դրա պատճառաբանվածության պահանջը: Կարծում եմ, որ նման պայմաններում սույն որոշմամբ Սահմանադրական դատարանի կողմից տրված մեկնաբա-

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 35

նությունը կարող էր վերաբերել¹ ոչ թե ընդհանուր, այլ հատուկ նորմին, տվյալ դեպքում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 2-րդ մասին:

4. Ամփոփելով սույն հատուկ կարծիքում ներկայացված դիրքորոշումները՝ կարծում եմ, որ սույն գործի վարույթը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ինչպես 6-րդ և 9-րդ հոդվածների, այնպես էլ 397-րդ հոդվածի մասով, անհրաժեշտ էր կարճել՝ դիմումում առաջադրված հարցերը Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ և 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Մինչդեռ Սահմանադրական դատարանը, ներկայացված դիմումի հիման վրա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածների մասով քննելով սույն գործը, ըստ էության անդրադարձել է վիճարկվող դրույթների կիրառման իրավաչափության հարցին՝ գնահատական տալով Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման՝ ընդհանրապես որևէ պատճառաբանություն ունենալու կամ չունենալու հարցին, արդյունքում և քննարկելով Վճռաբեկ դատարանի գործողության իրավաչափությունը, որպիսի իրավասություն Սահմանադրական դատարանին տրված չէ:

Սույն դիրքորոշման հիմքում ընկած են նաև այն բազմաթիվ դեպքերը, երբ Սահմանադրական դատարանի առջև բարձրացվել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու կամ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումների պատճառաբանվածության հարց, սակայն Սահմանադրական դատարանում այն ըստ էության չի քննվել՝ Վճռաբեկ դատարանի որոշման իրավաչափության, դրանով օրենքի պահանջները պահպանված լինելու հարց բարձրացված լինելու հիմնավորմամբ²: Հասկանալի է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումների պատճառաբանվածության հարցը որոշ գործերով բարձրացվել է հենց ներկայումս գործող ՀՀ

¹ Սույն գործի ըստ էության քննության իրավական հնարավորության հարցին, ինչպես նաև Սահմանադրական դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածներին տրված մեկնաբանությանը բովանդակային առումով արդեն իսկ անդրադարձ կատարվել է սույն հատուկ կարծիքի 1-ին և 2-րդ կետերում:

² Տե՛ս, օրինակ, ի թիվս այլնի, Սահմանադրական դատարանի 21.07.2009 թվականի ՍԴՈ-817, 28.07.2009 թվականի ՍԴՈ-818 որոշումները, Սահմանադրական դատարանի դատական կազմի 10.12.2013 թվականի ՍԴԴԿՈ/1-31, 17.05.2019 թվականի ՍԴԴԿՈ-23, 29.05.2019 թվականի ՍԴԴԿՈ-26 որոշումները:

ՍԱԳՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 1/1 (105/1) 2022


քաղաքացիական դատավարության օրենսգրքի համադրությամբ, սակայն այն ևս Սահմանադրական դատարանում ըստ էության քննության առարկա չի դարձել¹:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

10 փետրվարի 2022թ.

¹ Տե՛ս, օրինակ, Սահմանադրական դատարանի դատական կազմի 10.02.2020 թվականի ՍԴԴԿՈ-6, 06.08.2021 թվականի ՍԴԴԿՈ-50, 25.08.2021 թվականի ՍԴԴԿՈ-54 որոշումները:



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ 23-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 7-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

22 փետրվարի 2022թ.

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Մարդու իրավունքների պաշտպան Ա. Թաթոյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսինյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ և 68-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի՝

Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Հիմնադրամների մասին» օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի դեկտեմբերի 26-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2003 թվականի հունվարի 31-ին և ուժի մեջ է մտել 2003 թվականի փետրվարի 22-ին:

Օրենքի՝ «Հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը, նրանց ընտրության կարգը» վերտառությամբ 23-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է.

«7. Եթե հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամների լիազորությունների դադարման դեպքում երկամսյա ժամկետում հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը երկամսյա ժամկետում նշանակում է 3 անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ:

Ժամանակավոր խորհուրդը պարտավոր է քայլեր ձեռնարկել սույն օրենքով սահմանված կարգով հոգաբարձուների խորհրդի կազմի համալրման համար:

Ժամանակավոր խորհուրդն իրավասու է՝

1) իրականացնելու հիմնադրամի գործունեությունը շարունակելուն ուղղված՝ սույն օրենքով հոգաբարձուների խորհրդին վերապահված լիազորություններ.

2) դիմելու դատարան՝ հիմնադրամը լուծարելու համար:

Եթե ժամանակավոր խորհուրդ նշանակելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա ժամանակավոր խորհուրդը պարտավոր է դիմել դատարան՝ հիմնադրամը լուծարելու համար»:

Վիճարկվող հոդվածը լրացվել, խմբագրվել և փոփոխության է ենթարկվել 2007 թվականի փետրվարի 26-ի ՀՕ-109-Ն օրենքով:

Գործի քննության առիթը Մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Դիմող)՝ 2021 թվականի հուլիսի 16-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, վերլուծելով Օրենքը և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը, ինչպես նաև դրանց կամ վիճարկվող օրինադրույթների հետ փոխկապակցված այլ օրինադրույթներ՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը պնդում է, որ Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասն այնքանով, որքանով հաշվի չի առնում հիմնադրամի կարգավիճակ ունեցող բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության առանձնահատկությունները և բուհերի ինքնակառավարման իրավունքը, հակասում է Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, ինչպես նաև 78-րդ և 81-րդ հոդվածներին:

Դիմողը փաստում է, որ օրենսդիրը, վիճարկվող դրույթում ամրագրելով երեք անդամից կազմված և Արդարադատության նախարարի կողմից նշանակվող ժամանակավոր խորհրդի ստեղծման իրավական հնարավորություն, ինչպես նաև ժամանակավոր խորհրդի գործառույթների լայն շրջանակ, հաշվի չի առել բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը, ներառյալ՝ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը, ինչը հանգեցրել է խնդրո առարկա իրավունքի անհամաչափ սահմանափակման:

Դիմողի գնահատմամբ վիճարկվող դրույթն անտեսում է կրթության սահմանադրական իրավունքի պարտադիր բաղադրիչ բուհերի ինքնակառավարման իրավունքը և չի ապահովում դրա երաշխավորման համար անհրաժեշտ և բավարար չափանիշներ կամ կանոններ:

Երևանի պետական համալսարանի օրինակով Դիմողը պնդում է, որ Կառավարության կողմից Օրենքի վիճարկվող դրույթների գործադրման արդյունքում՝

- 1) ժամանակավոր խորհուրդը ձևավորված է Արդարադատության նախարարի հրամանով,
 - 2) գոյություն չունեն խորհրդի կազմի ձևավորման չափանիշներ, խորհրդի անդամներին ներկայացվող պահանջներ,
 - 3) ամրագրված չեն խորհրդի կազմի համամասնության ու ներկայացվածության պահանջները, գործունեության սկզբունքները,
 - 4) խորհուրդը կարող է իրականացնել այն լիազորությունները, որոնք օրենքով վերապահված են հոգաբարձուների խորհրդին,
 - 5) Արդարադատության նախարարի կողմից միանձնյա ձևավորվող խորհուրդն օժտված է նույն գործիքակազմով, ինչ հոգաբարձուների խորհուրդը, այդ թվում՝ բուհերի կառավարման և հետագա գործունեությանն առնչվող ռազմավարական նշանակության հարցեր որոշելու տեսանկյունից:
- Վերլուծելով Կառավարության՝ բուհական գործունեության ոլորտում իրականացվող նախաձեռնությունները՝ Դիմողն արձանագրում է, որ նման պայմաններում բուհի հոգաբարձուների խորհրդի լիազորությունները Արդարադատության նախարարի կողմից ձևավորվող ժամանակավոր խոր-

հրդին վերապահելը՝ առանց հաշվի առնելու կրթության ոլորտի հիմնադրամների գործունեության սահմանադրական երաշխիքներն ու առանձնահատկությունները, ակնհայտ է դարձնում Սահմանադրությամբ երաշխավորված կրթության իրավունքի պարտադիր բաղադրիչի՝ բուհական ինքնակառավարման իրավունքի նկատմամբ գործադիր իշխանության բարձրագույն մարմնի կամայական միջամտության բարձր աստիճանը:

Հետազոտության առարկա դարձնելով կրթության ոլորտի մի շարք միջազգային փաստաթղթեր, այդ թվում՝ «Magna Charta Universitatum»-ը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսական կազմի կարգավիճակի վերաբերյալ հանձնարարականը, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) «Բարձրագույն կրթության ոլորտում կառավարման և որակի ուղեցույցները»՝ Դիմողը գտնում է, որ բուհական ինքնակառավարումը, այդ թվում՝ ինքնավարությունը, առանցքային դերակատարություն ունի բուհական համակարգի պատշաճ կազմակերպման և արդյունքում՝ կրթության իրավունքի երաշխավորման համար: Ինքնավարության բովանդակությունը ներառում է նաև կառավարման ինքնուրույնությունը, ինչը, Դիմողի եզրահանգմամբ, թիրախավորվում է սույն դիմումով վիճարկվող կարգավորումներով:

Ամփոփելով իր դիրքորոշումը՝ Դիմողը խնդրում է.

«...Որոշել «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, 78-րդ և 81-րդ հոդվածներին»:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ Պատասխանող), վերլուծելով Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը և ներկայացնելով Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1608 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, նշում է, որ գործող կարգավորումը վերաբերելի է միայն որոշակի կոնկրետ իրավիճակներին, երբ առկա է հիմնադրամի աշխատանքների բնականոն ընթացքի խաթարման վտանգ, ուստի միանգամայն արդարացված է նման իրավիճակներում ժամանակավոր խորհրդի ձևավորման իրավասությամբ արդարադատության նախարարին օժտելը:

Անդրադառնալով Դիմողի մտահոգությանն առ այն, որ ժամանակավոր խորհուրդն օժտված է նույն գործիքակազմով, ինչ հոգաբարձուների խորհուրդը, Պատասխանողը պնդում է, որ ժամանակավոր խորհուրդն ուղղակիորեն չի կարող մշտապես գործել, քանզի տվյալ մարմնի նպա-

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 41

տակը հոգաբարձուների խորհրդի կազմի համալրումն է, իսկ այդ ժամանակահատվածում հիմնադրամի գործունեության անխափան ընթացքն ապահովելու նպատակով ժամանակավոր խորհուրդը պետք է իրականացնի նույն գործունեությունը, ինչ հոգաբարձուների խորհուրդը:

Պատասխանողի գնահատմամբ ժամանակավոր խորհրդի՝ լիազոր մարմնի ղեկավարի կողմից նշանակումն ինքնին որևէ կերպ չի կարող ընկալվել որպես լիազոր մարմնից կախվածության հիմք և անկաշկանդ գործելու խոչընդոտ:

Պատասխանողը գտնում է, որ Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի նպատակն է բացառել հիմնադրամի բնականոն գործունեության խաթարման ցանկացած վտանգ՝ ձեռնարկելով իրավիճակից բխող կոնկրետ միջոցառումներ:

Ամփոփելով իր դիրքորոշումը՝ Պատասխանողը խնդրում է սույն գործով վիճարկվող դրույթը ճանաչել Սահմանադրությանը համապատասխանող:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքներ

Սույն գործով սահմանադրաիրավական վեճը հանգում է հիմնադրամի կարգավիճակ ունեցող բարձրագույն ուսումնական հաստատությունների ժամանակավոր խորհուրդների ձևավորման և իրավասության շրջանակի սահմանման իրավական կառուցակարգերի՝ կրթության իրավունքի պարտադիր բաղադրիչ հանդիսացող բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքին անհամապատասխանության հիմնախնդրին՝ պայմանավորված այն իրողությամբ, որ հիմնադրամի ժամանակավոր խորհրդի կազմը ձևավորելիս և իրավասությունների շրջանակը սահմանելիս գործող իրավակարգավորումները հաշվի չեն առնում հիմնադրամի կարգավիճակ ունեցող բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը, ներառյալ՝ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը, ինչը հանգեցնում է կրթության սահմանադրական իրավունքի անհամաչափ սահմանափակման:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը սույն գործով քննության առարկա է համարում Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասը և դրա համապատասխանությունը Սահմանադրությանը գնահատում է Սահմանադրության 15-րդ հոդվածի 1-ին մասի, 38-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 78-րդ և 80-րդ հոդվածների հիման վրա:

Սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

▪ արդյո՞ք Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասն այնքանով, որքանով չի նախատեսում **հիմնադրամի կարգավիճակ ունեցող բարձրագույն ուսումնական հաստատությունների ժամանակավոր խորհուրդների ձևավորման և իրավասության շրջանակի սահմանման հատուկ իրավա-կարգավորում**, ոչ իրավաչափորեն սահմանափակում է կրթության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը, ներառյալ՝ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը՝ խաթարելով Սահմանադրությամբ երաշխավորված համաչափության սկզբունքը,

▪ արդյո՞ք Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասն այնքանով, որքանով վեցամսյա ժամկետում հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չնշանակվելու դեպքում **ժամանակավոր խորհրդին պարտավորեցնում է հիմնադրամը լուծարելու համար դիմել դատարան, չի հանգեցնում բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքի խախտման:**

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի շրջանակներում նախևառաջ բացահայտել և գնահատել բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ որպես կազմակերպությունների հիմնադրման և դրանց կառավարման ոլորտի նորմատիվ-իրավական կարգավորումների առանձնահատկությունները:

Բարձրագույն ուսումնական հաստատության ինքնակառավարման սահմանադրական իրավունքի կարևոր երաշխիքը կազմակերպաիրավական այն ձևն է, որով հիմնադրվում և պետականորեն գրանցվում է այն: Հայաստանի Հանրապետությունում միասնական իրավական կարգավորումների բացակայության հետևանքով բուհերն ունեն էականորեն տարբերվող կազմակերպաիրավական ձևեր: Մասնավոր բուհերի գերակշիռ մասը գրանցված է որպես առևտրային իրավաբանական անձ: Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները մինչև 2014 թվականն ունեին պետական ոչ առևտրային իրավաբանական անձի կարգավիճակ: Դրանից հետո պետական բուհերի մի մասը վերակազմավորվեց հիմնադրամների կազմակերպաիրավական ձևի:

Բարձրագույն կրթության համակարգն աչքի է ընկնում ոչ միայն գործող բուհերի կազմակերպաիրավական ձևերի զանազանությամբ, այլև բուհերի կառավարման համակարգը կարգավորող օրենքների բազմազանությամբ: Պետական ոչ առևտրային կազմակերպության կազմակերպաիրավական ձև ունեցող բուհերը հիմնադրվում են «Պետական ոչ առևտրային կազմա-

կերպությունների մասին» 23.10.2001 թ. ընդունված օրենքի, իսկ հիմնադրամի կարգավիճակ և կազմակերպական իրավական ձև ունեցող բուհերը՝ «Հիմնադրամների մասին» օրենքի հիման վրա: Բարձրագույն ուսումնական մասնավոր հաստատությունները, որպես կանոն, ունեն առևտրային իրավաբանական անձի կազմակերպաիրավական ձև, ուստի նրանց հիմնադրման և ընթացիկ կառավարման հարաբերությունները կարգավորվում են համապատասխան առևտրային ձևի իրավաբանական անձին վերաբերող ընդհանուր (<< քաղաքացիական օրենսգիրք) և հատուկ օրենքներով:

Սույն գործի հանգամանքների համակցությունը, որոնց մի մասին անդրադարձել է նաև Դիմողը, կարելի է որակել որպես բուհական կառավարման ճգնաժամ, որը պայմանավորված է նաև ոլորտը կարգավորող օրենքների ստորակարգության անհստակությամբ: Պետական բուհերի և՛ արտաքին, և՛ ներքին կառավարման ոլորտներում ստեղծված արտակարգ իրավիճակը պայմանավորված է և՛ Օրենքի, և՛ բարձրագույն կրթության ոլորտում գործող այլ օրենքների բացերով. մասնավորապես՝ Օրենքը չի սահմանում որպես պետական բուհ գրանցված հիմնադրամների նկատմամբ նույն օրենքի դրույթների կիրառման իրավական հիմքը և դրա կարգը, իսկ կրթական ոլորտի օրենքները չեն նախատեսում իրավակարգավորումներ այն դեպքերի համար, երբ բուհերի կառավարման մարմինները (հատկապես կոլեգիալ) տարբեր պատճառների ուժով **փաստորեն անզոր են դառնում գործելու և իրականացնելու իրենց իրավասությունը՝ առաջացնելով բուհական կառավարման ընդհատում, գործառույթային վակուում:**

Վերը նկարագրվածը հաշվի առնելով՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ կրթությանը վերաբերող սահմանադրական կարգի հիմունքների և բուհերի ինքնակառավարման իրավունքի վերլուծությանը՝ սույն գործի համատեքստում:

4.2. «Կրթություն» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակության վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ այն սահմանադրաիրավական կարգավորումների լույսի ներքո գործածվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ իմաստներով՝ կրթությունը՝ որպես համակարգ, և կրթությունը՝ որպես անհատի իրավաբանորեն ամրագրված հիմնական իրավունք: «Կրթության մասին» օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը պետական կրթական չափորոշիչների, պետական հավատարմագրման չափանիշների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

ծության կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման մարմինների փոխկապակցված ամբողջություն է:

Կրթության ոլորտի իրավական կարգավորման կառուցակարգում հիմնարար նշանակություն ունի Սահմանադրության 15-րդ հոդվածի 1-ին մասը. **«Պետությունը խթանում է մշակույթի, կրթության և գիտության զարգացումը»:** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կրթական համակարգը երկրի զարգացման ու առաջընթացի, գիտելիքահենք հասարակության ձևավորման, տնտեսական կայունության, մրցունակ աշխատաշուկայի կարևորագույն գրավականն է: Դրան համապատասխան՝ կրթությունը զարգացնելու պետության պարտականությունը ամրագրվել է որպես սահմանադրական կարգի հիմունք:

Սահմանադրության 15-րդ հոդվածի ուժով՝ պետությունը, լինելով կրթության զարգացման ապահովման համար հանրային պատասխանատու, պարտավոր է կիրառել իր գործառույթավորման բոլոր հնարավոր ձևերն ու մեթոդները:

Սահմանադրության և ոլորտը կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունը հիմք է տալիս Սահմանադրական դատարանին եզրակացնելու, որ **պետությունն իր սահմանադրական պարտականությանը համապատասխան՝ կրթության համակարգում կատարում է հավաքական հանրային պատասխանատուի դեր, որը դրսևորվում է կրթական համակարգի տարր հանդիսացող կրթական պետական կազմակերպությունների հիմնադրամամբ, ոլորտի օրենսդրական կարգավորմամբ, պետական ընդհանուր կառավարմամբ, վերահսկողության իրականացմամբ, պետական կրթական կազմակերպությունների կառավարմանը մասնակցությամբ:**

Պետության առաջնահերթություններից է կրթական ոլորտում այնպիսի միջավայր ապահովելը, որը հնարավորություն կընձեռի կրթական ուսումնական հաստատություններին իրականացնելու իրենց առաքելությունը և երաշխավորելու անհատների կրթության իրավունքը:

Ինչպես բոլոր կրթական կազմակերպություններում, այնպես էլ բուհական կառավարման ոլորտում ցանկացած ճգնաժամ, այդ թվում՝ գործառույթային վակուում, խնդրահարույց է: Կրթության իրավունքի կենսագործումը ներառում է կրթության և կրթական կազմակերպությունների որակյալ ապահովումը, կրթական համակարգի բնականոն գործառույթավորումը, ներառյալ՝ պատշաճ կառավարումը, այդ իրավունքի կենսագործման ու պաշտպանության բավարար և անհրաժեշտ կառուցակարգերի առկայությունը:

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ

◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Սահմանադիրը, որպես կրթության իրավունքի անքակտելի բաղադրատարր, հռչակել է բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը (Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մաս): Սահմանադրական դատարանը 2021 թվականի օգոստոսի 2-ի ՍԴՈ-1608 որոշմամբ հաստատել է բուհերի սահմանադրական այդ իրավունքի մի քանի կարևոր տարրեր.

1) ինքնակառավարումը «... նշանակում է կազմակերպված սոցիալական ընդհանրության կամ հաստատության (կազմակերպության) անկախությունն ու ինքնուրույնությունը՝ սեփական գործերը կառավարելիս, իր կենսագործունեության հարցերը լուծելիս: Պետությունը սահմանում է ինքնակառավարվող սուբյեկտների գործունեության օրենսդրական հիմունքները և ուղղակի չի միջամտում դրանց ու դրանց ստեղծած մարմինների գործունեությանը, **այլ օրենքով սահմանված կարգով իրականացնում է համապատասխան վերահսկողություն**»:

2) «Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասը, սահմանելով բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը, վերջիններիս օժտել է ոչ միայն ինքնակառավարմանը բնորոշ ընդհանուր տարրերով (որոնք, ինչպես նշվեց՝ բաղկացած են կազմակերպական-կառավարչական (ներառյալ կադրային) և ֆինանսական բաղադրիչներից, և ինքնակառավարվող սուբյեկտների անքակտելի հատկություններն են), այլ նաև լրացուցիչ, դրանց սոցիալական և մշակութային դերին բնորոշ բաղադրատարրերով՝ ակադեմիական (կրթության ոլորտ) և հետազոտությունների (գիտական ոլորտ) ազատությամբ»:

Սահմանադրական դատարանը, իր վերը նշված որոշմամբ վերլուծելով բուհերի ինքնակառավարման իրավունքի միջազգային իրավական չափորոշիչները (ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսական կազմի կարգավիճակի վերաբերյալ հանձնարարականը (1997թ.), ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի 13-րդ համընդհանուր մեկնաբանությունը, Եվրոպական համալսարանների ռեկտորների կողմից 1988 թվականի սեպտեմբերի 18-ին ստորագրված «Magna Charta Universitatum»-ը), արտահայտել է դիրքորոշում, որ «... բուհերի ինքնավարության իրավունքը հիմնարար արժեք է: Այդ ինքնավարությունը բաղկացած է ուսումնական հաստատության ինքնակառավարման իրավունքից, ակադեմիական ու հետազոտական ազատություններից և երաշխիք է բուհի գործունեությանը գաղափարական, քաղաքական և կրոնական միջամտությունից զերծ պահելու համար»:

Վերահաստատելով իր այս դիրքորոշումը՝ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ վերոհիշյալ միջազգային փաստաթղթերը, ամրա-

գրելով ինստիտուցիոնալ ինքնավարության, ակադեմիական ազատության հասկացությունները և դրանց հասարակական նշանակությունը, միաժամանակ փաստում է, որ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման և ինքնավարության իրավունքները բացարձակ չեն: Հիշատակված փաստաթղթերով ինքնակառավարումը դիտարկվում է այնպիսի չափորոշիչային հասկացություններով, ինչպիսիք են «**ինքնակառավարման աստիճան**», «**նպատակային ինքնավարություն**», «**պետության անհարկի միջամտություն**», «**պետության պարտականությունը պաշտպանել բուհերին դրանց ինքնակառավարմանն սպառնացող վտանգներից**» հասկացությունները: Օրինակ՝ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի 13-րդ համընդհանուր մեկնաբանության 40-րդ կետի համաձայն՝ **ինքնավարությունն ինքնակառավարման այն աստիճանն է, որն անհրաժեշտ է բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից արդյունավետ որոշում կայացնելու համար՝ կապված նրանց ակադեմիական աշխատանքի, չափորոշիչների, կառավարման և դրանց հետ կապված գործունեության հետ:**

Սահմանադրական դատարանը փաստում է, որ պետության կրթական գործառույթի լավագույնս իրականացնելու գործընթացում առանցքային դերակատարություն ունեն հատկապես կրթական կազմակերպությունները: Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման սահմանադրական իրավունքը ենթադրում է **ակադեմիական հանրային պատասխանատվություն՝ ստեղծել նպաստավոր պայմաններ կրթական գործընթացի մասնակիցների համար:**

Վերոշարադրյալի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բարձրագույն ուսումնական հաստատության ինքնավարությունն առանցքային դերակատարություն ունի բուհական համակարգի պատշաճ կազմակերպման և որպես հետևանք՝ կրթության իրավունքի երաշխավորման համար: **Միաժամանակ, հիմք ընդունելով Սահմանադրության 74-րդ հոդվածը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ բուհական ինքնակառավարումը, լինելով հաստատության կարողությունն ու իրավունքը՝ որոշելու իր գործողությունների ընթացքն առանց պետության անհարկի միջամտության, բացարձակ չէ և ենթադրում է բուհի գլխավոր առաքելության խաթարման վտանգի դեպքում պետության՝ օբյեկտիվ հիմքերով, հիմնավորված միջամտություն՝ համաչափության, որոշակիության, հիմնական իրավունքի և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիության սահմանադրական սկզբունքներին համապատասխան:**

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

4.3. Հիմնադրամի՝ որպես ոչ առևտրային իրավաբանական անձի կարգավիճակի առանձնահատկություններով, ինչպես նաև գործունեության հնարավոր բազմաբնույթ ոլորտներով պայմանավորված՝ Օրենքը որդեգրել է ընդհանրական կարգավորման տեսլականը: Միևնույն ժամանակ՝ Օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «*Հիմնադրամների առանձին տեսակների առանձնահատկություններն ու իրավական կարգավիճակը սահմանվում են այլ օրենքներով*»: Բացի դրանից, Օրենքի 1-ին հոդվածի 2, 3, 4, 5 և 6-րդ մասերը մատնանշում են առանձին տեսակի հիմնադրամների առանձնահատկությունների կարգավորման աղբյուրները՝ հղում կատարելով համապատասխան օրենքներին և միաժամանակ սահմանելով, որ Օրենքի դրույթները տարածվում են այդ հիմնադրամների վրա, եթե հատուկ օրենքներով **«այլ բան սահմանված չէ»:**

Բուհերի կազմակերպման և գործունեության հարաբերությունների օրենսդրական կարգավորման աղբյուրների աստիճանակարգության հարցում «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի և Օրենքի կարգավորիչ հարաբերակցությունը ընդհանուր և հատուկ օրենքների համակարգային կապվածություն է, որոնց միջև իրավաբանական կոլիզիայի հաղթահարման իրավական բանաձևը Օրենքի 1-ին հոդվածի 3, 4, 6 և 7-րդ մասերում ամրագրված հատուկ տեսակի հիմնադրամներին վերաբերող կոլիզիոն իրավադրույթներն են: **Հետևաբար՝ հիմնադրամի կարգավիճակով բարձրագույն ուսումնական հաստատությունների կազմակերպման և գործունեության հարաբերությունների ոլորտում Օրենքը գործում է այնքանով, որքանով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքով այլ բան սահմանված չէ:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քննարկվող դեպքում առկա է օրենսդրության բաց, որպիսին հանգեցնում է բուհերի կառավարման ճգնաժամի, մինչդեռ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը չի նախատեսում տվյալ ճգնաժամը հաղթահարելու իրավական կառուցակարգեր:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ օրենքի բացը՝ որպես կոնկրետ նորմատիվ կարգադրագրի բացակայություն, տվյալ օրենքի իրավական կարգավորման ոլորտում գտնվող հասարակական հարաբերությունների նկատմամբ չպետք է հանգեցնի բուհական համակարգի և/կամ կոնկրետ բուհերի կառավարման անընդհատության խաթարմանը: Հանրային շահերի բավարարման տեսանկյունից կառավարումը պետք է լինի շարունակական՝ ապահովելով բուհի գործառույթների իրականացման անընդհատությունը:

4.4. Սահմանադրական դատարանը, Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի կիրառումը գնահատելով բուհական կառավարման համակարգում ճգնաժամի հաղթահարման բացառիկ միջոց, անհրաժեշտ է համարում իրականացնել դրա բովանդակության վերլուծությունը բուհերի ինքնակառավարման սահմանադրական իրավունքի համատեքստում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի կիրառումը միջամտություն է բուհերի ինքնակառավարման սահմանադրական իրավունքին, հետևաբար՝ այն պետք է բավարարի հիմնական իրավունքների սահմանափակման սահմանադրական սկզբունքները՝ համաչափություն, որոշակիություն, և չպետք է խախտի բուհերի ինքնակառավարման սահմանադրական իրավունքի էությունը:

Սահմանադրական դատարանը, այս համատեքստում իրականացնելով Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի վերլուծությունը, եզրահանգում է, որ ժամանակավոր խորհուրդը, հանդիսանալով կառավարման տեսանկյունից «ճգնաժամային իրավիճակի» առաջ կանգնած՝ հիմնադրամի ղեկավար մարմին, ստանձնում է հիմնադրամի բարձրագույն մարմնի կարգավիճակ բացառապես հոգաբարձուների խորհրդի գործունեության շարունակվելու անհնարինության դեպքում՝ հիմնադրամի գործունեությունը չխաթարելու, կառավարման քառսային վիճակը շտկելու նպատակով: Վիճարկվող դրույթի ուժով ժամանակավոր խորհուրդը բաղկացած է երեք անդամից, որոնց նշանակում է Արդարադատության նախարարը՝ երկամսյա ժամկետում:

Անդրադառնալով Դիմողի բարձրացրած այն հարցին, որ օրենսդիրը խնդրո առարկա Օրենքով չի սահմանել բուհական գործունեություն ծավալող հիմնադրամի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատությունների ժամանակավոր խորհրդի անդամներին ներկայացվող որևէ պահանջ կամ չափանիշ՝ Արդարադատության նախարարին վերապահելով բացառիկ իրավասություն միանձնյա ձևավորելու ժամանակավոր խորհրդի կազմը, Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով սույն որոշման 4.3-րդ կետում արտահայտված դիրքորոշումները, ևս մեկ անգամ փաստում է, որ Օրենքի շրջանակներում առանձին տեսակի գործունեություն ծավալող հիմնադրամների վերաբերյալ հատուկ կարգավորում չամրագրելը տրամաբանական է, քանզի Օրենքի կարգավորման առարկան ներառում է տարաբնույթ նպատակներ հետապնդող հիմնադրամների մասնակցությամբ հարաբերություններ:

Ասվածը, այնուամենայնիվ, ոչ միայն չի բացառում, այլ նաև սահմանադրաիրավական նորմերի ուժով (Սահմանադրության 38-րդ հոդված) պարտադրում է Արդարադատության նախարարին յուրաքանչյուր դեպ-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

քում ժամանակավոր խորհրդի անդամ նշանակելիս առաջնորդվել կոնկրետ հիմնադրամի ծավալած գործունեության ոլորտի առանձնահատկություններով՝ կրթության ոլորտը զերծ պահելով քաղաքական և ցանկացած այլ տեսակի գաղափարական ազդեցությունից՝ հիմք ընդունելով բուհերի ինքնակառավարման սահմանադրական իրավունքը, ինչպես նաև ակադեմիական և հետազոտական ազատության սահմանադրաիրավական գաղափարահենք սկզբունքը: Այս առումով օրենսդրական կարգավորման զարգացումները պետք է միտված լինեն կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության շրջանակներում առանցքային նշանակություն ունեցող օրենքներում բուհական ինքնակառավարման իրավունքի երաշխավորման գործուն կառուցակարգերի ամրագրմանը:

Բացի դրանից, խնդրո առարկա օրենքի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ օրենսդիրը ժամանակավոր խորհրդի վրա դրել է պարտավորություն՝ համապատասխան քայլեր ձեռնարկել՝ ուղղված օրենքով սահմանված կարգով հոգաբարձուների խորհրդի կազմի համալրմանը, որպիսի հանգամանքը ևս մեկ անգամ փաստում է, որ հիշատակված մարմնի հիմնական առաքելությունը հիմնադրամի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումն է:

Առաջնորդվելով հիմնադրամի անխոչընդոտ գործունեությունն ապահովելու շահով՝ օրենսդիրը ժամանակավոր խորհրդին վերապահել է հիմնադրամի գործունեությունը շարունակելուն ուղղված՝ օրենքով հոգաբարձուների խորհրդին վերապահված լիազորություններ, ինչը միանգամայն իրավաչափ է, քանզի ստեղծված իրավիճակում ժամանակավոր խորհուրդը պետք է ունենա համապատասխան լծակներ՝ հիմնադրամի բնականոն աշխատանքն ապահովելու համար: Այս առումով Դիմողի մտահոգությունն առ այն, որ ժամանակավոր խորհուրդն օժտված է նույն գործիքակազմով, ինչ հոգաբարձուների խորհուրդը, առարկայազուրկ է:

Սահմանադրական դատարանն Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի՝ Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասի համատեքստում վերլուծության արդյունքում արձանագրում է, որ Օրենքի վիճարկվող դրույթները, շեղվելով պետական բուհի ինքնակառավարման տարր հանդիսացող վարչական ինքնավարությունից, ընդհանուր առմամբ ամբողջովին կրում են ժամանակավոր միջոցառման բնույթ, ուղղված են բուհի կառավարման համակարգում ճգնաժամի հաղթահարմանը, ժամանակավոր խորհրդին չեն վերապահում կրթական օրենսդրության շրջանակներից դուրս ելնող արտակարգ լիազորություններ (բացառությամբ պետական բուհը լուծարելու հարցով դատարան դիմելու լիազորության), հետևաբար՝ դրանք՝ որպես հիմնական իրավունքի

միջամտություն, իրենց բնույթով օրենքով սահմանված, իրավաչափ նպատակ հետապնդող և այդ նպատակին հասնելու համար համաչափության սկզբունքին համահունչ՝ անհրաժեշտ և բավարար միջոցներ են, չեն խաթարում բուհերի ինքնակառավարման սահմանադրական իրավունքի էությունը, ապահովում են բուհական կառավարման մարմինների գործունեության անընդհատությունը, որպիսի պայմաններում համահունչ են Սահմանադրության համապատասխան դրույթներին:

4.5. Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի 4-րդ պարբերության համաձայն՝ եթե ժամանակավոր խորհուրդ նշանակելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա ժամանակավոր խորհուրդը պարտավոր է դիմել դատարան՝ հիմնադրամը լուծարելու համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիմնադրամի կարգավիճակ ունեցող պետական բուհերում կառավարման առաջացած ճգնաժամը դրանց լուծարման հիմք համարելը, այդ նպատակով դատարան դիմող սուբյեկտ՝ Արդարադատության նախարարի ձևավորած 3 անձից կազմված ժամանակավոր խորհուրդը համարելը՝ Սահմանադրության 15-րդ հոդվածի 1-ին մասին, 38-րդ հոդվածի 3-րդ մասին, 78-րդ և 80-րդ հոդվածներին համապատասխանության իմաստով խնդրահարույց է, հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բարձրագույն ուսումնական հաստատություններն օրենքով սահմանված շրջանակներում ունեն ինքնակառավարման իրավունք: Այդ իրավունքի հիմնական ոլորտներն են կազմակերպական, կադրային, ֆինանսական ինքնավարությունը, ինչպես նաև ակադեմիական ազատությունը (կրթության ոլորտ) և հետազոտությունների ազատությունը (գիտական ոլորտ), որտեղ պետությունը պետք է երաշխավորի բուհերի իրավունքն ու կարողությունը՝ ինքնուրույն, առանց պետության անհարկի միջամտության որոշելու իրենց գործունեության հիմնական հարցերը (իրավասությունը):

Բուհական ինքնավարությունը բուհի սեփական նպատակները սահմանելու և սեփական գործերը կառավարելու իրավունքն է առանց պետության անհարկի միջամտության: **Բուհական կառավարման համակարգում պետության ղեկավարումը, մասնակցությունը, հաշվետվողականությունը՝ մի կողմից, և ինստիտուցիոնալ ինքնավարությունը՝ մյուս կողմից, պետք է լինեն հավասարակշռված:**

Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի՝ հիմնադրամի լուծարմանը վերաբերող 3-րդ պարբերության 2-րդ կետը և 4-րդ պարբերությունը պետական բուհերում կառավարման առաջացած ճգնաժամը համարում են

դրանց լուծարման հիմք՝ լուծարման նախաձեռնող սուբյեկտ համարելով արդարադատության նախարարի նշանակած երեք անձից կազմված ժամանակավոր խորհրդին: Ակնհայտ է, որ ընտրված սահմանափակման միջոցը սահմանադրական շահերի (նպատակների) ապահովման համար պիտանի և անհրաժեշտ չէ դրանց հասնելու համար, հետևաբար՝ լուծարման նման հիմքը և ընթացակարգը համարժեք չեն այն հանրային շահերին, որոնք բավարարվում են այդ միջոցի սահմանամբ (կիրառմամբ):

Սահմանադրության 80-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էությունն անխախտելի է: Սահմանադրական այս դրույթից ելնելով՝ Օրենքի վերը նշված իրավակարգավորումը պետական բուհերի սահմանադրական հիմնական իրավունքի էության խեղաթյուրում է, որովհետև այդ դեպքում ինքնակառավարման իրավունք ունեցող բուհի գոյությունը կախված է գործադիր իշխանության ճյուղային մարմնի կողմից ստեղծված ժամանակավոր խորհրդի հայեցողությունից:

Օրենսդրության վերլուծությունը վկայում է, որ իրավաբանական անձի լուծարումը հնարավոր է երկու հիմքով՝ կամավոր և հարկադիր: Հարկադիր լուծարման հիմքերից են սնանկությունը և, ամփոփ ասած՝ «օրենքի կոպիտ խախտումները», որոնք կազմակերպաիրավական տարբեր կարգավիճակ ունեցող իրավաբանական անձանց համար կարող են լինել տարբեր: Օրենքի վիճարկվող իրավակարգավորումները լուծարման հիմքում դրել են ձևական չափանիշ՝ ժամանակավոր խորհուրդ նշանակելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չնշանակելը, ինչը համահունչ չէ Սահմանադրության 15-րդ հոդվածի 1-ին մասի, 38-րդ հոդվածի 3-րդ մասի և 78-րդ և 80-րդ հոդվածների պահանջներին:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների լուծարման հարաբերությունները բավարար հստակությամբ կարգավորված են օրենսդրությամբ: Համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի՝ բարձրագույն ուսումնական հաստատությունը լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի՝ հիմնադրամների լուծարմանը վերաբերող դրույթները հիմնադրամի կարգավիճակով պետական բուհերի համար ոչ միայն չեն ապահովում Սահմանադրության 15-րդ հոդվածի 1-ին մասի, 38-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 78-րդ և 80-րդ հոդվածների օրենսդրական երաշխավորումը, այլև օրենքում տեղ են գտել նորմեր, որոնք շեղվում են սահմանադրական կարգավորման տրա-

մաքանությունից: Մասնավորապես՝ հիմնադրամի լուծարման վերաբերյալ այդ հատուկ իրավադրույթներով առավել պարզեցված է տվյալ կարգավիճակով իրավաբանական անձանց լուծարման ընթացակարգը: Մինչդեռ կոնկրետ դեպքում խնդիրը վերաբերում է Սահմանադրությամբ ինքնակառավարման իրավունքով, ինչպես նաև ակադեմիական և հետազոտությունների ազատությամբ օժտված կառույցին:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ հիմնադրամի կարգավիճակով պետական բուհի կառավարման մարմիններից մեկի՝ հոգաբարձուների խորհրդի գործունեության ընթացքում ծագած «ճգնաժամի» դեպքում օրենքով այնպիսի բացասական հետևանքների նախատեսումը, ինչպիսին է բուհի լուծարումը, կարող է ամրագրվել միայն բացառիկ դեպքերում, ի թիվս այլնի, նաև սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումների հաշվառմամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին, 2-րդ պարբերությունները, 3-րդ պարբերության 1-ին կետը համապատասխանում են Սահմանադրությանը:

2. «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ պարբերության 2-րդ կետը և 4-րդ պարբերությունը՝ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների լուծարման համար դատարան դիմելու լիազորության մասով, ճանաչել Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասին, 78-րդ հոդվածին հակասող և անվավեր:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

22 փետրվարի 2022 թվականի
ՍԴՈ-1629

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ
22-Ի «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 23-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 7-ՐԴ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԴՈ-1629 ՈՐՈՇՄԱՆ
ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ
ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, 2022 թվականի փետրվարի 22-ին դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, ՍԴՈ-1629 որոշմամբ որոշել է.

«1. «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին, 2-րդ պարբերությունները, 3-րդ պարբերության 1-ին կետը համապատասխանում են Սահմանադրությանը:

2. «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ պարբերության 2-րդ կետը և 4-րդ պարբերությունը՝ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների լուծարման համար դատարան դիմելու լիազորության մասով, ճանաչել Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասին, 78-րդ հոդվածին հակասող և անվավեր: (...):»:

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում եմ հատուկ կարծիք Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 22-ի ՍԴՈ-1629 որոշման (այսուհետ՝ ՍԴՈ-1629 որոշում) պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

1. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները Սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Սահմանադրական

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ 1/1 (105/1) 2022

դատարանը կաշկանդված չէ սահմանադրական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, բացատրություններով, միջնորդություններով, առաջարկություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար»:

«Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) վիճարկվող դրույթների վերաբերյալ սահմանադրաիրավական խնդրի լուծման նպատակով, կարծում եմ, Սահմանադրական դատարանը գործի ելքի համար նախ պետք է պարզեր, թե Սահմանադրության 38-րդ և 78-րդ հոդվածների՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքի արդյունավետ իրականացման և համաչափության սկզբունքի ապահովման համատեքստում՝ հիմնադրամների հոգաբարձուների խորհրդի կազմի անդամների կեսից ավելին համալրված չլինելու հիմնավորմամբ պայմանավորված՝ ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ժամանակավոր խորհրդի ձևավորմանն ու վերջինիս կողմից հիմնադրամը լուծարելու համար դատարան դիմելու իրավասությանն առնչվող Օրենքի առկա կարգավորումներն արդյո՞ք կարող են հանդիսանալ արդյունավետ միջոցներ հիմնադրամի կարգավիճակ ունեցող բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեությունը պատշաճ ապահովելու համար:

Հաշվի առնելով, որ Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասն այնքանով, որքանով չի նախատեսում հոգաբարձուների խորհրդի կազմի իրավագործությամբ պայմանավորված՝ ՀՀ արդարադատության նախարարի կողմից հիմնադրամի կարգավիճակ ունեցող բարձրագույն ուսումնական հաստատությունների ժամանակավոր խորհուրդների ձևավորման և իրավասության շրջանակի սահմանման հատուկ իրավակարգավորումներ, կարծում եմ, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը տվյալ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս պետք է գնահատեր ինչպես այդ ակտը, այնպես էլ ձևավորված իրավակիրառական պրակտիկան:

Բացի նշվածից, գտնում եմ, որ նույն ՍԴՈ-1629 որոշման պատճառաբանական մասում անհրաժեշտ էր պարզել, թե հիմնադրամի կարգավիճակ ունեցող բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքի իրացման սահմանադրական պահանջի պահպանման պայմաններում առկա՞ է արդյոք բավարար օբյեկտիվ

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 55

հիմք, կամ հետապնդվում է արդյոք իրավաչափ նպատակ՝ Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխանության տեսանկյունից:

Այս առումով Սահմանադրական դատարանը վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս պետք է հաշվի առներ իր նախկին որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների էական ու գործառնական նշանակությունը, հատկապես՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքի ամբողջությունը կազմող տարրերի բացահայտման համատեքստում: Մասնավորապես՝ կարելի է նշել Սահմանադրական դատարանի 2021 թվականի օգոստոսի 2-ի ՍԴՈ-1608 որոշմամբ հաստատված հետևյալ արձանագրումները.

ա) բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարում «... նշանակում է կազմակերպված սոցիալական ընդհանրության կամ հաստատության (կազմակերպության) անկախությունն ու ինքնուրույնությունը՝ սեփական գործերը կառավարելիս, իր կենսագործունեության հարցերը լուծելիս»,

բ) «Պետությունը սահմանում է ինքնակառավարվող սուբյեկտների գործունեության օրենսդրական հիմունքները և ուղղակի չի միջամտում դրանց ու դրանց սրբեղծած մարմինների գործունեությանը, այլ օրենքով սահմանված կարգով իրականացնում է համապատասխան վերահսկողություն»:

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

2. Հաշվի առնելով սահմանադրաիրավական խնդրի առաջադրման հիմքում դիմողի կողմից բերված հիմնավորումները, Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխանության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների պահպանման տեսանկյունից՝ վիճարկվող դրույթների իրավակիրառական պրակտիկայի գնահատման համար էական նշանակություն ունի այդ դրույթների կիրառման արդյունքում հիմնադրամի կարգավիճակ ունեցող Երևանի պետական համալսարանի օրինակով ձևավորված հետևյալ պրակտիկան.

1) հոգաբարձուների խորհրդի իրավազրության, գործունեության սկզբունքների, կազմի ձևավորման չափանիշների, համամասնության ու ներկայացվածության պահանջների, այդ թվում՝ այդ խորհրդի անդամներին ներկայացվող պահանջների բացակայության պարագայում ՀՀ արդարադատության նախարարն իր հայեցողությամբ որոշում է ձևավորել ժամանակավոր խորհուրդ,

2) ժամանակավոր խորհուրդն ամբողջությամբ իրականացնում է այն լիազորությունները, որոնք Օրենքի 27-րդ հոդվածի 7-րդ մասով վերապահված են հոգաբարձուների խորհրդին, այդ թվում՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարմանն ու հետագա գործունեությանն առնչվող ռազմավարական նշանակության հարցեր որոշելու տեսանկյունից:

Այսինքն՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքի արդյունավետ իրականացման սահմանադրական պահանջի պահպանման համատեքստում՝ հաշվի չառնելով հիմնադրամի կարգավիճակ ունեցող այդ բուհերի գործունեության առանձնահատկություններն ու սահմանադրական երաշխիքները, այդ թվում՝ վերջիններիս գործունեության հանրային բնույթն ու սոցիալ-գործառնական նշանակությունը, Օրենքի վիճարկվող կարգավորումներին համապատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարը՝ իր հրամանի հիման վրա և բացարձակ հայեցողությամբ ձևավորում է ժամանակավոր խորհուրդ, որին վերապահվում են հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմնի՝ հոգաբարձուների խորհրդի լիազորությունները:

Այստեղից, հիշյալ հիմնավորումներով պայմանավորված, գտնում են՝ ակներև է հիմնադրամի կարգավիճակ ունեցող բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմնի՝ հոգաբարձուների խորհրդի իրավական կարգավիճակի, այդ թվում՝ նրա լիազորությունների իրականացման կարգի ու պայմանների, այդ խորհրդի կազմի անդամների կեսից ավելին չհամալրվելու արդյունքում ձևավորված ժամանակավոր խորհրդին առնչվող օրենսդրական կարգավորումների ամբողջությամբ **խնդրահարույց** լինելը՝ այդ բուհերի ինքնակառավարման սահմանադրական իրավունքի արդյունավետ իրականացման տեսանկյունից:

Եվ կատարված եզրահանգումը, որ՝ «*հիմնադրամի կարգավիճակով բարձրագույն ուսումնական հաստատությունների կազմակերպման և գործունեության հարաբերությունների ոլորտում Օրենքը գործում է այնքանով, որքանով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքով այլ բան սահմանված չէ*» (ՍԴՈ-1629 որոշում, կետ 4.3), կարծում են, չի կարող դիտարկվել հիմնադրամի կարգավիճակ ունեցող այդ բուհերի գործունեության առանձնահատկություններ սահմանող փաստարկ:

ՍԱԳՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ

3. ՍԴՈ-1629 որոշման պատճառաբանական մասի 4.2-րդ կետում վերլուծելով «կրթություն» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակության, բուհերի ինքնակառավարմանն առնչվող՝ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների և կրթության բնագավառի միջազգային իրավական ակտերով նախատեսված կարգավորումները՝ Սահմանադրական դատարանը հետևություն է արել, որ՝ «(...) հիմք ընդունելով Սահմանադրության 74-րդ հոդվածը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ բուհական ինքնակառավարումը, լինելով հասարակության կարողությունն ու իրավունքը՝ որոշելու իր գործողությունների ընթացքն առանց պետության անհարկի միջամտության, բացարձակ չէ և ենթադրում է բուհի գլխավոր առաքելության խաթարման վրանգի դեպքում պետության՝ օբյեկտիվ հիմքերով, հիմնավորված միջամտություն՝ համաչափության, որոշակիության, հիմնական իրավունքի և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիության սահմանադրական սկզբունքներին համապատասխան»:

Վերոնշյալից պարզ չէ կատարված վերլուծության և հետևության անմիջական կապը, այդ թվում՝ փոխկապակցված սահմանադրական նորմի շրջանակը: Ընդ որում, եթե հիշյալ վերլուծության արդյունքում կատարվում է արձանագրում, որ՝ «(...) բարձրագույն ուսումնական հասարակության ինքնավարությունն առանցքային դերակատարություն ունի բուհական համակարգի պատշաճ կազմակերպման և որպես հետևանք՝ կրթության իրավունքի երաշխավորման համար», ապա առնվազն պետք է բերվեին այն հիմնավորումները, թե դրանց հետ համակարգային առումով ի՞նչ փոխկապակցվածության շրջանակներում պետք է գտնվի Սահմանադրության՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների կիրառելիությունն իրավաբանական անձանց նկատմամբ» վերտառությամբ 74-րդ հոդվածի կարգավորումը: Բացի դրանից, պարզ չէ հիշյալ վերլուծության և Սահմանադրության 74-րդ հոդվածի առնչությամբ կատարված հետևյալ եզրահանգումների միջև անմիջական կապը, ինչպիսիք են՝ «բուհական ինքնակառավարումը (...) բացարձակ չէ» կամ «...բուհական ինքնակառավարումը (...) ենթադրում է բուհի գլխավոր առաքելության խաթարման վրանգի դեպքում պետության՝ օբյեկտիվ հիմքերով, հիմնավորված միջամտություն՝ համաչափության, որոշակիության, հիմնական իրավունքի և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիության սահմանադրական սկզբունքներին համապատասխան»:

4. ՍԴՈ-1629 որոշման 4.4-րդ կետում շարադրված է վերլուծություն՝ «բուհի ճգնաժամային իրավիճակ», «կառավարման քառսային վիճակը շտկել», «պետական բուհի ինքնակառավարման տարր հանդիսացող

վարչական ինքնավարություն» հասկացությունների վերաբերյալ՝ առանց բացահայտելու դրանց իրավական բովանդակությունն ու նշանակությունը: Սակայն որոշման հիշյալ կետի շարադրանքից այդպես էլ պարզ չի դառնում, թե իրավական առումով ի՞նչ են նշանակում այդ եզրույթները, և դրանք ի՞նչ նշանակություն ունեն բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման սահմանադրական իրավունքի արդյունավետ իրականացման համատեքստում՝ հիմնադրամի կարգավիճակ ունեցող այդ բուհերի գործունեության առանձնահատկությունների սահմանման ու սահմանադրական երաշխիքների ապահովման տեսանկյունից: Այդպիսի վերլուծությունն սկզբունքային նշանակություն կարող էր ունենալ միայն վիճարկվող դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման տեսանկյունից:

Ամփոփելով, գտնում եմ, որ Օրենքի վիճարկվող դրույթները և այդ դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված Օրենքի այլ կարգավորումները՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ խնդրահարույց են հիմնադրամի կարգավիճակ ունեցող բարձրագույն ուսումնական հաստատությունների մասով՝ պայմանավորված վերջիններիս գործունեության առանձնահատկություններով, հանրային բնույթով, սոցիալ-գործառնական նշանակությամբ և սահմանադրական երաշխիքների առկայությամբ:

Հետևաբար՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքի արդյունավետ իրականացման սահմանադրական պահանջի պահպանման և համաչափության սկզբունքի ապահովման համատեքստում, կարծում եմ, որ «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասը հակասում է Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասին և 78-րդ հոդվածին:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ**

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՊԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 23-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 7-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԴՈ-1629 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, 2022 թվականի փետրվարի 22-ին դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, ՍԴՈ-1629 որոշմամբ (այսուհետ՝ նաև Որոշում) եզրահանգել է՝

«1. «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին, 2-րդ պարբերությունները, 3-րդ պարբերության 1-ին կետը համապատասխանում են Սահմանադրությանը:

2. «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ պարբերության 2-րդ կետը և 4-րդ պարբերությունը՝ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների լուծարման համար դատարան դիմելու լիազորության մասով, ճանաչել Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասին, 78-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

Կարևորելով և բարձր գնահատելով Սահմանադրական դատարանի կողմից արված վերլուծությունները և եզրահանգումները, այնուամենայնիվ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ստորև ներկայացնում եմ հատուկ կարծիք հիշյալ որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

1. «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝ «Հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը, նրանց ընտրության կարգը» վերտառությամբ 23-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին, 2-րդ պարբերությունների, 3-րդ պարբերության 1-ին կետի համաձայն՝

«7. Եթե հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամների լիազորությունների դադարման դեպքում երկամսյա ժամկետում հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա Հայաստանի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 1/1 (105/1) 2022

Հանրապետության արդարադատության նախարարը երկամսյա ժամկետում նշանակում է 3 անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ:

Ժամանակավոր խորհուրդը պարտավոր է քայլեր ձեռնարկել սույն օրենքով սահմանված կարգով հոգաբարձուների խորհրդի կազմի համալրման համար:

Ժամանակավոր խորհուրդն իրավասու է՝

1) իրականացնելու հիմնադրամի գործունեությունը շարունակելուն ուղղված՝ սույն օրենքով հոգաբարձուների խորհրդին վերապահված լիազորություններ.

(...):»:

Որոշման պատճառաբանական մասում Սահմանադրական դատարանը նշում է. «Սահմանադիրը, որպես կրթության իրավունքի անքակտելի բաղադրատարր, հռչակել է բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը (Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մաս): Սահմանադրական դատարանը 2021 թվականի օգոստոսի 2-ի ՍԴՈ-1608 որոշմամբ հաստատել է բուհերի սահմանադրական այդ իրավունքի մի քանի կարևոր տարրեր.

1) ինքնակառավարումը «... նշանակում է կազմակերպված սոցիալական ընդհանրության կամ հաստատության (կազմակերպության) անկախությունն ու ինքնուրույնությունը՝ սեփական գործերը կառավարելիս, իր կենսագործունեության հարցերը լուծելիս: Պետությունը սահմանում է ինքնակառավարվող սուբյեկտների գործունեության օրենսդրական հիմունքները և ուղղակի չի միջամտում դրանց ու դրանց ստեղծած մարմինների գործունեությանը, այլ օրենքով սահմանված կարգով իրականացնում է համապատասխան վերահսկողություն»:

2) «Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասը, սահմանելով բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը, վերջիններիս օժտել է ոչ միայն ինքնակառավարմանը բնորոշ ընդհանուր տարրերով (որոնք, ինչպես նշվեց՝ բաղկացած են կազմակերպական-կառավարչական (ներառյալ կադրային) և ֆինանսական բաղադրիչներից, և ինքնակառավարվող սուբյեկտների անքակտելի հատկություններն են), այլ նաև լրացուցիչ, դրանց սոցիալական և մշակութային դերին բնորոշ բաղադրատարրերով՝ ակադեմիական (կրթության ոլորտ) և հետազոտությունների (գիտական ոլորտ) ազատությամբ»:

«Միաժամանակ, հիմք ընդունելով Սահմանադրության 74-րդ հոդվածը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ բուհական ինքնակառավարումը, լինելով հաստատության կարողությունն ու իրավունքը՝ որոշելու իր գործողությունների ընթացքն առանց պետության անհարկի միջամտու-

թյան, բացարձակ չէ և ենթադրում է բուհի գլխավոր առաքելության խաթարման վտանգի դեպքում պետության՝ օբյեկտիվ հիմքերով, հիմնավորված միջամտություն՝ համաչափության, որոշակիության, հիմնական իրավունքի և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիության սահմանադրական սկզբունքներին համապատասխան»:

Վիճարկվող դրույթները վերոհիշյալ համատեքստում դիտարկելու արդյունքում Սահմանադրական դատարանը եզրահանգում է. «... ժամանակավոր խորհուրդը, հանդիսանալով կառավարման տեսանկյունից «ճգնաժամային իրավիճակի» առաջ կանգնած՝ հիմնադրամի ղեկավար մարմին, ստանձնում է հիմնադրամի բարձրագույն մարմնի կարգավիճակ բացառապես հոգաբարձուների խորհրդի գործունեության շարունակվելու անհնարինության դեպքում՝ հիմնադրամի գործունեությունը չխաթարելու, կառավարման քառսային վիճակը շտկելու նպատակով»:

Հաշվի առնելով, որ ըստ Սահմանադրական դատարանի՝ ժամանակավոր խորհուրդը չի խաթարում բարձրագույն ուսումնական հաստատության ինքնակառավարման իրավունքը, հարկ է նշել հետևյալը.

նախ՝ ժամանակավոր խորհուրդը օժտվում է հիմնադրամի գործունեությունը շարունակելուն ուղղված՝ «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հոգաբարձուների խորհրդին վերապահված լիազորություններով: Ժամանակավոր խորհրդի ձևավորվելուց հետո հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին նշանակված լինելու դեպքում հիմնադրամը շարունակում է իր բնականոն գործունեությունը: Հաշվի առնելով, որ նշված ժամանակահատվածը կարող է տևել մինչև վեց ամիս, ժամանակավոր խորհրդի լիազորությունների լայն շրջանակի առկայության պայմաններում հիմնադրամի կարգավիճակ ունեցող բարձրագույն ուսումնական հաստատության՝ Սահմանադրության 38-րդ հոդվածով հռչակված ինքնակառավարման իրավունքի երաշխավորումը դառնում է խնդրահարույց:

Երկրորդ՝ Սահմանադրական դատարանը, ընդունելով, որ ժամանակավոր խորհրդի գործունեության արդյունքում տեղի է ունենում բարձրագույն ուսումնական հաստատության հիմնական իրավունքին միջամտություն, անհրաժեշտ է համարում, որ այդ միջամտությունը համապատասխանի համաչափության, որոշակիության, հիմնական իրավունքի և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիության սահմանադրական սկզբունքներին:

Վերահաստատելով իր՝ 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշման մեջ արտահայտած դիրքորոշումները իրավական համաչափության և որոշակիության սահմանադրական սկզբունքների համակար-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

գային կապի վերաբերյալ՝ Սահմանադրական դատարանը 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշմամբ «... օրենսդրական ձևակերպման անհստակությունը գնահատել է որպես կոնկրետ հիմնական իրավունքի սահմանափակման համաչափությունը երաշխավորելու համար պատշաճ նախադրյալների բացակայություն»:

Հարկ է նշել, որ վիճարկվող դրույթները խնդրահարույց են որոշակիության, հետևաբար՝ նաև համաչափության տեսանկյունից: Մասնավորապես, Օրենքում բացակայում են բարձրագույն ուսումնական հաստատության ժամանակավոր խորհրդի անդամներին ներկայացվող չափանիշները:

Բացի դրանից, Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի օգոստոսի 2-ի ՍԴՈ-1608 որոշմամբ անգամ բարձրագույն ուսումնական հաստատության հոգաբարձուների խորհրդի անդամների վերաբերյալ չափանիշների առկայությունը չի դիտարկել որպես ինքնուրույնության արդյունավետ երաշխիքներ այն պատճառով, «որ նշանակող մարմինն ունի նշանակաձև անդամներին պաշտոնից վաղաժամկետ ազատելու իրավասություն»: Այս առումով, վիճարկվող դրույթներով հստակ կարգավորված չէ՝ արդյոք արդարադատության նախարարն ունի ժամանակավոր խորհրդի անդամին վաղաժամկետ ազատելու իրավասություն:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ ժամանակավոր խորհուրդն իրականացնում է հիմնադրամի գործունեությունը շարունակելուն ուղղված՝ հոգաբարձուների խորհրդին վերապահված լիազորություններ, սակայն հստակ կարգավորված չեն այն հարցերը, թե «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված՝ հոգաբարձուների խորհրդի կոնկրետ ո՞ր լիազորությունները կարող են իրականացնել բարձրագույն ուսումնական հաստատություններ հանդիսացող հիմնադրամների ժամանակավոր խորհուրդները: Մասնավորապես, ասվածը վերաբերում է հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման կայացմանը, հիմնադրամի կառուցվածքի փոփոխությանը, հաստիքացուցակի հաստատմանը և այլն:

Ելնելով վերոգրյալից՝ անհարժեշտություն է առաջանում մեկնաբանության միջոցով բացահայտել վիճարկվող դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը՝ հաշվի առնելով բարձրագույն ուսումնական հաստատությունների վերաբերյալ առկա սահմանադրաիրավական պահանջները:

2. Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ պարբերության 2-րդ կետի և 4-րդ պարբերության համաձայն՝

«Ժամանակավոր խորհուրդն իրավասու է՝
(...)

2) դիմելու դատարան՝ հիմնադրամը լուծարելու համար:

Եթե ժամանակավոր խորհուրդ նշանակելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա ժամանակավոր խորհուրդը պարտավոր է դիմել դատարան՝ հիմնադրամը լուծարելու համար»:

Չնայած այն հանգամանքին, որ Որոշման եզրափակիչ մասում «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ պարբերության 2-րդ կետը և 4-րդ պարբերությունը՝ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների լուծարման համար դատարան դիմելու լիազորության մասով, ճանաչվել են Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասին, 78-րդ հոդվածին հակասող և անվավեր, նույն որոշման պատճառաբանական մասում նշված է, որ «...հիմնադրամի կարգավիճակ ունեցող պետական բուհերում կառավարման առաջացած ճգնաժամը դրանց լուծարման հիմք համարելը, այդ նպատակով դատարան դիմող սուբյեկտ՝ Արդարադատության նախարարի ձևավորած 3 անձից կազմված ժամանակավոր խորհուրդը համարելը՝ Սահմանադրության 15-րդ հոդվածի 1-ին մասին, 38-րդ հոդվածի 3-րդ մասին, 78-րդ և 80-րդ հոդվածներին համապատասխանության իմաստով խնդրահարույց է»:

Այս առումով հարկ է նշել հետևյալը.

նախ՝ Սահմանադրության վերոնշված դրույթներում որևէ նշում չկա պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների մասին: Մասնավորապես, Սահմանադրության 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պետությունը խթանում է մշակույթի, կրթության և գիտության զարգացումը», իսկ 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Բարձրագույն ուսումնական հաստատություններն օրենքով սահմանված շրջանակներում ունեն ինքնակառավարման իրավունք, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը»: Այսինքն՝ Սահմանադրության վերոնշյալ դրույթները չեն տարբերակում պետության կամ այլ սուբյեկտների, այդ թվում՝ համայնքների, ֆիզիկական ու իրավաբանական անձանց կողմից հիմնադրված բարձրագույն ուսումնական հաստատությունները: Այդ իսկ պատճառով Որոշմամբ արտահայտվող եզրահանգումները, անկախ դրանց բովանդակությունից, հավասարապես պետք է վերաբերեն հիմնադրամի կարգավիճակ ունեցող բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններին:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 1/1 (105/1) 2022

Երկրորդ՝ հիմնադրամը, հանդիսանալով ունիտար ոչ առևտրային կազմակերպություն, ունի մի շարք առանձնահատկություններ: Հիմնադրամի հիմնադիրները չեն ընդգրկվում հիմնադրամի կառավարման մարմինների շարքում (Օրենքի 21-րդ հոդված): Այդ իսկ պատճառով հիմնադրամի հիմնադիրներն իրավասու չեն լուծարել հիմնադրամը, և վերջինս լուծարվում է դատական կարգով:

«Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան՝ հիմնադրամի հիմնադիրներ կարող են լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական անձինք, բացառությամբ այն անձանց, որոնց մասնակցությունը հիմնադրամի հիմնադրմանը օրենքով արգելված կամ սահմանափակված է: Ընդ որում՝ նույն հոդվածի 3-րդ մասում հատուկ շեշտվում է, որ Հայաստանի Հանրապետությունը և համայնքները կարող են լինել հիմնադրամի հիմնադիր՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Այս առումով հարկ է նշել, որ հիմնադիրների կազմը որևէ նշանակություն չունի հիմնադրամի կարգավիճակը որոշելու համար: Որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերում պետական մասնակցությամբ հիմնադրամներին առանձնացնելը չի բխում ոչ միայն ՀՀ քաղաքացիական օրենսդրության պահանջներից, այլ նաև խնդրահարույց է Սահմանադրության 28-րդ և 29-րդ հոդվածների տեսանկյունից, այն է՝ հավասարության իրավունքի և խտրականության արգելքի տեսանկյունից, քանի որ անկախ նրանից՝ հիմնադիրը հանրային սուբյեկտ է, թե մասնավոր, հիմնադրամի կարգավիճակը միևնույնն է:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Որոշման եզրափակիչ մասի 1-ին և 2-րդ կետերի եզրահանգումները, ինչպես նաև դրանք հիմնավորող՝ պատճառաբանական մասի համապատասխան հատվածները սահմանադրափրավական տեսանկյունից խնդրահարույց են:


**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ**

Ա. ԹՈՒՆՅԱՆ

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍ-
ՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՊԻ ՀԱՄԱՏԵՂ
(ՄԻԱՎՈՐՎԱԾ) ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

25 փետրվարի 2022թ.

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
«ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Սարգսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի կապի համատեղ (միավորված) համակարգի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 2004-Ա որոշմամբ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի կապի համատեղ (միավորված) համակարգի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան:

Հիշյալ որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2021 թվականի դեկտեմբերի 10-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի դեկտեմբերի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի կապի համատեղ (միավորված) համակարգի մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2020 թվականի մայիսի 29-ին՝ Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի միջև փոխգործակցությունը զարգացնելու համար ԱՊՀ մասնակից պետությունների զինված ուժերի Կապի համատեղ (միավորված) համակարգ (այսուհետ՝ Կապի համատեղ (միավորված) համակարգ) ստեղծելու նպատակով:

2. Համաձայնագրի իրագործման գծով Կողմերի լիազորված մարմիններն են Համաձայնագրի մասնակից պետությունների պաշտպանության նախարարությունները (պաշտպանական գերատեսչությունները):

3. Կապի համատեղ (միավորված) համակարգի մեջ մտնում են Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի կապի ուժերն ու միջոցները (ուժերի և միջոցների մի մասը), որոնք կիրառվում են՝ ըստ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի Կապի համատեղ (միավորված) համակարգի կազմակերպման և փոխգործակցության համաձայնեցված պլանի (այսուհետ՝ Պլան) և Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի Կապի համատեղ (միավորված) համակարգի կազմակերպման և զարգացման գլխավոր

1/1 (105/1) 2022

ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

սխեմային համապատասխան և կատարում են Համաձայնագրի 3-րդ հոդվածով նախատեսված խնդիրները:

Կապի համատեղ (միավորված) համակարգի կազմակերպչատեխնիկական կառուցվածքի ձևավորման, դրա կազմության և գործառության սկզբունքները սահմանվում են Անկախ պետությունների համագործակցության կառավարությունների ղեկավարների խորհրդի կողմից հաստատվող համապատասխան հիմնադրույթով:

4. Կապի համատեղ (միավորված) համակարգի ստեղծմանը, գործառությանն ու զարգացմանն ուղղված Կողմերի ջանքերի համակարգումն իրականացնում է ԱՊՀ մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհուրդը՝ ԱՊՀ մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդին առընթեր՝ ԱՊՀ մասնակից պետությունների զինված ուժերի կապի պետերի համակարգման կոմիտեի (այսուհետ՝ Համակարգման կոմիտե) միջոցով:

Համակարգման կոմիտեի նախագահը Ռուսաստանի Դաշնության Զինված ուժերի կապի գլխավոր վարչության պետն է:

Որպես Համակարգման կոմիտեի անդամներ՝ դրա կազմի մեջ են մտնում ԱՊՀ մասնակից պետությունների զինված ուժերի (զինված ուժերի) գլխավոր շտաբների կապի գլխավոր վարչությունների (կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության, կապի և կառավարման ավտոմատացված համակարգերի վարչության, կապի վարչության, կապի դեպարտամենտի) պետերը, ինչպես նաև ԱՊՀ մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի որոշմամբ՝ Համակարգման կոմիտեի նախագահի տեղակալը և այլ պաշտոնատար անձինք:

5. Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագրով ստանձնում է մասնավորապես հետևյալ պարտավորությունները.

5.1. Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի միջև փոխգործակցությունը զարգացնելու նպատակով Կողմերի հետ համատեղ ստեղծել ԱՊՀ մասնակից պետությունների զինված ուժերի Կապի համատեղ (միավորված) համակարգ (հոդված 1, պարբերություն 1),

5.2. Լիազորված մարմինների միջոցով ապահովել Կապի համատեղ (միավորված) համակարգի կազմից գորքերի (ուժերի և միջոցների) մշտական մարտական պատրաստությունը, փոխգործակցությունը և Համակարգման կոմիտեի կողմից մշակվող Պլանին համապատասխան կապին առնչվող համատեղ խնդիրների կատարման ժամանակ դրանց գործողությունները՝ հաշվի առնելով Համաձայնագրի մասնակից

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ

պետությունների զինված ուժերի կապի պլանները և կապի զորքերի կիրառումը (հոդված 8, պարբերություն 1),

5.3. Կապի համատեղ (միավորված) համակարգի գործառության և զարգացման ապահովման շահերից ելնելով՝ կապի ռազմական տեխնիկայի (գույքի) մատակարարումը, կապի ռազմական տեխնիկայի նորոգումը, կապի աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումն իրականացնել Կողմերի հետ երկկողմ համաձայնագրերի հիման վրա (հոդված 11),

5.4. Կապի համատեղ (միավորված) համակարգի ՀՀ համակարգերի (հատվածների) գործառության ու զարգացման ֆինանսավորումը և Կապի համատեղ (միավորված) համակարգի համատեղ միջոցառումների ապահովումն իրականացնել ՀՀ բյուջեով՝ ՀՀ լիազորված մարմինների համար նախատեսված միջոցների հաշվին (հոդված 12),

5.5. Տեղեկատվության փոխանցումը և դրա պաշտպանությունն իրականացնել ՀՀ օրենսդրությանը համապատասխան (հոդված 14, պարբերություն 1),

5.6. Միջպետական գաղտնիքներին առնչվելն ու դրանց պաշտպանությունն իրականացնել ԱՊՀ շրջանակներում գործող՝ գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին միջազգային պայմանագրերին համապատասխան և Համաձայնագրի մասնակից պետությունների հետ՝ գաղտնի տեղեկատվության (պետական գաղտնիքների) փոխադարձ պաշտպանության (պահպանության) մասին երկկողմ պայմանագրերով (հոդված 14, պարբերություն 2),

5.7. Չփոխանցել երրորդ կողմին Համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվությունն առանց այդ տեղեկատվությունը տրամադրած Կողմի գրավոր համաձայնության (հոդված 14, պարբերություն 3),

5.8. Համաձայնագրի իրագործման ընթացքում ստացած տեղեկատվությունը չօգտագործել ի վնաս այլ Կողմերի շահերի (հոդված 14, պարբերություն 4),

5.9. Կապի համատեղ (միավորված) համակարգի զորքերի (ուժերի և միջոցների) համար ռազմական մասնագետների ուսուցումն իրականացնել Կողմերի երկկողմ համաձայնագրերի հիման վրա (հոդված 15):

6. Համաձայնագիրն առաջարկվում է վավերացնել հետևյալ վերապահմամբ.

«Հայաստանի Հանրապետությունը վավերացնում է սույն Համաձայնագիրը՝ պայմանով, որ Հայաստանի Հանրապետությունն առանձին որոշում կկայացնի «Անկախ Պետությունների Համագործակցության

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

մասնակից պետությունների զինված ուժերի կապի համատեղ (միավորված) համակարգի մասին» Համաձայնագրի դրույթների տարածման վերաբերյալ այն պետությունների նկատմամբ, որոնք միացել են սույն Համաձայնագրին 2020 թվականի մայիսի 29-ից հետո»:

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի կապի համատեղ (միավորված) համակարգի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

25 փետրվարի 2022 թվականի
ՍԴՈ-1630

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 1/1 (105/1) 2022

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՊԻ
ՀԱՄԱՏԵՂ (ՄԻԱՎՈՐՎԱԾ) ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ
25-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1630 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի կապի համատեղ (միավորված) համակարգի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈՒ-1630 որոշմամբ որոշել է, որ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի կապի համատեղ (միավորված) համակարգի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈՒ-1630 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1/1 (105/1) 2022

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆

ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1630 որոշմամբ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի կապի համատեղ (միավորված) համակարգի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանի դիմում է Կառավարությունը¹:

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված:** Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով:** Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում:**

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավորությունները:

ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄԻ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆

րավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային

ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարանն ղիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարանն ղիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարանն ղիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարանն ղիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարանն ղիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարանն ղիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարանն ղիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարանն ղիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարանն ղիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կամ

ՍԱՀՄԱՆԱՊՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՊՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ

Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ են համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

Էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար:

Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար:

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները:

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների,

որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 1/1 (105/1) 2022

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:


Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական

դատարանի աշխատակազմի կողմից նրան պեղք է տրամադրվել օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«25» փետրվարի 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՓՇՏԱԿՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ» 2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

25 փետրվարի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Ա. Ֆիդանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022 ՏԵՂԵԿՎՈՐ

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ավտոտրանսպորտային միջոցների հափշտակումների դեմ պայքարի և դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2005 թվականի նոյեմբերի 25-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 2006-Ա որոշմամբ հավանություն է տվել 2018 թվականի հուլիսի 20-ին ստորագրված՝ «Ավտոտրանսպորտային միջոցների հափշտակումների դեմ պայքարի և դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2005 թվականի նոյեմբերի 25-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի դեկտեմբերի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ արձանագրությունը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Ավտոտրանսպորտային միջոցների հափշտակումների դեմ պայքարի և դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2010 թվականի նոյեմբերի 3-ին (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է Ազգային ժողովի՝ 2010 թվականի հոկտեմբերի 5-ի ԱԺՈ-229-Ն որոշմամբ):

2. «Ավտոտրանսպորտային միջոցների հափշտակումների դեմ պայքարի և դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործ-

ծակցության մասին» 2005 թվականի նոյեմբերի 25-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2018 թվականի հուլիսի 20-ին Բաքու քաղաքում Բելառուսի Հանրապետության կառավարության, Ղազախստանի Հանրապետության կառավարության, Ղրղզստանի Հանրապետության կառավարության, Մոլդովայի Հանրապետության կառավարության, Ռուսաստանի Դաշնության կառավարության և Տաջիկստանի Հանրապետության կառավարության միջև՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների տարածքում ավտոտրանսպորտային միջոցների նկատմամբ հանցավոր ոտնձգությունների հակազդելու համակարգի կատարելագործման նպատակով:

3. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Արձանագրության 1-ին հոդվածի 5-րդ կետի «գ» ենթակետի կապակցությամբ վերապահում է ներկայացրել Ղազախստանի Հանրապետությունը՝ նշելով, որ վերոնշյալ դրույթը չի տարածվում Ղազախստանի Հանրապետության վրա: Իսկ նույն Արձանագրությամբ փոփոխվող՝ Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի կապակցությամբ հայտարարություն է կատարել Ռուսաստանի Դաշնությունը՝ նշելով, որ վերոնշյալ դրույթով նախատեսված՝ պետական սահմանը հատող ավտոտրանսպորտային միջոցների մասին տեղեկատվություն չի տրամադրելու:

4. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

4.1. սահմանել կենտրոնական իրավասու մարմին և Համաձայնագրի դրույթների կիրարկման համար պատասխանատու իրավասու մարմիններ (նշելով լուծվող հարցերի շրջանակը) և այդ մասին ծանուցել ավանդապահին (հոդվ. 1, 4-րդ կետ),

4.2. ավտոտրանսպորտային միջոցների հափշտակումների կանխման, դրանց հետախուզման և վերադարձման ապահովման նպատակով ապահովել ավտոտրանսպորտային միջոցների մասին տեղեկատվական բազայի ձևավորումը և պահպանությունը, որն առկայության դեպքում ընդգրկում է տեղեկություններ գրանցված ավտոտրանսպորտային միջոցների մասին, այդ թվում՝ ուրիշ պետության՝ ժամանակավորապես գրանցված այն ավտոտրանսպորտային միջոցների, որոնք շահագործվում կամ օգտագործվում են Հայաստանի Հանրապետության տարածքում, ինչպես նաև դրանց նույնականացման համարների,

1/1 (105/1) 2022
 ♦ ՏԵՂԵԿՎԳԻՐ ♦
 ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

գրանցման փաստաթղթերի և գրանցման նշանների մասին (հոդվ. 1, 5-րդ կետ, 2-րդ և 3-րդ պարբերություններ), ավտոտրանսպորտային միջոցների հափշտակումների կանխման, դրանց հետախուզման և վերադարձման ապահովման նպատակով ապահովել ավտոտրանսպորտային միջոցների մասին տեղեկատվական բազայի ձևավորումը և պահպանությունը, որն առկայության դեպքում ընդգրկում է տեղեկություններ հաշվառումից հանված ավտոտրանսպորտային միջոցների մասին, պետական սահմանը հատող ավտոտրանսպորտային միջոցների մասին, այն ավտոտրանսպորտային միջոցների մասին, որոնց վերաբերյալ տեղեկությունները պետական սահմանը հատելիս օրենսդրությանը համապատասխան ենթակա են մուտքագրման՝ մաքսային մարմինների տեղեկատվական բազաներ, այն ավտոտրանսպորտային միջոցների մասին, որոնք վնասվել են այնպիսի ճանապարհատրանսպորտային պատահարի, հրդեհի, տարերային աղետի և այլ հանգամանքների կամ երրորդ անձանց գործողությունների հետևանքով, որպիսիք այդ թվում հանգեցրել են դրանց կոնստրուկտիվ կործանմանը (հոդվ. 1, 5-րդ կետ, 3-րդ պարբերություն),

4.3. օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ ապահովել այլ Կողմերի իրավասու մարմինների կողմից Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետում նշված տեղեկատվական բազաներում առկա տվյալների ստացման հնարավորությունն իրական ժամանակի ռեժիմում, ինչպես նաև այլ Կողմերի իրավասու մարմինների հարցման դեպքում և նախաձեռնության կարգով ապահովել ավտոտրանսպորտային միջոցների հափշտակության դեմ պայքարի հարցում հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության օպերատիվ տրամադրումը (հոդվ. 1, 6-րդ կետ),

4.4. ապահովել, որ Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետում նշված տվյալների տեղեկատվական բազաներից տեղեկություններ ստանալու հարցումը պարունակի տեղեկություններ հայցող իրավասու մարմնի անվանման և հայցվող այն իրավասու մարմնի անվանման մասին, որին ուղարկվում է հարցումը, ինչպես նաև պարունակի տեղեկություններ Համաձայնագրի համապատասխան կետին կատարվող հղման մասին, պարունակի գործի էության համառոտ նկարագիրը, տվյալների տեղեկատվական բազաներից հայցվող տեղեկությունների ցանկը (հոդվ. 1, 6-րդ կետ),

4.5. ապահովել, որ հարցումը կատարվի այն ստանալու օրվանից հաշված մեկ ամիսը չգերազանցող ժամկետում, իսկ այդ ժամկետը կրճատելու անհրաժեշտության դեպքում, ապահովել, որ հարցման

տեքստում կատարվի համապատասխան վերապահում՝ դրա պատճառների և հարցումը կատարելու ցանկալի ժամկետի մատնանշմամբ (հոդվ. 1, 6-րդ կետ),

4.6. ապահովել, որ հայցող իրավասու մարմինն անհապաղ, գրավոր տեղեկացվի հարցման կատարումը մերժելու, ինչպես նաև մերժման պատճառների մասին (հոդվ. 1, 6-րդ կետ),

4.7. ապահովել, որ Համաձայնագրի 5-րդ հոդվածին համապատասխան կերպով ծանուցում ստացած ՀՀ կենտրոնական իրավասու մարմինը ուղարկի հարցում հայցվող Կողմի կենտրոնական իրավասու մարմինն՝ ավտոտրանսպորտային միջոցը վերադարձնելու մասին կամ գրավոր ծանուցի ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջը՝ այն վերադարձնելու հարցում վերջինիս շահագրգռվածության բացակայության մասին (հոդվ. 1, 8-րդ կետ) և այլն:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ ավտոտրանսպորտային միջոցների հափշտակումների դեմ պայքարի և դրանց վերադարձի ապահովման գործում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Ավտոտրանսպորտային միջոցների հափշտակումների դեմ պայքարի և դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2005 թվականի նոյեմբերի 25-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

25 փետրվարի 2022 թվականի
ՍԴՈ-1631

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

**«ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՓՇՏԱԿՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ» 2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»
ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-
1631 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Ավտոտրանսպորտային միջոցների հափշտակումների դեմ պայքարի և դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2005 թվականի նոյեմբերի 25-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-1631 որոշմամբ որոշել է, որ «Ավտոտրանսպորտային միջոցների հափշտակումների դեմ պայքարի և դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2005 թվականի նոյեմբերի 25-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-1631 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում

1/1 (105/1) 2022
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1631 որոշմամբ «Ավտոտրանսպորտային միջոցների հափշտակումների դեմ պայքարի և դրանց վերադարձի ապահովման գործում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2005 թվականի նոյեմբերի 25-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով

դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող

անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ

ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կամ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կամ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և

Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝

օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն,

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 95

այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:


Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փյալ դեպքում սահմանադրական դատարանի կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պեղք է փրամադրվել օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շփոթելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՊԻՐ ◆ 1/1 (105/1) 2022

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«25» փետրվարի 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

25 փետրվարի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Բ. Գրիգորյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1999-Ա որոշմամբ հավանություն է տվել «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան վավերացնելու

1/1 (105/1) 2022
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
97

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի դեկտեմբերի 14-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով վերոնշյալ կոնվենցիան և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրվել է 2009 թվականի հունիսի 18-ին Թրոմսո քաղաքում՝ իր անդամ պետություններում յուրաքանչյուր անձի՝ ներկայացված հարցման հիման վրա, առանց որևէ խտրականության, պետական մարմինների տնօրինության տակ գտնվող փաստաթղթերի մատչելիության իրավունքի ապահովման նպատակով:

Հայաստանի Հանրապետության կողմից Կոնվենցիան ստորագրվել է 2020թ. հունիսի 24-ին:

2. Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, Կոնվենցիայով ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

▪ երաշխավորել յուրաքանչյուր անձի՝ ներկայացված հարցման հիման վրա, առանց որևէ խտրականության, պետական մարմինների տնօրինության տակ գտնվող փաստաթղթերի մատչելիության իրավունքը (հոդված 2, պարբերություն 1),

▪ Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրության շրջանակներում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ Կոնվենցիայով սահմանված դրույթներն ուժի մեջ դնելու նպատակով, և այդ միջոցները ձեռնարկել ամենաուշը Հայաստանի Հանրապետության համար Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահից (հոդված 2, պարբերություններ 2, 3),

▪ պաշտոնական փաստաթղթերի մատչելիության իրավունքը սահմանափակելու դեպքում ապահովել, որ սահմանափակումները հստակ սահմանվեն օրենքում, լինեն անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում, ինչպես նաև լինեն համաչափ ազգային անվտանգության, պաշտպանության և միջազգային հարաբերությունների, հանրային

անվտանգության, հանցավոր գործունեության կանխարգելման, հետաքննման և հետապնդման, կարգապահական հետաքննությունների, պետական մարմինների կողմից ստուգման, հսկողության և վերահսկողության, գաղտնիության և այլ մասնավոր օրինական շահերի, առևտրային և այլ տնտեսական շահերի, պետության տնտեսական, դրամավարկային և փոխարժեքի քաղաքականության, դատավարության ընթացքում կողմերի հավասարության և արդարադատության արդյունավետ իրականացման, ինչպես նաև շրջակա միջավայրի կամ որևէ հարցի քննության հետ կապված՝ պետական մարմիններում կամ դրանց միջև քննարկումների շահերը պաշտպանելու նպատակին (հոդված 3, պարբերություն 1, մաս 1),

- Կոնվենցիայի կողմերի հետ քննարկել այն ժամկետների սահմանման հարցը, որոնց լրանալուց հետո Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված սահմանափակումներն այլևս չեն կիրառվի (հոդված 3, պարբերություն 3),

- պաշտոնական փաստաթղթի համար հարցում ներկայացնողին ազատել պաշտոնական փաստաթղթի մատչելիության համար հիմնավորումներ ներկայացնելու պարտավորությունից և ապահովել, որ հարցում ներկայացնելու համար սահմանված ձևական պահանջները չգերազանցեն հարցման ընթացք տալու համար անհրաժեշտ սահմանները (հոդված 4, պարբերություններ 1 և 3),

- ապահովել, որ պետական մարմինը հնարավորության ողջամիտ սահմաններում հարցում ներկայացնողին օգնի պարզել այն պաշտոնական փաստաթուղթը, որի համար հարցում է ներկայացվել (հոդված 5, պարբերություն 1),

- ապահովել, որ պաշտոնական փաստաթղթի մատչելիության համար ներկայացվող հարցմանն արձագանքի այն պետական մարմինը, որը տնօրինում է փաստաթուղթը, իսկ եթե պետական մարմնի տնօրինության ներքո չի գտնվում այն փաստաթուղթը, որի համար հարցում է ներկայացվել, կամ նա չունի տվյալ հարցմանն ընթացք տալու լիազորություն, ապա ապահովել, որ եթե հնարավոր է, դիմում կամ հարցում ներկայացնողին ուղարկի իրավասու պետական մարմին (հոդված 5, պարբերություն 2),

- ապահովել, որ պաշտոնական փաստաթղթերի մատչելիության համար հարցումները դիտարկվեն հավասար հիմունքներով (հոդված 5, պարբերություն 3),

- ապահովել, որ պաշտոնական փաստաթղթի մատչելիության համար հարցումը դիտարկվի անմիջապես և որոշումը կայացվի, հաղորդվի

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 99

և կատարվի հնարավորինս արագ կամ նախապես սահմանված ողջամիտ ժամկետում (հոդված 5, պարբերություն 4),

- ապահովել, որ պետական մարմինը պաշտոնական փաստաթղթի մատչելիությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելիս ներկայացնի մերժման հիմքերը, և երաշխավորել հարցում ներկայացնողի տվյալ պետական մարմնից հարցումը մերժելու գրավոր հիմնավորումը ստանալու իրավունքը (հոդված 5, պարբերություն 6),

- պաշտոնական փաստաթղթի մատչելիություն տրամադրելու դեպքում երաշխավորել հարցում ներկայացնողի՝ բնօրինակը կամ պատճենն ուսումնասիրելու ընտրության կամ իր ընտրությամբ, դրա պատճենը հնարավոր ցանկացած ձևով կամ ձևաչափով ստանալու իրավունքը, եթե արտահայտված նախընտրությունն անհիմն չէ (հոդված 6, պարբերություն 1),

- ապահովել, որ պաշտոնական փաստաթղթում ներառված որոշ տեղեկատվության մասով սահմանափակում կիրառելու դեպքում պետական մարմինը, այնուամենայնիվ, մատչելիություն տրամադրի առկա տեղեկատվության մյուս մասի համար և հստակ նշի տեղեկատվության ցանկացած մասի վերաբերյալ, որի նկատմամբ կիրառվել է սահմանափակում (հոդված 6, պարբերություն 2),

- ապահովել, որ պետական մարմնի տարածքում պաշտոնական փաստաթղթերի ուսումնասիրությունը լինի անվճար, ինչը չի խանգարում արխիվների և թանգարանների կողմից այդ առնչությամբ տրամադրվող ծառայությունների համար սահմանել վճարներ (հոդված 7, պարբերություն 1),

- հարցում ներկայացնողից պաշտոնական փաստաթղթի պատճենի տրամադրման դիմաց վճարի հնարավոր գանձման դեպքում ապահովել, որ այն լինի ողջամիտ և չգերազանցի փաստաթղթի վերարտադրման և տրամադրման հետ կապված իրական ծախսերը, ինչպես նաև ապահովել, որ հրապարակվեն գանձվող վճարների սակագները (հոդված 7, պարբերություն 2),

- ապահովել, որ պաշտոնական փաստաթղթի համար հարցումն ուղղակի կամ անուղղակի ձևով, մասամբ կամ ամբողջությամբ մերժելու դեպքում հարցում ներկայացնողի համար հասանելի լինի դատարանում կամ օրենքով սահմանված՝ այլ անկախ և անկողմնակալ մարմնում բողոքարկման ընթացակարգ (հոդված 8, պարբերություն 1),

- ապահովել, որ հարցում ներկայացնողը միշտ ունենա արագացված և ոչ ծախսատար բողոքարկման ընթացակարգի հնարավորություն, որը կներառի կա՛մ պետական մարմնի կողմից վերանայում, կա՛մ

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին պարբերության համապատասխան իրականացվող բողոքարկում (հոդված 8, պարբերություն 2),

- հանրությանը տեղեկացնել պաշտոնական փաստաթղթերի մատչելիության իրավունքի մասին և այն մասին, թե ինչպես կարելի է իրացնել այդ իրավունքը, ինչպես նաև պատշաճ միջոցներ ձեռնարկել, որ նշված իրավունքի իրականացման մասով պետական մարմիններին տեղեկացվի իրենց պարտականությունների և պարտավորությունների մասին,

- տեղեկատվություն տրամադրվի այն խնդիրների և գործունեության վերաբերյալ, որոնց համար իրենք պատասխանատու են, որ արդյունավետորեն կառավարվեն փաստաթղթերը՝ դրանց մատչելիությունը հեշտացնելու նպատակով, և կիրառվեն հստակ և ամրագրված կանոններ փաստաթղթերի պահպանման և ոչնչացման համար (հոդված 9),

- ապահովել, որ պետական մարմինը սեփական նախաձեռնությամբ և անհրաժեշտության դեպքում համապատասխան միջոցառումներ ձեռնարկի իր տնօրինության տակ գտնվող պաշտոնական փաստաթղթերը հրապարակելու համար՝ հանրային կառավարման թափանցիկությունը և արդյունավետությունը խթանելու, ինչպես նաև ընդհանուր հետաքրքրության հարցերին հանրության իրազեկված մասնակցությունը խրախուսելու նպատակով (հոդված 10),

- Հայաստանի Հանրապետության մասով Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, Կոնվենցիայի Մասնագետների խմբին փոխանցել հաշվետվություն, որը ներառում է Կոնվենցիայի դրույթներն ուժի մեջ դնելու նպատակով ձեռնարկված օրենսդրական և այլ միջոցառումների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն, այնուհետև Կողմերի խորհրդակցության յուրաքանչյուր հանդիպումից առաջ Մասնագետների խմբին փոխանցել վերոհիշյալ տեղեկատվության թարմացված տարբերակը, ինչպես նաև Մասնագետների խմբին փոխանցել նաև ցանկացած տեղեկատվություն, որը նա պահանջում է՝ իր առջև դրված խնդիրները կատարելու նպատակով (հոդված 14):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1/1 (105/1) 2022
◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ
◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

1. «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

25 փետրվարի 2022 թվականի
ՍԴՈ-1632

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ
ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»
ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ
ՍԴՈ-1632 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-1632 որոշմամբ որոշել է, որ «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-1632 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1632 որոշմամբ «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին»

1/1 (105/1) 2022
◆ ՏԵՂԵՎՈՒԹՅՈՒՆ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանի դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.
- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.
- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.
- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում են, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են

1/1 (105/1) 2022
◆ ՏԵՂԵՎՈՒԹՅՈՒՆ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՆԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություն-

ներ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի

տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լինեն Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատարանի կողմից չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«25» փետրվարի 2022թ.

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈՔՈՒՍՆԵՐԻ
ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղ. Երևան

25 փետրվարի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ա. Սիմոնյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երևանի ավտոբուսների ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված

պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2105-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երևանի ավտոբուսների ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի դեկտեմբերի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վարկային համաձայնագիրը, Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Քննության առարկա վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) նպատակ է հետապնդում Վարկառուի ֆինանսական աջակցությամբ բարելավել Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի ցանցը և նվազեցնել օդի աղտոտվածությունը:

2. Համաձայնագիրը բաղկացած է նախաբանից, 6 հոդվածներից և երկու Հավելվածներից, որոնցից առաջինը նվիրված է Ծրագրի նկարագրությանը, երկրորդը՝ հատկացված վարկի ֆինանսական ծախսերի կատեգորիաներին և մասհանումներին: Երկրորդ Հավելվածն ունի ներդիր, որը սահմանում է կատեգորիաները, կատեգորիաներից յուրաքանչյուրին հատկացված վարկի գումարը և յուրաքանչյուր կատեգորիայի համար նախատեսված ծախսերի ֆինանսավորման տոկոսային արտահայտությունը:

3. Ըստ Համաձայնագրի՝ 2018 թվականի հոկտեմբերի 1-ի Ստանդարտ պայմանների բոլոր դրույթները ներառվում ու դառնում են կիրառելի Համաձայնագրի նկատմամբ նույն ուժով ու գործողությամբ, եթե դրանք ամբողջությամբ սահմանված լինեին Համաձայնագրում (այդ դրույթներն այսուհետ՝ Ստանդարտ պայմաններ) (Բաժին 1.01):

Ըստ Համաձայնագրի՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (այսուհետ՝ Բանկ) տրամադրել է 5 000 000 եվրոյի դրամա-

շնորհային ֆինանսավորում Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի գործընկերության կողմից՝ աջակցելու Հայաստանի Հանրապետությանը Ծրագրի իրականացման գործում, ինչը ենթակա է կարգավորման Բանկի, Հայաստանի Հանրապետության և Ծրագրի իրականացման կազմակերպության միջև կնքված համաձայնագրով նախատեսված պայմաններով (Դրամաշնորհային համաձայնագիր)։ վերջինում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ Կառավարության դիմումը գտնվում է Սահմանադրական դատարանի վարույթում։

Քննության առարկա Համաձայնագրով Բանկը համաձայնում է Համաձայնագրով սահմանված պայմաններով և կարգով Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 20.000.000 եվրո գումար (Վարկ), Համաձայնագրի 2.02 Բաժնում սահմանված ֆինանսական պայմաններով. մասհանման նվազագույն գումարի չափը 2.000.000 եվրո է, կանխավճարի նվազագույն գումարի չափը՝ 2.000.000 եվրո, չեղարկման նվազագույն գումարի չափը՝ 2.000.000 եվրո: Վերջին հասանելիության ամսաթիվը Համաձայնագրի կնքման երրորդ տարին լրանալու օրն է, որը նաև Վարկի առաջին մարման և Տոկոսագումարի վճարման ամսաթիվն է կամ ավելի ուշ ընկնող ամսաթիվ, որին Բանկը կարող է համաձայնել Հայաստանի Հանրապետության հայտի հիման վրա և ծանուցել Հայաստանի Հանրապետությանը: Վարկի վերջին մարման ամսաթիվը 2036 թվականի հոկտեմբերի 16-ն է: Ծրագիրը նախատեսվում է ավարտել մինչև 2025 թվականի օգոստոսի 31-ը:

1/1 (105/1) 2022

ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

4.1. սկսած Համաձայնագրի կնքման երրորդ տարին լրանալու օրվանից կամ անմիջապես դրանից հետո՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին և հոկտեմբերի 16-ին մինչև 2036 թվականի հոկտեմբերի 16-ը, **մարել** Վարկը 24 հավասարաչափ (կամ որքան հնարավոր է հավասարաչափ) կիսամյակային վճարումներով (Հոդված II, Բաժին 2.02, կետ «ե», ենթակետ 1),

4.2. չհակասելով Համաձայնագրի 2.02 Բաժնի «դ» կետում սահմանված դրույթներին՝ այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունը մինչև Համաձայնագրի 2.02 Բաժնի «ե» կետով սահմանված՝ Վարկի առաջին մարման ամսաթիվը չի մասհանում վարկի ամբողջ գումարը, և Բանկը հետաձգում է Համաձայնագրի 2.02 Բաժնի ներքոհիշյալ «զ» կետով սահմանված Վերջին հասանելիության ամսաթիվը մինչև այն ամսաթիվը,

որը Վարկի առաջին մարման ամսաթվից ավելի ուշ ընկած ամսաթիվ է, ապա Վարկի առաջին մարման ամսաթվին կամ դրանից հետո կատարված յուրաքանչյուր մասհանման գումար **բաշխել** մարման համար հավասար մասնաբաժիններով՝ Վարկի մարման տարբեր ամսաթվերի միջև, որոնք ընկնում են այդ մասհանման ամսաթվից հետո (անհրաժեշտության դեպքում Բանկի հետ ճշտելով նշված ձևով բաշխված գումարները՝ յուրաքանչյուր դեպքում ամբողջ թվեր ստանալու համար)։ Բանկը ժամանակ առ ժամանակ ծանուցում է Հայաստանի Հանրապետությանն այդ բաշխումների մասին (Հոդված II, Բաժին 2.02, կետ «ե», ենթակետ 2),

4.3. **վճարել** պարտավճար տարեկան 0.5% չափով (Հոդված II, Բաժին 2.02, կետ «է»),

4.4. սկսած Վարկի առաջին մարման ամսաթվից՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին և հոկտեմբերի 16-ին, **վճարել** Վարկը Լողացող տոկոսադրույքով, և չհակասելով վերոհիշյալին՝ Հայաստանի Հանրապետությունը կարող է ինչպես վարկի ամբողջ գումարի, այնպես էլ դրա ցանկացած մասնաբաժնի համար, որն այդ պահի դրությամբ վճարված չէ, որպես Լողացող տոկոսադրույքով տոկոսագումարի վճարման այլընտրանք ընտրել վճարման համար Ֆիքսված տոկոսադրույքը՝ վարկի այդ մասնաբաժնի համար՝ Ստանդարտ պայմանների 3.04 բաժնի «գ» կետին համապատասխան՝ պայմանով, որ Համաձայնագրի 2.02 Բաժնի «ը» կետի նպատակով՝ Վարկի մայր գումարը Լողացող տոկոսադրույքից անցման դեպքում պակաս չի լինի, քան 2 000 000 եվրոն (Հոդված II, Բաժին 2.02, կետեր «դ», «ե)1» և «ը»),

4.5. բացի Ստանդարտ պայմանների IV և V հոդվածներով սահմանված ընդհանուր հանձնառություններից, եթե Բանկն այլ բան չի նախատեսում, ապա Ծրագրի իրականացման կազմակերպության համար, Իրականացման համաձայնագրի համաձայն, հասանելի դարձնել Վարկի միջոցները, իրացնել Իրականացման համաձայնագրով Հայաստանի Հանրապետությանը վերապահված իրավունքներն այնպես, որ պաշտպանի Հայաստանի Հանրապետության և Բանկի շահերը, համապատասխանի Համաձայնագրի դրույթներին, իրականացնել այն նպատակները, որոնց համար Վարկը տրամադրվել է: «**Իրականացման համաձայնագիր**» նշանակում է Համաձայնագրի ամսաթվով կամ դրան մոտ ամսաթվով թվագրված՝ Հայաստանի Հանրապետության, Քաղաքապետարանի և Ծրագրի իրականացման կազմակերպության միջև պատշաճ գրավոր ձևով կնքված համաձայնագիր, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունը

Ծրագրի իրականացման կազմակերպության համար հասանելի կդարձնի Վարկի միջոցները (Հոդված III, Բաժին 3.01, կետեր «ա» և «բ»),

4.6. բացի Ստանդարտ պայմանների IV և V հոդվածներով սահմանված ընդհանուր հանձնառություններից, եթե Բանկն այլ բան չի նախատեսում, ապա **չփոխանցել** Իրականացման համաձայնագրի որևէ դրույթի իրականացումը, դրանցում փոփոխություններ **չկատարել**, դրանք չեղյալ **չհայտարարել** և **չհրաժարվել** դրանցից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ բան է նախատեսում (Հոդված III, Բաժին 3.01, կետ «գ»),

4.7. բացի Ստանդարտ պայմանների IV և V հոդվածներով սահմանված ընդհանուր հանձնառություններից, եթե Բանկն այլ բան չի նախատեսում, ապա **ապահովել**, որ Ծրագրի իրականացման կազմակերպությունը կատարի Ծրագրի համաձայնագրով իր ստանձնած բոլոր պարտականությունները, ներառյալ, առանց բացառության, իր այն պարտականությունները, որոնք վերաբերում են հետևյալին՝

1) ծրագրի իրականացման գրասենյակի գործունեության ապահովում՝ Ծրագրի համաձայնագրի 2.03 բաժնով նախատեսված կարգով,

2) ծրագրի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնում՝ Ծրագրի համաձայնագրի 2.04 բաժնով նախատեսված կարգով,

3) բնապահպանական և սոցիալական խնդիրներ՝ Ծրագրի համաձայնագրի 2.05 բաժնով նախատեսված կարգով,

4) Ծրագրի իրականացմանն աջակցելու համար խորհրդատուների ներգրավում և նրանց ծառայությունների օգտագործում,

2022 թվականի 105/1 հոկտեմբերի 1-ին ընդունված ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ

◆ 5) Ծրագրին վերաբերող հարցերի և Ծրագրի իրականացման կազմակերպության գործունեության վերաբերյալ հաշվետվությունների պատրաստում և ներկայացում՝ Ծրագրի համաձայնագրի 2.06 բաժնով նախատեսված կարգով,

6) գործընթացների իրականացում, փաստաթղթերի և հաշիվների վարում, ֆինանսական հաշվետվությունների պատրաստում, աուդիտ և ներկայացում Բանկ, ինչպես նաև Ծրագրի կամ Ծրագրի իրականացման կազմակերպության գործունեության վերաբերյալ ցանկացած այլ համապատասխան տեղեկատվության տրամադրում Բանկին՝ Ծրագրի համաձայնագրի 3.01 բաժնով նախատեսված կարգով,

◆ 7) Ծրագրի և Ծրագրի իրականացման կազմակերպության ֆինանսական և գործառնական կողմերի վերաբերյալ բոլոր վավերապայմանների պահպանում՝ Ծրագրի համաձայնագրի 3.02, 3.03, 3.04 և 3.05 բաժիններով նախատեսված կարգով (Հոդված III, Բաժին 3.01, կետ «դ»),

4.8. բացի Ստանդարտ պայմանների IV և V հոդվածներով սահմանված ընդհանուր հանձնառություններից, եթե Բանկն այլ բան չի նախատեսում,

ապա Նոր-Նորքում առկա պահեստի շուրջ սանիտարական պահպանության գոտու (ՍՊԳ) հարկադիր կիրառման և հարակից հողերի օտարման և տարաբնակեցման ազդեցությունների դեպքում նախքան որևէ այդպիսի ազդեցությունների ի հայտ գալը, Բանկի համար ընդունելի պայմաններով և ձևաչափով **մշակել և կիրառել** վերաբնակեցման ծրագիր, որը պետք է ստուգվի և հաստատվի Բանկի կողմից՝ Բանկի համար ընդունելի պայմաններով և ձևաչափով Ավարտի հաշվետվության միջոցով (Հոդված III, Բաժին 3.01, կետ «ե»),

4.9. բացի Ստանդարտ պայմանների IV և V հոդվածներով սահմանված ընդհանուր հանձնառություններից, եթե Բանկն այլ բան չի նախատեսում, ապա **երաշխավորել**, որ Քաղաքապետարանը Բանկի համար ընդունելի պայմաններով և դրույթներով հաստատել է, որ ունի բավարար առկա պահեստային հնարավորություններ՝ ապահովելու Ծրագրի կողմից ֆինանսավորվող ավտոբուսային պարկի շահագործման և սպասարկման շարունակականությունը միջանկյալ ժամանակահատվածում, մինչև Նոր-Նորքի նոր դեպոյի կամ այլ պահեստային օբյեկտները շահագործման կհանձնվեն (Հոդված III, Բաժին 3.01, կետ «զ»),

4.10. բացի Ստանդարտ պայմանների IV և V հոդվածներով սահմանված ընդհանուր հանձնառություններից, եթե Բանկն այլ բան չի նախատեսում, ապա **ձեռնարկել** կամ **ապահովել** բոլոր այն լրացուցիչ միջոցառումների ձեռնարկումը, որոնք անհրաժեշտ են Ծրագիրն ավարտին հասցնելու նպատակով բավարար միջոցներ ներգրավելու համար (Հոդված III, Բաժին 3.01, կետ «է»),

4.11. ոչ մի մասհանում **չկատարել** մինչև Վարկի համաձայնագրի ստորագրման ամսաթիվը կատարված ծախսերի մասով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մասհանումները՝ ընդհանուր գումարով, որը չի գերազանցում Վարկի ընդհանուր գումարի 20%-ը, կարող են արվել Ծրագրի առնչությամբ՝ նախքան Վարկի համաձայնագրի ստորագրման ամսաթիվը կատարված ծախսերի հաշվին, սակայն Քաղաքապետարանի համար մոտավորապես 100 միավոր ժամանակակից, 12 մետրանոց, ցածր հատակով, ՍԲԳ աշխատող ավտոբուսների ձեռքբերման պայմանագրի ստորագրման ամսաթվից հետո (Հավելված 2, կետ 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ

1. «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երևանի ավտոբուսների ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

25 փետրվարի 2022 թվականի
ՍԴՈ-1633

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈՔՈՒՍՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1633 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երևանի ավտոբուսների ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-1633 որոշմամբ որոշել է, որ Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երևանի ավտոբուսների ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-1633 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 1/1 (105/1) 2022

սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1633 որոշմամբ Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երևանի ավտոբուսների ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի

ՍԱԳՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆

հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում

նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահա-

րաբերությունները կարգավորվում են «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

Էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

Էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՅՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԵՂԵԿՎՈՐ

փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես

ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:


Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական

դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«25» փետրվարի 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ԲԵՈՒԼԻՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

25 փետրվարի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռ. Գևորգյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2021 թվականի հոկտեմբերի 4-ին Բեռլինում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապե-

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

տության կառավարության միջև 2020 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2138-Ա որոշմամբ հավանություն է տվել 2021 թվականի հոկտեմբերի 4-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2020 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2021 թվականի դեկտեմբերի 24-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի դեկտեմբերի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2020 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2021 թվականի հոկտեմբերի 4-ին Բեռլինում՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստելու նպատակով:

2. Համաձայն Համաձայնագրի՝ եթե ուսումնասիրության արդյունքում հաստատվի ծրագրերին օժանդակելու նպատակահարմարությունը, ապա Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ երկու կառավարությունների կողմից համատեղ ընտրվելիք այլ ընդունող կողմերի հնարավորություն է ընձեռում Վերականգնման վարկերի բանկից (ՎՎԲ) ստանալ հետևյալ գումարները՝ մինչև 3 000 000 եվրոյի (երեք միլիոն եվրո) ֆինանսական օժանդակություն «Կենսաբազմազանության և կայուն տեղական զարգացում - Հայաստան» ծրագրի համար, մինչև 3 000 000

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

եվրո (երեք միլիոն եվրո)՝ «Վերականգնվող էներգիայի զարգացում (II փուլ)- DKT1» ծրագրի համար և մինչև 400 000 եվրո (չորս հարյուր հազար եվրո)՝ «Փոքր և միջին ձեռնարկությունների խթանում III» ծրագրի համար (Հոդված 1, 1-ին պարբերություն):

Բացի դրանից, եթե ուսումնասիրության արդյունքում հաստատվի ծրագրերին օժանդակելու նպատակահարմարությունը զարգացման քաղաքականության տեսանկյունից, եթե Հայաստանի Հանրապետությունը շարունակի պահպանել նախկին վարկային հուսալիությունը, և եթե Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետական երաշխիք տրամադրի այն դեպքում, եթե վարկառուն ինքը կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը չեն, Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Կառավարությանը կամ երկու կառավարությունների կողմից համատեղ ընտրվելիք այլ վարկառուի հնարավորություն է ընձեռում ստանալ «Վերականգնվող էներգիայի զարգացում (II փուլ) - DKT1» ծրագրի համար՝ Վերականգնման վարկերի բանկի կողմից զարգացման հանրային քաղաքականության շրջանակում տրամադրվող մինչև 40 000 000 եվրո (քառասուն միլիոն եվրո) գումարի չափով արտոնյալ վարկ, «Փոքր և միջին ձեռնարկությունների խթանում III» ծրագրի համար՝ Վերականգնման վարկերի բանկի կողմից զարգացման հանրային քաղաքականության շրջանակում տրամադրվող մինչև 70 000 000 եվրո (յոթանասուն միլիոն եվրո) գումարի չափով արտոնյալ վարկ:

Ծրագրերը չեն կարող փոխարինվել այլ ծրագրերով (Հոդված 1, 2-րդ պարբերություն):

3. Համաձայնագիրը վերաբերում է նաև անհրաժեշտության դեպքում տրամադրվելիք այնպիսի լրացուցիչ դրամաշնորհների, որոնք ուղղված կլինեն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված ծրագրերի նախապատրաստմանը կամ անհրաժեշտ հարակից միջոցառումներին, ինչպես նաև ծրագրերի ընդլայնմանը և լրացուցիչ ծրագրերի, եթե կառավարությունները երկուստեք ցանկանան շարունակել օժանդակությունը: Լրացուցիչ ծրագրերին և ծրագրերի ընդլայնմանն ուղղված աջակցային հատկացումների մասին Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը կձանուցի՝ հստակորեն վկայակոչելով Համաձայնագիրը: Այդ դեպքում կգործեն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերությունից շեղվող ժամկետները, որոնք առանձին կնշվեն Գերմանիայի Դաշնային

¹ Կլիմայի և տեխնոլոգիաների գերմանական նախաձեռնություն:

Հանրապետության կառավարության ծանուցման մեջ (Հոդված 1, 3-րդ պարբերություն):

4. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով գերմանական կողմից հայկական կողմին տրամադրվող ընդհանուր գումարը կազմում է 116 400 000 (հարյուր տասնվեց միլիոն չորս հարյուր հազար) եվրո:

5. Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված գումարների օգտագործումը, այն պայմանները, որոնցով տրամադրվում են այդ գումարները, ինչպես նաև հանձնարարականներ տալու ընթացակարգը սահմանվում են Վերականգնման վարկերի բանկի և վարկեր կամ ֆինանսական օժանդակություններ ստացողների միջև կնքվող պայմանագրերով, որոնք ենթարկվում են Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդրությանը (Հոդված 2, 1-ին պարբերություն):

Վերոնշյալ գումարների հատկացումը չի կատարվի, եթե հատկացման տարվան հաջորդող հինգ տարիների ընթացքում Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված պայմանագրերը չկնքվեն: Այդ գումարների հատկացման համար սահմանված վերջնաժամկետը 2025 թվականի նոյեմբերի 30-ն է: Եթե նախատեսված ժամանակահատվածում Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված պայմանագրերը կնքված լինեն հատկացումների մի մասի համար միայն, ապա պայմանագրի այս դրույթը կվերաբերի միայն այդ պայմանագրերով չամրագրված առանձին գումարներին (Հոդված 2, 2-րդ պարբերություն):

6. Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագրով ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, եթե վարկառուն ինքը կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը չեն, երաշխավորի Վերականգնման վարկերի բանկի օգտին վճարումները եվրոյով՝ ի կատարումն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն կնքվելիք պայմանագրերով վարկառուների ստանձնած պարտավորությունների (Հոդված 2, 3-րդ պարբերություն),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, եթե ֆինանսական օժանդակություններ ստացողը ինքը կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը չեն, Վերականգնման վարկերի բանկին տա երաշխիք, որ կկատարվեն պարտքի վերադարձման այն

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

պահանջները, որոնք կարող են բխել Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն կնքվելիք ֆինանսավորման պայմանագրերից (Հոդված 2, 4-րդ պարբերություն),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստանձնի Վերականգնման վարկերի բանկի կողմից վճարման ենթակա այն հարկերը, որոնք ծագում են Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պայմանագրերի կնքման և իրականացման արդյունքում, ինչպես նաև ապահովել, որ Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պայմանագրերի կնքման և իրականացման արդյունքում առաջացող ավելացված արժեքի հարկը ստանձնի Հայաստանի Հանրապետության կառավարությունը և բացի այդ՝ վճարի բոլոր այն պետական տուրքերը, որոնք ենթակա են վճարման Վերականգնման վարկերի բանկի կողմից (Հոդված 3),

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը վարկերի և ֆինանսական օժանդակությունների օգտագործումից անհրաժեշտաբար բխող՝ ծովային, ցամաքային և օդային ճանապարհներով անձանց և գույքի տեղափոխման համար ուղևորներին և առաքղներին տա տրանսպորտային ձեռնարկության ազատ ընտրության հնարավորություն, չձեռնարկի միջոցներ, որոնք կբացառեն կամ կղժվարացնեն Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գործող տրանսպորտային ձեռնարկությունների իրավահավասար մասնակցությունը, անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրի պահանջվող թույլտվություններ տրանսպորտային հիշյալ ձեռնարկությունների մասնակցության համար (Հոդված 4):

7. Համաձայն Էկոնոմիկայի նախարարության՝ «Համաձայնագրի վավերացման նպատակահարմարության մասին» տեղեկանքի և սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրության՝ Համաձայնագիրը շրջանակային է, որի ներքո հետագայում նախատեսվում է առանձին ֆինանսավորման կամ վարկային համաձայնագրերի ստորագրում՝ ըստ Համաձայնագրում նշված ծրագրերի:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2021 թվականի հոկտեմբերի 4-ին Բեռլինում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային

Հանրապետության կառավարության միջև 2020 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

25 փետրվարի 2022 թվականի
ՍԴՈ-1634

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ԲԵՌԼԻՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1634 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2021 թվականի հոկտեմբերի 4-ին Բեռլինում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2020 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-1634 որոշմամբ որոշել է, որ 2021 թվականի հոկտեմբերի 4-ին Բեռլինում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2020 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-1634 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված

1/1 (105/1) 2022
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՍՏՈՐԱԳՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1634 որոշմամբ 2021 թվականի հոկտեմբերի 4-ին Բեռլինում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2020 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանության հարցի վերաբերյալ:

ՍԱԳՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

տասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵԼԵՎԻԶՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարա-

ՍԱԳՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 1/1 (105/1) 2022

քերությունները կարգավորվում են «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

Էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

Էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի

ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից:

Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:


Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում:

Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«25» փետրվարի 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈՐՈՒՄ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈՐՈՒՄՆԵՐԻ
ԾՐԱԳԻՐ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

25 փետրվարի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)

ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ա. Սիմոնյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության, «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երևանի ավտո-

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵՎՈՒԹՅՈՒՆ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՆԵԿԱԳԻՐ

բուսաների ծրագիր» դրամաշնորհային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2137-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության, «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երևանի ավտոբուսների ծրագիր» դրամաշնորհային համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի դեկտեմբերի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դրամաշնորհային համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության, «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երևանի ավտոբուսների ծրագիր» դրամաշնորհային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի ցանցը բարելավելու և օդի աղտոտումը նվազեցնելու նպատակով, ավտոբուսների ձեռքբերմանը ֆինանսավորելու հարցում աջակցելու համար դրամաշնորհ ստանալու նպատակով:

2. Համաձայնագիրը բաղկացած է նախաբանից, 8 հոդվածներից և Հավելվածից, որը նվիրված է դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագաներին, և երկու Առդիրներից՝ «Միջոցների հատկացման հայտի ձևանմուշ» և «Լիազորված ստորագրողների նշանակման մասին նամակի ձևանմուշ» վերտառությամբ:

Ըստ քննության առարկա Համաձայնագրի՝ Բանկը նպատակ ունի կնքել վարկային համաձայնագիր Հայաստանի Հանրապետության՝ որպես Վարկառուի հետ, համաձայն որի Բանկը՝ որպես վարկատու, կտրամադրի վարկ՝ մինչև 20 000 000 (քսան միլիոն) եվրո գումարի չափով՝ Ծրագրի մի

մասի ֆինանսավորման համար, ինչպես նկարագրված է Ծրագրին կից ներկայացված Հավելված 1-ում (Ծրագիր)՝ վարկային համաձայնագրում սահմանված ժամկետներին և պայմաններին համապատասխան, որոնք կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխության ենթարկվել (Վարկային համաձայնագիր):

Բանկի հիմնադրման մասին համաձայնագրի 20-րդ հոդվածի համաձայն՝ Բանկը ստեղծել է «Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի գործընկերության տարածաշրջանային հիմնադրամ» (Հիմնադրամ), որը կառավարվում և գործում է Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի գործընկերության տարածաշրջանային հիմնադրամի՝ 2014 թվականի հուլիսի 23-ի կանոններին համապատասխան (2019 թվականի մարտի 11-ի փոփոխությամբ), որոնք ժամանակ առ ժամանակ կարող են փոփոխության ենթարկվել (Հիմնադրամի կանոններ):

Հիմնադրամի կանոններով սահմանված պայմանների համաձայն՝ Բանկը համաձայնել է Հիմնադրամի ռեսուրսներից Հայաստանի Հանրապետությանը, մասնավորապես՝ Ծրագրի իրականացման կազմակերպությանը, 5 000 000 (հինգ միլիոն) եվրոն չգերազանցող գումարի չափով դրամաշնորհի (Դրամաշնորհի միջոցներ) տրամադրել Ծրագրի հետ կապված որոշակի ապրանքների ու աշխատանքների և դրանց հետ կապված ծառայությունների գնման նպատակով՝ Դրամաշնորհային համաձայնագրով սահմանված պայմաններին համապատասխան:

Համաձայնագրում հղումներ են կատարվում Բանկի՝ 2018 թվականի հոկտեմբերի 1-ով թվագրված Ստանդարտ պայմաններին, մասնավորապես՝ Համաձայնագրի III Հոդվածի 3.02 Բաժնի «բ» կետով սահմանվում է, որ Ստանդարտ պայմանների Բաժին 4.02-ի (Ծրագրի իրականացմանը վերաբերող պարտականություններ) դրույթները կիրառվում են այնպես, ինչպես եթե դրանք ամբողջությամբ շարադրված լինեին Համաձայնագրում համապատասխան փոփոխություններով՝ չսահմանափակելով դրանց ընդհանուր բնույթն այնպես, որ «Վարկառու»-ին արվող հղումներն ընդունվեն որպես «Պետությանն» արվող հղումներ, և «Վարկի գումար»-ին արվող հղումներն ընդունվեն որպես «Դրամաշնորհի միջոցների գումարին» արվող հղումներ:

3. Սույն Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

3.1. Վարկային համաձայնագրով սահմանված վարկային միջոցները Ծրագրի իրականացման նպատակով **փոխանցել** Ծրագրի իրա-

կանացման կազմակերպությանը՝ ժամկետների և պայմանների համաձայն, և այդ համաձայնագիրը **կնքել** Հայաստանի Հանրապետության, Քաղաքապետարանի և Ծրագրի իրականացման կազմակերպության միջև, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխության ենթարկվել (Իրականացման համաձայնագիր) (Նախաբան, կետ «Դ»),

3.2. եթե Բանկի կողմից այլ բան նախատեսված չէ, ապա՝ Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագաները **համաֆինանսավորել** Դրամաշնորհի միջոցների և Վարկային միջոցների հաշվին՝ Գնումների պլանում նախատեսվող համամասնությամբ և չափերով, ինչպես նաև **երաշխավորել**, որ Դրամաշնորհի միջոցների գումարը, որը Գնումների պլանի համաձայն բաշխվում է Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող որոշակի պարագաների գնման համար, ցանկացած պահի չի գերազանցի պայմանագրի արժեքի 20 տոկոսը՝ Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող նշված պարագաների մասով (Հոդված II, Բաժին 2.01, կետ «ե»),

3.3. **ապահովել**, որ Դրամաշնորհային համաձայնագրով նախատեսված՝ Բանկին վճարման ենթակա ցանկացած գումար վճարվի առանց հաշվանցման կամ հակադարձ հայտի, եվրոյով, նշանակված ամսաթվին, Լոնդոնում, Անգլիայում կամ մեկ այլ վայրում գտնվող հաշվին, ինչպես Բանկը ժամանակ առ ժամանակ կնշի Պետությանն ուղարկված ծանուցման մեջ (Հոդված II, Բաժին 2.06, կետ «գ»),

3.4. Ծրագրի ավարտի ամսաթվին կամ Համաձայնագրի դադարեցման պահից՝ նայած որն է տեղի ունենում շուտ, **ապահովել**, որ Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող պարագաների նկատմամբ սեփականության իրավունքը (դրանք գնելուց հետո) փոխանցվի Քաղաքապետարանին կամ Ծրագրի իրականացման կազմակերպությանը, և եթե կիրառելի է, պահել դրանց նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթային ապացույցը (Հոդված III, Բաժին 3.02, կետ «գ»),

3.5. **ձեռնպահ մնալ** ցանկացած գործողությունից, որը կարող է շահերի բախման պատճառ դառնալ: Շահերի բախումն առկա է, երբ խախտվում է Համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործառույթների անկողմնակալ և օբյեկտիվ իրականացումը (Հոդված III, Բաժին 3.02, կետ «դ»),

3.6. **չձեռնարկել** որևէ գործողություն և **թույլ չտալ** Հայաստանի Հանրապետության որևէ գործակալի կամ դուստր ընկերության՝ ձեռնարկել որևէ գործողություն, որը կխոչընդոտի կամ կմիջամտի Ծրագրի իրականացմանը կամ Ծրագրի նյութատեխնիկական օբյեկտների

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

արդյունավետ շահագործմանը կամ Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից Դրամաշնորհային համաձայնագրին համապատասխան իր պարտավորությունների կատարմանը, ինչպես նաև **ապահովել**, որ այդպիսի գործողություններ չձեռնարկվեն կամ չթույլատրվեն Հայաստանի Հանրապետության որևէ քաղաքական կամ վարչական ստորաբաժանման կամ Հայաստանի Հանրապետությանը պատկանող և նրա կողմից վերահսկվող կամ Հայաստանի Հանրապետության կամ այդ ստորաբաժանումների ներքո կամ ի շահ դրանց գործող սուբյեկտների կողմից (Հոդված III, Բաժին 3.04, կետ «ա»),

3.7. եթե Բանկն այլ բան չի սահմանում, ապա պատշաճ կերպով **կատարել** Համաձայնագրով և Վարկային համաձայնագրով սահմանված Հայաստանի Հանրապետության բոլոր պարտավորությունները (Հոդված III, Բաժին 3.04, կետ «բ», ենթակետ 1)),

3.8. եթե Բանկն այլ բան չի սահմանում, ապա եթե կիրառելի և ընդունելի է Հայաստանի Հանրապետության համար, **աջակցել** Ծրագրի իրականացման կազմակերպությանը կատարելու Համաձայնագրով սահմանված իր պարտականությունները, այդ թվում՝ ձեռնարկելով բոլոր օրենսդրական, կարգավորող կամ այլ անհրաժեշտ կամ ցանկալի գործողություններ և Ծրագրի իրականացման կազմակերպությանը հատկացնելով և նրան ապահովելով կամ կազմակերպելով, որ ապահովվի աջակցությամբ Ծրագիրն ավարտին հասցնելու նպատակով՝ Ծրագրի իրականացման կազմակերպության համար այդպիսի անհրաժեշտություն առաջանալու դեպքում (Հոդված III, Բաժին 3.04, կետ «բ», ենթակետ 2)),

3.9. եթե Բանկն այլ բան չի սահմանում, ապա կատարման **ներկայացնել** ցանկացած այլ փաստաթուղթ և **ձեռնարկել** ցանկացած այլ միջոց, որոնք Բանկը համարում է անհրաժեշտ և ցանկալի՝ Համաձայնագրի գործողության համար (Հոդված III, Բաժին 3.04, կետ «բ», ենթակետ 3)),

3.10. ըստ անհրաժեշտության **ապահովել** անձնական տվյալների պատշաճ պաշտպանություն, inter alia [ի թիվս այլնի], Հայաստանի Հանրապետության համապատասխան կանոնակարգերի և կանոնների համաձայն՝ ձեռնարկելով անվտանգության տեխնիկական և կազմակերպչական պատշաճ միջոցառումներ՝ ցանկացած այդպիսի գործառնության և ֆիզիկական անձին վերաբերող տեղեկությունների բնույթի հետ կապված ռիսկերի առնչությամբ՝ նպատակ ունենալով կանխել ցանկացած չարտոնված անձի մուտքն այդպիսի գործառնություններ կատարող համակարգչային համակարգեր և հատկապես՝ չարտոնված ընթերցումը, պատճենումը, փոփոխումը կամ պահեստավորման կրիչներից հեռացումը.

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

սա ներառում է տվյալների չարտոնված մուտքագրում, ինչպես նաև պահվող տեղեկությունների ցանկացած չարտոնված հանրայնացում, փոփոխում կամ ջնջում, նաև նպատակ ունենալով ապահովել, որ նշված գործողություններ իրականացնող՝ SS համակարգի լիազորված օգտատերերը կարող են միայն այն տեղեկություններին հասանելիություն ունենալ, որոնց մասով նրանք ունեն մուտքի իրավունք, և նախագծել իր կազմակերպական կառուցվածքն այնպես, որ այն համապատասխանի վերը նշված պահանջներին (Հոդված III, Բաժին 3.04, կետ «գ»),

3.11. ըստ կիրառության՝ **գիտակցել և համաձայնել**, որ Բանկը պարտավոր է տեղեկացնել Եվրոպական միությանը, եթե Ծրագրի իրականացման հետ կապված հայտնաբերի, որ Հայաստանի Հանրապետության կամ վերջինիս նկատմամբ ներկայացուցչության, որոշումներ կայացնելու կամ վերահսկողության լիազորություններ ունեցող անձանց մասով վճիռ է կայացվել, որն ունի res judicata [իրավական ուժ]՝ խարդախության, կոռուպցիայի, հանցավոր կազմակերպությունում ներգրավվածության, փողերի լվացման կամ Եվրոպական միության ֆինանսական շահերին վնասող որևէ այլ անօրինական գործողության մասով, և Եվրոպական միությունը կարող է այդ տեղեկությունները մուտքագրել Բացառությունների մասով տվյալների կենտրոնական բազա (Հոդված III, Բաժին 3.04, կետ «դ»),

3.12. ըստ կիրառելիության՝ Ծրագրի ավարտի ամսաթվից առնվազն հինգ (5) տարվա ընթացքում, կամ եթե ավելի ուշ է ընկնում, Համաձայնագիրը, Ներդրումային համաձայնագիրը, որևէ Պայմանագիր կամ Ֆինանսավորման համաձայնագիր կարգավորող գործող օրենքի համաձայն, որևէ պահանջի վաղեմության ժամկետի ընթացքում **պահպանել** Դրամաշնորհի միջոցներով ֆինանսավորվող գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվառման փաստաթղթերն ու գրառումները և Բանկին, Հիմնադրամի ներդրողներին, Եվրոպական աուդիտորական դատարանին կամ նրանց լիազոր ներկայացուցիչներին այդպիսի խնդրանք ներկայացնելու դեպքում **տրամադրել** բոլոր տեղեկությունները, ինչպես նաև ցանկացած փաստաթղթի և համակարգային տվյալի հասանելիություն, որոնք վերաբերում են Համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող գործառնությունների տեխնիկական և ֆինանսական կառավարմանը, ներառյալ՝ Ծրագրի հետ կապված հաշիվների քաղվածքները, ինչպես նաև նրանց թույլ տալ մուտք գործել օբյեկտներ և տարածքներ՝ ճշտումների, գնահատման առաքելությունների և (կամ) քննությունների (ներառյալ տեղում ստուգումների) նպատակով՝ կապված Ծրագրի իրականացման հետ այն վայրերում, որտեղ իրականացվում են

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Ծրագրի հետ կապված գործառնությունները (Հոդված IV, Բաժին 4.01, կետ «դ»),

3.13. Դրամաշնորհի միջոցներից որևէ գումար **չօգտագործել** ուղղակիորեն կամ անուղղակիորեն, որևէ Հարկի վճարման համար՝ անկախ այն բանից՝ այդ հարկն ուղղակի է, թե անուղղակի, առաջանում է Հայաստանի տարածքում, թե այլուր (Հոդված IV, Բաժին 4.03, կետ «բ»),

3.14. **ձեռնարկել** համապատասխան միջոցներ, հանրայնացնելու այն փաստը, որ Ծրագիրը ֆինանսավորում է ստացել Հիմնադրամից, և **նշել** Հիմնադրամի բոլոր ներդրողներին, ներառյալ՝ Եվրոպական միությանը, և **ապահովել**, որ մամուլին տրամադրվող տեղեկատվությունը, ինչպես նաև դրա հետ կապված բոլոր գովազդային նյութերը, պաշտոնական ծանուցումները, զեկույցներն ու հրապարակումները՝ արված որևէ եղանակով և որևէ հարթակում, ներառյալ՝ համացանցը, փաստեն, որ Ծրագիրն իրականացվել է «E5P Հիմնադրամի ֆինանսավորմամբ, որի ամենախոշոր ներդրողը Եվրոպական միությունն է», թվարկեն բոլոր ներդրողներին և համապատասխան կերպով ցուցադրեն Հիմնադրամի տարբերանշանը, ներդրողների տարբերանշանները (ներառյալ՝ ԵՄ-ի տարբերանշանը (տասներկու դեղին աստղ կապույտ ֆոնի վրա)), ինչպես նաև **ապահովել**, որ Ծրագրին վերաբերող հրապարակումները՝ արված որևէ եղանակով և որևէ հարթակում, ներառյալ՝ համացանցը, պարունակեն պատասխանատվությունից հրաժարման հետևյալ տեքստը. «Այս փաստաթուղթը պատրաստվել է E5P Հիմնադրամի ֆինանսական օժանդակությամբ, որի ներդրողներն են [...] և Եվրամիությունը՝ խոշորագույն ներդրողը: Այստեղ արտահայտված տեսակետները ոչ մի կերպ չեն կարող մեկնաբանվել որպես E5P Հիմնադրամի կամ դրա որևէ ներդրողի պաշտոնական կարծիքն արտացոլող տեսակետներ» (Հոդված IV, Բաժին 4.04),

3.15. Եթե տեղի է ունեցել Համաձայնագրի V Հոդվածի 5.05 Բաժնում նշված իրադարձություններից որևէ մեկը, և եթե դա կիրառելի է, այն շարունակվում է վերոհիշյալ բաժնում նշված ժամանակահատվածի ընթացքում, ապա այդ իրադարձության շարունակման ընթացքում այդ մասին Բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը և Ծրագրի իրականացման կազմակերպությանը ծանուցման և պահանջի դեպքում **հատուցել** Դրամաշնորհի միջոցներն ամբողջությամբ կամ դրա որևէ մասը (և **վճարել** Համաձայնագրով վճարման ենթակա ցանկացած այլ գումարներ). այդ գումարներն այդուհետ ենթակա են վճարման (չնայած Համաձայնագրում դրան հակասող որևէ բանի) (Հոդված V, Բաժին 5.05),

1/1 (105/1) 2022
 ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ♦ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՆԵԿԱԳԻՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

3.16. որևէ իրավիճակում **չներկայացնել** որևէ պահանջ առ այն, որ Համաձայնագրի որևէ դրույթ անվավեր է կամ որևէ պատճառով չի կարող կիրարկվել (Հոդված VI, Բաժին 6.01),

3.17. որպես Դրամաշնորհային համաձայնագրի 7.02 Բաժնի (Ուժի մեջ մտնելու նախապայմանները) համաձայն ներկայացվող բոլոր ապացույցների մի մաս՝ **ներկայացնել** կամ **կազմակերպել**, որ Համաձայնագրի հետ կապված՝ ներկայացվի իրավաբանական եզրակացություն՝ Բանկի կողմից բավարար դիտարկվող ձևով և բովանդակությամբ, Հայաստանի Հանրապետության անունից՝ Արդարադատության նախարարի կողմից, իսկ Ծրագրի իրականացման կազմակերպության անունից՝ իրավաբանական բաժնի ղեկավարի կողմից կամ ցանկացած իրավաբանի կողմից, որին նշանակել է Ծրագրի իրականացման կազմակերպությունը, և որին համաձայնել է Բանկը, որը կհաստատի, որ Համաձայնագիրը պատշաճ կերպով հաստատվել կամ վավերացվել, ինչպես նաև ձևակերպվել ու հանձնվել է Հայաստանի Հանրապետության և Ծրագրի իրականացման կազմակերպության անունից, և այն վավեր է և իրավական ուժ ունի Հայաստանի Հանրապետության և Ծրագրի իրականացման կազմակերպության համար և կիրարկելի է իր պայմաններին համապատասխան (Հոդված VII, Բաժին 7.03),

3.18. Բանկին **ներկայացնել** լիազորված պաշտոնյայի լիազորության ապացույցը և նրա լիազորված ստորագրության նմուշը՝ համաձայն Առդիր 2-ում ներկայացված ձևանմուշի (Լիազորված ստորագրողների նշանակման մասին նամակի ձևանմուշ) (Հոդված VIII, Բաժին 8.02),

3.19. լիակատար պատասխանատվություն **ստանձնել, համաձայնել, փոխհատուցել և զերծ պահել** Բանկին և նրա պաշտոնյաներին, տնօրեններին, աշխատակիցներին, գործակալներին և ծառայողներին ցանկացած և բոլոր պարտավորություններից, պարտականություններից, կորուստներից, վնասներից (փոխհատուցման բնույթի, պատժիչ կամ այլ տեսակի), տուգանքներից, պահանջներից, ընթացակարգերից, հարկերից, հայցերից, ծախսերից և ծախքերից (այդ թվում՝ իրավաբանական խորհրդատվության ողջամիտ վճարներից և հետաքննության ծախսերից ու ծախքերից), ինչպիսիք էլ դրանք լինեն, ընդ որում՝ չխախտելով ընդհանուր սկզբունքը նրանցից, որոնք առաջանում են պայմանագրերից կամ առանց մեղքի պատասխանատվությունից (ներառյալ՝ անփութության հետևանքով) կամ խիստ պարտավորության արդյունքում կամ այլ կերպ, որոնք սահմանվում կամ բերվում են ընդդեմ Բանկի կամ նրա պաշտոնյաների, տնօրենների, աշխատողների, գործակալների կամ ծառայողների (անկախ նրանից՝ դրանք փոխհատուցվում են նաև որևէ այլ

անձի կողմից որևէ այլ փաստաթղթով), և որոնք որևէ կերպ կապված են Համաձայնագրի 8.05 Բաժնի «ա» կետի 1-3 ենթակետերում սահմանվածի հետ կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն բխում են դրանցից (Հոդված VIII, Բաժին 8.05, կետ «ա»),

3.20. **ընդունել**, որ Բանկը կնքում է Համաձայնագիրը և գործում է միայն որպես դրամաշնորհ տրամադրող, այլ ոչ թե Հայաստանի Հանրապետության կամ Ծրագրի իրականացման կազմակերպության խորհրդատու, ինչպես նաև **ներկայացնել** և **երաշխավորել**, որ կնքելով Համաձայնագիրը՝ Հայաստանի Հանրապետությունը ներգրավել և հենվել է իրավաբանական, ֆինանսական և այլ մասնագիտական հարցերով սեփական խորհրդատուների խորհրդատվության վրա և չի ապավինել ու այսուհետ նույնպես չի ապավինելու Բանկի կողմից տրված որևէ խորհրդատվությանը (Հոդված VIII, Բաժին 8.05, կետ «բ»),

3.21. Համաձայնագրով սահմանված Հայաստանի Հանրապետության իրավունքները կամ պարտավորություններն ամբողջությամբ կամ դրանցից որևէ մեկը **չհանձնարարել** կամ այլ կերպ **չփոխանցել** առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության (Հոդված VIII, Բաժին 8.06),

3.22. **երաշխավորել**, որ Բանկի՝ Համաձայնագրով սահմանված իրավունքներն ու պաշտպանության միջոցները չեն տուժի որևէ գործողությունից կամ որևէ բանից, որը կարող է, բացի Համաձայնագրի 8.07 Բաժնից, սահմանափակել այդ իրավունքներն ու պաշտպանության միջոցները, ինչպես նաև **ապահովել**, որ ոչ մի գործարար սովորույթ և Բանկի իրավունքների, լիազորությունների կամ պաշտպանության միջոցների կիրառման ոչ մի հետաձգում կամ չկիրառում չխախտի որևէ նման իրավունք, լիազորություն կամ պաշտպանության միջոց կամ ընկալվի որպես դրանից հրաժարում, իսկ եթե Բանկը հրաժարվում է Դրամաշնորհի միջոցների հատկացման որևէ պայմանից, ապա **համարել**, որ Հայաստանի Հանրապետությունը, ստանալով այդ միջոցների մասհանումը, համաձայնել է այդ հրաժարման պայմաններին, և Բանկի՝ այդ պայմանի կատարումը պահանջելու իրավունքը բացահայտորեն պահպանել յուրաքանչյուր հետագա Մասհանման նպատակների համար, ինչպես նաև **ընդունել**, որ Դրամաշնորհային համաձայնագրով և դրանով նշված այլ համաձայնագրերով նախատեսված իրավունքներն ու պաշտպանության միջոցները կումուլյատիվ են և չպետք է խոչընդոտեն դրանց այլ կամ հետագա կիրառումը կամ որևէ այլ իրավունքի կամ պաշտպանության միջոցի կիրառումը (Հոդված VIII, Բաժին 8.07):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության, «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երևանի ավտոբուսների ծրագիր» դրամաշնորհային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

25 փետրվարի 2022 թվականի
ՍԴՈ-1635

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈՐՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1635 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության, «Երևանի ավտորու» փակ բաժնետիրական ընկերության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երևանի ավտորուների ծրագիր» դրամաշնորհային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈՒ-1635 որոշմամբ որոշել է, որ Հայաստանի Հանրապետության, «Երևանի ավտորու» փակ բաժնետիրական ընկերության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երևանի ավտորուների ծրագիր» դրամաշնորհային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈՒ-1635 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված

1/1 (105/1) 2022
 ♦ ՏԵՂԵԿՎՈՐ
 ♦ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1635 որոշմամբ Հայաստանի Հանրապետության, «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երևանի ավտոբուսների ծրագիր» դրամաշնորհային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ավաճի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՂԱՏՄԱՆ

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների

առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարանի դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդադառնալ Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:


Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի

մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է փրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

25 փետրվարի 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶ-
ԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-ԻՆ
ԵՎ ՀՈՒՆՎԱՐԻ 18-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՆԱՄԱԿ-
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

25 փետրվարի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե.
Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

«Հ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի
տեղակալ Վահե Հովհաննիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մա-
սին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի
Հանրապետության և Արժույթի միջազգային հիմնադրամի միջև 2022
թվականի հունվարի 11-ին և հունվարի 18-ին ստորագրված «Պահուս-
տային ծրագրի միջոցների օգտագործման մասին» նամակ-համաձայ-

1/1 (105/1) 2022
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

նագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2022 թվականի փետրվարի 10-ի N 137-Ա որոշմամբ հավանություն է տվել Հայաստանի Հանրապետության և Արժույթի միջազգային հիմնադրամի միջև 2022 թվականի հունվարի 11-ին և հունվարի 18-ին ստորագրված «Պահուստային ծրագրի միջոցների օգտագործման մասին» նամակ-համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի փետրվարի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ նամակ-համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Պահուստային ծրագրի միջոցների օգտագործման մասին» նամակ-համաձայնագիրը (այսուհետ՝ Նամակ-համաձայնագիր) ստորագրվել է 2022 թվականի հունվարի 11-ին և հունվարի 18-ին՝ 51.428 մլն հատուկ փոխառության իրավունքին (այսուհետ՝ ՀՓԻ) համարժեք բյուջետային աջակցության տեսքով վարկ տրամադրելու նպատակով:

2. Նամակ-համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Պահուստային ծրագրի ներքո ստացված միջոցները մարել յուրաքանչյուր մասհանմանը հաջորդող 3.25-5 տարվա ընթացքում, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր մասհանում մարվելու է ութ հավասար եռամսյակային մարումներով՝ սկսած յուրաքանչյուր մասհանումից 3.25 տարի անց,
- վճարել ֆինանսավորման վճարներ (վարկավորման տոկոսադրույք), որոնք բաղկացած են՝ շուկայական ՀՓԻ տոկոսադրույքից, որն ունի նվազագույն՝ 0.05 տոկոսի շեմ և մարժայից (ներկայումս՝ 1 տոկոս) (միասին՝ բազիսային տոկոսադրույք), և հավելավճարներից, որոնք կախված են չմարված վարկի գումարից և ժամանակից,
- վճարել 2 տոկոս հավելավճար վարկի մնացորդի՝ քվոտայի 187.5 տոկոսը գերազանցող գումարի համար, իսկ եթե երեք տարի անց վարկը

1/1 (105/1) 2022

ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

մնում է քվոտայի 187.5 տոկոսից բարձր, ապա վճարել այս հավելավճարը՝ բարձրացած մինչև 3 տոկոս,

▪ վճարել պարտավորության վճար Պահուստային բոլոր ծրագրերի ներքո ստանձնած միջոցների համար, որը գանձվում է յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածի սկզբում այն գումարների նկատմամբ, որոնք կարող են մասհանվել այդ ժամանակահատվածում (0.15 տոկոս՝ մինչև քվոտայի 115 տոկոսը չգերազանցող գումարների դեպքում, 0.3 տոկոս՝ քվոտայի 115 տոկոսից մինչև 575 տոկոսը, և 0.6 տոկոս՝ քվոտայի 575 տոկոսը գերազանցող գումարների դեպքում),

▪ վճարել 0.5 տոկոսի չափով ծառայության վճար յուրաքանչյուր մասհանված գումարի նկատմամբ:

3. Նամակ-համաձայնագրով սահմանվում է, որ պարտավորության վճարները համամասնորեն վերադարձվում են, եթե գումարները մասհանվում են համապատասխան ժամանակահատվածի ընթացքում: Այնուամենայնիվ, վերադարձ չի իրականացվում կանխարգելիչ Պահուստային ծրագրերի համար, որոնց ներքո երկիրը մասհանում չի իրականացնում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության և Արժույթի միջազգային հիմնադրամի միջև 2022 թվականի հունվարի 11-ին և հունվարի 18-ին ստորագրված «Պահուստային ծրագրի միջոցների օգտագործման մասին» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

25 փետրվարի 2022 թվականի
ՍԴՈ-1636

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-ԻՆ ԵՎ ՀՈՒՆՎԱՐԻ 18-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1636 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության և Արժույթի միջազգային հիմնադրամի միջև 2022 թվականի հունվարի 11-ին և հունվարի 18-ին ստորագրված «Պահուստային ծրագրի միջոցների օգտագործման մասին» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈՒ-1636 որոշմամբ որոշել է, որ Հայաստանի Հանրապետության և Արժույթի միջազգային հիմնադրամի միջև 2022 թվականի հունվարի 11-ին և հունվարի 18-ին ստորագրված «Պահուստային ծրագրի միջոցների օգտագործման մասին» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈՒ-1636 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 1/1 (105/1) 2022

սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1636 որոշմամբ Հայաստանի Հանրապետության և Արժույթի միջազգային հիմնադրամի միջև 2022 թվականի հունվարի 11-ին և հունվարի 18-ին ստորագրված «Պահուստային ծրագրի միջոցների օգտագործման մասին» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ

հողվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում

նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի

Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված

պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի


ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏՐՈՒՄ 1/1 (105/1) 2022

մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«25» փետրվարի 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԵԽԻԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ «ՀԱՆՁՆՄԱՆ ՄԱՍԻՆ» 1957
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ
ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴՅՈՒՐԱՑՆԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղ. Երևան

15 մարտի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցչի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության միջև՝ «Հանձնման մասին» 1957 թվականի դեկտեմբերի 13-ի եվրոպական կոնվենցիայի կիրառումը դյուրացնելուն ուղղված» համաձայնագրում ամրագրված

պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի սեպտեմբերի 30-ի N 1595-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության միջև՝ «Հանձնման մասին» 1957 թվականի դեկտեմբերի 13-ի եվրոպական կոնվենցիայի կիրառումը դյուրացնելուն ուղղված» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի հոկտեմբերի 5-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է: Գործի վարույթը 2021 թվականի դեկտեմբերի 14-ի ՍԴԱՈ-253 աշխատակարգային որոշմամբ կասեցվել է: 2022 թվականի փետրվարի 25-ի ՍԴԱՈ-42 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության միջև՝ «Հանձնման մասին» 1957 թվականի դեկտեմբերի 13-ի եվրոպական կոնվենցիայի կիրառումը դյուրացնելուն ուղղված» համաձայնագիրը (այսուհետ՝ նաև Համաձայնագիր) ստորագրվել է 2021 թվականի հունիսի 9-ին Պրահայում: Այն նպատակ է հետապնդում հանձնման հետ կապված հարցերով խթանել երկու պետությունների միջև ավելի արդյունավետ համագործակցությունը, մասնավորապես՝ aut dedere aut iudicare (կա՛մ հանձնել, կա՛մ պատժել) սկզբունքի իրագործման առումով, և դյուրացնել «Հանձնման մասին» 1957 թվականի դեկտեմբերի 13-ի եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է Ազգային ժողովի 2001 թվականի նոյեմբերի 21-ի Ն-228-2 որոշմամբ (ՍԴՈ-320)) երկու պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումը՝ հնարավորություն ստեղծելով ճանաչել և կատարել մյուս Պայմանավորվող կողմի դատարանների կողմից քաղաքացիների վերաբերյալ կայացրած վերջնական դատավճիռները: Կոնվենցիան ունի նաև երկու

արձանագրություն, մասնավորապես՝ 1975 թվականի հոկտեմբերի 15-ին ստորագրված՝ «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն» (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2003 թվականի հոկտեմբերի 22-ին, Ազգային ժողովի Ն-041-3 որոշմամբ (ՍԴՈ-445)) և 1978 թվականի մարտի 17-ին ստորագրված՝ «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրություն» (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2003 թվականի հոկտեմբերի 22-ին, Ազգային ժողովի Ն-040-3 որոշմամբ (ՍԴՈ-446)):

Համաձայնագրի նախաբանի համաձայն՝ Համաձայնագրով չկարգավորվող բոլոր այլ հարցերի մասով ուժի մեջ են մնում Կոնվենցիայով սահմանված դրույթները:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը Կոնվենցիային միանալիս կատարել է մի շարք հայտարարություններ և վերապահումներ, որոնք, ի թիվս այլնի, վերաբերում են հանձնման մերժմանը, դատավճիռների կատարմանը, քաղաքական հանցագործություններին, զինվորական հանցագործություններին և քաղաքացիության հիմքով անձին չհանձնելուն, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետից ելնելով՝ Հայաստանի Հանրապետությունը չի հանձնի ՀՀ քաղաքացուն:

2. Համաձայնագրով սահմանվում է, որ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի հարցման հիման վրա իր տարածքում ճանաչում և կատարում է մյուս Պայմանավորվող կողմի դատարանների՝ իր պետության քաղաքացիների նկատմամբ կայացված՝ ազատագրկման ձևով պատիժ կամ, ի թիվս այլ պատժամիջոցների, ազատագրկում նախատեսող վերջնական դատավճիռն այն դեպքում, երբ հայցվող անձի հանձնման պահանջը մերժվել է կամ չի կարող բավարարվել բացառապես նրա քաղաքացիության պատճառով, ինչպես սահմանված է «Հանձնման մասին» 1957 թվականի դեկտեմբերի 13-ի եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով:

Հայցվող Կողմի կողմից կայացված վերջնական դատավճիռը ճանաչելը հանգեցնում է հայցող Կողմի տարածքում պատժի կատարումը դադարեցնելուն: Եթե հայցվող Կողմն իր կողմից ճանաչված վերջնական դատավճռով հայցվող անձի նկատմամբ նշանակված ազատագրկման ձևով պատիժը համարում է ավարտված, ապա հայցող Կողմն այլևս չի կատարում պատիժը:

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ

3. Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա Համաձայնագրով ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

1) չեխական կողմի հարցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչել և կատարել չեխական կողմի դատարանների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ կայացված՝ ազատագրկման ձևով պատիժ կամ, ի թիվս այլ պատժամիջոցների, ազատագրկում նախատեսող վերջնական դատավճիռը (այսուհետ՝ վերջնական դատավճիռ) այն դեպքում, երբ հայցվող անձի հանձնման պահանջը մերժվել է կամ չի կարող բավարարվել բացառապես նրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության պատճառով, ինչպես սահմանված է «Հանձնման մասին» 1957 թվականի դեկտեմբերի 13-ի եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով (հոդված 1),

2) որպես հայցվող Կողմ հանդես գալու դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել հայցվող անձի հանձնման պահանջը բացառապես նրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության պատճառով, հայցող՝ չեխական կողմի հարցումով և ՀՀ օրենսդրությանը համապատասխան, միջոցներ ձեռնարկել վերջնական դատավճիռը Հայաստանի Հանրապետության տարածքում ճանաչելու և կատարելու համար՝ չպահանջելով հայցվող անձի համաձայնությունը (հոդված 2, կետ 1),

3) Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետը կիրառել նաև այն վերջնական դատավճիռների նկատմամբ, որոնք կայացվել են հայցվող անձի բացակայությամբ՝ պայմանով, որ հայցվող անձն անձամբ ծանուցվել է կամ այլ կերպ տեղեկացվել է իր բացակայությամբ կայացված դատավճիռին հանգեցրած դատաքննության օրվա և վայրի մասին՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային համապատասխան (Հռոմ, 4 նոյեմբերի, 1950) (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է Ազգային ժողովի 2002 թվականի մարտի 20-ի Ն-264-2 որոշմամբ (ՍԴՈ-350)) (հոդված 2, կետ 2),

4) որպես հայցվող կողմ՝ վերջնական դատավճիռը ճանաչելու և կատարելու պահանջով հարցումը մերժել Համաձայնագրի 5-րդ հոդվածում սահմանված հիմքերով, մասնավորապես՝ եթե առկա է «Հանձնման մասին» 1957 թվականի դեկտեմբերի 13-ի եվրոպական կոնվենցիայի 3-ից 11-րդ հոդվածների համաձայն հայցվող անձի հանձնումը մերժելու հիմք՝ բացառությամբ «Հանձնման մասին» 1957 թվականի դեկտեմբերի 13-ի եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն հայցվող անձի քաղաքացիության հիմքի, եթե վերջնական դատավճիռի

ճանաչման և կատարման հարցումն ստանալու ժամանակ ազատագրկման ձևով պատիժը կրելու ժամկետը չի գերազանցում 5 (հինգ) տարին, եթե այն գործողությունները կամ անգործությունը, որոնց առնչությամբ պատիժ է նշանակվել, չեն համարվում հանցագործություն հայցվող Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն կամ չէին համարվի հանցագործություն, եթե կատարված լինեին Հայաստանի Հանրապետության իրավասության շրջանակներում, և եթե հայցվող անձը, որի նկատմամբ կայացվել է վերջնական դատավճիռ, հայցվող Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ քրեական հետապնդման ենթակա չէ (հոդված 5),

5) որպես հայցող կողմ այլևս չկատարել պատիժը, եթե հայցվող չեխական կողմն իր կողմից ճանաչված վերջնական դատավճռով հայցվող անձի նկատմամբ նշանակված ազատագրկման ձևով պատիժը համարում է ավարտված (հոդված 6, կետ 2),

6) որպես հայցվող կողմ՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները շարունակեն պատժի կատարումը Համաձայնագրի 7-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պայմաններով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգավորումներով՝ բացառությամբ Համաձայնագրի 7-րդ հոդվածի և 8-րդ հոդվածի կարգավորումների՝ կրելով պատասխանատվություն բոլոր համապատասխան որոշումների կայացման համար (հոդված 7, կետ 1),

7) եթե ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատժի առավելագույն տևողությունն ավելի կարճ է հայցող չեխական կողմի տարածքում սահմանված պատժի տևողությունից, ապա որոշում կայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հնարավոր առավելագույն տևողությամբ պատժի կատարման վերաբերյալ՝ ապահովելով, որ այն իր բնույթով կամ տևողությամբ չձանրացնի հայցող չեխական կողմի տարածքում նշանակված պատիժը կամ գերազանցի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատժի առավելագույն տևողությունը (հոդված 7, կետ 2),

8) որպես հայցվող կողմ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինն ազատագրկում նախատեսող պատժամիջոցը չփոխարկի նյութական պատժամիջոցի (հոդված 7, կետ 3),

9) ապահովել, որ հայցող չեխական կողմի տարածքում հայցվող անձի արդեն իսկ կրած պատժի մասը, այդ թվում՝ կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածն ամբողջությամբ, ներառվի պատժի ընդհանուր տևողության մեջ (հոդված 7, կետ 4),

10) որպես հայցվող կողմ, հայցող չեփական կողմին տրամադրել այն որոշման պատճենը, որով սահմանվել է Հայաստանի Հանրապետության տարածքում վերջնական դատավճռով նշանակված պատժի կատարումը (հոդված 7, կետ 5),

11) որպես հայցվող կողմ դադարեցնել պատժի կատարումը, հենց որ հայցող չեփական կողմից տեղեկացվում է ցանկացած այնպիսի որոշման կամ միջոցի մասին, որի հետևանքով պատիժը դադարում է լինել կատարման ենթակա (հոդված 10, կետ 1),

12) որպես հայցվող կողմ հայցող չեփական կողմին տեղեկություններ տրամադրել պատժի կատարման մասին, եթե պատժի կատարումը համարում է ավարտված, եթե հայցվող անձը փախուստի է դիմել նախքան պատժի կատարման ավարտը, եթե հայցվող անձը մահացել է, կամ պահանջվում է ցանկացած այլ լրացուցիչ տեղեկություն (հոդված 10, կետ 2),

13) ապահովել, որ հարցումները, դրանց պատասխանները և բոլոր օժանդակ փաստաթղթերը, ինչպես նաև դատավճիռների ճանաչման վերաբերյալ որոշումները զուգակցվեն անզլերեն թարգմանությամբ (հոդված 11, կետ 1),

14) կրել Հայաստանի Հանրապետության տարածքում վերջնական դատավճռի ճանաչման և կատարման առնչությամբ առաջացած ցանկացած ծախս (հոդված 11, կետ 2),

15) Համաձայնագիրը կիրառել նաև մինչև դրա ուժի մեջ մտնելը կայացված վերջնական դատավճռի ճանաչման և կատարման մասին հարցումների նկատմամբ (հոդված 13, կետ 4):

4. Համաձայնագրի դրույթների սահմանադրականության գնահատման համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վեր հանել կարգավորման նույն կամ հարակից առարկային վերաբերող և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի հետ քննարկման առարկա Համաձայնագրի հարաբերակցությունը:

4.1. «Հանձնման մասին» 1957 թվականի դեկտեմբերի 13-ի եվրոպական կոնվենցիայի, դրա երկու արձանագրությունների և Համաձայնագրի կարգավորման առարկաների համեմատությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ՝

ա) Կոնվենցիայի կարգավորման առարկան միայն հանձնման իրավական ինստիտուտն է: Այն պետությունների միջև իրավական օգնության ոլորտում համագործակցության այլ կողմերի վերաբերյալ

կարգավորող դրույթներ չի պարունակում: «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հայցվող կողմը չի հանձնում իր քաղաքացուն, նա պետք է հայցող կողմի պահանջով գործը ներկայացնի ներպետական իրավասու մարմիններին՝ քրեական գործ հարուցելու համար, այդ նպատակով փոխանցելով հանցագործությանը վերաբերող փաստաթղթերը, տեղեկատվությունը և իրեղեն ապացույցները,

բ) Համաձայնագրի 1-ի հոդվածում նախանշված՝ Համաձայնագրի գործողության շրջանակը և համապատասխանաբար այլ հոդվածներում ամրագրված դրույթները վերաբերում են պետությունների միջև իրավական համագործակցության այլ, «հանձնումից» բովանդակությամբ տարբերվող՝ «դատավճիռների ճանաչման և կատարման» ինստիտուտին: Այդ ինստիտուտի գործողության դեպքում պայմանավորվող կողմ պետությունը պարտավորվում է ճանաչել և կատարել իր քաղաքացիների վերաբերյալ մյուս պայմանավորվող պետության դատարանների կողմից կայացված վերջնական դատավճիռները: Այդ ինստիտուտը նախատեսված է նաև Հայաստանի Հանրապետության կողմից կնքված և վավերացված մի շարք միջազգային պայմանագրերում,

գ) Կոնվենցիայի 28-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պայմանավորվող կողմերը կարող են միմյանց միջև կնքել երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր միայն ի լրումն սույն Կոնվենցիայի դրույթների կամ հեշտացնելու համար դրանում պարունակվող սկզբունքների կիրառումը»:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը փաստում է, որ թեև Համաձայնագիրը վերնագրված է «Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության միջև՝ «Հանձնման մասին» 1957 թվականի դեկտեմբերի 13-ի Եվրոպական կոնվենցիայի կիրառումը դյուրացնելուն ուղղված» վերտառությամբ, այն չունի ո՛չ լրացնող, ո՛չ էլ դյուրացնող իրավական բովանդակություն՝ «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի բովանդակության հետ հարաբերակցության փաստանկյունից:

Համաձայնագրի իրավակարգավորումները վերաբերում են միայն «դատավճիռների ճանաչման և կատարման» ինստիտուտին: Երկու միջազգային պայմանագրերի իրավակարգավորումները համակարգային փոխկապակցության տեսանկյունից ունեն հետևյալ պատկերը՝ Չեխիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության համար գործում է «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիան, որը վերաբերում է հանձնման իրավական ինստիտուտին: Համաձայնագիրը, վկայակոչելով և

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

վերահաստատելով «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի դրույթները, վավերացվելուց հետո կողմերի միջև արտոնելու է «դատավճիհների ճանաչման և կատարման» իրավական ինստիտուտի գործողությունը:

4.2. 1972 թվականին ընդունված Քրեական գործերով վարույթների փոխանցման մասին եվրոպական կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2004 թվականի հոկտեմբերի 25-ին, Ազգային ժողովի Ն-147-3 որոշմամբ, (ՍԴԴ-510), Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2005 թվականի մարտի 18-ին)) համաձայն՝ այն դեպքում, երբ, Պայմանավորվող պետության օրենսդրության համաձայն, անձը կասկածվում է հանցագործություն կատարելու մեջ, ապա տվյալ Պետությունը կարող է վարույթ իրականացնելու համար դիմել մեկ այլ Պայմանավորվող պետության նշված կոնվենցիայով նախատեսված դեպքերում և կարգով (6-րդ հոդվածի 1-ին կետ): Նույն կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Պայմանավորվող պետությունը կարող է դիմել մեկ այլ Պայմանավորվող պետության, որպեսզի վերջինս վարույթ իրականացնի, ի թիվս այլնի, հետևյալ մեկ կամ մի քանի դեպքերում.

(...)

բ. եթե կասկածվող անձը հայցվող Պետության **քաղաքացի** է կամ ծագումով հայցվող Պետությունից է,

(...)

է. եթե գտնում է, որ **չի կարող ապահովվել կասկածվող անձի ներկայությունը** հայցող Պետությունում իրականացվող դատաքննությանը, և որ կարող է ապահովվել նրա ներկայությունը դատաքննությանը հայցվող Պետությունում,

ը. եթե գտնում է, որ հնարավոր դատավճիհը կայացնելու դեպքում այն ի կատար չի ածվի նույնիսկ հանձնման մասին խնդրանք ներկայացնելու դեպքում, բայց գտնում է, որ հայցվող Պետությունը կարող է դա անել»:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Եթե Պայմանավորվող պետությունում կասկածվող անձը վերջնականորեն դատապարտվել է, ապա տվյալ Պետությունը կարող է դիմել՝ սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված մեկ կամ մի քանի դեպքերում վարույթը փոխանցելու համար, եթե միայն ինքը չի կարող ի կատար ածել դատավճիհը, նույնիսկ հանձնման մասին խնդրանք ներկայացնելու դեպքում, և եթե մյուս Պայմանավորվող պետությունը չի ընդունում օտարերկրյա պետության դատավճիհի կատարման սկզբունքը կամ հրաժարվում է տվյալ դատավճիհն ի կատար ածելուց»:

Նշված կոնվենցիայի 10-րդ, 12-րդ հոդվածներով սահմանվում են նաև դիմումին ընթացք չտալու հիմքերը, իսկ 11-րդ հոդվածով այն դեպքերը, երբ կարող է հայցվող պետությունը մասամբ կամ ամբողջությամբ մերժել խնդրանքի ընդունումը:

5. Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված վերոգրյալ միջազգային իրավական ակտերի և քննության առարկա Համաձայնագրի համադրված վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ՝

ա) **1972 թվականին ընդունված Քրեական գործերով վարույթների փոխանցման մասին եվրոպական կոնվենցիայի** ուժով այն բոլոր դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետության քաղաքացին հանցանք կատարի Չեխիայի Հանրապետության տարածքում և հետագայում հայտնվի Հայաստանի Հանրապետությունում, ապա հայցող երկիրը՝ Չեխիայի Հանրապետությունը, կարող է դիմել Հայաստանի Հանրապետությանը՝ քրեական վարույթ իրականացնելու խնդրանքով՝ կից (կամ որոշ դեպքերում նաև դրանից հետո) ներկայացնելով քրեական գործի և անհրաժեշտ բոլոր մյուս փաստաթղթերի բնօրինակները կամ հաստատված պատճենները (Կոնվենցիայի 15-րդ հոդվածի առաջին կետ): Ընդ որում՝ խնդրանք ներկայացնելու պահից հայցող Պետությունն այլևս իրավունք չունի կասկածվող **անձի նկատմամբ հետապնդում իրականացնել խնդրանքի առարկա հանցագործության համար կամ ի կատար ածել որոշում**, որը Չեխիայի Հանրապետության տարածքում նախկինում կայացվել է տվյալ անձի նկատմամբ տվյալ հանցագործության համար: Մինչև հայցվող Պետության, կոնկրետ դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կողմից վարույթ իրականացնելու մասին խնդրանքի առնչությամբ կայացված որոշումն ստանալը հայցող Պետությունը, այսուհանդերձ, իրավունք ունի հետապնդման համար ձեռնարկել բոլոր քայլերը՝ **բացառությամբ գործը դատարան ներկայացնելու** կամ թույլատրելու, որ իրավասու վարչական մարմինը գործի վերաբերյալ որոշում կայացնի (Կոնվենցիայի 21-րդ հոդվածի առաջին կետ):

բ) նույնիսկ Չեխիայի Հանրապետությունում վերջնական դատավճռով դատապարտվելու պարագայում Հայաստանի Հանրապետությունում հայտնվելու դեպքում «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով Հայաստանի Հանրապետության քաղաքացին չէր հանձնվի այլ պետությանը, միևնույն ժամանակ, սակայն, այդ պարագայում Չեխիայի Հանրապետության պահանջով Հայաստանի Հանրապետությունում գործը կարող էր ներկայացվել իրավասու

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

մարմիններին՝ անհրաժեշտության դեպքում քրեական գործ հարուցելու համար:

Ընդ որում՝ այս պարագայում Հայաստանի Հանրապետությունում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացին, որը Չեխիայի Հանրապետությունում չէր հրաժարվել իր դատական քննությանը (նիստին) մասնակցելու իրավունքից, սակայն, օրինակ, օբյեկտիվ, իր կամքից անկախ պատճառներով չէր կարողացել ներկա գտնվել այդ երկրում իր գործի դատական քննությանը, իր բացակայությամբ դատավճռի կայացումից հետո Հայաստանի Հանրապետությունում գտնվելու դեպքում ունենում էր, այդ թվում նաև վերը նշված միջազգային իրավական փաստաթղթերից բխող՝ Հայաստանի Հանրապետությունում գործի՝ իր մասնակցությամբ քննության, այդ թվում՝ դատական քննության (նիստին) մասնակցության իրավունք:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում փաստել, որ դատական քննության (նիստին) մասնակցելու իրավունքից հրաժարված չլինելու (գործի քննությանը չի մասնակցել օբյեկտիվ, իր կամքից անկախ պատճառներով, գործի քննության չմասնակցությունը չի հետապնդել դատական քննությունից խուսափելու նպատակ և այլն) և իր բացակայությամբ Չեխիայի Հանրապետությունում վերջնական դատավճռի կայացման դեպքում Հայաստանի Հանրապետությունում հայտնվելու պարագայում քննության առարկա Համաձայնագրի 1-ին և 2-րդ հոդվածների, ինչպես նաև 13-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումների ուժով արդեն սահմանափակվելու է Հայաստանի Հանրապետության քաղաքացու արդար դատական քննության իրավունքի տարր՝ գործի դատական քննությանը (նիստին) մասնակցության իրավունքը, քանի որ այդ դեպքերում Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո այլևս բացառվելու է Հայաստանի Հանրապետությունում գործի քննության հնարավորությունը, և Հայաստանի Հանրապետության քաղաքացին այդ դեպքում զրկվելու է դատական քննությանը (նիստին) մասնակցելու իրավունքից:

Վերոգրյալի լույսի ներքո Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Համաձայնագրի 13-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված՝ մինչ դրա ուժի մեջ մտնելը կայացված վերջնական դատավճիռների ճանաչման և կատարման մասին հարցումների վրա տարածելու վերաբերյալ իրավակարգավորումների կիրարկումը կարող է ստեղծել իրավիճակ, երբ անձի իրավունքները սահմանափակող իրավական ակտին կտրվի հետադարձ ուժ, ինչն էլ իր հերթին

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

հակասության մեջ կմտնի Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավակարգավորումների հետ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը բազմիցս ընդգծել է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժն արգելող սահմանադրական դրույթի նշանակությունը՝ նշելով, որ այդ իմպերատիվ արգելքը «... հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա: Նման պարտավորություն է նաև ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով» (2008 թվականի հունվարի 15-ի ՍԴԴ-723): Այդ որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքից պետության համար ծագում է պարտականություն՝ երաշխավորելու հիմնական իրավունքների առնչությամբ լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների իրացումը:

Մեկ այլ գործով Սահմանադրական դատարանը, վերլուծելով վիճարկվող դրույթի՝ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանության հարցը, արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ «Հասարակական հարաբերությունների այդպիսի ընդհանուր սկզբունքով կարգավորումը կանխատեսելի է և իրավաչափ, քանի որ իրավահարաբերությունների սուբյեկտները՝ օժտված լինելով փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով և ժամանակի մեջ դրանք գործադրելու իրավազորությամբ, ունակ են ձևավորել նորմատիվ պահանջներին համարժեք լեգիտիմ ակնկալիքներ և դրսևորել համապատասխան վարքագիծ, որը, որպես կանոն, հաջորդում է նախապես կանխորոշված այս կամ այն փաստի ծագմանը (առաջացմանը): Այլ է իրավահարաբերությունների բովանդակությունն այն դեպքերում, երբ օբյեկտիվ պատճառներով առաջացած փաստերի հիմքով այնպես է փոխվում դրանք կարգավորող նորմերի բովանդակությունը, որ անձը, գործելով արդեն իսկ օրենքով կարգավորված հարաբերությունների շրջանակներում, ունենալով որոշակի իրավունքներ և պարտականու-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

թյուններ, օրենքի (նորմի) փոփոխման պատճառով հայտնվում է համեմատաբար ավելի վատթար իրավական վիճակում ...:

(...)

Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում, ելնելով իրավունքի գերակայության սկզբունքից, անհրաժեշտ է իրավական ակտի փոփոխության կամ լրացման արդյունքում նոր իրավակարգավորումները ժամանակի մեջ և անձանց նկատմամբ գործողության մեջ դնելու այնպիսի կանոնների պահպանումը, որոնց գործադրմամբ երաշխավորվեն նրանց իրավունքների իրացման իրավաչափ պայմաններ: Դա Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի համատեքստում առավել կարևոր է հատկապես այն դեպքերում, երբ խնդիրն առնչվում է հնարավոր փոփոխությունների արդյունքում անձի իրավունքների իրացման պայմանների վատթարացմանը (խստացմանը)» (2018 թվականի դեկտեմբերի 18-ի ՍԴԴ-1437):

Միևնույն ժամանակ Սահմանադրական դատարանը փաստում է, որ Վիեննայի 1969 թվականի Միջազգային պայմանագրերի մասին կոնվենցիայի 28-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագրի կողմերը կարող են դրա գործողությանը տալ հետադարձ ուժ: Սակայն նման պայմանագրերի ներպետական վավերացման ընթացակարգը պետք է հիմնվի Սահմանադրությամբ ամրագրված և միջազգային ճանաչում ունեցող համընդհանուր սկզբունքների վրա, որոնք բխում են յուրաքանչյուր անհատին բնութագրական մարդկային արժանապատվությունից, իրավական որոշակիության սկզբունքից, ինչպես նաև պետք է ապահովի այդ սկզբունքների ու ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի պահանջների ներդաշնակ համաձայնեցվածությունը:

6. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ուշադրություն հրավիրել նաև այն հանգամանքին, որ տարբեր միջազգային կառույցների կողմից տարբեր ժամանակներում մշակվել են խնդրո առարկա իրավահարաբերությունները կարգավորող ուղենիշային սկզբունքներ պարունակող ուղենիշային փաստաթղթեր: Մասնավորապես.

Ա. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան հաստատել է իրավական օգնության ոլորտում պետությունների համագործակցության մի շարք մոդելային պայմանագրեր: Դրանցից է, օրինակ, 1990 թվականի դեկտեմբերի 14-ի 45/116 բանաձևով հաստատված «Հանձնման մասին մոդելային պայմանագիրը», որի 3-րդ հոդվածի f) կետով հանձնման մերժման իմպերատիվ հիմք է սահմանվել այն դեպքը, երբ «դատական որոշումը

Հայցող պետությունում կայացվել է is absentia, դատապարտյալ անձը չի ունեցել բավարար հնարավորություն իր պաշտպանությունն ապահովելու համար, և նա չուներ կամ չի կարող ունենալ իր ներկայությամբ գործի կրկնակի լուսմներ անցկացնելու հնարավորություն»:

Բ. Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի 1973 թվականի «Մեղադրյալի բացակայությամբ անցկացվող դատաքննությունը կանոնակարգող չափորոշիչները» թիվ (75)11 բանաձևում¹ ամրագրված սկզբունքների համաձայն՝

«4. Առանց մեղադրյալի մասնակցության դատաքննության անցկացումն անթույլատրելի է, եթե հնարավոր է և ցանկալի է գործը փոխանցել այլ պետություն կամ դիմել այլ պետության էքստրադիցիայի պահանջով:

(...)

7) յուրաքանչյուր ոք, ում գործը քննվել է իր բացակայությամբ, պետք է հնարավորություն ունենա բողոքարկել դատավճիռը՝ օգտագործելով այն բոլոր հնարավոր միջոցները, որը նա կունենար, եթե դատաքննությունն անցկացվեր իր մասնակցությամբ,

(...)

9) անձը դատական ակտի վերանայման իրավունք ունի այն դեպքում, երբ նա սահմանված կարգով ծանուցված է եղել, և գործը քննվել է իր բացակայությամբ, սակայն եթե նա կարող է ապացուցել, որ չներկայանալու և դատավորին այդ մասին տեղյակ չպահելու պատճառները եղել են իր հնարավորության սահմաններից դուրս»:

7. Բացի դրանից, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ եթե այլ պետության տարածքում հանցանք կատարած այլ պետության քաղաքացին (քաղաքացիություն չունեցող անձը) հայտնվի Հայաստանի Հանրապետությունում և Հայցող պետությունում նրա բացակայությամբ կայացվի վերջնական դատավճիռ, ապա այդ իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրության երրորդ գլխի երրորդ հոդվածի 1-ին կետի դրույթները, համաձայն որոնց՝ «Եթե մի Պայմանավորվող կողմը դիմում է մյուս Պայմանավորվող կողմին՝ խնդրելով իրեն հանձնել անձին՝ **վերջինիս նկատմամբ ի կատար ածելու համար պատիժ կամ կալանք, որը նշանակվել է նրա բացակայության պայմաններում կայացված**

¹ <https://rm.coe.int/09000016804f7581>

դատավճռով, ապա Հայցվող կողմը կարող է հրաժարվել այդ նպատակով անձին հանձնելուց, եթե համարում է, որ վճռին հանգեցնող վարույթում **չեն ապահովվել պաշտպանական նվազագույն իրավունքները**, որոնք ճանաչվում են պատշաճ կերպով, յուրաքանչյուրի համար, ում նկատմամբ հանցագործություն կատարելու համար մեղադրանք է առաջադրվել: Ըստ նույն դրույթի՝ «Այսուհանդերձ, հանձնումը թույլատրվում է, **եթե Հայցող կողմը տալիս է երաշխիք, որը բավարար է՝ երաշխավորելու պահանջվող անձի գործով կրկնակի դատավարության իրականացումը՝ ապահովելով նրա պաշտպանության իրավունքը**»: Ըստ վկայակոչված Արձանագրության այդ որոշումը «...Հայցող կողմին լիազորում է կամ ի կատար ածել կայացված դատավճիռը, **եթե դատապարտված անձը չի առարկում, կամ, եթե առարկում է, վարույթ իրականացնել հանձնված անձի նկատմամբ**»:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ ի տարբերություն այլ պետության քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հանձնելու պահանջը նրա քաղաքացիության հիմքով կմերժվի և/կամ չի կարող բավարարվել՝ ի թիվս այլնի, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիային միանալիս Հայաստանի Հանրապետությունը հայտարարել է, որ չի հանձնի իր քաղաքացուն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերը նկարագրված իրավիճակում Չեխիայի Հանրապետությունում հանցանք կատարած ՀՀ քաղաքացին դատական քննության (նիստին) մասնակցելու իրավունքից հրաժարված չլինելու և Հայաստանի Հանրապետությունում հայտնվելու պարագայում, քննության առարկա Համաձայնագրի գործողության պարագայում, *ընդհանրապես զրկված կլինի դատական քննության (նիստին) մասնակցելու իրավունքից (ինչը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հանձնելու, ինչպես նաև Չեխիայի Հանրապետությունում կայացված վերջնական դատավճիռը Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի կողմից վերանայելու հնարավորությունների բացակայությամբ (Համաձայնագրի 9-րդ հոդված, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 499¹⁴-րդ հոդվածի 5-րդ մաս)*՝ ի տարբերություն այլ երկրների քաղաքացիների (քաղաքացիություն չունեցող անձանց), որոնք **չեն զրկվում այդ** իրավունքից. դրա իրացումը հնարավոր է լինում ապահովել հայցող պետությանը Հայաստանի Հանրապետության կողմից նրան հանձնելով և հայցող պետությունում կրկնակի դատավարություն իրականացնելու միջոցով («Հանձնման

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

մասին» եվրոպական կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրության երրորդ գլխի երրորդ հոդվածի 1-ին կետ):

Այսպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոգրյալ իրավակարգավորումների կիրարկման դեպքում նույն կարգավիճակում գտնվող՝ Չեխիայի Հանրապետությունում դատապարտված և Հայաստանի Հանրապետությունում հայտնված **անձինք, կախված քաղաքացիությունից և դրանով պայմանավորված, Հայաստանի Հանրապետության կողմից այլ երկրին հանձնվելու հնարավորության առկայությունից/բացակայությունից,** դատական քննությանը (նիստին) մասնակցելու իրավունքից **հրաժարված չլինելու** և իրենց **բացակայությամբ** Չեխիայի Հանրապետությունում կայացված դատավճիռների դեպքում՝ դատական քննությանը (նիստին) մասնակցելու իրավունքից մի դեպքում **զրկված են լինելու, մյուս դեպքում՝ ոչ:**

Սահմանադրական դատարանի գնահատմամբ վերոգրյալ իրավիճակում նույն կարգավիճակում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և այլ երկրների քաղաքացիների (քաղաքացիություն չունեցող անձանց) իրավունքների այդպիսի տարբերակումը որևէ կերպ արդարացված համարվել չի կարող:

8. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քննության առարկա Համաձայնագրով նախատեսված հետադարձ ուժի դրույթն իր վատթարացնող բովանդակությամբ վտանգում է հիմնական իրավունքների առնչությամբ լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների կենսագործումը և դրանով իսկ հակասում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքին: Բացի դրանից, Համաձայնագրի կիրարկման հետևանքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն այլ երկրների քաղաքացիների (քաղաքացիություն չունեցող անձանց) համեմատ հայտնվելու են անհավասար իրավավիճակում, դատական քննությանը (նիստին) մասնակցելու իրավունքից հրաժարված չլինելու և Հայաստանի Հանրապետությունում հայտնվելու պարագայում իրենց բացակայությամբ Չեխիայի Հանրապետությունում վերջնական դատավճռի կայացման դեպքում զրկված են լինելու դատական քննությանը (նիստին) մասնակցելու իրավունքից՝ ի տարբերություն այլ երկրների քաղաքացիների (քաղաքացիություն չունեցող անձանց):

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության միջև՝ «Հանձնման մասին» 1957 թվականի դեկտեմբերի 13-ի եվրոպական կոնվենցիայի կիրառումը դյուրացնելուն ուղղված» համաձայնագրի 13-րդ հոդվածի 4-րդ կետում ամրագրված պարտավորությունը հակասում է Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասին:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

15 մարտի 2022 թվականի
ՍԴՈ-1637

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ «ՀԱՆՁՆՄԱՆ ՄԱՍԻՆ» 1957 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴՅՈՒՐԱՑՆԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1637 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության միջև՝ «Հանձնման մասին» 1957 թվականի դեկտեմբերի 13-ի եվրոպական կոնվենցիայի կիրառումը դյուրացնելուն ուղղված» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի մարտի 15-ի ՍԴՈՒ-1637 որոշմամբ «Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության միջև՝ «Հանձնման մասին» 1957 թվականի դեկտեմբերի 13-ի եվրոպական կոնվենցիայի կիրառումը դյուրացնելուն ուղղված» համաձայնագրի 13-րդ հոդվածի 4-րդ կետում ամրագրված պարտավորությունը ճանաչել է Սահմանադրությանը հակասող:

Սահմանադրական դատարանի 2022 թվականի մարտի 15-ի ՍԴՈՒ-1637 որոշման առնչությամբ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ են համարում նշել, որ սույն հատուկ կարծիքը չի վերաբերում «Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության միջև՝ «Հանձնման մասին» 1957 թվականի դեկտեմբերի 13-ի եվրոպական կոնվենցիայի կիրառումը դյուրացնելուն ուղղված» համաձայնագրի 13-րդ հոդվածի 4-րդ կետում ամրագրված պարտավորության՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ ՍԴՈՒ-1637 որոշման պատճառաբանական մասում արտահայտված դիրքորոշմանը, և նշված հարցի վերաբերյալ իմ դիրքորոշումը համընկնում է

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 1/1 (105/1) 2022

Սահմանադրական դատարանի դատավորների մեծամասնության դիրքորոշմանը:

Այդուհանդերձ, գտնում եմ, որ տվյալ դեպքում առկա չէր թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով սահմանված կարգով դիմողին պետք է տրվեր առկա թերությունները շտկելու հնարավորություն:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Փաստորեն, Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանի դիմում է Կառավարությունը¹:

Միաժամանակ Սահմանադրության 152-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերից հետևում է, որ Կառավարության գործունեությունը ղեկավարում է վարչապետը, իսկ նրա բացակայության ժամանակ վարչապետի սահմանած կարգով վարչապետին փոխարինում է փոխվարչապետներից մեկը:

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված:**

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված: Ընդ որում, վերը նշված կարգավորումները հնարավոր են համարում այդ հարցով դիմումի ստորագրումը նաև վարչապետի բացակայության ժամանակ վերջինիս փոխարինող փոխվարչապետի կողմից: Միաժամանակ իմ գնահատմամբ, եթե դիմումը ստորագրվում է ոչ թե վարչապետի, այլ վերջինիս փոխարինող փոխվարչապետի կողմից, Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումին պետք է կցվի այդ փոխվարչապետի կողմից վարչապետին փոխարինելու հանգամանքը հավաստող փաստաթուղթը (դրա պատճենը), քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլինի փաստել նրա՝ որպես վարչապետին փոխարինող անձի՝ Սահմանադրական դատարանում Կառավարությանն ի պաշտոնե ներկայացնելու լիազորության առկայությունը:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է Հայաստանի Հանրապետության վարչապետի գրության ձևաթղթի վրա կազմված, Սուրեն Պապիկյանի կողմից Սահմանադրական դատարանին հասցեագրված գրություն¹, որով նա, ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի

¹ Ինչպես 2021 թվականի հոկտեմբերի 5-ին Սահմանադրական դատարան մուտքագրված գրության, այնպես էլ դրան կից ներկայացված՝ Կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 1595-Ա որոշման վրա առկա չէ ստորագրություն, ինչին անդրադարձ կկատարվի ստորև:

3-րդ մասով, դիմել է Սահմանադրական դատարան՝ «Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության միջև՝ «Հանձնման մասին» 1957 թվականի դեկտեմբերի 13-ի եվրոպական կոնվենցիայի կիրառումը դյուրացնելուն ուղղված» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար:

Մինչդեռ սույն գործի նյութերը հնարավորություն չեն տալիս եզրահանգում կատարել այն մասին, որ Սահմանադրական դատարան դիմած անձն իրավասու էր միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով Կառավարության անունից դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Մասնավորապես՝ գործի նյութերից պարզ է, թե Սահմանադրական դատարան դիմած անձն ինչ կարգավիճակով է Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն դիմել Սահմանադրական դատարան, արդյոք նա եղել է վարչապետի բացակայության ժամանակ վերջինիս փոխարինող փոխվարչապետ, թե՛ ոչ, այն դեպքում, երբ ըստ սույն գործի նյութերի՝ նշված դիմումը ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության վարչապետ Սուրեն Պապիկյան»-ի կողմից:

Գտնում եմ, որ գործի նյութերի հիման վրա նշված հարցերը պարզելու հնարավորության բացակայության պայմաններում դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ինչը հիմք էր «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքների առաջացման, այն է՝ եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին դիմողին տեղեկացնելու համար:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Վերը նշված իրավական նորմերից հետևում է, որ դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների, իսկ էլեկտրոնային եղանակով դիմումի ներկայացումը Սահմանադրական դատարան թույլատրելի է միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարանի դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ

ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ որևէ ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների,

որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից՝ պայմանով, որ հաղթահարվեր նաև Սահմանադրական դատարանի դիմած անձի՝ սույն գործի շրջանակում Կառավարության անունից հանդես գալու իրավասություն ունենալու վերաբերյալ խնդիրը: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկագվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շփոթելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«15» մարտի 2022թ.

◆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԱՆԴԱՄ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՍԻՆԳԱՊՈՒՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

15 մարտի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահ-
հոդ), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի,
Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

«Հ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Վ.
Քերոբյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-
րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական
դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ
հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց՝ «Եվրասիական
տնտեսական միության և նրա անդամ պետությունների, մի կողմից, և
Սինգապուրի Հանրապետության, մյուս կողմից, միջև համապարփակ
տնտեսական համագործակցության մասին» շրջանակային համա-

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՊԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ծայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ կառավարությունն իր՝ 2022 թվականի հունվարի 5-ի N 2-Ա որոշմամբ հավանություն է տվել 2019 թվականի հոկտեմբերի 1-ին Երևանում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության, մյուս կողմից, միջև համապարփակ տնտեսական համագործակցության մասին» շրջանակային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի հունվարի 14-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ շրջանակային համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության, մյուս կողմից, միջև համապարփակ տնտեսական համագործակցության մասին» շրջանակային համաձայնագիրը (այսուհետ՝ Շրջանակային համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի հոկտեմբերի 1-ին Երևանում՝ Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների՝ Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության, մյուս կողմից, միջև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում Կողմերի միջև փոխադարձ առևտրային կապերի զարգացման և տնտեսական համագործակցության խրախուսման համար բարենպաստ միջավայր և պայմաններ ստեղծելու նպատակով:

2. Շրջանակային համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը, երբ Կողմերը փոխանակում են գրավոր ծանուցումներ, որոնցով հավաստում են, որ կատարել են Շրջանակային համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

համապատասխան ներքին իրավական ընթացակարգերը: Այդպիսի ծանուցումները կատարվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Սինգապուրի Հանրապետության միջև (հոդվ. 2.2):

3. Շրջանակային համաձայնագրի նպատակն է ստեղծել Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի միջև, մյուս կողմից, համապարփակ տնտեսական համագործակցության համար շրջանակ՝ Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության միջև, մյուս կողմից, տնտեսական և առևտրային հարաբերությունների, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Սինգապուրի Հանրապետության միջև ներդրումային համագործակցության ամրապնդման և ընդլայնման միջոցով, և Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության միջև, մյուս կողմից, ապրանքների առևտրի և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Սինգապուրի Հանրապետության միջև ծառայությունների առևտրի ազատականացման և դյուրացման միջոցով, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Սինգապուրի Հանրապետության միջև թափանցիկ, ազատական և խթանող ներդրումային ռեժիմի ստեղծման միջոցով (հոդվ. 1.1):

4. Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, Շրջանակային համաձայնագրով ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

4.1. Սինգապուրի Հանրապետության հարցմամբ՝ գրավոր հարցումը ստանալուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում, հայցող Կողմի տարածքում, եթե Կողմերն այլ բանի վերաբերյալ չեն պայմանավորվել, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հետ համատեղ՝ առևտրի համար պատասխանատու նախարարների մակարդակով, անցկացնել խորհրդատվություններ՝ Շրջանակային համաձայնագրի 1.3-րդ հոդվածի (Կարգավորման շրջանակը և հարաբերակցությունը այլ համաձայնագրերի հետ) 1-ին կետում նշված համաձայնագրերից ցանկացածի գործողության դադարեցման, Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական միության նոր անդամ պետության միացման, Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԻՆԳԱԿՈՐԻ ՂԱՏԱՐՎԱՆ

համապատասխան Եվրասիական տնտեսական միությունից Եվրասիական տնտեսական միության անդամ պետության դուրս գալու, կամ Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ ցանկացած այլ հարցերի վերաբերյալ (հոդվ. 1.4, կետեր 1 և 2),

4.2. Շրջանակային համաձայնագրի 1.4-րդ հոդվածի 1-ին կետում նշված խորհրդատվությունների ընթացքում, հաշվի առնելով ցանկացած համապատասխան գործոնները, ի թիվս այլնի, ուսումնասիրել՝ արդյո՞ք Շրջանակային համաձայնագրի նպատակներն իրականացվել են, թե ոչ, և արդյո՞ք անհրաժեշտություն կա փոփոխություններ կատարել Շրջանակային համաձայնագրում և դրա 1.3-րդ հոդվածի (Կարգավորման շրջանակը և հարաբերակցությունը այլ համաձայնագրերի հետ) 1-ին կետում նշված համաձայնագրերի մեջ (հոդվ. 1.4, կետ 3) և այլն:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Շրջանակային համաձայնագրին Եվրասիական տնտեսական միությանը նոր անդամ պետության միանալու հարցը բանակցվում է Եվրասիական տնտեսական միության, նրա անդամ պետությունների, ներառյալ՝ Եվրասիական տնտեսական միության այդ նոր անդամ պետության, և Սինգապուրի Հանրապետության միջև: Նման միացումը իրականացվում է Շրջանակային Համաձայնագրի լրացուցիչ արձանագրության կնքման միջոցով (հոդվ. 2.3, կետ 1):

6. Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը Եվրասիական տնտեսական միությանն անդամակցում է 2014 թվականի հոկտեմբերի 10-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրով, որը վավերացվել է Ազգային ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 4-ի՝ ԱԺՈ-132-Ն որոշմամբ: Միաժամանակ, Շրջանակային համաձայնագրում հղում է կատարվում «Հայաստանի Հանրապետության և Սինգապուրի Հանրապետության միջև Ծառայությունների առևտրի և ներդրումների մասին» 2019 թվականի հոկտեմբերի 1-ի համաձայնագրին, որը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2020 թվականի մայիսի 19-ին՝ Հանրապետության նախագահի կողմից ստորագրված ՀՕ-259-Ն օրենքով:

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Շրջանակային համաձայնագրով Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ

պետությունների, մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության, մյուս կողմից, միջև համապարփակ տնտեսական համագործակցության գործում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա Եվրասիական տնտեսական միության մյուս անդամ պետությունների և Սինգապուրի Հանրապետության հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության, մյուս կողմից, միջև համապարփակ տնտեսական համագործակցության մասին» շրջանակային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

15 մարտի 2022 թվականի
ՍԴՈ-1638

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՍԻՆԳԱՊՈՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1638 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության, մյուս կողմից, միջև համապարփակ տնտեսական համագործակցության մասին» շրջանակային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի մարտի 15-ի ՍԴՈՒ-1638 որոշմամբ որոշել է, որ «Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության, մյուս կողմից, միջև համապարփակ տնտեսական համագործակցության մասին» շրջանակային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի մարտի 15-ի ՍԴՈՒ-1638 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 1/1 (105/1) 2022

սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1638 որոշմամբ «Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների, մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության, մյուս կողմից, միջև համապարփակ տնտեսական համագործակցության մասին» շրջանակային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.
- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.
- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.
- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում

ՍԱՀՄԱՆԱՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ

նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի

Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

ՍԱՀՄԱՆԱՂՐՈՎՄԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 1/1 (105/1) 2022

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված

ՍԱՀՄԱՆԱՂՈՐԿՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ

պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«15» մարտի 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՕՐԵՆՔԻ 62-ՐԴ ՀՈԴԿԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

15 մարտի 2022թ.

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Մարդու իրավունքների պաշտպանի,

գործով որպես պատասխանող ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի և 68-րդ հոդվածի,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Սահմանադրական

դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի հունվարի 17-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի հունվարի 27-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ին:

Օրենքի «Որոշումների և եզրակացությունների ընդունման կարգը» վերատառությամբ 62-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է.

«9. Եթե Սահմանադրական դատարանը քննարկվող հարցի վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում կամ եզրակացություն չի ընդունում, ապա դիմումը համարվում է մերժված, որի մասին հայտարարվում է նիստերի դահլիճում»:

Օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասը փոփոխությունների և/կամ լրացումների չի ենթարկվել:

Գործի քննության առիթը Մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ նաև՝ Դիմող)՝ 2021 թվականի հոկտեմբերի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև վերլուծելով Օրենքի համապատասխան դրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը նշում է, որ 2020 թվականի դեկտեմբերի 9-ին իր կողմից Սահմանադրական դատարան է ներկայացվել դիմում՝ ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1-րդ մասերի և 422-րդ հոդվածի սահմանադրականությունը որոշելու խնդրանքով: Նշված գործի վերաբերյալ Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում հրապարակվել է հետևյալ տեղեկատվությունը. «Սահմանադրական դատարանը 2021 թվականի սեպտեմբերի 7-8-ի նիստերում քննության է առել «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1-րդ մասերի և 422-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, և հաշվի առնելով, որ նշված գործի վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում չի ընդունվել, ուստի համաձայն

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասի՝ նշված դիմումը համարվում է մերժված, որի մասին հայտարարվել է նիստերի դահլիճում»:

Վկայակոչելով Սահմանադրության 163-րդ հոդվածի 1-ին մասը, 167-րդ հոդվածի 1-ին մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ) համապատասխան վճիռներով ներկայացրած դիրքորոշումները՝ Դիմողը նշում է, որ Սահմանադրական դատարան դիմելն անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության առանցքային միջոց է:

Վիճարկվող կարգավորումը դիտարկելով դատական պաշտպանության իրավունքի լույսի ներքո՝ Դիմողը փաստում է. «(...) Սահմանադրական դատարանին դիմելով, Սահմանադրության 169-րդ հոդվածով սահմանված սուբյեկտներն ակնկալում են իրենց ենթադրյալ խախտված իրավունքների վերականգնում սահմանադրական արդարադատության իրականացման միջոցով: Սահմանադրական դատարան ներկայացված իրենց դիմումի քննության ընդունումն էլ ավելի է ամրապնդում այդ ակնկալիքը, քանի որ ենթադրելի է, որ Սահմանադրական դատարանն իրենց դիմումի քննության արդյունքում կայացնելու է գործն ըստ էության լուծող, որոշակի բովանդակություն ունեցող որոշում, որով վիճարկվող նորմը կա՛մ ճանաչվելու է Սահմանադրությանը հակասող և անվավեր, կա՛մ առնվազն ՍԴ պատճառաբանված որոշմամբ հիմնավորվելու է նորմի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը»:

Ըստ Դիմողի՝ վիճարկվող նորմը Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում այն անձի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի վերանայման հիմք է, որով խախտվել են վերջինիս իրավունքները, մինչդեռ Սահմանադրական դատարանի կողմից ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում չընդունելը զրկում է անձին խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունից՝ ոտնահարելով արդար դատաքննության և դրա տարր հանդիսացող՝ դատարանի մատչելիության ու իրավունքների արդյունավետ պաշտպանության իրավունքները: Ընդ որում՝ Դիմողը նկատում է, որ խնդրահարույց է ոչ միայն որոշման եզրափակիչ մասի, այլ նաև պատճառաբանական մասում շարադրման ենթակա դիրքորոշումների բացակայությունը, որոնք իրավունքի աղբյուր են և իրենց բնույթով

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ

հանդիսանում են սահմանադրական նորմերի պաշտոնական մեկնաբանություններ:

Դիմողն առանձնակի արժևորում է Սահմանադրական դատարանի որոշումների ուղենիշային դերն ու իրավունքների խախտման բացառման համար կանխարգելիչ բնույթ ունենալը: Վերջնական դատական ակտի կատարումն արդար դատաքննության իրավունքի և դրա բաղադրատարր հանդիսացող՝ դատարանի մատչելիության իրավունքի անբաժանելի մաս դիտարկելով, ինչպես նաև վկայակոչելով այս առնչությամբ ՄԻԵԴ համապատասխան դիրքորոշումները՝ Դիմողը կոնկրետ գործով Սահմանադրական դատարանի կողմից ըստ էության որոշում կայացնելն այս հիմնավորման լույսի ներքո ևս դիտարկում է արդար դատաքննության իրավունքի տարր:

Ամփոփելով իր դիրքորոշումը՝ Դիմողը եզրահանգում է, որ Օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասը հակասում է Սահմանադրության 61 և 81-րդ հոդվածներին այնքանով, որքանով Սահմանադրական դատարանում քննարկվող հարցի վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով դիմումը մերժված համարելը ոտնահարում է դատական պաշտպանության յուրաքանչյուրի իրավունքը:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ նաև Պատասխանող), վկայակոչելով Սահմանադրության 61, 81 և 167-րդ հոդվածները, ինչպես նաև սահմանադրական արդարադատության իրավական բովանդակությունը բացահայտող Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումները, գտնում է, որ սահմանադրական արդարադատությունը մարդու իրավունքների պաշտպանության ամենաարդյունավետ միջոցն է, որի նպատակն անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության համակարգի գործունակության ապահովումն է:

Կոլեգիալությունը դիտարկելով իբրև Սահմանադրական դատարանում գործի քննության սկզբունք՝ Պատասխանողը վիճարկվող կարգավորման հիմնավորման հիմքում դնում է օրենքների սահմանադրականության կանխավարկածը՝ եզրահանգելով, որ այն դեպքում, երբ քննարկվող հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանի կողմից ձայների մեծամասնությամբ չի ձևավորվում վիճարկվող նորմի Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ համոզմունք, ապա դիմումը պետք է համարվի մերժված:

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Պատասխանողը գտնում է. «Օրենքի հակասահմանադրականության ապացուցման բեռը կրում է նա, ով բարձրացնում է դրույթի հակասահմանադրականության հարց՝ նշելով բացասական բոլոր հնարավոր հիմքերը:

(...)

Օրենքների սահմանադրականության կանխավարկածը հանգեցնում է կասկածի դեպքում օրենքը Սահմանադրությանը համապատասխանող մեկնաբանելու պահանջին: Այսինքն՝ այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանի դատավորների մեծամասնության մոտ համոզմունք չի ձևավորվում վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ, ապա գործում է տվյալ դրույթի Սահմանադրությանը համապատասխանելու կանխավարկածը»:

Այս համատեքստում Պատասխանողը նկատում է նաև, որ Սահմանադրական դատարանի կողմից ձայների հավասարության հետևանքով դիմումը մերժված համարվելու պարագայում, փաստորեն, արձանագրվում է անձի սահմանադրական իրավունքների խախտման բացակայությունը:

Ամփոփելով իր դիրքորոշումը՝ Պատասխանողը եզրակացնում է, որ վիճարկվող դրույթը համապատասխանում են Սահմանադրությանը:

3. Սահմանադրաիրավական վեճի շրջանակները

Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

- արդյո՞ք վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության գնահատման գործով Սահմանադրական դատարանի կողմից ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում չընդունվելու դեպքում դիմումը մերժված համարելու վերաբերյալ իրավակարգավորմամբ խաթարվում է Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի դատական պաշտպանության իրավունքը:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության՝ «Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը» վերտառությամբ 61-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրական դատարանն իր բազմաթիվ որոշումներում (ՍԴՈ-652, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-765, ՍԴՈ-844, ՍԴՈ-873, ՍԴՈ-890, ՍԴՈ-932, ՍԴՈ-942, ՍԴՈ-1037, ՍԴՈ-1052, ՍԴՈ-1115, ՍԴՈ-1127, ՍԴՈ-1190, ՍԴՈ-1192, ՍԴՈ-1196, ՍԴՈ-1197, ՍԴՈ-1220, ՍԴՈ-1222, ՍԴՈ-1257)

անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրականության հիմնախնդիրներին՝ դրանք քննարկելով իբրև դատական պաշտպանության իրավունքի հիմնարար բաղադրատարրեր:

Սահմանադրական դատարանը, մասնավորապես, 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719, 2019 թվականի հունվարի 22-ի ՍԴՈ-1439 որոշումներում անդրադառնալով Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների իրացմանը, նշել է, որ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները սահմանադրական այն հիմնարար իրավունքներից են, որոնց իրացմամբ երաշխավորվում են սահմանադրական մի շարք այլ իրավունքների հարգումն ու պաշտպանությունը, ուստի՝ «(...) Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից»:

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական էությանը, 2018 թվականի հունիսի 19-ի ՍԴՈ-1420 որոշմամբ ընդհանրացնելով և վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ, փաստել է.

«- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը (...):»:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆

4.2. Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասի ուժով Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը:

Հիշյալ սահմանադրաիրավական նորմերն ուղղակիորեն սահմանում են, որ Սահմանադրական դատարանը՝ որպես իրավական համակարգում Սահմանադրության գերակայությունն ապահովող մարմին, իրականացնում է սահմանադրական արդարադատություն: Սահմանադրական արդարադատության միջոցով երաշխավորվում է Սահմանադրության գերակայությունը, ապահովվում մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Սահմանադրական արդարադատության իրականացումն առհասարակ, և հատկապես՝ Սահմանադրությամբ հատկորոշված նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելը Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է: Ընդ որում՝ սահմանադրական արդարադատության արդյունքում կայացվող ակտերը հանրային նշանակության առումով ևս բացառիկ են, քանզի ուղղված են ոչ միայն կոնկրետ գործով անձի իրավունքների, այլ նաև ողջ հանրության շահերի պաշտպանությանն ու իրավունքի գերակայության և սահմանադրական իրավակարգի ապահովմանը:

Սահմանադրական դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի և դրա առանձնահատկությունների բովանդակության վերաբերյալ 2006 թվականի հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652 որոշմամբ Սահմանադրական դատարանն ուղղակիորեն հատկորոշել է, որ՝ «(...) Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը: Սահմանադրական դատարանին է Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով իրավասություն վերապահված Սահմանադրության դրույթների վերաբերյալ վերջնական իրավական դիրքորոշում ներկայացնել՝ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս: Այդ իրավական դիրքորոշումների բովանդակությունը սահմանադրական նորմի պաշտոնական մեկնաբանությունն է»:

«ՀՀ սահմանադրական դատարանն օժտված է սահմանադրաիրավական առանձնահատուկ կարգավիճակով, որը պայմանավորված է պետական իշխանության մարմինների համակարգում իր ունեցած տեղով,

դերով և դրան համապատասխան լիազորություններով («Սահմանադրության 92 և 100-րդ հոդվածներ): Որպես դատական մարմին բացառապես սահմանադրական դատարանին է իրավասություն վերապահված իրականացնել սահմանադրական արդարադատություն («Սահմանադրության 93-րդ հոդված): Սահմանադրական դատարանը կոչված է ապահովելու «Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը, որի արդյունքում ընդունում է որոշումներ (եզրակացություններ): Այդ ակտերը «իրավական համակարգում ունեն իրենց առանձնահատուկ տեղն ու դերը՝ թե՛ բովանդակությամբ, իրավակարգավորիչ նշանակությամբ և թե՛ ունեցած իրավական հետևանքների առումներով: Դրանցով կարգավորվող հարաբերությունները վերաբերում են հասարակական կյանքի բոլոր բնագավառներին և իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտներին: Սահմանադրական դատարանի որոշումները ենթակա են կատարման անհապաղ (կամ դատարանի կողմից նախանշված ժամկետներում) Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և ենթակա չեն քննարկման (վիճարկման, քննության) պետական, տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի, կազմակերպության կամ անհատի կողմից» (2011 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-943 որոշում):

Գործող սահմանադրաիրավական կարգավորումները երաշխավորում են անձի՝ Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը՝ սահմանադրական արդարադատության մատչելիության իրավունքը դիտարկելով իբրև մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար երաշխիք:

Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը փաստում է, որ տվյալ դեպքում անձի դատական պաշտպանության իրավունքի առարկայական ոլորտում է գտնվում նաև վերջինիս կողմից Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը: Ընդ որում՝ դատական պաշտպանության իրավունքը երաշխավորվում է ոչ միայն դատարան դիմելու հնարավորություն ապահովելով, այլ նաև վեճին վերջնական լուծում տալու իրական հնարավորության գոյությամբ:

Վերոգրյալի լույսի ներքո Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական արդարադատության մատչելիության իրավունքն ընդգրկում է նաև նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վիճարկման հարցով Սահմանադրական դատարանի կողմից ըստ էության որոշում ստանալու իրավունքը:

4.3. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականության հարցը մի կողմից՝

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

գտնվում է դատական պաշտպանության իրավունքի, իսկ մյուս կողմից՝ Սահմանադրական դատարանի գործունեության վերաբերյալ սահմանադրական կարգավորումների տիրույթում:

Սահմանադրական դատարանի կողմից օրենքների և Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետում նշված այլ նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով դատավորների ձայների հավասարության պատճառով ըստ էության որոշում չընդունվելու հետևանքով դիմումը մերժված համարելու կարգավորման իրավաչափության պարզման համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, նախ, անդրադառնալ Սահմանադրական դատարանի որոշումների ընդունման ընթացակարգին:

Այսպես՝ Սահմանադրության 170-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրել է, որ Սահմանադրական արդարադատության իրականացման արդյունքում ընդունվող ակտերն են որոշումներն ու եզրակացությունները: Սահմանադիրը նախատեսել է նաև Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող ակտերի համար անհրաժեշտ ձայների քանակը, մասնավորապես՝ հիշյալ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 10-րդ և 12-րդ կետերով նախատեսված հարցերով որոշումները, եզրակացություններն ընդունվում են Սահմանադրական դատարանի դատավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով, մյուս որոշումները՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Օրենքի 37-րդ հոդվածով սահմանվում է Սահմանադրական դատարանի նիստի իրավազորությունը: Համաձայն վկայակոչված հոդվածի 2-րդ մասի՝ նիստն իրավազոր է, եթե ապահովված է տվյալ գործով որոշում ընդունելու համար նույն օրենքի 62-րդ հոդվածով նախատեսված քվորումը: Օրենքի 62-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրական դատարանի ըստ էության որոշումներն ընդունվում են դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, բացառությամբ նույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերի:

Վերոնշյալ իրավակարգավորումներից ուղղակիորեն բխում է, որ սահմանադիրը, իբրև սահմանադրական արդարադատության եզրափակում համարել է որոշումների կամ եզրակացությունների ընդունումը՝ նախատեսելով նաև **Սահմանադրական դատարանի դատավորների այն անհրաժեշտ քանակի ձայները, որոնց առկայությունն է միայն արտահայտում այդ մարմնի կամքը՝ քննության առարկա հարցի վերջնական լուծման վերաբերյալ:** Հետևաբար՝ նորմատիվ իրավական

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ վերջնական որոշում Սահմանադրական դատարանի կողմից կարող է ընդունվել բացառապես դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնության առկայության դեպքում: Այսինքն՝ բացառությամբ որոշ դեպքերի, Սահմանադրական դատարանի նիստն իրավագոր է և, հետևապես, Դատարանը «կարողություն ունի» քննվող հարցի վերաբերյալ վերջնական որոշում ընդունել, ուստի և՛ որոշումը կարող է համարվել ընդունված, եթե Սահմանադրական դատարանի նիստին ներկա են և որոշման օգտին քվեարկել են առնվազն հինգ դատավոր:

4.4. Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումների և եզրակացությունների ընդունման համար Սահմանադրական դատարանի դատավորների անհրաժեշտ քանակի ձայների՝ Սահմանադրությամբ նախատեսված լինելն ինքնապատակ չէ: Այն հետապնդում է **Սահմանադրական դատարանի՝ իբրև կոլեգիալ մարմնի անդամների ձայների այնպիսի անհրաժեշտ քանակի առկայության ապահովման նպատակ, որի գոյությունը պարտադիր է քննության առարկա հարցի վերաբերյալ տվյալ մարմնի կամքը պարտադիր ուժ ունեցող վերջնական դատական ակտի շրջանակներում արտացոլելու համար:**

Հաշվի առնելով այն բացառիկ լիազորությունը, որով օժտված է Սահմանադրական դատարանը՝ համապատասխան որոշումներով Սահմանադրության մեկնաբանության լույսի ներքո ներազդելու, մասնավորապես, ժողովրդի բարձրագույն ներկայացուցչական մարմնի՝ Ազգային ժողովի կամաարտահայտության արդյունքով ձևավորված որևէ նորմի բովանդակության բացահայտման և ընկալման վրա կամ այն առհասարակ իրավունքի համակարգից վերացնելու, Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադիրը նախանշել է այն նվազագույն ձայների քանակը, որի պարագայում կապահովվի այդպիսի «միջամտության» լեգիտիմությունն ու հավասարակշռող նշանակությունը:

Սահմանադրական դատարանը՝ որպես կոլեգիալության սահմանադրաիրավական սկզբունքի հիման վրա գործող մարմին, նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցի վերաբերյալ գաղտնի քվեարկության արդյունքում հանրությանն է ներկայացնում իր այն որոշումը, որն ընդունվել է դատավորների ձայների մեծամասնության արդյունքում: **Ձայների մեծամասնությամբ որոշում կայացնելու սահմանադրաիրավական պահանջն ուղղված է Սահմանադրական դատարանի նկատմամբ հանրային իշխանության վստահության՝ ժողովրդավարական պետության համար ընդունելի բարձր աստիճանի ապահովմանը:**

Սահմանադրական դատարանը համանման դիրքորոշում է հայտնել նաև 2017 թվականի նոյեմբերի 10-ի ՍԴՈ-1384 որոշմամբ, որի շրջանակներում անդրադառնալով հանրային իշխանության կոլեգիալ մարմնի գործունեության առանձնահատկություններին՝ արձանագրել է. «(...) վեճի առարկա իրավակարգավորումների առանձնահատկություններն առաջին հերթին պայմանավորված են ընդհանրապես հանրային իշխանության կոլեգիալ մարմնի և, մասնավորապես՝ համայնքի ավագանու իրավագործության որոշման հստակեցմամբ, ելնելով հատկապես այն մեկնակետից, որ «քվորումը» հանրային իշխանության կոլեգիալ (ներկայացուցչական) մարմնի կամաարտահայտման իրացման (այս կամ այն լիազորության իրականացման) առաջնահերթ (պարտադիր) իրավական պայմանն է:

Իրավագիտական առումով «կոլեգիալություն» եզրույթի բնորոշումը հիմնականում հանգում է հետևյալին. կոլեգիալությունը կառավարման սկզբունք է, որի պայմաններում ղեկավարումն իրականացվում է մի խումբ լիազորված անձանց կողմից: Կոլեգիալության կարգով որոշումների կայացումը ենթադրում է կարծիքների նախնական քննարկում և կոլեկտիվ քննարկման արդյունքում պաշտոնական փաստաթղթի մշակում ու ընդունում:

Հանրային իշխանության իրականացումն ինչպես միանձնյա, այնպես էլ կոլեգիալ սկզբունքներով սահմանադրաիրավական պայման է, որն անմիջականորեն բխում է ՀՀ Սահմանադրության անփոփոխելի 2-րդ հոդվածի իրավակարգավորումից և պայմանավորված է կառավարման ժողովրդավարական սկզբունքների շարունակական իրացման անհրաժեշտությամբ: Կոլեգիալ կառավարման անհրաժեշտությունը, մասնավորապես, նպատակ ունի բազմակարծության ապահովման (2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդված), սուբյեկտիվիզմի և կամայականության հաղթահարման, ինչպես նաև հանրության օբյեկտիվ շահերի առավել արտահայտման միջոցներով երաշխավորել տվյալ մարմնի առջև Սահմանադրությամբ և օրենքներով առաջադրված հանրային կարևորություն ունեցող գործառույթների արդյունավետ իրականացումը:

Ելնելով այս կամ այն մարմնի իրավական կարգավիճակի (գործառույթների շրջանակի) առանձնահատկություններից՝ հանրային իշխանության բնագավառում կոլեգիալ և միանձնյա կառավարման տարանջատման չափանիշներից են հանրային իշխանության մարմինների կողմից ընդունվող պաշտոնական փաստաթղթերի (որոշումների) ընդունման պայմաններն ու կարգը: Կոլեգիալ մարմինների հանրային-իշխանական

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

գործունեության կարգավորման հիմքում առաջնահերթ կարևորվում են որոշում (կամ պաշտոնական այլ փաստաթուղթ) ընդունելու իրավական անհրաժեշտությունը, իսկ որոշ դեպքերում՝ հրատապությունը, մյուս կողմից՝ օբյեկտիվ պատճառներով կոլեգիալ մարմնի նիստին տվյալ մարմնի բոլոր անդամների մասնակցությունն ապահովելու անհնարինության պայմաններում այդ մարմնի բնականոն գործունեությունն ապահովող նվազագույն պայմանների, այն է՝ կոլեգիալ մարմնի անհրաժեշտ նվազագույն թվով անդամների մասնակցությամբ որոշումների ընդունման երաշխավորումը: Ընդ որում, դեպքերից որևէ մեկին նախապատվություն չի կարող տրվել: Անհրաժեշտ է ողջամիտ հավասարակշռություն նշված դեպքերի միջև՝ այն հաշվով, որպեսզի չխաթարվի ժողովրդավարական պետության էությունը:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ այդպիսի հավասարակշռությունը ենթադրում է կոլեգիալ մարմնի նիստերին տվյալ մարմնի անդամների անհրաժեշտ այնպիսի թվաքանակի ներկայություն, որը ճանաչելի կդարձնի տվյալ մարմինը որպես այդպիսին, կերաշխավորի նրա կողմից լեգիտիմ որոշումներ կայացնելու կարողունակությունը: Այսինքն՝ կոլեգիալ մարմնի նիստի իրավագործության առումով կոլեգիալ մարմնի նիստին տվյալ մարմնի անդամների ընդհանուր թվի առնվազն պարզ մեծամասնության ներկայությամբ է պայմանավորվում ժողովրդավարական պետությունում կոլեգիալ մարմնի լեգիտիմ գործունեությունը»:

4.5. Տվյալ դեպքում թեպետ սահմանադրորեն երաշխավորված է Սահմանադրական դատարանի կողմից օրենքների և Սահմանադրությամբ նախատեսված այլ նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության գնահատման վերաբերյալ դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ որոշում կայացնելու իմպերատիվ պահանջը, քանզի ձայների մեծամասնությամբ որոշում կայացնելը ժողովրդավարության սկզբունքի բաղադրատարրն է, այնուամենայնիվ, օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված չեն բացառվում այնպիսի իրավիճակները, երբ նիստի իրավագործության պայմաններում քննարկվող հարցի վերաբերյալ դատավորների ձայները կարող են հավասար բաշխվել Սահմանադրական դատարանի բոլոր դատավորների մասնակցությունն ապահովելու անհնարինության պայմաններում, ինչն էլ, փաստորեն, հանգեցնում է գործով ըստ էության վերջնական որոշում կայացնելու փաստացի անկարողության: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ձայների հավասար բաշխվելը գործով վերջնական որոշում կայացնելու անհնարինության մասնակի դրսևորում է, և

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

գործնականում չեն բացառվում իրավիճակներ, որոնք ևս կարող են հանգեցնել դատավորների ձայների մեծամասնությամբ որոշում կայացնելու անհնարինության: Այսպես՝ նման իրավիճակի օրինակ է, երբ դատավորների ձայների մեծամասնությունը ձևավորվում է ոչ թե ընդհանուր (ինը), այլ նիստին ներկա դատավորների թվից (վեց դատավորի մասնակցության պայմաններում չորս դատավորի ձայների մեծամասնություն), որի պարագայում կոնկրետ գործով ըստ էության վերջնական որոշման կայացումը ևս անհնար կդառնա, քանի որ դրա համար անհրաժեշտ է դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնություն՝ առնվազն հինգ դատավոր:

4.6. Անդրադառնալով նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության վերաբերյալ հարցերով Սահմանադրական դատարանի կողմից վերջնական որոշում կայացնելու անհնարինության ծագման պատճառներին՝ Սահմանադրական դատարանը նախ փաստում է, որ լինելով ինքնին բացառիկ երևույթ՝ այդպիսի անհնարինություն անգամ տեսականորեն չի կարող առաջանալ, եթե Դատարանը գործի քննությունն իրականացնում է ամբողջական կազմով:

Անհնարինությունը կարող է իրողություն դառնալ միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը գործի քննությունն իրականացնում է ոչ ամբողջական կազմով՝ միևնույն ժամանակ կաշկանդված լինելով գործի քննության համար սահմանված հստակ և բավականին սեղմ ժամկետներով:

Մասնավորապես՝ Հանրապետության նախագահի, Կառավարության, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի և Մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործերով, ինչպես նաև՝ տեղական ինքնակառավարման մարմինների՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում դիմումը մուտքագրելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո: Սահմանադրական դատարանի պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ գործի քննության ժամկետը կարող է երկարաձգվել առավելագույնը երեք ամսով: Ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա կոնկրետ գործերով վերջնական դատական ակտով իրենց նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործերով, դատարանների և գլխավոր դատախազի դիմումների հիման

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

վրա նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում դիմումը մուտքագրելուց ոչ ուշ, քան երեք ամիս հետո: Գործի քննության ժամկետը Սահմանադրական դատարանի պատճառաբանված աշխատակարգային որոշմամբ կարող է երկարաձգվել առավելագույնը երեք ամսով:

Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության և որոշում կայացնելու համար օրենսդրորեն սահմանված **նման սեղմ ժամկետների առկայությունը գործնականում հանգեցնում է իրավիճակների, երբ անհնար է դառնում գործերի դատաքննության համար դատական նիստերի օրակարգը ձևավորել այն տրամաբանությամբ, որ ապահովվի Սահմանադրական դատարանի բոլոր դատավորների մասնակցությունը դատաքննությանը, որի պարագայում, ի թիվս այլնի, կբացառվի ձայների հավասարության հնարավորությունը:**

4.7. Միևնույն ժամանակ Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ բարձրացված խնդրի հաղթահարման նպատակով օրենսդրությամբ ամրագրված են որոշակի կառուցակարգեր, որոնք հանգում են հետևյալին.

որպես այդպիսին հանդես է գալիս, նախ, Սահմանադրական դատարանի դատավորների կենտ թվաքանակը, որն ինքնին հնարավորություն է տալիս բացառել ձայների հավասար բաշխվելու հնարավորությունը: Բացի դրանից, Սահմանադրական դատարանի դատավորի՝ Սահմանադրական դատարանի նիստերին պարտադիր մասնակցելու համար սահմանված է առանց հարգելի պատճառի մեկ տարվա ընթացքում երեք և ավելի անգամ բացակայելը էական կարգապահական խախտում դիտարկելը: Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների դադարեցման հիմք է ժամանակավոր անաշխատունակության պատճառով վեց ամիս շարունակ ի վիճակի չլինելը կատարելու Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները, բացառությամբ հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվելու դեպքերի:

Ձայների հավասարության վիճակից խուսափելու միջոց է նաև Սահմանադրական դատարանի դատավորի կողմից քվեարկությանը մասնակցության պարտադիրությունն ու ձեռնպահ քվեարկելու արգելքը (Օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մաս): Նշված կարգավորումներն ինքնին ուղղված են Սահմանադրական դատարանում քննարկվող հարցի վերաբերյալ ձայների հավասար բաշխվելու դեպքերի հավանականությունը

նվազեցնելուն, մինչդեռ նմանատիպ իրավիճակներից իսպառ խուսափելն անհնարին է:

4.8. Սահմանադրության «Իրավական նորմերի աստիճանակարգությունը» վերտառությամբ 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը հռչակում են.

«1. Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ:

2. Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին»:

Սահմանադրության 5-րդ հոդվածը ճանաչում է Սահմանադրության գերակայությունն ու բարձրագույն իրավաբանական ուժ ունենալը՝ դրանով իսկ սահմանելով ողջ իրավակարգի՝ Սահմանադրությանը համապատասխանելու հրամայականը:

Ավելին, Սահմանադրության «Օրինականության սկզբունքը» վերտառությամբ 6-րդ հոդվածից և օրենսդիր մարմնի բարեխիղճ գործելու կանխավարկածից բխում է, որ վերջինս, կաշկանդված լինելով սահմանադրական պատվիրաններով, պետք է ընդունի Սահմանադրությանը չհակասող նորմեր, հետևաբար՝ **օրինադրույթը պետք է համարվի Սահմանադրությանը համապատասխանող, քանի դեռ Սահմանադրական դատարանի կողմից չի ճանաչվել Սահմանադրությանը հակասող:**

Սույն դեպքում Օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասը նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցի վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում չընդունվելու պարագայում նախապես սահմանում է իրավիճակային լուծում, այն է՝ դիմումը մերժված համարելը: Սահմանադրական դատարանի դիտարկմամբ օրենսդրի այս մոտեցումը **մի կողմից հիմնված է նորմերի սահմանադրականության կանխավարկածի վրա (մերժման մասով), մյուս կողմից՝ (ըստ էության որոշում չկայացնելու, չպատճառաբանելու մասով)՝ կոչված է երաշխավորելու անձի սահմանադրական արդարադատության իրավունքը:**

Մասնավորապես՝ օրենքի սահմանադրականության կանխավարկածը հանգեցնում է կասկածի դեպքում օրենքը որպես Սահմանադրությանը համապատասխանող մեկնաբանելու պահանջին: Այն դեպքում, երբ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով Սահմանադրական դատարանի կողմից ըստ էության որոշում չի ընդունվում, դիմումը համարվում է մերժված՝ դրանով իսկ հաստատելով, որ վիճարկվող նորմի հակասահմանադրական լինելը սահմանված կարգով հաստատված չէ,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

հետևաբար՝ այն շարունակում է ուժի մեջ մնալ, ուստի և՛ գործել ու համապարտադիր բնույթ կրել: Խնդրո առարկա հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում չընդունելու դեպքում դիմումը մերժված համարելը հիմնված է իրավական պետության սկզբունքից բխող իրավական որոշակիության սկզբունքի բաղադրատարր հանդիսացող նորմերի սահմանադրականության կանխավարկածի վրա և այն սահմանադրաիրավական պատվիրանի, համաձայն որի՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից ըստ էության որոշում կարող է ընդունվել դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Անդրադառնալով վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ դրույթի վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից դատավորների ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում կայացնելու անհնարինության դեպքում դիմումը մերժված համարելու պարագայում պատճառաբանված դատական ակտ չկայացնելու հիմնահարցին՝ Սահմանադրական դատարանը հայտնում է, որ նման կարգավորումն ինքնին ուղղված է անձի՝ սահմանադրական արդարադատության իրավունքի երաշխավորմանը: Այսպես՝ Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է Սահմանադրական դատարանի որոշման և եզրակացության վերջնական լինելն ու հրապարակման պահից ուժի մեջ մտնելը:

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով իրավական նորմերի սահմանադրականության որոշման գործերով ընդունվող որոշումների առանձնահատկություններին, արձանագրել է. «Սահմանադրական դատարանի որոշումն իրենից ներկայացնում է ՀՀ Սահմանադրությամբ, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իր լիազորությունների շրջանակներում ընդունված պաշտոնական գրավոր փաստաթուղթ, որով սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություն, սահմանափակումներ, իրավաբանական տեսակետից անվիճարկելի (վերանայման ոչ ենթակա), առանց նախապայմանների, անվերապահ և անհապաղ (եթե այլ ժամկետ չի սահմանվել) կատարման ենթակա նորմատիվ կանոններ, այսինքն՝ վարքագծի կանոններ: Դրանով է պայմանավորված սահմանադրական դատարանի որոշումների նորմատիվ բնույթը, ինչպես նաև այդ ակտերին անմիջականորեն հաջորդող

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

իրավական առանձնահատուկ հետևանքները՝ կապված հակասահմանադրական ճանաչված իրավանորմի իրավաբանական ուժը կորցնելու, սահմանադրական նորմերի մեկնաբանման (իրավական դիրքորոշումների) շրջանակներում իրավանորմը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու, ինչպես նաև սահմանադրաիրավական նշանակություն ունեցող խնդիրներին լուծում ու փաստերին գնահատական տալու հետ (...)» (2011 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-943 որոշում):

Հաշվի առնելով Սահմանադրական դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակի ու իր կողմից ընդունվող որոշումների իրավաբանական ուժի և բնույթի առանձնահատկությունները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ ձայների հավասարության իրավիճակում դիմումը մերժված համարելու պայմաններում վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ Դատարանի պատճառաբանությունների բացակայությունը, Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի գործող կարգավորումների պայմաններում, ինքնին ուղղված է սահմանադրական արդարադատության իրավունքի պաշտպանությանը, **քանզի այն հնարավորություն է ընձեռում հետագայում տվյալ ակտի սահմանադրականության վերաբերյալ Սահմանադրական դատարան դիմելիս այդ գործով դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կայացված ըստ էության որոշում ստանալ:**

Հակառակ պարագայում, եթե ձայների հավասարության հետևանքով դիմումը մերժված համարելու դեպքում դրա վերաբերյալ վերջնական ակտի տեսքով իրավական պատճառաբանությունները վճռորոշ և համապարտադիր նշանակություն ունենային, կարգելակեին նույն հարցի վերաբերյալ որոշակի ժամանակային ընդմիջումից հետո այլ դիրքորոշման արտահայտումը դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնության կողմից ընդունված որոշման տեսքով: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը, նախկինում անդրադառնալով իր կողմից կայացված ակտերով արտահայտված դիրքորոշումների իրավաբանական ուժի և իրավական հետևանքների բնույթին, արձանագրել է. «Սահմանադրական դատարանի որոշումները պետք է ընկալվեն նաև իրենց կառուցվածքային ամբողջության մեջ (նախաբան, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասեր)՝ ապահովելու այդ որոշումներով առաջադրված իրավակարգավորման բովանդակության, սկզբունքների ու առանձնահատկությունների, ինչպես նաև դրանցից բխող օբյեկտիվ և սուբյեկտիվ վարքագծի կանոնների իրացման հստակությունը: Այդ խնդրի իրագործմանն են միտված հատկապես սահմանադրական դատարանի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

որոշումների նկարագրական-պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումները, որոնցում, որպես կանոն, բովանդակվում են սահմանադրական դատարանին հասցեագրված դիմումների առարկայի (բարձրացված հարցերի, սահմանադրաիրավական վեճերի) իրավավերլուծության արդյունքում դատարանի կողմից արված և որոշման եզրափակիչ մասի հիմքում դրված եզրահանգումները, որոնց էության և բովանդակության անտեսման դեպքում չի կարող երաշխավորվել դատարանի որոշման կատարումը» (2011 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-943 որոշում):

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենքի 68-րդ հոդվածի 16-րդ մասի ուժով Սահմանադրական դատարանը նույն հոդվածի 9-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված որոշումներն Օրենքով սահմանված կարգով ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա կարող է վերանայել, եթե՝

1) փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը, կամ

2) ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված՝ Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Սահմանադրական դատարանի այլ որոշում, և տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն:

Արդյունքում ստացվում է, որ չնայած ձայների հավասարության իրավիճակին, Սահմանադրական դատարանի կողմից ըստ էության պատճառաբանություններով վերջնական դատական ակտի կայացմամբ դիմումը մերժելը, որով նորմը կճանաչվի Սահմանադրությանը համապատասխանող, կհանգեցնի համապատասխան իրավական հետևանքների, այդ թվում՝ վերջնական ակտով արտահայտված իրավական դիրքորոշումների անսահմանափակ ժամկետով գործողության և Սահմանադրական դատարանի՝ իր իսկ արտահայտած դիրքորոշումներով սահմանափակված լինելուն, որոնց փոփոխումը հնարավոր կլինի միայն որոշակի դեպքերում: Հետևաբար՝ հաշվի առնելով Սահմանադրական դատարանի վերջնական ակտերով արտահայտված իրավական դիրքորոշումների իրավաբանական բնույթն ու հետևանքները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում չընդունվելու դեպքում դիմումը մերժված համարելն առանց համապատասխան իրավական դիրքորոշումների հրապարակման, հետապնդում է տվյալ նորմի սահմանադրականության

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ

վերաբերյալ հետագայում Սահմանադրության 170-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգով որոշում ընդունելու հնարավորություն ապահովելու նպատակ, որպիսի որոշումն է միայն ունակ՝ ապահովելու իրավական պետության և կայունության համար առանցքային նշանակություն ունեցող կանխատեսելիությունը, ինչպես նաև սահմանադրական արդարադատության միջոցով անձի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունն ու Սահմանադրության գերակայությունը:

Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործող օրենսդրական կարգավորումները միտված են սահմանադրաիրավական վեճի քննության ընթացքում դատավորների ձայների հավասարության դեպքում Սահմանադրական դատարանի կողմից որոշում կայացնելու անհնարինության իրավիճակի լուծմանն այն հաշվառմամբ, որ **առկա իրավական կառուցակարգերի պայմաններում երաշխավորվում է Սահմանադրությամբ նախատեսված իրավասու սուբյեկտների՝ նույն սահմանադրաիրավական վեճի կապակցությամբ կրկին սահմանադրական արդարադատություն հայցելու իրավունքը:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդպիսի պրակտիկա արդեն իսկ առկա է սույն գործով Դիմողի կողմից ներկայացված մեկ այլ դիմումի առնչությամբ: Այսպես՝ 2021 թվականի սեպտեմբերի 7-8-ի նիստերում քննության առնելով «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1-րդ մասերի և 422-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը՝ Սահմանադրական դատարանը մերժել էր դիմումը, քանի որ նշված գործի վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում չէր ընդունվել: Արդեն 2021 թվականի հոկտեմբերի 26-ի ՍԴԱՈ-215 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը քննության էր ընդունել նույն հարցի վերաբերյալ Դիմողի կողմից կրկին ներկայացված դիմումը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նկատել, որ նորմի սահմանադրականության որոշման խնդրանքով Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող որոշ սուբյեկտների համար (օրինակ՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց) Օրենքով հատկորոշված են հստակ ժամկետներ, հետևաբար՝ ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում չընդունվելու պարագայում նույն հարցի առնչությամբ Սահմանադրական դատարան դիմելիս նշված խումբ սուբյեկտները սահմանափակվելու են հիշյալ ժամկետների իմպերատիվ պահանջով, որպիսի պարագայում սահմանադրական արդարադա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

տության իրավունքը, այնուամենայնիվ, պետք է գերակայի՝ երաշխավորելով դրա անխոչընդոտ իրացումը: Միևնույն ժամանակ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ խնդրի լուծումն առավելապես ենթադրում է օրենսդրական կանոնակարգումներ, որպիսի հարցն օրենսդիր մարմնի տիրույթում է և չի առնչվում սույն գործով խնդրո առարկա դրույթի սահմանադրականությանը:

Ողջ վերոշարադրյալի լույսի ներքո Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական հավասարակշռություն ապահովելու նպատակով վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում չընդունվելու դեպքում դիմումը մերժված համարելու իրավակարգավորումը չի խաթարում Սահմանադրությամբ երաշխավորված անձի դատական պաշտպանության իրավունքը, քանի որ Սահմանադրությամբ նախատեսված իրավասու սուբյեկտները զրկված չեն նույն ակտի սահմանադրականության հարցով Սահմանադրական դատարան կրկին դիմելու և դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կայացված վերջնական ակտ ստանալու իրավունքից, ինչի հիմքում ընկած է նորմերի սահմանադրականության կանխավարկածն ու սահմանադրաիրավական պատվիրանն առ այն, որ նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ որոշումները Սահմանադրական դատարանի կողմից ընդունվում են դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, որպիսի կերպով ընդունված որոշումն է միայն արտահայտում քննարկվող հարցի առնչությամբ կոլեգիալ մարմնի իրական կամքն ու ապահովում Սահմանադրական դատարանի հանդեպ հանրային վստահության բարձր մակարդակը:

4.9. Սահմանադրական դատարանը, անդրադառնալով սահմանադրական դատարանների կողմից ձայների հավասարության հետևանքով որոշում կայացնելու խնդրի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությանը, արձանագրում է, որ նշված հարցի լուծման վերաբերյալ հստակ ձևավորված միասնական պրակտիկա առկա չէ: Այդուհանդերձ, ուսումնասիրված այն պետություններում, որտեղ առկա է համանման գործիքակազմ, ձայների հավասարության դեպքում գործում է վիճարկվող նորմատիվ ակտի կամ դրույթի՝ սահմանադրությանը համապատասխանության կանխավարկածը կամ նախագահի կամ

փոխնախագահի կամ զեկուցող դատավորի ձայնը վճռորոշ լինելու վերաբերյալ կարգավորումը և այլն:¹

Պետությունների մի մասի համապատասխան կարգավորումների ուսումնասիրությունը փաստորեն վկայում է, որ խնդրո առարկա հարցի վերաբերյալ ոչ միայն չկա ընդհանուր մոտեցում, այլ նաև ձայների հավասար բաշխումից խուսափելուն միտված միջոցները տարբեր են: Բացի դրանից, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անգամ այն պետությունները, որտեղ դատավորների ձայների հավասար բաշխվածության պայմաններում ամրագրված է վերջնական որոշում կայացնելու համապատասխան մեխանիզմ, միևնույն է, հնարավոր չէ իսպառ բացառել դատավորների ձայների հավասարության և համապատասխան որոշում կայացնելու անհնարինության իրավիճակները:

¹ Մանրամասները հասանելի են հետևյալ հղումներով՝

Գերմանիայի Դաշնային Հանրապետության «Դաշնային Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մաս (<https://www.gesetze-im-internet.de/bverfgg/BJNR002430951.html>):

Դիմողը դիմումում (էջ 18) գերմանական փորձը ներկայացնելիս նկատել է, որ քննարկվող իրավիճակում ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնն է վճռորոշ՝ վկայակոչելով համապատասխան օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասը, մինչդեռ այն վերաբերելի է այն հարցին, թե կոնկրետ վարույթը ո՞ր Սենատի իրավասությանն է ենթակա:

«Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքի 72-րդ հոդված (https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_4172/755b3265e01a62b2c4571ac4cc1a791d5255a530/),

Մոլդովայի Հանրապետության «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 27-րդ հոդված (www.constcourt.md/public/files/file/Baza%20legala/L317_XIII_1994_ru.pdf),

Լատվիայի Հանրապետության «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 30-րդ հոդված (<https://www.satv.tiesa.gov.lv/en/2016/02/04/constitutional-court-law/>),

Լիտվայի Հանրապետության «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 19-րդ հոդված (<https://www.lrkt.lt/en/about-the-court/legal-information/the-law-on-the-constitutional-court/1475/>),

Իսպանիայի Թագավորությունում «Սահմանադրական դատարանի մասին» օրգանական օրենքի 90-րդ հոդված (<https://www.tribunalconstitucional.es/es/tribunal/normativa/Normativa/LOTC-en.pdf/>),

Պորտուգալիայի Հանրապետության «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մաս (<https://www.tribunalconstitucional.pt/tc/en/tclaw.html/>),

Հունգարիայի Հանրապետության «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մաս (<https://hunconcourt.hu/act-on-the-cc/>),

Բելառուսի Հանրապետության «Սահմանադրական դատավարության մասին» օրենքի 75-րդ հոդված ([http://www.kc.gov.by/%D0%9F%D1%80%D0%B0%D0%B2%D0%BE%D0%B2%D1%8B%D0%B5_%D0%BE%D1%81%D0%BD%D0%BE%D0%B2%D1%8B_%D0%B4%D0%B5%D1%8F%D1%82%D0%B5%D0%BB%D1%8C%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D0%B8](http://www.kc.gov.by/%D0%9F%D1%80%D0%B0%D0%B2%D0%BE%D0%B2%D1%8B%D0%B5_%D0%BE%D1%81%D0%BD%D0%BE%D0%B2%D1%8B_%D0%B4%D0%B5%D1%8F%D1%82%D0%B5%D0%BB%D1%8C%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D0%B8%)):

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Անդրադառնալով քննարկվող հարցի վերաբերյալ ձայների հավասարության դեպքում Սահմանադրական դատարանի կողմից որոշում կայացնելու անհնարինության իրավիճակում տարբեր պետությունների օրենսդրությամբ ամրագրված կարգավորումներին՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք, ըստ էության, մոդելային տարբերակներ են՝ ուղղված իրավիճակային լուծումներին, ընդ որում՝ դրանք կարող են տարբերվել միմյանցից, սակայն բոլոր դեպքերում վերջիններիս նպատակը իրավունքի հնարավոր խախտումից ձեռնպահ մնալն է: **Հետևաբար՝ ձայների հավասարության իրավիճակում որևէ լուծման ընտրություն չի կարող ոչ իրավաչափ համարվել՝ ի տարբերություն այլ լուծման, եթե ընտրված լուծման և սահմանափակվող իրավունքի միջև ապահովվում է ողջամիտ հավասարակշռություն:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 170-րդ հոդվածը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:
2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

15 մարտի 2022 թվականի
ՍԴՈ-1639

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՊԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 62-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԴՈ-1639 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում ենք հատուկ կարծիք՝ Սահմանադրական դատարանի 2022 թվականի մարտի 15-ի «Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՍԴՈ-1639 որոշման (այսուհետ՝ ՍԴՈ-1639 որոշում) վերաբերյալ:

Սահմանադրությունը հստակ սահմանել է սահմանադրական արդարադատության իրականացման նպատակը, այն է՝ Սահմանադրության գերակայության ապահովումը (Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մաս), ինչպես նաև սահմանադրական արդարադատության իրականացման արդյունքը, այն է՝ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններ ընդունելը (Սահմանադրության 170-րդ հոդվածի 1-ին մաս): Այլ կերպ՝ եթե սահմանադրական արդարադատության իրականացման արդյունքում Սահմանադրական դատարանը չի ընդունում որոշումներ և եզրակացություններ, ըստ էության, մերժվում է սահմանադրական արդարադատությունը, ուստի և չի ապահովվում Սահմանադրության գերակայությունը:

Միաժամանակ, գտնում ենք, որ **Սահմանադրության գերակայությունն ապահովվում է, երբ սահմանադրական արդարադատություն իրականացնելիս լեգիտիմ կազմով գործող Սահմանադրական դատարանը, լինելով անկախ և ենթարկվելով միայն Սահմանադրությանը, ընդունում է այնպիսի որոշումներ և եզրակացություններ, որոնցում առնվազն բացառվում է սահմանադրական արժեքների, սկզբունքների, նորմերի, ինստիտուտների նենգափոխումը և իմաստազրկումը, ապահովվում է Սահմանադրության միասնականությունը, ինքնաբավությունը և կայունությունը:** Սահմանադրական դատարանի որոշումներով և եզրակացություններով պետք է ամբողջ ծա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 1/1 (105/1) 2022

վալով լուծվեն քննության առարկա սահմանադրական վեճերը, այլ ոչ հատվածական և աղճատված՝ հարուցելով նոր կամ խորացնելով առկա խնդիրները: Բացի դրանից, Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները պետք է կայացվեն օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննության արդյունքում, որոշումների և եզրակացությունների կառուցվածքային ամբողջականությունը և տրամաբանական միասնականությունը խաթարված չլինեն, զերծ լինեն ներքին հակասություններից, երկիմաստ, սխալ ու խեղաթյուրող դիրքորոշումներից: Պակաս կարևոր չէ, որ այդ որոշումները և եզրակացությունները չլինեն անհարկի ծանրաբեռնված, այդ թվում՝ պարզունակ դատողություններով, ոչ վերաբերելի, ընդհանրական վերլուծություններով և դիրքորոշումների վկայակոչումներով:

Սահմանադրությունն սպառիչ սահմանել է Սահմանադրական դատարանի լիազորությունները (Սահմանադրության 168-րդ հոդված), որոնց շրջանակում իրականացվում է սահմանադրական արդարադատություն, ինչպես նաև սահմանել է Սահմանադրական դատարանի գործունեության կարգի մի շարք դրույթներ: Մասնավորապես, սահմանադրորեն ամրագրված է, որ Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու և կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու հարցերով որոշումները, ինչպես նաև եզրակացություններն ընդունվում են Սահմանադրական դատարանի դատավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով, մյուս **որոշումներն ընդունվում են ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ** (Սահմանադրության 170-րդ հոդվածի 5-րդ մաս):

Սահմանադրությունն ամրագրել է, որ Սահմանադրական դատարանի գործունեության կարգը սահմանվում է նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով (Սահմանադրության 167-րդ հոդվածի 3-րդ մաս) և չի բացառել հիշյալ օրենքի դրույթների սահմանադրականության հարցի որոշումը: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված գործունեության կարգի սահմանադրականության հարցերի քննության շրջանակներում վիճարկվող դրույթը կարող է սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց համարվել, եթե այն խաթարում և արգելափակում է **Սահմանադրության գերակայության ապահովումը՝ վտանգելով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանության համակարգը, ներառյալ՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:**

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

Արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների վերաբերյալ և՛ Սահմանադրական դատարանը, և՛ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել են առանցքային իրավական դիրքորոշումներ, մասնավորապես.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրել դատական պաշտպանության սահմանադրական/կոնվենցիոն իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարանի մատչելիության սահմանադրական/կոնվենցիոն իրավունքի սահմանափակումը իրավաչափ չէ, եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն՝ գործնական և արդյունավետ իրավունքների երաշխավորման ապահովմամբ:

Սահմանադրությամբ ամրագրվել է, որ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր (Սահմանադրության 75-րդ հոդված):

Ընդ որում, ինչպես հիշյալ, այնպես էլ սահմանադրական վերաբերելի այլ նորմերի համատեքստում վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանը պետք է գնահատի թե՛ այդ դրույթը և թե՛ ձևավորված իրավակիրառական պրակտիկան («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մաս): Վերջինիս գնահատման արդյունքում է ապահովվում նաև գործի օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և նկատի ունենալով սույն գործով Սահմանադրական դատարանի մոտեցումներն ու եզրահանգումները՝ ՍԴՈ-1639 որոշումը հիմնավոր, հետևաբար, ընդունելի չենք համարում: Այսպես՝

1. ՍԴՈ-1639 որոշմամբ Սահմանադրական դատարանը գործով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելիս անհրաժեշտ է համարել անդրադառնալ **միայն մեկ հարցադրման**. «արդյո՞ք վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության գնահատման

գործով Սահմանադրական դատարանի կողմից ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում չընդունվելու դեպքում դիմումը մերժված համարելու վերաբերյալ իրավակարգավորմամբ խաթարվում է Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի դատական պաշտպանության իրավունքը»:

Նախ՝ հարկ ենք համարում նշել՝ չնայած սահմանադրական այն նորմին, որ Մարդու իրավունքների պաշտպանը կարող է Սահմանադրական դատարան դիմել Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով, միաժամանակ սահմանադրական նորմ, պատվիրան է այն, որ Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատությունն իրականացնում է ապահովելու համար Սահմանադրության գերակայությունը: Ուստի, Սահմանադրական դատարանը բարձրացված սահմանադրականության հարցով որոշում պետք է կայացնի ոչ միայն Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին, այլ Սահմանադրության բոլոր դրույթներին համապատասխանությունը պարզելով:

Սահմանադրական դատարանը նաև վերը նշվածի համատեքստում, բարձրացված սահմանադրականության հարցի շրջանակներում ՍԴՈ-1639 որոշման մեջ պետք է նաև անդրադառնար, հստակ ու ամբողջական դիրքորոշումներ արտահայտեր հետևյալ հարցադրումների վերաբերյալ.

- արդյո՞ք վիճարկվող դրույթի իրավակարգավորմամբ չի խաթարվում Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական առաքելություն իրականացնելու սահմանադրական նորմերի էությունը՝ հաշվի առնելով, որ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանն արդեն իսկ գործն ընդունել է քննության, իրականացնում է սահմանադրական արդարադատություն, սակայն դրա արդյունքում չի ընդունվում որոշում,

- արդյո՞ք վիճարկվող դրույթի իրավակարգավորումը հավասարազոր և/կամ համադրելի է նորմատիվ ակտերի իրավաչափությունը իրավական ֆիկցիայով որոշելու հետ, եթե՝ այո, ապա որո՞նք են դրա սահմանադրական հիմքերը,

- արդյո՞ք վիճարկվող դրույթի իրավակարգավորումը խնդրահարույց չէ անձի արդար դատաքննության սահմանադրական իրավունքի, ի մասնավորի՝ անձի՝ իր գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի ապահովման տեսանկյունից,

- արդյո՞ք վիճարկվող դրույթի իրավակարգավորումը և դրա իրավակիրառական պրակտիկան խնդրահարույց չեն դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ

իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի օրենքով սահմանված լինելու սահմանադրական պահանջի տեսանկյունից:

2. Փաստ է, որ սահմանադրական արդարադատության մարմինների, միջազգային կառույցների՝ սահմանադրական արդարադատության հետ կապված դիրքորոշումները, գիտական, տեսական դատողությունները և վերլուծությունները չեն գտնվում նախասկզբնական վիճակում: Դրանք սահմանադրական արդարադատության առավել քան 100-ամյա իրողության ժամանակահատվածում ինչպես ձևավորվել են, այնպես էլ գտնվում են շարունակական զարգացման մեջ:

Սահմանադրական դատարանը սահմանադրական արժեքների, սկզբունքների, նորմերի, ինստիտուտների վերաբերյալ իր արտահայտած իրավական դիրքորոշումներն սկզբնական շրջանում կրկնել և վկայակոչել է առավելապես նաև դրանք արմատավորելու համար: Սակայն հետագայում այդ դիրքորոշումները սոսկ կրկնելը և վկայակոչելը, առանց դրանք զարգացնելու կամ փոփոխելու, պարզապես ծանրաբեռնում են Սահմանադրական դատարանի որոշումները և անկախ դիտորդի մոտ կարող են ստեղծել տպավորություն, որ Սահմանադրական դատարանի որոշումներին հաղորդվում է ծավալ: Ավելին, եթե այդ վկայակոչումներից հետո նույն որոշման մեջ Սահմանադրական դատարանն արտահայտում է չափազանց լայն մեկնաբանելի, ամբողջական լուծում չտվող, ինչպես նաև վկայակոչված դիրքորոշումներին հակառակ դատողություններ, դիրքորոշումներ, ապա չի կարող չարձանագրվել, որ որոշումն առնվազն իր տրամաբանական ամբողջականության առումով ունի խնդիրներ, առկա են ներքին հակասություններ: Մասնավորապես.

ՄԴՈ-1639 որոշման 4.2-րդ կետում նշված է. «Ընդ որում՝ դատական պաշտպանության իրավունքը երաշխավորվում է ոչ միայն դատարան դիմելու հնարավորություն ապահովելով, այլ նաև վեճին վերջնական լուծում տալու իրական հնարավորության գոյությամբ»: Նախ՝ «իրական հնարավորության գոյություն» արտահայտությունն ինքնին չափազանց լայն մեկնաբանելի է: Երկրորդ՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը պետք է երաշխավորվի ոչ թե սոսկ «վեճին վերջնական լուծում տալու իրական հնարավորության գոյությամբ», այլ **«վեճին վերջնական լուծում տալու իրական հնարավորության գոյության ապահովմամբ»**, այսինքն՝ Սահմանադրական դատարանի ըստ էության որոշումն ստանալու իրավունքի ապահովմամբ: Միաժամանակ, դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի երաշխավոր-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

ման համար պետք է լինեն այդ իրավունքի արդյունավետ իրականացման անհրաժեշտ օրենսդրական կառուցակարգեր և ընթացակարգեր:

ՍԴՈ-1639 որոշման 4.2-րդ կետում նշված է նաև. «...Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական արդարադատության մատչելիության իրավունքն ընդգրկում է նաև նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վիճարկման հարցով Սահմանադրական դատարանի կողմից ըստ էության որոշում ստանալու իրավունքը»: Հարկ է նշել, որ հիշյալ դիրքորոշումը մասնակի շեշտադրում է պարունակում և առավել նպատակահարմար կլիներ, որ այն ձևակերպվեր ընդհանուր՝ Սահմանադրական դատարանի որոշում ստանալու իրավունքի առումով (այսինքն՝ ոչ միայն ըստ էության որոշման առումով): Բացի դրանից, ՍԴՈ-1639 որոշման մեջ Սահմանադրական դատարանի հիշյալ դիրքորոշումը ոչ միայն զարգացված չէ, այլև առնվազն հաջորդող դիրքորոշումների հետ ունի հակասություններ:

ՍԴՈ-1639 որոշման 4.3-րդ կետում նշված է. «Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականության հարցը մի կողմից՝ գտնվում է դատական պաշտպանության իրավունքի, իսկ մյուս կողմից՝ Սահմանադրական դատարանի գործունեության վերաբերյալ սահմանադրական կարգավորումների տիրույթում»: Հիշյալ մոտեցումն անընդունելի ենք համարում, քանի որ **Սահմանադրական դատարանի գործունեության կարգի դրույթներն ածանցյալ են դատական պաշտպանության սահմանադրական իրավունքին** և չեն կարող գտնվել նույն մակարդակում: Այս մոտեցումն ընդգծում է ՍԴՈ-1639 որոշման մեջ նախորդիվ վկայակոչված՝ Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումների հետ տրամաբանական միասնականության խզումը և հակասում է, մասնավորապես, դատական պաշտպանության իրավունքի սահմանադրահիրավական էությանը, դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ 2018 թվականի հունիսի 19-ի ՍԴՈ-1420 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին:

ՍԴՈ-1639 որոշման 4.4-րդ կետում նշված է. «Հաշվի առնելով այն բացառիկ լիազորությունը, որով օժտված է Սահմանադրական դատարանը՝ համապատասխան որոշումներով Սահմանադրության մեկնաբանության լույսի ներքո ներազդելու, մասնավորապես, ժողովրդի բարձրագույն ներկայացուցչական մարմնի՝ Ազգային ժողովի կամարտահայտության արդյունքով ձևավորված որևէ նորմի բովանդակության բացահայտման և ընկալման վրա...»: Նախ՝ «ժողովրդի բարձրագույն ներկայացուցչական մարմնի՝ Ազգային ժողովի» արտահայ-

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵՎՈՒԹՅՈՒՆ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

տության մասով հարկ է նշել, որ Սահմանադրության 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ազգային ժողովը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է»: Այսինքն՝ Սահմանադրությունը չի ամրագրել «**բարձրագույն**» եզրույթը, քանի որ Ազգային ժողովը ժողովրդի միակ ներկայացուցչական մարմինն է, ոչ թե բարձրագույն: Եթե Սահմանադրական դատարանը ցանկացել է ընդգծել ներկայացուցչական մարմինների մեջ Ազգային ժողովի տեղը, ապա որպես ներկայացուցչական մարմին՝ համայնքի ավագանին չի ներկայացնում ողջ ժողովրդին, այլ միայն համայնքի բնակչությանը: Իսկ այլ ներկայացուցչական մարմին հայ ժողովուրդը չունի: Ուստի, Սահմանադրական դատարանը պետք է առնվազն ձեռնպահ մնա և առանձին եզրույթներով սահմանադրական մարմիններին չհաղորդի սահմանադրական սահմանումներից դուրս բովանդակություն: Այնուհետև՝ Սահմանադրական դատարանն իր որոշումներով ոչ թե ներազդում է որևէ նորմի բովանդակության բացահայտման և ընկալման վրա, ինչպես նշված է ՄԴՈ-1639 որոշման հիշատակված դիրքորոշման մեջ, այլ **բացահայտում** է այդ նորմի իրավական բովանդակությունը և համադրում վերաբերելի սահմանադրական նորմերի հետ՝ դրա սահմանադրականությունը պարզելու նպատակով:

ՄԴՈ-1639 որոշման 4.4-րդ կետում նշված է նաև. «Սահմանադրական դատարանը ... նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցի վերաբերյալ գաղտնի քվեարկության արդյունքում հանրությանն է ներկայացնում իր այն որոշումը, որն ընդունվել է դատավորների ձայների մեծամասնության արդյունքում»: Այս դատողությունը պարունակում է կոպիտ սխալ: Ո՛չ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը և ո՛չ Սահմանադրական դատարանի աշխատակարգը չեն նախատեսում նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցի վերաբերյալ որոշման ընդունում **գաղտնի** քվեարկության արդյունքում: Ավելին, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացություններն ընդունվում են **բաց քվեարկությամբ**՝ դատավորների անվանական հարցման միջոցով»: Նույն օրենքի 59-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ «Քվեարկության անվանական արդյունքները հրապարակման ենթակա չեն», ինչը բնավ նույնական չէ գաղտնի քվեարկության հետ: Սահմանադրական դատարանի աշխատակարգը գաղտնի քվեարկություն նախատեսել է միայն Սահմանադրական դատարանի նախագահի և փոխնախագահի ընտրություն կատարելու համար: Հարկ ենք համարում նշել նաև, որ Սահմանադրական դատարանի որոշումներին բնութագրական չէ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

հրապարակախոսական ոճը, ի մասնավորի՝ ինչպես ՍԴՈ-1639 որոշման հիշատակված կետում նշված է. «Սահմանադրական դատարանը ... հանրությանն է ներկայացնում իր այն որոշումը...»: Սահմանադրական դատարանի որոշումները հրապարակվում են:

ՍԴՈ-1639 որոշման 4.4-րդ կետում նշված է նաև. **«Ձայների մեծամասնությամբ որոշում կայացնելու սահմանադրաիրավական պահանջն ուղղված է Սահմանադրական դատարանի նկատմամբ հանրային իշխանության վստահության ժողովրդավարական պետության համար ընդունելի բարձր աստիճանի ապահովմանը»:**

Հիշյալ դատողությունն անհիմն և անընդունելի ենք համարում: Այն ստեղծում է «Սահմանադրական դատարանի ճգնաժամ» արհեստականորեն ներմուծված գաղափարախոսությանը երկրորդելու, ինչպես նաև իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի իմաստազրկմանը հանգեցնելու տպավորություն: Սահմանադրական դատարանն ինքն է հանրային իշխանության մարմին, ընդամենն՝ **անկախ մարմին է**, որը հանրային իշխանության վստահության կարիք չունի և չի կարող ունենալ: Իսկ ձայների մեծամասնությամբ որոշում ընդունելը բնորոշ է ցանկացած կոլեգիալ մարմնի: Դա չի նշանակում, որ, օրինակ՝ սովորական դատարանների դատավորների կողմից միանձնյա որոշումների կայացումը «պակաս» ժողովրդավարական է, իսկ, օրինակ՝ Հանրապետության նախագահի կամ վարչապետի կողմից որոշումների միանձնյա կայացումը ժողովրդավարական չէ:

ՍԴՈ-1639 որոշման 4.4-րդ կետի վերոհիշյալ դիրքորոշմանը հաջորդում է հետևյալ ամրագրումը. «Սահմանադրական դատարանը համանման դիրքորոշում է հայտնել նաև 2017 թվականի նոյեմբերի 10-ի ՍԴՈ-1384 որոշմամբ, որի շրջանակներում անդրադառնալով հանրաին իշխանության կոլեգիալ մարմնի գործունեության առանձնահատկություններին՝ արձանագրել է...»: Նախ՝ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1639 որոշման մեջ մեջբերված՝ ՍԴՈ-1384 որոշմամբ **չի արտահայտվել** «Սահմանադրական դատարանի նկատմամբ հանրային իշխանության վստահության» վերաբերյալ որևէ, այդ թվում՝ համանմանին մոտ, դիրքորոշում: Իրականության հետ աղերսներ չունեցող նմանատիպ մոտեցումները կարող են խաթարել Սահմանադրական դատարանի նկատմամբ հանրային վստահությունը: Մյուս կողմից՝ Սահմանադրական դատարանի նախկինում արտահայտած դիրքորոշումների սուկ վկայակոչումը, ինչպես վերը նշել ենք, ծանրաբեռնում է Սահմանադրական դատարանի որոշումը՝ առավել ևս, եթե այն առնվազն չի զարգացվում, որի անհրաժեշտությունը,

1/1 (105/1) 2022
 ♦ ՏԵՂԵՎՈՒԹՅՈՒՆ
 ♦ ՍԱՀՄԱՆԱՐԿՄԱՆ ԴԱՏԱՐԱՆ

տվյալ դեպքում՝ ՍԴՈ-1384 որոշմամբ կոլեգիալության վերաբերյալ արտահայտած դիրքորոշման մասով, մեր կարծիքով, առկա էր:

ՍԴՈ-1639 որոշման 4.5-րդ կետում նշված է. «Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ձայների հավասար բաշխվելը գործով վերջնական որոշում կայացնելու անհնարինության մասնակի դրսևորում է, և գործնականում չեն բացառվում իրավիճակներ, որոնք ևս կարող են հանգեցնել դատավորների ձայների մեծամասնությամբ որոշում կայացնելու անհնարինության: Այսպես՝ նման իրավիճակի օրինակ է, երբ դատավորների ձայների մեծամասնությունը ձևավորվում է ոչ թե ընդհանուր (ինը), այլ նիստին ներկա դատավորների թվից (վեց դատավորի մասնակցության պայմաններում չորս դատավորի ձայների մեծամասնություն), որի պարագայում կոնկրետ գործով ըստ էության վերջնական որոշման կայացումը ևս անհնար կդառնա, քանի որ դրա համար անհրաժեշտ է դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնություն՝ առնվազն հինգ դատավոր»: Հարկ է նշել, սակայն, որ եթե Սահմանադրական դատարանը կատարում է փաստացի իրավիճակի արձանագրում՝ առանց դրա վերաբերյալ վերլուծության և կոնկրետ դիրքորոշում արտահայտելու, ապա այս դեպքում ևս որոշումն անհարկի ծանրաբեռնվում է: Այս առումով պետք է նշենք նաև, որ ՍԴՈ-1639 որոշման 4.5-րդ կետում նշված դեպքերի համար «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը չի սահմանել, որ դիմումը համարվում է մերժված:

ՍԴՈ-1639 որոշման 4.6-րդ կետում նշված է. «Անհնարինությունը կարող է իրողություն դառնալ միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը գործի քննությունն իրականացնում է ոչ ամբողջական կազմով՝ միևնույն ժամանակ կաշկանդված լինելով գործի քննության համար սահմանված հստակ և բավականին սեղմ ժամկետներով»: Նախ՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով, մասնավորապես, վերացական սահմանադրական վերահսկողության հարցերով սահմանված է գործով որոշում ընդունելու առավելագույնը իննամսյա ժամկետ, որը, մեր կարծիքով, բնավ սեղմ չէ: Մյուս կողմից՝ **եթե անհնարինությունը պայմանավորվում է նաև նշված սեղմ ժամկետներով, ապա պետք է հենց սույն գործով անդրադարձ կատարվեր նաև այդ ժամկետները սահմանող դրույթների սահմանադրականության հարցին, ինչը չի կատարվել:**

ՍԴՈ-1639 որոշման 4.6-րդ կետում նշված է նաև. «Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության և որոշում կայացնելու համար օրենսդրորեն սահմանված նման սեղմ ժամկետների առկայությունը

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

գործնականում հանգեցնում է իրավիճակների, երբ անհնար է դառնում գործերի դատաքննության համար դատական նիստերի օրակարգը ձևավորել այն տրամաբանությամբ, որ ապահովվի Սահմանադրական դատարանի բոլոր դատավորների մասնակցությունը դատաքննությանը, որի պարագայում, ի թիվս այլնի, կբացառվի ձայների հավասարության հնարավորությունը»: Հարկ է նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով տարբեր վարույթների համար սահմանված են տարբեր ժամկետներ, և հիշյալ դատողությունը խիստ պայմանական է: Այն չի կարող վերաբերել, օրինակ, գործով որոշում ընդունելու առավելագույնը իննամսյա ժամկետին, որը սահմանված է վերացական սահմանադրական վերահսկողության վարույթի համար, այն լուրջ վերապահմամբ կարող է վերաբերել նաև գործով որոշում ընդունելու առավելագույնը վեցամսյա ժամկետ ունեցող վարույթներին, քանի որ Սահմանադրական դատարանը և Սահմանադրական դատարանի բնականոն գործունեության ապահովման համար պատասխանատուն ունեն նաև այդ ժամկետների սահմաններում իրավական գործիքակազմ, որպեսզի կանխեն ձայների հավասարությամբ դիմումը մերժված համարվելու հավանականությունը: **Իսկ եթե դա բավարար չէր, ապա սույն գործով պետք է քննության առարկա լիներ նաև այդ գործիքակազմի սահմանադրականության հարցերի պարզումը, ինչը չի կատարվել:** Բացի դրանից, ՍԴՈ-1639 որոշման 4.6-րդ կետում նշված դատողության մեջ օգտագործված է «դատական նիստերի օրակարգը ձևավորել» ձևակերպումը, որը ոչ միայն սահմանված չէ ո՛չ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի, ո՛չ Սահմանադրական դատարանի աշխատակարգի որևէ դրույթով, այլ նաև բովանդակային առումով բնութագրական չէ Սահմանադրական դատարանի գործունեությանը: Սահմանադրական դատարանը յուրաքանչյուր գործով սահմանում է դատաքննությունն սկսելու ժամանակը, որի հիման վրա հրապարակվում է Սահմանադրական դատարանի նիստերի ժամանակացույցը, ինչպես դա նախատեսված է Սահմանադրական դատարանի աշխատակարգով:

ՍԴՈ-1639 որոշման 4.8-րդ կետում նշված է. «Ավելին, Սահմանադրության «Օրինականության սկզբունքը» վերտառությամբ 6-րդ հոդվածից և օրենսդիր մարմնի բարեխիղճ գործելու կանխավարկածից բխում է, որ վերջինս, կաշկանդված լինելով սահմանադրական պատվիրաններով, պետք է ընդունի Սահմանադրությանը չհակասող նորմեր...»: Տարակուսելի է, թե Սահմանադրության ո՞ր նորմից է ածանցվում այս մոտեցումը: Եթե խոսքն իրավաչափ գործելու պահանջի

մասին է, ապա դա օրինականության հիմնարար սահմանադրական սկզբունքի պահանջ է, որը վերաբերում է հանրային իշխանության բոլոր մարմիններին, այլ ոչ միայն օրենսդրին: Բարեխիղճ գործելու կանոնն առավելապես պետք է ուղղված լինի այն դեպքերին, երբ հանրային իշխանության մարմինը գործում է իրավաչափորեն, սակայն չարաշահում է ձևական պահանջները կամ այլ կերպ գործում է օրենքի տառին համապատասխան, բայց ոգուն հակառակ: Բարեխիղճությունն ու օրինականությունը տարբեր հարթություններում են: Ինչ վերաբերում է ՍԴՈ-1639 որոշման 4.8-րդ կետում հաջորդիվ որպես եզրահանգում նշած այն դատողությանը, որ «...**օրինադրույթը պետք է համարվի Սահմանադրությանը համապատասխանող, քանի դեռ Սահմանադրական դատարանի կողմից չի ճանաչվել Սահմանադրությանը հակասող**», ապա պետք է նշենք, որ «օրինադրույթի» (ենթադրաբար՝ իրավադրույթի) սահմանադրական լինելու կանխավարկածը **պայմանավորված չէ միայն** օրենսդրի կողմից օրինականության սկզբունքի սահմանադրական պատվիրանով կաշկանդված լինելու հանգամանքով:

ՍԴՈ-1639 որոշման 4.8-րդ կետում նշված է նաև. «Սահմանադրական դատարանի դիտարկմամբ օրենսդրի այս մոտեցումը **մի կողմից հիմնված է նորմերի սահմանադրականության կանխավարկածի վրա (մերժման մասով), մյուս կողմից՝ (ըստ էության որոշում չկայացնելու, չպատճառաբանելու մասով)՝ կոչված է երաշխավորելու անձի սահմանադրական արդարադատության իրավունքը**»: Այս առումով նշենք, որ որոշման ֆիկտիվ կայացումը մի բան է, իսկ կայացված որոշման չպատճառաբանումը՝ լրիվ այլ բան: **Իրավական պետությունում անթույլատրելի է չպատճառաբանված, այսինքն՝ անհիմն դատական ակտերի կայացումը:**

ՍԴՈ-1639 որոշման 4.8-րդ կետում նշված է նաև. «...օրենքի սահմանադրականության կանխավարկածը հանգեցնում է կասկածի դեպքում օրենքը որպես Սահմանադրությանը համապատասխանող մեկնաբանելու պահանջին»: Սահմանադրական դատարանը, ըստ էության, այս պահանջը վերագրել է նաև ինքն իրեն, այն դեպքում, երբ **ենթադրյալ հակասահմանադրականության հիմնավորումներով** դիմումի հիման վրա գործը քննության է ընդունում բարձրացված հարցի սահմանադրականությունը որոշելու համար: Սահմանադրականության կանխավարկածը չի կարող լինել սահմանադրական արդարադատության իրականացման արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից որոշում չընդունելու հիմնավորում՝ ելնելով, նախևառաջ, սահմանա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

դրական պատվիրանի պահանջից՝ ապահովելու Սահմանադրության գերակայությունը:

ՍԴՈ-1639 որոշման 4.8-րդ կետում նշված է նաև. «...դիմումը մերժված համարելը հիմնված է իրավական պետության սկզբունքից բխող իրավական որոշակիության սկզբունքի բաղադրատարր հանդիսացող նորմերի սահմանադրականության կանխավարկածի վրա...»: Ի թիվս վերոնշյալի՝ առավել ևս առանց Սահմանադրության վերաբերելի նորմերի մեկնաբանության նման հետևությունը համարում ենք անհիմն: Իրավական ակտերի իրավաչափության կանխավարկածը կապված է ոչ միայն որոշակիության հետ, այլ նաև օրինականության, ինչպես նաև ընդհանրապես իրավական պետության հիմնարար սկզբունքի հետ:

ՍԴՈ-1639 որոշման 4.8-րդ կետում նշված է նաև. «Անդրադառնալով վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ դրույթի վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից դատավորների ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում կայացնելու անհնարինության դեպքում դիմումը մերժված համարելու պարագայում պատճառաբանված դատական ակտ չկայացնելու հիմնահարցին՝ Սահմանադրական դատարանը հայտնում է, որ նման կարգավորումն ինքնին ուղղված է անձի՝ սահմանադրական արդարադատության իրավունքի երաշխավորմանը: Այսպես՝ Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է Սահմանադրական դատարանի որոշման և եզրակացության վերջնական լինելն ու հրապարակման պահից ուժի մեջ մտնելը»: Պետք է արձանագրել, որ հիշյալ դատողությունը հիմնավոր չէ, և մտքերի միջև որևէ պատճառահետևանքային կապ չկա:

ՍԴՈ-1639 որոշման 4.8-րդ կետում նշված է նաև. «...դիմումը մերժված համարելու պայմաններում վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ Դատարանի պատճառաբանությունների բացակայությունը, Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի գործող կարգավորումների պայմաններում, ինքնին ուղղված է սահմանադրական արդարադատության իրավունքի պաշտպանությանը, **քանզի այն հնարավորություն է ընձեռում հետագայում տվյալ ակտի սահմանադրականության վերաբերյալ Սահմանադրական դատարանի դիմելիս այդ գործով դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կայացված ըստ էության որոշում ստանալ»:** Անընդունելի մոտեցում է, որը հակասում է նաև դատական ակտերի պատճառաբանված լինելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումներին: ՍԴՈ-1639

որոշման հիշյալ կետում արտահայտված պատճառաբանությունների բացակայության վերաբերյալ դիրքորոշումը կարող է, նախադեպային դառնալով, առաջացնել նաև իրավական անվտանգության խնդիր դատական համակարգում, որն ակնհայտորեն լինելու է հետքայլ անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման առումով:

ՄԴՈ-1639 որոշման 4.8-րդ կետում նշված է նաև. «...Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական հավասարակշռություն ապահովելու նպատակով ... դիմումը մերժված համարելու իրավակարգավորումը չի խաթարում Սահմանադրությամբ երաշխավորված անձի դատական պաշտպանության իրավունքը...նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ որոշումները Սահմանադրական դատարանի կողմից ընդունվում են դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, որպիսի կերպով ընդունված որոշումն է միայն արտահայտում քննարկվող հարցի առնչությամբ կոլեգիալ մարմնի իրական կամքն ու ապահովում Սահմանադրական դատարանի հանդեպ հանրային վստահության բարձր մակարդակը»: Առնվազն անհասկանալի է, թե այս համատեքստում ի՞նչ է նշանակում «սահմանադրական հավասարակշռություն»: Բացի դրանից, ինչպես հիշյալ, այնպես էլ ՄԴՈ-1639 որոշման այլ կետերում որևէ ձևով պատճառաբանված չէ, թե ինչո՞ւ ձայների 4/3 հարաբերակցության պարագայում որոշում չի ընդունվում, իսկ օրինակ՝ 3/3 հարաբերակցության դեպքում նաև դիմումը համարվում է մերժված:

ՄԴՈ-1639 որոշման 4.9-րդ կետում նշված է. «Անդրադառնալով քննարկվող հարցի վերաբերյալ ձայների հավասարության դեպքում Սահմանադրական դատարանի կողմից որոշում կայացնելու անհնարինության իրավիճակում տարբեր պետությունների օրենսդրությամբ ամրագրված կարգավորումներին՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք, ըստ էության, մոդելային տարբերակներ են՝ ուղղված իրավիճակային լուծումներին, ընդ որում՝ դրանք կարող են տարբերվել միմյանցից, սակայն բոլոր դեպքերում վերջիններիս նպատակը իրավունքի հնարավոր խախտումից ձեռնպահ մնալն է»: Նախ՝ մեր կարծիքով, միջազգային փորձի առումով պետք է օրենսդրական կարգավորումները համադրվեն տվյալ երկրների սահմանադրական լուծումների հետ, նոր միայն դրանք համադրվեն հայաստանյան սահմանադրական լուծումների հետ, որից հետո կատարվեն եզրահանգումներ: Մյուս կողմից՝ Սահմանադրական դատարանի որոշումներին հարիր չէ այլ երկրների օրենսդրությամբ ամրագրված կարգավորումները **մոդելային տարբերակներ** դիտարկելը, առավել ևս, երբ որևէ անդրադարձ չի կատարվում, թե այդ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

օրենսդրական լուծումները հենց տվյալ երկրների սահմանադրական արդարադատության մարմինների կողմից սահմանադրականության առումով ինչպես են գնահատվել: Իսկ ինչ վերաբերում է միջազգային փորձի ուսումնասիրությունների արդյունքում ՍԴՈ-1639 որոշման հիշյալ կետում նշված Սահմանադրական դատարանի այն եզրահանգմանը, որ «Վետևաբար՝ **ձայների հավասարության իրավիճակում որևէ լուծման ընտրություն չի կարող ոչ իրավաչափ համարվել՝ ի տարբերություն այլ լուծման, եթե ընտրված լուծման և սահմանափակվող իրավունքի միջև ապահովվում է ողջամիտ հավասարակշռություն**», ապա այն ոչ միայն խմբագրական շփոթի արդյունք է, այլև պարունակում է անորոշություն՝ «**ի տարբերություն այլ լուծման**» արտահայտության մասով: Անհասկանալի է՝ ի՞նչ լուծման մասին է խոսքը, որի հետ համադրման արդյունքում կատարվում է պնդումը:

3. Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1639 որոշման եզրափակիչ մասում ամրագրել է, որ վիճարկվող դրույթը համապատասխանում է Սահմանադրությանը, այլ կերպ՝ սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չի համարել, որ եթե Սահմանադրական դատարանը քննարկվող հարցի վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում կամ եզրակացություն չի ընդունում, ապա դիմումը համարվում է մերժված: Այս եզրահանգումը, մեր կարծիքով, **հակասում է** ՍԴՈ-1639 որոշման պատճառաբանական մասում վկայակոչված, վերահաստատված և ամրագրված, մասնավորապես, այն իրավական դիրքորոշումներին, համաձայն որոնց՝

- Սահմանադրական դատարանը՝ որպես իրավական համակարգում Սահմանադրության գերակայությունն ապահովող մարմին, իրականացնում է սահմանադրական արդարադատություն, որի միջոցով ապահովվում է մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությունը,

- սահմանադրական արդարադատության իրականացման արդյունքում ընդունվող ակտերն են որոշումներն ու եզրակացությունները,

- **սահմանադրական արդարադատության մատչելիության իրավունքն ընդգրկում է նաև նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վիճարկման հարցով Սահմանադրական դատարանի կողմից ըստ էության որոշում ստանալու իրավունքը:**

Մեր վերոհիշյալ հետևությունը բխում է նաև գործի քննության շրջանակը սահմանափակելու Սահմանադրական դատարանի մոտեցումից, ՍԴՈ-1639 որոշման մեջ առկա խնդրահարույց դատողություններից,

1/1 (105/1) 2022
 ♦ ՏԵՂԵՎՈՒԹՅՈՒՆ
 ♦ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

պատճառաբանություններից, դիրքորոշումներից, որոնց մասին նաև նախորդիվ նշել ենք:

Միաժամանակ հարկ ենք համարում ընդգծել հետևյալը.

ՍԴՈ-1639 որոշման մեջ Սահմանադրական դատարանը **որոշում չընդունելու և դիմումը մերժված համարելու տարբերությունը չի վերլուծել:** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի վերլուծությունն առնվազն ի ցույց կոչներ, որ նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու ժամանակ դիմումը մերժելու մասին որոշման տեսակ գոյություն չունի, որ ձայների հավասարության պարագայում իրավական ֆիկցիայի միջոցով այն համարվի մերժված: Դիմումը մերժելու մասին որոշման տեսակ նախատեսված է միայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 79, 82, 83, 84 և 85-րդ հոդվածներով նախատեսված գործերով:

ՍԴՈ-1639 որոշման մեջ նշելով, որ օրենքի սահմանադրականության կանխավարկածը հանգեցնում է կասկածի դեպքում օրենքը որպես Սահմանադրությանը համապատասխանող մեկնաբանելու պահանջին, և շարունակելով, որ այն դեպքում, երբ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով Սահմանադրական դատարանի կողմից ըստ էության որոշում չի ընդունվում, դիմումը համարվում է մերժված՝ դրանով իսկ հաստատելով, որ վիճարկվող նորմի հակասահմանադրական լինելը սահմանված կարգով հաստատված չէ, **Սահմանադրական դատարանը փաստացի վիճարկվող դրույթի իրավակարգավորումը հավասարազոր և/կամ համադրելի է համարել նորմատիվ ակտերի իրավաչափությունը իրավական ֆիկցիայով որոշելու հետ:** Միաժամանակ ՍԴՈ-1639 որոշմամբ Սահմանադրական դատարանը խնդրահարույց չի համարել ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում չընդունվելու դեպքում դիմումը մերժված համարելն առանց համապատասխան իրավական դիրքորոշումների հրապարակման, ինչպես նաև խնդրահարույց չի համարել Սահմանադրական դատարանի պատճառաբանությունների բացակայությունը: **Եվ դա այն դեպքում, որ իրավական պետությունում անթույլատրելի է չպատճառաբանված, այսինքն՝ անհիմն որոշումներ կայացնելը¹:**

¹ Օրինակ, Գերմանիայի Դաշնային Հանրապետության իրավակարգավորումը և պրակտիկան այն է, որ ձայների հավասարության պարագայում համարվում է, որ Հիմնական օրենքի խախտում չի արձանագրվել, և Դաշնային սահմանադրական դատարանը **հրապարակում է** վիճարկվող դրույթի՝ Հիմնական օրենքին համապատասխանության վերաբերյալ **որոշում:**

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

ՍԴՈ-1639 որոշման մեջ Սահմանադրական դատարանը հարկ է համարել նկատել, որ նորմի սահմանադրականության որոշման խնդրանքով Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող որոշ սուբյեկտների համար (օրինակ՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց) «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով հատկորոշված են հստակ ժամկետներ, հետևաբար՝ ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում չընդունվելու պարագայում նույն հարցի առնչությամբ Սահմանադրական դատարան դիմելիս նշված խումբ սուբյեկտները սահմանափակվելու են հիշյալ ժամկետների իմպերատիվ պահանջով, որպիսի պարագայում սահմանադրական արդարադատության իրավունքը, այնուամենայնիվ, պետք է գերակայի՝ երաշխավորելով դրա անխոչընդոտ իրացումը: Միևնույն ժամանակ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ այդ խնդրի լուծումն առավելապես ենթադրում է օրենսդրական կանոնակարգումներ, որպիսի հարցն օրենսդիր մարմնի տիրույթում է և չի առնչվում սույն գործով խնդրո առարկա դրույթի սահմանադրականությանը:

Նման մոտեցումով Սահմանադրական դատարանը, մեղմ ասած, **շրջանցել է** վիճարկվող դրույթի իրավակարգավորման՝ անձի արդար դատաքննության սահմանադրական իրավունքի, ի մասնավորի՝ անձի՝ իր գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի ապահովման տեսանկյունից սահմանադրականության հարցը գնահատելը, ինչը, սակայն, պետք է լիներ **սույն գործով եզրահանգման համար պարզման ենթակա առանցքային հարցերից մեկը:**

Ավելին, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը գործի քննության համար սահմանել է այնպիսի առավելագույն ժամկետներ, որոնք կանխավարկածի ուժով ողջամիտ են: Եթե Սահմանադրական դատարանի մոտեցումն է, որ տվյալ սուբյեկտի նույն հարցով Սահմանադրական դատարան դիմելը խնդրի լուծում է, ապա առաջանում է գործը ողջամիտ ժամկետում քննելու խնդիրը, քանի որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված ժամկետներից երկու անգամ ավել ժամկետում գործի ըստ էության քննությունը, որևէ պարագայում չի կարող համարվել ողջամիտ ժամկետում գործի քննություն:

ՍԴՈ-1639 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ գործող օրենսդրական կարգավորումները միտված են սահմանադրաիրավական վեճի քննության ընթացքում դատավորների ձայների հավասարության դեպքում Սահմանադրական դատարանի

կողմից որոշում կայացնելու անհնարինության իրավիճակի լուծմանն այն հաշվառմամբ, որ **առկա իրավական կառուցակարգերի պայմաններում երաշխավորվում է Սահմանադրությամբ նախատեսված իրավասու սուբյեկտների՝ նույն սահմանադրաիրավական վեճի կապակցությամբ կրկին սահմանադրական արդարադատություն հայցելու իրավունքը:**

Նախ՝ անհասկանալի է, թե ինչպես կարող է կրկին դիմելը համարվել երաշխիք: Բացի դրանից, Սահմանադրական դատարանը վերոհիշյալ **անվերապահ պնդումները չէր կատարի**, եթե սահմանադրաիրավական կարգավորումների համալիր վերլուծության արդյունքները ներկայացնելու ՍԴՈ-1639 որոշման մեջ: Ի մասնավորի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Անհատական դիմումները կարող է Սահմանադրական դատարան ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց՝ վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո»: Իսկ նույն օրենքի 5-րդ մասի համաձայն՝ «Անհատական դիմումներով գործի քննությունը...կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ...լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը»:

Հարց է առաջանում՝ վերոհիշյալ իրավակարգավորումների պարագայում ինչպե՞ս է երաշխավորվելու (ենթադրաբար՝ ապահովվելու) անձի՝ նույն սահմանադրաիրավական վեճի կապակցությամբ կրկին սահմանադրական արդարադատություն հայցելու իրավունքը, երբ Սահմանադրական դատարանը ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում կամ եզրակացություն չի ընդունել, և **դիմումը համարվել է մերժված, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված վեցամսյա ժամկետը լրացել է:**

Առաջանում է մեկ այլ հարց ևս. ինչպե՞ս է **երաշխավորվելու** Սահմանադրությամբ նախատեսված իրավասու սուբյեկտների՝ նույն սահմանադրաիրավական վեճի կապակցությամբ **կրկին** սահմանադրական արդարադատություն հայցելու իրավունքը, երբ Սահմանադրական դատարանի կողմից ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում կամ եզրակացություն չընդունվելու և դիմումը մերժված համարվելուց հետո, օրինակ՝ Սահմանադրությամբ նախատեսված իրավասու սուբյեկտը Սահմանադրությամբ նախատեսված նույն հիմքով և ժամկետում այլևս իրավասու չէ դիմելու Սահմանադրական դատարան (մասնավորապես, Հանրապետության նախագահի դեպքում, երբ վերջինս քանմեկօրյա

ՍԱԳՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Ժամկետում Սահմանադրական դատարան է դիմում Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքի սահմանադրականության հարցով, և դիմումը մերժված համարվելուց հետո վիճարկվող օրենքն արդեն ստորագրվել ու հրապարակվել է), ինչպես նաև, երբ Սահմանադրությամբ նախատեսված իրավասու սուբյեկտն այլևս չի համարվում Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ՝ պայմանավորված տվյալ սուբյեկտի լիազորությունների ավարտով, օրինակ՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի, համայնքի ղեկավարի դեպքում: Ի դեպ, Հանրապետության նախագահի և համայնքի ղեկավարի դիմումները մերժված համարվելու պրակտիկա Սահմանադրական դատարանում արձանագրվել է 2021 թվականին, որի մասին ստորև անդրադարձ կատարվում է:

Այս հարցերի պատասխանը Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի իրավակարգավորումներով հստակ ամրագրված է՝ տվյալ դեպքերում դիմումների հիման վրա գործերի քննությունը մերժվում է:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը և Սահմանադրական դատարանի աշխատակարգը, մասնավորապես, սահմանում են դիմումի գրանցման, դիմումի նախնական ուսումնասիրման, գործը քննության ընդունելու, գործի քննությունը մերժելու, գործը դատաքննության նախապատրաստելու, գործի վարույթը կասեցնելու, գործի վարույթը վերսկսելու, գործի քննության ժամկետը երկարաձգելու, դատաքննությունը հետաձգելու, մինչև գործով զեկուցողի կողմից Սահմանադրական դատարանի ըստ էության որոշման կամ եզրակացության նախագիծը ներկայացնելը՝ Սահմանադրական դատարանի աշխատակարգային նիստում Սահմանադրական դատարանի մյուս դատավորների նախնական դիրքորոշումը պարզելու, Սահմանադրական դատարանի կողմից որոշում և եզրակացություն ընդունելու կարգը և ժամկետները: Ի դեպ, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է գործի քննության ժամկետը երկարաձգելու հստակ պահանջ՝ այն կատարվում է Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ, որը պետք է լինի **պատճառաբանված**¹:

¹ Մեր կարծիքով վերանայման ենթակա է Սահմանադրական դատարանի այն պրակտիկան, որ Սահմանադրական դատարանի համապատասխան աշխատակարգային որոշումներում որպես գործի քննության ժամկետը երկարաձգելու պատճառաբանություն, որպես կանոն, նշվում է ընդհանրական՝ «եյնելով լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտությունից» ձևակերպումը՝ առանց կոնկրետ նշելու պատճառաբանությունները: Այս պրակտիկան անկախ դիտորդի մոտ կարող է ստեղծել նաև Սահմանադրական դատարանի ըստ էության որոշում կայացնելը սուբյեկտիվորեն երկարաձգելու տպավորություն, որը

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է նաև, որ Սահմանադրական դատարանի բնականոն գործունեությունն ապահովում է Սահմանադրական դատարանի նախագահը, որը գործով զեկուցողի հետ համատեղ նախապատրաստում է Սահմանադրական դատարանի նիստերը:

ՍԴՈ-1639 որոշմամբ Սահմանադրական դատարանը **չի գնահատել** սույն գործով վիճարկվող դրույթը վերոհիշյալ իրավակարգավորումների համատեքստում, ինչպես նաև վիճարկվող դրույթի իրավակիրառական պրակտիկան, մասնավորապես՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի՝ օրենքով սահմանված լինելու սահմանադրական պահանջի տեսանկյունից:

Սահմանադրական դատարանի իրավակիրառական պրակտիկայում 1996 թվականի մարտի 13-ից¹ առ 2022 թվականի մարտի 15-ը ներառյալ ձայների հավասարության հետևանքով ընդամենը **4 գործերով² են դիմումները համարվել մերժված:** Ուշագրավ է, որ դրանցից **1 գործով** դիմումը համարվել է մերժված **2014 թվականի հունիսի 17-ին**, իսկ մյուս **3 գործերով դիմումները համարվել են մերժված 2021 թվականի սեպտեմբերի 8-ին, 2021 թվականի հոկտեմբերի 12-ին և 2021 թվականի նոյեմբերի 16-ին:**

Փաստենք նաև մեկ այլ ուշագրավ հանգամանք. **2018 թվականի մայիսի 4-ից³ առ 2020 թվականի հունիսի 26-ը ներառյալ՝** Սահմանադրական դատարանն ընդունել է թվով 135 ըստ էության որոշումներ, որոնց մեծ մասն **ընդունվել է Սահմանադրական դատարանի 8 դատավորների կազմով** (որոշներն ընդունվել են Սահմանադրական դատարանի 6-7 դատավորների կազմով): Հիշյալ ժամանակահատվածում **չի արձանագրվել** քննարկվող հարցի վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում ընդունված չլինելու դեպք, և, ըստ այդմ՝ **որևէ դիմում չի համարվել մերժված:**

Կարող է վտանգել նաև Սահմանադրական դատարանի դիմող սուբյեկտի՝ այդ որոշումն ստանալու իրավունքը:

¹ Սահմանադրական դատարանի կազմավորումից հետո նրա ընդունած առաջին՝ ՍԴՈ-1 որոշման ընդունման ամսաթիվն է:

² Հիշյալը նշել ենք Սահմանադրական դատարանի աշխատակազմի տրամադրած տեղեկատվության հիման վրա:

³ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի ուժի մեջ մտնելուց հետո (2018 թվականի ապրիլի 9-ից) Սահմանադրական դատարանի ընդունած առաջին ըստ էության որոշման (ՍԴՈ-1412) ամսաթիվն է:

Սույն գործով վիճարկվող դրույթի իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը, մասնավորապես, ցույց է տալիս.

1) Սահմանադրական դատարանը **2021 թվականի հունվարի 15-ի ՍԴԱՈ-2 աշխատակարգային որոշմամբ քննության է ընդունել** «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1-րդ մասերի և 422-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հիշյալ դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2020 թվականի դեկտեմբերի 9-ին:

Սահմանադրական դատարանի վերոհիշյալ ՍԴԱՈ-2 աշխատակարգային որոշմամբ **գործի դատաքննությունն սկսելու ժամկետ է սահմանվել 2021 թվականի ապրիլի 27-ը**, որը գործով զեկուցողի միջնորդությունների հիման վրա **հետաձգվել և նշանակվել է 2021 թվականի հուլիսի 6-ին, այնուհետև՝ 2021 թվականի սեպտեմբերի 7-ին**¹:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 7-ի ՍԴԱՈ-190 աշխատակարգային որոշմամբ **գործով զեկուցողը փոխարինվել է նոր զեկուցողով, գործով դռնփակ խորհրդակցությունը 2021 թվականի սեպտեմբերի 7-ին ընդմիջվել է մինչև 2021 թվականի սեպտեմբերի 8-ը՝ ժամը 15.00-ն՝ ըստ էության նոր որոշման նախագիծը մշակելու համար:** Այսինքն՝ ընդամենը **մեկ օրով:**

2021 թվականի սեպտեմբերի 8-ին Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում հրապարակվել է տեղեկատվություն, որ նշված դիմումը համարվում է մերժված:

Այսինքն՝ նշված գործով ձայների հավասարության հետևանքով **դիմումը համարվել է մերժված** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված **գործով որոշում ընդունելու առավելագույն իննամսյա ժամկետի ավարտից երկու օր առաջ,**

2) Սահմանադրական դատարանը **2021 թվականի մայիսի 25-ի ՍԴԱՈ-106 աշխատակարգային որոշմամբ քննության է ընդունել** «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ 2021 թվականի ապրիլի 14-ին Ազգային ժողովի ընդունած՝ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից 8 օրենքների՝ Սահմա-

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2021 թվականի ապրիլի 8-ի ՍԴԱՈ-73 և 2021 թվականի հուլիսի 2-ի ՍԴԱՈ-137 աշխատակարգային որոշումները:

նադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հիշյալ դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2021 թվականի մայիսի 6-ին:

Սահմանադրական դատարանի վերոհիշյալ ՍԴԱՌ-106 աշխատակարգային որոշմամբ **գործի դատաքննությունն սկսելու ժամկետ է սահմանվել 2021 թվականի հուլիսի 20-ը**, որը գործով զեկուցողի միջնորդության հիման վրա **հետաձգվել և նշանակվել է 2021 թվականի հուլիսի 29-ին**¹:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի հուլիսի 29-ի ՍԴԱՌ-168 և ՍԴԱՌ-169 աշխատակարգային որոշումներով գործով զեկուցողը փոխարինվել է նոր զեկուցողով, գործի վարույթը վերսկսվել, գործի քննությունը երկարաձգվել, դատաքննությունը հետաձգվել և նշանակվել է 2021 թվականի հոկտեմբերի 12-ին:

2021 թվականի հոկտեմբերի 12-ին Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում հրապարակվել է տեղեկատվություն, որ նշված դիմումը համարվում է մերժված:

Այսինքն՝ նշված գործով ձայների հավասարության հետևանքով **դիմումը համարվել է մերժված** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 73-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված **գործով որոշում ընդունելու առավելագույն վեցամսյա ժամկետի ավարտից գրեթե մեկ ամիս առաջ**,

3) Սահմանադրական դատարանը **2021 թվականի ապրիլի 1-ի ՍԴԱՌ-61 աշխատակարգային որոշմամբ քննության է ընդունել** «Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ղեկավար Արմեն Սանթրոսյանի, Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավար Լևոն Զավարյանի, Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավար Էդգար Արշակյանի, Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավար Սասուն Խեչումյանի, Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Մխիթար Վարազյանի դիմումի հիման վրա՝ 18.06.2020թ. խմբագրությամբ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2.1-ին մասի և 11.07.2020թ. խմբագրությամբ «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2021 թվականի հուլիսի 20-ի ՍԴԱՌ-159 աշխատակարգային որոշումը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Հիշյալ դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2021 թվականի փետրվարի 19-ին:

Սահմանադրական դատարանի վերոհիշյալ ՍԴԱՌ-61 աշխատակարգային որոշմամբ գործի դատաքննությունն սկսելու ժամկետ է սահմանվել 2021 թվականի հունիսի 22-ը, որը գործով զեկուցողի միջնորդության հիման վրա հետաձգվել և նշանակվել է 2021 թվականի սեպտեմբերի 14-ին¹:

Սահմանադրական դատարանը 2021 թվականի հուլիսի 27-ի ՍԴԱՌ-167 աշխատակարգային որոշմամբ քննության է ընդունել «Գեղարքունիքի մարզի Զոլաքար համայնքի ղեկավար Արման Ղազարյանի դիմումի հիման վրա՝ 18.06.2020թ. խմբագրությամբ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2.1-ին մասի և 11.07.2020թ. ընդունված «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հիշյալ դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2021 թվականի հուլիսի 7-ին:

Սահմանադրական դատարանը 2021 թվականի հուլիսի 27-ի ՍԴԱՌ-167 աշխատակարգային որոշմամբ նշված գործերը միավորել է և որոշել քննել նույն նիստում՝ 2021 թվականի սեպտեմբերի 14-ին:

Գործով զեկուցողի միջնորդության հիման վրա միավորված գործի դատաքննությունն սկսելու ժամկետը հետաձգվել և նշանակվել է 2021 թվականի հոկտեմբերի 19-ին²:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի հոկտեմբերի 19-ի ՍԴԱՌ-208 և ՍԴԱՌ-209 աշխատակարգային որոշումներով գործով զեկուցողը փոխարինվել է նոր զեկուցողով, գործի վարույթը վերսկսվել, գործի դատաքննությունը հետաձգվել և նշանակվել է 2021 թվականի նոյեմբերի 16-ին:

2021 թվականի նոյեմբերի 16-ին Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում հրապարակվել է տեղեկատվություն, որ նշված դիմումը համարվում է մերժված:

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2021 թվականի հունիսի 22-ի ՍԴԱՌ-116 աշխատակարգային որոշումը:

² Տե՛ս Սահմանադրական դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴԱՌ-192 աշխատակարգային որոշումը:

Այսինքն՝ նշված միավորված գործով ձայների հավասարության հետևանքով **դիմումը համարվել է մերժված** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված **գործով որոշում ընդունելու առավելագույն իննամյա ժամկետի ավարտից չորս օր առաջ**:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և Սահմանադրական դատարանի աշխատակարգի **կանոնակարգումների ու վերոնշյալ պրակտիկայի գնահատումը Սահմանադրական դատարանին հնարավորություն կտար վերհանելու** դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ **կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի իրացման իրական հնարավորության առկայության ապահովված կամ դրանց խնդրահարույց լինելու հարցերը**:

Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանի կողմից նաև այդ դրույթի իրավակիրառական պրակտիկայի գնահատումը կընդգծեր, որ Սահմանադրական դատարանն անաչառ, անկողմնակալ վեր է հանել իր իսկ իրավակիրառական պրակտիկայի խնդիրները, փարատել է այն կասկածները, որ «խուսափում» է իր իրավասությանը վերաբերող՝ քննության ընդունված ենթադրյալ հակասահմանադրական հարցի կապակցությամբ դիրքորոշում արտահայտելուց (ինչպես դա նշել է նաև սույն գործով դիմողը): Դա կլիներ նաև Սահմանադրական դատարանի նկատմամբ հանրային վստահության բարձրացմանն ուղղված առարկայական քայլ:


ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ **ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ**

Շ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«25» մարտի 2022թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1/1 (105/1) 2022



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ ՎԻԼՆՅՈՒՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻՏՎԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ
ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 մարտի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե.
Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ տարածքային կառավարման
և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության
պետ Ա. Ղազարյանի,
համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի
մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

1/1 (105/1) 2022
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՆԵԿՎՈՐ

◆ ՏԵՆԵԿՎՈՐ ՂԱՏԱՐԱՆ

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2021 թվականի հունիսի 15-ին Վիլնյուսում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Լիտվայի Հանրապետության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման մասին արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2022 թվականի հունվարի 20-ի N 54-Ա որոշմամբ հավանություն է տվել «2021 թվականի հունիսի 15-ին Վիլնյուսում ստորագրված Հայաստանի Հանրապետության և Լիտվայի Հանրապետության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման մասին արձանագրությունը վավերացնելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի հունվարի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ արձանագրությունը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. 2021 թվականի հունիսի 15-ին Վիլնյուսում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Լիտվայի Հանրապետության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման մասին արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) նպատակ ունի ապահովել «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկումը:

«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում, այնուհետև Հայաստանի

Հանրապետության կողմից վավերացվել է Ազգային ժողովի 2013 թվականի նոյեմբերի 11-ի ԱԺՈ-091-Ն որոշմամբ (ՍԴՈ-1113): Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 1-ից:

2. Քննության առարկա Արձանագրությունը բաղկացած է նախաբանից, 14 հոդվածներից և երկու հավելվածից: Հավելված I-ը վերաբերում է Փոխադրման ձևաթղթին, որը կազմում և հղում է Հայցող կողմը: Հավելված II-ը պարունակում է Հայաստանի Հանրապետության ոչ աշխատանքային ազգային տոները և հիշատակի օրերը՝ «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ինչպես նաև Լիտվայի Հանրապետության ազգային տոները՝ Լիտվայի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի համաձայն:

Համաձայն Արձանագրության 14-րդ հոդվածի 1-ին կետի՝ այն ուժի մեջ է մտնում այն պահից, երբ «Պայմանավորվող կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց տեղեկացնում են Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերի ավարտի մասին: Պայմանավորվող կողմը վերջին ծանուցումը ստանալուց հետո այդ մասին դիվանագիտական ուղիներով ծանուցում է Համաձայնագրի 19-րդ հոդվածում նշված հետընդունման հարցերով համատեղ կոմիտեին: Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումը հետընդունման հարցերով համատեղ կոմիտեի ստանալու օրվան հաջորդող ամսվա առաջին օրը»:

Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցնում է «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Լիտվայի Հանրապետության Կառավարության միջև առանց թույլտվության ապրող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2003 թվականի սեպտեմբերի 15-ին Երևանում ստորագրված համաձայնագիրը (հոդված 14, կետ 5):

3. Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, Արձանագրությամբ ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

1) ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինները դիվանագիտական ուղիներով լիտվական կողմի իրավասու մարմիններին անմիջապես տեղեկացնեն իրավասու մարմինների ցանկում կատարված ցանկացած փոփոխության կամ վերոնշյալ մարմինների հետ կապ պահպանելու համար անհրաժեշտ տեղեկությունների փոփոխության մասին, ինչպես նաև

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Արձանագրությամբ նախատեսված սահմանային անցակետի ցանկացած փոփոխության մասին (հոդված 1, կետ 2, հոդված 2, կետեր 1, 2),

2) ապահովել, որ հետընդունման և տարանցման դիմումները, պատասխանները և այլ կից հաղորդագրություններն ուղարկվեն Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՌՀԿԷՀ) միջոցով (հոդված 3, կետեր 1 և 2),

3) ապահովել, որ Համաձայնագրին որպես 5-րդ հավելված կցված հետընդունման դիմումի ստանդարտ ձևը (այսուհետ՝ հետընդունման դիմում) լրացվի Համաձայնագրի 8-րդ հոդվածի համաձայն և ուղարկվի հայցվող լիտվական կողմի իրավասու մարմնին ՌՀԿԷՀ-ի միջոցով կամ անհրաժեշտության դեպքում, էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով՝ Արձանագրության 4-րդ հոդվածի (2) կետում նշված լրացուցիչ փաստաթղթերի հետ միասին, ինչպես նաև ապահովել, որ հետընդունման դիմումի մեջ, Արձանագրության 4 (1) հոդվածին համապատասխան, հետընդունման ենթակա անձի հետ հարցազրույց անցկացնելու անհրաժեշտության մասին նշվելու դեպքում այն միաժամանակ ուղարկվի Հայցվող լիտվական կողմի դիվանագիտական ներկայացուցչություն (հոդված 4, կետ 1),

4) ապահովել, որ հետընդունման դիմումից բացի՝ եթե հնարավոր է, յուրաքանչյուր դեպքում հայցող ՀՀ իրավասու մարմինը հայցվող լիտվական կողմի իրավասու մարմնին ներկայացնի Համաձայնագրի 1-4-րդ հավելվածներում նշված փաստաթղթերը, «Մատնահետքերի եվրոպական ստանդարտի» լրացված ստանդարտ ձևը՝ այն անձի մատնահետքերով և լուսանկարով (ոչ լուսապատճենված կամ այլ կերպ պատճենված լուսանկարը), որին վերաբերում է հետընդունման դիմումը, և եթե ենթակա են ներկայացման Համաձայնագրի 2-4-րդ հավելվածներով նախատեսված ապացույցներ, ապա դրանք լինեն հստակ և ճշգրիտ՝ դրանց ստուգումը հնարավոր դարձնելու համար, ինչը կհանգեցնի սահմանելուն, թե արդյոք առկա՞ է հայցվող լիտվական կողմի հետընդունման պարտավորություն (հոդված 4, կետ 2),

5) եթե հայցող լիտվական կողմի իրավասու մարմինը, հետընդունման դիմումից բացի, չի կարող ներկայացնել Համաձայնագրի 1-2-րդ հավելվածներում նշված որևէ փաստաթուղթ, կամ եթե ներկայացված փաստաթղթերը բավարար չեն, և եթե հետընդունման ենթակա անձի հետ հարցազրույցի անհրաժեշտությունը նշված է հետընդունման դիմումի մեջ, ապա որպես հայցվող կողմ՝ ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինը, որն ուսումնասիրում է հետընդունման դիմումը, կազմակերպի հետընդունման

ենթակա անձի հարցազրույցը՝ համաձայն Արձանագրության 5-րդ հոդվածում նախատեսված ընթացակարգի (հոդված 5, կետ 1),

6) ապահովել, որ հետընդունման ենթակա անձի հետ հարցազրույցը Հայաստանի Հանրապետության անունից Լիտվայի Հանրապետությունում անցկացվի Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության պաշտոնյաների կողմից (հոդված 5, կետ 2),

7) ապահովել, որ հետընդունման ենթակա անձի հետ հարցազրույցը կազմակերպվի հարցազրույց անցկացնելու խնդրանք պարունակող հետընդունման դիմումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ որպես հայցող կողմ հանդես գալու պարագայում ապահովել հետընդունման ենթակա անձի տեղափոխումը հայցվող լիտվական կողմի դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ, ինչպես նաև ապահովել, որ հետընդունման դիմումի պատասխանը, որը ներառում է հետընդունման ենթակա անձի հետ հարցազրույցի արդյունքները, ներկայացվի հայցող լիտվական կողմի իրավասու մարմինն հնարավորինս արագ, բայց ոչ ուշ, քան Համաձայնագրի 11(2) հոդվածով նախատեսված ժամկետում (հոդված 5, կետ 3),

8) հայցվող Լիտվայի Հանրապետության կողմից հետընդունման դիմումը հաստատվելուց հետո, որպես հայցող կողմ՝ գրավոր ծանուցում ուղարկել հայցվող լիտվական կողմին, որը ներառում է հետընդունման ենթակա անձի մասին մանրամասներ և տեղեկություններ տվյալ անձի փոխադրման վերաբերյալ՝ ծանուցմանը կցելով հետընդունման ենթակա անձին ընդունելու վերաբերյալ հայցվող լիտվական կողմի համաձայնության պատճենը (հոդված 6, կետ 1),

9) ապահովել, որ Արձանագրության 6-րդ հոդվածի (1) կետում նշված ծանուցումը ներկայացվի Արձանագրությանը որպես 1-ին հավելված կցված փոխադրման ձևը (այսուհետ՝ փոխադրման ձև) լրացնելու միջոցով և փոխադրման ձևն ուղարկվի հայցվող լիտվական կողմի իրավասու մարմինն ՌՀԿԷՀ-ի միջոցով կամ, անհրաժեշտության դեպքում, էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով՝ ոչ ուշ, քան հետընդունման ենթակա անձի փոխադրման օրվանից 3 (երեք) աշխատանքային օր առաջ (հոդված 6, կետ 2),

10) ապահովել, որ հետընդունման ենթակա անձի փոխադրման ամսաթիվը (այսուհետ՝ փոխադրման ամսաթիվ) հայցող հայկական կողմի կողմից իրավական կամ գործնական խոչընդոտների պատճառով հետաձգվելու դեպքում ՀՀ իրավասու մարմինը հետաձգման մասին անմիջապես տեղեկացնի հայցվող լիտվական կողմի իրավասու մարմինն,

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ ◆ 1/1 (105/1) 2022

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

որին ներկայացված է հետընդունման դիմումը, և վերոնշյալ հետաձգման դեպքում ապահովել, որ հայցող հայկական կողմի իրավասու մարմինը թարմացնի փոխադրման ձևը՝ Արձանագրության 6-րդ հոդվածի (2) կետի դրույթներին համապատասխան (հոդված 6, կետեր 3 և 4),

11) ապահովել, որ հայցվող հայկական կողմի իրավական կամ գործնական խոչընդոտների պատճառով փոխադրման ամսաթվի հետաձգման դեպքում ՀՀ իրավասու մարմինը հետաձգման մասին անմիջապես տեղեկացնի հայցող լիտվական կողմի իրավասու մարմնին և առաջարկի փոխադրման նոր ամսաթիվ (հոդված 6, կետ 5),

12) ապահովել, որ ի լրումն Համաձայնագրի 15 (1) հոդվածի դրույթների՝ անհրաժեշտության դեպքում տարանցման դիմումը ներառի տեղեկություններ տարանցման ենթակա անձի հիվանդությամբ կամ տարիքով պայմանավորված՝ բժշկական կամ տարեց անձի խնամքի հատուկ կարիքների վերաբերյալ, ինչպես նաև տեղեկություններ տարանցման ենթակա անձի և (կամ) նրան ուղեկցող անձնակազմի անվտանգության ապահովման կամ պաշտպանության միջոցների հնարավոր անհրաժեշտության վերաբերյալ. վերոհիշյալ տեղեկությունները լրացվում են Համաձայնագրի 6-րդ հավելվածում ներկայացված տարանցման միասնական դիմումի ձևի (այսուհետ՝ տարանցման դիմումի ձև) «Գ» (նկատառումներ) բաժնում (հոդված 7, կետեր 1 և 2),

13) ապահովել, որ Համաձայնագրի 14-րդ և 15-րդ հոդվածների համաձայն՝ տարանցման դիմումը ուղարկվի հայցվող լիտվական կողմի իրավասու մարմնին ՌՀԿԷՀ-ի միջոցով կամ, անհրաժեշտության դեպքում, էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով՝ ոչ ուշ, քան նախատեսված տարանցումից 15 (տասնհինգ) օր առաջ (հոդված 7, կետ 3, ենթակետ 1),

14) Համաձայնագրի 14-րդ և 15-րդ հոդվածների համաձայն՝ որպես հայցվող կողմ ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինը պատասխանի տարանցման դիմումին ՌՀԿԷՀ-ի միջոցով կամ, անհրաժեշտության դեպքում, էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով Համաձայնագրի 15(2) հոդվածում նշված ժամկետում, ինչպես նաև նշի, թե արդյո՞ք համաձայն է տարանցմանը, ամսաթվին, հայցվող հայկական կողմի՝ նշանակված պետական սահմանային անցակետին, փոխադրման եղանակին և ուղեկցող խմբի անդամներին (հոդված 7, կետ 3, ենթակետ 2),

15) Համաձայնագրի 14-րդ և 15-րդ հոդվածների համաձայն՝ որպես հայցող կողմ հանդես գալու պարագայում, հայցվող լիտվական կողմի օժանդակությունը անհրաժեշտ քայլ համարելու դեպքում, ապահովել,

որպեսզի դա նշված լինի տարանցման դիմումի ձևի մեջ և ՀՀ իրավասու մարմինն այնուհետև հաստատի, թե արդյո՞ք կարող է տրամադրել հայցող լիտվական կողմի կողմից հայցվող օժանդակությունը (հոդված 7, կետ 3, ենթակետ 3),

16) ապահովել, որ Համաձայնագրի 14-րդ և 15-րդ հոդվածների համաձայն՝ օդով ուղեկցմամբ փոխադրման դեպքում հայցվող ՀՀ իրավասու մարմինը հնարավորինս ապահովի անվտանգություն և տրամադրի օժանդակություն տարանցման ենթակա անձի օդանավ բարձրանալու հարցում, իսկ նման դեպքում որպես հայցող կողմ հանդես գալու պարագայում՝ ապահովել, որ հայկական կողմի ուղեկցող անձնակազմը նույնպես ներկա լինի (հոդված 7, կետ 3, ենթակետ 4),

17) որպես հայցող կողմ՝ առանց ձգձգման հետ ընդունել ՀՀ տարածք տարանցման ենթակա անձին, ինչպես նշված է Համաձայնագրի 14(4) հոդվածում, եթե տարանցման հաստատումը մերժվել է կամ չեղյալ է համարվել, ինչպես նշված է Համաձայնագրի 14(3) հոդվածում կամ տարանցման ենթակա անձն անօրինական կերպով է մուտք գործել հայցվող լիտվական կողմի տարածք, կամ տարանցման կամ հետընդունման հաստատումը մերժվել է տարանցման այլ երկրի կամ վերջնական նպատակակետ հանդիսացող երկրի կողմից, կամ տարանցումը չի կարող հաստատվել այլ հանգամանքների պատճառով (հոդված 7, կետ 4),

18) Համաձայնագրի 20(1)(բ) հոդվածի համաձայն՝ ընդունել Արձանագրության 8-րդ հոդվածով սահմանված ՀՀ տարածքով հետընդունման ենթակա անձի ուղեկցմամբ փոխադրման կամ տարանցման հետ կապված դրույթները (հոդված 8),

19) հետընդունման կամ տարանցման գործողությունների հետ կապված՝ հայցվող լիտվական կողմի կատարած ծախսերը, որոնք, Համաձայնագրի 16-րդ հոդվածի համաձայն, կրում է հայցող հայկական կողմը, որպես հայցող կողմ՝ փոխհատուցել եվրոյով, հաշիվ-ապրանքագիրը ստանալու ամսաթվից 30 օրվա ընթացքում (հոդված 9),

20) համաձայնել ձևավորել փորձագետների երկկողմ հանձնաժողով և ապահովել, որ Արձանագրության 1-ին հոդվածում նշված ՀՀ իրավասու մարմինը նշանակի հանձնաժողովի անդամներին և այդ մասին տեղեկացնի լիտվական կողմի իրավասու մարմիններին, իսկ Արձանագրության կիրարկման հետ կապված խորհրդակցությունները կազմակերպել ըստ անհրաժեշտության (հոդված 10):

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2021 թվականի հունիսի 15-ին Վիլնյուսում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Լիտվայի Հանրապետության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման մասին արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

18 մարտի 2022 թվականի
ՍԴՈ-1640

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ ՎԻԼՆՅՈՒՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1640 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2021 թվականի հունիսի 15-ին Վիլնյուսում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Լիտվայի Հանրապետության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման մասին արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի մարտի 18-ի ՍԴՈՒ-1640 որոշմամբ որոշել է, որ 2021 թվականի հունիսի 15-ին Վիլնյուսում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Լիտվայի Հանրապետության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման մասին արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի մարտի 18-ի ՍԴՈՒ-1640 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1640 որոշմամբ 2021 թվականի հունիսի 15-ին Վիլնյուսում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Լիտվայի Հանրապետության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման մասին արձանագրությունում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ

ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝

օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ 1/1 (105/1) 2022

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի)

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:


1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«18» մարտի 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲԵԼԱՌՈՒՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ
ԲԵԼԱՌՈՒՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌԱՆՑ
ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՓՈԽԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 մարտի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՀՀ կառավարության ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա. Ղևոնդյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության

◆ 1/1 (105/1) 2022
◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

կառավարության միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Բելառուսի Հանրապետության քաղաքացիների առանց արտոնագրերի փոխայցելությունների մասին» համաձայնագրում լրացում կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2022 թվականի հունվարի 27-ի N 92-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Բելառուսի Հանրապետության քաղաքացիների առանց արտոնագրերի փոխայցելությունների մասին» համաձայնագրում լրացում կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2022 թվականի փետրվարի 1-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ արձանագրությունը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Բելառուսի Հանրապետության քաղաքացիների առանց արտոնագրերի փոխայցելությունների մասին» համաձայնագրում լրացում կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2021 թվականի հոկտեմբերի 8-ին Մինսկում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Բելառուսի Հանրապետության քաղաքացիների առանց արտոնագրերի փոխայցելությունների մասին» 2002 թվականի հունիսի 6-ի համաձայնագրում լրացում կատարելու նպատակով:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՆԵԿԱԳԻՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

2. 2002 թվականի հունիսի 6-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Բելառուսի Հանրապետության քաղաքացիների՝ առանց արտոնագրերի փոխայցելությունների մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է Ազգային ժողովի՝ 2003 թվականի դեկտեմբերի 1-ի Ն-054-3 որոշմամբ (ՍԴՈ-380):

3. Արձանագրությամբ Համաձայնագրի 1-ին հոդվածը լրացվում է երրորդ և չորրորդ մասերով:

Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է փոփոխել Համաձայնագրի տեքստը՝ Արձանագրությամբ սահմանված բովանդակությամբ և կարգով, որի արդյունքում, Հայաստանի Հանրապետությունը՝ փոխադարձության սկզբունքով, ստանձնում է հետևյալ պարտավորությունը.

- Բելառուսի Հանրապետության քաղաքացիներին Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու ամսաթվից 30 օրվա ընթացքում ազատել Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններում գրանցվելու (ըստ գտնվելու վայրի՝ հաշվառման կանգնելու) պարտականությունից (հոդված 1, մաս 1):

4. Արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ մի Կողմի պետության քաղաքացու 30 օրից ավելի ժամկետով մյուս Կողմի պետության տարածքում գտնվելու դեպքում՝ տվյալ քաղաքացին պարտավոր է գրանցվել (ըստ գտնվելու վայրի՝ հաշվառման կանգնել) մուտքի պետության իրավասու մարմիններում՝ այդ պետության օրենսդրությանը համապատասխան:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1/1 (105/1) 2022
 ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ♦ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Բելառուսի Հանրապետության քաղաքացիների առանց արտոնագրերի փոխայցելությունների մասին» համաձայնագրում լրացում կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

18 մարտի 2022 թվականի
ՍԴՈ - 1641

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌԱՆՑ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՓՈԽԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1641 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Բելառուսի Հանրապետության քաղաքացիների առանց արտոնագրերի փոխայցելությունների մասին» համաձայնագրում լրացում կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի մարտի 18-ի ՍԴՈՒ-1641 որոշմամբ որոշել է, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Բելառուսի Հանրապետության քաղաքացիների առանց արտոնագրերի փոխայցելությունների մասին» համաձայնագրում լրացում կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի մարտի 18-ի ՍԴՈՒ-1641 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապա-

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

տասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1641 որոշմամբ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Բելառուսի Հանրապետության քաղաքացիների առանց արտոնագրերի փոխայցելությունների մասին» համաձայնագրում լրացում կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.
- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.
- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարանի դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարանի դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման

էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարանի դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝

ՍԱԳՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ

օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ 1/1 (105/1) 2022

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի)

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱՆԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:


Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«18» մարտի 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲԵԼԱՌՈՒՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 մարտի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության պետ Ա. Ղազարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

1/1 (105/1) 2022
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Կառավարությունն իր՝ 2022 թվականի փետրվարի 3-ի N 120-Ա որոշմամբ հավանություն է տվել 2021 թվականի հոկտեմբերի 8-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև հետընդունման (ոեադմիսիայի) մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի փետրվարի 4-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 1/1 (105/1) 2022
 ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև հետընդունման (ոեադմիսիայի) մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2021 թվականի հոկտեմբերի 8-ին Մինսկ քաղաքում՝ անօրինական միգրացիայի և անդրսահմանային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հարցերում փոխադարձ համագործակցության ամրապնդման և Կողմ պետություններից յուրաքանչյուրի ինքնիշխան իրավունքը հարգելով՝ Կողմերի օրենսդրությանը համապատասխան, իրենց տարածքում կամ դրանով օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց անօրինական միգրացիայի համար պատասխանատվություն սահմանելու նպատակով:

2. Համաձայնագրում հղում է կատարվում՝ ա) 1951 թվականի հուլիսի 28-ի՝ «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիային և 1967 թվականի հունվարի 31-ի՝ «Փախստականների կարգավիճակի մասին» արձանագրությանը (Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիային և արձանագրությանը միացել է Գերագույն Խորհրդի 1993 թվականի ապրիլի 12-ի Հ.Ն-0797-Ո որոշմամբ), բ) 1984 թվականի դեկտեմբերի 10-ի՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիային (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հոկտեմբերի 13-ից), գ) 1966 թվականի դեկտեմբերի 16-ի՝

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրին (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի սեպտեմբերի 23-ից):

3. Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա Համաձայնագրով ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

3.1. ապահովել, որ Համաձայնագրի կիրարկման նպատակներով Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները մյուս Կողմի իրավասու մարմինների հետ փոխգործակցեն անմիջականորեն (հոդվ. 2, կետ 3),

3.2. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միզրացիոն ծառայությունն ուսումնասիրի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց առնչությամբ հետընդունման վերաբերյալ հայցերը, ինչպես նաև ուղարկի Բելառուսի Հանրապետության քաղաքացիների, երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց առնչությամբ հետընդունման, տարանցման վերաբերյալ հայցեր (հոդվ. 2, կետ 5),

3.3. որպես հայցվող Կողմ՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը հայցող Կողմի պետության իրավասու մարմնի հայցով ընդունի այն անձանց, որոնք հայցող Կողմի պետության տարածք մուտք են գործել կամ այդ պետության տարածքում գտնվում են օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մուտքի, ելքի և գտնվելու հարցերին առնչվող՝ Բելառուսի Հանրապետության օրենսդրության խախտմամբ, եթե պարզվել է, որ նրանք հայցվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են կամ հայցող Կողմի պետության տարածք մուտք գործելուց հետո զրկվել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից և չեն ստացել այլ պետության քաղաքացիություն (հոդվ. 3, կետ 1),

3.4. եթե Համաձայնագրի 1-ին Հավելվածով նախատեսված փաստաթղթերից ոչ մեկը չի կարող ներկայացվել, ապա ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները պայմանավորվեն մյուս Կողմի իրավասու մարմինների հետ հետընդունման ենթակա անձի հետ հայցող Կողմի պետության տարածքում հարցազրույց անցկացնելու մասին՝ նրա քաղաքացիության մասին Համաձայ-

նագրի 4-րդ հոդվածին համապատասխան տեղեկություններ ստանալու նպատակով (հոդվ. 3, կետ 3),

3.5. որպես հայցվող Կողմ՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը հնարավորինս սեղմ ժամկետներում, սակայն հարցազրույցն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրացուցային օրը չգերազանցող ժամկետում Հայաստանի Հանրապետության և հայցող Կողմի պետության իրավասու մարմիններին գրավոր ծանուցի հարցազրույցի արդյունքների մասին (հոդվ. 4, կետ 4),

3.6. որպես հայցվող Կողմ՝ ապահովել, որ հիմքերի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը հետընդունման ենթակա անձին տրամադրի Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու համար անհրաժեշտ փաստաթուղթ, որի գործողության ժամկետը դրա տրամադրման օրվանից կազմում է 30 (երեսուն) օրացուցային օր (հոդվ. 4, կետ 5),

3.7. որպես հայցվող Կողմ՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը հայցող Կողմի պետության իրավասու մարմնի հայցի հիման վրա ընդունի երրորդ պետության քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին, որոնք հայցող Կողմի պետության տարածք մուտք են գործել կամ Բելառուսի Հանրապետության տարածքում գտնվում են օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մուտքի, ելքի և գտնվելու հարցերին առնչվող՝ մյուս Կողմի օրենսդրության խախտմամբ, եթե ներկայացվեն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ապացույցներ (հոդվ. 5, կետ 1),

3.8. չկիրառել Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հետընդունման պարտավորությունը, եթե երրորդ պետության քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձն օրինական հիմքերով ժամանել է հայցող Կողմի պետության տարածք ոչ վիզային կարգով՝ միջազգային պայմանագրին համապատասխան, որի մասնակից է հայցող Կողմի պետությունը, հայցող Կողմի պետության տարածք ժամանելուց անմիջապես առաջ գտնվել է բացառապես հայցվող հայկական Կողմի պետության տարածքում միջազգային օդանավակայանի տարանցիկ գոտում, մուտք գործելու պահին ունեցել է հայցող Կողմի պետության լիազորված մարմնի կողմից տրված բնակության վավերական թույլտվություն (հոդվ. 5, կետ 2),

3.9. այն դեպքում, երբ երրորդ պետության քաղաքացին կամ

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԼ ՂԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

քաղաքացիություն չունեցող անձը չունի անձը հաստատող փաստաթուղթ, և այդ անձի քաղաքացիության կամ մշտական բնակության պետության լիազորված մարմնի կողմից այդպիսի փաստաթղթի տրամադրման հնարավորություն չկա, հետընդունման վերաբերյալ հայցին տրված դրական պատասխանն ստանալուց հետո ապահովել, որ հայցող Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը հայցվող Կողմի պետության տարածք մուտք գործելու համար այդ անձին տրամադրի հետընդունման նպատակով ուղևորության փաստաթուղթ, որի ձևը սահմանված է Համաձայնագրի 4-րդ Հավելվածով, որը հայցվող Կողմի համար ընդունելի է իր տարածք մուտք գործելիս (հոդվ. 6),

3.10. որպես հայցվող Կողմ՝ ապահովել, որ երրորդ պետությունների քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց առնչությամբ հետընդունման վերաբերյալ հայցն ստանալու օրվանից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը տա այդ անձանց ընդունելու համաձայնություն կամ հիմնավորված կերպով մերժի նրանց ընդունել, եթե Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից պարզվի, որ բացակայում են Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետով և 5-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված անհրաժեշտ պայմանները (հոդվ. 7, կետ 4, մաս 1),

3.11. երաշխավորել, որ հետընդունման ենթակա անձանց անձնական տվյալները, որոնք, Համաձայնագրի իրականացման հետ կապված, փոխանակում կամ միմյանց փոխանցում են Կողմերի պետությունների իրավասու մարմինները, Հայաստանի Հանրապետությունում կլինեն պաշտպանված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և այն միջազգային պայմանագրերին համապատասխան, որոնց մասնակից է Հայաստանի Հանրապետությունը (հոդվ. 14, կետ 1) և այլն:

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության տարածքներում առանց թույլտվության գտնվող անձանց փոխանցման, ընդունման և վերադարձման բնագավառում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ Բելառուսի Հանրապետության հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաս-

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

տատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

18 մարտի 2022 թվականի
ՍԴՈ-1642

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՇԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ
(ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»
ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1642
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի մարտի 18-ի ՍԴՈՒ-1642 որոշմամբ որոշել է, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի մարտի 18-ի ՍԴՈՒ-1642 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 1/1 (105/1) 2022

ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1642 որոշմամբ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

հողվածի 3-րդ կեսով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆

հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում

նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (Նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների

միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող


1/1 (105/1) 2022
 ♦ ՏԵՂԵԿՎԳԻՐ
 ♦ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«18» մարտի 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎԻԱՑԻՈՆ ԳՈՏՈՒ
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 մարտի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե.
Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ տարածքային կառավարման
և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ա. Սիմոնյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի
մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2021 թվականի
նոյեմբերի 15-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ մի
կողմից, և Եվրոպական միության և դրա անդամ պետությունների՝ մյուս
կողմից, միջև Ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրում

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2022 թվականի փետրվարի 10-ի N 147-Ա որոշմամբ հավանություն է տվել 2021 թվականի նոյեմբերի 15-ին Բրյուսելում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և դրա անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2022 թվականի փետրվարի 14-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի փետրվարի 14-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և դրա անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2021 թվականի նոյեմբերի 15-ին Բրյուսելում՝ Կողմերի միջև շուկայի աճող հասանելիության, ավիափոխադրողների սեփականության իրավունքի և վերահսկողության ազատականացման, արդար և հավասար մրցակցային պայմանների, ոչ խտրական մոտեցման և միասնական պայմանների վրա հիմնված, ներառյալ՝ թռիչքային և ավիացիոն անվտանգության, օդային երթևեկության կառավարման, սոցիալական հայեցակետերի և շրջակա միջավայրի ոլորտներում ընդհանուր ավիացիոն գոտու ստեղծման նպատակով:

2. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վավերացման կամ հաստատման վերջին փաստաթղթի ստացումը հաստատելու մասին ավանդապահի կողմից Կողմերին ծանուցելու օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը:

Ըստ Արտաքին գործերի նախարարության՝ «Համաձայնագրի ուժի մեջ մտնելու կարգի վերաբերյալ» տեղեկանքի՝ 2021թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ Եվրոպական միության և դրա անդամ պետությունների կողմից

չի ստացվել ծանուցում՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

Արտաքին գործերի նախարարության՝ «Համաձայնագրի վավերացման կամ հաստատման արտաքին քաղաքական նպատակահարմարության մասին» եզրակացության մեջ նշված է. «Համաձայնագրի վավերացմամբ և ուժի մեջ մտնելով Հայաստանի ավիացիոն ոլորտի զարգացման համար կատեղծվեն նոր հնարավորություններ, կոյուրացվի ՀՀ քաղաքացիների կապը եվրոպական երկրների հետ, ԵՄ ավիացիոն ստանդարտների ընդունմամբ և ԵՄ ավիացիոն կանոնների կիրառմամբ կզարգացվի նաև հետագա համագործակցությունն ավիացիոն անվտանգության ոլորտում: Միաժամանակ ակնկալվում է, որ Համաձայնագրի վավերացումը խթան կհանդիսանա առևտրի, զբոսաշրջության, ներդրումների և առհասարակ Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման համար՝ ապահովելով շարժունակության ավելի լայն հնարավորություններ»:

3. Համաձայնագրի անբաժանելի մաս են կազմում 2 հավելվածները: I հավելվածով սահմանվում են անցումային դրույթները, II հավելվածով՝ քաղաքացիական ավիացիայի նկատմամբ կիրառելի կանոնները:

4. Համաձայն Համաձայնագրի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության՝ Կողմերը հաստատում են, որ ազատ, արդար և բարեխիղճ մրցակցությունը կարևոր է Համաձայնագրի նպատակների իրականացումը խթանելու համար, և նշում են, որ մրցակցության ոլորտը կարգավորող համապարփակ օրենքների և մրցակցային ոլորտը կարգավորող անկախ մարմնի առկայությունը, ինչպես նաև մրցակցային ոլորտը կարգավորող օրենքների պատշաճ և արդյունավետ կատարումը կարևոր են օդային փոխադրման ծառայությունների արդյունավետ մատուցման համար: Յուրաքանչյուր Կողմի՝ Համաձայնագրի 8-րդ հոդվածով կարգավորվող հարցերին առնչվող, պարբերաբար փոփոխվող՝ մրցակցային ոլորտը կարգավորող օրենքները կիրառվում են համապատասխան Կողմի իրավազրույթության ներքո գործունեություն ծավալող ավիափոխադրողների նկատմամբ: Կողմերը հավատարիմ են մրցակցային ոլորտը կարգավորող օրենքների համատեղելիության և միասնականության և դրանց արդյունավետ կիրառման նպատակներին: Կողմերը պատշաճորեն և ըստ անհրաժեշտության համագործակցում են մրցակցության ոլորտը կարգավորող օրենքների արդյունավետ կիրառման համար՝ այդ թվում թույլատրելով միմյանց մրցակցության ոլորտը կարգավորող մարմինների կողմից մրցակցային իրավունքի ոլորտում հարուցված մրցակցային

վարույթների վերաբերյալ տեղեկատվության բացահայտումն իրենց համապատասխան ընկերությունների կամ այլ քաղաքացիների կողմից՝ իրենց համապատասխան կանոնների և օրենսդրության համաձայն:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության սկզբունքով ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

- Համաձայնագրի 3-րդ հոդվածով սահմանված իրավունքները կիրառել Համաձայնագրի I հավելվածով սահմանված անցումային դրույթներին համապատասխան (հոդված 3, պարբերություն 1).

- մյուս Կողմին առանց խտրականության տրամադրել այդ մյուս Կողմի ավիափոխադրողների կողմից միջազգային օդային փոխադրումների իրականացման՝ Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված իրավունքները (հոդված 3, պարբերություն 2).

- Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ նախատեսված շահագործման ճկունությունը կիրառել առանց ուղղությունների կամ աշխարհագրական սահմանափակման և առանց Համաձայնագրով թույլատրելի փոխադրման որևէ իրավունքի կորստի՝ պայմանով, որ Հայաստանի ավիափոխադրողները սպասարկում են որևէ կետ Հայաստանում, Եվրոպական միության ավիափոխադրողները սպասարկում են որևէ կետ Եվրոպական միությունում (հոդված 3, պարբերություն 3, ենթապարբերություն 2).

- ավիափոխադրողին թույլատրել որոշել վերջինիս կողմից առաջարկվող միջազգային օդային փոխադրումների հաճախականությունն ու ծավալը՝ շուկայում առկա առևտրային նկատառումներից ելնելով, ինչպես նաև այդ իրավունքի համաձայն՝ միակողմանիորեն չսահմանափակել մյուս Կողմի ավիափոխադրողների կողմից շահագործվող օդանավերի տիպը կամ տիպերը կամ փոխադրման ծավալը, հաճախականությունը կամ կանոնավորությունը, երթուղին, մեկնման կամ նշանակման վայրը՝ բացառությամբ մաքսային, տեխնիկական, շահագործման, օդային փոխադրումների կառավարման անվտանգության, շրջակա միջավայրի կամ առողջության պահպանման նկատառումներից ելնելով, կամ եթե Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ (հոդված 3, պարբերություն 4).

- Համաձայնագրի որևէ դրույթ չմեկնաբանել որպես իրավունքի տրամադրում՝ Հայաստանի ավիափոխադրողներին՝ ԵՄ անդամ որևէ պետության տարածքում օդանավ բարձրացնել ուղևորների, ուղեբեռ, բեռ կամ փոստ՝ փոխհատուցմամբ ԵՄ նույն անդամ պետության տարածքում այլ կետ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

փոխադրելու նպատակով, Եվրոպական միության ավիափոխադրողներին՝ Հայաստանի տարածքում օդանավ բարձրացնել ուղևորների, ուղեբեռ, բեռ կամ փոստ՝ փոխհատուցմամբ Հայաստանի տարածքում այլ կետ փոխադրելու նպատակով (հոդված 3, պարբերություն 6)։

- Համաձայնագրի շրջանակներում ՀՀ իրավունքներն իրացնելիս ու պարտավորությունները կատարելիս զերծ մնալ մյուս Կողմի ավիափոխադրողների նկատմամբ խտրականության ցանկացած դրսևորումից, մասնավորապես՝ ազգային պատկանելիության հիմքով (հոդված 3, պարբերություն 7)։

- մյուս Կողմի ավիափոխադրողի կողմից շահագործման լիազորության համար դիմում ստանալու դեպքում՝ նվազագույն ընթացակարգային հետաձգմամբ տրամադրել շահագործման լիազորություններ և տեխնիկական թույլտվություններ Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված պայմաններով (հոդված 4, պարբերություն 1)։

- շահագործման լիազորություններ և տեխնիկական թույլտվություններ տրամադրելիս մյուս Կողմի բոլոր փոխադրողների նկատմամբ դրսևորել ոչ խտրական վերաբերմունք (հոդված 4, պարբերություն 2)։

- մյուս Կողմի ավիափոխադրողից շահագործման լիազորության դիմում ստանալու դեպքում ՀՀ իրավասու մարմնի կողմից կատարված հաստատմանը հավասարազոր ճանաչել տվյալ ավիափոխադրողի վերաբերյալ համապատասխանության կամ քաղաքացիության մասով առաջին Կողմի ցանկացած հաստատում և չկատարել հավելյալ հարցադրումներ՝ բացառությամբ Համաձայնագրի 4-րդ հոդվածի 3-րդ պարբերության երկրորդ և երրորդ ենթապարբերություններով սահմանված դեպքերի (հոդված 4, պարբերություն 3, ենթապարբերություն 1)։

- եթե Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին պարբերության «գ» կամ «դ» կետերի հետագա անհամապատասխանությունը կանխելու համար անհրաժեշտ չէ ձեռնարկել անհապաղ միջոցներ, ապա Համաձայնագրի 5-րդ հոդվածով սահմանված իրավունքներն իրացնել միայն մյուս Կողմի հետ խորհրդակցություններից հետո (հոդված 5, պարբերություն 2)։

- երաշխավորել, որ մյուս Կողմի տարածք մուտք գործելիս, այդ տարածքում գտնվելիս կամ այդ տարածքից մեկնելիս ՀՀ ավիափոխադրողների կողմից կպահպանվեն այդ տարածքում կիրառելի՝ միջազգային օդային փոխադրումներում ներգրավված օդանավն այդ տարածք ընդունելու, այդ տարածքում շահագործելու կամ այդ տարածքից մեկնելու հետ կապված օրենքներն ու կանոնակարգերը (հոդված 7, պարբերություն 1)։

- երաշխավորել, որ մյուս Կողմի տարածք մուտք գործելիս, այդ տարածքում գտնվելիս կամ այդ տարածքից մեկնելիս ՀՀ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ

ավիափոխադրողների, ուղևորների, անձնակազմի կողմից կամ նրանց անունից և բեռի ու փոստի մասով կպահպանվեն այդ տարածքում կիրառելի՝ օդանավի ուղևորներին, անձնակազմին, ուղեբեռը, բեռը կամ փոստն իր տարածք ընդունելու, իր տարածքում շահագործելու կամ իր տարածքից մեկնելու հետ կապված օրենքներն ու կանոնակարգերը (ներառյալ այն կանոնակարգերը, որոնք վերաբերում են մուտքին, մաքսազերծմանը, ներգաղթին, անձնագրերին, մաքսային և կարանտինային հարցերին, իսկ փոստի դեպքում՝ փոստային կանոնակարգերը) (հոդված 7, պարբերություն 2)։

- ՀՀ համապատասխան տարածքներում մյուս Կողմի ավիափոխադրողներին թույլատրել ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու համար, որ միայն փոխադրվեն մյուս Կողմի տարածք մուտքի կամ այդ տարածքով տարանցիկ փոխադրման համար պահանջվող ճամփորդական փաստաթղթեր ունեցող ուղևորները (հոդված 7, պարբերություն 3)։

- ընդունել, որ մյուս Կողմերի հետ համատեղ նպատակն է ստեղծել արդար և մրցակցային միջավայր և երկու Կողմերի՝ օդային փոխադրման ծառայություններում ներգրավված ընկերություններին ընձեռել արդար ու հավասար հնարավորություն՝ մրցակցելու համաձայնեցված ծառայությունները որոշակի երթուղիներով իրականացնելիս, և ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները՝ այս նպատակի լիարժեք իրականացումն ապահովելու համար (հոդված 8, պարբերություն 1)։

- երաշխավորել, որ Համաձայնագրի 8-րդ հոդվածի համաձայն ձեռնարկված ցանկացած վարույթ կգտնվի ՀՀ բացառիկ պատասխանատվության ներքո և բացառապես ուղղված կլինի մյուս Կողմին կամ դեպի Կողմերի տարածք կամ այդ տարածքից օդային փոխադրման ծառայություններ մատուցող ընկերություններին. այդպիսի վարույթը ենթակա չէ կարգավորման Համաձայնագրի 24-րդ հոդվածով սահմանված՝ վեճերի կարգավորման ընթացակարգով (հոդված 8, պարբերություն 4)։

- վերացնել խտրական կամ անարդար գործելակերպի բոլոր ձևերը, որոնք բացասաբար կանդրադառնան մյուս Կողմի՝ օդային փոխադրումների ծառայություններում ներգրավված ընկերություններին՝ օդային փոխադրումների ծառայություններ մատուցելիս մրցակցելու արդարացի և հավասար հնարավորության վրա (հոդված 8, պարբերություն 5)։

- մյուս Կողմի պահանջով ողջամիտ ժամկետում այդ Կողմին տրամադրել ՀՀ իրավազրկության ներքո գտնվող ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները և ցանկացած այլ տեղեկություն, որը

կարող է մյուս Կողմի կողմից ողջամտորեն պահանջվել՝ հավաստիանալու համար, որ Համաձայնագրի 8-րդ հոդվածի դրույթները պահպանվում են (հոդված 8, պարբերություն 8)։

- արդյունավետորեն կիրառել հակամենաշնորհային օրենքները՝ Համաձայնագրի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերությանը համապատասխան, և արգելել ընկերություններին կատարել Համաձայնագրի 8-րդ հոդվածի 10-րդ պարբերությունում շարադրված գործողությունները (հոդված 8, պարբերություն 10)։

- Համաձայնագրի I հավելվածով սահմանված անցումային դրույթներին համապատասխան՝ երաշխավորել, որ ՀՀ համապատասխան օրենսդրությունը, կանոնները կամ ընթացակարգերը համապատասխանում են Համաձայնագրի II հավելվածի Ա մասում նշված՝ օդային փոխադրումներին վերաբերող կանոնակարգային պահանջներին և չափանիշներին (հոդված 9, պարբերություն 1)։

- ապահովել, որ մյուս Կողմի ավիափոխադրողը իրավունք ունենա ՀՀ տարածքում ազատորեն հիմնելու գրասենյակներ և հաստատություններ, որոնք անհրաժեշտ են օդային փոխադրման ծառայությունների մատուցման և օդային փոխադրման ծառայությունների ու այլ հարակից գործունեության խթանման և վաճառքի համար, ներառյալ՝ ՀՀ սեփական կամ ցանկացած այլ ավիափոխադրողի ցանկացած տոմս կամ օդային բեռնագիր վաճառելու և թողարկելու իրավունքը (հոդված 9, պարբերություն 5)։

- երաշխավորել, որ մյուս Կողմի ավիափոխադրողը Հայաստանի Հանրապետության՝ մուտքին, մշտական բնակությանը և զբաղվածությանը վերաբերող օրենքներին ու կանոնակարգերին համապատասխան, իրավունք կունենա ՀՀ տարածք բերելու և պահպանելու կառավարչական, վաճառքի, տեխնիկական, գործառնական և այլ մասնագետներից կազմված անձնակազմ, որոնք պահանջվում են օդային փոխադրման իրականացմանն աջակցելու համար, ինչպես նաև Համաձայնագրի 9-րդ հոդվածի 6-րդ պարբերության համաձայն՝ գրասենյակներում աշխատող անձնակազմի, այդ թվում՝ 90 օրը չգերազանցող ժամկետում որոշակի ժամանակավոր պարտականություններ իրականացնող անձնակազմի համար անհրաժեշտության դեպքում հեշտացնել և արագացնել զբաղվածության թույլտվությունների տրամադրումը՝ գործող համապատասխան օրենքների և կանոնակարգերի համաձայն (հոդված 9, պարբերություն 6)։

- ՀՀ տարածք ժամանելիս մյուս Կողմի ավիափոխադրողների կողմից միջազգային օդային փոխադրումներում շահագործվող օդանավը, դրա

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

մշտական օգտագործման սարքավորումները, վառելիքը, քսայուղերը, սպառվող տեխնիկական միջոցները, վերգետնյա սարքավորումները, պահեստամասերը (ներառյալ՝ շարժիչները), օդանավի պաշարները (ներառյալ՝ սնունդը, խմիչքները և ոգելից խմիչքները, ծխախոտը և այլ ապրանքներ, որոնք նախատեսված են թռիչքի ընթացքում սահմանափակ քանակով ուղևորների կողմից օգտագործման կամ ուղևորներին վաճառքի համար) և միջազգային օդային փոխադրումներում ընդգրկված օդանավի շահագործմանը կամ սպասարկմանն ուղղված կամ միայն այդ նպատակներով օգտագործվող մյուս ապրանքները փոխադարձության սկզբունքով և պայմանով, որ նման սարքավորումները մնում են օդանավում, ազատել բոլոր ներկրման սահմանափակումներից, գույքային հարկերից և կապիտալի գանձումներից, մաքսատուրքերից, ակցիզային հարկերից և համանման հարկերից և տուրքերից, որոնք սահմանվել են ՀՀ մարմինների կողմից և հիմնված չեն մատուցվող ծառայության արժեքի վրա (հոդված 10, պարբերություն 1)։

- Համաձայնագրի 10-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված հարկերից, գանձումներից, պարտավորություններից, տուրքերից և վճարներից, բացի մատուցվող ծառայության արժեքի հիման վրա գանձվող վճարներից, փոխադարձության սկզբունքով ազատել նաև ՀՀ տարածք բերված կամ մատակարարված՝ Համաձայնագրի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված օդանավի պահեստամասերը, սարքավորումները, վառելիքը, քսայուղերը և սպառվող տեխնիկական միջոցները, ինչպես նաև ՀՀ տարածք բերված կամ մատակարարված և օդանավ վերցված տպագիր նյութերը (հոդված 10, պարբերություն 2)։

- հայկական Կողմի տարածքով ուղիղ տարանցմամբ անցնող ուղեբեռը և բեռը ազատել հարկերից, մաքսատուրքերից, վճարներից և այլ նմանատիպ գանձումներից, որոնք հիմնված չեն մատուցվող ծառայության արժեքի վրա (հոդված 10, պարբերություն 7)։

- Համաձայնագրի I հավելվածով սահմանված անցումային դրույթներին համապատասխան՝ ապահովել, որ Հայաստանի Հանրապետությանը վերաբերելի օրենսդրությունը, կանոնները կամ ընթացակարգերը համապատասխանեն II հավելվածի Ա մասում նշված՝ օդային փոխադրումներին վերաբերող կանոնակարգային պահանջներին և չափանիշներին (հոդված 11, պարբերություն 1)։

- ապահովել, որ օգտագործողից գանձումները, որոնք ՀՀ իրավասու մարմինների կամ կառույցների կողմից կարող են սահմանվել մյուս Կողմի ավիափոխադրողների նկատմամբ՝ անրոնավիզացիոն համակարգի օգտագործման և օդային երթևեկության հսկողության համար,

համապատասխան են այդ ծառայությունների սակագներին և լինեն ոչ խտրական, ինչպես նաև ապահովել, որ յուրաքանչյուր դեպքում մյուս Կողմի ավիափոխադրողներից ցանկացած նման գանձում հաշվարկվի ոչ պակաս նպաստավոր պայմաններով, քան ցանկացած այլ ավիափոխադրողի նկատմամբ կիրառվող ամենանպաստավոր պայմանները (հոդված 11, պարբերություն 2)։

- ապահովել, որ օգտագործողից գանձումները, որոնք ՀՀ իրավասու մարմինների կամ կառույցների կողմից կարող են սահմանվել մյուս Կողմի ավիափոխադրողների նկատմամբ՝ օդանավակայանի, ավիացիոն անվտանգության համակարգի և այլ անհրաժեշտ սարքավորումների ու ծառայությունների օգտագործման համար՝ բացառությամբ Համաձայնագրի 9(7) հոդվածում նշված ծառայությունների համար գանձումների, չլինեն անարդարացի խտրական, չլինեն խտրական՝ ազգության հիմքով, և լինեն օգտագործողների կատեգորիաների միջև համամասնորեն բաշխված, ինչպես նաև չսահմանափակելով Համաձայնագրի 16(1) հոդվածը՝ ապահովել, որ օգտագործողից նման գանձումները արտահայտեն, բայց չգերազանցեն գանձում իրականացնող իրավասու մարմինների կամ կառույցների կողմից մատուցվող համապատասխան օդանավակայանային և ավիացիոն անվտանգության սարքավորումների ու ծառայությունների մատուցման դիմաց ամբողջական վճարն այն օդանավակայանում կամ օդանավակայաններում, որտեղ կիրառվում է գանձումների ընդհանուր համակարգ (հոդված 11, պարբերություն 3)։

- ապահովել, որ սարքավորումները և ծառայությունները, որոնց համար օգտագործողներից գանձումներ են իրականացվում, տրամադրվեն արդյունավետությամբ և տնտեսապես հիմնավորված ձևով, ինչպես նաև յուրաքանչյուր դեպքում օգտագործողից նման գանձումները մյուս Կողմի ավիափոխադրողների նկատմամբ կիրառել ոչ պակաս նպաստավոր պայմաններով, քան այդ գանձումների կիրառման պահին գործող՝ ցանկացած այլ ավիափոխադրողի նկատմամբ կիրառվող ամենանպաստավոր պայմանները (հոդված 11, պարբերություն 3)։

- թույլատրել, որ օդային փոխադրման ուղեվարձերը և դրույքներն ազատորեն սահմանվեն Կողմերի ավիափոխադրողների կողմից՝ ազատ և արդար մրցակցության հիման վրա (հոդված 12, պարբերություն 1)։

- համագործակցել մյուս Կողմի հետ՝ ներառյալ Համատեղ կոմիտեի շրջանակներում՝ Համաձայնագրի շրջանակներում օդային փոխադրումների զարգացման մոնիթորինգ իրականացնելու նպատակով

միմյանց միջև վիճակագրական տվյալների փոխանակումը հեշտացնելու համար (հոդված 13, պարբերություն 2).

- ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինները ձեռնարկեն բոլոր համապատասխան և անհապաղ միջոցառումները ցանկացած այն դեպքում, երբ պարզվում է, որ որևէ օդանավ, արտադրանք կամ շահագործում կարող է չհամապատասխանել Կոնվենցիայի համաձայն սահմանված նվազագույն չափանիշներին կամ Համաձայնագրի II հավելվածի Բ մասում նշված՝ օդային փոխադրումների հետ կապված կանոնակարգային պահանջներին և չափանիշներին՝ կախված այն հանգամանքից, թե որն է կիրառելի, առկա են լուրջ կասկածներ, որ որևէ օդանավ կամ օդանավի շահագործում չի համապատասխանում Կոնվենցիայի համաձայն սահմանված նվազագույն չափանիշներին կամ Համաձայնագրի II հավելվածի Բ մասում նշված՝ օդային փոխադրումների հետ կապված կանոնակարգային պահանջներին և չափանիշներին՝ կախված այն հանգամանքից, թե որն է կիրառելի, կամ առկա են լուրջ կասկածներ, որ Կոնվենցիայի համաձայն սահմանված նվազագույն չափանիշները կամ Համաձայնագրի II հավելվածի Բ մասում նշված՝ օդային փոխադրումների հետ կապված կանոնակարգային պահանջները և չափանիշներն արդյունավետորեն չեն պահպանվում և կիրառվում՝ կախված այն հանգամանքից, թե որն է կիրառելի (հոդված 14, պարբերություն 5).

- Համաձայնագրի 14-րդ հոդվածի 5-րդ պարբերությամբ նախատեսված գործողություն ձեռնարկելիս անհապաղ տեղեկացնել մյուս Կողմին՝ ներկայացնելով ՀՀ գործողության պատճառները (հոդված 14, պարբերություն 6).

- քաղաքացիական օդանավերի, դրանց ուղևորների և անձնակազմի անվտանգության ապահովումը համարելով միջազգային օդային փոխադրման ծառայությունների իրականացման հիմնական նախապայման՝ վերահաստատել Կողմերի նկատմամբ ՀՀ պարտավորությունները՝ ապահովելու քաղաքացիական ավիացիայի պաշտպանությունն անօրինական միջամտության գործողություններից, և մասնավորապես ՀՀ պարտավորությունները՝ Կոնվենցիայի, 1963 թվականի սեպտեմբերի 14-ին Տոկիոյում ստորագրված «Օդանավերի մեջ կատարվող հանցագործությունների և որոշակի այլ գործողությունների մասին» կոնվենցիայի, 1970 թվականի դեկտեմբերի 16-ին Հաագայում ստորագրված «Օդանավերի անօրինական զավթման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի, 1971 թվականի սեպտեմբերի 23-ին Մոնրեալում ստորագրված «Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

ուղղված ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին» կոնվենցիայի, 1988 թվականի փետրվարի 24-ին Մոնրեալում ստորագրված «Միջազգային քաղաքացիական ավիացիան սպասարկող օդանավակայաններում բռնության ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին» արձանագրության և 1991 թվականի մարտի 1-ին Մոնրեալում ստորագրված «Պլաստիկ պայթուցիկ նյութերի հայտնաբերման նպատակով դրանց դրոշմադրման մասին» կոնվենցիայի համաձայն այնքանով, որքանով երկու Կողմերն այդ կոնվենցիաների կողմ են, ինչպես նաև համաձայն ավիացիոն անվտանգության հետ կապված այլ կոնվենցիաների և արձանագրությունների, որոնց կողմ են Կողմերը (հոդված 15, պարբերություն 3)։

- պահանջի դեպքում մյուս Կողմին տրամադրել անհրաժեշտ լիարժեք օժանդակություն՝ կանխելու քաղաքացիական օդանավերի անօրինական զավթման գործողությունները և այդ օդանավերի, դրանց ուղևորների և անձնակազմի անդամների, օդանավակայանների և աերոնավիգացիոն սարքավորումների անվտանգության դեմ ցանկացած այլ անօրինական գործողություն և քաղաքացիական ավիացիայի անվտանգությանն ուղղված ցանկացած այլ վտանգ (հոդված 15, պարբերություն 4)։

- ապահովել, որ ՀՀ տարածքում իրականացվեն անօրինական միջամտության գործողություններից քաղաքացիական ավիացիայի պաշտպանության արդյունավետ միջոցառումներ, ներառյալ՝ ուղևորների և նրանց ձեռքի ուղեբեռի զննումը, ուղեբեռի զննումը, ուղևոր չհանդիսացող այլ անձանց, այդ թվում՝ անձնակազմի անդամների և նրանց պարագաների զննումը և անվտանգության վերահսկողությունը, բեռի, փոստի, թռիչքի ընթացքում կիրառվող և օդանավակայանային պարագաների զննումը և անվտանգության վերահսկողությունը, վերահսկելի ու արգելված գոտիների մուտքի վերահսկողությունը, սակայն չսահմանափակվելով դրանով, ինչպես նաև ապահովել, որ այս միջոցառումները համապատասխանեցվեն քաղաքացիական ավիացիայի անվտանգության նկատմամբ սպառնալիքի աճին, և համաձայնել, որ մյուս Կողմի տարածք մուտք գործելիս, այնտեղից մեկնելիս կամ այդ տարածքում գտնվելիս իր ավիափոխադրողներին կարող է ներկայացվել Համաձայնագրի 15-րդ հոդվածի 1-ին և 5-րդ պարբերություններում նշված՝ ավիացիոն անվտանգության վերաբերյալ դրույթները և այդ մյուս Կողմի կողմից պահանջվող՝ անվտանգության վերաբերյալ մյուս դրույթները պահպանելու պահանջ (հոդված 15, պարբերություն 6)։

- օդային երթևեկության կառավարման ոլորտում ապահովել Համաձայնագրի 16-րդ հոդվածի պահանջների կատարումը (հոդված 16)։

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ

- ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները՝ ընդհանուր կամ հատուկ, Համաձայնագրից բխող պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով, և ձեռնպահ մնալ ցանկացած միջոցից, որը կարող է վտանգել Համաձայնագրի նպատակների իրագործումը (հոդված 22, պարբերություն 1)։

- վեճերի լուծման և արբիտրաժի հետ կապված՝ ապահովել Համաձայնագրի 24-րդ հոդվածի դրույթների կատարումը (հոդված 24)։

- օդային տրանսպորտի ոլորտում կամ Համաձայնագրի II հավելվածում նշված հարակից ոլորտում նոր օրենսդրություն ընդունելու կամ ՀՀ գործող օրենսդրությունը փոփոխելու հարցը դիտարկելու դեպքում՝ պատշաճորեն և ըստ հնարավորության ծանուցել մյուս կողմին (հոդված 27, պարբերություն 5)։

- Համաձայնագրի I հավելվածի 1-ին պարբերության մեջ նշված որոշման ընդունման օրվա դրությամբ կիրառել շահագործման լիցենզավորման կանոններ, որոնք, ըստ էության, համարժեք են «Համայնքում օդային փոխադրումների իրականացման միասնական կանոնների մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 1008/2008 (ԵՀ) կանոնակարգի II գլխում պարունակվող կանոններին (հավելված I, պարբերություն 6)։

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**։

1. 2021 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և դրա անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը։

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

18 մարտի 2022 թվականի
ՍԴՈ-1643

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2021 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄՅՈՒՍ
ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՎԻԱՑԻՈՆ ԳՈՏՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
18-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1643 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2021 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և դրա անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի մարտի 18-ի ՍԴՈՒ-1643 որոշմամբ որոշել է, որ 2021 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և դրա անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի մարտի 18-ի ՍԴՈՒ-1643 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով

1/1 (105/1) 2022
ՏԵՂԵՎՈՒԹՅՈՒՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1643 որոշմամբ 2021 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և դրա անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ

ՍԱԳՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

հողվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված

պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:


Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի

մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է փրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«18» մարտի 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 90-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

22 մարտի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Մարդու իրավունքների պաշտպանի,

գործով որպես պատասխանող ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսինյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎՊԳԻՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022 ՏԵՂԵԿԱԳԻՐ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքը (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի մայիսի 25-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2016 թվականի մայիսի 28-ին և ուժի մեջ է մտել 2016 թվականի հունիսի 1-ին:

Սահմանադրական օրենքի՝ «Պատգամավորի թեկնածուների իրավունքները, պարտականությունները և գործունեության երաշխիքները» վերտառությամբ 90-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

«Պատգամավորի թեկնածուի՝ մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ: Առանց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնության՝ նա չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշված հարցի վերաբերյալ որոշում ընդունում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով: Սույն մասով սահմանված դրույթը չի տարածվում մինչև թեկնածու գրանցվելը ձերբակալված կամ կալանավորված քաղաքացիների, ինչպես նաև ձերբակալված անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և նշված անձանց կալանքի ժամկետը երկարաձգելու դեպքերի վրա»:

◆ Սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասը փոփոխությունների և/կամ լրացումների չի ենթարկվել:

Գործի քննության առիթը Մարդու իրավունքների պաշտպանի 2021 թվականի սեպտեմբերի 27-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև Սահմանադրական օրենքը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Դիմողի դիրքորոշումները

Ըստ դիմողի՝ Սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով թեև սահմանված է, որ պատգամավորի թեկնածուի՝ մինչև պատգամավորի լիազորություններ ստանձնելն ընտրված պատգամա-

վորի նկատմամբ քրեական հետապնդման հարուցումը և տվյալ անձանց ազատությունից զրկելը կարող է իրականացվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ, սակայն անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի գործարկման բացակայությունը խնդիրներ է առաջացնում արդար դատաքննության, անձնական ազատության, որոշակիության և սահմանադրական այլ իրավունքների իրացման և սկզբունքների պահպանման տեսանկյունից:

Դիմողը նշում է, որ 2021 թվականի հունիսի 20-ին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին ինչպես նախորդող, այնպես էլ հաջորդող ժամանակահատվածում հարուցվել են մի շարք քրեական գործեր, նախաձեռնվել են քրեական հետապնդումներ խորհրդարանական արտահերթ ընտրություններին՝ որպես պատգամավորության թեկնածու մասնակցող անձանց նկատմամբ:

Դիմողի գնահատմամբ՝ Սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի վիճարկվող 5-րդ մասը կիրառվում է խիստ ձևական մոտեցումներով, որից օգտվում է քրեական հետապնդման մարմինը և կատարում է մարդու սահմանադրական իրավունքները խախտող գործողություններ: Վերոգրյալի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությունը ստանալու համար միևնույն է չկա որևէ ընթացակարգ, անձի համար սահմանված չեն համապատասխան իրավունքներ ու այդ իրավունքներն ապահովելու անհրաժեշտ մեխանիզմներ: Դիմողի եզրահանգմամբ՝ գործող կառուցակարգերի պարագայում օրենքով նախատեսված երաշխիքը կրում է ձևական բնույթ, իսկ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համաձայնության հարցի քննարկման գործընթացը քրեական հետապնդման մարմնի օգտին նախապես կանխորոշված ելքով մեխանիկական աշխատանք է՝ առանց որևէ բովանդակային քննարկման:

Վիճարկվող նորմը, դիմողի կարծիքով, առաջին հերթին խնդիրներ է առաջացնում Սահմանադրության 75-րդ հոդվածի տեսանկյունից: Վկայակոչելով Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ՝ դիմողը փաստում է, որ կառուցակարգերի բացակայությունը խնդիրներ է առաջացնում ոչ միայն անձանց համար՝ իրենց նկատմամբ կիրառման ենթակա նորմերի կանխատեսելիության առումով, այլև համապատասխան կարգավորումները կիրառող մարմնի համար, և որ ամենակարևորն է՝ վերջինս, անկասկած, կարող է հանգեցնել մարդու մի շարք

հիմնարար իրավունքների իրացման անհնարինության և խախտումների: Դիմողն այս համատեքստում արձանագրում է նաև խնդրո առարկա նորմի որոշակիության խնդիր և նկատելով, որ դրանում «(...) իրավունքներն ապահովող երաշխիքների բացակայությունը հանգեցնում է մարդու համար անորոշության իր պաշտպանության հնարավորությունների հարցում, իսկ քրեական հետապնդման մարմինների համար քրեական հետապնդում հարուցելու և կալանավորումը՝ որպես խափանման միջոց ընտրելու կամ որ նույնն է՝ ազատությունից զրկելու համաձայնություն տալու որոշման վարույթի արդյունքների կանխորոշվածության: Գործնականում էլ դա դարձել է ի վնաս անձի և հոգուս քրեական հետապնդման մարմնի կանխորոշվածության»:

Դիմողը նկատում է, որ քրեական հետապնդման մեխանիզմը գործադրելու թույլտվություն տվող մարմնի, կոնկրետ դեպքում՝ ԿԸՀ-ի համար, այդ թույլտվությունը տալու ընթացակարգին վերաբերող կարգավորումները պետք է լինեն հստակ, ճշգրիտ ու արդյունավետ՝ ապահովելով կոնկրետ մարդու իրավունքների լիարժեք երաշխավորումը: Այս առնչությամբ դիմողն արձանագրում է. «Ազատությունից զրկելու հետ կապված էլ թեև պետական մարմինը, կոնկրետ դեպքում՝ ԿԸՀ-ն տալիս է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ նման համաձայնություն, և այն հետագայում որոշվում է դատական կարգով, այնուամենայնիվ հստակ ընթացակարգի բացակայությունը և նորմի անորոշությունը հանգեցնում են անձնական ազատության իրավունքի հետ կապված խնդիրների, չեն ապահովում բավարար նվազագույն երաշխիքներ, որպեսզի մյուս սահմանադրական իրավունքների պահպանմամբ հաղթահարվի երաշխիքային նշանակության կանոնը»:

Դիմողը նշում է նաև, որ քրեական հետապնդում հարուցելու կամ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությունը ստանալու կառուցակարգերի բացակայության պայմաններում անձը որևէ հնարավորություն չունի կողմնորոշվելու, թե «(...) իր նկատմամբ քրեական հետապնդում հարուցվելու դեպքում իրավական ի՞նչ նորմեր են կիրառվելու, ի՞նչ ընթացակարգով, ի՞նչ երաշխիքների գործադրմամբ»: Այս համատեքստում դիմողը նաև նկատում է, որ գոյություն չունի որևէ ատյան, որտեղ անձը կարող է ներկայացնել իր իրավունքների խախտումների մասին պնդումները, հասնել դրանց արդյունավետ քննարկման ու այդ կերպ պաշտպանվել քրեական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

հետապնդման մարմինների՝ իր իրավունքներին միջամտող արարքներից:

Ըստ դիմողի՝ արդար դատաքննության իրավունքը պետք է կիրառելի լինի ԿԸՀ-ի՝ պատգամավորի թեկնածուի անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգի նկատմամբ, քանի որ քրեական հետապնդում հարուցելու կամ ազատությունից զրկելու համաձայնություններով քրեական դատավարություն իրականացնող մարմինների համար բացվում է անձի իրավունքների և շահերի նկատմամբ քրեաիրավական միջամտությունների ճանապարհ:

Բացի դրանից, արձանագրելով, որ ԿԸՀ-ում իրականացվող ընթացակարգի շրջանակներում է, որ պետությունն առաջին անգամ անձին տեղեկացնում է նրա նկատմամբ քրեական հետապնդում սկսելու մտադրության մասին դիմողը նկատում է, որ այդ իրավիճակում առկա է փաստացի քրեական հետապնդում (մեղադրանք), ուստի գտնում է, որ այս պայմաններում անձը պետք է ունենա ԿԸՀ-ում անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգի շրջանակներում մեղադրանքից պաշտպանվելու իրավունք:

Դիմողը նշում է, որ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքներում, սակայն, անձինք, որոնց վերաբերյալ ներկայացվել է միջնորդություն կամ նրանց պաշտպանները «(...)ԿԸՀ վարույթի և քննարկվող հարցի մասին տեղեկանում են տեղում, երբ լսում են միջնորդությունը կամ ժամանակ են խնդրում ծանոթանալու համար գործի նյութերին, կամ քննարկվող հարցի վերաբերյալ մոտավոր պատկերացում են կազմած լինում մամուլի կամ սոցիալական ցանցերի հրապարակումներից», ինչը, դիմողի գնահատմամբ, սկզբունքորեն անթույլատրելի վիճակ է, որով զրոյացվում են արդար դատաքննության հիմնարար բաղադրիչները՝ արձանագրելով, որ՝ «(...)հենց այս փուլում պետք էր դրանք հատկապես ապահովել, քանի որ խոսքը գնում է մարդու կողմից իր նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ ազատությունից զրկելու մտադրության ու հիմքերի մասին տեղեկացվելուն»:

Դիմողը, վերլուծելով մի շարք միջազգային իրավական փաստաթղթեր, մասնավորապես՝ Եվրոպական միության Հիմնարար իրավունքների մասին խարտիան, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2007 թվականի հունիսի 20-ի «Լավ վարչարարության մասին» թիվ Rec(2007)7 հանձնարարականը, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1977 թվականի սեպտեմբերի 28-ի «Վարչական մարմինների ակտերի առնչությամբ անհատի պաշտպանության վերաբերյալ» թիվ 77

(31) բանաձևը և այլն, ինչպես նաև Սահմանադրության 50-րդ հոդվածը, ՍԴՈ-1529 որոշմամբ պատշաճ վարչարարության իրավունքի բաղկացուցիչ տարր՝ անձի լսված լինելու իրավունքի վերաբերությամբ Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումը, եզրահանգում է. «(...) քրեական վարույթի շրջանակում մարդու իրավունքների նկատմամբ պետության միջամտության թույլտվությանը կամ իրավունքների սահմանափակումներին առնչվող լուծումներն ինքնանպատակ չեն, դրանց նպատակը կողմերի դիրքորոշումներն ու առարկությունները լսելն է և միայն դրանից հետո լուծումների ընթացքում հնչեցված դիտարկումների հաշվառմամբ՝ որոշման կայացումը»:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ դիմողը խնդրում է որոշել Օրենսգրքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրությանը «(...) այնքանով, որքանով սահմանված չեն մարդու նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությունն ստանալու պատշաճ կառուցակարգեր և ընթացակարգային նորմեր, ինչը հանգեցնում է մարդու սահմանադրական իրավունքների խախտման»:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը, վերլուծելով Սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասը, Սահմանադրության 27-րդ հոդվածը, նկատում է, որ Սահմանադրության նշված հոդվածը երաշխավորում է անձի անձնական ազատության իրավունքը, իսկ Սահմանադրական օրենքի վիճարկվող դրույթը վերաբերում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից պատգամավորի թեկնածուի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ վերջինիս ազատությունից զրկելուն համաձայնություն տալուն: Պատասխանողը նկատում է, որ անգամ ԿԸՀ-ի կողմից պատգամավորի թեկնածուին ազատությունից զրկելու համաձայնություն տալը «(...) ինքնին անմիջականորեն չի հանգեցնում վերջինիս անձնական ազատության սահմանափակմանը (...)», ուստիև պատասխանողը եզրակացնում է, որ Սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանադրականության հարց Սահմանադրության 27-րդ հոդվածին հակասելու համատեքստում չի կարող քննարկվել:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

Բացի դրանից, պատասխանողը, վերլուծելով ԿԸՀ-ի՝ պատգամավորի թեկնածուին անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգի շրջանակներում կայացված որոշումները, արձանագրում է.

«ա) Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարցը քննարկելուց առաջ այդ մասին տեղեկացրել է պատգամավորի թեկնածուին, պատգամավորի թեկնածուն և նրա շահերը ներկայացնող փաստաբանները մասնակցել են նիստին, միջնորդել են տրամադրել ժամանակ՝ նյութերին ծանոթանալու համար, ինչը բավարարվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից, նիստն ընդմիջվել է և տրվել է բավարար ժամանակ (143-Ա, 144-Ա, 141-Ա, 142-Ա, 190-Ա, 191-Ա, 192-Ա որոշումներ),

բ) Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարցը քննարկելուց առաջ այդ մասին տեղեկացրել է պատգամավորի թեկնածուին, պատգամավորի թեկնածուն հրաժարվել է մասնակցել նիստին, նիստին ներկայացել են վերջինիս փաստաբանները, միջնորդել են տրամադրել ժամանակ՝ նյութերին ծանոթանալու համար, ինչը բավարարվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից, նիստն ընդմիջվել է և տրվել բավարար ժամանակ (164-Ա, 165-Ա, 170-Ա, 171-Ա),

գ) Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարցը քննարկելուց առաջ այդ մասին տեղեկացրել է պատգամավորի թեկնածուին, նիստին մասնակցել է պատգամավորի թեկնածուի փաստաբանը (166-Ա, 167-Ա),

դ) Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարցը քննարկելուց առաջ այդ մասին տեղեկացրել է պատգամավորի թեկնածուին, նիստին հրաժարվել է մասնակցել թե՛ պատգամավորի թեկնածուն, թե՛ վերջինիս փաստաբանը (162-Ա, 163-Ա),

ե) Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարցը քննարկելուց առաջ այդ մասին տեղեկացրել է պատգամավորի թեկնածուին, չնայած ծանուցված լինելուն՝ պատգամավորի թեկնածուն չի ներկայացել նիստին (186-Ա, 187-Ա)»:

Կատարված արձանագրման հիման վրա՝ պատասխանողը եզրահանգում է, որ թեև պատգամավորի թեկնածուին անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգում առկա է օրենսդրական բաց, սակայն դա չի խոչընդոտում անձի այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությանը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ պատասխանողը գտնում է, որ իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը, ուստի Սահմանադրական դատարանին խնդրում է որոշում ընդունել՝ Սահմանադրական օրենքի

1/1 (105/1) 2022
 ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ♦ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին:

3. Գործի շրջանակներում պարզաբանման ենթակա հանգամանքները

Ելնելով դիմումում ներկայացված հարցի և այն հիմնավորող փաստարկների իրավական բովանդակությունից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողն ըստ էության բարձրացնում է պատգամավորի գրանցված թեկնածուին, ինչպես նաև մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հետ կապված հարցադրումներ, որոնք առնչվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հարցի քննության և լուծման գործընթացում այդ անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովման հետ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները Սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Սահմանադրական դատարանը կաշկանդված չէ սահմանադրական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, բացատրություններով, միջնորդություններով, առաջարկություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար»:

Ուստի սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

ա) արդյո՞ք պատգամավորի թեկնածուի՝ Սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված անձեռնմխելիությունը կարող է հանդես գալ որպես անձի սահմանադրական պասիվ ընտրական իրավունքի արդյունավետ իրացման միջոց, և ի՞նչ երաշխիքներով պետք է ապահովվի այդ գործընթացի ընդհանուր օբյեկտիվությունը,

բ) արդյո՞ք վիճարկվող իրավակարգավորմամբ նախատեսված պատգամավորի թեկնածուի անձեռնմխելիությամբ ապահովվելը կարող է խնդրահարույց լինել այլ անձանց հիմնական իրավունքների և հանրային-իրավական այլ շահերի պաշտպանության ապահովման տեսանկյունից, և եթե այո, ապա այդ դեպքում անձեռնմխելիությունից զրկելու

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

գործընթացի շրջանակներում ի՞նչ կերպ է հնարավոր ապահովել բախվող տարբեր շահերի հավասարակշիռ պաշտպանությունը,

գ) արդյո՞ք Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգի շրջանակներում լուծվող հարցերը կարող են նույնանալ քրեական վարույթի հանրային մասնակիցների, նաև դատարանի կողմից լուծվող հարցերի հետ:

Ուստի նշված հարցադրումները հիմք ընդունելով և ելնելով գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու ընդհանուր սկզբունքից՝ Սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող դրույթները, այդ թվում՝ ձևավորված իրավակիրառական պրակտիկան, քննության է առնում Սահմանադրության 48-րդ և 75-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրական օրենքի վիճարկվող իրավակարգավորումներով Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուի կարգավիճակ ունեցող անձն օժտվել է անձեռնմխելիությամբ, այն է՝ պատգամավորի թեկնածուի՝ մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ:

Օրենսդրի կողմից պատգամավորի թեկնածուի կարգավիճակ ունեցող անձանց նման անձեռնմխելիությամբ օժտելը նախևառաջ նպատակ ունի այդ անձանց բնականոն և արդյունավետ գործունեությունը երաշխավորելու, ինչպես նաև այդ անձանց պաշտպանելու նրանց իրավունքներին ու պարտականություններին ոչ իրավաչափ միջամտություններից և անհիմն հետապնդումներից:

Միևնույն ժամանակ, վիճարկվող իրավակարգավորումների բովանդակությունից հետևում է, որ՝

ա) անձեռնմխելիությունը ինչպես Ազգային ժողովի պատգամավորի գրանցված թեկնածուի, այնպես էլ մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորի համար միասնական է,

բ) այդ անձանց համար անձեռնմխելիությունն ունի հաղթահարման միասնական ընթացակարգ, այն է՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնության առկայությամբ կարող է հարուցվել քրեական հետապնդում:

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՊԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Միաժամանակ, Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուին Սահմանադրական օրենքով անձեռնմխելիությամբ վերապահելն անհրաժեշտ է դիտարկել սահմանադրական կարգավորումների համատեքստում:

Այսպես՝ Սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ: Ընդ որում՝ ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի ուժով Հայաստանի Հանրապետությունն ունի (քացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի) իր քաղաքացիների որոշ սահմանադրաիրավական պայմանների առկայության պարագայում ընտրելու և ընտրվելու իրավունքն ապահովելու պարտականություն:

Միաժամանակ, Սահմանադրության 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Նույն հոդվածի 2-րդ մասի ուժով՝ Ազգային ժողովի պատգամավոր ընտրվելու իրավունքով օժտված է քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

Սահմանադրության հիշատակված հոդվածի 4-րդ մասով սահմանվում է նաև, որ ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

Սահմանադրական այս կարգավորումների համատեքստում անդրադառնալով պասիվ ընտրական իրավունքի նյութական և ընթացակարգային (վարութային) ասպեկտներին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է. եթե նյութական ասպեկտը ներառում է որպես թեկնածու գրանցման և ընտրական գործընթացներին արդյունավետ կերպով մասնակցելու հնարավորությունների հավասարությունը, օրինակ, ընտրարշավի անկաշկանդ իրականացումը, խոսքի և արտահայտվելու

ազատության երաշխավորումը, ապա երկրորդը՝ ընթացակարգային ասպեկտը, ապահովում է ընտրական նյութական իրավունքների սահմանափակման հարցերի վերաբերյալ իրավասու մարմինների կողմից որոշում կայացնելու գործընթացի իրավաչափությունն ու օբյեկտիվությունը՝ հաշվի առնելով՝ պահպանվել են արդյոք թեկնածուի իրավունքները:

Ընդ որում՝ վերոնշյալ գործընթացի օբյեկտիվությունը մի կողմից՝ ապահովվում է ինստիտուցիոնալ առումով՝ որոշում կայացնող համապատասխան մարմնի, մասնավորապես, կոնկրետ դեպքում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ քաղաքական իշխանությունից անկախությունն ապահովելով (թերևս նաև հենց այս լույսի ներքո պետք է դիտարկել Սահմանադրությամբ երաշխավորված Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անկախությունը (Սահմանադրության 194-րդ հոդված)), ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներին քաղաքական այլ ազդեցություններից զերծ պահելու հրամայականի կենսագործմամբ (այս առնչությամբ պատահական չէ Սահմանադրության 195-րդ հոդվածի 5-րդ մասի այն պահանջը, ըստ որի՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ, իսկ հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն):

Բացի դրանից, Ազգային ժողովի պատգամավորի գրանցված թեկնածուի կամ մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ համաձայնություն տալու հարցի քննության և լուծման գործընթացում այդ անձանց ընտրվելու իրավունքի արդյունավետ պաշտպանության ապահովման առումով անհրաժեշտ է, որ պահպանվեն ընթացակարգային որոշակի երաշխիքներ, որոնցով ապահովվում է ընտրվելու նյութական իրավունքի սահմանափակման հարցի քննարկման գործընթացին ընտրվելու իրավունքի կրողի կողմից՝ իր ընտրական նյութական իրավունքների արդյունավետ պաշտպանության իրացումը:

Մասնավորապես, ընտրական գործընթացի տվյալ սուբյեկտի կողմից նման վարույթներում իր ընտրվելու իրավունքի արդյունավետ պաշտպանության ապահովման առումով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, որ օրենսդրական զարգացումներն ընթանան այն տրամաբանությամբ, որ երաշխավորվի՝

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

ա) տվյալ գործընթացին անձի մասնակցությունը. այս առումով, անձի մասնակցության ապահովման համար անհրաժեշտ է անձին տեղեկացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովում նման վարույթի հարուցման մասին,

բ) ընձեռվի ընտրվելու իրավունքի սահմանափակումը հիմնավորող նյութերին ծանոթանալու հնարավորություն՝ հաշվի առնելով նաև օրենքով պահպանվող գաղտնիք պարունակելու դեպքում նյութերին ծանոթանալու օբյեկտիվ սահմանափակման հնարավորությունը: Նյութերին ծանոթանալու իրավունքի ապահովման առումով անհրաժեշտ է, որ նշված անձինք ունենան որոշակի ողջամիտ ժամկետներ՝ իրենց խնդրո առարկա իրավունքը արդյունավետ իրացնելու համար,

գ) ապահովվի անձի լսված լինելու իրավունքը. այդ կերպ հնարավոր կլինի զուգակցել մասնավոր և հանրային շահերի արդյունավետ պաշտպանությունը, մի կողմից՝ ապահովելով անձի մասնավոր շահը՝ նրան տալով իր ընտրական իրավունքների պաշտպանության լիարժեք հնարավորություն, մյուս կողմից՝ հանրային շահը, անձին լսելով՝ ապահովել նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ նշված գործընթացի շրջանակներում անձի ընտրվելու իրավունքի սահմանափակման հիմք հանդիսացող փաստական հանգամանքները պատշաճ կերպով բացահայտելու և բազմակողմանի գնահատելու հնարավորությունը, դրանով իսկ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նշված հարցի վերաբերյալ օբյեկտիվ, հիմնավոր որոշման կայացումը:

4.2. Սահմանադրական օրենքի «Պատգամավորի թեկնածուի կարգավիճակը» վերտառությամբ 15-րդ գլխի 90-րդ հոդվածով սահմանվում են պատգամավորի թեկնածուի իրավունքները, պարտականությունները և գործունեության երաշխիքները, այդ թվում նաև՝ պատգամավորի թեկնածուի անձեռնմխելիությունը (Օրենսգրքի 90-րդ հոդվածի 5-րդ մաս), որով վերջինիս տրամադրվում է պաշտպանություն քրեական հետապնդման հարուցումից և ազատությունից զրկելու դեպքերի համար:

Այդ հիմնավորմամբ պայմանավորված՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրական օրենքի վիճարկվող դրույթներով նախատեսված՝ պատգամավորի թեկնածուի անձեռնմխելիությունը հանդիսանում է Սահմանադրության 48-րդ հոդվածով երաշխավորված անձի ընտրվելու (պասիվ ընտրական իրավունքի) իրավունքի արդյունավետ իրացման երաշխիք՝ ապահովելով

պատգամավորի թեկնածուի գործունեության կապակցությամբ քաղաքականապես մոտիվացված քրեական հետապնդման հարուցումից, ինչպես նաև ազատությունից զրկվելու հնարավորության բացառումը՝ անձեռնմխելիությամբ տրվող պաշտպանությունը հաղթահարելու (դրանից զրկելու) հնարավորություն վերապահելով քաղաքական իշխանությունից և քրեական հետապնդման մարմիններից անկախ մարմին՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Ազգային ժողովի (ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների) ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու իրավունքը, լինելով ընտրողի սահմանադրական կարգավիճակի տարր, միաժամանակ և հանդիսանում է հանրային-իրավական ինստիտուտ, այն է՝ ազատ ընտրությունների տարր (Սահմանադրության 2-րդ հոդված), դրանում մարմնավորվում է ինչպես պետության գործերի կառավարմանը անմիջական մասնակցություն ունենալու կոնկրետ քաղաքացու մասնավոր շահը, այնպես էլ հանրային շահը, որն իրացվում է ընտրությունների արդյունքների հիման վրա հանրային իշխանության ինքնուրույն և անկախ մարմինների ձևավորմամբ, որոնք կոչված են իրենց գործունեությամբ երաշխավորելու մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները Հայաստանի Հանրապետությունում՝ իրականացնելով պետության և հանրության գործերի արդյունավետ և պատասխանատու կառավարում:

Հիշյալ արձանագրումից **Սահմանադրական դատարանը փաստում է, որ ընտրվելու իրավունքի արդյունավետ իրացման երաշխիքները և, մասնավորապես, կոնկրետ դեպքում՝ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուի անձեռնմխելիությունը, ունեն նաև հանրային-իրավական նշանակություն. դրանք ուղղված են ոչ միայն անձի մասնավոր շահի, այլ նաև հանրային շահի պաշտպանության ապահովմանը:**

4.3. Սահմանադրական դատարանը, անդրադառնալով պատգամավորի թեկնածուի անձեռնմխելիության՝ որպես պասիվ ընտրական իրավունքի արդյունավետ իրացումն ապահովող օրենքով սահմանված միջոցի՝ այլ անձանց հիմնական իրավունքների և հանրային-իրավական այլ շահերի խնդրահարույց լինելու հարցադրմանը, արձանագրում է.

առաջին, այդպիսի անձեռնմխելիությունն իր բնույթով բացառիկ է, որը օրենսդրական ներկա կարգավորման պայմաններում կարող է հանգեցնել հանրային այլ շահի (հանցագործությունների կանխման ու բացահայտման) և հանցանքից տուժողների դատական պաշտպա-

1/1 (105/1) 2022
 ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

նության և արդար դատաքննության իրավունքների (Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներ) վտանգմանը: Մասնավորապես, օրենսդիրը չի որոշակիացրել այն հանցագործությունների շրջանակը, որոնցով պատգամավորի թեկնածուի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելիս անհրաժեշտ է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությունը, ուստիև նման կարգավորման պայմաններում անձեռնմխելիությունը տարածվում է, ըստ էության, բոլոր հանցագործությունների համար քրեական հետապնդման հարուցման դեպքերի վրա՝ անկախ դրանց ծանրությունից և առանց հանցագործությունների շրջանակի որևէ սահմանափակման:

Երկրորդ, օրենսդրությամբ նախատեսված չէ հստակ որոշակիացված և օբյեկտիվ որևէ չափանիշ և հիմք, որի հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետք է որոշում կայացնի պատգամավորի թեկնածուին անձեռնմխելիությունից զրկելու հարցով:

Երրորդ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն չտալու մասին որոշման կայացման դեպքում այդ որոշումը, հաշվի առնելով օրենսդրության մեջ այդպիսի որոշման իրավական հետևանքների ժամանակային սահմանափակման բացակայության, ինչպես նաև այդպիսի որոշման կայացման դեպքում դրա հետևանքները հաղթահարելու և քրեական հետապնդման հարուցման և վարույթի հետագա ընթացքն ապահովելու հստակ կառուցակարգեր նախատեսված չլինելու հանգամանքը, պատգամավորի թեկնածուի՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունը չհաղթահարելու պարագայում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նման համաձայնություն չտալու որոշման դեպքում քրեական հետապնդումը (վարույթը) փաստացի կարող է ընդհանրապես անհնարին դառնալ:

Չորրորդ, հաշվի առնելով կուսակցությունների թվի սահմանափակման բացակայությունը՝ տեսականորեն նույնիսկ Սահմանադրական օրենքի 83-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի առաջին մասում ոչ պակաս, քան 80, և ոչ ավելի, քան 300 թեկնածու ընդգրկված լինելու սահմանափակումն իր հերթին չի խոչընդոտում, որ առաջանա այնպիսի իրավիճակ, երբ որոշակի անձանց ահռելի խումբ, առաջադրվելով իբրև պատգամավորի թեկնածու, ձեռք բերի օրենսդրորեն այդչափ լայն սահմանված պատգամավորի թեկնածուներին շնորհված անձեռնմխելիություն:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Վերոշարադրյալի կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրական այդպիսի կարգավորումների առկայության պայմաններում պատգամավորների թեկնածուների անձեռնմխելիությամբ մեծանում են մի կողմից՝ պատգամավորի թեկնածուների անձեռնմխելիության չարաշահման, մյուս կողմից՝ հանցանքից տուժողների իրավունքների ու օրինական շահերի խախտման ռիսկերը՝ վտանգելով հանցանքից տուժողների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը (Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներ), ինչպես նաև արգելակելով (անհնարին դարձնելով) հանցագործությունների կանխումն ու բացահայտումը:

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված անձեռնմխելիության բազմազանությունը ու, մասնավորապես, նաև պատգամավորների թեկնածուներին վերապահված անձեռնմխելիությունը ժամանակին դարձել են մի շարք միջազգային հեղինակավոր կազմակերպությունների մտահոգությունների առարկա:

Մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի կազմում գործող Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը (Group of States against corruption (GRECO)), մտահոգություն հայտնելով Հայաստանի Հանրապետությունում առկա բազմաթիվ անձանց խմբերին վերապահված անձեռնմխելիությունների վերաբերյալ, իր զեկույցներից մեկում Հայաստանի Հանրապետությանն առաջարկել էր քննարկել անձանց որոշակի խմբերի, այդ թվում նաև՝ պատգամավորի թեկնածուների անձեռնմխելիությունը վերացնելու հարցերը¹: Իր հերթին, Եվրոպայի խորհրդի «ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Վենետիկի հանձնաժողով) CDL-AD(2008)024 կարծիքում նկատել է, որ՝ «(...) որոշ առավելություններ կամ անձեռնմխելիություններ, որոնք առկա են Հայաստանի Հանրապետությունում երբեմն ժամանակավոր, երբեմն էլ երկար կամ անսահմանափակ ժամանակով, կարող են մարդկանց քննությունից և արդարադատությունից խուսափելու հնարավորություն տալ» (կետեր 35, 38), միաժամանակ արձանագրելով, որ «(...) այդ անձեռնմխելիության որոշ տեսակներ, այդ թվում նաև՝ պատգամավորի թեկնածուներին տրվող

¹ St' u Evaluation Report on Armenia, adopted by GRECO at its 27th Plenary Meeting (Strasbourg, 6-10 March 2006; Greco Eval I-II Rep (2005) 2E), կետ 56 (<https://rm.coe.int/16806c2abf>):

անձեռնմխելիությունը, արդարացված չեն ու կարող են հանգեցնել չարաշահումների» (կետ 38)¹:

4.4. Վերոգրյալի հիման վրա՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգավորումը խիստ նեղ մեկնաբանություն և կիրառություն պետք է ստանա. այդպիսով հնարավոր կլինի, խուսափելով Սահմանադրական օրենքով պատգամավորի թեկնածուին վերապահված անձեռնմխելիության չարաշահումներից և կանխելով դրանց՝ անձի անձնական արտոնության վերաճումը, անձեռնմխելիությունը ծառայեցնել իր նպատակային նշանակությանը, միաժամանակ նաև ապահովել այլ անձանց, մասնավորապես՝ հանցագործություններից տուժած անձանց հիմնական իրավունքների ու օրինական շահերի, հանցագործությունների կանխման ու բացահայտման հանրային շահի պաշտպանությունը:

Մասնավորապես, պատգամավորի թեկնածուին անձեռնմխելիությունից զրկելու հարցի քննարկման շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, չկրկնօրինակելով քրեական վարույթի հանրային մասնակիցների, նաև դատարանների գործառույթները, այդպիսով իսկ ապահովելով իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի կենսագործումը (Սահմանադրության 4-րդ հոդված), մի կողմից՝ չքննարկելով հարցեր, որոնք կվտանգեն անձի անմեղության կանխավարկածը (Սահմանադրության 66-րդ հոդված), մյուս կողմից՝ պետք է քրեական հետապնդման հարուցմամբ և/կամ ազատազրկմամբ (կալանավորմամբ) պատգամավորի թեկնածուի պասիվ ընտրական նյութական իրավունքի փաստացիորեն սահմանափակումից առաջ, պահպանելով պատգամավորի թեկնածուին անձեռնմխելիությունից զրկելու գործընթացի օբյեկտիվությունը (պասիվ ընտրական իրավունքի ընթացակարգային ասպեկտ) և ապահովելով սույն որոշման մեջ նշված ընթացակարգային երաշխիքները, պատասխանի հարցին, թե պատգամավորի թեկնածուի նկատմամբ քրեական հետապնդման հարուցումը և/կամ նրան ազատությունից զրկումը (կալանավորումը) ունի՞ արդյոք քաղաքական դրդապատճառներ, և արդյո՞ք դրանցով հետապնդվում կամ կարող է հետապնդվել անձի պասիվ ընտրական իրավունքի արդյունավետ իրացմանը խոչընդոտելու նպատակ:

¹ Տե՛ս [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2008\)024-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2008)024-e):

Վերոշարադրյալի լույսի ներքո Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մի դեպքում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ որպես Ազգային ժողովի ընտրությունների օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող անկախ մարմին, պետք է պատգամավորի թեկնածուին չզրկի անձեռնմխելիությունից՝ ապահովելով վերջինիս՝ Սահմանադրության 48-րդ հոդվածով երաշխավորված՝ պասիվ ընտրական իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իսկ մեկ այլ դեպքում, հակառակը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետք է որոշում կայացնի պատգամավորի թեկնածուի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելը և/կամ ազատությունից զրկելը (կալանավորումը) թույլատրելու մասին՝ այդպիսով ապահովելով մասնավոր և հանրային այլ շահերի պաշտպանության հնարավորությունը:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև ընդգծել, որ նման պայմաններում անձի պասիվ ընտրական նյութական իրավունքները քրեական հետապնդման հարուցմամբ և, հատկապես նրան ազատությունից զրկելով (կալանավորելով), թեև փաստացիորեն կարող են որոշակիորեն սահմանափակվել, սակայն, անձը դրանով չի զրկվում իր ընտրվելու իրավունքից ընդհանրապես, հետևաբար՝ մասնավոր և հանրային այլ շահերի ապահովման նկատառումներից ելնելով՝ պասիվ ընտրական իրավունքի հնարավոր փաստացի սահմանափակումները չեն կարող դիտարկվել իբրև այդ իրավունքի բուն էությունը խաթարող:

Վերը բացահայտվածի համատեքստում **Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պատգամավորի թեկնածուին անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգի շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից լուծվող հարցերի բնույթից էլ ինքնին բխում է, որ պատգամավորի թեկնածուի անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգի շրջանակներում տեղ չեն գտնում և չեն կարող տեղ գտնել քրեական մեղադրանքի, (հետևաբար նաև) պաշտպանության գործառույթները:**

4.5. Սույն գործով սահմանադրաիրավական վեճի լուծման նպատակով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ անձի պասիվ ընտրական իրավունքի արդյունավետ իրականացման հետ կապված մի շարք վերաբերելի իրավակարգավորումներին և դրանց առնչությամբ ձևավորված իրավակիրառական պրակտիկային:

Սահմանադրական օրենքով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ պատգամավորի թեկնածուին անձեռնմխելիությունից զրկելու համաձայնություն տալու վարույթների հետ կապված որևէ կանոնակարգում նախատեսված չլինելով պայմանավորված՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշված հարցի քննարկումը «իրականացրել է վարչական վարույթի վերաբերյալ Ընտրական օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդհանուր կանոնակարգումներով»: Ընդ որում՝ գործում առկա նյութերի, այդ թվում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից պատգամավորի թեկնածուին անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգի շրջանակներում կայացված 2020 թվականի թիվ 143-Ա, 144-Ա, 141-Ա, 142-Ա, 190-Ա, 191-Ա, 192-Ա և այլ որոշումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ՝

ա) Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարցը քննարկելուց առաջ այդ մասին տեղեկացրել է պատգամավորի թեկնածուին,

բ) պատգամավորի թեկնածուն և նրա շահերը ներկայացնող փաստաբանները մասնակցել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստին, միջնորդել են տրամադրել ժամանակ՝ նյութերին ծանոթանալու համար, ինչը բավարարվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից, նիստն ընդմիջվել է, և տրվել է ժամանակ,

գ) պատգամավորի թեկնածուն և նրա շահերը ներկայացնող փաստաբանները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստում միջնորդել են տրամադրել ժամանակ՝ նյութերին ծանոթանալու համար, ինչը բավարարվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից, նիստն ընդմիջվել է և տրվել է ժամանակ և այլն:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը հարկ է համարում նկատել, որ գործում առկա նյութերի շրջանակում 2021 թվականի նոյեմբերի 25-ին Սահմանադրական դատարանին հասցեագրված 01-1185 թվակիր գրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հավաստել է այն մասին, որ՝ «(...) Կենտրոնական ընտրական հանձնաժողովում պատգամավորի թեկնածուի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների քննարկման օրվա և ժամի մասին հանձնաժողովի համացանցային կայքում տեղեկություն տեղադրելու միջոցով, ինչպես նաև հեռախոսազանգի միջոցով ծանուցվել են ինչպես միջնորդություն ներկայացրած իրավասու անձինք, այնպես էլ պատգամավորի թեկնածուն կամ նրա ներկայացուցիչը (փաստաբանը):

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

Վարչական վարույթի մասնակիցներին, ցանկության դեպքում, հնարավորություն է ընձեռնվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ծանոթանալու վարչական վարույթի նյութերին՝ այդ վարույթով հրավիրված նիստից առաջ: Եթե վարչական վարույթի մասնակիցները ցանկություն են հայտնել ծանոթանալու վարչական վարույթի նյութերին արդեն իսկ սկսված նիստի ընթացքում, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը քննարկել է նման միջնորդությունը և բոլոր վարույթներով այն բավարարել է՝ ընդմիջելով նիստը և հնարավորություն տալով ծանոթանալու վարչական վարույթի նյութերին, կատարելու դրանից քաղվածքներ և պատճենահանելու դրանք»:

Սահմանադրական դատարանը, միաժամանակ գնահատելով իրավակիրառական պրակտիկան, արձանագրում է, որ ընդհանուր առմամբ, այն զարգացել է սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումներին համահունչ տրամաբանությամբ, այն է՝ պատգամավորի թեկնածուներն ունեցել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովում անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգին մասնակցելու հնարավորություն, նրանց տրվել է նյութերին ծանոթանալու իրավունք և նշված ընթացակարգի շրջանակներում ապահովվել է լսվելու իրավունքը:

Բացի դրանից, անգամ անձեռնմխելիությունից զրկվելու պարագայում պատգամավորի թեկնածուները չեն զրկվել պասիվ ընտրական իրավունքից, հետևաբար՝ քրեական հետապնդման հարուցմամբ և/կամ պատգամավորի թեկնածուների ազատությունից զրկմամբ (կալանավորմամբ) պատգամավորի թեկնածուների պասիվ ընտրական իրավունքի հնարավոր փաստացի սահմանափակումները չեն կարող համարվել իբրև ընտրական իրավունքի բուն էությունը խաթարող:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 170-րդ հոդվածը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը Սահմանադրական դատարանի հետևյալ մեկնաբանությամբ, որ՝

Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուի՝ մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում համաձայնություն տալու հարցի քննության և լուծման գործընթացում այդ անձանց ընտրվելու իրավունքի արդյունավետ պաշտպանության ապահովման առումով անհրաժեշտ է, որ՝

- ա) երաշխավորվի տվյալ գործընթացին անձի մասնակցությունը,
- բ) ապահովվի անձի լաված լինելու իրավունքը,

գ) անձին ընձեռվի ընտրվելու իր իրավունքի սահմանափակումը հիմնավորող փաստաթղթերին և նյութերին ծանոթանալու, հարցեր տալու, առարկություններ ներկայացնելու, բացատրություններ տալու և միջնորդություններ ներկայացնելու հնարավորություն:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

22 մարտի 2022 թվականի
ՍԴՈ - 1644

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 90-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-Ի ՍԴՈՒ-1644 ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի մարտի 22-ի ՍԴՈՒ-1644 որոշմամբ (իրապարակվել է 2022 թվականի մարտի 25-ին) որոշել է.

«1. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը Սահմանադրական դատարանի հետևյալ մեկնաբանությամբ, որ՝

Ազգային ժողովի պարզամավորի թեկնածուի՝ մինչև պարզամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պարզամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում համաձայնություն տալու հարցի քննության և լուծման գործընթացում այդ անձանց ընտրվելու իրավունքի արդյունավետ պաշտպանության ապահովման առումով անհրաժեշտ է, որ՝

- ա) երաշխավորվի տվյալ գործընթացին անձի մասնակցությունը,**
- բ) ապահովվի անձի լաված լինելու իրավունքը,**
- գ) անձին ընձեռվի ընտրվելու իր իրավունքի սահմանափակումը հիմնավորող փաստաթղթերին և նյութերին ծանոթանալու, հարցեր տալու, առարկություններ ներկայացնելու, բացատրություններ տալու և միջնորդություններ ներկայացնելու հնարավորություն (...):»:**

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի մարտի 22-ի ՍԴՈՒ-1644 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ

դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ իմ հատուկ կարծիքը՝ որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

1. Գտնում եմ, որ նախքան քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում համաձայնություն տալու հարցի քննության և լուծման գործընթացի շրջանակում համապատասխան անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովմանը վերաբերող հարցերը քննարկելը Սահմանադրական դատարանը վիճարկվող դրույթի սահմանադրականությունը պետք է գնահատեր այն տեսանկյունից, թե ովքեր են օգտվում այդ դրույթով նախատեսված երաշխիքից:

Սույն գործով վիճարկվող դրույթով սահմանված անձեռնմխելիությամբ օժտված անձանց շրջանակի վերաբերյալ Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1644 որոշմամբ արձանագրել է, որ վիճարկվող իրավակարգավորման համաձայն՝ անձեռնմխելիությունը ինչպես Ազգային ժողովի պատգամավորի գրանցված թեկնածուի, այնպես էլ մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորի համար միասնական է (որոշման 10-րդ էջ):

Գտնում եմ, որ վերոգրյալ դատողությունը չի բխում սույն գործով վիճարկվող՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասից հետևյալ պատճառաբանությամբ.

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ **պատգամավորի թեկնածուի՝ մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ** քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ: Առանց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնության՝ նա չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշված հարցի վերաբերյալ որոշում ընդունում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով: Սույն մասով սահմանված դրույթը չի տարածվում մինչև թեկնածու գրանցվելը ձերբակալված կամ կալանավորված քաղաքացիների, ինչպես նաև ձերբակալված անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և նշված անձանց կալանքի ժամկետը երկարաձգելու դեպքերի վրա»:

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՂԱՏՄՈՎԱՆ

Փաստորեն, օրենսդիրը վիճարկվող դրույթով նախատեսված երաշխիքը տարածել է «պատգամավորի թեկնածուի՝ մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորի» վրա: Ընդ որում, քննարկվող դրույթը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ անձը ձերբակալվել կամ կալանավորվել է մինչև թեկնածու գրանցվելը: Հետևաբար անհրաժեշտ է պարզել, թե, ըստ գործող իրավակարգավորումների, որ անձինք են համապատասխանում վերը նշված բնորոշմանը և օգտվում վիճարկվող դրույթով ամրագրված երաշխիքից:

Այսպես՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 91-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ **«պատգամավորի թեկնածուն իր կարգավիճակը ձեռք է բերում ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցման պահից:**

Սույն օրենսգրքով սահմանված իրավունքները և պարտականությունները **պատգամավորի թեկնածուի վրա տարածվում են մինչև Ազգային ժողով ընտրվելու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման վիճարկման համար սահմանված ժամկետի ավարտը, իսկ այդ որոշման վիճարկման դեպքում՝ մինչև սահմանադրական դատարանի որոշում ընդունելը (...):**

Միաժամանակ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 100-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուներին մանդատների տրամադրումն իրականացվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի արձանագրությամբ՝ **գրանցելով ընտրված Ազգային ժողովի պատգամավորներին (...):**

Փաստորեն, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքը տարանջատում է պատգամավորի թեկնածուի և ընտրված, սակայն դեռևս իր լիազորությունները չստանձնած պատգամավորի կարգավիճակները: Ընդ որում, անձը դադարում է պատգամավորի թեկնածու լինել Ազգային ժողով ընտրվելու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման վիճարկման համար սահմանված ժամկետի ավարտման, իսկ այդ որոշման վիճարկման դեպքում՝ Սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից: Ըստ այդմ, այն ժամանակ, երբ անձը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից գրանցվում է որպես Ազգային ժողովի պատգամավոր, արդեն չի ունենում պատգամավորի թեկնածուի կարգավիճակ:

Միաժամանակ հարկ է նշել, որ նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի սկիզբը, որի հետ էլ կապված է ընտրված

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

պատգամավորների լիազորությունների ստանձնումը, սահմանված է Սահմանադրության 90-րդ հոդվածով: Նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հերթական ընտրության դեպքում նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվում է նախորդ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտման օրը հրավիրված նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման պահին, իսկ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ արտահերթ ընտրության դեպքում գործող Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվում, և նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվում է նորընտիր Ազգային ժողովի կազմավորումից հետո՝ երկրորդ երկուշաբթի օրը հրավիրված Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման պահին: Միաժամանակ նույն հոդվածը սահմանում է նաև նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի սկզիբն այն դեպքում, երբ մինչև գործող Ազգային ժողովի լիազորությունների ավարտը նորընտիր Ազգային ժողով չի կազմավորվում, ինչպես նաև այն դեպքում, երբ ռազմական կամ արտակարգ դրության պատճառով Ազգային ժողովի ընտրությունն անցկացվել է Սահմանադրության 91-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում:

Տվյալ դեպքում օրենսդիրը սահմանել է, որ վիճարկվող դրույթով նախատեսված երաշխիքից օգտվում է «պատգամավորի թեկնածուն՝ մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորը», մինչդեռ, ինչպես նշվեց, այդ երկու կարգավիճակները միմյանց հետ համատեղելի չեն, բացառում են միմյանց, և անձինք դրանք ձեռք են բերում ընտրական գործընթացի տարբեր ժամանակահատվածներում: Այսինքն՝ անձը չի կարող միաժամանակ լինել թե՛ պատգամավորի թեկնածու, թե՛ ընտրված, սակայն դեռևս իր լիազորությունները չստանձնած պատգամավոր:

Վերոգրյալի հիման վրա գտնում են, որ պարզ չէ, թե տվյալ դեպքում վիճարկվող դրույթով ամրագրված անձեռնմխելիությունն օրենսդիրն իրականում որ անձանց վրա է տարածել՝ պատգամավորի թեկնածուների, թե ընտրված, սակայն դեռևս իրենց լիազորությունները չստանձնած պատգամավորների (մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելը) վրա:

Ավելին, այն հանգամանքը, որ վիճարկվող դրույթը ձևակերպված չէ բավարար հստակությամբ, իսկ Սահմանադրական դատարանի կողմից նշված բովանդակությունը չի բխում այդ դրույթից, առավել ակնառու է դառնում մինևույն երաշխիքը նախատեսող նախկին իրավակարգավորման հետ համեմատության դեպքում:

Այսպես՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի (ընդունվել է 2011 թվականի մայիսի 26-ին, ուժի մեջ է մտել 2011 թվականի հունիսի 26-ին, ուժը կորցրել է 2016 թվականի հունիսի 1-ին) 121-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ **«Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուն, ընտրված պատգամավորը մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելը կարող է ձերբակալվել, կալանավորվել կամ նրա նկատմամբ դատական կարգով պատասխանատվության ենթարկելու հարց հարուցվել միայն կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշված հարցի վերաբերյալ որոշում ընդունում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Սույն մասով սահմանված դրույթը չի տարածվում մինչև թեկնածու գրանցվելը ձերբակալված կամ կալանավորված քաղաքացիների, ինչպես նաև ձերբակալությունը կալանքով փոխելու և կալանավորված թեկնածուի կալանքի ժամկետը երկարաձգելու դեպքերի վրա»:**

Փաստորեն, ի տարբերություն «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի» սահմանադրական օրենքի՝ նախկինում Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 121-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանելիս օրենսդիրն այնպիսի ձևակերպում (շարադրանք և կետադրական նշաններ) էր օգտագործել, որն ակնհայտ էր դարձնում քննարկվող երաշխիքն առավել լայն շրջանակի անձանց (պատգամավորի թեկնածուի և ընտրված պատգամավորի (մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելը)) վրա տարածելու վերաբերյալ օրենսդրի կամքը: Մինչդեռ գործող կարգավորումներում օրենսդրի կողմից այլ ձևակերպում («ստորակետ» կետադրական նշանի բացակայություն և «բուֆ» կետադրական նշանի առկայություն) օգտագործված լինելու հանգամանքը թույլ է տալիս կատարել այն ողջամիտ ենթադրությունը, որ օրենսդիրը նպատակ է ունեցել սահմանել անձանց այլ շրջանակ, այլպես սույն գործով վիճարկվող՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասում կօգտագործեր միևնույն ձևակերպումը՝ միևնույն շարադրանքով և կետադրական նշաններով:

Վերագրյալի մասին է վկայում նաև վիճարկվող դրույթի համեմատությունը «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի» սահմանադրական օրենքի միևնույն՝ 90-րդ հոդվածի մեկ այլ՝ 2-րդ մասի հետ: Մասնավորապես՝ նշված դրույթի համաձայն՝ **«պատգամավորի թեկնածու գրանցված անձը պատգամավորի թեկնածուի կարգավիճակ ունենալու ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև պատգամավորի**

լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորը ենթակա չէ կանչվելու վարժական հավաքի կամ զինվորական վարժանքի կամ զորակոչվելու պարտադիր զինվորական ծառայության»:

Նշված դեպքում ևս, ի տարբերություն սույն գործով վիճարկվող իրավակարգավորման, օրենսդիրն օգտագործել է այնպիսի ձևակերպումներ (շարադրանք և կետադրական նշաններ), որոնք ուղղակիորեն ցույց են տալիս, որ այդ նորմը վերաբերում է թե՛ պատգամավորի թեկնածու գրանցված անձին՝ պատգամավորի թեկնածուի կարգավիճակ ունենալու ժամանակահատվածում, թե՛ մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորին:

Վերոգրյալի հիման վրա գտնում են, որ սույն գործով վիճարկվող՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասից հնարավոր չէ պարզել այն անձանց շրջանակը, որոնք օգտվում են դրանով նախատեսված անձեռնմխելիությունից, ինչը վիճարկվող դրույթը խնդրահարույց է դարձնում իրավական որոշակիության պահպանման տեսանկյունից:

Սահմանադրական դատարանն իր բազմաթիվ որոշումներում արդեն իսկ անդրադարձել է քննարկվող սկզբունքին՝ նշելով, մասնավորապես, հետևյալը.

- «(...) օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (...) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (18.04.2006թ. ՍԴՈ-630),

- «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (13.05.2008թ. ՍԴՈ-753),

- «(...) իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» (02.12.2014թ. ՍԴՈ-1176),

- «Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ» (09.06.2015թ. ՍԴՈ-1213):

Սույն դեպքում, ինչպես նշվեց, **սույն գործով վիճարկվող դրույթում օգտագործվող՝ «պատգամավորի թեկնածուի՝ մինչև պատգամավորի լիազորություններն սրանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ» ձևակերպումը (հաշվի առնելով դրա շարադրանքը և օգտագործված կետադրական նշանը) հնարավորություն չի տալիս պարզել, թե ովքեր են օգտվում այդ դրույթով նախատեսված անձեռնմխելիությունից՝ պատգամավորի թեկնածուն, ընտրված պատգամավորը (մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելը), թե՛ երկու անձինք էլ:** Հետևաբար չհամաձայնելով Սահմանադրական դատարանի այն դատողությանը, որ վիճարկվող իրավակարգավորման համաձայն՝ «անձեռնմխելիությունը ինչպես Ազգային ժողովի պատգամավորի գրանցված թեկնածուի, այնպես էլ մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորի համար միասնական է», **գտնում եմ, որ վիճարկվող դրույթը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին:**

2. Սահմանադրական դատարանը, փաստելով, որ թե՛ պատգամավորի թեկնածուն, թե՛ ընտրված պատգամավորը (մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելը) օգտվում են անձեռնմխելիությունից, նշել է, որ «(...) ընտրվելու իրավունքի արդյունավետ իրացման երաշխիքները և, մասնավորապես, կոնկրետ դեպքում՝ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուի անձեռնմխելիությունը, ունեն նաև հանրային-իրավական նշանակություն. դրանք ուղղված են ոչ միայն անձի մասնավոր շահի, այլ նաև հանրային շահի պաշտպանության ապահովմանը» (որոշման 15-րդ էջ):

Համաձայն չլինելով վիճարկվող դրույթի բովանդակության վերաբերյալ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1644 որոշման մեջ կատարված

դատողությանը, այդուհանդերձ, հարկ եմ համարում անդրադառնալ նաև պատգամավորի թեկնածուի անձեռնմխելիության ինստիտուտին՝ հաշվի առնելով Սահմանադրական դատարանի որոշման մեջ դրան կատարված անդրադարձը, ինչպես նաև բացահայտել վիճարկվող դրույթի հնարավոր¹ սահմանադրաիրավական բովանդակությունը:

Այսպես՝ անձեռնմխելիությունը ենթադրում է անձի նկատմամբ որոշակի գործողություններ կատարելու արգելք կամ դրանց կատարման առավել բարդ ընթացակարգ և պայմաններ: Այսինքն՝ անձեռնմխելիության դեպքում որոշակի անձանց տրամադրվում է հատուկ իրավական պաշտպանություն, որից չեն օգտվում մնացած անձինք: Նշվածը կարող է խնդրահարույց լինել առաջին հերթին օրենքի առջև բոլորի հավասարությունը (Սահմանադրության 28-րդ հոդված) ապահովելու տեսանկյունից, ուստի որևէ անձի անձեռնմխելիություն տրամադրելը պետք է բխի գերակա հանրային շահից, այն պետք է անհատշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և համապատասխանի համաչափության սկզբունքի պահանջներին:

Տվյալ դեպքում ըստ Սահմանադրական դատարանի՝ օրենսդիրը վիճարկվող դրույթով անձեռնմխելիություն է տրամադրում նաև պատգամավորի թեկնածուներին: Սահմանադրական դատարանն այդ երաշխիքի կապակցությամբ ընդամենը նշում է, որ այն ընտրվելու իրավունքի արդյունավետ իրացման երաշխիք է և ունի ինչպես մասնավոր-իրավական, այնպես էլ հանրային-իրավական նշանակություն:

Մինչդեռ իմ գնահատմամբ անձեռնմխելիության տրամադրումը չի կարող հիմնավորվել միայն նման վերացական դատողություններով: Հակառակ դեպքում, հնարավոր կլիներ պնդել, որ անձեռնմխելիությամբ պետք է օժտված լինեն ավելի լայն շրջանակի անձինք, քանի որ բազմաթիվ դեպքերում անձեռնմխելիությունը հնարավոր է կապել Սահմանադրության որևէ դրույթով ամրագրված գործառույթի (իրավունքի) իրականացման հետ և պնդել, որ անձեռնմխելիությունը դրա արդյունավետ իրացման երաշխիք է: Այդ տրամաբանությամբ հնարավոր կլիներ պնդել, որ, օրինակ, կուսակցությունների անդամները ևս պետք է օժտված լինեն անձեռնմխելիությամբ՝ հաշվի առնելով, որ քաղաքական գործընթացներում ներգրավված անձանց վերաբերյալ հանրության դիրքորոշումը ձևավորվում է ոչ միայն ընտրությունների ընթացքում, այլև դրանց նախորդող ժամանակահատվածներում, հետևաբար անձեռնմխե-

¹ «Հնարավոր» բառի օգտագործումը պայմանավորված է այն հանգամանքով, որ, իմ գնահատմամբ, քննարկվող դրույթը որոշակի չէ:

լիությունը չպետք է կապված լինի պատգամավորի թեկնածուի կարգավիճակ ձեռք բերելու հետ: Նման դատողությունները բացառելու համար անհրաժեշտ է, որ անձին անձեռնմխելիություն տրամադրվի միայն այն դեպքում, երբ անձն իր գործառույթները չի կարող պատշաճ կերպով իրականացնել անձեռնմխելիության բացակայության դեպքում: Ընդ որում, դրա վերաբերյալ հիմնավորումները չպետք է հիմնվեն սուսկ վերացական, մակերեսային դատողությունների վրա:

Վերոգրյալի համատեքստում գտնում եմ, որ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1644 որոշումը պատգամավորի թեկնածուի կարգավիճակ ունեցող անձանց անձեռնմխելիություն տրամադրելու վերաբերյալ բավարար հիմնավորումներ չի պարունակում:

Ավելին, Սահմանադրական դատարանը նշել է, որ պատգամավորի թեկնածուի անձեռնմխելիությունն ուղղված է նաև հանրային շահի պաշտպանության ապահովմանը: Մինչդեռ գտնում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում պատգամավորի թեկնածուին անձեռնմխելիության տրամադրումը չի բխում հանրային շահից հետևյալ պատճառաբանությամբ.

Նախ, պատգամավորի թեկնածուն հանրային որևէ պաշտոն չի զբաղեցնում, այլ միայն հավակնում է այդպիսի պաշտոն զբաղեցնելուն: Բացի այդ, պատգամավորների թեկնածուների թվի սահմանափակում առկա չէ, ինչը նշանակում է, որ պատգամավորի թեկնածուին անձեռնմխելիություն տրամադրված լինելու պարագայում դրանից կարող են օգտվել անհայտ թվով անձինք (այն անձինք, որոնք գրանցված կլինեն որպես պատգամավորի թեկնածու): Միաժամանակ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքը» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածը որևէ կերպ չի սահմանափակում այն արարքների ցանկը, որոնց համար տրամադրվում է պաշտպանություն (Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությունը ստանալու կանոնից միակ բացառությունն այն է, երբ անձը բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո): Այսինքն՝ պատգամավորի թեկնածուին անձեռնմխելիություն տրամադրված լինելու պարագայում նրա նկատմամբ որևէ արարքի համար քրեական հետապնդում չի կարող հարուցվել, և նա չի կարող ձերբակալվել կամ կալանավորվել՝ առանց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնության: Ընդ որում, նշված որոշումը Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունում է ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով:

Նման պայմաններում չի բացառվում նաև, որ բազմաթիվ անձինք պատգամավորի կարգավիճակն օգտագործեն որպես քրեական հետապնդումից, ձերբակալումից և կալանավորումից պաշտպանվելու միջոց՝

հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ պատգամավորի թեկնածուի կարգավիճակ ձեռք բերելով՝ անձը չի ստանձնում որոշակի գործառույթներ և պատասխանատվություն ենթադրող հանրային պաշտոն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ հանրային շահից չի կարող բխել որևէ պաշտոն չզբաղեցնող, այլ միայն պատգամավորի պաշտոնին հավակնող, անհայտ թվով անձանց անձեռնմխելիության տրամադրումը հատկապես այն դեպքում, երբ այդ անձեռնմխելիությունը վերաբերում է ցանկացած արարքի համար քրեական հետապնդում հարուցելուն, թեկնածուին ձերբակալելուն և կալանավորելուն, իսկ դրա հաղթահարումը հնարավոր է միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ձայների որակյալ մեծամասնությամբ:

Հարկ եմ համարում նաև նշել, որ այն հանգամանքը, որ նախկինում գործող իրավակարգավորումների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում անձեռնմխելիությունից օգտվում էին անհարկի լայն շրջանակի անձինք, այդ թվում՝ պատգամավորի թեկնածուները, ընդգծել են նաև միջազգային կառույցները (օրինակ՝ Եվրոպայի խորհրդի կազմում գործող Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը¹, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով)²), ինչն արձանագրել է նաև Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1644 որոշմամբ: Մասնավորապես՝ նշված դիրքորոշումն արտահայտվել է այն իրավակարգավորումների գործողության ժամանակահատվածում, երբ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքն ուղղակիորեն սահմանում էր, որ պատգամավորի թեկնածուներն օժտված են անձեռնմխելիությամբ:

Վերոգրյալի համատեքստում գտնում եմ, որ եթե Սահմանադրական դատարանը վիճարկվող դրույթը համարում էր բավարար հստակությամբ ձևակերպված, ապա պետք է ձեռնամուխ լիներ նշված դրույթի (անձեռնմխելիությամբ օժտված անձանց շրջանակի մասով) սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը՝ այն բխեցնելով սահմանադրի կամքից և հաշվի առնելով սահմանադրական կարգավորումները, ինչը Սահմանադրական դատարանը չի կատարել:

¹ St'u Group of States against Corruption (GRECO), Evaluation Report on Armenia, Greco Eval I-II Rep (2005) 2E (adopted by GRECO at its 27th Plenary Meeting (6-10 March 2006)), կետ 56 (<https://rm.coe.int/16806c2abf>).

² St'u European Commission for Democracy through Law (Venice Commission), Opinion on the Issue of the Immunity of Persons Involved in the Electoral Process in Armenia, CDL-AD(2008)024 (adopted by the Venice Commission at its 76th plenary session (17-18 October 2008)), կետեր 35 և 38 ([https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDLAD\(2008\)024-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDLAD(2008)024-e)).

Այսպես՝ սահմանադիրը, անդրադառնալով օրենսդիր մարմնի գործունեությանը, ամրագրել է միայն պատգամավորի՝ որպես անմիջականորեն ժողովրդի կողմից ձևավորվող, ներկայացուցչական մարմնի անդամի անձեռնմխելիությունը (Սահմանադրության 96-րդ հոդված):

Գտնում եմ, որ սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելու պարագայում անհրաժեշտ կլինեի փաստել, որ դրանով նախատեսված անձեռնմխելիությունը վերաբերում է միայն այն անձանց, որոնց Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արդեն իսկ տրամադրել է պատգամավորական մանդատ՝ նրանց գրանցելով որպես ընտրված պատգամավոր, սակայն նրանք դեռևս չեն ստանձնել պատգամավորի լիազորությունները: Իմ գնահատմամբ՝ վիճարկվող դրույթի միայն այս մեկնաբանությունը չի հակադրվի սահմանադրի կամքին՝ ելնելով այն հանգամանքից, որ այդ եղանակով որոշակի պաշտպանություն է տրամադրվում ժողովրդի կողմից արդեն իսկ ընտրված պատգամավորին, ընդ որում, կարճ ժամանակահատվածի համար, այն է՝ մինչև լիազորությունների ստանձնումը, որից հետո պատգամավորի անձեռնմխելիությանը վերաբերող կարգավորումներն ուղղակիորեն նախատեսված են Սահմանադրության 96-րդ հոդվածով:

Ի հակադրումն պատգամավորների, այդ պաշտոնին հավակնող թեկնածուներին անձեռնմխելիության տրամադրումը որևէ կերպ չի բխում սահմանադրի կամքից, քանի որ վերջիններս որևէ պաշտոն չեն զբաղեցնում, ինչպես նաև կարճ ժամանակահատվածում պատգամավորի լիազորություններ չեն ստանձնելու: Դեռ ավելին, նրանց կողմից պատգամավորի պաշտոնի ստանձնումը պայմանավորված է լինելու ընտրության արդյունքներով (հիմնված է ենթադրությունների վրա)՝ ի տարբերություն ընտրված, սակայն դեռևս իրենց լիազորությունները չստանձնած պատգամավորների, որոնց պարագայում ժողովրդի կողմից ընտրված լինելն արդեն իսկ իրողություն է:

Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ սահմանադրական զարգացումները ևս վկայում են անձեռնմխելիության սահմանափակման միտումի մասին: Օրինակ՝ եթե նախկինում դատավորներն օժտված էին թե՛ անձնական, և թե՛ գործառությանն անձեռնմխելիությամբ (2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 97-րդ հոդված), ապա ներկայումս նրանք ունեն միայն գործառությանն անձեռնմխելիություն (2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 164-րդ հոդված):

Կարծում եմ, որ այն դեպքում, երբ Սահմանադրության համաձայն՝ բարձր կարգավիճակով և պատասխանատվությամբ օժտված դատավորներին անձեռնմխելիություն է տրամադրվում միայն իրենց լիազորու-

թյունների իրականացման կապակցությամբ կատարված արարքների դեպքում, չի կարող հանրային պաշտոն չգբաղեցնող անձը՝ պատգամավորի թեկնածուն, օժտվել ավելի լայն անձեռնմխելիությամբ:

3. Ամփոփելով սույն հատուկ կարծիքում ներկայացված դիրքորոշումները՝ կարծում եմ, որ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասը ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որ հնարավոր լինի պարզել, թե ում վրա է տարածվում այդ դրույթով նախատեսված երաշխիքը: Ավելին, նշված դրույթում օգտագործվող ձևակերպումը (հաշվի առնելով շարադրանքը և օգտագործված կետադրական նշանները)՝ «պատգամավորի թեկնածուի՝ մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ», բացառում է նշված կարգավիճակների համաժամանակյա գոյությունը:

Այդուհանդերձ, եթե Սահմանադրական դատարանը գտնում էր, որ այդ դրույթը ձևակերպված է բավարար հստակությամբ, ապա պեք է բացահայտեր դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ անձեռնմխելիությամբ օժտված անձանց շրջանակի մասով: Այդ դեպքում անհրաժեշտ էր փաստել, որ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված անձեռնմխելիությունը վերաբերում է միայն ընտրված, սակայն դեռևս իրենց լիազորությունները չստանձնած պատգամավորներին, իսկ պատգամավորի թեկնածուներն այդ երաշխիքից չեն օգտվում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«28» մարտի 2022թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 1/1 (105/1) 2022

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-Ի
«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 90-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ
5-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԴՈ-1644
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում ենք հատուկ կարծիք՝ Սահմանադրական դատարանի 2022 թվականի մարտի 22-ի «Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՍԴՈ-1644 որոշման (այսուհետ՝ ՍԴՈ-1644 որոշում) վերաբերյալ:

1. Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 7-ի «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 295-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՍԴՈ-1619 որոշման (այսուհետ նաև՝ ՍԴՈ-1619 որոշում) վերաբերյալ ներկայացրած մեր հատուկ կարծիքում¹ նշել ենք, որ Սահմանադրական դատարանը 2021 թվականի հոկտեմբերի 26-ի ՍԴԱՈ-218 աշխատակարգային որոշմամբ հաշվի առնելով, որ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի² և Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի³ հիման վրա

¹ Տե՛ս http://www.concourt.am/pdf/uploads/6200ce4c9aa15_sdv-1619-hk1.pdf

² 2021 թվականի սեպտեմբերի 1-ին Սահմանադրական դատարան մուտքագրված հիշյալ դիմումով Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը խնդրել էր որոշել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 5-րդ մասի, 295-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության և «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանադրականության հարցերը:

³ 2021 թվականի սեպտեմբերի 27-ին Սահմանադրական դատարան մուտքագրված հիշյալ դիմումով Մարդու իրավունքների պաշտպանը ևս խնդրել էր որոշել «ՀՀ ընտրական օրենս-

1/1 (105/1) 2022
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

քննության ընդունված գործերը վերաբերում են նույն հարցին, որոշել է, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի, այդ գործերը միավորել և քննել դատարանի նույն նիստում: Սակայն գրեթե մեկ ամիս անց 2021 թվականի նոյեմբերի 30-ի ՍԴԱՌ-242 աշխատակարգային որոշմամբ գործերը միավորելու մասին ՍԴԱՌ-218 աշխատակարգային որոշումն ուժը կորցրած է ճանաչվել: Ի թիվս այլնի, ՍԴՌ-1619 որոշման վերաբերյալ ներկայացրած մեր հատուկ կարծիքում նշել ենք նաև, որ ՍԴԱՌ-242 աշխատակարգային որոշմամբ միավորված գործերի փաստացի առանձնացմամբ խաթարվել է դատարանի նույն նիստում նույն հարցին վերաբերող գործերի միավորված, բազմակողմանի, լրիվ, արդյունավետ քննության ապահովումը, ինչպես նաև գտել ենք, որ **տվյալ գործով սահմանադրական վեճի շրջանակներում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 5-րդ մասի, 295-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորումների միջև գոյություն ունի համակարգային փոխկապակցվածություն:**

ՍԴՌ-1644 որոշման մեջ ամրագրված Սահմանադրական դատարանի մոտեցումների և եզրահանգումների լույսի ներքո նշում ենք, որ ՍԴՌ-1619 որոշման վերաբերյալ ներկայացրած մեր հատուկ կարծիքում նշված մտահոգությունները չեն փարատվել:

2. Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի հիման վրա գործը քննության ընդունելու կամ մերժելու, գործի վարույթը կարճելու, քննության ընդունված գործով պարզման ենթակա հանգամանքների շրջանակները որոշելու և ըստ այդմ՝ որոշում կայացնելու առումներով Սահմանադրական դատարանի վերջին շրջանի պրակտիկան միասնական չէ: Դա ակներև է նաև ինչպես ՍԴՌ-1619 և ՍԴՌ-1644 որոշումների, այնպես էլ այդ որոշումների կայացմանը նախորդած Սահմանադրական դատարանի նույն գործերով մի շարք աշխատակարգային որոշումների կապակցությամբ դրսևորած մոտեցումների և արտահայտած դիրքորոշումների պարագայում: Այսպես.

մի դեպքում՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիմա վրա Սահմանադրական դատարանը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության

գիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանադրականության հարցը:

օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 5-րդ մասի, 295-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի վերաբերյալ գործը քննության է ընդունել **ընդհանուր՝** Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար **(այսինքն՝ ոչ թե միայն դիմողի կողմից վկայակոչված Սահմանադրության կոնկրետ հոդվածների համապատասխանության հարցը որոշելու համար)**¹, սակայն հետագայում նույն՝ արդեն իսկ քննության ընդունված գործի վարույթը մասամբ կարճել է **դիմողի կողմից վկայակոչված Սահմանադրության կոնկրետ հոդվածներին համապատասխանության մասով**²: Մեկ այլ դեպքում՝ «Մարդու իրավունքի պաշտպանի դիմումի հիմա վրա «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի վերաբերյալ» գործը Սահմանադրական դատարանը, քննության ընդունելով **ընդհանուր՝** Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար³, հետագայում ՍԴՈ-1644 որոշմամբ այդ գործով վիճարկվող դրույթը քննության է առել Սահմանադրության 48 և 75-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից այն դեպքում, երբ դիմողը վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցը բարձրացրել է Սահմանադրության 27, 63, 67, 75, 79 և 81-րդ հոդվածների տեսանկյունից: Այսինքն՝ Սահմանադրական դատարանը ոչ թե իր իսկ ձևավորած պրակտիկայի շրջանակներում գործի վարույթը մասամբ կարճել է՝ **դիմողի կողմից վկայակոչված և իր կողմից քննության առարկա չդարձրած Սահմանադրության կոնկրետ հոդվածներին համապատասխանության մասով** (Սահմանադրության 27, 63, 67, 79 և 81-րդ հոդվածների մասերով), այլ գործով վիճարկվող դրույթը քննության է առել դիմողի կողմից վկայակոչված Սահմանադրության **միայն 75-րդ հոդվածին** համապատասխանության տեսանկյունից, ինչպես նաև իր նախաձեռնությամբ՝ Սահմանադրության 48-րդ հոդվածին համապատասխանության տեսանկյունից: Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1644 որոշմամբ որևէ ձևով չի անդրադարձել, թե ինչո՞ւ վիճարկվող դրույթը քննության չի առել դիմողի կողմից վկայակոչված Սահմանադրության 27, 63, 67, 79 և 81-րդ հոդվածներին համապատաս-

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 22-ի ՍԴԱՈ-194 աշխատակարգային որոշումը:
² Տե՛ս Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴԱՈ-251 աշխատակարգային որոշումը:
³ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2021 թվականի հոկտեմբերի 26-ի ՍԴԱՈ-217 աշխատակարգային որոշումը:

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 369

խանության տեսանկյունից: Ավելին՝ Սահմանադրական դատարանը, չանդրադառնալով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի ամբողջ իրավակարգավորմանը, ՍԴՈ-1644 որոշման եզրափակիչ մասում այն **ամբողջությամբ** է ճանաչել Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող:

Մեր դիրքորոշումն է. դիմումի հիման վրա գործը քննության է ընդունվում ընդհանուր՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար (դա է նաև Սահմանադրական դատարանի տարիներ ի վեր ձևավորած պրակտիկան): Իսկ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գործի վարույթը ենթակա է կարճման ոչ թե Սահմանադրության կոնկրետ հոդվածներին համապատասխանության մասով, այլ վիճարկվող դրույթի մասով:

Մի դեպքում՝ Սահմանադրական դատարանի դիրքորոշումն է, որ ինչպես Սահմանադրության մեջ, այնպես էլ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում շեշտադրված է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից Սահմանադրական դատարանում բարձրացվող հարցերը **բացառապես Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված դրույթների համատեքստում դիտարկելու պահանջը**, որի պահպանվածության հարցը պետք է ստուգվի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված դիմումի շրջանակներում¹, մյուս դեպքում՝ ՍԴՈ-1644 որոշմամբ Սահմանադրական դատարանը գործով վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցը **չի դիտարկել բացառապես Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված դրույթների համատեքստում**, այլ նաև՝ Սահմանադրության այլ գլուխներում ամրագրված դրույթների, մասնավորապես, Սահմանադրության 1-ին գլխում ամրագրված 2, 4 և 7-րդ հոդվածների, Սահմանադրության 11-րդ գլխում ամրագրված 194 և 195-րդ հոդվածների համատեքստում:

Մեր դիրքորոշումն է. չնայած սահմանադրական այն նորմին, որ Մարդու իրավունքների պաշտպանը կարող է Սահմանադրական դատարան դիմել Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 2-րդ

¹ Տե՛ս, օրինակ՝ Սահմանադրական դատարանի 2022 թվականի մարտի 22-ի ՍԴԱՈ-58 աշխատակարգային որոշումը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

գլխի դրույթներին համապատասխանության հարցերով, միաժամանակ սահմանադրական նորմ, պատվիրան է այն, որ Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատությունն իրականացնում է ապահովելու համար Սահմանադրության գերակայությունը: Ուստի, Սահմանադրական դատարանը բարձրացրած սահմանադրականության հարցով որոշում պետք է կայացնի ոչ միայն Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին, այլ Սահմանադրության բոլոր դրույթներին համապատասխանությունը պարզելով¹:

Մի դեպքում՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիմա վրա քննության ընդունված գործի վարույթը մասամբ կարճվել է նաև այն հիմնավորմամբ, որ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի, դրանում առկա եզրույթների բովանդակության բացահայտումը, օգտագործված առանձին արտահայտությունների մեկնաբանություններն ուղղակիորեն դուրս են Սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակից², մեկ այլ դեպքում՝ ՍԴՈ-1644 որոշմամբ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի վերաբերյալ կայացվել է որոշում՝ **Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ**:

Մեր դիրքորոշումն է. վիճարկվող դրույթի, այդ թվում՝ դրանում ամրագրված բառերի, եզրույթների, արտահայտությունների, ձևակերպումների, բառակապակցությունների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը Սահմանադրական դատարանի լիազորությունների տիրույթում է, և Սահմանադրական դատարանը ոչ քիչ թվով գործերով կատարել է այն՝ կայացնելով համապատասխան որոշումներ³:

3. Հիմք ընդունելով վերոգրյալը և նկատի ունենալով սույն գործով Սահմանադրական դատարանի մոտեցումներն ու եզրահանգումները՝ ՍԴՈ-1644 որոշումը հիմնավոր, հետևաբար՝ ընդունելի չենք համարում:

¹ Հիշյալ դիրքորոշումն արտահայտել ենք նաև Սահմանադրական դատարանի 2022 թվականի մարտի 15-ի ՍԴՈ-1639 որոշման վերաբերյալ ներկայացրած մեր հատուկ կարծիքում http://www.concourt.am/pdf/uploads/623da8899c557_sdv-1639-hk.pdf

² Տե՛ս Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴԱՈ-251 աշխատակարգային որոշումը:

³ Հիշյալ դիրքորոշումն արտահայտել ենք նաև Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշման վերաբերյալ ներկայացրած մեր հատուկ կարծիքում:

Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականության բացահայտմանն ուղղված հարցադրումները, դրանց շրջանակներում արտահայտված դիրքորոշումները և եզրահանգումները ցույց են տալիս, որ չի ապահովվել գործի բազմակողմանի և լրիվ քննությունը, այլ կերպ՝ բարձրացված սահմանադրական վեճը չի լուծվել ամբողջ ծավալով, վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցին անդրադարձ կատարվել է հատվածական: Բացի դրանից, ՍԴՈ-1644 որոշման մեջ առկա են երկիմաստ, վերացական, ոչ ամբողջական դատողություններ, ներքին հակասություններ, չի ապահովվել տրամաբանական միասնականություն որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի միջև, որպիսիք կարող են հանգեցնել վիճարկվող դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունից դուրս՝ տարաբնույթ, խնդրահարույց ընկալման ու կիրառման: Մասնավորապես.

*Սահմանադրական դատարանը նշել է, որ Ազգային ժողովի պարզամտորի գրանցված թեկնածուի կամ մինչև պարզամտորի լիազորություններն ստանձնելն ընտրված պարզամտորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ համաձայնություն տալու հարցի քննության և լուծման գործընթացում այդ անձանց ընտրվելու իրավունքի արդյունավետ պաշտպանության ապահովման առումով **անհրաժեշտ է, որ պահպանվեն ընթացակարգային որոշակի երաշխիքներ**, այնուհետև արձանագրել է, որ այդ առումով **օրենսդրական զարգացումները պետք է ընթանան այն տրամաբանությամբ**, որ երաշխավորվի տվյալ գործընթացին անձի մասնակցությունը, ընձեռվի ընտրվելու իրավունքի սահմանափակումը հիմնավորող նյութերին ծանոթանալու հնարավորություն, ապահովվի անձի լաված լինելու իրավունքը:*

Սահմանադրական դատարանի վերոհիշյալ դիրքորոշումներն առաջացնում են տարընկալում: Նախ՝ ՍԴՈ-1644 որոշման մեջ առկա չէ վերաբերելի օրենսդրական վերլուծություն: Պարզ չէ, թե Սահմանադրական դատարանի դիրքորոշումների հիմքում ինչ իրավավերլուծություն է ընկած: Սահմանադրական դատարանն ընթացակարգային երաշխիքների առումով հստակ դիրքորոշում չի արտահայտել Սահմանադրության 75-րդ հոդվածի տեսանկյունից:

Եթե Սահմանադրական դատարանն ընթացակարգային երաշխիքների անդրադարձել է այն համատեքստում, որ օրենսդրական մակարդակում դրանք բացակայում են, առկա է օրենսդրական բաց, օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու իրավական երաշխիքներ, ինչը սահմանադրականության առումով չի կարող խնդրահարույց չլինել, ապա

ՍԱԳՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

առաջանում է ներքին հակասություն ՍԴՈ-1644 որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի միջև, քանի որ Սահմանադրական դատարանը վիճարկվող դրույթը ճանաչել է ոչ թե Սահմանադրությանը հակասող և անվավեր, այլ **Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ** Սահմանադրությանը համապատասխանող: Եթե որպես նպատակադրում սուկ թվարկվել են ընթացակարգային երաշխիքները, որոնց բացակայությունը գործող օրենսդրության մեջ, ըստ էության, Սահմանադրական դատարանը սահմանադրականության առումով խնդրահարույց չի համարել, *միաժամանակ գնահատելով ձևավորված իրավակիրառական պրակտիկան, արձանագրել է, որ ընդհանուր առմամբ այն զարգացել է ՍԴՈ-1644 որոշմամբ արտահայտված դիրքորոշումներին համահունչ փրամաբանությամբ*, ապա այս պարագայում ևս առաջանում է ներքին հակասություն ՍԴՈ-1644 որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի միջև, քանի որ Սահմանադրական դատարանը վիճարկվող դրույթը ճանաչել է ոչ թե Սահմանադրությանը համապատասխանող, այլ **Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ** Սահմանադրությանը համապատասխանող: Այլ կերպ՝ եթե առնվազն գործող իրավակիրառական պրակտիկայում առկա չէ սահմանադրականության տեսանկյունից որևէ խնդրահարույց մեկնաբանում, կիրառում, ապա ինչո՞ւ է վիճարկվող դրույթը ճանաչվում **Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ** Սահմանադրությանը համապատասխանող, ո՞րն է նման որոշում կայացնելու հիմնավորումը և անհրաժեշտությունը:

Բացի դրանից, ընթացակարգային երաշխիքների, դրանց շրջանակի հետ կապված Սահմանադրական դատարանի դիրքորոշումները, ձևակերպումները չափազանց ընդհանրական, վերացական են, հակասում են նաև դրանց վերաբերյալ Սահմանադրական դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումներին, ինչը կարող է նաև իրավակիրառական պրակտիկայում առաջացնել խնդիրներ:

Մասնավորապես, ՍԴՈ-1644 որոշման մեջ լսված լինելու իրավունքը՝ որպես ընթացակարգային երաշխիք, ոչ միայն չի դիտարկվել Սահմանադրության 50-րդ հոդվածի տեսանկյունից և ըստ այդմ՝ անդրադարձ չի կատարվել դրա սահմանադրաիրավական բովանդակությանը, այլև որոշման եզրափակիչ մասում Սահմանադրական դատարանը, տարանջատելով լսված լինելու իրավունքն առարկություններ ներկայացնելու, բացատրություններ տալու և միջնորդություններ ներկայացնելու իրավունքից,

դրանով իսկ, ըստ էության, հակասել է նաև նախկինում արտահայտած իր դիրքորոշումներին¹:

Սահմանադրական դատարանն առհասարակ չի անդրադարձել անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ ազատությունից զրկելու համաձայնություն տալու հետ կապված Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից կայացված որոշումների՝ դատական վերահսկողության առարկա լինելու, այդ վերահսկողության ծավալի և կարգի հարցերին, որոնք բարձրացվել են նաև սույն գործով դիմողի կողմից:

Անդրադառնալով պատգամավորի թեկնածուի անձեռնմխելիության՝ որպես պասիվ ընտրական իրավունքի արդյունավետ իրացումն ապահովող օրենքով սահմանված միջոցի՝ այլ անձանց հիմնական իրավունքների և հանրային-իրավական այլ շահերի խնդրահարույց լինելու հարցադրմանը՝ Սահմանադրական դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ օրենսդիրը չի որոշակիացրել այն հանցագործությունների շրջանակը, որոնցով պատգամավորի թեկնածուի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելիս անհրաժեշտ է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությունը, և եզրահանգել է, որ նման կարգավորման պայմաններում անձեռնմխելիությունը տարածվում է, ըստ էության, բոլոր հանցագործությունների համար քրեական հետապնդման հարուցման դեպքերի վրա՝ անկախ դրանց ծանրությունից և առանց հանցագործությունների շրջանակի որևէ սահմանափակման:

Այս առումով, սակայն, Սահմանադրական դատարանը չի հստակեցրել, թե համաչափության սկզբունքի համատեքստում ինչո՞վ է պայմանավորված հանցագործությունների շրջանակը որոշակիացնելու անհրաժեշտությունը: Չի անդրադարձել նաև այդ համատեքստում անձեռնմխելիության շրջանցման համար հնարավոր սողանքների առաջացման հարցերին, որոնք կարող են պարարտ հող հանդիսանալ քաղաքական դրդապատճառներով քրեական հետապնդումների համար:

*Սահմանադրական դատարանը, մասնավորապես, **արձանագրել է, որ օրենսդրությամբ նախատեսված չէ հստակ որոշակիացված և օբյեկտիվ որևէ չափանիշ և հիմք, որի հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետք է որոշում կայացնի պատգամավորի թեկնածուին անձեռնմխելիությունից զրկելու հարցով:***

¹ Տե՛ս, օրինակ՝ Սահմանադրական դատարանի 2020 թվականի մայիսի 12-ի ՍԴՈ-1529 որոշումը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Գտնում ենք, որ զուտ փաստի արձանագրումը, առանց դրա սահմանադրականության գնահատման և եզրահանգման, նոր խնդիրներ է առաջացնում: Հարկ է նկատել նաև, որ Սահմանադրական դատարանը նշված խնդիրն առհասարակ չի դիտարկել իր կողմից բարձրացված՝ պատգամավորի թեկնածուին տրված անձեռնմխելիության երաշխիքների պատշաճ իրացման համատեքստում, ինչը, մեր կարծիքով, էական նշանակություն ունի թեկնածուի պասիվ ընտրական իրավունքի ազատ իրացման տեսանկյունից:

Բացի վերը նշվածից, Սահմանադրական դատարանն **արձանագրել է նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն չտալու մասին որոշման կայացման դեպքում այդ որոշումը, հաշվի առնելով օրենսդրության մեջ այդպիսի որոշման իրավական հետևանքների ժամանակային սահմանափակման բացակայության, ինչպես նաև այդպիսի որոշման կայացման դեպքում դրա հետևանքները հաղթահարելու և քրեական հետապնդման հարուցման և վարույթի հետագա ընթացքն ապահովելու հստակ կառուցակարգեր նախատեսված չլինելու հանգամանքը, պատգամավորի թեկնածուի՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունը չհաղթահարելու պարագայում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նման համաձայնություն չտալու որոշման դեպքում քրեական հետապնդումը (վարույթը) փաստացի կարող է ընդհանրապես անհնարին դառնալ:**

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերը նշված որոշման իրավական հետևանքների ժամանակային սահմանափակման բացակայության վերաբերյալ Սահմանադրական դատարանի դիտարկման առումով հարկ է նշել՝ ակնհայտ է՝ օրենսդրական ձևակերպումների և կարգավորման նպատակների համատեքստում պատգամավորի թեկնածուի անձեռնմխելիությունից բխող երաշխիքներն ունեն ժամանակային սահմանափակում՝ պատգամավորի թեկնածուի կարգավիճակը դադարելու պարագայում դադարում է նաև այդ կարգավիճակի բաղադրիչ հանդիսացող անձեռնմխելիությունը: Ավելին, եթե ըստ Սահմանադրական դատարանի՝ անձեռնմխելիությունից զրկելու համաձայնություն չտալու օրենսդրական կարգավորումները չունեն ժամանակային սահմանափակում, ապա նման իրավակարգավորումը պետք է ճանաչվեր սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց, քանի որ պատգամավորի թեկնածուի կարգավիճակը դադարելուց հետո, այդ կարգավիճակով պայմանավորված՝ անձեռնմխելիություն ունենալը որևէ լեգիտիմ նպատակ չի կարող հետապնդել:

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱԽՄԱՆԱՐԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Պետք է նշել, որ Սահմանադրական դատարանն իր վերոհիշյալ դիրքորոշումներով, **ըստ էության, արձանագրել է համապատասխան կառուցակարգերի օրենսդրությամբ նախատեսված չլինելը, ի դեպ, այնպիսի գնահատումներով, որոնք չեն կարող չդիտարկվել սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց, սակայն չի կատարել համապատասխան եզրահանգում:** Այս պարագայում ևս առաջանում է ներքին հակասություն ՍԴՈ-1644 որոշման պատճառաբանական և եզրակարգիչ մասերի միջև:

Սահմանադրական դատարանը մի կողմից ՍԴՈ-1644 որոշմամբ, ի թիվս այլնի, նախանշել է հանցագործությունների շրջանակը որոշակիացնելու անհրաժեշտության, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համապատասխան որոշման իրավական հետևանքների ժամանակային սահմանափակման բացակայության հետ կապված խնդիրներ, մյուս կողմից, որպես այդ խնդիրների լուծում դիտարկել է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգավորման խիստ նեղ մեկնաբանությունը, կիրառությունը և ըստ այդմ՝ նախանշել է նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի լիազորությունների շրջանակը:

Սահմանադրական դատարանը, սակայն, չի հիմնավորել և չի անդրադարձել վերոհիշյալ խնդիրների և դրանց լուծումների միջև պատճառահետևանքային կապին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի լիազորությունների շրջանակը նախանշել է առանց համակարգային վերլուծության և այդ համատեքստում չի բացահայտել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի դերը:

Ընդհանրական և վերացական ձևակերպումներով Սահմանադրական դատարանը նշել է, որ *պարզամավորի թեկնածուին անձեռնմխելիությունից զրկելու հարցի քննարկման շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, չկրկնօրինակելով քրեական վարույթի հանրային մասնակիցների, նաև դատարանների գործառույթները, այդպիսով իսկ ապահովելով իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի կենսագործումը, մի կողմից՝ չքննարկելով հարցեր, որոնք կվրանգեն անձի անմեղության կանխավարկածը, մյուս կողմից՝ պետք է քրեական հետապնդման հարուցմամբ և/կամ ազատազրկմամբ (կալանավորմամբ) պարզամավորի թեկնածուի պասիվ ընտրական նյութական իրավունքի փաստացիորեն սահմանափակումից առաջ, պահպանելով պարզամավորի թեկնածուին անձեռնմխելիությունից զրկելու գործընթացի օբյեկտիվությունը (պասիվ ընտրական իրավունքի ընթացակարգային ասպեկտ) և ապահովելով ՍԴՈ-1644 որոշման մեջ նշված ընթացակարգային*

ՍԱԳՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

երաշխիքները, պատասխանի հարցին, թե պատգամավորի թեկնածուի նկատմամբ քրեական հետապնդման հարուցումը և/կամ նրան ազատությունից զրկումը (կալանավորումը) ունի՞ արդյոք քաղաքական դրդապատճառներ, և արդյո՞ք դրանցով հետապնդվում կամ կարող է հետապնդվել անձի պասիվ ընտրական իրավունքի արդյունավետ իրացմանը խոչընդոտելու նպատակ:

Միաժամանակ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ պատգամավորի թեկնածուին անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգի շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից լուծվող հարցերի բնույթից էլ ինքնին բխում է, որ պատգամավորի թեկնածուի անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգի շրջանակներում տեղ չեն գտնում և չեն կարող տեղ գտնել քրեական մեղադրանքի, (հետևաբար նաև) պաշտպանության գործառույթները:

Ակնհայտ է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որևէ պարագայում չպետք է խախտի անձի անմեղության կանխավարկածը: Ինչ վերաբերում է դատարանի գործառույթները չկրկնօրինակելուն, ապա բովանդակային առումով որևէ պարագայում դա չի կարող տեղի ունենալ, մասնավորապես, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պատգամավորի թեկնածուին ազատությունից զրկելու համար տալիս է համաձայնություն, իսկ դատարանն ազատությունից զրկելու հարցի վերաբերյալ կայացնում է բովանդակային որոշում: Եթե Սահմանադրական դատարանի բարձրագրած հարցը վերաբերվում է ընթացակարգային այնպիսի լիազորությունների «կրկնօրինակմանը», որոնցից է՝ գործի նյութերին ծանոթանալը, այդ թվում՝ մեղադրանքին, մեղադրանքը հիմնավորող նյութերին, ապա առանց դա անելու Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնություն տալու լիազորությունը մեծ ռիսկայնություն ունի վերածվելու կամայականության, քանզի կստացվի, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը «փակ աչքերով» որոշում է կայացնում:

Ինչպես վերը նշել ենք, Սահմանադրական դատարանը ՍԴԻ-1644 որոշմամբ չի անդրադարձել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի այն իրավակարգավորման սահմանադրականության հարցին, համաձայն որի՝ «Սույն մասով սահմանված դրույթը չի տարածվում մինչև թեկնածու գրանցվելը ձեռքակալված կամ կալանավորված քաղաքացիների, ինչպես նաև ձեռքակալված անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և նշված անձանց կալանքի ժամկետը երկարաձգելու դեպքերի վրա», չնայած այն հանգամանքին, որ սույն գործը քննության է ընդունվել

ամբողջությամբ¹: Միաժամանակ, ՍԴՈ-1644 որոշման եզրափակիչ մասում «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասն **ամբողջությամբ** ճանաչվել է Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող:

Սահմանադրական դատարանը, մասնավորապես, չի անդրադարձել այն հարցի սահմանադրականությանը, թե արդյո՞ք անազատության մեջ գտնվող պատգամավորի թեկնածուի կարգավիճակ չունեցող անձը պատգամավորի թեկնածուի կարգավիճակ ձեռք բերելու պահից կարող է պահվել անազատության մեջ այլ կերպ, քան Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ²: Ի դեպ, անդրադառնալով պատգամավորին առնչվող համանման հարցին՝ Սահմանադրական դատարանն իր 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշման եզրափակիչ մասում արտահայտել է հստակ դիրքորոշում:

Գտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի վերոհիշյալ դրույթը սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց է ՍԴՈ-1619 որոշման վերաբերյալ ներկայացրած մեր հատուկ կարծիքով արտահայտած վերաբերելի դիրքորոշումների համատեքստում:

Ամփոփելով վերահաստատում ենք մեր այն դիրքորոշումը, որ **Սահմանադրության գերակայությունն ապահովվում է, երբ սահմանադրական արդարադատությունն իրականացնելիս լեգիտիմ կազմով գործող Սահմանադրական դատարանը, լինելով անկախ և ենթարկվելով միայն Սահմանադրությանը, ընդունում է այնպիսի որոշումներ և եզրակացություններ, որոնցում առնվազն բացառվում է սահմանադրական արժեքների, սկզբունքների, նորմերի, ինստիտուտների նենգափո-**

¹ Այս համատեքստում ևս ընդգծում ենք, որ Սահմանադրական դատարանը պետք է լուծի սահմանադրական վեճն ամբողջ ծավալով՝ սահմանադրականության հարցի բոլոր ապեկտների հաշվառմամբ, կաշկանդված չլինելով դիմողի (դիմողների) բարձրացրած հարցադրումներով, ներկայացրած փաստերով և փաստարկներով, ենթադրյալ հակասահմանադրականության առումով վկայակոչած Սահմանադրության կոնկրետ հոդվածներով՝ քանզի վերջնարդյունքը սահմանադրական արդարադատության իրականացմամբ Սահմանադրության գերակայության ապահովումն է:

² Հարկ է նշել, որ համանման հարց բարձրացվել էր 2021 թվականի սեպտեմբերի 1-ին Սահմանադրական դատարան մուտքագրված Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումով, որի հիման վրա քննության ընդունված գործի վարույթը մասամբ՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի մասով, Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-251 աշխատակարգային որոշմամբ կարճվել էր:

խումը և իմաստագրկումը, ապահովվում է Սահմանադրության միասնականությունը, ինքնաբավությունը և կայունությունը: Սահմանադրական դատարանի որոշումներով և եզրակացություններով պետք է ամբողջ ծավալով լուծվեն քննության առարկա սահմանադրական վեճերը, այլ ոչ հատվածական և աղճատված՝ հարուցելով նոր կամ խորացնելով առկա խնդիրները: Բացի դրանից, Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները պետք է կայացվեն օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննության արդյունքում, որոշումների և եզրակացությունների կառուցվածքային ամբողջականությունը և տրամաբանական միասնականությունը խաթարված չլինեն, զերծ լինեն ներքին հակասություններից, երկիմաստ, սխալ ու խեղաթյուրող դիրքորոշումներից: Պակաս կարևոր չէ, որ այդ որոշումները և եզրակացությունները չլինեն անհարկի ծանրաբեռնված, այդ թվում՝ պարզունակ դատողություններով, ոչ վերաբերելի, ընդհանրական վերլուծություններով և դիրքորոշումների վկայակոչումներով¹:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ

ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԱՐԵՎԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«1» ապրիլի 2022 թվականի

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՊԻՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

¹ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2022 թվականի մարտի 15-ի ՍԴՈ-1639 որոշման վերաբերյալ մեր հատուկ կարծիքը:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 22-Ի ՍԴՈՒ-1644 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
Վ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ**

1. 2022 թվականի մարտի 22-ին Սահմանադրական դատարանը դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, ՍԴՈՒ-1644 որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) որոշել է, որ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ՝

Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուի՝ մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում համաձայնություն տալու հարցի քննության և լուծման գործընթացում այդ անձանց ընտրվելու իրավունքի արդյունավետ պաշտպանության ապահովման առումով անհրաժեշտ է, որ՝

- ա) երաշխավորվի տվյալ գործընթացին անձի մասնակցությունը,
- բ) ապահովվի անձի լսված լինելու իրավունքը,
- գ) անձին ընձեռվի ընտրվելու իր իրավունքի սահմանափակումը հիմնավորող փաստաթղթերին և նյութերին ծանոթանալու, հարցեր տալու, առարկություններ ներկայացնելու, բացատրություններ տալու և միջնորդություններ ներկայացնելու հնարավորություն:

2. Սահմանադրական դատարանի մեծամասնության հետ իմ տարածայնության առանցքում դիրքորոշումների այն սկզբունքային հակասությունն է, համաձայն որի՝ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուի՝ մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորի անձեռնմխելիությունը (որով նրան տրամադրվում է պաշտպանություն քրեական հետապնդումից և ազատությունից զրկելու դեպքերի համար) չի ներառվում Սահմանադրության 48-րդ հոդվածով նախատեսված պասիվ ընտրական իրավունքի բաղադրության մեջ: Անձեռնմխելիության այս տեսակը, իմ կարծիքով, ոչ թե անձի անհատական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022 ՏԵՂԵԿՎՈՐ

հիմնական իրավունքի բաղադրիչ է, այլ Ազգային ժողովի պատգամավորի ընտրության ընթացքում Ազգային ժողովի՝ օրենսդիր իշխանության մարմնի ձևավորման հարցում գործադիր և դատական իշխանությունների հնարավոր կամայական միջամտությունների դեմ պաշտպանության երաշխիք: Հետևաբար՝ այն կարող է դիտարկվել բացառապես որպես հանրային իշխանության մարմինների և հաստատությունների ձևավորման և գործունեության կազմակերպմանն ուղղված կարգավորում, այլ ոչ մարդու որևէ, առավել ևս, հիմնական իրավունքի բաղադրիչ:

3. Անձեռնմխելիության այս տեսակը և դրա շրջանակը ներառված չեն նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության որևէ միջազգային կամ տարածաշրջանային ակտով նախատեսված անհատական իրավունքի ծավալում: Հետևաբար, Սահմանադրության 48-րդ հոդվածի կիրառության անհրաժեշտությունը սույն դիմումով բարձրացված խնդրի նկատմամբ չունի հիմք նաև Սահմանադրության 48-րդ հոդվածի՝ 81-րդ հոդվածով նախատեսված շրջանակում մեկնաբանության դիտանկյունից:

4. Ավելին, Եվրոպական ընտրական ժառանգության ավանդույթը նույնպես խիստ զգուշավոր մոտեցում ունի օրենսդիր մարմնի անդամի թեկնածուին անձեռնմխելիությամբ օժտելու Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում դրվագային պրակտիկայի նկատմամբ, ինչն իրավացիորեն նկատվել և գնահատվել է Սահմանադրական դատարանի մեծամասնության կողմից (տե՛ս Որոշման 4.3 կետը): Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի կողմից նկատվել էր Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (Group of States against corruption (GRECO)) արտահայտած առաջարկությունն այն մասին, որ առհասարակ քննարկման առարկա պետք է դարձվեր անձանց որոշակի խմբերի, այդ թվում նաև՝ պատգամավորի թեկնածուների անձեռնմխելիությունը վերացնելու հարցը:¹ Միաժամանակ, Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը նկատել է, որ՝ «...որոշ առավելություններ կամ անձեռնմխելիություններ, որոնք առկա են Հայաստանի Հանրապետությունում երբեմն ժամանակավոր, երբեմն էլ երկար կամ անսահմանափակ ժամանակով, կարող են մարդկանց քննությունից և արդարա-

¹ Տե՛ս Evaluation Report on Armenia, adopted by GRECO at its 27th Plenary Meeting (Strasbourg, 6-10 March 2006; Greco Eval I-II Rep (2005) 2E), կետ 56 (<https://rm.coe.int/16806c2abf>):

դատությունից խուսափելու հնարավորություն տալ»,¹ միաժամանակ արձանագրելով, որ «... այդ անձեռնմխելիության որոշ տեսակներ, այդ թվում նաև՝ պատգամավորի թեկնածուներին տրվող անձեռնմխելիությունը, արդարացված չեն ու կարող են հանգեցնել չարաշահումների»:²

5. Արձանագրելով մեծամասնության դիրքորոշման հետ իմ ունեցած հակասությունը՝ սույն սահմանադրական վեճի բովանդակային այլ ապեկտների քննարկման անհրաժեշտությունը վերանում է, քանի որ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուի՝ մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորի պատգամավորի անձեռնմխելիությունը Սահմանադրության 48-րդ հոդվածով պաշտպանված չլինելու նյութական սահմանադրաիրավական եզրահանգումը բացառում է սույն գործով ըստ էության քննության անցկացումը, քանի որ դիմումը ներկայացված է Սահմանադրական դատարան դիմելու իրավասությամբ օժտված մի սուբյեկտի կողմից, որն ունի ենթադրյալ սահմանադրական վեճը Սահմանադրական դատարան ներկայացնելու սահմանադրական սահմանափակում, որի բերումով սույն գործը ենթակա էր կարճման *ratione personae* հիմքով՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, քանի որ «դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան»:

6. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել Մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով:

7. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանը կարող է վիճարկել միայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին:

8. Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով հստակորեն սահմանազօծված է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից Սահմանադրական դատարան դիմելու

¹ Տե՛ս «Ընտրական գործընթացներում ներգրավված անձանց անձեռնմխելիության մասին» Վենետիկի հանձնաժողովի թիվ 492/2008 (CDL-AD(2008)024) կարծիք, կետեր 35 և 38, հրապարակվել է 2008 թվականի հոկտեմբերի 22-ին, հասանելի է՝ հետևյալ հղումով. [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2008\)024-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2008)024-e) :

² Նույնը, կետ 38.

լիազորության շրջանակը, այն է՝ բացառապես Սահմանադրության 2-րդ գլխում («Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները») ամրագրված իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթներին հակասող իրավական ակտերի վիճարկման պայմանը, որի պահպանվածության հարցը պետք է ստուգվի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված դիմումի շրջանակներում: 2022 թվականի մարտի 22-ի ՍԴԱՈ-58 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանն ընդգծել էր, որ բոլոր այն դեպքերում, երբ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացվող հարցերն աղերս չեն ունենում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնարար իրավունքի կամ ազատության խախտման հետ, ապա նշված դիմումները չեն բավարարում Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով ամրագրված պահանջները, ուստի՝ չեն բխում Մարդու իրավունքների պաշտպանի՝ Սահմանադրական դատարան դիմելու իրավասության սահմանների վերաբերյալ հստակ ամրագրած կարգավորումներից և ենթակա են մերժման:

9. Մարդու իրավունքների պաշտպանի կողմից սույն գործով ներկայացրած դիմումը 2021 թվականի հոկտեմբերի 26-ին քննության ընդունվելուց հետո Սահմանադրական դատարանի կողմից կատարված մանրամասն քննության արդյունքներով ակնհայտ է, որ չի բավարարում Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պահանջները, որոնք նախանշում են Մարդու իրավունքների պաշտպանի կողմից Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու իրավասության սահմանները, և որոնցից դուրս սահմանադրականության խնդիրներ բարձրացնելու իրավասությամբ Մարդու իրավունքների պաշտպանն օժտված չէ:

10. Հետևաբար՝ սույն գործով վարույթը չէր կարող զարգանալ ըստ էության որոշման հանգելու ուղղությամբ, այլ ենթակա էր կարճման Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա:

ՍԱԽՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ


Ծանոթագրություն. Սույն հատուկ կարծիքի 1-ին կետում կատարվել է Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1644 որոշման կայացման ամսաթվի ուղղում:

1 ապրիլի 2022 թվականի

(Ծանոթագրությամբ խմբագրված տեսքով՝ 4 ապրիլի 2022 թվականի)

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ

Վ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԱՑ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՕՐԵՆՔԻ 69-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 11-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

29 մարտի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է.
Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողների՝ «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ
բաժնետիրական ընկերության և «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական
ընկերության,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի
ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապա-
հովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ
հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական
դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

◆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության և «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության դիմումների հիման վրա՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 11-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի հունվարի 17-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի հունվարի 27-ին, և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ին:

Սահմանադրական օրենքի՝ **«Կոնկրետ գործերով վերջնական դատական ակտով իր նկատմամբ կիրառված նորմարիվ իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա»** վերտառությամբ 69-րդ հոդվածի 11-րդ մասը սահմանում է.

«11. Սույն հոդվածի 10-րդ մասը տարածվում է նաև այն անձանց վրա, որոնք Սահմանադրական դատարանում դիմումը մուտքագրվելու օրվա դրությամբ դեռևս պահպանել էին նույն հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրենց իրավունքը, սակայն չէին դիմել Սահմանադրական դատարան»:

Սահմանադրական Օրենքի վիճարկվող դրույթն ընդունվելուց հետո դրանում փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել:

Գործի քննության առիթը «ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի նոյեմբերի 5-ին, ինչպես նաև «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության 2021 թվականի նոյեմբերի 23-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

«ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումով վիճարկել է նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի սահմանադրականությունը: Սահմանադրական դատարանը, նկատի ունենալով, որ «ՌՈՍԳՈՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության անհատական դիմումը՝ Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի մասով, ակնհայտ անհիմն է, ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին մասի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022 ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

1-ին կետի, ինչպես նաև 69-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի պահանջներով, 2022 թվականի մարտի 22-ին ՍԴԱՈ-59 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթն այդ մասով կարճել է:

Սահմանադրական դատարանը 2022 թվականի մարտի 22-ի ՍԴԱՈ-60 աշխատակարգային որոշմամբ որոշել է վերը նշված դիմումների հիման վրա քննության ընդունված գործերը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի համաձայն, միավորել և քննել դատարանի նույն նիստում:

Ուսումնասիրելով դիմումները, պատասխանողի գրավոր բացատրությունները, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթն ու դրա հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. Գործի դատավարական նախապատմությունը

1.1. «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը, դիմելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, պահանջել է չեղյալ ճանաչել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը (թիվ ԵԴ/33985/02/19 քաղաքացիական գործ):

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2020 թվականի հունվարի 8-ի «Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը քննության առնելու մասին» որոշմամբ մերժել է «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության դիմումը՝ նշելով նաև, որ «(...) ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով միայն օրենքով նախատեսված սահմանափակ հիմքերի շրջանակներում և կարող է չեղյալ ճանաչվել միայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով, և ոչ թե ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման իրավաչափության ըստ էության քննության արդյունքում»:

Վերը նշված որոշման դեմ «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2020 թվականի սեպտեմբերի 23-ի որոշմամբ մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի նշված որոշման դեմ «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք, որի ընդունումը

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 2020 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ մերժվել է:

Սահմանադրական դատարանը «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ի՝ 2020 թվականի մայիսի 14-ին Սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումի հիման վրա քննության ընդունված գործի քննության արդյունքում 2020 թվականի դեկտեմբերի 8-ին ընդունված ՍԴՈ-1571 որոշմամբ (նշված գործով դատաքննությունը սկսվել է 2020 թվականի դեկտեմբերի 8-ին) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ նշված դրույթը չի սահմանափակում Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ գրավոր համաձայնագիր չկնքած Կազմակերպության՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը դատական կարգով ըստ էության վիճարկելու իրավունքը:

«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը Վճռաբեկ դատարան է ներկայացրել նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման բողոք, որը վարույթ ընդունելը Վճռաբեկ դատարանի 2021 թվականի մայիսի 5-ի որոշմամբ մերժվել է այն պատճառաբանությամբ, որ «(...) բողոք բերած անձն այն ներկայացրել է որպես «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 11-րդ մասում նշված սուբյեկտ, ում նկատմամբ սույն գործով վերջնական դատական ակտը, այն է՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի որոշումը կայացվել է 18.11.2020 թվականին, իսկ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1571 որոշումը կայացնելու համար հիմք հանդիսացած «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ի դիմում ՀՀ Սահմանադրական դատարանում մուտքագրվել է 14.05.2020 թվականին: Այսինքն՝ «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ի դիմում ՀՀ սահմանադրական դատարանում մուտքագրվելու օրվա դրությամբ սույն գործով բողոք բերած անձի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտ դեռևս առկա չի եղել՝ վերջինս սպառած չի եղել դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բացակայում են [«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ բաժնետիրական] Ընկերության կողմից ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 18.11.2020 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը նոր հանգամանքի

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

հիմքով վերանայելու բողոքը ներկայացնելու համար անհրաժեշտ վերը նշված պայմանները»:

1.2. «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (ընկերությունը վերակազմակերպվել է, և ֆիրմային անունը փոփոխվել է (ներկայումս՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն), հիմք՝ Կենտրոնական բանկի լիցենզավորման և կորպորատիվ ֆինանսների վարչության պետի 2020 թվականի հուլիսի 22-ի թիվ 13.12-19/001727-20 գրություն), դիմելով Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, պահանջել է չեղյալ ճանաչել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը (թիվ ԼԴ2/1775/02/19 քաղաքացիական գործ):

Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2020 թվականի մայիսի 26-ի որոշմամբ մերժել է ներկայացված դիմումը՝ արձանագրելով նաև, որ «(...) ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի ու դրան համապատասխան փոփոխված «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի հիմքով վերոնշյալ համաձայնագրի բացակայության դեպքում ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը կարող է չեղյալ ճանաչվել միայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով, և ոչ թե ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման իրավաչափության ըստ էության քննության աղյուսքում: (...) Ինչ վերաբերում է Դիմողի ներկայացրած փաստարկներին, ապա դրանք իրենց բովանդակությամբ վերաբերում են Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման ըստ էության վերանայելուն, մասնավորապես, Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից դիմումը քննելիս ներկայացված փաստական հանգամանքների և դրանց նկատմամբ նյութական իրավունքի կիրառման և մեկնաբանմանը, որը քննարկման ենթակա չէ»:

Վերը նշված որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2020 թվականի օգոստոսի 7-ի որոշմամբ մերժվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի նշված որոշման դեմ ընկերության կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք, որի ընդունումը մերժվել է Վճռաբեկ դատարանի 2020 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությունը Սահմանադրական դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ-1571 որոշման հիման վրա Վճռաբեկ դատարան է ներկայացրել նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման բողոք, որը վարույթ ընդունելը

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 389

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 2021 թվականի մայիսի 19-ի որոշմամբ մերժվել է այն պատճառաբանությամբ, որ «(...) բողոք բերած անձը բողոքը ներկայացրել է որպես «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 11-րդ մասում նշված սուբյեկտ, ում նկատմամբ սույն գործով վերջնական դատական ակտը, այն է՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը կայացվել է 21.10.2020 թվականին, իսկ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1571 որոշումը կայացնելու համար հիմք հանդիսացած «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի դիմումը Սահմանադրական դատարանում մուտքագրվել է 14.05.2020 թվականին: Այսինքն՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի դիմումը Սահմանադրական դատարանում մուտքագրվելու օրվա դրությամբ սույն գործով բողոք բերած անձի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտ դեռևս առկա չի եղել՝ վերջինս սպառած չի եղել դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բացակայում են [«ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության] Բանկի կողմից ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 21.10.2020 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու բողոքը ներկայացնելու համար անհրաժեշտ վերը նշված պայմանները»:

2. Դիմողների դիրքորոշումները

2.1. «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը նշում է, որ Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 11-րդ մասը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին և իրավակիրառ պրակտիկայում տեղիք է տալիս կամայական տարածական մեկնաբանության, իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման՝ հանգեցնելով դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և անձի արդար դատաքննության իրավունքի խախտման:

Բացի դրանից, գործող իրավակարգավորումներից հետևում է, որ եթե անձը դեռևս սպառած չլինի պաշտպանության բոլոր միջոցները և այլ անձի կողմից նույն հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու պահին զրկված լինի իր նկատմամբ կիրառված նորմի սահմանադրականության հարցը պարզելու համար Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու հնարավորությունից, հետագայում զրկվում է թե՛ Սահմանադրական դատարան

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

անհատական դիմում ներկայացնելու հնարավորությունից, թե՛ այլ անձի անհատական դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանի կողմից ըստ էության կայացված որոշմամբ արտահայտած դիրքորոշումներն ի նպաստ իրեն օգտագործելու (իր նկատմամբ կայացված դատական ակտը նոր հանգամանքներով վերանայելու) հնարավորությունից: Փաստորեն դատական պաշտպանության իրավունքն արդյունավետորեն իրացվելու հնարավորություն ունի միայն այն անձը, որն ավելի շուտ է ձեռք բերում Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու իրավունքը և ավելի շուտ է այն իրացնում, իսկ մյուս անձինք, որոնք ունեն նույն խնդիրը, պարզապես զրկվում են այդ հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա «ՌՈՍԳՈՍՍՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը գտնում է, որ Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 11-րդ մասը հակասում է Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 79-րդ հոդվածներին այնքանով, որքանով չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին և ոչ իրավաչափորեն սահմանափակում է Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա նոր հանգամանքով գործը վերանայելու այն անձանց իրավունքը, որոնց նկատմամբ դատական ակտով կիրառվել է այլ անձի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանի որոշմամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմը, կամ դրա կիրառումն իրականացվել է Սահմանադրական դատարանի կողմից տրված մեկնաբանությանը չհամապատասխանող ձևով այն պարագայում, երբ նշված անձինք ղեռնս ձեռք չէին բերել Սահմանադրական դատարան նույն հարցով դիմելու իրավունք, բայց միևնույն ժամանակ այն չէին սպառել:

2.2. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությունը նշում է, որ օրենսդիրն իր պաշտպանության տակ է առնում Սահմանադրական դատարանի դիմում ներկայացնողին և մինչև Սահմանադրական դատարանի դիմում ներկայացնելը դատական պաշտպանության միջոցներն սպառած սուբյեկտներին, սակայն չի պաշտպանում այն սուբյեկտներին, որոնք դատական պաշտպանության միջոցներն սպառել են երրորդ անձի կողմից Սահմանադրական դատարանի դիմելուց հետո, սակայն մինչև Սահմանադրական դատարանի կողմից որոշման կայացումը, և վերջիններս ստիպված են կրել Սահմանադրությանը հակասող դատական ակտի բացասական հետևանքները:

Ավելին, հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է նոր հանգամանքի հիմքով վերանայման և

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

դրա արդյունքում բեկանման: Նոր հանգամանքի (կիրառված նորմը հակասահմանադրական ճանաչված լինելու) հիմքով դատական ակտի վերանայման վարույթի ընթացքում դատական ակտը չբեկանելու միակ հնարավոր տարբերակ է դիտվում այն դեպքը, երբ հակասահմանադրական ճանաչված նորմի կիրառումն ըստ էության չէր կարող ազդել գործի ելքի վրա:

Վերոգրյալի հիման վրա «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությունը գտնում է, որ Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 11-րդ մասը, կամ առնվազն նշված նորմին Վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանությունը հակասում է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին, քանի որ գրկում է անձին դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներից օգտվելու հնարավորությունից:

3. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողի համոզմամբ՝ Սահմանադրական դատարանն դիմելու նախապայմաններից մեկի՝ դատարանի վերջնական ակտի դեռևս առկա չլինելը որևէ պարագայում չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրական դատարանն դիմելու իրավունքի չպահպանում: Քաղաքացիական գործերով, օրինակ, անձը կարող է Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումը ՀՀ պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրվանից սկսած եռամսյա ժամկետում ներկայացնել նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք:

Այսինքն՝ անձին պետք է տրվի հնարավորություն վերականգնել իր խախտված սահմանադրական իրավունքը Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված կարգով դատական ակտը վերանայելու գործընթաց նախաձեռնելու միջոցով, քանի որ վերջինս այլևս գրկված է նույն հարցով Սահմանադրական դատարանն դիմում ներկայացնելու հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթը համապատասխանում է Սահմանադրությանը:

4. Գործի շրջանակներում պարզաբանման ենթակա հանգամանքները

Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակում վիճարկվող իրավադրույթի սահմանադրականությունը պարզելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1. արդյո՞ք վիճարկվող դրույթում ամրագրված իրավակարգավորումը համապատասխանում է իրավական որոշակիության սկզբունքին՝ պայմանավորված այդ դրույթում «դեռևս պահպանել էին» ձևակերպման առկայությամբ,

2. արդյո՞ք վիճարկվող դրույթը համահունչ է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների պահանջներին այնքանով, որքանով ըստ էության բացառում է այն անձանց նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերի վերանայումը, որոնք դատական պաշտպանության միջոցներն սպառել են Սահմանադրական դատարանում դիմումը մուտքագրվելուց հետո, սակայն նրանց նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ անձի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման օրվա դրությամբ լրացած չի եղել նրանց կողմից Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու ժամկետը:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սահմանադրության 79-րդ հոդվածն ամրագրում է որոշակիության սկզբունքը՝ սահմանելով, որ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Սահմանադրական դատարանն իր բազմաթիվ որոշումներում արդեն իսկ անդրադարձել է նշված սկզբունքին՝ նշելով, մասնավորապես, հետևյալը.

- «(...) օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (...) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (18.04.2006թ. ՍԴՈ-630),

- «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ

դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (13.05.2008թ. ՍԴՈ-753),

- «(...) իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» (02.12.2014թ. ՍԴՈ-1176),

- «Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ» (09.06.2015թ. ՍԴՈ-1213),

- «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով» (03.05.2016թ. ՍԴՈ-1270),

- «(...) իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է նաև դատարանների որոշումների հստակություն և կանխատեսելիություն, ինչը թույլ է տալիս իրավահարաբերությունների մասնակիցներին համապատասխան պատկերացում կազմել իրենց վարքագծի հնարավոր հետևանքների մասին» (03.05.2016թ. ՍԴՈ-1270):

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասը սահմանում է, որ նույն հոդվածում նշված գործերով՝ նորմատիվ իրավական ակտի՝ դիմողի նկատմամբ կիրառված դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը, այդ դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ գտել է, որ այն նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի վիճարկվող 11-րդ մասն ամրագրում է, որ նույն հոդվածի 10-րդ մասը տարածվում է նաև այն անձանց վրա, որոնք Սահմանադրական դատարանում դիմումը մուտքագրվելու օրվա դրությամբ դեռևս պահպանել էին նույն հարցով Սահմանադրական դատարանի դիմելու իրենց իրավունքը, սակայն չէին դիմել Սահմանադրական դատարան:

Վիճարկվող դրույթից հետևում է, որ վերջնական դատական ակտը Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերանայելու կարգավորումը, բացի անհատական դիմում ներկայացրած անձից, որի դիմումի հիման վրա քննության ընդունված գործի քննության արդյունքում ընդունվել է Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումը, նաև տարածվում է այն անձանց վրա, որոնք թեև չեն դիմել Սահմանադրական դատարան, սակայն իրենց նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ անձի դիմումը Սահմանադրական դատարանում մուտքագրվելու օրվա դրությամբ ունեցել են նույն հարցով Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք: Այսինքն՝ Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված կարգավորումից օգտվելու հնարավորությունը գնահատելու համար բավարար է պարզել, թե արդյոք համապատասխան դիմումը Սահմանադրական դատարանում մուտքագրվելու օրվա դրությամբ տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձն ունեցել է նույն հարցով Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք, թե՛ ոչ: Ըստ այդմ, Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 11-րդ մասը նույն հոդվածի 10-րդ մասում ամրագրված դրույթի գործողությունը տարածում է այն անձանց վրա, որոնք բավարարում են հետևյալ պահանջները.

ա) նրանց նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է նորմատիվ իրավական ակտի այն դրույթը, որն այլ անձի դիմումի հիման վրա գործով ճանաչվել է Սահմանադրությանը հակասող և անվավեր, կամ այն դրույթը, որն այլ անձի դիմումի հիման վրա գործով Սահմանադրական դատարանն իր մեկնաբանությամբ ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող,

բ) նրանց նկատմամբ վերը նշված դրույթը կիրառվել է դատարանի վերջնական ակտով,

գ) նրանք սպառել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

դ) թեև նրանք չեն դիմել Սահմանադրական դատարան, սակայն նրանց կողմից Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու ժամկետը չէր ավարտվել այն օրվա դրությամբ, երբ Սահմանադրական դատարանում մուտքագրվել էր վերը նշված դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ անձի դիմումը:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը վիճարկվող դրույթը սահմանել է բավարար հստակությամբ, ուստի անձը ողջամիտ սահմաններում ի վիճակի է կանխատեսել իր վարքագծի հետևանքները և հնարավորություն ունի իր վարքագիծը ներդաշնակեցնել սահմանված կարգավորումներին: Նման պայմաններում Սահմանադրական օրենքի քննարկվող դրույթը որոշակիության առումով սահմանադրականության խնդիր չի հարուցում:

5.2. Սահմանադրական դատարանը գտնում է, որ առաջադրված երկրորդ հարցն անհրաժեշտ է քննարկել կոնկրետ գործերով սահմանադրական վերահսկողության ինստիտուտի նշանակության և անձի խախտված իրավունքների դատական պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտության համատեքստում:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Վերոնշյալ դրույթից հետևում է, որ անհատական սահմանադրական դիմումի (գանգատի) շրջանակում սահմանադիրը նորմատիվ իրավական ակտի դրույթի՝ Սահմանադրությանն անհամապատասխանության և դրա հետևանքով անձի հիմնական իրավունքների և ազատությունների խախտման հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավունքով օժտել է յուրաքանչյուր անձի՝ որոշակի պարտադիր պայմանների առկայության դեպքում, որոնք են՝ ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը, բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները, գ) երբ դիմողը վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտ-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

ման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական դատարանը 2008 թվականի ապրիլի 15-ի ՍԴՈ-751 որոշմամբ նշել է, որ «Սահմանադրական դատարանի կողմից իրականացվող կոնկրետ վերահսկողությանը մասնավորապես բնորոշ է իրավական ակտի սահմանադրականության մասին որոշման տարածումը տվյալ գործին առնչվող իրավահարաբերությունների վրա: Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում նաև անհատական շահերի պաշտպանության խնդիրը: Այս բնորոշ գծերին համահունչ՝ ՀՀ ներպետական օրենսդրությունը նախատեսել է շահագրգիռ անձի անհատական դիմումի հիման վրա ընդունված՝ սահմանադրական դատարանի որոշման արդյունքում տվյալ դիմողի առնչությամբ կայացված դատական ակտի վերանայման հնարավորությունը, ինչը լիարժեքություն և արդյունավետություն է հաղորդում սահմանադրական դատարանում անհատական դիմումի հիման վրա անձի սահմանադրական իրավունքների՝ որպես անմիջականորեն գործող իրավունքների, պաշտպանությանը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անհատական սահմանադրական դիմում (գանգատ) ներկայացնելու վերջնական նպատակը Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա՝ անձի խախտված հիմնական իրավունքների և ազատությունների վերականգնումն է, որն էլ կարող է երաշխավորվել Սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա նոր հանգամանքի հիմքով վերջնական դատական ակտերի վերանայման միջոցով:

Սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի առնչությամբ Սահմանադրական դատարանը նախկինում արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ:

Այսպես՝ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի միջոցով ապահովվում է խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը: Խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum)» (15.07.2011թ. ՍԴՈ-984):

Ըստ այդմ՝ «(...) սահմանադրական դատարան դիմելու՝ անձի իրավունքի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական

դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի լիարժեք օրենսդրական կարգավորում, որը հնարավորություն կտա անձին վերականգնելու սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կիրառման արդյունքում խախտված իր սահմանադրական իրավունքը» (31.05.2013թ. ՍԴՈ-1099): Միաժամանակ Սահմանադրական դատարանը մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ «(...) քննելով սահմանադրական (հանրային-իրավական բնույթի) գործեր՝ սահմանադրական դատարանը կայացնում է որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման դատական համակարգի մյուս մարմինների՝ ՀՀ ընդհանուր իրավասության և մասնագիտացված բոլոր դատարանների կողմից: (...) իրավական ակտերի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշմանը հաջորդում են իրավական հետևանքներ (նոր հանգամանքներ), որոնք պարտադիր հանգեցնում են օրենքով սահմանված կարգով դատական ակտերը վերանայելուն» (25.02.2011թ. ՍԴՈ-943):

Ելնելով վերոնշյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով կայացված որոշումների հիման վրա անհրաժեշտ օրենսդրական ընթացակարգերով դատական ակտերի վերանայումը Սահմանադրության գերակայությունը երաշխավորող արդյունավետ միջոց է, հետևաբար՝ նաև սահմանադրաիրավական պահանջ, որն ուղղված է անձանց իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության ապահովմանը: Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման առկայության պայմաններում դատական ակտի վերանայման անհրաժեշտությունը բխում է նաև կոնկրետ գործերով սահմանադրական վերահսկողության ինստիտուտի էությունից և նշանակությունից: Ուստի այն դեպքում, երբ անձի նկատմամբ վերջնական դատական ակտը կայացվել է Սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական ճանաչված դրույթի (ինչպես նաև Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ սահմանադրական ճանաչված, սակայն ըստ Սահմանադրական դատարանի՝ դիմողի նկատմամբ այլ մեկնաբանությամբ կիրառված դրույթի) կիրառմամբ, ապա նշված դեպքի հետևանքը պետք է լինի նոր հանգամանքի հիմքով այդ դատական ակտի վերանայումը՝ օրենքով սահմանված կարգով: Ուստի Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրի կողմից պետք է նախատեսվեն դրա իրացման համապատասխան կառուցակարգեր:

Միաժամանակ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հնարավոր են իրավիճակներ, երբ անձը, ունենալով կոնկրետ գործով դատարանի վերջնական ակտ և սպառելով դատական պաշտպանության բոլոր միջոցները, այնուամենայնիվ, Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված ժամկետում (դատական պաշտպանության բոլոր միջոցներն սպառելուց՝ վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետ՝ համաձայն Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի) հնարավորություն չի ունենում Սահմանադրական դատարանում վիճարկել վերջնական դատական ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման:

Այսպես՝ օրենսդիրը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու հիմքերի թվին է դասել նաև Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-5-րդ կետերում նշված գործերով ներկայացված որևէ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման առկայությունը, ինչպես նաև դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննության իրականացումը (Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետեր):

Փաստորեն վերը նշված օրենսդրական արգելքի հետևանքով անձինք կարող են որոշ դեպքերում հնարավորություն չունենալ Սահմանադրական դատարանի առջև բարձրացնել իրենց նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը միայն այն պատճառով, որ մեկ այլ սուբյեկտի դիմումի հիման վրա տվյալ հարցի վերաբերյալ արդեն իսկ առկա է Սահմանադրական դատարանի որոշում, կամ մեկ այլ սուբյեկտի դիմումի հիման վրա տվյալ առարկայի վերաբերյալ Սահմանադրական դատարանում իրականացվում է գործի դատաքննություն:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ 2008 թվականի ապրիլի 15-ի ՍԴՈ-751 որոշմամբ Սահմանադրական դատարանն անդրադարձել է նոր հանգամանքի հիմքով այն անձանց իրավունքների վերականգնման հնարավորություն նախատեսելու անհրաժեշտության հարցին, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման և տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ անձի դիմումի (դիմումների) հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա

կամ այդ հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:

Նշված որոշմամբ Սահմանադրական դատարանը, քննարկելով նաև «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի (ուժը կորցրել է 2018 թվականի ապրիլի 9-ին)՝ մինչև 2011 թվականի նոյեմբերի 21-ը գործող խմբագրությամբ 69-րդ հոդվածի 12-րդ մասի («Սույն հոդվածում նշված գործերով օրենքի՝ դիմողի կողմից վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունվելու դեպքում դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտը օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման») սահմանադրականության հարցը, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

«Սահմանադրական իրավունքների պաշտպանության նպատակով սահմանադրական դատարան դիմելու՝ սահմանադրական արդարադատության իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությունը պահանջում է, որպեսզի այդ իրավունքի իրացումը կախվածության մեջ չդրվի տվյալ անձի կամքից անկախ առաջացած որևէ հանգամանքից: Հետևաբար, յուրաքանչյուր անձ պետք է հնարավորություն ունենա օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում օգտվելու սահմանադրական դատարանի միջոցով տրամադրվող իրավական պաշտպանությունից: Նման հնարավորությունը կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա վերանայվեն նաև այն անձանց առնչությամբ կայացված դատական ակտերը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման և տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցով սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջև ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ (...) սահմանադրական դատարանի դիմելու անձի իրավունքի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի լիարժեք օրենսդրական կարգավորում, որը հնարավորություն կտա անձին վերականգնելու սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կիրառման արդյունքում խախտված իր սահմանադրական իրավունքը: (...) Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

հանգամանքների հիման վրա դատական ակտի վերանայման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության ապահովումը, որոնց օրենսդրորեն հստակեցնելը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

(...) Անհրաժեշտ է հստակ ամրագրել նաև այն անձանց վերաբերյալ դատական ակտերը վերանայելու օրենսդրական պահանջ, որոնք թեև սահմանադրական դատարանում չեն հանդիսացել դատավարության կողմ, սակայն սահմանադրական դատարանում իրենց գործի քննության հնարավորությունից զրկված են եղել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ կամ 5-րդ մասերի ուժով *[վերաբերում են դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման առկայությանը և դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննության իրականացմանը]*: Այլապես, սահմանադրական դատարանի դիմելու իրավունքը, ինչպես նաև խախտված իրավունքների՝ սահմանադրական դատարանի միջոցով դատական պաշտպանության իրավունքը կդառնան անիրական և երևութական՝ զուրկ լինելով արդյունավետ իրացման հնարավորությունից»:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի դրույթները ճանաչել է 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությանը հակասող և անվավեր այն մասով, որով սահմանափակվում է նոր հանգամանքների հիմքով այն անձանց իրավունքների վերականգնման հնարավորությունը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման և տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը:

Սահմանադրական դատարանը, վերը նշված որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները կիրառելի համարելով նաև սույն գործի շրջանակում բարձրացված հարցի նկատմամբ և վերահաստատելով

1/1 (105/1) 2022
 ♦ ՏԵՂԵԿՎԳԻՐ
 ♦ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

դրանք, արձանագրում է, որ որևէ սուբյեկտի կողմից Սահմանադրական դատարան դիմելու իր իրավունքի իրականացումը չպետք է խոչընդոտի Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող անձի իրավունքների պաշտպանությունը: Հետևաբար, եթե օրենսդիրը կոնկրետ գործով դատարանի վերջնական ակտ ունեցող և դատական պաշտպանության բոլոր միջոցներն սպառած անձին հնարավորություն չի տալիս վերջնական դատական ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականության հարցով դիմել Սահմանադրական դատարան՝ տվյալ հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման առկայության, ինչպես նաև դիմումի առարկայի վերաբերյալ այլ անձի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննության իրականացման հիմքերով, ապա այդ անձինք չպետք է կրեն այդ արգելքի բացասական հետևանքները: Մասնավորապես՝ նրանց համար պետք է ապահովվի Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա նոր հանգամանքի հիմքով վերջնական դատական ակտի վերանայման այն հնարավորությունը, որը կապահովվեր, եթե Սահմանադրական դատարանի որոշումն ընդունվեր նրանց դիմումի հիման վրա քննության ընդունված գործի քննության արդյունքում:

5.3. Վիճարկվող դրույթից՝ Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 11-րդ մասից հետևում է, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտն այլ անձի կողմից Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի հիման վրա հարուցված գործի քննության արդյունքում ընդունված որոշման հիմքով վերանայելու համար, ի թիվս այլնի, անհրաժեշտ է, որ այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձը Սահմանադրական դատարանում այլ անձի դիմումը մուտքագրվելու օրվա դրությամբ դեռևս պահպանած լինի նույն հարցով Սահմանադրական դատարան դիմելու իր իրավունքը: Փաստորեն Սահմանադրական դատարանում տվյալ գործով դիմող չհանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի՝ Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա նոր հանգամանքի հիմքով վերանայումը հնարավոր չէ, եթե այդ անձը համապատասխան դիմումը Սահմանադրական դատարանում մուտքագրվելու օրվա դրությամբ չի ունեցել նույն հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք: Նշվածից հետևում է, որ Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 11-րդ մասում ամրագրված կարգավորումից չեն կարող օգտվել ոչ միայն այն ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնց նկատմամբ վերջնական դատական

ակտի օրինական ուժի մեջ մտնելու (դատական պաշտպանության միջոցներն սպառվելու) և Սահմանադրական դատարանում այլ անձի դիմումը մուտքագրվելու օրվա միջև առկա է վեց ամիսը գերազանցող ժամանակահատված (հաշվի առնելով Սահմանադրական դատարան դիմելու համար Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետը), այլև այն ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք դատական պաշտպանության միջոցներն սպառել են Սահմանադրական դատարանում այլ անձի դիմումը մուտքագրվելուց հետո, սակայն մինչև այդ գործի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի որոշման հրապարակումը:

Սույն գործի շրջանակում Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդարդառնալ այն իրավիճակներին (ինչպես սույն գործով դիմողների դեպքում է), երբ ֆիզիկական կամ իրավաբանական անձի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ է մտել (դատական պաշտպանության միջոցներն սպառվել են) Սահմանադրական դատարանում այլ անձի դիմումը մուտքագրվելու և այդ գործի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման միջև ընկած ժամանակահատվածում: Մասնավորապես՝ հնարավոր է, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը վերը նշված ժամանակահատվածում օրինական ուժի մեջ մտնելու (դատական պաշտպանության միջոցներն սպառվելու) պայմաններում վերջինս, հաշվի առնելով Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված դրույթները, հնարավորություն չունենա իրականացնելու Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով երաշխավորված իր իրավունքը՝ դիմումի առարկայի վերաբերյալ այլ անձի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննություն իրականացվելու կամ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման առկայության հիմքով: Այնուհետև, այդ պայմաններում Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված կարգավորման հետևանքով չի ապահովվի այդ անձի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի վերանայումն այլ անձի դիմումի հիման վրա հարուցված գործի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունված որոշման հիման վրա նոր հանգամանքի հիմքով:

Փաստորեն, հիմք ընդունելով նորմատիվ իրավական ակտի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատաս-

խանող ճանաչելու մասին Սահմանադրական դատարանի որոշումների նշանակությունը դատարաններում քննվող (քննված) գործերով դատավարության մասնակիցների համար՝ ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել վերջիններիս հետևյալ խմբերը.

1) անձինք, որոնց նկատմամբ համապատասխան դրույթը վերջնական դատական ակտով կիրառվել է, և նրանք դատական պաշտպանության միջոցներն սպառել են մինչև այլ անձի դիմումը Սահմանադրական դատարանում մուտքագրվելու օրը և այդ օրվա դրությամբ չեն կորցրել Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը (օրենքով սահմանված ժամկետն ավարտվելու հետևանքով). նշված անձանց նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը, սույն գործով վիճարկվող դրույթի համաձայն, նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման այն դեպքում, երբ այդ դատական ակտով կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթն այլ անձի դիմումի հիման վրա ճանաչվել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող.

2) անձինք, որոնք դատական պաշտպանության միջոցներն սպառել են այլ անձի դիմումի հիման վրա գործով Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման հրապարակումից հետո, այսինքն՝ նրանց մասնակցությամբ դատական գործընթացները Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումը հրապարակելու դրությամբ դեռևս ընթանում էին. նշված անձանց մասնակցությամբ գործերով դատարանները պետք է առաջնորդվեն Սահմանադրական դատարանի համապատասխան որոշմամբ, դրանով արտահայտված դիրքորոշումներով, ինչը բխում է Սահմանադրության գերակայությունն ապահովելու՝ Սահմանադրական դատարանի առաքելությունից (Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մաս) և անհրաժեշտ է իրավական անվտանգության ապահովման համար.

3) անձինք, որոնք դատական պաշտպանության միջոցներն սպառել են այլ անձի դիմումը Սահմանադրական դատարանում մուտքագրվելու և այդ դիմումի հիման վրա գործով Սահմանադրական դատարանի կողմից որոշումը հրապարակելու միջև ընկած ժամանակահատվածում, և Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն զրկված են եղել Սահմանադրական դիմելու հնարավորությունից: Նշված անձինք, ըստ ներկայումս գործող իրավակարգավորումների, այլ անձի դիմումի հիման վրա գործով Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման հիման վրա չեն կարող

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

պահանջել իրենց նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի՝ նոր հանգամանքի հիմքով վերանայում:

Նշվածից հետևում է, որ վերը նշված առաջին երկու կետերում ներառված անձանց դեպքերում Սահմանադրական դատարանի որոշումն ունենում է որոշակի ազդեցություն, այն է՝ մի դեպքում այն հանգեցնում է վերջնական դատական ակտի՝ նոր հանգամանքի հիմքով վերանայման, իսկ մյուս դեպքում՝ դատարաններն առաջնորդվում են այդ որոշմամբ և դրանով արտահայտված դիրքորոշումներով, ինչը ևս Սահմանադրական դատարանի որոշման կատարման դրսևորում է: Ի հակադրումն նշված անձանց՝ երրորդ կետում ներառված անձանց մասնակցությամբ գործերի վրա Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումը չի ունենում որևէ ազդեցություն այն իմաստով, որ այդ որոշման կատարման վերը նշված կառուցակարգերից որևէ մեկը չի գործադրվում: Մասնավորապես՝ այդ անձանց նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերը ենթակա չեն վերանայման նոր հանգամանքի հիմքով, իսկ նրանց մասնակցությամբ դատական գործերի շրջանակում դատարանների՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ առաջնորդվելն այլևս հնարավոր չէ՝ դատական պաշտպանության միջոցները նախքան Սահմանադրական դատարանի որոշման հրապարակումն սպառված լինելու հետևանքով:

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ այն ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնց նկատմամբ կայացված վերջնական դատական ակտն ուժի մեջ է մտել (դատական պաշտպանության միջոցներն սպառվել են) Սահմանադրական դատարանում այլ անձի դիմումը մուտքագրվելու և այդ գործի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման միջև ընկած ժամանակահատվածում, և վերջիններս Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված՝ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննությունը մերժելու հիմքերի առկայության պայմաններում զրկված են եղել Սահմանադրական դատարանի դիմելու հնարավորությունից, պետք է ունենան վերջնական դատական ակտի վերանայման հավասար հնարավորություն:

Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 11-րդ մասում ամրագրված կարգավորումների պայմաններում չեն ապահովվում այն ֆիզիկական և իրավաբանական անձանց արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրականացման անհրաժեշտ կառուցակարգեր, որոնք Սահմանադրական դատարանի դիմելու հնարա-

վորություն չեն ունեցել Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված կարգավորումների հետևանքով: Նշվածը հանգեցնում է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներում ամրագրված պահանջների խախտման:

5.4. Միաժամանակ Սահմանադրական դատարանը փաստում է, որ, ինչպես նշվեց, վերը նշված անձանց նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու անհրաժեշտությունը Սահմանադրական դատարանն արձանագրել է 2008 թվականի ապրիլի 15-ի ՍԴՈ-751 որոշմամբ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 2018 թվականի ապրիլի 9-ին)՝ մինչև 2011 թվականի նոյեմբերի 21-ը գործող խմբագրությամբ 69-րդ հոդվածի 12-րդ մասը համապատասխան մասով ճանաչելով 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությանը հակասող և անվավեր: Փաստորեն օրենսդիրը սույն գործով վիճարկվող կարգավորումները սահմանելիս մինչև ՍԴՈ-751 որոշման ընդունումը գործող իրավակարգավորումների համեմատ ընդլայնել է այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերը ենթակա են նոր հանգամանքի հիմքով վերանայման՝ դրանում ներառելով նաև այն անձանց, որոնք Սահմանադրական դատարանում դիմումը մուտքագրվելու օրվա դրությամբ դեռևս պահպանել էին նույն հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրենց իրավունքը: Այդուհանդերձ, վիճարկվող կարգավորումները նախատեսելիս օրենսդիրը չի իրացրել Սահմանադրական դատարանի ՍԴՈ-751 որոշմամբ արտահայտված դիրքորոշումները՝ ամրագրելով այնպիսի դրույթ, որն ըստ էության բացառում է այն անձանց նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերի վերանայումը, որոնք դատական պաշտպանության միջոցներն սպառել են Սահմանադրական դատարանում դիմումը մուտքագրվելուց հետո, սակայն նրանց նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ անձի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման օրվա դրությամբ լրացած չի եղել նրանց կողմից Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու ժամկետը:

Վերոգրյալի կապակցությամբ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը ենթադրում է նաև, որ օրենսդիր մարմինը կարգավորումներ սահմանելիս պարտադիր կերպով պետք է հաշվի առնի Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչը

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

պարտադիր է Սահմանադրության պահանջների կատարման տեսանկյունից: Նշված հանգամանքն արտացոլված է Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում: Մասնավորապես՝ 2006 թվականի հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ իր որոշման մեջ Սահմանադրության նորմի իրավական բովանդակության բացահայտման կամ օրենքի նորմի սահմանադրական բովանդակության բացահայտման միջոցով ձևակերպում է իր իրավական դիրքորոշումը, որը պարտադիր բնույթ ունի ինչպես իրավակիրառողների, այնպես էլ իրավաստեղծ բոլոր մարմինների համար: Սահմանադրական դատարանը մեկ այլ՝ 2017 թվականի մարտի 28-ի ՍԴՈ-1359 որոշմամբ նշել է, որ Սահմանադրական դատարանի որոշումների պատշաճ կատարումն իրավական անվտանգության ապահովման երաշխիք է և կարևորել, որ օրենսդրորեն անհրաժեշտ է ապահովել, որ պետական մարմինները և պաշտոնատար անձինք Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը երաշխավորեն դրանց ամբողջության մեջ՝ հաշվի առնելով ոչ միայն որոշման եզրափակիչ, այլև պատճառաբանական մասում շարադրված իրավական դիրքորոշումները, որոնք սահմանադրական իրավունքի աղբյուր են և իրենց բնույթով հանդիսանում են սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություններ:

Սահմանադրական դատարանը, արձանագրելով, որ սույն գործով վիճարկվող դրույթն ընդունելիս օրենսդրի կողմից չեն իրացվել Սահմանադրական դատարանի ՍԴՈ-751 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, հարկ է համարում կրկին ընդգծել, որ իրավական նորմերի հնարավոր հակասահմանադրականությունը բացառելու նպատակով անհրաժեշտ է ապահովել Սահմանադրական դատարանի որոշումների լիարժեք կատարումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 11-րդ մասն այն մասով, որ չի նախատեսում այն անձանց նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերի՝ նոր հանգամանքի հիմքով վերանայում, որոնք դատական պաշտպանության միջոց-

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ներն սպառել են Սահմանադրական դատարանում այլ անձի դիմումը մուտքագրվելուց հետո, սակայն նրանց նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ անձի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման օրվա դրությամբ լրացած չի եղել նրանց կողմից Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու համար սահմանված վեցամսյա ժամկետը, ճանաչել Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ


Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

29 մարտի 2022 թվականի
ՍԴՈ-1645

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

◆ ՏԵՂԵԿՎՊԻՐ

◆ 1/1 (105/1) 2022



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ
137.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

29 ապրիլի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե.
Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի՝ Մարդու իրավունքների պաշտպանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի
ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահով-
ման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսինյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ
հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական
դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին
մասի և 68-րդ հոդվածի,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու
իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրա-
պետության քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածի՝ Սահմանադրությանը
համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2003 թվականի ապրիլի 29-ին և ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ից:

Օրենսգրքի «Ծանր վիրավորանքը» վերտառությամբ 137.1-ին հոդվածը սահմանում է.

«1. Անձին ծանր վիրավորանք հասցնելը՝ հայիոյելը կամ նրա արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելը՝ պատժվում է տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կամ անձի վերաբերյալ ծանր վիրավորանք պարունակող նյութեր տարածելը, որը՝

1) կատարվել է տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով կամ հրապարակային այլ եղանակով,

2) կատարվել է անձի հանրային գործունեությամբ պայմանավորված՝ պատժվում է տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է միևնույն անձի նկատմամբ պարբերաբար՝

պատժվում է տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երեքհազարապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով:

Սույն հոդվածում հանրային գործունեություն է համարվում անձի կողմից լրագրողական, հրապարակախոսական գործունեության, ծառայողական պարտականությունների կատարման, հանրային ծառայության կամ հանրային պաշտոն զբաղեցնելու, հասարակական կամ քաղաքական գործունեության հետ կապված վարքագիծը»:

Սույն հոդվածն Օրենսգրքում լրացվել է Ազգային ժողովի կողմից 2021 թվականի հուլիսի 30-ին ընդունված ՀՕ-323-Ն օրենքով, որը Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել է 2021 թվականի օգոստոսի 20-ին և ուժի մեջ մտել՝ նույն թվականի օգոստոսի 30-ին: Այդ օրենքով 137.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը ներառվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածով նախատեսված «Տուժողի բողոքի հիման վրա հարուցվող քրեական գործերի» շրջանակում:

Օրենսգրքի վերոնշյալ դրույթները որևէ փոփոխության և լրացման չեն ենթարկվել:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ դիմող)՝ 2021 թվականի հոկտեմբերի 14-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող հոդվածը ու վերջինիս հետ փոխկապակցված օրենսդրական այլ դրույթներ՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. Դիմողի դիրքորոշումները

Սույն դիմումով վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը դիմողը դիտարկել է Սահմանադրությամբ երաշխավորված կարծիքի արտահայտման ազատության բովանդակության, դրա սահմանափակման համար սահմանադրական և միջազգային երաշխիքների, Սահմանադրությամբ ամրագրված իրավական որոշակիության, համաչափության սկզբունքների, ինչպես նաև հիմնական իրավունքների ու ազատությունների և միջազգային իրավական պրակտիկայի համատեքստում:

Դիմողը նշում է, որ խոսքի ազատությունը նպաստում է ողջամիտ հանրային բանավեճին, որն իր հերթին բազմակարծության, հանդուրժողականության վրա հիմնված ժողովրդավարական հասարակության նախադրյալ է: Լրագրողների ու մամուլի մասնակիցների խնդրո առարկա իրավունքին ցանկացած միջամտություն ունենում է սոցիալական հետևանքներ, քանի որ նման սահմանափակումը միջամտում է նաև տեղեկություններ փնտրելու և ստանալու այլոց իրավունքին ու հանրային բանավեճին:

Դիմողի համոզմամբ՝ հանրային տիրույթում կարծիքի արտահայտման ազատության ոչ իրավաչափ դրսևորումների, այդ թվում՝ ատելության խոսքի, վիրավորանքի ու զրպարտության դեմ պետության հակազդման, խախտված իրավունքների վերականգնման արդյունավետ միջոցները պետք է երաշխավորվեն թե՛ օրենսդրական, թե՛ գործնական մակարդակներում: Միևնույն ժամանակ, դիմողը նկատում է, որ հակազդման այդ կառուցակարգերը պետք է լինեն որոշակի, համաչափ և արդյունավետ՝ հետապնդվող նպատակին հասնելու համար:

Դիմողն ընդգծում է, որ հատկապես հանրային որևէ տեսակի պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են դրսևորել հանրային համերաշխության օրինակելի պահվածք, այդ թվում՝ հանրային խոսքում: Ատելության, ինչպես նաև մարդու արժանապատվության դեմ ուղղված և խոսքի ազատության իրավաչափ շրջանակներից դուրս գտնվող խոսքը դատապարտելի է: Միևնույն ժամանակ, ոչ իրավաչափ այդ արատավոր

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

երևույթների, այդ թվում՝ ծանր վիրավորանքի դեմ պայքարի հարցում պետության մեթոդներն ու գործիքները, դիմողի գնահատմամբ, պետք է լինեն անհրաժեշտ ու պիտանի՝ իրավաչափ նպատակին հասնելու համար: Վերոգրյալը հատկապես վերաբերում է քրեականացմանը՝ որպես պետական հարկադրանքի առավել խիստ գործիքի կիրառմամբ պետական միջամտություն:

Դիմողն անդրադառնում է նաև ծանր վիրավորանքի՝ որպես քրեական օրենքով արգելված արարքի և վիրավորանքի՝ որպես քաղաքացիաիրավական ինստիտուտի հարաբերակցությանը՝ նշելով. «Վիրավորանքի ապաքրեականացման և քրեականացման հարցի շուրջ պետության քաղաքականության որևէ կերպ չհստակեցված այս մոտեցմամբ՝ հարց է առաջանում, թե նման արարքն ինչ որակում է ստանալու և, ըստ այդմ՝ քրեաիրավական, թե քաղաքացիաիրավական պաշտպանության ներքո են լինելու: Այլ կերպ՝ իրավակիրառ պրակտիկայում ինչպես են համադրվելու ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-րդ հոդվածում ամրագրված արարքից քրեաիրավական պաշտպանությունը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն քաղաքացիական իրավունքի պաշտպանությունը»:

Դիմողը նշում է, որ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծն առաջին և երկրորդ ընթերցմամբ ընդունվել է Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանում (2021 թվականի հուլիսի 30-ին)՝ հրատապության կարգով, առանց քննարկումների: Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանում քննարկման առարկա նախագիծը, որը ենթադրում է սահմանադրական հիմնական իրավունքի սահմանափակում, հրատապորեն ընդգրկվել է արտահերթ նստաշրջանի օրակարգում, և հանրության ու մասնագիտական շրջանակների մասնակցությունը չի ապահովվել:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթով սահմանված «արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորել» ձևակերպումը խնդրահարույց է իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից: Նշված ձևակերպմամբ ոչ միայն բացահայտված չէ տվյալ հասկացության բովանդակությունը, այլև առհասարակ պարզ չէ, թե ինչ չափանիշների կամ սկզբունքի հիման վրա է որոշվելու անձի արժանապատվության ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելը:

Ըստ դիմողի՝ «ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորել» ձևակերպումը խիստ գնահատողական է, և ամեն կոնկրետ դեպքում այս կամ այն գործողությունը՝ որպես անձի արժանապատվության ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելու հանգամանք որակելու համար պետք է

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

առկա լինի նորմատիվ-նկարագրական հատկանիշների շրջանակ, ինչը չկա նշված կարգավորման մեջ:

Դիմողը նշում է, որ Օրենսգրքի 137.1-ին հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ հոդվածում հանրային գործունեություն է համարվում անձի կողմից լրագրողական, հրապարակախոսական գործունեության, ծառայողական պարտականությունների կատարման, հանրային ծառայության կամ հանրային պաշտոն զբաղեցնելու, հասարակական կամ քաղաքական գործունեության հետ կապված վարքագիծը:

Դիմողի կարծիքով՝ նման ձևակերպումը սկզբունքային հարցեր է առաջ բերում, քանի որ պարզ չէ, թե որն է համարվում հրապարակախոսական գործունեություն, կամ որն է համարվում քաղաքական գործունեություն: Հոդվածի որակյալ հանցակազմի հատուկ սուբյեկտների անորոշ շրջանակի խնդրահարույց լինելը, դիմողի գնահատմամբ, մտահոգիչ է այն դիտարկմամբ, որ անորոշության պայմանում կիրառության մեջ ստացվելու է, որ անձանց լայն շրջանակ դառնալու է հատուկ պաշտպանության սուբյեկտ՝ խնդրո առարկա հոդվածի շրջանակում և, ըստ այդմ, օգտվելու է բարձր երաշխիքներից: Դիմողը գտնում է, որ պաշտպանության ենթակա անձանց շրջանակի նման լայն ձևակերպման պարագայում ստացվում է, որ վիրավորանքից քրեական արգելքով պաշտպանություն է ամրագրվել հանրային ծառայության ողջ համակարգի համար:

Դիմողն արձանագրում է, որ օրենսդրական այս կարգավորումներն անխուսափելիորեն կարող են հանգեցնել կարծիքի արտահայտման ազատության ոչ իրավաչափ սահմանափակման՝ ոչ թե անձին հայիոյելը կամ նրա արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելը՝ որպես խոսքի ազատություն դիտարկելու տիրույթում քննարկելու, այլ վիճարկվող դրույթի որոշակիության և համաչափության սկզբունքի բացակայության, միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները գերազանցող հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումների նախատեսման արգելքի տեսանկյունից:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ դիմողը խնդրում է որոշել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 137.1-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 42-րդ, 78-րդ, 79-րդ և 81-րդ հոդվածներին համապատասխանությունն, քանի որ խնդրահարույց է դիտարկվում խնդրո առարկա ծանր վիրավորանքի քրեականացումը՝ նման արարքների ապաքրեականացման չափորոշիչների, սկզբունքների և իրավունքի զարգացման արդյունքում ձևավորված միտումների, վիրավորանքի՝ որպես քաղաքացիաիրավական ինստիտուտի հետ դրա հարաբերակցության

1/1 (105/1) 2022
 ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ♦ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

տեսանկյունից, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-րդ հոդվածով ամրագրված հանցակազմի հակասությունն իրավական որոշակիության ու համաչափության սահմանադրական սկզբունքներին՝ առաջ բերելով կարծիքի արտահայտման ազատության նկատմամբ ոչ իրավաչափ միջամտության վտանգ»:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ նաև պատասխանող) նշում է, որ խոսքի ազատության իրավունքը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի իրավական պրակտիկայի լույսի ներքո, բացարձակ չէ: Մարդու արժանապատվության, պատվի և բարի համբավի պաշտպանության անհրաժեշտությունը կարծիքի ազատ արտահայտման իրավունքի իրականացման բովանդակային սահմանն է:

Պատասխանողի դիտարկմամբ՝ վիճարկվող դրույթների ընդունումն ինքնանպատակ չի եղել: Վիճարկվող իրավակարգավորումը կոչված է ապահովելու հասարակության պատշաճ և առողջ գիտակցության մակարդակի բարձր կամ նվազագույնը՝ բավարար աստիճանը: Հանցավորության վիճակի խորքային վերլուծությունը ցույց է տալիս, որ բռնությամբ կատարված բազմաթիվ հանցագործությունների շարժառիթը կոնֆլիկտներն ու անհամաձայնությունները քաղաքակիրթ եղանակով լուծելու մշակույթի բացակայությունն է, դրա փոխարեն՝ կողմերից մեկի դրսևորած վարքագիծը՝ ուղղված մյուսի արժանապատվությունը կոպտորեն վիրավորելուն:

Պատասխանողն ընդգծում է, որ հիմքում ունենալով ժողովրդավարական հասարակության ներսում անկարգությունների կանխարգելման և անձանց՝ ֆիզիկական կամ բանավոր հարձակումներից պաշտպանելու առաջնային նպատակները՝ օրենսդիր մարմինն անհրաժեշտություն է համարել քրեականացնել ծանր վիրավորանքը: Ընդ որում՝ հիմնական իրավունքին «միջամտությունը» եղել է անհրաժեշտ, քանի որ օրենսդրի կողմից հետապնդվող նպատակին անհնար է հասնել մեկ այլ եղանակով, որն ավելի քիչ կսահմանափակի հիմնական իրավունքով պաշտպանված իրավական բարիքը:

Պատասխանողը նշում է, որ քննադատությունը անձի վարքագծի հետ անհամաձայնությունն է, դրա մասին կարծիքի արտահայտման ձև, ինչն ամենևին նպատակ չունի նսեմացնել կամ որևէ այլ կերպ վիրավորել, օրինակ, քաղաքական գործչին: Օրենսդրի կողմից ընտրված հակազդման միջոցն ավելի խիստ է, երբ ծանր վիրավորանքը հասցվել է անձի հանրային գործունեությամբ պայմանավորված: Նշված մոտեցումը հիմնա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

վորվում է այն հանգամանքով, որ հանրային գործունեություն իրականացնող անձի հասցեին հնչող ծանր վիրավորանքներն անմիջապես վնաս են հասցնում վերջինիս արժանապատվությանը, անուղղակիորեն խոչընդոտում են նրա մասնագիտական գործունեությունը: Արդյունքում, հանրային գործունեությամբ զբաղվող անձը հանրության կողմից ընկալվում է բացասաբար: Անձին՝ նրա կողմից իրականացվող հանրային գործունեությամբ պայմանավորված վիրավորելն առանձնանում է հանրային վտանգավորության ավելի բարձր աստիճանով, քանի որ այն տվյալ դեպքում ոչ միայն նվաստացնում է կոնկրետ անձի արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք, այլև վնաս է հասցնում տվյալ անձի կողմից իրականացվող գործունեությանը, ազդում դրա արդյունավետության վրա:

Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթն ամբողջովին համապատասխանում է իրավական որոշակիության սկզբունքին, քանզի այն բավականաչափ որոշակի է, որպեսզի անձն ի վիճակի լինի դրսևորել համապատասխան վարքագիծ:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ պատասխանողը խնդրում է վիճարկվող դրույթը ճանաչել Սահմանադրությանը համապատասխանող:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով վիճարկվող իրավադրույթների սահմանադրականությունը գնահատելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում քննարկման և գնահատման առարկա դարձնել հետևյալ հարցադրումները.

- 1) արդյո՞ք վիճարկվող իրավակարգավորումը համապատասխանում է հիմնական իրավունքին իրավաչափ միջամտության սահմանադրական չափանիշներին՝ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով,
- 2) արդյո՞ք որոշակի խումբ անձանց համար քրեաիրավական գործիքակազմով պաշտպանության առավել բարձր մակարդակ նախատեսելը բավարարում է Սահմանադրության 78-րդ հոդվածի պահանջները և համահունչ է Սահմանադրության 28-րդ հոդվածին,
- 3) արդյո՞ք նույն արարքի համար քրեաիրավական և քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցների զուգահեռ կիրառումը համահունչ է Սահմանադրության 68-րդ հոդվածի 1-ին մասին:

4. Սույն գործով վիճարկվող իրավադրույթների իրավակիրառական պրակտիկայի վերաբերյալ տվյալները

1/1 (105/1) 2022
◆ ՏԵՂԵԿՎՊԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Սույն գործի քննության ընթացքում Սահմանադրական դատարանը իրավակիրառական պրակտիկայի վերաբերյալ գրություններ է հղել Հաստատանի Հանրապետության ոստիկանությանը, Քննչական կոմիտեին և Դատական դեպարտամենտին:

Օրենսգրքի 137.1-ին հոդվածի հատկանիշներով արձանագրված դեպքերով նախապատրաստված նյութերի և հարուցված քրեական գործերի շարժընթացի վերաբերյալ ՀՀ ոստիկանությունից և Քննչական կոմիտեից ստացված տվյալները հետևյալ ամփոփ պատկերն ունեն.

2021 թ. օգոստոսի 30-ից դեկտեմբերի 31-ը Օրենսգրքի 137.1-ին հոդվածի հատկանիշներով արձանագրված դեպքերի ընդհանուր քանակը կազմել է 268 դեպք: Այդ դեպքերից 167-ով հարուցվել է քրեական գործ: Հարուցված գործերից 17-ը ուղարկվել է դատարան, 134-ը կարճվել է, իսկ 16 քրեական գործի քննություն կասեցվել է: Այդ ժամանակում արձանագրված դեպքերի ընդհանուր թվից 101-ով նյութերը դեռևս գտնվում են քննության ընթացքում:

Նշյալ ժամանակաշրջանում Օրենսգրքի 137.1-ին հոդվածի ընդհանուր և հատուկ հանցակազմերով արձանագրված, ինչպես նաև հարուցված քրեական գործերի քանակական հարաբերակցությունը հետևյալն է. 137.1-ին հոդվածի 1-ին մաս՝ 213 գործ, 2-րդ մասի 1-ին կետ՝ 29 գործ, 2-րդ մասի 2-րդ կետ՝ 20 գործ, 3-րդ մաս՝ 6 գործ:

2022 թ. հունվարի 1-ից մարտի 30-ը Օրենսգրքի 137.1-ին հոդվածի հատկանիշներով արձանագրված դեպքերի ընդհանուր քանակը կազմել է 322 դեպք: Այդ դեպքերից 221-ով հարուցվել է քրեական գործ: Հարուցված գործերից 5-ը ուղարկվել է դատարան, 122-ը կարճվել է, իսկ 9 քրեական գործի քննություն կասեցվել է: Այդ ժամանակում արձանագրված դեպքերի ընդհանուր թվից 186-ով նյութերը դեռևս գտնվում են քննության ընթացքում: Նշյալ ժամանակաշրջանում Օրենսգրքի 137.1-ին հոդվածի ընդհանուր և հատուկ հանցակազմերով արձանագրված, ինչպես նաև հարուցված քրեական գործերի քանակական հարաբերակցությունը հետևյալն է. 137.1-ին հոդվածի 1-ին մաս՝ 192 գործ, 2-րդ մասի 1-ին կետ՝ 40 գործ, 2-րդ մասի 2-րդ կետ՝ 84 գործ, 3-րդ մաս՝ 6 գործ:

Վերոգրյալ տվյալների վերլուծությունը հնարավորություն է տալիս արձանագրելու, Օրենսգրքի 137.1-ին հոդվածի ուժի մեջ մտնելուց հետո կատարվող և համապատասխան մարմինների կողմից արձանագրվող դեպքերի ամսական միջին քանակը 2021 թ. օգոստոսի 30-ից դեկտեմբերի 31-ը կազմել է 67 դեպք, իսկ 2022 թ. հունվարի 1-ից 2022 թ. մարտի 30-ը՝ 107:

Եթե 2021 թ. օգոստոսի 30-ից դեկտեմբերի 31-ը (4 ամսում) արձանագրված դեպքերից քրեական գործ հարուցվել է մոտ 62 տոկոս նյութերով, ապա 2022 թ. հունվարի 1-ից մարտի 30-ը (3 ամսում) այդ թիվը կազմում է մոտ 68 տոկոս:

Վիճարկվող իրավադրույթների ուժի մեջ մտնելուց հետո միջև սույն ս.թ. մարտի 30-ը հարուցված 389 քրեական գործերից 253-ը (մոտ 70 տոկոսը) կարճվել է:

Դատական դեպարտամենտի տվյալների համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում Օրենսգրքի 137.1-ին հոդվածի հատկանիշներով 04.04.2022 թ. դրությամբ առկա է 45 քրեական գործ, որից 14-ը Օրենսգրքի 137.1-ին հոդվածի միայն 1-ին մասով, 25-ը՝ նույն հոդվածի միայն 2-րդ մասով, իսկ 4-ը՝ նույն հոդվածի միայն 3-րդ մասով: Միայն 1 քրեական գործ՝ Օրենսգրքի 137.1-ին հոդվածի միաժամանակ 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, և 1 քրեական գործ՝ Օրենսգրքի 137.1-ին հոդվածի միաժամանակ 2-րդ և 3-րդ մասերով:

Բացի դրանից, ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում Օրենսգրքի 137.1-րդ հոդվածի 2-րդ մասի միայն 1-ին կետով քրեական գործեր առկա չեն: Հարկ է նշել նաև, որ Օրենսգրքի 137.1-ին հոդվածի 2-րդ մասի միաժամանակ 1-ին և 2-րդ կետերով առկա է 17 քրեական գործ, իսկ նույն մասի միայն 2-րդ կետով՝ 10 քրեական գործ:

Վերոնշյալ 45 քրեական գործերից 6-ով կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ (դատավճիռ):

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում առաջին հերթին սույն գործի շրջանակներում վեր հանել վիրավորանքի՝ որպես հանցագործության ապաքրեականացման և քրեականացման իրավական արդի միտումները:

2003 թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով վիրավորանքը սահմանված էր որպես հանցագործություն (136-րդ հոդված): Վիրավորանքի՝ որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի տարր համարվող արարքը սահմանված էր որպես «**ուրիշի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձևով ստորացնելուն**» ուղղված գործողություն: Դատական պրակտիկան այդ հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր տարրը՝ արարքը, մեկնաբանում էր որպես ակտիվ գործողություն, որը կարող էր կատարվել բանավոր կամ գրավոր խոսքով կամ ֆիզիկական գործողությամբ և ուղղված էր ուրիշի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձևով ստորացնելուն: Վիրավորանքի վերը բերված օրենս-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏՄՈՒՄ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏՄՈՒՄ

դրական ձևակերպումից բխում էր, որ վիրավորանքի՝ որպես հանցավոր արարքի պարտադիր հատկանիշ էր ուրիշի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելու «անպարկեշտ ձևը»: ՀՕ-98-Ն օրենքով վիրավորանքը որպես հանցակազմ ապաքրեականացվեց, և 2010 թ. մայիսի 18-ից ՀՀ քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածը դադարեց գործել:

ՀՀ քրեական օրենսգրքի ուժը կորցրած 136-րդ հոդվածը հանցագործություն էր համարում ընդհանրապես վիրավորանքը, այսինքն՝ անպարկեշտ ցանկացած եղանակով ուրիշի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելը: Սույն գործով վիճարկվող նոր իրավակարգավորումը որպես քրեորեն արգելված արարք նախատեսում է «ծանր վիրավորանքը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածով նախատեսված «ծանր վիրավորանքի» որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի տարրի՝ արարքի վերլուծությունից հետևում է, որ՝

ա) օրենսդիրն Օրենսգրքի 137.1-ին հոդվածով քրեականացրել է միայն ծանր վիրավորանքը,

բ) օրենսդիրը ծանր վիրավորանքի՝ որպես հանցավոր արարքի ընդհանրապես վիրավորանքից տարբերակիչ հատկանիշ է սահմանել արարքի կատարման եղանակը և միաժամանակ որոշակիացրել է դրա օրենսդրական բնութագրիչները, որոնք են՝ «անձին ծանր վիրավորանք հասցնելը՝ հայհոյելը կամ նրա արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելը»,

գ) սույն գործով վիճարկվող իրավակարգավորումը ծանր վիրավորանքից քրեաիրավական հատուկ պաշտպանության տակ է վերցրել հանրային գործունեություն իրականացնող անձանց,

դ) Օրենսգրքի 137.1-ին հոդվածի 1-ին մասով ամրագրված արարքը կազմում է հասարակ հանցակազմը, ընդ որում՝ գործող կարգավորման համաձայն՝ այն մասնավոր հետապնդման գործ է՝ ի տարբերություն նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում ամրագրված հատուկ հանցակազմերի, որոնք հանրային հետապնդման գործեր են:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քրեականացման օբյեկտիվ հիմքը, այն է՝ որոշակի սահմանադրական արժեքների քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտության գնահատականը, կարող է լինել փոփոխական: Անհատի արժանապատվության, պատվի ու բարի համբավի՝ որպես սահմանադրական արժեքների պաշտպանության անհրաժեշտությունն անկասկած է: Յուրաքանչյուր անձի՝ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պատվի և բարի համբավի անձեռնմխելիության ամրագրման առաջնային նպատակը

հանրային իշխանության կողմից դրանց ոչ իրավաչափ միջամտություններից պաշտպանությունն է: Այդուհանդերձ, հանրային իշխանության կողմից սահմանադրական այս իրավունքի պաշտպանությունը չի կարող ամբողջական լինել միայն ոչ իրավաչափ միջամտություններից ձեռնպահ մնալով: Հանրային իշխանությունը, առաջնահերթությամբ օրենսդիր իշխանությունն ունի ուղղակի սահմանադրական պարտականություն՝ ապահովել պաշտպանության ենթակա նշված իրավունքների նկատմամբ ամբողջական հարգանք և պաշտպանություն ապահովող արդյունավետ օրենսդրական կառուցակարգ, առանց որի հիշատակված սահմանադրական իրավունքները կվերածվեն հոչակագրային և գործնականում անպաշտպան իրավունքների:

5.2. Վիճարկվող դրույթի սահմանադրականությունը գնահատելու համար Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ մարդու արժանապատվության և կարծիքի ազատ արտահայտման իրավունքի սահմանադրական բովանդակությանը և բացահայտել դրանց հարաբերակցությունը սահմանադրորեն պաշտպանվող շահերի հավասարակշռման տեսանկյունից:

5.2.1. Մարդու արժանապատվության երաշխավորման սահմանադրական հիմքերն ամրագրված են ինչպես Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքները» վերտառությամբ 1-ին, այնպես էլ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ 2-րդ գլխում, մասնավորապես՝ Սահմանադրության 3-րդ, 23-րդ հոդվածներում, 31-րդ հոդվածի 1-ին մասում: Այդ հոդվածների բովանդակությունից բխում է, որ մարդու արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Մարդու արժանապատվության՝ որպես բարձրագույն արժեքի ճանաչման սահմանադրական սկզբունքից բխում են պետության մի շարք պարտականություններ՝ մարդու և քաղաքացու իրավունքների երաշխավորումը, պահպանումն ու պաշտպանությունը:

Սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է մարդու արժանապատվությանը՝ որպես բարձրագույն արժեքի սահմանադրական իրավական բովանդակությանը, իր մի շարք որոշումներում, մասնավորապես, նշելով.

ա) «Վավերացնելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը՝ Հայաստանի Հանրապետությունը ճանաչել է դրա Նախաբանի այն հիմնարար դրույթը, ըստ որի՝ «մարդու իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից»: Սահմանադրության 3 հոդվածի 1-ին մասում նշված է.

«Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են» (2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴՈ-649),

բ) «Մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի կարևորագույն բաղադրիչը նրա արժանապատվությունն է, որն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ առաջնային նշանակություն ունի մարդու և քաղաքացու հիմնական բոլոր իրավունքների ու ազատությունների ազատ, անարգել ու երաշխավորված իրականացման համար: Այն նաև ենթադրում է ինչպես սահմանադրորեն թույլատրելի շրջանակներում անձի կողմից որոշակի գործողությունների կատարում և կամահայտնության դրսևորում, այնպես էլ դրանք պաշտպանելու պետության համարժեք պարտականություն» (2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-913),

գ) «(...) մարդու արժանապատվության առանցքային բաղադրատարրերից մեկը, ի թիվս այլնի, հանդիսանում է անհատական հատկանիշներով պայմանավորված բարոյական տառապանքներից զերծ մնալը» (2013 թվականի նոյեմբերի 5-ի ՍԴՈ-1121),

դ) «Սահմանադրության կարգավորումների համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրությունը, մարդուն ճանաչելով բարձրագույն արժեք՝ կանխորոշել է պետության պարտականությունը՝ հարգել, ապահովել և պաշտպանել մարդու իրավունքներն ու ազատությունները (հոդվ. 3): Այս հիմնարար սկզբունքի հետ անխզելիորեն կապված է մարդու արժանապատվության անօտարելի լինելու սկզբունքը:

Սահմանադրության 3, 23 և 42-րդ հոդվածների կարգավորումների բովանդակությունից բխում է, որ մարդու արժանապատվությունը, լինելով բոլոր իրավունքների և ազատությունների հիմք, կանխորոշում է իրավունքների և ազատությունների թե՛ բովանդակությունը, թե՛ իրացման սահմանները» (2021 թվականի հոկտեմբերի 5-ի ՍԴՈ-1612):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես անդրադարձել է մարդու արժանապատվության իրավական բովանդակության բացահայտման հիմնահարցին, մասնավորապես՝ նշելով, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի զարգացրած իրավունքն ընդհանուր առմամբ ճանաչում է անձնական կյանքի և դրա հետ կապված արժեքների կարևորությունը: Այդ արժեքները, ի թիվս այլնի, ներառում են հոգեբանական բարեկեցությունը և արժանապատվությունը (Beizaras and Levickas v. Lithuania, Application no. 41288/15, 14.01.2020, Final 14.05.2020, § 117), ֆիզիկական և հոգեկան

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

անձեռնմխելիությունը (Söderman v. Sweden, Application no. 5786/08, 12.11.2013, § 80):

5.2.2. Սահմանադրության 42-րդ հոդվածում ամրագրված կարծիքի արտահայտման ազատությունը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության հիմնասյուններից մեկը, երաշխավորում է հասարակական կամքի ազատ ձևավորումը, հասարակության և պետության միջև բաց, անկաշկանդ հաղորդակցությունը: Հասարակության շրջանում գաղափարների և կարծիքների փոխանակման ազատությունը բազմակարծության երաշխիքն է, որի միջոցով էլ կենսագործվում է ժողովրդավարությունը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2001 թվականի հունվարի 11-ի ՍԴՈ-278 որոշման շրջանակներում փաստել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի կոնվենցիան, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966 թվականի միջազգային դաշնագիրը և միջազգային մյուս համապատասխան փաստաթղթերը, յուրաքանչյուրի ազատորեն արտահայտվելու, այդ թվում՝ սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունն ամրագրելով, դրա իրականացման կանոր երաշխիք են դիտում պետական մարմինների միջամտության բացառումը: Այդ որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենքով նախատեսվող հնարավոր սահմանափակումները պետք է լինեն համաչափ և բխեն ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ ազգային օրենսդրության ժողովրդավարական սկզբունքների էությունից, չպետք է լինեն այնպիսին, որոնք վտանգեն մարդու իրավունքների հիմնական բովանդակությունը:

2011 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «(...) *արտահայտվելու ազատության իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է սահմանված լինի օրենքով, ծառայի իրավաչափ շահ պաշտպանելու նպատակին և լինի անհրաժեշտ արվյալ շահն ապահովելու համար*»:

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված արտահայտվելու ազատությունն ընդգրկում է ոչ միայն դրականորեն ընկալվող, ոչ վիրավորական կամ չեզոք, այլև վիրավորական, ցնցող կամ անհանգստացնող «տեղեկատվությունը» կամ «գաղափարները». վերջիններս բազմակարծության, հանդուրժողակա-նության և լայնախոհության պահանջներ են, առանց որոնց չի կարող լինել «ժողովրդավարական հասարակություն» (*Oberschlik v. Austria, Application no 11662/85, 23.05.1991, § 57*):

Կարծիքի արտահայտման ազատությունը նաև հանրային իշխանության նկատմամբ հասարակական վերահսկողության յուրահատուկ դրսևորում է ազատ խոսքի, այդ թվում՝ սուր քննադատության, առկա թերությունների, հանրային և անհատական մակարդակում առկա խնդիրների վերհանման և ներկայացման ու դրանց հաղթահարմանն ուղղված հանրային իշխանության քայլերի վերաբերյալ բարձրաձայնելու ազատության միջոցով: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն իր՝ 2012 թվականի մարտի 6-ի ՍԴՈ-1010 որոշման շրջանակներում նշել է. «Հասարակական կարծիքի միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողությունը խթանում է պետական իշխանության գործողությունների թափանցիկությունը և նպաստում պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետրու գործունեությունը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կարծիքի արտահայտման ազատությունը ժողովրդավարության անկյունաքարային արժեք է, քաղաքացիական հասարակության կայացման ու զարգացման կարևոր միջոց, որին համարժեք Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական մակարդակով երաշխավորվում է այդ ազատության իրացումը:

5.2.3. Դիմողը ծանր վիրավորանքը քրեականացնող իրավակարգավորումների սահմանադրականությունն առաջին հերթին դիտարկել է կարծիքի ազատ արտահայտման հիմնական իրավունքի համատեքստում՝ տրամաբանորեն ենթադրելով իրավական կոլիզիա Սահմանադրությամբ ամրագրված և երաշխավորված երկու հիմնական իրավունքների՝ մի կողմից՝ արժանապատվության, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, իսկ մյուս կողմից՝ կարծիքի ազատ արտահայտման միջև: Այս ենթադրության կապակցությամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ծանր վիրավորանքը որպես արարք դիտարկել այդ իրավունքների իրավական բովանդակության սահմանների համատեքստում:

Ծանր վիրավորանքի՝ որպես հանրորեն վտանգավոր արարքի իրավախախտում ճանաչելու, ներառյալ՝ քրեականացման հիմնական նպատակն անձի արժանապատվության իրավական պաշտպանությունն է հնարավոր ոտնձգություններից:

Սահմանադրությունը, որդեգրելով մարդու ազատության ազատական հայեցակարգը, ելնում է այն կանխադրությից, որ ազատությունը յուրաքանչյուրի հնարավորությունն է անելու այն ամենը, ինչը չի վնասում այլոց: Այդպիսով յուրաքանչյուրի իրավունքների իրականացումն ունի այնպիսի սահմաններ, որոնք հասարակության մյուս անդամների համար

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

ապահովում են նույն իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Բնական իրավունքի այս կանխադրույթն իր իրավական ամրագրումն է ստացել Սահմանադրության 39-րդ հոդվածում որպես մարդու ազատ գործելու իրավունք. «Մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին»:

Սահմանադրական այս դրույթն անձանց վարքագծի իրավական կարգավորման հիմնարար սկզբունք է, որից բխում է մարդու իրավունքների սահմանների «ոսկե կանոնը». արգելվում է անել այն ամենը, ինչը խախտում է այլ անձանց իրավունքները և ազատությունները: Բոլոր այն իրավունքները, որ ունեն անձինք, միաժամանակ իրավունքներ են այլոց համար, հետևաբար՝ նրանց պարտականությունն է հարգել դրանք: Անձի իրավունքների երաշխիքը այլ անձանց պարտականությունն է:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վերոբերյալ վերլուծությունների արդյունքում ստացված եզրակացությունների հիման վրա դիտարկել ծանր վիրավորանքի և կարծիքի ազատ արտահայտման սահմանադրական իրավունքի հարաբերակցությունը:

Ծանր վիրավորանքի բացակայությունը որևէ արտահայտված կարծիքում վերջինիս իրավաչափության պայմանն է, քանի որ ազատ արտահայտված կարծիքը, որպես վարքագիծ, իրավաչափ է այնքանով, որքանով որ չի խախտում այլոց իրավունքներն ու ազատությունները: Մարդու իրավունքների այս հիմնարար իրավական տրամաբանությունից է բխում, որ ծանր վիրավորանքի համար իրավական պատասխանատվության սահմանումը չի կարող դիտարկվել որպես կարծիքի արտահայտման հիմնական իրավունքի ոտնահարում օրենսդրի կողմից:

Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ ժողովրդավարական հասարակության մեջ կարծիքի արտահայտման ազատությունը չի պաշտպանում անձի արժանապատվությունը նսեմացնելու նպատակ հետապնդող անվայելույց, անպարկեշտ խոսքը, ինչպես նաև անձի հանդեպ բացահայտ անպարկեշտ՝ հասարակության մեջ ընդունված բարոյական նորմերին հակասող վարքագիծը և անձի մարդկային արժանապատվությունը նսեմացնելուն նպատակադրված այլ ձևերը:

5.2.4. Սահմանադրական դատարանը շեշտում է, որ կարծիքի արտահայտման ազատությունը բացարձակ չէ, որովհետև Սահմանադրության ուժով ի սկզբանե որոշված են դրա սահմանները, և միաժամանակ այն որպես սուբյեկտիվ իրավունք կարող է սահմանափակվել օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և

բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Հիմնական իրավունքների սահմանափակումը ենթադրում է դրա իրավական, մեծմասամբ՝ օրենսդրորեն ամրագրված բովանդակության ծավալային շրջանակների նեղացում և նույնպես հետապնդում է այլոց իրավունքների պաշտպանության իրավաչափ նպատակ:

Քաղաքացիական հասարակության կայացման և կայուն զարգացման համար անհրաժեշտ է, որ հասարակության անդամները դրսևորեն հանդուրժողականություն միմյանց նկատմամբ՝ առաջնորդվելով իրավական նորմերով: Այս հարցում կարևոր է պետության որդեգրած կայուն քաղաքականությունը՝ ձևավորել այնպիսի հասարակություն, որտեղ տեղ չունեն արելության խոսքը, բռնության կոչերն ու սպառնալիքները, հայհոյանքը, վիրավորանքն ու անպարկեշտ վարքագիծը, որոնք խաթարում են առողջ սոցիալական միջավայրը: Այս առումով առաջնային պատասխանատվությունն ընկած է քաղաքական իշխանության վրա:

Վերոնշյալի առնչությամբ Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի հուլիսի 17-ի ՍԴՈ-1606 որոշման մեջ նշել է, որ «(...)քաղաքական մեծամասնության ունեցած ազդեցությունը հանրային իշխանության մարմինների համակարգում, ընդգծում է նրանց կողմից գործուն միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը հայաստանյան քաղաքական խոսքում՝ արելության, բռնության, վիրավորանքի և արժանապատվությունը նվաստացնելու կասկած հարուցող խոսքի և վարքագծի որևէ դրսևորում (...) բացառելու նպատակով»:

Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքին, որ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կողմից 2022 թվականի հունվարի 27-ին ընդունված թիվ 2427 (2022) «Ժողովրդավարական ինստիտուտների գործունեությունը Հայաստանում» վերտառությամբ բանաձևի¹ 24-րդ կետում կոչ է արված Հայաստանի Հանրապետությանը.

1) ապահովել, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված՝ ազատ արտահայտվելու իրավունքի և 8-րդ հոդվածով պաշտպանվող՝ անձի անձեռնմխելիության մաս կազմող արժանապատվության միջև հավասարակշռությունը պահպանվի,

¹Հասանելի է հետևյալ հղումով. [https://pace.coe.int/pdf/aeae39e8b76123f84c46172028ba6d4a5b43d1ba286f5d996149664efc7047da/doc.%2015432%3A%20compendium%20of%20written%20amendments%20\(final%20version\).pdf](https://pace.coe.int/pdf/aeae39e8b76123f84c46172028ba6d4a5b43d1ba286f5d996149664efc7047da/doc.%2015432%3A%20compendium%20of%20written%20amendments%20(final%20version).pdf)

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

2) ապահովել, որ վիրավորանքի և զրպարտության համար սահմանված պատիժների վերաբերյալ օրենսդրությունը դատախազության կողմից կիրառվի միատեսակ՝ սահմանափակման իմաստով, որպեսզի այն կամայականորեն չկիրառվի անձանց և լրատվամիջոցների դեմ,

3) ապատեղեկատվության և ատելության խոսքի դեմ պայքարելու նպատակով պատժից բացի մշակել կանխարգելիչ այլ գործիքներ,

4) 2003 թվականի «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը ենթարկել համապարփակ և ընդգրկուն բարեփոխումների և այս առումով շարունակել Եվրոպայի խորհրդի հետ համագործակցությունը:

*Պեպոությունը պարտավոր է մշակել և իրականացնել միասնական իրավական քաղաքականություն՝ ուղղված պետական անվտանգությանն ու հասարակական կարգին, առողջությանը և բարոյականությանը կամ այլոց պատվին ու բարի համբավին, այլ հիմնական իրավունքներին և ազատություններին սպառնացող արատավոր երևույթների վերացմանը կամ առնվազն՝ էական նվազեցմանը: Այս ուղղությամբ պեպոությունը պետք է օգտագործի իր ողջ ներուժը՝ խելամարտեն զուգորդելով համոզման և հարկադրանքի մեթոդները, կիրառի օրինական և պիտանի միջոցներ՝ վերականգնելու խախտված ներդաշնակությունը: Այս առումով առավել խրախուսելի և կայուն է պեպոության կողմից իրականացվող գաղափարական-դաստիարակչական միջոցների գործադրումը, ուստի պեպոությունը պետք է համոզման մեթոդի ողջ հնարավորություններն օգտագործի երկարաժամկետ առումով խնդիրը կարգավորելու համար: **Հաշվի առնելով խնդրո առարկա հարցի կարևորությունն ու հրատապությունը՝ օրենսդիրը նախընտրել է ծանր վիրավորանքի դեմ պայքարի քրեական գործիքակազմը:***

5.3. Վիճարկվող իրավակարգավորումն իրավունքին/ազատությանը իրավաչափ միջամտության սահմանադրական չափանիշներին համապատասխան արժևորելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կիրառել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մշակած իրավունքին միջամտության իրավաչափության ստուգման եռատարր թեստը:

5.3.1. Միջամտությունն օրենքով նախատեսված լինելու հանգամանքի գնահատման տեսանկյունից Սահմանադրական դատարանը փաստում է, որ խնդրո առարկա հիմնական իրավունքին միջամտությունը նախատեսվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» 2021 թվականի հուլիսի 30-ի ՀՕ-323-Ն օրենքով, որով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը լրացվել է վիճարկվող «Ծանր վիրավորանքը» վերտառությամբ 137.1-ին հոդվածով:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆

Վիճարկվող իրավակարգավորումը՝ օրենքով նախատեսված լինելու չափանիշի գնահատման համատեքստում՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ դիմողի այն դիրքորոշմանը, որ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» 2021 թվականի հուլիսի 30-ի ՀՕ-323-Ն օրենքն ընդունվել է ընթացակարգային կոպիտ խախտումներով, մասնավորապես՝ այն ընդունվել է հրատապորեն, հանրության և մասնագիտական շրջանակների իմաստալից (meaningful) մասնակցությունը բացարձակ չի ապահովվել, ընդունվել է առանց մասնագիտական խորհրդակցությունների կազմակերպման կամ այլ մարմինների, այդ թվում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի ներկայացման:

Սահմանադրական դատարանը 2019 թվականի ապրիլի 19-ի ՍԴՈ-1454 որոշման մեջ նշել է. «Սահմանադրական դատարանի գործառույթը հատուկ՝ սահմանադրական արդարադատության միջոցով Սահմանադրության գերակայությունն ապահովելն է, որի համար հենց Սահմանադրությանը է սահմանվում Սահմանադրական դատարանի լիազորությունների սպառիչ ցանկը, ինչը բխում է Սահմանադրության 167-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջից: Իսկ համաձայն Սահմանադրական դատարանի հիշյալ գործառույթից ածանցվող վերաբերելի լիազորության՝ Սահմանադրական դատարանը որոշում է (այդ թվում) օրենքների համապատասխանությունը Սահմանադրությանը (Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետ):

Դա նշանակում է, որ օրենքների ընդունման գործընթացում «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի միայն այն խախտումները կարող են դառնալ Սահմանադրական դատարանում վեճի առարկա, որոնց արդյունքում խախտվել են Սահմանադրության վերաբերելի դրույթները: Այսպես՝ եթե «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի խախտման արդյունքում խախտվել է Սահմանադրությանը ամրագրված քվեարկության կարգը, որն ազդել է կամ կարող էր ազդել Սահմանադրությանը պահանջվող ձայներով օրենք կամ որոշում ընդունելու վրա, ապա այդպիսի օրենքը կամ որոշումը կարող են ըստ ընդունման կարգի դառնալ Սահմանադրական դատարանում քննության առարկա:

(...)

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Ազգային ժողովի՝ իր կանոնակարգի համաձայն գործելու սահմանադրական պահանջի խախտումները կարող են Սահմանադրական դատարանում վեճի առարկա դառնալ միայն այդ խախտումների արդյունքում Սահմանադրության որևէ պահանջ խախտվելու դեպքերում»:

Այս դիրքորոշման լույսի ներքո դիտարկելով «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» 2021 թվականի հուլիսի 30-ի ՀՕ-323-Ն օրենքի ընդունման կարգի խախտումների վերաբերյալ դիմողի ներկայացրած փաստարկները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դրանք Սահմանադրական դատարանում քննության առարկա չեն կարող հանդիսանալ, քանի որ դիմողի կողմից ներկայացված՝ վերոնշյալ օրենքի ընդունման ընթացակարգային ենթադրյալ խախտումները (հրատապ, առանց հանրության և մասնագիտական շրջանակների իմաստալից մասնակցության) չեն առնչվում Սահմանադրության վերաբերելի դրույթներին:

5.3.2. Սահմանադրական դատարանը կարծիքն ազատ արտահայտելու հիմնական իրավունքին միջամտության իրավաչափ նպատակ հետապնդելը գնահատում է համաչափության սահմանադրական սկզբունքի համատեքստում: Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշման մեջ անդրադառնալով համաչափության սկզբունքի տարրերին՝ Սահմանադրական դատարանը նշել է. «Համաչափության սկզբունքի առաջին տարրը հիմնական իրավունքի սահմանափակման նպատակի լեգիտիմությունն է, այն է՝ Սահմանադրությամբ նախատեսված լինելը: Դա նշանակում է, որ օրենսդիրը, իրականացնելով հիմնական իրավունքի սահմանափակման իր լիազորությունը, պետք է հիմնվի Սահմանադրությամբ նախատեսված նպատակների վրա: Բոլոր այն դեպքերում, երբ այդ նպատակներն ուղղակիորեն ամրագրված են սահմանափակվող հիմնական իրավունքին կամ ազատությանը վերաբերող սահմանադրական դրույթներում, ինչպես օրինակ՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի դեպքում, օրենսդիրն իրավասու է միայն դրանք կոնկրետացնել օրենքներում, մնացյալ դեպքերում օրենսդիրն ինքն է բացահայտում սահմանափակման՝ օրենքով սահմանված նպատակի սահմանադրական բովանդակությունը՝ հիմնվելով Սահմանադրության վերաբերելի նորմերի մեկնաբանության վրա:

Հավաստիանալով իր կողմից պարզված սահմանադրական նպատակի առկայության մեջ՝ օրենսդիրն այնուհետև պետք է ընտրի դրան հասնելու

միջոցները: Հետևապես, ընտրված միջոցների սահմանադրականությունը կանխորոշվում է առաջին հերթին դրանցով հետապնդվող նպատակով:

Ինչ վերաբերում է օրենսդրի կողմից միջոցների ընտրությանը՝ սահմանադրորեն արդարացված նպատակին հասնելու համար, ապա, նախ՝ դրանք պետք է պիտանի լինեն հիշյալ սահմանադրական նպատակին հասնելու համար: Այսինքն՝ այնպիսի օրենսդրական միջոցներն են պիտանի, որոնցով օրենսդիրն ի զորու է հասնել հետապնդվող նպատակին, այլ կերպ՝ երբ ապահովված է հավանականությունը, որ արդյունքը, որին ձգտում է օրենսդիրը, ի հայտ կգա:

Համաչափության սկզբունքի հաջորդ փարրն օրենսդրի կողմից ընտրված միջոցի անհրաժեշտությունն է, այսինքն՝ այն, որ այդ միջոցը՝ այլ միջոցների համեմատ նույն ներգործությամբ, պետք է ենթադրի ամենամեղմ միջամտությունը որևէ հիմնական իրավունքին կամ ազատությանը: Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու բոլոր պիտանի միջոցներից պետք է ընտրվի այն օրենսդրական միջոցը, որը նպատակին հասնելու նույն հավանականությամբ, այսինքն՝ նույն արդյունավետությամբ, սակայն առավել մեղմ է սահմանափակում որևէ հիմնական իրավունք կամ ազատություն:

Համաչափության սկզբունքի վերջին՝ չորրորդ փարրը պահանջում է, որ օրենսդիրն իր կողմից ընտրված պիտանի և անհրաժեշտ միջոցը համեմատի սահմանափակվող հիմնական իրավունքի կամ ազատության սահմանադրական նշանակության հետ՝ պարզելու համար, որ այդ միջոցներով արդյունքում պետությունն իրապես հասնում է հետապնդվող նպատակին, և սահմանափակվող հիմնական իրավունքը կամ ազատությունն իր նշանակությամբ չի պահպանում իր գերակայությունը այն հանրային շահերի նկատմամբ, որոնք պահպանելու նպատակով էլ օրենսդիրը դիմում է հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակման: Վերջնարդյունքում դա նշանակում է, որ որևէ հիմնական իրավունքի կամ ազատությանը չմիջամտելը կամ այն երաշխավորելը, կախված դրանց էությունից, կանոն է, իսկ դրա սահմանափակումը՝ բացառություն, որը պետք է հիմնավորվի սահմանափակման յուրաքանչյուր դեպքում: Ընդամին, որքան ավելի ինտենսիվ է սահմանափակումը, այնքան ավելի է մեծանում սահմանափակումը հիմնավորելու բեռը»:

Ըստ այդմ, կարծիքի արտահայտման ազատության սահմանադրական արժեքի հարաբերակցությունն այլ սահմանադրական արժեքներին որոշում է դրա հնարավոր սահմանափակումների բնույթը: Միանշանակ է, որ ազատ արտահայտվելու իրավունքի ցանկացած

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

սահմանափակման անհրաժեշտություն պետք է հիմնավորվի, և ներկայացվեն այն հակակշռող հանրային շահը և պահանջը, որոնց պաշտպանության նպատակով տեղի է ունենում միջամտությունն այդ ազատությանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հիմնական իրավունքին միջամտությունը հետապնդում է **իրավաչափ նպատակ** այն հաշվառմամբ, որ ժողովրդավարական հասարակության անկյունաքար հանդիսացող մարդու արժանապատվությունը, լինելով բոլոր իրավունքների և ազատությունների հիմք, կանխորոշում է նաև այդ իրավունքների իրացման սահմանները՝ լինելով, ըստ Սահմանադրության, անօտարելի և անխախտելի:

Օրենսդիրը, սահմանելով վիճարկվող դրույթով նախատեսված իրավակարգավորումները, **իրավաչափ և սահմանադրորեն անհրաժեշտ նպատակ է** ունեցել պաշտպանելու այնպիսի հիմնարար արժեքներ, ինչպիսիք են անձի պատիվն ու բարի համբավը, պետական անվտանգությունը, հասարակական կարգը, առողջությունը և բարոյականությունը, որոնցից յուրաքանչյուրը կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման հիմք է, և դրանցից միայն մեկի առկայությունն ինքնին բավարար է այդ ազատության սահմանափակման նպատակի իրավաչափության տեսանկյունից: Այս առումով վիճարկվող դրույթն առանձնահատուկ է, քանի որ տվյալ դեպքում կարծիքի արտահայտման ազատության *սահմանափակումը հետպայնդում է սահմանադրորեն պաշտպանվող ոչ թե մեկ, այլ մի քանի շահերի պաշտպանության նպատակ:*

Ծանր վիրավորանքից քրեաիրավական պաշտպանությունը նպատակ է հետապնդում պաշտպանել ոչ միայն անձանց պատիվն ու բարի համբավը, այլ նաև հիմնական իրավունքները և ազատությունները, պետական անվտանգությունը, հասարակական կարգը, առողջությունն ու բարոյականությունը: Ծանր վիրավորանքը խարխուլում է հասարակական բնականոն կարգը և հարիր չէ քաղաքացիական հասարակության բարոյական արժեհամակարգին:

5.3.3. Սահմանադրական դատարանը, գնահատելով սահմանադրորեն արդարացված նպատակին հասնելու համար կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման՝ օրենսդրի կողմից ընտրված միջոցի ընտրությունը, այն է՝ ծանր վիրավորանքի համար քրեական պատասխանատվություն սահմանելու պիտանիությունը, գտնում է, որ ծանր վիրավորանքի համար քրեական պատասխանատվություն սահմանելու՝

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

օրենսդրի կողմից ընտրված իրավական միջոցը ի զորու է հասնելու հետապնդվող նպատակին:

Ընտրված միջոցի պիտանիության տեսանկյունից ծանր վիրավորանքի համար քրեական պատասխանատվություն նախատեսելն ինքնին սահմանադրականության խնդիր չի առաջացնում, և քրեական քաղաքականության մեջ իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության արդյունավետ իրացման դեպքում հնարավոր կլինի հասնել օրենսդրի կողմից հետապնդվող իրավաչափ նպատակին:

Ծանր վիրավորանքի համար քրեական պատասխանատվություն սահմանելու՝ համաչափության սկզբունքի **անհրաժեշտության** տարրի վերաբերյալ Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա **չէ սահմանադրորեն հետապնդվող նպատակին հասնելու համար բավարար արդյունավետ այլ օրենսդրական միջոց: Այս տեսանկյունից կարևոր է, որ մի կողմից՝ պաշտպանվի յուրաքանչյուրի կարծիքի արտահայտման ազատությունը, մյուս կողմից՝ կարծիքի ազատ արտահայտումը չպերք է վնասի սահմանադրորեն պաշտպանվող արժեքները: Այս հավասարակշռությունն օրենսդրորեն ամրագրելու և իրավակիրառ պրակտիկայում երաշխավորելու պարտականությունը կրում է պետությունը:**

Կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման **համարժեքությունը** պահանջում է, որ ծանր վիրավորանքի համար քրեական պատասխանատվություն նախատեսելու արդյունքում կարծիքի արտահայտման ազատության սահմանափակումն առավել նվազ նշանակություն ունենա՝ սահմանադրորեն ամրագրված այն արժեքների համեմատ, որոնց պահպանության նպատակով տեղի է ունեցել այդպիսի սահմանափակումը: **Այս առումով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կարծիքի արտահայտման ազատությանն այս կերպ չմիջամտելն իրական վրանգ կարող էր ստեղծել սահմանադրորեն պահպանվող այլ շահերի համար, որպիսի նպատակից ելնելով է փվյալ արարքն օրենսդիրը քրեականացրել:** Հետևաբար՝ ծանր վիրավորանքի համար քրեական պատասխանատվություն նախատեսելով և այն իրավակիրառ պրակտիկայում խելամիտ կիրառելու դեպքում օրենսդրի կողմից հետապնդվող նպատակն իրականություն կարող է դառնալ, ուստի **անձի արժանապատվության, պատվի ու բարի համբավի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանությունն ինչպես առանձին, այնպես էլ իրենց համակցության մեջ, գերակա է կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման նկատմամբ:**

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

5.4. Դիմողի կողմից բարձրացված մյուս հարցը վերաբերում է հանրային գործունեություն իրականացնող անձանց ծանր վիրավորելը՝ որպես որակյալ հանցակազմ նախատեսելու սահմանադրականությանը:

Հանրային գործունեություն իրականացնող անձանց գործունեության առանձնահատկությունով պայմանավորված՝ նրանք անխուսափելիորեն և գիտակցաբար ավելի բաց են հասարակության համար, և նրանց յուրաքանչյուր խոսքի և արարքի մանրակրկիտ զննումն ու քննադատությունն ինչպես լրագրողների, այնպես էլ հասարակության կողմից մեծ են: Այս խմբի անձանց քննադատությունն ընդգրկում է նրանց կարգավիճակով պայմանավորված գործունեության քննարկում և քննադատություն, գործողությունների վերլուծում և այդ գործողությունների դրական և բացասական հատկությունների վերաբերյալ դատողությունների կառուցում: Ժողովրդավարական հասարակություններում այս ամենն անհրաժեշտություն է և խրախուսվում է, սակայն ոչ մի կերպ այն չպետք է դուրս գա քննադատության թույլատրելի և ողջամիտ սահմաններից և վերածվի անձնական կամ կարգավիճակով պայմանավորված վիրավորանքի:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ հանրային գործունեություն իրականացնող անձինք, մասնավորապես՝ քաղաքական գործիչները, իրենց խոսքը պետք է այնպես կառուցեն, որ չօգտագործեն անթույլատրելի, քաղաքական գործիչներին ոչ հարիր արտահայտություններ՝ դրսևորելով պատշաճ գործելաճ:

Սահմանադրական դատարանը վերոնշյալի առնչությամբ անհրաժեշտ է համարում նշել նաև, որ հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող ցանկացած անձ օրենսդրությամբ նախատեսված կարգավորումների սահմաններում պետք է հաշվետու և թափանցիկ լինի հասարակության առջև, իր կողմից իրականացվող գործունեությամբ պայմանավորված՝ պետք է պատրաստ լինի հասարակական վերահսկողության. վերջիններս բազմակարծության և լայնախոհության պահանջներն են, առանց որոնց չի կարող լինել ժողովրդավարական պետություն:

Այսպիսով, մի կողմից՝ հանրային գործունեություն իրականացնող անձանց համար պետք է ընդունելի լինի իրենց գործունեությամբ պայմանավորված քննադատությունը, մյուս կողմից՝ նրանց արժանապատվությունը ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելուն ուղղված վարքագիծը չի կարող պաշտպանվել Սահմանադրության 42-րդ հոդվածով:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումները Սահմանադրական դատարանին հիմք են տալիս եզրակացնելու, որ ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգավորումը, որը

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

նախատեսում է որակյալ հանցակազմով քրեական պատասխանատվություն հանրային գործունեություն իրականացնող անձին ծանր վիրավորանք հասցնելու համար, ինքնանպատակ չէ:

Հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող ցանկացած անձի նկատմամբ առավել բարձր քրեաիրավական պաշտպանություն նախատեսելով՝ օրենսդիրը նպատակ է հետապնդել պաշտպանելու ոչ միայն վերջինիս պատիվն ու արժանապատվությունը, այլև պետական անվտանգությունը (հանրային իշխանության արդյունավետ գործունեությունը): Նման մոտեցման հիմքում ընկած է այն իրավաչափ տրամաբանությունը, որ երկրորդ դեպքում թիրախավորվում է ոչ միայն կամ ոչ այնքան տվյալ անձը, որքան այն, որ նա իրականացնում է հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն: Այս հանգամանքն ինքնին պարտավորեցնում է պետությանը լրացուցիչ իրավական երաշխիքներ նախատեսել հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց համար, առավել ևս այն պարագայում, որ վերջիններս, **իրենց կարգավիճակով պայմանավորված, կրում են որոշակի սահմանափակումներ, այդ թվում՝ կարծիքն արտահայտելու ազատության և ծանր վիրավորանքին համարժեք արձագանքելու տեսանկյունից:**

Այս առումով Սահմանադրական դատարանն էական է համարում ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ բոլոր այն դեպքերում, երբ կարծիքի արտահայտման ազատությունը չի հափում թույլատրելի՝ ծանր վիրավորանքի շեմը, **սպա** հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց համար ոչ միայն հավելյալ երաշխիքներ չեն կարող նախատեսվել, այլև վերջիններս կրում են հանդուրժող լինելու պարտականություն, այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ կարծիքի արտահայտման ազատությունը հափում է թույլատրելի շեմը, և հասցվում է ծանր վիրավորանք, **սպա** հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց համար իրավական պաշտպանության հավելյալ երաշխիքներ սահմանելը՝ այդպիսի արարքը որակյալ հանցակազմով նախատեսելը, օրենսդրի իրավասության փրորոյթում է և չի խախտում օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը, քանի որ փարբերակված մոտեցումը կրում է օբյեկտիվ բնույթ և հեփապնդում է իրավաչափ նպատակ:

Այս համատեքստում Սահմանադրական դատարանը հարկ է համարում քննարկել լրագրողական գործունեություն իրականացնող անձանց ևս հատուկ պաշտպանություն վերապահելու իրավաչափության հարցը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Սահմանադրական դատարանն իր՝ 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշման մեջ կարևորել է *մամուլի հասարակական դերը*: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս բազմիցս անդրադարձել է նաև մամուլի ազատությանը, մասնավորապես, ընդգծել է մամուլի կենսական դերը ժողովրդավարական հասարակության մեջ (*տե՛ս օրինակ՝ Axel Springer AG v. Germany, Application no. 39954/08, 07.02.2012, § 79*):

Հաշվի առնելով ժողովրդավարական հասարակությունում հանրությանը հուզող խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն տարածելու հարցում մամուլի առանցքային դերը՝ իրավաչափ է, որ առավել լայն պաշտպանություն ապահովվի լրագրողական գործունեության համար: Այսինքն՝ մի կողմից պետք է երաշխավորված ու պաշտպանված լինի խոսքի և արտահայտվելու ազատության իրավունքը, մյուս կողմից՝ դրանով չպետք է վտանգվի պատասխանատու մամուլի կենսունակությունը:

Ինչ վերաբերում է վիճարկվող դրույթում հանրային գործունեություն համարվող գործունեության մյուս տեսակների դեպքում ևս պաշտպանության հավելյալ երաշխիքներ նախատեսելու իրավաչափությանը, ապա այս առնչությամբ անհրաժեշտ է արձանագրել, որ այն գտնվում է օրենսդրի հայեցողության տիրույթում՝ իհարկե, հաշվի առնելով այդպիսի կարգավորման անհրաժեշտության օբյեկտիվ բնույթը և հետապնդած իրավաչափ նպատակը: Ըստ այդմ, հաշվի առնելով նշված պայմանների պահպանվածությունը՝ վիճարկվող դրույթում հանրային գործունեություն համարվող գործունեության մյուս տեսակների դեպքում ևս պաշտպանության հավելյալ երաշխիքներ նախատեսելը չի կարող որակվել որպես անհամաչափ միջամտություն կարծիքի արտահայտման ազատությանը:

5.5. Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում հարկ է համարում անդրադառնալ նաև վիճարկվող քրեաիրավական կարգավորման գործողության պայմաններում քաղաքացիաիրավական պատասխանատվության զուգահեռ կիրառման իրավաչափության հիմնախնդրին՝ այն դիտարկելով Սահմանադրության 68-րդ հոդվածով ամրագրված՝ կրկին դատվելու սահմանադրաիրավական արգելքի համատեքստում:

Սահմանադրական դատարանն իր՝ 2014 թվականի փետրվարի 18-ի ՍԴՈ-1139 որոշման մեջ նշել է. «Կրկին դատվելու անթույլատրելիության պահանջը (սկզբունքը), որը նախատեսված է ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասում, սահմանված է մի շարք միջազգային պայմանագրերով, այդ թվում՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունք-

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ կետով, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածով: Այդ սկզբունքն իր բովանդակությամբ (մեկնաբանմամբ) ենթադրում է պետության պարտականությունը՝ նույն արարքի համար անձին կրկին անգամ պատժելը, դատելը և քրեական հետապնդման ենթարկելը բացառելը: Իր սահմանադրաիրավական բովանդակությամբ՝ այդ սկզբունքի հիմքում (քրեաիրավական իմաստով) դրված է այն գաղափարը, որ ոչ ոք չի կարող նույն արարքի համար կրկին դատվել»:

Իր մեկ այլ՝ 2010 թվականի մայիսի 11-ի ՍԴՈ-882 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ՝ « ... նույն արարքի համար կրկին անգամ դատվելը բացառելու սկզբունքն այն ձևով, ինչպես սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ և կարգավորված է ՀՀ քրեական օրենսգրքով, բացառում է անձին կրկնակի դատապարտելն ու պատժելը միևնույն հանցագործության համար, ինչպես նաև միևնույն հանցավոր արարքի որակումն օրենսգրքի մի քանի հոդվածով, եթե դրանցում պարունակվող նորմերը հարաբերակցվում են որպես Ընդհանուր և Հատուկ մասերի նորմեր կամ մաս և ամբողջություն»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները» վերտառությամբ 1087.1-ին հոդվածը ներառված է «Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ» վերտառությամբ 60-րդ գլխում: Այդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի իմաստով՝ վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է:

Սահմանադրական դատարանն իր՝ 2011 թվականի ապրիլի 5-ի ՍԴՈ-947 որոշման շրջանակներում բացահայտել է ՀՀ քրեական և քաղաքացիական օրենսդրության խնդիրները՝ արձանագրելով, որ՝ «ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի խնդիրները» վերտառությամբ 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի խնդիրներն են, ի թիվս այլնի, հանցավոր ուղնձություններից մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, հանցագործությունների կանխումը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Քաղաքացիական օրենսդրության սկզբունքները» վերաբերյալ 3-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել նաև ՀՀ քաղաքացիական օրենսդրության խնդիրները: ՀՀ քաղաքացիական օրենսդրության խնդիրներն են, ի թիվս այլնի, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացումը, խախտված իրավունքների վերականգնման և դրանց դատական պաշտպանության ապահովումը:

ՀՀ քրեական և քաղաքացիական օրենսդրության խնդիրների համադրված վերլուծությունից բխում է, որ քրեական օրենսդրության միջոցով օրենսդիրն իր առջև դրել է հանցագործությունների կանխման միջոցով հանցագործությունների հետևանքով իրավունքների և ազատությունների **խախտումների կանխման** խնդիր, իսկ քաղաքացիական օրենսդրության դեպքում օրենսդիրն իր առջև դրել է **խախտված իրավունքների վերականգնման** ապահովման խնդիր, ինչը նշանակում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առկա են քաղաքացիական իրավունքների խախտման դեպքում քաղաքացիական դատավարության կարգով նշված իրավունքների վերականգնման համար նախադրյալներ հանդիսացող նորմեր: (...)

Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, որտեղ օգտագործվում է «խախտված իրավունքների վերականգնման» բառակապակցությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվում է «պաշտպանել իրավունքները» բառակապակցությունը, ինչը նշանակում է, որ քրեական օրենսդրությունն ունի նախականիչ նշանակություն և քրեական օրենսդրության միջոցով օբյեկտիվորեն հնարավոր չէ վերականգնել արդեն իսկ խախտված իրավունքները:

(...) կոնկրետ արարքի համար միաժամանակ քրեական և քաղաքացիական պատասխանատվություն սահմանող նորմերն ունեն տարբեր առարկաներ, և դրանց միջոցով օրենսդիրը լուծում է տարբեր խնդիրներ. քաղաքացիական պատասխանատվության սահմանումը չի բացառում քրեորեն պատժելի արարքի համար պատասխանատվության սահմանումը:

Ընդ որում, այս կամ այն արարքի հանրային վրանգավորության գնահատումը և դրա քրեականացումը գտնվում են օրենսդրի բացառիկ իրավասությունների տիրույթում՝ հաշվի առնելով խնդրի համակարգային լուծումը և ելնելով վարչական, քաղաքացիական և քրեական պատասխանատվության հստակ տարանջատման ու համադրված կանոնակարգման անհրաժեշտությունից»:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ քաղաքացիական և քրեական օրենսդրությունները հետապնդում են **տարբեր նպատակներ, և դրանց իրացման համար նախատեսված են տարբեր ընթացակարգեր**: Նույն տրամաբանությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածն իր նպատակով տարբերվում է ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածի հետապնդած նպատակից, մասնավորապես, եթե առաջին դեպքում օրենսդիրը նպատակ է հետապնդում մասնավոր իրավահարաբերությունների շրջանակներում ապահովել անձի խախտված իրավունքների վերականգնման իրավական հնարավորությունը և ստանալ ոչ նյութական վնասի հատուցում, ապա երկրորդ դեպքում օրենսդրի խնդիրն է կանխել իրավունքների հնարավոր ցանկացած խախտում, իսկ խախտման դեպքում հանրային իրավահարաբերությունների շրջանակներում պաշտպանել դրանք: Վերոշարադրյալի հիման վրա Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ քրեաիրավական պատասխանատվությունն իր բնույթով պատժիչ տեսակի պատասխանատվության միջոց է՝ ի տարբերություն քաղաքացիաիրավական պատասխանատվության, որն ունի իրավավերականգնիչ առաքելություն: Ավելին, բացի նրանից, որ տարբեր են ՀՀ քաղաքացիական և ՀՀ քրեական օրենսգրքերի նպատակները և խնդիրները, էական տարբերություն է առկա նաև կոնկրետ հոդվածների կարգավորման առարկաների միջև, այն է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածը քաղաքացիական պատասխանատվություն է նախատեսում վիրավորանքի և զրպարտության համար, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում ծանր վիրավորանքի համար, որը կարող է իրականացվել հայիոյելու կամ արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելու միջոցով՝ դրսևորվելով ինչպես խոսքի (պատկեր, ձայն և այլ հրապարակային արտահայտություն), այնպես էլ այլ վարքագծի միջոցով: Բացի դրանից, սույն պարագայում խնդրո առարկա պատասխանատվության տեսակները տարբերակվում են նաև առաջացրած իրավական հետևանքների տեսանկյունից, մասնավորապես, ի տարբերություն քաղաքացիական պատասխանատվության՝ քրեաիրավական պատասխանատվությունն առաջացնում է դատվածություն: Հատկանշական է, որ օրենսդիրը տարբերակել է նաև խնդրո առարկա պատասխանատվության միջոցները՝ նկատի ունենալով, որ քաղաքացիաիրավական պատասխանատվության դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել՝ ա) հրապարակայնորեն ներողություն խնդրել, բ) եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն

իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը, գ) ստանալ համապատասխան փոխհատուցում: Մինչդեռ քրեաիրավական պատասխանատվության դեպքում անձը վճարում է տուգանք կամ պատժվում է կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով: **Բացի դրանից, քաղաքացիաիրավական պատասխանատվության դեպքում փոխհատուցման ենթակա գումարը տրվում է անձին, որին հասցվել է վիրավորանքը, իսկ քրեաիրավական պատասխանատվություն կիրառվելու դեպքում համապատասխան տուգանքը փոխանցվում է պետությանը: Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ քաղաքացիական պատասխանատվության սահմանումն ինքնին չի բացառում քրեորեն պատժելի արարքի համար պատասխանատվության սահմանումը, և հակառակը, որպիսի պայմաններում վիճարկվող կարգավորումը Սահմանադրության համատեքստում խնդրահարույց չէ:**

5.6. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործի շրջանակներում սահմանադրական իրավական չափանիշների հիման վրա գնահատել սույն գործով վիճարկվող դրույթների իրավական որոշակիությունը և դրա հետ կապված իրավակիրառ պրակտիկան՝ նկատի ունենալով, որ դիմողը սույն գործով վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունը փոխկապակցում է իրավակիրառ պրակտիկայում առկա մեկնաբանությունների հետ:

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է **իրավական որոշակիության** սահմանադրական սկզբունքին և մի շարք որոշումներում մասնավորապես, արձանագրել է.

- 1) «(...) օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (2006 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-630),

2) «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը: Օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարևոր գործոն է նաև տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունների առկայության կամ բացակայության հանգամանքը» (2008 թվականի մայիսի 13-ի ՍԴՈ-753),

3) «Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները» (2014 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-1148),

4) «ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի» (2016 թվականի մայիսի 3-ի ՍԴՈ-1270):

Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ վիրավորանքի հանցակազմի օբյեկտիվ կողմի տարրի՝ արարքի օրենսդրական հասկացության առավել որոշակի սահմանման (նկարագրության) չափանիշով համաշխարհային պրակտիկայում առկա է երեք մոտեցում. ա) վիրավորանքի՝ որպես հանցավոր արարքի օրենսդրական նկարագրության իսպառ բացակայություն, երբ օրենքը, վիրավորանքն ամրագրելով որպես հանցագործություն, չի սահմանում այդ եզրույթի որևէ մեկնաբանություն, բ) վիրավորանքի՝ որպես հանցավոր արարքի օրենսդրական նկարագրություն շատ վերացական բնորոշման միջոցով (անձի պատվի նկատմամբ ոտնձգություն, «վրդովեցուցիչ արտահայտությունը, ատելության կամ վիրավորանքի խոսքը»), գ) վիրավորանքի՝ որպես հանցավոր արարքի որոշակիորեն մանրամասնեցված

օրենսդրական նկարագրություն («անձի պատվի ու արժանապատվության ստորացում՝ արտահայտված անպարկեշտ կամ համընդհանուր ճանաչում ունեցող բարոյական նորմերին հակասող այլ ձևով», «անձի պատիվը՝ գրավոր, պատկերով, ժեստերի կամ ագրեսիայի ակտի միջոցով ոտնձգելը»):

Վերոբերյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո քննարկման առարկա դարձնելով վիճարկվող դրույթի 1-ին մասում ամրագրված ձևակերպումները՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ յուրաքանչյուր լեզվում և մշակույթում որոշակի արտահայտություններ ունեն հատուկ նշանակություն: Միայն հասարակ լեզվաբանական վերլուծությունը հնարավորություն է տալիս հասկանալու, որ հայհոյանքը ծանր վիրավորանքի դրսևորում է, հայհոյանք հասցնողը դիտավորյալ և կանխամտածված ձևով արտաբերում է բառեր ու վիրավորական արտահայտություններ՝ նպատակ ունենալով վիրավորանք հասցնել այլ անձի: Վիճարկվող դրույթի ծանր վիրավորանք հասցնելու մյուս եղանակը ծայրահեղ անպարկեշտ ձևով վիրավորելն է, որը կարող է դրսևորվել հասարակության մեջ ընդունված բարոյականության և էթիկայի նորմերով կարգավորված կանոններին ծայրահեղ հակասող վարքագծով:

Վիճարկվող հոդվածի 2-րդ մասում՝ որպես որակյալ հանցակազմ օրենսդիրը քրեական պատասխանատվություն է նախատեսել անձին ծանր վիրավորանք հասցնելու կամ անձի վերաբերյալ ծանր վիրավորանք պարունակող նյութեր տարածելու համար, եթե այն՝ 1) կատարվել է տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով կամ հրապարակային այլ եղանակով կամ 2) կատարվել է անձի հանրային գործունեությամբ պայմանավորված:

Նույն դրույթի 3-րդ մասի վերջին պարբերության իմաստով՝ հանրային գործունեություն է համարվում լրագրողական գործունեությունը, հրապարակախոսական գործունեությունը, ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված գործունեությունը, հանրային ծառայության կամ հանրային պաշտոն զբաղեցնելու հետ կապված գործունեությունը, հասարակական կամ քաղաքական գործունեությունը:

Հանրային գործունեություն համարվող վերոնշյալ ձևակերպումների բովանդակության բացահայտման համար հատուկ իրավաբանական և համակարգային մեկնաբանման հնարքների կիրառումը հնարավորություն է տալիս փաստելու, որ դրանցից մի քանիսն այլ ճյուղային պատկանելիություն ունեցող իրավական ակտերով արդեն իսկ բացահայտված են: Այսպես՝ «լրագրողական գործունեություն» եզրույթի բովանդակության բացահայտման իրավական հիմքը «Ձանգվածային լրատվության մասին»

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ

օրենքի 3-րդ հոդվածում մեկնաբանված հասկացություններն են, իսկ «հանրային ծառայության կամ հանրային պաշտոն» հասկացությունների իմաստի պարզաբանման նորմատիվ-իրավական հիմքը «Հանրային ծառայության մասին» օրենքն է:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ծանր վիրավորանքի հանցակազմի օրենսդրական ձևակերպումներին բնորոշ չէ այն չափով վերացականությունը, որը հնարավորություն չի տալիս համապատասխան սուբյեկտներին հասկանալու վիճարկվող իրավադրույթների իմաստը, կանխատեսելու այն հետևանքները, որոնք կարող են առաջացնել իրենց գործողությունները, ի վիճակի լինել դրսևորելու համապատասխան վարքագիծ կամ համատեղելու իրենց վարքագիծը օրենքով սահմանված պահանջներին, այն է՝ ծանր վիրավորանքի արգելքին:

Միևնույն ժամանակ Սահմանադրական դատարանը շեշտում է, որ իրավական որոշակիությունը չպետք է բացարձականացնել: Գնահատողական եզրույթների առկայության պատճառով իրավակարգավորումն ինքնին խնդրահարույց չէ, որպիսի պայմաններում որոշակիության ծավալը լրացնելու ու իրավադրույթների կիրառման համար անհրաժեշտ ու բավարար բովանդակություն հաղորդելու առաքելությունը վերապահված է իրավակիրառողին:

Վիճարկվող դրույթի 1-ին և 2-րդ մասերում առկա եզրույթների, այնպես էլ «հանրային գործունեության» բովանդակությունը կազմող մյուս ձևակերպումների մի մասը ոչ թե անորոշ է, այլ գնահատողական, և դրանք չեն խաթարում իրավական որոշակիության սկզբունքը: Վիճարկվող դրույթում առկա ընդհանրական ձևակերպումների բովանդակությունը պետք է բացահայտվի իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում՝ նկատի ունենալով յուրաքանչյուր կոնկրետ դեպքը և դրա առանձնահատկությունները, ծանր վիրավորանքի համատեքստը և այլն:

Իրավակիրառական այս խնդիրը կարևորվել է Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում արտահատված հետևյալ դիրքորոշումներում՝

1) «(...) նորմերով կարգավորվող իրավահարաբերությունների առանձնահատկություններով (գնահատման ենթակա հանգամանքների բազմազանությամբ) է պայմանավորված հայեցողական որոշակի այն ազատությունը, որն օրենսդիրը տրամադրել է դատարաններին վիճարկվող հոդվածի նորմերի կիրառմամբ որոշումներ կայացնելիս: Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ դատական հայեցողությունը մանավանդ այնպիսի դեպքերում, երբ քննության առարկա է ՀՀ

Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված խոսքի ազատության սահմանափակման հարցը, պետք է առաջնորդվի ոչ միայն օրենքի նորմերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան մեկնաբանությամբ կիրառելու պահանջով, այլև միջազգային պրակտիկայով, և հատկապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով» (2011 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997),

2) «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով» (2016 թվականի մայիսի 3-ի ՍԴՈ-1270):

Այս առնչությամբ կայուն նախադեպային մոտեցում ունի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, ըստ որի՝ *չնայած այն բանին, որ սահմանումների որոշակիությունը խիստ ցանկալի է, միաժամանակ անհրաժեշտ է խուսափել դրանց չափազանց կոշտ լինելուց՝ իրավունքը պետք է ունակ լինի հետևել փոփոխվող հանգամանքներին: Այդ իսկ պարճառով, հաճախ օրենքներում առկա են տերմիններ, որոնք քիչ թե շատ անորոշ են: Դրանց մեկնաբանումը և կիրառումը դատական պրակտիկայի խնդիր է (The Sunday Times v. the United Kingdom, Application no. 6538/74, 26.04.1979, §49):*

Սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներում արձանագրված իրավակիրառման վերոբերյալ պահանջների կենսագործումն արդեն իսկ նկատվում է վիճարկվող նորմերի կիրառման պրակտիկայում: Այսպես՝ հետաքննության, նախաքննության տվյալների և դատական վերջնական ակտերի համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրականում կատարված հանրորեն վտանգավոր արարքների որակման հարցում նկատվում է առհասարակ վիրավորանքի և ծանր վիրավորանքի, ծայրահեղ անպարկեշտ եղանակների զանազանման հետաքրքիր մեկնաբանողական գործընթաց: Թիվ ԵԴ/0127/01/22, թիվ ԵԴ/1609/01/21, թիվ ՍԴ/0012/01/22, թիվ ՍԴ/0019/01/22, թիվ ՍԴ/0024/01/22, թիվ ԼԴ/0182/01/21 քրեական գործերով կայացված դատավճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առաջին ատյանի դատարաններն արդեն կայացրած դատավճիռներով

առայժմ ծանր վիրավորանք են որակել միայն կոնկրետ անձի (անձանց) ուղղված սեռական բնույթի հայհոյանքները, անձի վրա թքելը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել նաև, որ ցանկացած իրավադրույթի, հատկապես գնահատողական հասկացություններ պարունակող, նորմատիվ բովանդակության սահմանադրականությունն ինքնին չի բացառում նորմի՝ իրավակիրառ պրակտիկայում հակասահմանադրական մեկնաբանությունն ու կիրառումը: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում փաստել, որ հայհոյանքի կամ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորանքի առկայության կամ բացակայության, ինչպես նաև արարքը որակյալ հանցակազմով որակելու հարցը, ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից, իրավակիրառ պրակտիկայի, այսինքն՝ վարույթն իրականացնող մարմնի, այդ թվում՝ եռաստիճան դատական համակարգի գնահատման տիրույթում է: Իրավակիրառ և դատական մարմինները պետք է առաջնորդվեն վիճարկվող դրույթի որակման միասնական պրակտիկա ձևավորելու հրամայականով, ինչը կնպաստի իրավական կանխատեսելիության բարձրացմանը և վերացական հասկացությունների գնահատման հայեցողության սահմանների հստակեցմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 170-րդ հոդվածը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

29 ապրիլի 2022 թվականի
ՍԴՈ-1646

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 1/1 (105/1) 2022

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի՝ «ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 137.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԴՈ-1646 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում ենք հատուկ կարծիք՝ Սահմանադրական դատարանի 2022 թվականի ապրիլի 29-ի՝ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՍԴՈ-1646 որոշման (այսուհետ՝ ՍԴՈ-1646 որոշում) վերաբերյալ:

Նկատի ունենալով սույն գործով Սահմանադրական դատարանի մոտեցումներն ու եզրահանգումները՝ ՍԴՈ-1646 որոշումը հիմնավոր, հետևաբար՝ ընդունելի չենք համարում: Այսպես՝

1. Նախ և առաջ հարկ ենք համարում նշել, որ մինչև Սահմանադրության՝ 2020 թվականի հունիսի 22-ի փոփոխությունների ուժի մեջ մտնելը¹ կազմավորված և գործող Սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտել է ժողովրդավարական պետության հիմքերից մեկը կազմող կարծիքի արտահայտման ազատության սահմանադրական իրավունքի և դրա արդյունավետ իրացման պաշտպանության հետ կապված առանցքային իրավական դիրքորոշումներ: Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշման մեջ հղում անելով Մարդու իրավունքների եվրոպական դա-

¹ Հիշյալ փոփոխություններին մանրամասն անդրադարձել ենք Սահմանադրական դատարանի 2021 թվականի ապրիլի 29-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերի, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՍԴՈ-1590 որոշման վերաբերյալ ներկայացրած մեր հատուկ կարծիքում http://www.concourt.am/pdf/uploads/620657b0d2ecd_sdv-1590-tovmasyan-petrosyan.pdf

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ

տարանի պրակտիկային՝ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «...հանդուրժողականությունն ու լայն հայացքները ժողովրդավարության հիմքում են, և արտահայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է ոչ միայն ընդհանուր առմամբ ընդունելի համարվող խոսքը, այլ նաև հենց այն արտահայտությունները, որոնք կարող են ցնցող, վիրավորական կամ վրդովեցուցիչ համարվել ոմանց կողմից»:

Մեր կարծիքով՝ ի թիվս այլնի, հայեցակարգային այս մոտեցումն է ժամանակին հանգեցրել Հայաստանի Հանրապետությունում վիրավորանքի և զրպարտության ապաքրեականացմանը, որով նաև ընդգծվել է, որ որպես ժողովրդավարական պետություն արդեն իսկ այնչափ կենսունակ է դարձել, որպեսզի **մարդու արժանապատվությունը, պատիվը և բարի համբավը պաշտպանի ոչ թե քրեական, այլ քաղաքացիական իրավունքի գործիքակազմով:**

Նման հայեցակարգային մոտեցումից, ըստ էության, հետքայլ կատարելը թերևս հիմք է տալիս թե՛ ներպետական և թե՛ միջազգային համապատասխան հանրույթին արձանագրելու, որ կատարվում է ժողովրդավարությունից հետընթաց՝ ստեղծելով հատկապես ազատ խոսքի ոչ իրավաչափ սահմանափակմանն ուղղված քայլերի հնարավորություն, որոնցից քաղաքացիաիրավական պատասխանատվության պայմաններում «ծանր վիրավորանքի» քրեականացումը միայն մեկն է: Ընդ որում՝ իրեն իրավական հոչակած պետությունում ժողովրդավարական հաստատությունների գործունեությունը վտանգվում է ոչ միայն և ոչ այնքան ազատ խոսքի հակաիրավական սահմանափակումների, այլև հայիոյախոսության, քաղաքական խոսույթի արժեզրկման, դատական իշխանության նկատմամբ ակնհայտ անհարգալից խոսքի դրսևորումներ թույլ տալու, տեղեկատվական ահաբեկման այնպիսի միջավայրի խթանման պատճառով, որում առաջին հերթին առանցքային դերակատարում ունեն հանրային իշխանության տարբեր ներկայացուցիչներ: Ավելին՝ հանրային իշխանության մարմինների պարտականությունն է ձեռնարկել գործուն միջոցներ, որպեսզի այդ միջավայրից հնարավոր լինի ձերբազատվել ոչ թե քրեաիրավական ներգործության սպառնալիքի, այլ բաց հանրային քննարկումների, քաղաքական մշակույթի խթանման, սեփական խոսքի կշռի իմաստավորման և ժողովրդավարական պետությունում գաղափարական պայքարի և քաղաքական երկխոսության արմատավորման միջոցով, որոնցով ևս պետք է ապահովվեն քաղաքացիական խաղաղությունը, համերաշխությունը:

Գտնում ենք, որ վիրավորանքի դեմ քրեաիրավական պայքարի որևէ ընտրված միջոց ինքնին չի կարող ապահովել մարդու արժանա-

պատվության, պատվի և բարի համբավի՝ սահմանադրորեն պահանջվող պաշտպանություն, քանի դեռ քաղաքական գործիչները և հանրային իշխանության մարմինների պաշտոնատար անձինք շարունակում են մասնավոր անձանց, լրատվամիջոցների, ընդդիմախոսների՝ ապաքաղաքական բնույթ ունեցող տեղեկատվական թիրախավորումը և վարկաբեկումը: Հայիոյախոսության, ատելության խոսքի դեմ անհանդուրժողականության միջավայրի արմատավորման պայմաններում անգամ տեսականորեն այլևս հիմքեր չեն լինի մարդու արժանապատվության, պատվի և բարի համբավի քրեաիրավական պաշտպանության համար: Սահմանադրական իրավունքի տեսանկյունից դա նշանակում է, որ վիրավորանքի քրեականացումը բարձր սահմանադրական արժեքների պաշտպանության համար անհրաժեշտ չէ բոլոր այն դեպքերում, երբ առկա են այլընտրանքային՝ քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցներ, և երբ քաղաքական միջոցներով հնարավոր է ապահովել այնպիսի միջավայր, որում հայիոյախոսությունը կլինի անհանդուրժելի:

Գտնում ենք, որ **Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1646 որոշմամբ հիմնվել է այն սխալ ելակետի վրա, ըստ որի՝ վիրավորանքի քրեականացման և ապաքրեականացման հարցը բացառապես Ազգային ժողովի իրավասության տիրույթում է:**

Մեզ համար ակնհայտ է, որ ժողովրդավարական պետությունում վիրավորական խոսքի դեմ պայքարը պետք է ապահովվի թե՛ քաղաքացիաիրավական պատասխանատվության արդյունավետ կիրառման, թե՛ քաղաքական գործընթացներում ատելության, վիրավորական խոսքի դեմ գաղափարական պայքարի, վիրավորանքի նկատմամբ անհանդուրժողականության միջոցներով, ինչպես նաև քաղաքական գործիչների և առավել ևս հանրային ծառայության էթիկայի կանոններով կաշկանդված պաշտոնատար անձանց սեփական օրինակներով, մինչդեռ գործ ունենք սոսկ արարքի քրեականացման միջոցի ներգործությամբ արդեն իսկ ստեղծված քաղաքացիական անհամերաշխության միջավայրում առանձին դրսևորումների դեմ պայքարի հետ, որում խոսքի ազատությունը, մեր գնահատմամբ, սահմանափակվում է առանց անհրաժեշտության, այսինքն՝ օրենսդրի կողմից պարզապես անտեսվել են նույն արդյունավետությունն ունեցող անհրաժեշտ, նվազ միջամտող այլ միջոցները:

Սահմանադրական դատարանը ՍԴՈ-997 որոշման մեջ հատուկ շեշտել է, որ «մարդու արժանապատվությունից՝ ներառյալ պատիվը, բարի համբավը և մասնավոր կյանքը, բխող իրավունքները և ազատությունները, որպես բացարձակ իրավունք գործնականում կարող են

արդարացնել արտահայտվելու ազատության սահմանափակումը **միայն իրավաչափ շրջանակներում**»:

ՍԴԻ-1646 որոշման մեջ Սահմանադրական դատարանն ինքն է վկայակոչում ՍԴԻ-997 որոշումը՝ նշելով. «Սահմանադրական դատարանն արձանագրել է. «(...) արտահայտվելու ազատության իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է սահմանված լինի օրենքով, ծանայի իրավաչափ շահ պաշտպանելու նպատակին և լինի անհրաժեշտ պլյալ շահն ապահովելու համար»: Այնուհետև Սահմանադրական դատարանը մեջբերել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը, որում մեկնաբանվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածի բովանդակային ծավալը, ըստ որի՝ «...Կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված արտահայտվելու ազատությունն ընդգրկում է ոչ միայն դրականորեն ընկալվող, ոչ վիրավորական կամ չեզոք, այլև վիրավորական, ցնցող կամ անհանգստացնող «տեղեկատվությունը» կամ «գաղափարները». վերջիններս բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության պահանջներ են, առանց որոնց չի կարող լինել «ժողովրդավարական հասարակություն» (Oberschlik v. Austria, Application no 11662/85, 23.05.1991, § 57)»:

Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հիմնարար իրավական դիրքորոշումները պատշաճորեն վերլուծելու փոխարեն Սահմանադրական դատարանը հանգել է դրանց տրամազծորեն հակադրվող դիրքորոշումների, որոնցով, հարցի լուծումը պայմանավորելով զուտ օրենսդրի հայեցողությամբ, հիմք է ստեղծել վիճարկվող դրույթները (Քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածը) համարելու սահմանադրականության առումով ոչ խնդրահարույց:

Սահմանադրական դատարանը չի անդրադարձել տուժողի այսպես կոչված դրդիչ խոսքին, որը կարող է արդարացնել հակադարձումը, ինչպես նաև ամբողջովին անտեսել է սուր քաղաքական քննադատության և վիրավորանքի միջև տարանջատման անհրաժեշտությունը՝ քաղաքական գործիչներին և հանրային իշխանության պաշտոնատար անձանց էության մեջ ամբողջովին նույնացնելով մասնավոր անձանց հետ: Բացի դրանից, Սահմանադրական դատարանը համապատասխան հետևություններով չի գնահատել ձևավորված իրավակիրառ պրակտիկան, ինչը Սահմանադրական դատարանի պարտականությունն է՝ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Անտեսելով Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հիմնարար իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը, որպես ելակետ ընդունելով վիճարկվող դրույթների բովանդակությունը, որոնք ամրագրում են ծանր վիրավորանքի հանցակազմը, նշում է. «Ծանր վիրավորանքի բացակայությունը որևէ արտահայտված կարծիքում վերջինիս իրավաչափության պայմանն է, քանի որ ազատ արտահայտված կարծիքը, որպես վարքագիծ, իրավաչափ է այնքանով, որքանով որ չի խախտում այլոց իրավունքներն ու ազատությունները: Մարդու իրավունքների այս հիմնարար իրավական տրամաբանությունից է բխում, որ ծանր վիրավորանքի համար իրավական պատասխանատվության սահմանումը չի կարող դիտարկվել որպես կարծիքի արտահայտման հիմնական իրավունքի ոտնահարում օրենսդրի կողմից»:

ՍԴՈ-1646 որոշմամբ արտահայտած դիրքորոշումներով Սահմանադրական դատարանը հիմնվել է մեզ համար անընդունելի այն մոտեցման վրա, որ ծանր վիրավորանքը՝ որպես հանրորեն վտանգավոր արարք, կանխավ որոշվում է քրեական օրենքի վիճարկվող դրույթներով, մինչդեռ, նախ՝ դա միշտ կոնկրետ գործի փաստական հանգամանքների գնահատման հարց է, բացի դրանից, առաջին հայացքից վիրավորական թվացող խոսքը, որը, օրինակ՝ քաղաքական վարքագծի գնահատում է կամ հիմնված է անվիճելի փաստերի վրա կամ պատասխան է քաղաքական գործչի կամ պաշտոնատար անձի դրդիչ վարքագծի կամ չի հետապնդել սոսկ վիրավորելու նպատակ, չի կարող բոլոր դեպքերում և առանց որևէ վերապահման ի սկզբանե գնահատվել որպես վիրավորական, առավել ևս՝ ծանր վիրավորանք պատճառող: Ակնհայտ է դառնում, որ դրանով Սահմանադրական դատարանի կողմից անտեսվել է պատասխանատվության անհատականացման սկզբունքը, որը համաչափության հիմնարար սահմանադրական սկզբունքի արտացոլումն է քրեական իրավունքում:

ՍԴՈ-1646 որոշման վերը հիշատակված ձևակերպումից նաև հետևում է, որ միայն ծանր վիրավորանքի բացակայությունն է կարծիքի արտահայտման իրավունքի իրացման տեսանկյունից իրավաչափության պայման, և հարց է ծագում, թե «այլ վիրավորանքը», որն առաջացնում է քաղաքացիաիրավական պատասխանատվություն, թույլատրելի՞ է արդյոք Սահմանադրության տեսանկյունից:

2. Ի հակադրություն Սահմանադրական դատարանի՝ գտնում ենք, որ վիճարկվող դրույթները խնդրահարույց են Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված որոշակիության սկզբունքի տեսանկյունից:

Նախ՝ ո՛չ օրենսդիրը, ո՛չ Սահմանադրական դատարանը, ո՛չ էլ դատարանները չեն սահմանել կամ ուրվագծել որևէ տարբերակիչ հատկանիշ, որով հայիոյանքը կտարանջատվեր անձի արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելուց: Դա փաստվում է հենց Սահմանադրական դատարանի կողմից իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությամբ, երբ Սահմանադրական դատարանը, զերծ մնալով այդ պրակտիկայի սահմանադրականության հարցով հետևություններից (թեև, ինչպես նշվեց՝ դա Սահմանադրական դատարանի պարտականությունն է բոլոր վարույթներում, որոնցում այն պետք է գնահատվի), նշել է, որ հարուցված բազմաթիվ քրեական գործերից այն խիստ սակավաթիվ գործերով, որոնցով առկա են դատական ակտեր, «առաջին ատյանի դատարաններն արդեն կայացրած դատավճիռներով առայժմ ծանր վիրավորանք են որակել միայն կոնկրետ անձի (անձանց) ուղղված սեռական բնույթի հայիոյանքները, անձի վրա թքելը»:

Բացի դրանից, ըստ Սահմանադրական դատարանի ուսումնասիրության արդյունքների՝ «Վիճարկվող իրավադրույթների ուժի մեջ մտնելուց հետո մինչև ս.թ. մարտի 30-ը հարուցված 389 քրեական գործերից 253-ը (մոտ 70 տոկոսը) կարճվել է»:¹ Ընդ որում, հարկ է նշել, որ վիճարկվող դրույթների կիրառման հետ կապված թվերը շեշտակի աճում են¹:

Մեր կարծիքով՝ դա վկայում է այն մասին, որ վիճարկվող դրույթների անորոշությունը, մի կողմից՝ էապես նվազեցնելով քրեական հետապնդման նախադրյալները, թույլ է տալիս քրեական գործ հարուցել ցան-

¹ Հայաստանի Հանրապետության դատախազության պաշտոնական կայքէջում 2022 թվականի ապրիլի 28-ին հրապարակված տեղեկատվության համաձայն՝ Քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2022 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում «...առերևույթ ծանր վիրավորանք հասցնելու դեպքերի առթիվ նախապատրաստված 938 նյութերից 802-ով հարուցվել է քրեական գործ, որոնցից 425-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137.1 հոդվածի 1-ին մասի, 377-ը՝ 2-րդ կամ 3-րդ մասերի հատկանիշներով: ... Նշված ժամանակահատվածում կայացվել է ՀՀ քրեական օրենսգրքի 137.1 հոդվածով հարուցված 171 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում: ... 2022թ. ապրիլի 1-ի դրությամբ մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 51 անձի վերաբերյալ 48 քրեական գործ, որոնցից 15 գործ՝ 16 անձի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ 33 գործ՝ 35 անձի վերաբերյալ՝ նույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասերով նախատեսված արարքներ կատարելու համար: 6 անձի վերաբերյալ 6 քրեական գործով կայացվել են մեղադրական դատավճիռներ, իսկ մյուս գործերով դատական քննությունը շարունակվում է...»:

կացած «պատրվակով», մյուս կողմից՝ առարկայական չափանիշների բացակայության պայմաններում թույլ չի տալիս դատարաններին վիրավորանքի ակնհայտ դրսևորումներից զատ տարբերակել հայիոյանքը և այլ ակնհայտ անպարկեշտ վիրավորանքը, թեև Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդպիսի զանազանում առկա է:

Ինչպես վերը նշեցինք՝ վիճարկվող դրույթներն ինքնին առաջացնում են որոշակիության խնդիր, որն առնվազն պետք է լիներ Սահմանադրական դատարանի գնահատման առարկա՝ իրավակիրառ պրակտիկայի համատեքստում:

Այսպես՝ ծանր վիրավորանքը նկարագրելու փոխարեն բնորոշվում է որպես հայիոյանք կամ ծայրահեղ անպարկեշտ եղանակով արժանապատվությանը հասցված վիրավորանք, այսինքն՝ բնորոշվող հասկացությունը և դրա բնորոշումը մասնակիորեն համընկնում են¹, ինչը հատկապես քրեական օրենքի պարագայում խնդրահարույց է, քանի որ քրեական օրենքով սահմանվող արգելքները, հաշվի առնելով մարդու անձնական ազատության և կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման ինտենսիվության աստիճանը, պետք է սահմանվեն հնարավոր առավելագույն հստակությամբ: Քրեական օրենքի դեպքում օրենքի ձևակերպումները և իրավակիրառ պրակտիկան չպետք է առաջացնեն անորոշություն մասնավոր անձանց պարտականությունների, նրանց համար սահմանված արգելքների ծավալի և բովանդակության հարցում, քանի որ դա կհանգեցնի քրեական պատասխանատվության անհիմն կամ կամայական կիրառման, ինչը մասնակիորեն փաստվում է հարուցված և կարճված քրեական գործերի քանակական հարաբերակցությամբ, ինչպես նաև դատարանների կողմից միայն ակնհայտ դեպքերը որպես ծանր վիրավորանք որակելու հանգամանքով:

¹ Ի տարբերություն վիճարկվող դրույթների՝ օրինակ՝ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանվում է. «Սույն օրենսգրքի իմաստով վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է: Սույն օրենսգրքի իմաստով՝ հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով»: Այսինքն՝ հիշյալ կարգավորմամբ վիրավորանքի բնորոշումն էականորեն ավելի է հստակեցված օրենսդրի կողմից: Ընդ որում, օրենսդիրը հնարավորություն է տվել տարանջատել փաստական հիմք ունեցող վիրավորական խոսքը սոսկ վիրավորելու նպատակ հետապնդող խոսքից, որով և տուրք է տվել թե՛ Սահմանադրական դատարանի, թե՛ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներին:

1/1 (105/1) 2022
 ♦ ՏԵՂԵԿՎՈՐ
 ♦ ՍԱԽՄԱՆԱՐԿՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
 449

3. Սահմանադրության 78-րդ հոդվածում ամրագրված համաչափության սկզբունքի տեսանկյունից նույնպես ՄԴՈ-1646 որոշումն ունի էական բացեր:

Մեր գնահատմամբ՝ Սահմանադրական դատարանը շփոթ է առաջացրել Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման հիմքերի տեսանկյունից, ի մասնավորի՝ հանրային կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց ծանր վիրավորանք հասցնելը հանգեցնելով ընդհուպ պետական անվտանգության սպառնալիքի մակարդակի, իսկ **պետական անվտանգության հանրային շահը նույնացնելով անգամ արդյունավետ գործունեության շահի հետ**: Ըստ Սահմանադրական դատարանի՝ «Հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող ցանկացած անձի նկատմամբ առավել բարձր քրեավիրավական պաշտպանություն նախատեսելով՝ օրենսդիրը նպատակ է հետապնդել պաշտպանելու ոչ միայն վերջինիս պատիվն ու արժանապատվությունը, այլև պետական անվտանգությունը (հանրային իշխանության արդյունավետ գործունեությունը)»: Եթե հետևենք Սահմանադրական դատարանի տրամաբանությանը, ապա հանրային իշխանության ոչ արդյունավետ գործունեությունն ինքնին նույնական է պետական անվտանգության սպառնալիքի հետ:

Մեզ համար ակնհայտ է, որ իրավաբանական պատասխանատվությունն այլոց արժանապատվությանը, պատվին և բարի համբավին հասցված վիրավորական խոսքի համար հետապնդում է լեգիտիմ նպատակ՝ անկախ այն հանգամանքից, թե ո՞վ է այդ իրավունքի կրողը՝ մասնավոր, թե՞ պաշտոնատար անձ, քաղաքական գործիչ, թե՞ հանրային գործունեությունից հեռու անձ:

Մյուս կողմից՝ անգամ ճիշտ նույնականացված լեգիտիմ նպատակին հասնելու միջոցները, տվյալ դեպքում՝ վիճարկվող օրենսդրական կարգավորումները, համաձայն համաչափության սկզբունքի, պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և համարժեք: Ըստ Սահմանադրական դատարանի՝ այդ վիճարկվող իրավակարգավորումները պիտանի են նպատակին հասնելու համար, ինչ էլ որ Սահմանադրական դատարանը հասկացել է այդ նպատակի ներքո: Այլոց իրավունքների պաշտպանությունը, մեր գնահատմամբ, այդպիսի նպատակ է, իսկ քրեական պատասխանատվությունն իրապես հնարավորություն է տալիս ապահովելու այն, այսինքն՝ պիտանի միջոց է:

Սակայն համաչափության սկզբունքի առանցքային բաղադրիչ է նաև պիտանի միջոցների անհրաժեշտ լինելը, ինչը, մեր համոզմամբ, հա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

կառակ Սահմանադրական դատարանի պնդման՝ չի ապահովվել օրենսդրի կողմից, ուստի **համաչափության սահմանադրական սկզբունքը խախտվել է:**

Այսպես՝ ըստ Սահմանադրական դատարանի՝ «Ծանր վիրավորանքի համար քրեական պատասխանատվություն սահմանելու՝ համաչափության սկզբունքի **անհրաժեշտության** տարրի վերաբերյալ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **առկա չէ սահմանադրորեն հետապնդվող նպատակին հասնելու համար բավարար արդյունավետ այլ օրենսդրական միջոց»:**

Սահմանադրական դատարանի այս դիրքորոշումը, որը ՍԴՈ-1646 որոշման խնդրահարույց լինելու տեսանկյունից անկյունաքարային է, ավելի քան վիճահարույց է հենց Սահմանադրական դատարանի կողմից վկայակոչված իր իսկ ՍԴՈ-1546 որոշման տեսանկյունից, որում համաչափության սկզբունքի անհրաժեշտության տարրը մեկնաբանվում է հետևյալ կերպով. «...*Համաչափության սկզբունքի հաջորդ փարրն օրենսդրի կողմից ընտրված միջոցի անհրաժեշտությունն է, այսինքն՝ այն, որ այդ միջոցը՝ այլ միջոցների համեմատ նույն ներգործությամբ, պետք է ենթադրի ամենամեղմ միջամտությունը որևէ հիմնական իրավունքին կամ ազատությանը: Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու բոլոր պիտանի միջոցներից պետք է ընտրվի այն օրենսդրական միջոցը, որը նպատակին հասնելու նույն հավանականությամբ, այսինքն՝ նույն արդյունավետությամբ, սակայն առավել մեղմ է սահմանափակում որևէ հիմնական իրավունք կամ ազատություն»:*

Հարկ է նշել, որ վիճարկվող դրույթները Քրեական օրենսգրքում լրացվել են 2021 թվականի հուլիսի 30-ին ընդունված ՀՕ-323-Ն օրենքով, որը Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել է 2021 թվականի օգոստոսի 20-ին և ուժի մեջ մտել նույն թվականի օգոստոսի 30-ին: Իսկ դեռևս նույն թվականի մարտի 24-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-330-Ն օրենքը, որով հիշյալ օրենսգրքի 1087.1-ին հոդվածում կտրուկ՝ երեք անգամ ավելացվել են քաղաքացիաիրավական պատասխանատվության առավելագույն չափերը վիրավորանքի և զրպարտության համար: Այդ օրենքն ուժի մեջ է մտել միայն նույն թվականի հոկտեմբերի 23-ին, քանի որ Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա դրա սահմանադրականությունը որոշվում էր Սահմանադրական դատարանում:

Մեր գնահատմամբ՝ քաղաքացիաիրավական պատասխանատվության չափերի նման կտրուկ ավելացումը Սահմանադրության տեսանկյունից

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ընդունելի չէր կարող լինել, այնուամենայնիվ, Սահմանադրական դատարանի մեծամասնությունը դա գնահատել է որպես Սահմանադրությանը համապատասխանող (ՍԴՈ-1612): Այսինքն՝ վիրավորանքի համար, ի թիվս այլնի, սահմանվել է պատասխանատվության առավելագույն չափ, որը հավասար է վիճարկվող դրույթներով սահմանված՝ դրամային արտահայտությամբ առավելագույն պատժաչափին: Այսինքն՝ վիրավորանքի համար քաղաքացիաիրավական պատասխանատվության չափի թե՛ կանխարգելիչ, թե՛ նաև ռեպրեսիվ (պատժիչ) ներգործությունը որևէ կերպ չի գնահատվել ո՛չ օրենսդրի, ո՛չ էլ նրա օրենսդրական քաղաքականությունը սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չհամարող Սահմանադրական դատարանի կողմից, ընդ որում, ակնհայտ է, որ քաղաքացիաիրավական պատասխանատվությունը՝ որպես պատասխանատվության ինքնուրույն տեսակ, ավելի մեղմ պատասխանատվության տեսակ է, քան քրեական պատասխանատվությունը: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ է օրենսդիրը որոշել ընտրել արարքի քրեականացման քաղաքականության մոտեցումը, եթե առկա էր քննարկվող արարքի համար անձին պատասխանատվության ենթարկելու ավելի մեղմ տեսակ, որը նույն կամ գուցե ավելի մեծ արդյունավետությամբ կարող էր ապահովել սահմանադրորեն հետապնդվող նպատակի կենսագործումը: Ակնհայտ է, որ քաղաքացիական օրենքով դրամային արտահայտությամբ անգամ «հասարակ», ոչ «ծանր» վիրավորանքի համար նախատեսված է այնպիսի դրամային պատասխանատվություն, ինչպիսին քրեական օրենքով որպես տուգանք նախատեսված է ծանր վիրավորանքի համար որպես առավելագույն պատժաչափերից մեկը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ քրեական պատասխանատվությունը «ծանր վիրավորանքի» համար անհրաժեշտ չէր և չէր կարող սահմանվել, քանի որ առկա էր քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոց, որը Սահմանադրական դատարանի կողմից գնահատվել է որպես արդյունավետ, չնայած ոչ ծանր վիրավորանքի համար նախատեսվել է շատ շոշափելի դրամային պատասխանատվություն, ինչը հիմնավորվել է էական կանխարգելիչ դեր ունենալու հանգամանքով, սակայն, քանի որ չի ենթադրում քրեական գործի հարուցում, առնչություն քրեական հետապնդման մարմիններին, ազատագրկման հետ կապված պատիժ նշանակելու հնարավորություն և դատվածություն, ուստի սահմանադրորեն հետապնդվող նպատակին հասնելու տեսանկյունից ավելի մեղմ միջոց է: Ընդ որում՝ մինչև Քաղաքացիական և Քրեական օրենսգրքերի համապատասխան փոփոխությունները պատասխանատվության այդ միջոցը, մինչև 2018 թվականի և հաջորդող քաղաքական գործ-

ընթացների արդյունքում քաղաքական մշակույթի առկա մակարդակի ձևավորումը, էապես ավելի նվազ դրամային չափերով հիմնականում ունակ է եղել կանխարգելելու մարդու արժանապատվության խախտումները կամ ապահովել է պատշաճ հատուցում՝ այն խախտվելու դեպքում:

Այսպիսով՝ Սահմանադրական դատարանն իր իսկ վկայակոչած հիմնարար նշանակություն ունեցող որոշումներից մեկում արտահայտած իրավական դիրքորոշումներն առանց որևէ փաստարկի չի կիրառել վիճարկվող դրույթների համաչափությունը գնահատելու համար և, անտեսելով Քաղաքացիական օրենսգրքի հիշյալ կարգավորումները և դրանց կիրառման պրակտիկան, սահմանափակվել է բացառապես պնդմամբ, թե **«առկա չէ սահմանադրորեն հետապնդվող նպատակին հասնելու համար բավարար արդյունավետ այլ օրենսդրական միջոց»**:

4. Անդրադառնալով Սահմանադրության 68-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված կրկին դատվելու արգելքին՝ գտնում ենք, որ Սահմանադրական դատարանը պատշաճ կերպով չի մեկնաբանել այս հիմնական իրավունքի բովանդակությունը:

Կարծում ենք, որ կրկին դատվելու արգելքին Սահմանադրական դատարանը պետք է անդրադառնար այն տեսանկյունից, որ վիրավորանքի քաղաքացիաիրավական բովանդակությունը կլանում է ծանր վիրավորանքի քրեաիրավական բովանդակությունը, և այդ պայմաններում արարքների բովանդակային նույնության դեպքում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկու դեպքերում էլ իրավաբանական պատասխանատվությունը կիրառվում է դատական կարգով, կարող էր առաջանալ հակասություն Սահմանադրության այդ հոդվածի հետ: Գործնականում դա նշանակում է, որ անձը կարող է ծանր վիրավորանքի համար դատապարտվել էական չափ ունեցող տուգանքի, և նույն արարքի համար՝ ևս մեկ անգամ ենթարկվել շեշտակի չափով քաղաքացիաիրավական պատասխանատվության: Սահմանադրական դատարանը դա թույլատրելի է համարել, ըստ էության, թերի իրավական դիրքորոշումների հիմքով¹, դրանցով փորձել է արդարացնել քրեական և քաղաքացիական

¹ Սահմանադրական դատարանը, մասնավորապես, ընդգծել է, որ «...քրեաիրավական պատասխանատվությունն իր բնույթով պատժիչ տեսակի պատասխանատվության միջոց է՝ ի տարբերություն քաղաքացիաիրավական պատասխանատվության, որն ունի իրավավերականգնիչ առաքելություն»: Այս մոլորեցումը թերի է, քանի որ Քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Մարդու անօտարելի իրավունքների ու ազատությունների և մյուս ոչ նյութական բարիքների իրականացման ու պաշտպանության հետ կապված

օրենսդրության՝ օրենքների մակարդակով նախատեսված խնդիրների տարբերությամբ, որոնցով և իբրև արդարացվում են պատասխանատվության այդ տեսակների այլ տարբերությունները: Ընդ որում՝ եթե Սահմանադրական դատարանը կրկին դատվելու արգելքը մեկնաբաներ այն կերպ, որ դա վերաբերում է միայն քրեական դատավարության շրջանակներում կրկին դատվելու արգելքին, ապա այն ավելի հիմնավոր կարող էր թվալ, սակայն այդ դեպքում Սահմանադրական դատարանը պետք է անխուսափելիորեն անդրադառնար համաչափության սկզբունքի տեսանկյունից օրենսդրի կողմից անհամաչափ բարձր ֆինանսական բեռ նախատեսելու հարցին: Իսկ ՄԴՈ-1646 որոշման մեջ թույլատրելի համարելով պատասխանատվության քրեական և քաղաքացիական տեսակների զուգակցումն իբրև թե դրանց օրենսդրորեն ձևակերպած խնդիրների տարբերության հիմքով՝ Սահմանադրական դատարանն անտեսում է պատասխանատվության չափերի անհրաժեշտության գնահատումը և իմաստագրկում է քաղաքացիական պատասխանատվության կանխարգելիչ դերը՝ քաղաքացիական իրավունքը համարելով սոսկ իրավունքի վերականգնմանն ուղղված խնդիրներ ունեցող իրավունքի ճյուղ:

5. Ինչ վերաբերում է ՄԴՈ-1646 որոշման մեջ Սահմանադրական դատարանի կողմից իրավակիրառ պրակտիկայի «վերլուծությանը», ապա այն հազեցած է ներքին հակասություններով և սեփական լիազորություններից դուրս զուգորդվող գնահատականներով:

Սահմանադրական դատարանը, ի մասնավորի, նշում է, որ «Սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներում արձանագրված իրավակիրառման վերոբերյալ պահանջների կենսագործումն արդեն իսկ նկատվում է վիճարկվող նորմերի կիրառման պրակտիկայում»: Ի հիմնավորումն՝ բերվում է այն դատողությունը, որ «իրականում կատարված հանրորեն վտանգավոր արարքների որակման հարցում նկատվում է առհասարակ վիրավորանքի և ծանր վիրավորանքի, ծայրահեղ անպարկեշտ եղանակների զանազանման հետաքրքիր մեկնաբանողական գործընթաց»: Այսինքն՝ Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների կենսագործման հարցում նկատվում է մեկնաբանողական գործընթաց, և սա բավարար է թվում

հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան չի բխում այդ հարաբերությունների էությունից»: *Այլ կերպ՝ քաղաքացիական իրավական պատասխանատվությունն ունի ոչ միայն իրավավերականգնիչ առաքելություն, այլ նաև իրավունքների դափսխական պաշտպանության առաքելություն:*

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Սահմանադրական դատարանին, որպեսզի նա իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականությունը գնահատելու փոխարեն սահմանափակվի միայն «**հետաքրքիր մեկնաբանողական գործընթացի**» վերհանմամբ: Ընդ որում, «առհասարակ վիրավորանքի և ծանր վիրավորանքի, ծայրահեղ անպարկեշտ եղանակների **զանազանման** հետաքրքիր մեկնաբանողական գործընթացի» արձանագրումը Սահմանադրական դատարանը կատարում է հիմք ընդունելով ընդամենը վեց քրեական գործերով կայացված՝ առաջին ատյանի դատարանների դատավճիռները: Միաժամանակ Սահմանադրական դատարանը փաստում է, որ «դատավճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առաջին ատյանի դատարաններն արդեն կայացրած դատավճիռներով առայժմ ծանր վիրավորանք են որակել **միայն** կոնկրետ անձի (անձանց) ուղղված սեռական բնույթի հայիոյանքները, անձի վրա թքելը»: Այլ կերպ՝ նման արձանագրմամբ Սահմանադրական դատարանը, ըստ էության, ակամա փաստում է, որ իրականության մեջ վիրավորանքի և ծանր վիրավորանքի զանազանման գործընթացը ծախողվել է, քանի որ զանազանման փոխարեն միայն խիստ որոշակի արարքներն են որակվել որպես ծանր վիրավորանք:

Ինչպես նշել ենք վիճարկվող դրույթների իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականության գնահատում Սահմանադրական դատարանը չի իրականացրել, թեև դրա համար առկա էր ոչ միայն սահմանադրական օրենքով սահմանված պարտականություն, այլև բավարար փաստական հիմք. Սահմանադրական դատարանը, նախ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի փոխարեն գնահատական է տվել այդ պրակտիկայում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումների կենսագործման նկատվող միտումներին, որը դուրս է իր լիազորությունների շրջանակներից, և չի բացառել, որ «**ցանկացած իրավադրույթի, հատկապես գնահատողական հասկացություններ պարունակող, նորմատիվ բովանդակության սահմանադրականությունն ինքնին չի բացառում նորմի՝ իրավակիրառ պրակտիկայում հակասահմանադրական մեկնաբանությունն ու կիրառումը**»: Եվ դա այն դեպքում, երբ սահմանադրական արդարադատությունն ամբողջ ծավալով իրականացնելու պարագայում Սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումներով և որոշումով պետք է ապահովի Սահմանադրության գերակայություն՝ կանխարգելելով նաև հակասահմանադրական մեկնաբանությունը և կիրառումը: Այնուհետև վեճի առարկայի առումով Սահմանադրական դատարանը հանգել է հետևության, որ «**հայիոյանքի կամ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորանքի**

առկայության կամ բացակայության, ինչպես նաև արարքը որակյալ հանցակազմով որակելու հարցը, ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից, իրավակիրառ պրակտիկայի, այսինքն՝ վարույթն իրականացնող մարմնի, այդ թվում՝ եռաստիճան դատական համակարգի գնահատման տիրույթում է»: Դրանով Սահմանադրական դատարանը, մեր կարծիքով, թերագնահատել է իր լիազորությունների ծավալը, քանի որ, ինչպես արդեն բազմիցս վերը նշվեց, վիճարկվող դրույթների իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականության գնահատումը Սահմանադրական դատարանի պարտականությունն է:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ ՍԴՈ-1646 որոշմամբ Քրեական օրենսգրքի վիճարկվող՝ 137.1-ին հոդվածի սահմանադրականության գնահատումը որոշակիության և համաչափության սահմանադրական հիմնարար սկզբունքների տեսանկյունից անհրաժեշտ չափով չի իրականացվել, իսկ իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականության գնահատման պարտականությունն անտեսվել է Սահմանադրական դատարանի կողմից: Հետևապես՝ ՍԴՈ-1646 որոշման եզրահանգումները սահմանադրականության տեսանկյունից նույնպես խնդրահարույց են:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ

ՀՐԱՅՐ. ԹՈՎՄԱԱՅԱՆ

ԱՐԵՎԻԿ ԴԵՏՐՈՍՅԱՆ

«6» մայիսի 2022թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022 ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի՝ «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 137.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԴՈ-1646 ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, 2022 թվականի ապրիլի 29-ին դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, ՍԴՈ-1646 որոշմամբ որոշել է.

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը: (...):»:

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում եմ հատուկ կարծիք Սահմանադրական դատարանի 2022 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1646 որոշման (այսուհետ՝ ՍԴՈ-1646 որոշում) պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի դատավորների մեծամասնության մոտեցումներից տարբերվող հետևյալ դիրքորոշումները.

1. Սահմանադրական դատարանը վիճելի իրավակարգավորման սահմանադրականության հարցն անհրաժեշտ էր քննարկել Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչ՝ իրավական որոշակիության և Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված որոշակիության սկզբունքների հարաբերակցության տեսանկյունից: Ընդ որում, եթե իրավական որոշակիությունը՝ որպես իրավունքի գերակայության ապահովման առանցքային երաշխիք, կանխորոշում է օրենքների որակական այնպիսի հատկանիշներով օժտվածություն, ինչպիսիք են հստակությունը, կանխատեսելիությունն ու մատչելիությունը, ապա որոշակիության սահմանադրական սկզբունքի բովանդակությունից հետևում է, որ մարդու և քա-

ղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները սահմանափակելիս օրենքներով պետք է սահմանվեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքները և ազատությունները կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Սակայն ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածով նախատեսված «ծանր վիրավորանքի»՝ որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի տարրի՝ արարքի և դրա հետ համակարգային փոխկապվածության մեջ գտնվող իրավական այլ կարգավորումների համալիր վերլուծությունը առաջադրում է հարցադրումներ, որոնց լուծումներն էական նշանակություն կարող էին ստանալ վիճարկվող իրավակարգավորման սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելիս: Մասնավորապես՝ խոսք կարող է լինել հետևյալի մասին.

առաջին՝ «ծանր վիրավորանք հասցնելը» մի դեպքում ընկալվում է որպես «հայիոյել», իսկ մեկ այլ դեպքում՝ «վիրավորել», այսինքն՝ ծանր վիրավորանքի բովանդակային իմաստը նույնականացվում է հենց «ծանր վիրավորանքի» բաղկացությունը կազմող բնութագրիչի հետ, ինչն իրավական որոշակիության ապահովման և հատկապես քրեիրավական կարգավորումներով սահմանված արգելքների ապահովման տեսանկյունից այնքան էլ որոշակի չէ: Ակնհայտ է, որ վիճարկվող կարգավորման շրջանակում օրենսդիրը, պայմանավորված այդ արարքի կատարման եղանակով, սահմանազատել է ծանր վիրավորանքը՝ որպես հանցավոր արարք, վիրավորանքից:

Այստեղից, եթե վիրավորանքի ծանրությունը պայմանավորված է, մի կողմից, վիրավորանքի ձևերի առանձնահատկությամբ, մյուս կողմից, ցանկացած վիրավորանք, որը և՛ հակաբարոյական է, և՛ հակաիրավական, կարող է դրսևորվել վիրավորական գործողությունների կամ արտահայտությունների էության ընդհանրական գնահատման արդյունքում:

Երկրորդ՝ վիճարկվող կարգավորման մեջ օգտագործվող «նրա արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելը» արտահայտության նշանակությունը կարող է հանգեցնել որոշակի շփոթության, հետևաբար՝ տարաբնույթ մեկնաբանության:

Մասնավորապես այդ բառակապակցության վերլուծությունից հետևում է, որ, մի կողմից, հայիոյելը ևս անձի արժանապատվությունը վիրավորող ծայրահեղ անպարկեշտ եղանակ է, իսկ մեկ այլ դեպքում խնդրահարույց է հենց «անպարկեշտ եղանակի» ծայրահեղ լինելը, քանի որ անպարկեշտությունն արդեն իսկ ենթադրում է հակաբարոյական

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

վարքագիծ, հետևաբար՝ այդ վարքագծի արդյունքում հակաիրավականություն դրսևորելն ինքնին չի կարող պայմանավորվել միայն այդ վարքագծի ծայրահեղ լինելով:

Արդյունքում՝ դա նշանակում է, որ ծանր վիրավորանքը որպես հանցավոր արարք սահմանող նորմը ոչ բավարար ճշգրտությամբ է ձևակերպվել, և «ծանր վիրավորանք հասցնելու» գնահատման ենթակա հանգամանքները դառնում են բազմազան, իսկ դրանց կամայական մեկնաբանությունը գործնականում կարող է ստեղծել միևնույն իրավիճակներում իրավունքի սուբյեկտների նկատմամբ տարբեր վերաբերմունքի դրսևորման վտանգ: Այստեղից՝ տվյալ իրավակարգավորումների համատեքստում անձի, մասնավորապես, կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման հիմքերն ու ծավալները չեն կարող որոշակի չափով բավարար լինել վերջինիս համար կանխատեսելի լինելու, հետևաբար՝ նրա կողմից համապատասխան վարքագիծ դրսևորելու համար:

Երրորդ՝ վիճարկվող իրավակարգավորման տրամաբանությունից հետևում է, որ ծանր վիրավորանքից քրեաիրավական հատուկ պաշտպանության տակ են գտնվում հանրային գործունեություն իրականացնող այն անձինք, որոնց վարքագիծը կապված է «լրագրողական գործունեության հետ», «հրապարակախոսական գործունեության հետ», «ճառայողական պարտականությունների կատարման հետ», «հանրային ճառայության պաշտոն զբաղեցնելու հետ», «հանրային պաշտոն զբաղեցնելու հետ», «հասարակական գործունեության հետ», «քաղաքական գործունեության հետ»:

Ներկայացված առանձին եզրույթների (լրագրողական, հրապարակախոսական, հասարակական, քաղաքական գործունեության իրականացում, ինչպես նաև ճառայողական պարտականությունների կատարում) նշանակության և իրավական բովանդակության կառուցվածքի բացակայությունը նույնպես իրավական որոշակիության ապահովման և հատկապես քրեաիրավական կարգավորումներով սահմանված արգելքների ապահովման տեսանկյունից այնքան էլ որոշակի չեն: Ավելին, ՀՀ քրեական օրենսգրքի վիճարկվող հոդվածում «ծանր վիրավորանք հասցնել» դրույթի համատեքստում՝ նույն օրենսգրքի 332²-րդ (Մարդու իրավունքների պաշտպանին նրա լրագրությունների իրականացման հետ կապված վիրավորանք հասցնելու մասով), 343-րդ (դատավարությանը մասնակցող անձանց վիրավորելու մասով), 360-րդ (զինճառայողին վիրավորանք հասցնելու մասով) հոդվածների իրավակարգավորումներում օգտագործվող «վիրավորանք» եզրույթի գնահատման

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱՐԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

իրավական չափորոշիչների, այդ թվում նաև դրանց սահմանադրաիրավական բովանդակության բացակայությունը ինքնին խնդրահարույց է դառնում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի պահանջների պահպանման տեսանկյունից:

Ավելին, վիճահարույց են նաև «հրապարակախոսական գործունեություն», «հասարակական գործունեություն», «քաղաքական գործունեություն» եզրույթների սահմանման ու բովանդակային նշանակության հարցերը: Օրինակ՝ քաղաքական գործունեության իրականացումը կարող է պայմանավորված լինել ոչ միայն քաղաքական պաշտոն զբաղեցնելու, այլև քաղաքական կուսակցության ղեկավար մարմնում պաշտոն զբաղեցնելու կամ քաղաքական կուսակցության անդամի կարգավիճակով կուսակցական գործունեության իրականացման հետ: Արդյունքում՝ դա նշանակում է, որ ծանր վիրավորանքից քրեաիրավական հատուկ պաշտպանության տակ գտնվող հանրային գործունեություն իրականացնող անձանց շրջանակը դառնում է անորոշ, որը չի կարող բխել հանրային կարևոր նշանակություն ունեցող հասարակական հարաբերությունների համակարգային կարգավորման տրամաբանությունից:

Հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ օրենքի կանխատեսելիության, որոշակիության և հստակության սկզբունքի երաշխավորումը, ի թիվս այլնի, կոչված է նաև կանխելու, բացառելու «կամայականության վտանգը» (Case of Hilda Hafsteinsdottir v. Iceland, application no.40905/98, 08.06.2004), կարծում են, որ սահմանադրական կարգավորումների և քրեական օրենքի առանձնահատկությունների տրամաբանության ներքո ծանր վիրավորանքի՝ որպես հանցավոր արարքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման ու քրեաիրավական բնութագրման, ինչպես նաև օրենսդրական կարգավորման մակարդակում վիճարկվող կարգավորման առանձին եզրույթների գնահատման չափորոշիչների բացակայությունը խնդրահարույց է իրավունքի գերակայության ապահովման, այդ թվում՝ իրավական որոշակիության սկզբունքի և որոշակիության սահմանադրական սկզբունքի իրացման ու դրա հետ առնչվող ռիսկերի առաջացման տեսանկյունից:

2. ՍԴՈ-1646 որոշման 5.5-րդ կետում Սահմանադրական դատարանը Սահմանադրության 68-րդ հոդվածով ամրագրված՝ կրկին դատվելու սահմանադրաիրավական արգելքի համատեքստում անդրադարձել է ՀՀ քրեական օրենսգրքի վիճարկվող 137.1-ին հոդվածի իրավական կարգավորման գործողության պայմաններում ՀՀ քաղաքացիա-

կան օրենսգրքի՝ «Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները» վերտառությամբ 1087.1-ին՝ «Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ» վերտառությամբ հողվածով քաղաքացիաիրավական պատասխանատվության զուգահեռ կիրառման իրավաչափության հիմնախնդրին: Չնայած այն հանգամանքին, որ դիմողի կողմից նման հարցադրմանը որևէ ձևով անդրադարձ չէր կատարվել, այդուհանդերձ Սահմանադրական դատարանը համակարգային վերլուծության արդյունքում կատարել է եզրահանգում, որ «(...) քաղաքացիական պատասխանատվության սահմանումն ինքնին չի բացառում քրեորեն պատժելի արարքի համար պատասխանատվության սահմանումը, և հակառակը, որպիսի պայմաններում վիճարկվող կարգավորումը Սահմանադրության համատեքստում խնդրահարույց չէ»:

Կարծում եմ, որ վիճարկվող քրեաիրավական կարգավորումների համատեքստում քաղաքացիաիրավական պատասխանատվության զուգահեռ կիրառման իրավաչափության հիմնախնդրին անդրադառնալու անհրաժեշտություն չկար, և միաժամանակ տեղին չէր, ավելին, նման անդրադարձ կատարելը խիստ վիճահարույց է, քանի որ քաղաքացիական օրենսդրության հիշատակված կարգավորումների տրամաբանության շրջանակում խոսք կարող է լինել միայն քաղաքացիաիրավական պաշտպանության, այդ թվում՝ պատճառված վնասի, բարոյական վնասի փոխհատուցման չափի մասին, և ոչ թե քաղաքացիաիրավական պատասխանատվության, առավել ևս այդ պատասխանատվության չափի մասին:

3. ՍԴՈ-1646 որոշման 5.6-րդ կետում սահմանադրական իրավական չափանիշների հիման վրա գնահատելով վիճարկվող դրույթների իրավական որոշակիությունը և դրա հետ կապված իրավակիրառ պրակտիկան՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է. «(...) ցանկացած իրավադրույթի, հատկապես գնահատողական հասկացություններ պարունակող, նորմատիվ բովանդակության սահմանադրականությունն ինքնին չի բացառում նորմի՝ իրավակիրառ պրակտիկայում հակասահմանադրական մեկնաբանությունն ու կիրառումը»: Միաժամանակ, Սահմանադրական դատարանը նշել է, որ՝ «(...) Իրավակիրառ և դատական մարմինները պետք է առաջնորդվեն վիճարկվող դրույթի որակման միասնական պրակտիկա ձևավորելու հրամայականով, ինչը կնպաստի իրավական կանխատեսելիության բարձրացմանը և վերացական հաս-

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

կացությունների գնահատման հայեցողության սահմանների հստակեցմանը»:

Իրավական հիշյալ դիրքորոշումների իրացման կապակցությամբ անհրաժեշտ է նկատել, որ Սահմանադրական դատարանը ոչ միայն փաստել է, որ վիճարկվող կարգավորումը բովանդակում է գնահատողական հասկացություններ, այնուհետև կանխորոշել իրավակիրառ պրակտիկայում դրանց հակասահմանադրական մեկնաբանության ու կիրառման հնարավորությունը, այլև մատնանշել է իրավակիրառ և դատական մարմինների կողմից իրավական կանխատեսելիության բարձրացման ու վերացական հասկացությունների գնահատման հայեցողության սահմանների հստակեցման անհրաժեշտությունը: Ավելին, ՍԴՈ-1646 որոշման 4-րդ կետում վիճարկվող իրավադրույթների իրավակիրառական պրակտիկային առնչվող տվյալների ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածի ուժի մեջ մտնելուց հետո կատարվող և համապատասխան մարմինների կողմից արձանագրվող դեպքերը ավելացել են, սակայն հարուցված քրեական գործերի մոտ 70 տոկոսը կարճվել է¹, ինչը առավելապես վկայում է ոչ այնքան անձանց ծանր վիրավորանքից քրեաիրավական արդյունավետ պաշտպանության մասին, որքան վիճարկվող հոդվածի կարգավորումների կանխատեսելիության, որոշակիության ու հստակության բացակայության և այդ սկզբունքների հետ առնչվող իրավական ռիսկերի առաջացման մասին:

Հիշյալ դիրքորոշումների նշանակությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է հաստատել այն թեզը, որ Սահմանադրական դատարանը, ընդհակառակը, պետք է գնահատեր վիճարկվող դրույթի սահմանադրականությունը իրավական որոշակիության սկզբունքի, որոշակիության սահմանադրական սկզբունքի, կարծիքի արտահայտման ազատության իրավաչափ սահմանափակման և այդ դրույթի իրավակիրառ պրակտիկայի գնահատման տեսանկյունից՝ ելնելով ոչ միայն վիճարկվող դրույթի բառացի, այլև ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան կարգա-

¹ Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1646 որոշման 4-րդ կետում արձանագրել է, որ 2021 թ. օգոստոսի 30-ից դեկտեմբերի 31-ը Օրենսգրքի 137.1-ին հոդվածի հատկանիշներով արձանագրված դեպքերի ընդհանուր քանակը կազմել է 268 դեպք: Այդ դեպքերից 167-ով հարուցվել է քրեական գործ: Հարուցված գործերից 17-ը ուղարկվել է դատարան, 134-ը կարճվել է: 2022 թ. հունվարի 1-ից մարտի 30-ը Օրենսգրքի 137.1-ին հոդվածի հատկանիշներով արձանագրված դեպքերի ընդհանուր քանակը կազմել է 322 դեպք: Այդ դեպքերից 221-ով հարուցվել է քրեական գործ: Հարուցված գործերից 5-ը ուղարկվել է դատարան, 122-ը կարճվել է:


վորումների և իրավակիրառ պրակտիկայի գնահատման համատեքստից, ինչը կողմնորոշիչ նշանակություն կունենար այն հանգամանքի հավաստման համար, որ միասնական պրակտիկա ձևավորելու նպատակով իրավական կանխատեսելիության բարձրացումը և վերացական հասկացությունների գնահատման սահմանների հստակեցումը կազմում են առավելապես սահմանադրական արդարադատության, այլ ոչ թե եռաստիճան դատական համակարգի գործունեության առարկա:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում եմ, որ Սահմանադրական դատարանի 2022 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1646 որոշմամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածը Սահմանադրության 1-ին, 42-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց է:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ

6 մայիսի 2022 թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ
ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի ԱԺՈ-01-Ա
ՈՐՈՇՄԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

29 ապրիլի 2022թ.

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի պատգամավոր Ա. Վարդևանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի

դիմումի հիման վրա՝ ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի ԱԺՈ-01-Ա որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Ալեն Սիմոնյանին Ազգային ժողովի նախագահ ընտրելու մասին ԱԺՈ-01-Ա որոշումը (այսուհետ՝ նաև Որոշում) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2021 թվականի օգոստոսի 2-ին:

Գործի քննության առիթն Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի՝ 2021 թվականի օգոստոսի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովի (այսուհետ՝ նաև ԱԺ) 2021 թվականի օգոստոսի 2-ին ընդունած ԱԺՈ-01-Ա որոշումը հակասում է Սահմանադրության 6, 49, 94, 96 և 104-րդ հոդվածներին:

Դիմողը գտնում է, որ ԱԺ նախագահի երեք թեկնածուներից երկուսի՝ իրենց կամքից անկախ բացակայության պայմաններում անցկացված ԱԺ նախագահի ընտրությունները չեն համապատասխանում Սահմանադրության 104-րդ հոդվածով նախատեսված կարգավորումներին: Սահմանադրության նշված հոդվածում «ընտրում է» եզրույթի օգտագործվելուց դիմողը եզրակացնում է, որ սահմանադիրն օգտագործել է «ընտրել» եզրույթը, որի սահմանադրաիրավական բովանդակությունն առնվազն փոխկապակցվում է որոշակիորեն Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված ընտրական սկզբունքների հետ, քանի որ այլ սահմանադրաիրավական բովանդակություն «ընտրել» եզրույթի հետ չի կարող ողջամտորեն փոխկապակցվել և եզրահանգում է, որ ընտրական իրավունքի սկզբունքները տարածելի են նաև ԱԺ նախագահի ընտրությունների վրա, նշելով մասնավորապես, որ՝ «Նման պայմաններում պետք է պահպանվեն նվազագույն չափանիշներ այն է՝ ընդհանուր, հավասար, ազատ վավերապայմանները»: Ելնելով այն հանգամանքից, որ ԱԺ նախագահի երեք թեկնածուներից երկուսը ներկա չեն եղել ընտրություններին, և այդպիսով միայն մեկ թեկնածուն է ունեցել ելույթներ ունենալու, հարցերին պատասխանելու հնարավորություն, դիմողը եզրահանգում է, որ այդպիսով թեկնածուներից մեկն ունեցել է ակնհայտ անհավասար պայմաններ մյուս երկու թեկնածուների նկատմամբ, և փաստացի չեն պահպանվել նաև ընդհանուր մոտեցումները փաստացի տեղի ունեցած ընտրությունների

մասով: Արդյունքում դիմողը եզրահանգում է, որ ԱԺ նախագահի ընտրություններն իրականացվել են «ընտրվելուն» ներկայացվող սահմանադրական պահանջների ակնհայտ խախտմամբ՝ առանց հավասարության սկզբունքի որևէ ձևով պահպանման:

Դիմողը, նշելով, որ որևէ առնչություն չունի այն փաստը, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից ԱԺ-ում ներկայացվածությունը մեծամասնությունն է, և որ ցանկացած ընտրության պարագայում քաղաքական պատկանելիությունը որևէ իրավական նշանակություն, առավել ևս կաշկանդվածություն չի ներկայացնում, քանի որ պատգամավորն առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով, նկատում է, որ Արթուր Սարգսյանի և Մխիթար Զաքարյանի ելույթներ ունենալու հնարավորության և իրենց ծրագրային մոտեցումները ներկայացնելու դեպքում օբյեկտիվորեն հնարավոր էր, որ հենց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների կողմից ձայները կտրվեին երկու թեկնածուներից որևէ մեկին: Արդյունքում դիմողը գտնում է, որ կոնկրետ դեպքում պատգամավորները զրկված են եղել իրենց խղճով և համոզմունքներով առաջնորդվելու սահմանադրական երաշխիքներն իրացնելու հնարավորությունից:

Դիմողը նկատում է, որ ԱԺ նախագահի պաշտոնը և կարգավիճակը, դրա նկատմամբ հավակնությունը ենթադրում է նաև Սահմանադրության 49-րդ հոդվածի կարգավորման տիրույթ, ըստ այդմ՝ դիմողը գտնում է, որ ԱԺ նախագահի անցկացված ընտրությունները՝ թեկնածուներից երկուսի բացակայությամբ, խախտել են հավասարությունը՝ հանգեցնելով խտրականության: Արդյունքում դիմողը գտնում է, որ վիճարկվող որոշումն ընդունվել է Սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսված երաշխիքի խախտման պայմաններում:

Դիմողը, վերլուծելով Սահմանադրության 96-րդ հոդվածը, արձանագրում է, որ ԱԺ նախագահի թեկնածուների չներկայանալը և հավասար մրցակցություն չպահպանելը պայմանավորված էին նաև Սահմանադրության 96-րդ հոդվածով նախատեսված պատգամավորի անձեռնմխելիության խախտմամբ: Ըստ այդմ՝ դիմողը, նկատելով, որ վիճարկվող որոշումը բոլոր դեպքերում ուղղակիորեն առնչվել է հենց սահմանադրական նշյալ երաշխիքին և դրա խախտման պայմաններում է ընդունվել՝ ի թիվս այլ հիմնավորումների՝ խախտելով նաև սահմանադրական նշված նորմը, եզրահանգում է, որ վիճարկվող որոշումը հակասում է Սահմանադրության 96-րդ հոդվածին:

Դիմողն անդրադառնում է նաև ԱԺ նախագահի ընտրություններին քվեաթերթիկում վրիպակի արդյունքում թեկնածուներից մեկի ազգանունը

սխալ գրված լինելու պայմաններում ԱԺ նախագահի ընտրությունների քվեարկությունն ընդհատելու, այնուհետև վրիպակը շտկելուց հետո այն վերսկսելու հնարավորության հարցին՝ պնդելով, որ ընտրությունները չեն կարող պարզապես ընդհատվել և քվեաթերթիկ փոխվել, նորից քվեարկություն կազմակերպվել, որպիսի պայմաններում, ըստ դիմողի, խախտվել է Սահմանադրության 104-րդ հոդվածը:

Դիմողը նաև նկատում է, որ վերը նշված պայմաններում ԱԺ հաշվիչ հանձնախումբը չունի ընտրությունների քվեարկությունն ընդհատելու և, հետո խնդիրը շտկելով, քվեարկությունը վերսկսելու լիազորություն, քանի որ առկա է, որևէ իրավական կառուցակարգ առ այն, որ հաշվիչ հանձնախումբը որոշի «նոր քվեարկություն», ըստ այդմ՝ դիմողը եզրակացրել է, որ վիճարկվող որոշումը հակասում է Սահմանադրության 6-րդ հոդվածին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը Սահմանադրության 104-րդ հոդվածի և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ նաև Կանոնակարգ) մի շարք դրույթների վերլուծության հիման վրա արձանագրում է, որ ԱԺ նախագահի ընտրությունն անցկացվել է Սահմանադրության և Կանոնակարգի պահանջներին համապատասխան:

Պատասխանողը, անդրադառնալով ԱԺ նախագահի թեկնածուի բացակայությամբ ընտրություն անցկացնելու հարցին, նկատում է, որ ԱԺ նիստից թեկնածուի բացակայությունը կարող է պայմանավորված լինել մի շարք պատճառներով՝ ինչպես օրենքով սահմանված կարգով դատարանի որոշմամբ կալանավորված լինելով, այնպես, օրինակ, ծանր հիվանդության, վիրահատության, երկրից բացակայության: Միևնույն ժամանակ պատասխանողն արձանագրում է, որ թեկնածուի բացակայությունը հիմք չէ ընտրություն չանցկացնելու համար:

Պատասխանողը, անդրադառնալով Սահմանադրության 104-րդ հոդվածում տեղ գտած «ընտրվել» եզրույթի՝ Սահմանադրության 7-րդ հոդվածով նախատեսված ընտրական իրավունքի սկզբունքների հետ փոխկապակցվածության դիմողի դիտարկումներին, նկատում է, որ դրանք անհիմն են, քանի որ Սահմանադրության 7-րդ հոդվածը վերաբերում է ժողովրդի կողմից իր՝ անմիջական ժողովրդավարության իրավունքի իրացմանը, այն է՝ Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրություններին, ինչպես նաև հանրաքվեների անցկացմանը, իսկ Սահմանադրության 104-րդ հոդվածը վերաբերում է Ազգային ժողովի մարմինների, մասնավորապես՝ ԱԺ նախագահի, ԱԺ նախագահի տեղակալների և ԱԺ խորհրդի ձևավորմանը:

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Պատասխանողը գտնում է, որ դիմումով պատգամավորի անձեռնմխելիության հարցն արհեստականորեն է փոխկապակցվել վիճարկվող Որոշման հետ, քանի որ դիմողը Որոշումը վիճարկում է ԱԺ նախագահի թեկնածուներին հավասար հնարավորություն չընձեռելու տեսանկյունից, մինչդեռ պատգամավորի անձեռնմխելիությունն ունի ընդհանուր բնույթ և վերաբերում է բոլոր պատգամավորներին, այլ ոչ թե միայն նրանց, ովքեր առաջադրվում են ԱԺ նախագահի պաշտոնում: Ավելին, պատասխանողն արձանագրում է, որ նման մոտեցման պարագայում դիմողի կողմից կարող է նույն հիմնավորումներով վիճարկվել ութերորդ գումարման ԱԺ ընդունած ցանկացած որոշում կամ օրենք՝ այն արհեստականորեն փոխկապակցելով պատգամավորի անձեռնմխելիության հետ և նշելով, որ պատգամավորները, որոնց նկատմամբ դատարանի որոշմամբ կիրառված է կալանավորումը որպես խափանման միջոց, զրկված են եղել հարցի քննարկմանը և քվեարկության մասնակցելու հնարավորությունից:

Ավելին, պատասխանողը, հիմք ընդունելով Կանոնակարգի 33-րդ հոդվածի 6-րդ մասը, նկատում է, որ Ազգային ժողովն առաջին նստաշրջանում չի կարող քննարկել այլ հարց, քան նախատեսված է Կանոնակարգով, այդ թվում՝ անձեռնմխելիության հետ կապված հարցերը:

Անդրադառնալով ընտրության նոր քվեարկություն կազմակերպելու հարցին՝ պատասխանողն արձանագրում է, որ այդ նոր քվեարկության կազմակերպումը կրել է տեխնիկական բնույթ, և որ քվեարկության գործընթացն ընդհատվել է թեկնածուներից մեկի ազգանվան մեջ տեղ գտած տառասխալի պատճառով: Ավելին, պատասխանողը գտնում է, որ հենց տեխնիկական վրիպակի հայտնաբերումից հետո քվեարկությունը չդադարեցնելը կարող էր հանգեցնել սահմանադրաիրավական խնդիրների: Պատասխանողը, անդրադառնալով վիճարկվող Որոշման՝ Սահմանադրության 6-րդ հոդվածի հետ հակասություն առաջացնելու հարցին, նկատում է, որ Սահմանադրությամբ ԱԺ նախագահի ընտրության ընթացակարգային կանոն նախատեսված չլինելու, օրենսդրի իրական կամքն անհնար դարձնող խախտումների բացակայության պայմաններում օրենսդրի կողմից ներկայացվող՝ ՀՀ ժողովրդի կամքն արտահայտվել է պատգամավորների մեծամասնության կողմից՝ ԱԺ նախագահ ընտրելով:

Բացի դրանից, պատասխանողը նկատում է, որ դիմողը Որոշման սահմանադրականությունը վիճարկում է ոչ թե Որոշման և Սահմանադրության միջև ենթադրյալ հակասության համատեքստում, ինչը Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների համար պարտադիր պայման է, այլ դիմողի կողմից ներկայացված պնդումները հիմնականում ուղղված են Որոշման և Կանոնակարգի միջև առկա ենթադրյալ հակասությանը, ինչը

թույլ է տալիս պատասխանողին եզրահանգելու, որ դիմումում առաջադրված հարցերը Սահմանադրական դատարանին ենթակա չեն:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ պատասխանողը խնդրում է վիճարկվող որոշումը ճանաչել Սահմանադրությանը համապատասխանող:

3. Սահմանադրաիրավական վեճի շրջանակները

Սույն գործով վիճարկվող Որոշման սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք Ազգային ժողովի նախագահի ընտրությունն Ազգային ժողովի նախագահի թեկնածուներից մեկի (մի քանիսի) ֆիզիկական բացակայության պայմաններում անցկացնելը համահունչ է Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասին և 104-րդ հոդվածի 1-ին մասին:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 2-րդ հոդվածն ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Սահմանադրության 7-րդ հոդվածով սահմանված է, որ Ազգային ժողովի ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը:

Սահմանադրությունը, ամրագրելով կուսակցությունների սահմանադրական գործառույթը՝ ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելը (Սահմանադրության 8-րդ հոդվածի 3-րդ մաս) և սահմանելով Ազգային ժողովի ընտրությունների համամասնական ընտրակարգ (Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մաս), ստեղծում է այն սահմանադրական հիմքը, որի հիման վրա Ազգային ժողովի՝ ժողովրդի ներկայացուցչական մարմնի ընտրություններում ժողովուրդն իր ընտրությունը կատարի՝ հիմնվելով ընտրություններին մասնակցող կուսակցությունների (դաշինքների) գաղափարախոսական կողմնորոշում-

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ների, ներկայացրած ծրագրային մոտեցումների, պետության զարգացման քաղաքական ուղենիշների վրա:

Ըստ այդմ՝ կոնկրետ կուսակցության (դաշինքի) օգտին քվեարկելիս ընտրողի նպատակն ու կամքն է կոնկրետ ուղղվածություն ունեցող քաղաքականության կենսագործումը՝ դրա իրագործումը հոչակած կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի կողմից առաջարկված ցուցակում ներգրավված անձանց միջոցով: Հետևաբար՝ ընտրությունների արդյունքներով կանխորոշվում են խորհրդարանում այն քաղաքական ուժի (ուժերի) առկայությունն ու դրանց դասավորվածությունը, որի (որոնց) ծրագրային-գաղափարախոսական կողմնորոշումներին, մոտեցումներին և պատգամավորների թեկնածուներին ժողովուրդն իր քաղաքական նախապատվությունն է տվել:

Սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի հունիսի 30-ի ՍԴՈ-810 որոշմամբ նշել է, որ ժողովուրդը, ընտրությունների միջոցով որոշելով, թե խորհրդարանը քաղաքական ուժերի ինչպիսի հարաբերակցությամբ պետք է աշխատի, դրանով իսկ օրենսդիր մարմնին պատվիրակում է իրականացնել օրենսդրական գործունեություն՝ իր իսկ նախընտրած քաղաքական կողմնորոշումներին համապատասխան:

Այս դիտանկյունից Սահմանադրական դատարանը փաստում է, որ ժողովրդի՝ ազատ ընտրությունների արդյունքում արտահայտած կամքին և քաղաքական նախապատվությանը համահունչ ձևավորված մեծամասնությունն առանցքային ազդեցություն է ունենում օրենսդիր իշխանության իրականացման և Ազգային ժողովի՝ Սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթների իրականացման հարցում՝ կրելով դրա համար նաև քաղաքական պատասխանատվություն:

Ասվածը հավասարապես վերաբերելի է նաև Ազգային ժողովի մարմինների և, մասնավորապես, **Ազգային ժողովի նախագահի՝ Ազգային ժողովի բնականոն գործունեությունն ապահովողի և Ազգային ժողովը ներկայացնողի (Սահմանադրության 104-րդ հոդվածի 2-րդ մաս), ընտրության հարցում մեծամասնության ունեցած որոշիչ ազդեցությանը՝** որպես արդյունք հանգեցնելով Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցում որոշիչ ազդեցության հնարավորությանը:

Սակայն դա ամենևին չի նշանակում և ենթադրում Ազգային ժողովի փոքրամասնության իրավունքների անտեսում ընդհանրապես, որը պետք է բացառվի՝ այդ թվում նաև Ազգային ժողովի գործունեության ընդհանուր սկզբունքներից ելնելով (հարցերի ազատ քննարկման, դրանց կոլեկտիվ լուծման, քաղաքական բազմակարծության և այլն): Մեծամասնությունը պետական իշխանություն իրականացնելիս որոշումների կայացման գործ-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

ընթացում պետք է ելնի նաև որոշակիացված մնայուն (անփոփոխ) հանրային շահից (բարիքից), հարգի փոքրամասնության իրավունքները՝ հաշվի առնելով նաև նրա շահերը՝ մասնավորապես՝ չնվազեցնելով և չզրկելով ապագայում փոքրամասնությանը մեծամասնություն դառնալու իրավունքից, որպիսի պայմաններում մեծամասնության որոշումը կարող է դիտարկվել իբրև ժողովրդի կամքն արտացոլող:

Թեև Ազգային ժողովի մարմինների ձևավորման հարցում փոքրամասնության իրավունքները հստակորեն երաշխավորված են նաև Սահմանադրության մակարդակում (օրինակ՝ Սահմանադրության մեջ ուղիղ ամրագրվել է Ազգային ժողովի մարմիններից Ազգային ժողովի նախագահի տեղակալներից մեկի ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորների թվից ընտրությունը (Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին մաս), սակայն չի բացառվում նաև, որ Ազգային ժողովի մեծամասնությունը, ելնելով հանրային բարձր շահից, օրինակ, բևեռացված հասարակության համերաշխության ապահովման, հասարակության պառակտվածության վերացման, հասարակական հանդուրժողականության ապահովման անհրաժեշտությունից, որոշի **Ազգային ժողովի փոքրամասնության ներկայացուցչին ընտրել Ազգային ժողովի նախագահ, որպիսի պայմաններում մեծամասնության կայացրած այդպիսի որոշումը կունենա հստակ հասարակական-քաղաքական և ոչ թե պահի ազդեցությամբ ձևավորված հիմնավորումներ:**

Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ նաև այս նկատառումները հաշվի առնելով է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 136-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվել խմբակցությունների՝ Ազգային ժողովի նախագահի մեկական թեկնածու առաջադրելու իրավունքը: Ընդ որում՝ ելնելով նաև այն հանգամանքից, որ Ազգային ժողովի նախագահն ընտրվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին մաս) և հաշվի առնելով, որ ընտրությունը կատարվում է գաղտնի քվեարկությամբ («Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 136-րդ հոդվածի 6-րդ մաս), ինչպես նաև Սահմանադրության 94-րդ հոդվածով երաշխավորված՝ պատգամավորի՝ ողջ ժողովրդին ներկայացնելու, իր խղճով և համոզմունքներով առաջնորդվելու և հրամայական մանդատով կաշկանդված չլինելու սկզբունքը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Ազգային ժողովի նախագահի ընտրություններին վերը նկարագրված հասարակական-քաղաքական նախադրյալների, շարժառիթների, հիմքերի առկայության գնահատումն իրակա-

նացնում է յուրաքանչյուր պատգամավոր՝ այն արտացոլելով իր քվեարկությամբ:

4.2. Ազգային ժողովի նախագահի թեկնածուի ընտրության ընթացակարգային մանրամասները կանոնակարգող «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 135 և 136-րդ հոդվածներում տեղ գտած կարգավորումներից (մասնավորապես, որ Ազգային ժողովի նախագահի թեկնածուները հանդես են գալիս ելույթներով, իսկ ելույթներից հետո կարող են թեկնածուին հարցեր տրվել) թեև ենթադրելի է ներկայացված թեկնածուների, Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացին, որպես կանոն, ֆիզիկական մասնակցությունը, սակայն միևնույն ժամանակ **հիշատակված կարգավորումներից չի բխում և չի կարող բխեցվել, որ Ազգային ժողովի նախագահի ընտրությունը հնարավոր է միայն Ազգային ժողովի նախագահի բոլոր թեկնածուների ներկայության պայմաններում:** «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի կարգավորումներով ընդհանուր առմամբ չի բացառվում Ազգային ժողովի նախագահի ընտրությունը՝ թեկնածուի բացակայության պայմաններում: Այլ կերպ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը, սահմանելով Ազգային ժողովի նախագահի ընտրության ընթացակարգային մանրամասներ, առաջադրված թեկնածուի (թեկնածուների) ներկայությունն Ազգային ժողովի նախագահի ընտրությանը որպես պարտադիր պահանջ չի նախատեսում:

Ընդ որում՝ օրենսդրի այսպիսի մոտեցումն ունի հստակ տրամաբանություն և պայմանավորված է **նորընտիր Ազգային ժողովի անխաթար գործունեությունն ապահովելու բարձր հանրային շահով:** Մասնավորապես՝ նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանում, ի թիվս այլնի, լուծվում են Ազգային ժողովի մարմինների կազմավորման հարցերը («Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մաս, 7-րդ հոդվածի 1-ին մաս)՝ առանց որոնց ձևավորման կվտանգվեր նորընտիր Ազգային ժողովի կողմից իր գործառույթների և լիազորությունների իրականացումը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից Ազգային ժողովի նախագահի թեկնածուի ֆիզիկական բացակայությունը (օբյեկտիվ, թե սուբյեկտիվ պատճառներով) որպես Ազգային ժողովի նախագահի ընտրության պարտադիր ընթացակարգային պայման դիտարկելը կարող էր հանգեցնել Ազգային ժողովի նախագահի թեկնածուի բացակայության (օբյեկտիվ, թե սուբյեկտիվ պատճառներով) պատճառով Ազգային ժողովի մարմինների ձևավորման գործընթացի արգելալիմանը՝ որպես հետևանք հանգեցնելով ամբողջ Ազգային ժողովի գործունեության

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

խաթարմանը: Այդ առնչությամբ պնդումը, թե պատգամավորի՝ իր կամքից անկախ բացակայության պայմաններում Ազգային ժողովի ընդունած ակտը (օրենք, որոշում և այլն) կարող էր և չընդունվել, եթե հիմք ընդունվեր, որ պատգամավորը, նիստերին մասնակցելով, ելույթներ ունենալով, էականորեն կարող էր ազդել համապատասխան որոշման ընդունման վրա, խիստ վերացական է և ոչ հիմնավոր: Ավելին, նշված մոտեցումը հնարավոր է վտանգի իրավական անվտանգությունն ընդհանրապես, քանզի դրա տրամաբանական շարունակությունը հանգեցնելու է թեկուզ մեկ պատգամավորի՝ իր կամքից անկախ (օրինակ՝ հիվանդության պատճառով նիստերին մասնակցելու անկարողությունը) **Աժ նիստերին բացակայության պայմաններում Ազգային ժողովի ընդունած ցանկացած ակտի լեգիտիմությունը կասկածի տակ դնելուն՝ ըստ էության նույնպես հանգեցնելով Ազգային ժողովի գործունեության կազմալուծմանը:**

Սահմանադրական դատարանը փաստում է, որ հենց այդպիսի մոտեցման բացառման և որպես հետևանք՝ նաև Ազգային ժողովի բնականոն գործունեությունն ապահովելու նկատառումներից ելնելով է, որ սահմանադիրն ուղղակիորեն ամրագրել է Ազգային ժողովի նիստերի իրավագործության (Սահմանադրության 102-րդ հոդված) և Ազգային ժողովի կողմից օրենքներ, որոշումներ, հայտարարություններ և ուղերձներ ընդունելու (Սահմանադրության 103-րդ հոդված), մասնավորապես՝ Ազգային ժողովի նախագահ ընտրելու համար պատգամավորների ձայների անհրաժեշտ/նվազագույն շեմ (Սահմանադրության 104-րդ հոդված)՝ համապատասխան որոշման ընդունման (Ազգային ժողովի նախագահի ընտրության) համար որպես այդպիսին սահմանելով պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը: Նաև այս նկատառումներից ելնելով է, որ Ազգային ժողովի նախագահի թեկնածուների՝ Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացին ֆիզիկական մասնակցությունը (ներկայությունը) և որպես արդյունք՝ նաև ելույթով հանդես գալը չի նախատեսվել որպես սահմանադրական պահանջ, որպիսի պայմաններում նշված դեպքում բացակայում է դիմողի կողմից վիճարկվող իրավական ակտի և Սահմանադրությամբ պահպանվող արժեքի/իրավունքի հնարավոր խախտման միջև պատճառահետևանքային կապը:

Այդ առումով, Սահմանադրական դատարանն իր՝ 2019 թվականի ապրիլի 19-ի ՍԴՌ-1454 որոշմամբ, վերահաստատելով իր նախկին դիրքորոշումը, արձանագրել է. «... ներկայում, ի թիվս այլնի, որևէ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման կամ գործողության մեջ դնելու՝ միայն Սահմանադրությամբ նախատեսված կարգն է սահմանադրականության գնահատման մասշտաբը, ինչպես նաև Ազգային ժողովի (Սահ-

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

մանադրությամբ սպառիչ ամրագրված) լիազորությունների թույլատրելի սահմանները: Ուստի ակնհայտ է նաև, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէ գնահատել սահմանադրական կամ սովորական օրենքների և իր ընդդատությանը վերապահված այլ իրավական ակտերի ցանկացած խախտումներ կամ դրանց համապատասխանությունը ոչ թե Սահմանադրությանը, այլ դրանց նկատմամբ գերակայող այլ իրավական ակտերին: (...)
 Հակառակ դեպքում՝ Սահմանադրական դատարանը կարող է ծանրաբեռնվել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի ցանկացած խախտումով կամ, օրինակ՝ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով՝ այլ նորմատիվ իրավական ակտերի՝ իրենց հանդեպ գերակայող նորմատիվ իրավական ակտին համապատասխանությունը որոշելու վերաբերյալ վեճերով, որոնք դուրս են Սահմանադրական դատարանի սահմանադրական գործառույթի շրջանակներից:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Ազգային ժողովի՝ իր կանոնակարգի համաձայն գործելու սահմանադրական պահանջի խախտումները կարող են Սահմանադրական դատարանում վեճի առարկա դառնալ միայն այդ խախտումների արդյունքում Սահմանադրության որևէ պահանջ խախտվելու դեպքերում»:

Սահմանադրական դատարանը 2015 թվականի հուլիսի 7-ի՝ իր ՍԴԴ-1224 որոշմամբ արձանագրել է. «... օրենքների ընդունման խորհրդարանական կամ ինչպես հանրային քննարկումներ կազմակերպելու պահանջի տեսանկյունից՝ արտախորհրդարանական ընթացակարգերի ցանկացած խախտում անթույլատրելի է օրենսդրական գործընթացի շրջանակներում, անհամատեղելի է օրենսդրական գործունեության կանոնների հետ, սակայն այդ խախտումներից ոչ բոլորն են, որ սահմանադրականության տեսանկյունից սկզբունքային նշանակություն ունեն: Վերջիններիս թվին են դասվում միայն այն կանոնների խախտումները, որոնք ուղղակիորեն հիմնված են Սահմանադրության պահանջների վրա, օրենքի ընդունման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար որոշիչ նշանակություն ունեն և/կամ այնքան էական են, որ առանց այդ կանոնների պահպանման անհնար է արժանահավատորեն որոշել օրենսդրի իրական կամքը, հետևաբար՝ նաև օրենսդրի կողմից ներկայացվող ՀՀ ժողովրդի կամքը»:

Ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առկա չեն վիճարկվող որոշումն ընդունելու՝ Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի և 104-րդ հոդվածի 1-ին մասի այնպիսի խախտումներ, որոնք նշանակություն ունեն կամ կարող են

ունենալ Ազգային ժողովի վիճարկվող որոշման ընդունման սահմանադրականության առումով:

4.3. Վերոնշյալի լույսի ներքո գնահատելով դիմողի պնդումները, թե Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի ԱԺՈ-01-Ա որոշումն ուղղակիորեն հակասում է Սահմանադրության 104-րդ հոդվածին այնքանով, որ չեն պահպանվել սահմանադրի կողմից երաշխավորված «ընտրելու» պահանջները, քանի որ Ազգային ժողովի նախագահի ընտրություններն անցկացվել են թեկնածուներից երկուսի՝ իրենց կամքից անկախ բացակայության պայմաններում, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դրանք հիմնավոր չեն:

Մասնավորապես, Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» և «Հայաստան» խմբակցությունները որպես Ազգային ժողովի նախագահի թեկնածուներ առաջադրել են տվյալ պահին փաստացի անազատության մեջ գտնվող «Հայաստան» խմբակցության պատգամավորներին:

Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի նիստի սղագրության (<http://parliament.am/transcript.php?AgendaID=4215&day=02&month=08&year=2021&lang=arm#02.08.2021>) ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ **չեն ներկայացվել այն հնարավոր հասարակական-քաղաքական հիմքերը, շարժառիթները, որոնցով Ազգային ժողովի մեծամասնությունը, առաջնորդվելով հանրային բարձր շահով, խորհրդարանական փոքրամասնության ներկայացուցչին պետք է ընտրեր Ազգային ժողովի նախագահ:** Ավելին, սղագրությունից պարզ է դառնում, որ փաստացի անազատության մեջ գտնվող պատգամավորին Ազգային ժողովի նախագահի թեկնածու առաջադրելու պատճառ է նշվում «պատգամավորի ապօրինի անազատության մեջ» գտնվելու հանգամանքը, և որ խմբակցության կողմից փաստացի անազատության մեջ գտնվող պատգամավորի առաջադրումը կատարվել է նաև տվյալ «պատգամավորի ազատության համար պայքարելու» նկատառումներից ելնելով:

Վերոգրյալն ինքնին վկայում է, որ փաստացի անազատության մեջ գտնվող պատգամավորների առաջադրումը որպես Ազգային ժողովի նախագահի թեկնածու՝ հաշվի առնելով տվյալ պահին քրեական հետապնդման մարմինների, վարույթն իրականացնող մարմինների՝ մինչ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելն ազատությունից զրկված անձի՝ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելուց հետո նրա ազատությունից զրկելը պահպանելու (շարունակելու) համար Ազգային ժողովի համաձայնությունն ստանալը բացառող մեկնաբանությունը, Ազգային ժողովի նախագահի երկու թեկնածուների դատարանի որոշմամբ կալանավորված լինելու փաստը, ինչպես Ազգային ժողովի մեծամասնության,

այնպես էլ ընդհանրապես Ազգային ժողովի կողմից դատարանի որոշմամբ անազատության մեջ գտնվող թեկնածուների՝ Ազգային ժողովի համապատասխան նիստին մասնակցությունն ապահովելուն ուղղված գործիքակազմի բացակայությունը, Ազգային ժողովի նախագահի ընտրության հնարավորությունը թեկնածուների բացակայության պայմաններում, կատարվել է այդ անձանց՝ Ազգային ժողովի նախագահի ընտրություններին ֆիզիկական մասնակցության անհնարինության գիտակցումով:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ **նշված պայմաններում փաստացի անազատության մեջ գտնվող պատգամավորներին որպես Ազգային ժողովի նախագահի թեկնածուներ առաջադրելն Ազգային ժողովի խմբակցությունների քաղաքական որոշումն էր/որոշումներն էին՝ Ազգային ժողովի նախագահի ընտրություններին մասնակցել թեկնածուների իրավունքների փաստացի սահմանափակվածության պայմաններում՝ այդպիսով իսկ ընդունելով նման մոտեցմամբ իրենց առաջադրած թեկնածուների Ազգային ժողովի նախագահի ընտրություններում հնարավոր բացասական արդյունքներ գրանցելու (Ազգային ժողովի նախագահ չընտրվելու) ռիսկերը:**

Այդպիսի պայմաններում անցկացված ընտրությունների արդյունքում՝ Ազգային ժողովի հաշվիչ հանձնախումբը քվեարկության արդյունքների ամփոփմամբ արձանագրել է պատգամավորների ընդհանուր թվի մեծամասնության (71 կողմ)՝ Ա. Սիմոնյանի օգտին քվեարկությունը, որի հիման վրա Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Ալեն Սիմոնյանին Ազգային ժողովի նախագահ ընտրելու մասին» թիվ ԱԺՈ-01-Ա որոշումը:

4.4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի այն փաստարկը, համաձայն որի՝ Սահմանադրության 104-րդ հոդվածում տեղ գտած «ընտրել» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը փոխկապակցվում է Սահմանադրության 7-րդ հոդվածում ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքների հետ, և որ դրանք, ըստ էության, պետք է տարածվեն նաև Ազգային ժողովի նախագահի ընտրությունների վրա, հիմնավոր չէ: Մասնավորապես՝ Սահմանադրության 7-րդ հոդվածով ամրագրված ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքները **եզրագծում են հանրաքվեների, Ազգային ժողովի, համայնքների ավագանիների ընտրությունների ընտրական իրավահարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման կառուցակարգերը և քննարկվող իրավահարաբերությանը վերաբերելի չեն:**

Անդրադառնալով դիմողի այն դիտարկմանը, թե Ազգային ժողովի նախագահի պաշտոնը և կարգավիճակը, դրա նկատմամբ հավակնությունը

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

ենթադրում է նաև Սահմանադրության 49-րդ հոդվածի կարգավորման տիրույթ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նկատել, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով պետական պաշտոնները դասակարգված են հետևյալ տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական: Նույն օրենքի 5-րդ հոդվածով թվարկված են պետական քաղաքական պաշտոնները, դրանք են՝ Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների, վարչապետի, փոխվարչապետների, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի, նախարարների և նրանց տեղակալների պաշտոնները: Ազգային ժողովի նախագահի թեկնածուն, լինելով պատգամավոր, իրացրել է ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իր իրավունքը, իսկ Ազգային ժողովի մարմինների, մասնավորապես՝ Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների, հանձնաժողովների նախագահների պաշտոնները չեն տեղավորվում այդ տիրույթում, հետևաբար՝ դիմողի դիտարկումն այս մասով ևս հիմնավոր չէ:

4.5. Դիմողի այն փաստարկների առնչությամբ, որոնց համաձայն՝ վիճարկվող որոշումն ընդունվել է Սահմանադրության 96-րդ հոդվածով նախատեսված պատգամավորի անձեռնմխելիության երաշխիքի խախտման պայմաններում, Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է նշված հարցերին՝ մեկնաբանելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, և նույն օրենսգրքի 295-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելով: Նշված որոշման մեջ Սահմանադրական դատարանը, մասնավորապես, նշել է, որ պատգամավորը, բացի Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ նախատեսված բացառիկ դեպքերից, չի կարող զրկվել ազատությունից, եթե Ազգային ժողովը տվյալ հարցով չի տվել իր համաձայնությունը. Ազգային ժողովից բացի որևէ այլ մարմին իրավասու չէ հաղթահարել պատգամավորին անձեռնմխելիությամբ տրվող այդ պաշտպանությունը:

Սահմանադրական դատարանը, չնայած այն հանգամանքին, որ սույն որոշման 4.1-4.3. կետերի պատճառաբանություններով ինքնին հերքվում է դիմողի նաև այս փաստարկը, այդուհանդերձ, վերահաստատելով իր՝ 2009 թվականի հոկտեմբերի 13-ի ՍԴՈ-833 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 11-րդ մասի ուժով՝ Սահմանադրական դատարանի որոշումները, որպես կանոն, չունեն

հետադարձ ուժ (բացառությամբ նույն հոդվածի 13-րդ և 15-րդ մասերով նախատեսված դեպքերի) և չեն տարածվում մինչ Սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելը ծագած իրավահարաբերությունների, տվյալ դեպքում՝ վիճարկվող որոշման ընդունման հետ կապված իրավահարաբերությունների նկատմամբ՝ ազդելով ԱԺՈ-01-Ա որոշման իրավաչափության վրա:

4.6. Անդրադառնալով դիմումի շրջանակներում բարձրացված այն հարցին, թե արդյոք Ազգային ժողովի նախագահի ընտրություններին քվեաթերթիկում վրիպակի արդյունքում թեկնածուներից մեկի ազգանունը սխալ գրված լինելու պայմաններում Ազգային ժողովի նախագահի ընտրությունների քվեարկությունն ընդհատելու, այնուհետև վրիպակը շտկելուց հետո այն վերսկսելու հետևանքով խախտվում է Սահմանադրության 104-րդ հոդվածի պահանջը, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև դիմողը նշում է, որ այդ պայմաններում խախտվել է Սահմանադրության 104-րդ հոդվածը, սակայն, իր գնահատմամբ, այդպիսի խախտումը հիմնավորում է միայն պնդումով, թե ընտրությունները չեն կարող պարզապես ընդհատվել և քվեաթերթիկ փոխվել, նորից քվեարկություն կազմակերպվել: Դիմողը, նշյալ պնդումից զատ, չի հիմնավորում, թե քվեաթերթիկում վրիպակի արդյունքում քվեարկության ընդհատումը և որոշ ժամանակ անց այն վերսկսելն ինչ կերպ են խախտում Սահմանադրության 104-րդ հոդվածը, ուստի՝ դիմողն այս մասով պատշաճ չի հիմնավորել վիճարկվող որոշման և Սահմանադրության 104-րդ հոդվածի խախտման միջև պատճառահետևանքային կապը:

Դիմողի կողմից վիճարկվող որոշման և Սահմանադրության 6-րդ հոդվածի ենթադրյալ հակասության հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմումում այդ հակասությունն, ըստ էության, հիմնավորվում է նրանով, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 61-րդ հոդվածով հաշվիչ հանձնախմբի՝ Ազգային ժողովի նիստում քվեարկության արդյունքները ներկայացնելուց հետո, դրա հիման վրա նախագահողն ընտրության դեպքում պետք է հայտարարեր թեկնածուի ընտրվելու կամ չընտրվելու մասին: Դիմողի դիրքորոշմամբ՝ վրիպակի առկայությամբ քվեաթերթիկների պայմաններում հաշվիչ հանձնախումբը չուներ քվեարկությունն ընդհատելու և այնուհետև, խնդիրը շտկելով, քվեարկությունը վերսկսելու լիազորություն: Ըստ այդմ՝ հաշվիչ հանձնախմբի կատարած գործողությունները դուրս են նրա լիազորությունների շրջանակից:

Ակնհայտ է, որ դիմողի՝ ընդունված իրավական ակտի ենթադրյալ հակասահմանադրականության հիմնավորումներն, ըստ էության, հանգում

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

են հաշվիչ հանձնախմբի կատարած գործողությունների օրինականության հարց բարձրացնելուն, որի քննությունը, հաշվի առնելով վերոհիշյալ դիրքորոշումը, դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 170-րդ հոդվածը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի ԱԺՈ-01-Ա որոշումը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

29 ապրիլի 2022 թվականի
ՍԴՈ-1647

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՊԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի ԱԺՈ-01-Ա ՈՐՈՇՄԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի ՍԴՈ-1647 ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՎԻԶ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, գրավոր ընթացակարգով քննելով «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի ԱԺՈ-01-Ա որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1647 որոշմամբ (հրապարակվել է 2022 թվականի մայիսի 2-ին) որոշել է.

«1. ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի ԱԺՈ-01-Ա որոշումը համապատասխանում է Սահմանադրությանը (...):»:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1647 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ իմ հատուկ կարծիքը՝ որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

Նախ, հարկ եմ համարում նշել, որ Սահմանադրական դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 2-ի ՍԴԱՈ-183 աշխատակարգային որոշմամբ նշանակվել եմ սույն գործով զեկուցող դատավոր: Այնուհետև, Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով Սահմանադրական դատարանի աշխատակարգի 49-րդ և 50-րդ կետերի պահանջները, 2022 թվականի ապրիլի 5-ի ՍԴԱՈ-70 աշխատակարգային որոշմամբ որոշել է գործով զեկուցող՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանին փոխարինել և գործով նշականակել այլ զեկուցող:

Սույն գործով զեկուցող լինելու ժամանակահատվածում իմ կողմից «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 42-րդ հոդվածի հիմքով պահանջվել և Սահմանադրական դատարանում ստացվել են հետևյալ տեղեկությունները, որոնք, իմ գնահատմամբ էական

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿԱՎՈՐ
◆ 1/1 (105/1) 2022

նշանակություն ունեին սույն գործի լուծման համար, սակայն Սահմանադրական դատարանի կողմից դրանք հաշվի չեն առնվել:

1) Ազգային ժողովի նախագահի՝ 2021 թվականի օգոստոսի 2-ի ընտրությանն առաջադրվել է երեք թեկնածու. «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն առաջադրել է Ալեն Սիմոնյանի թեկնածությունը, իսկ «Հայաստան» և «Պատիվ ունեմ» խմբակցությունները՝ համապատասխանաբար Մխիթար Զաքարյանի և Արթուր Սարգսյանի թեկնածությունները: Թեկնածուներից ելույթով հանդես է եկել Ալեն Սիմոնյանը, իսկ Մխիթար Զաքարյանը և Արթուր Սարգսյանն ինչպես ելույթով, այնպես էլ եզրափակիչ ելույթով հանդես չեն եկել, քանի որ Ազգային ժողովի համապատասխան նիստին չեն մասնակցել (*հիմք՝ ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 01.12.2021թ. թիվ ՄԴԴ-96 գրության՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետի՝ 13.11.2021թ. Սահմանադրական դատարան մուտքագրված թիվ 1.13/5777-2021 գրությունը, ինչպես նաև Ազգային ժողովի 02.08.2021թ. նիստի սղագրությունը*):

2) Հիմք ընդունելով «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ պարբերություններով ամրագրված կարգավորումները՝ Մխիթար Զաքարյանը և Արթուր Սարգսյանը պատգամավորի թեկնածուի կարգավիճակ են ձեռք բերել Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 31-ի թիվ 57-Ա որոշմամբ «Հայաստան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցման պահից, որում որպես պատգամավորի թեկնածուներ ընդգրկված են եղել նաև Մխիթար Զաքարյանը (17-րդ համար) և Արթուր Սարգսյանը (28-րդ համար): «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված իրավունքները և պարտականությունները վերջիններիս՝ որպես պատգամավորի թեկնածուների վրա տարածվել են մինչև Ազգային ժողով ընտրվելու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման վերաբերյալ 2021 թվականի հուլիսի 17-ին Սահմանադրական դատարանի կողմից որոշում ընդունելը (*հիմք՝ ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 01.12.2021թ. թիվ ՄԴԴ-97 գրության՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի 13.12.2021թ. թիվ 01-1215 գրությունը*):

3) Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2021 թվականի հուլիսի 11-ի թիվ 186-Ա և թիվ 187-Ա որոշումներով բավարարել է դատախազի միջնորդությունները՝ համաձայնություն տալով պատգամավորի թեկնածու

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱՐԿՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱՂՐԱՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

Մխիթար Զաքարյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ: 2021 թվականի հուլիսի 15-ի թիվ 191-Ա և թիվ 192-Ա որոշումներով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը համաձայնություն է տվել պատգամավորի թեկնածու Արթուր Սարգսյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ (*հիմք՝ ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 01.12.2021թ. թիվ ՍԴԴ-95 գրության՝ ՀՀ գլխավոր դատախազի՝ 08.12.2021թ. Սահմանադրական դատարան մուտքագրված գրությունը, ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 01.12.2021թ. թիվ ՍԴԴ-97 գրության՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի 13.12.2021թ. թիվ 01-1215 գրությունը և դրան կից ներկայացված նյութերը, ինչպես նաև ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 16.12.2021թ. թիվ ՍԴԴ-101 գրության՝ Սյունիքի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահի 21.12.2021թ. թիվ ԴԴ-31/Ե-25627 գրությանը կից ներկայացված նյութերը*).

4) 2021 թվականի հուլիսի 12-ին որոշում է կայացվել Մխիթար Զաքարյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, և վերջինիս մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի և 314-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով: 2021 թվականի հուլիսի 15-ին որոշում է կայացվել Արթուր Սարգսյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, և վերջինիս մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի և 314-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով (*հիմք՝ ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 01.12.2021թ. թիվ ՍԴԴ-95 գրության՝ ՀՀ գլխավոր դատախազի՝ 08.12.2021թ. Սահմանադրական դատարան մուտքագրված գրությունը, ինչպես նաև ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 16.12.2021թ. թիվ ՍԴԴ-101 գրության՝ Սյունիքի մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահի 21.12.2021թ. թիվ ԴԴ-31/Ե-25627 գրությանը կից ներկայացված նյութերը*).

5) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի հուլիսի 13-ի և 2021 թվականի հուլիսի 17-ի որոշումներով համապատասխանաբար Մխիթար Զաքարյանի և Արթուր Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով (*հիմք՝ ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 01.12.2021թ. թիվ ՍԴԴ-95 գրության՝ ՀՀ գլխավոր դատախազի՝ 08.12.2021թ. Սահմանադրական*

դատարան մուտքագրված գրությունը, ինչպես նաև ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 16.12.2021թ. թիվ ՍԴԴ-101 գրության՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահի 21.12.2021թ. թիվ ԴԴ-31/Ե-25627 գրությանը կից ներկայացված նյութերը)։

6) Ղեկավարվելով «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 100-րդ հոդվածի 1-ին մասով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2021 թվականի հուլիսի 22-ին կազմել է «Ազգային ժողովի պատգամավորներ գրանցելու և մանդատներ տրամադրելու մասին» թիվ 1 արձանագրությունը, որի 1-ին կետում «Հայաստան» կուսակցությունների դաշինքի համապետական ցուցակի առաջին մասից ընտրված պատգամավորների թվում 16-րդ համարի ներքո նշված է Մխիթար Զաքարյանը, իսկ 25-րդ համարի ներքո՝ Արթուր Սարգսյանը։ Միաժամանակ Մխիթար Զաքարյանի և Արթուր Սարգսյանի կողմից ինքնաբացարկի կամ մանդատից հրաժարվելու մասին դիմումներ չեն ներկայացվել։ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում չի ստացվել Մխիթար Զաքարյանի և Արթուր Սարգսյանի վերաբերյալ պատգամավորի լիազորությունները վաղաժամկետ դադարած համարելու մասին արձանագրություն (հիմք՝ ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 01.12.2021թ. թիվ ՍԴԴ-97 գրության՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի 13.12.2021թ. թիվ 01-1215 գրությունը)։

7) Ազգային ժողովի պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելուց հետո Մխիթար Զաքարյանի և Արթուր Սարգսյանի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու և նրանց անազատության մեջ պահելու վերաբերյալ Ազգային ժողովի համաձայնություն առկա չէ (հիմք՝ ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 01.12.2021թ. թիվ ՍԴԴ-95 գրության՝ ՀՀ գլխավոր դատախազի՝ 08.12.2021թ. Սահմանադրական դատարան մուտքագրված գրությունը, ինչպես նաև ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 16.12.2021թ. թիվ ՍԴԴ-101 գրության՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահի 21.12.2021թ. թիվ ԴԴ-31/Ե-25627 գրությանը կից ներկայացված նյութերը)։

Անդրադառնալով սույն գործի շրջանակում Սահմանադրական դատարանի առջև բարձրացված հարցերին՝ հարկ եմ համարում քննարկման առարկա դարձնել և իմ դիրքորոշումը ներկայացնել հետևյալ հարցադրումների վերաբերյալ։

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

1) արդյո՞ք Ազգային ժողովի նախագահի ընտրությունը թեկնածուի (թեկնածուների) բացակայության պայմաններում անցկացնելը համահունչ է Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի և 104-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,

2) արդյո՞ք Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացը համապատասխան է Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի, 96-րդ հոդվածի 2-րդ մասի և 104-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին այն դեպքում, երբ թեկնածուն (թեկնածուները) չի մասնակցել այդ ընտրության գործընթացին՝ առանց Ազգային ժողովի համաձայնության կալանքի փակ գրնվելու պատճառով:

1.1. Սահմանադրությամբ նախատեսված տարբեր մարմինների և պաշտոնատար անձանց ընտրությանն առնչվող սահմանադրական կարգավորումներից հետևում է, որ ընտրությունը գործընթաց է, որի շրջանակում քվեարկության միջոցով որոշվում է, թե ովքեր պետք է ստանձնեն որոշակի պաշտոններ: Սահմանադրությամբ մի շարք պաշտոնատար անձանց ընտրությունը վերապահված է Ազգային ժողովի՝ որպես ժողովրդի կողմից անմիջականորեն ձևավորված ներկայացուցչական մարմնի իրավասությանը (օրինակ՝ Հանրապետության նախագահի (Սահմանադրության 125-րդ հոդված), Վարչապետի (Սահմանադրության 149-րդ հոդված), Սահմանադրական դատարանի դատավորների, Վճռաբեկ դատարանի նախագահի և դատավորների (Սահմանադրության 166-րդ հոդված) ընտրությունը): Միաժամանակ, բացի այլ պետական մարմինների կազմավորմանը և պաշտոնատար անձանց ընտրությանը մասնակցելուց, սահմանադիրն Ազգային ժողովին է լիազորել իրականացնել ընտրություն նաև իր որոշակի պաշտոններում: Մասնավորապես՝ այդպիսի պաշտոնների թվին դասելով նաև Ազգային ժողովի նախագահի պաշտոնը՝ սահմանադիրն ամրագրել է, որ Ազգային ժողովն իր կազմից ընտրում է Ազգային ժողովի նախագահ, որն ընտրվում և հետ է կանչվում պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին մաս):

Նշված դրույթի վերլուծությունից բխում է, որ սահմանադիրն ուղղակիորեն կարգավորել է Ազգային ժողովի նախագահի ընտրությանն առնչվող միայն կարևորագույն հարցերը¹: Մասնավորապես՝ Սահմանա-

¹ Հարկ է նշել, որ Սահմանադրությունում տեղ են գտել նաև որոշակի ընդհանուր բնույթի կարգավորումներ, որոնք վերաբերում են ընդհանրապես Ազգային ժողովի գործունեությանը (օրինակ՝ Սահմանադրության 101-103-րդ հոդվածներ):

դրության վերը նշված դրույթից հետևում է, որ Ազգային ժողովի նախագահին ընտրում է Ազգային ժողովը, ընդ որում, այդ ընտրությունը պետք է կատարվի Ազգային ժողովի կազմից, իսկ նշված պաշտոնում ընտրվելու համար անհրաժեշտ է, որ Ազգային ժողովի նախագահի թեկնածուն ստանա պատգամավորների ընդհանուր թվի ճայների մեծամասնությունը:

Հարկ եմ համարում նշել, որ Սահմանադրությունն անմիջականորեն չի ամրագրում Ազգային ժողովի նախագահի ընտրության ընթացակարգին վերաբերող մանրամասն կարգավորումներ, սակայն միաժամանակ Ազգային ժողովին ներկայացնում է իր կանոնակարգին համապատասխան գործելու պահանջ (Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մաս): Ընդ որում, Ազգային ժողովի կանոնակարգի ընդունման առավել բարդ կարգը (ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ճայների առնվազն երեք հինգերորդով՝ Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մաս) վկայում է Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի աստիճանակարգությունում դրա տեղի և դերի մասին:

Այսպիսով, սահմանադրի ուղղակի պահանջն է Ազգային ժողովի կողմից իր կանոնակարգով ամրագրված դրույթների պահպանումը, որոնք էլ կանոնակարգում են, ի թիվս այլնի, Ազգային ժողովի նախագահի ընտրության ընթացակարգին առնչվող հարցերը: Միաժամանակ գտնում եմ, որ նշված իրավական ակտով սահմանված՝ Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացին վերաբերող կարգավորումների ոչ բոլոր խախտումներն են հանգեցնում այդ գործընթացի արդյունքում ընդունված իրավական ակտի հակասահմանադրականության: Ընդ որում, Ազգային ժողովի կանոնակարգով նախատեսված՝ Ազգային ժողովի նախագահի ընտրությանը վերաբերող նորմերի այնպիսի խախտումները, որոնք էական ազդեցություն են ունեցել կամ կարող էին ունենալ նշված հարցի վերաբերյալ կայացված վերջնական որոշման վրա, արդեն իսկ հանգեցնում են այդ գործընթացի արդյունքում ընդունված իրավական ակտի՝ Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասին և 104-րդ հոդվածի 1-ին մասին հակասության:

1.2. Անդրադառնալով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով ամրագրված՝ Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացին վերաբերող կարգավորումներին՝ հարկ եմ համարում նշել հետևյալը.

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտոնում ընտրելու կամ նշանակելու

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵՎՈՒԹՅՈՒՆ
 ◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

մասին հարցերն Ազգային ժողովի նիստում քննարկվում են հետևյալ ընդհանուր կարգով.

1) մինչև տասական թուղթ տևողությամբ ելույթներով՝ ըստ թեկնածուների ազգանվան այբբենական հաջորդականության հանդես են գալիս թեկնածուներին ներկայացնելու իրավասություն ունեցող անձինք.

2) մինչև քսանական թուղթ տևողությամբ ելույթներով հանդես են գալիս թեկնածուները.

3) թեկնածուին ներկայացնող անձը և թեկնածուն ելույթ են ունենում հաջորդաբար.

4) ելույթից հետո թեկնածուին ներկայացնող անձին և թեկնածուին կարող են հարցեր տրվել.

5) մտքերի փոխանակություն.

6) մինչև տասական թուղթ տևողությամբ եզրափակիչ ելույթներով նույն հաջորդականությամբ հանդես են գալիս թեկնածուները:

Նույն օրենքի 136-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցն Ազգային ժողովի նիստում քննարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 135-րդ հոդվածով սահմանված կարգով հետևյալ տարբերությամբ.

1) թեկնածուներին ներկայացնելու համար հատկացվում է մինչև տասական թուղթ.

2) թեկնածուների ելույթների համար հատկացվում է մինչև 30 թուղթ.

3) թեկնածուների եզրափակիչ ելույթների համար հատկացվում է մինչև տասնհինգական թուղթ:

Փաստորեն, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված ընթացակարգի համաձայն՝ Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցը քվեարկության դրվելուց առաջ Ազգային ժողովի նախագահի թեկնածուներին հնարավորություն է տրվում պատասխանել պատգամավորների հարցերին, հանդես գալ ելույթներով և եզրափակիչ ելույթներով: Ընդ որում, Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացում առաջադրված թեկնածուների համար մասնակցային հավասար հնարավորություններ ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Ազգային ժողովի նախագահի՝ մեկից ավելի թեկնածուների առաջադրման դեպքում վերը նշված հնարավորությունը բոլոր թեկնածուների համար պետք է ապահովվի հավասարապես:

Անհրաժեշտ եմ համարում ընդգծել, որ քննարկվող կարգավորումն անմիջականորեն առնչվում է Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցում պատգամավորների կարծիքի ձևավորմանը: Ազգային ժողովի նախագահի պաշտոնում առաջադրված թեկնածուները պատգամավոր-

1/1 (105/1) 2022
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ ԴԱՏԱՐԱՆ

ների հարցերին պատասխանելու, ելույթով և եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքներն իրացնելու միջոցով նպաստում են պատգամավորների կողմից այն համոզմունքի ձևավորմանը, թե առաջադրված թեկնածուներից ով առավել արդյունավետորեն կարող է իրականացնել Ազգային ժողովը ներկայացնելու և նրա բնականոն գործունեությունն ապահովելու՝ Ազգային ժողովի նախագահի սահմանադրական գործառույթները (Սահմանադրության 104-րդ հոդվածի 2-րդ մաս): Այս տեսանկյունից կարևորվում է նաև Ազգային ժողովի նախագահի պաշտոնում առաջադրված թեկնածուների համար հավասար հնարավորությունների ապահովումը, այդ թվում՝ պատգամավորների հարցերին պատասխանելու, ելույթով և եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքներն իրացնելու մասով, քանի որ միայն հավասար պայմաններ երաշխավորող միջավայրում անցկացված՝ Ազգային ժողովի նախագահի ընտրությունը կարող է համահունչ լինել այդ գործընթացին վերաբերող սահմանադրական կարգավորումներին:

Այսպիսով, թեև Սահմանադրությունն ուղղակիորեն չի ամրագրում նաև Ազգային ժողովի նախագահի թեկնածուի կամ թեկնածուների՝ պատգամավորների հարցերին պատասխանելու, ելույթով և եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքներն իրացնելու հնարավորություն ապահովելու պահանջ, սակայն հաշվի առնելով Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, Ազգային ժողովի կանոնակարգն Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցի քննարկման շրջանակում նման հնարավորություն նախատեսված լինելու պայմաններում այն պետք է հավասարապես ապահովվի բոլոր թեկնածուների համար:

Միաժամանակ գործնականում չեն բացառվում այնպիսի իրավիճակները, երբ Ազգային ժողովի նախագահի թեկնածուն (թեկնածուները) պատգամավորների հարցերին չպատասխանի, հանդես չգա ելույթով կամ եզրափակիչ ելույթով՝ բացակայության կամ նիստին ներկա թեկնածուի կողմից այդ հնարավորությունից չօգտվելու հետևանքով: Նշված հանգամանքն Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացը Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի և 104-րդ հոդվածի 1-ին մասի տեսանկյունից ինքնին խնդրահարույց չի դարձնում, քանի որ Ազգային ժողովի նախագահի ընտրության շրջանակում առաջադրված թեկնածուի (թեկնածուների) ներկայությունն Ազգային ժողովի նախագահի ընտրության ընթացակարգային պարտադիր պահանջ չէ: Նման իրավիճակում սահմանադրական վերը նշված պահանջների պահպանված լինելու հարցը պարզելու համար անհրաժեշտ է քննարկել Ազգային ժողովի նախագահի կոնկրետ թեկնածուի (թեկնածուների)՝ պատգամավորների հարցերին

ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄԻ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄԻ ՂԱՏԱՐԱՆ

չպատասխանելու, ելույթով կամ եզրափակիչ ելույթով հանդես չգալու պատճառները և հիմքերը:

Ըստ այդմ, եթե Ազգային ժողովի նախագահի թեկնածուն (թեկնածուները) պատգամավորների հարցերին պատասխանելու, ելույթով և եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքները չի (չեն) իրացրել նման հնարավորության ապահովված չլինելու հետևանքով, ապա դա կհանգեցնի ոչ միայն «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի դրույթների, այլև Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի և 104-րդ հոդվածի 1-ին մասի խախտման, քանի որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի՝ վերը նշված ընթացակարգային կանոնները սերտորեն կապված են Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցում պատգամավորների կարծիքի ձևավորման հետ, ավելին, Ազգային ժողովի նախագահի՝ մեկից ավելի թեկնածուների առաջադրման պայմաններում թեկնածուների մի մասի համար վերը նշված իրավունքներն իրացնելու հնարավորություն չապահովելը հանգեցնում է անհավասար մրցակցային դաշտի ստեղծման: Այսինքն՝ նշված խախտումն իր բնույթով այնպիսին է, որ կարող է էական ազդեցություն ունենալ Ազգային ժողովի նախագահի ընտրության վերաբերյալ կայացված վերջնական որոշման վրա:

Ի հակադրումն վերոնշյալի, նման խախտում առկա չի լինի, եթե Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացը կազմակերպվել է այնպես, որ Ազգային ժողովի նախագահի բոլոր թեկնածուներին տրվել է պատգամավորների հարցերին պատասխանելու, ելույթով և եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքներն իրացնելու հավասար հնարավորություն, սակայն վերջիններս (նրանց մի մասը) այդ իրավունքներից չեն օգտվել իրենց կամքով կամ դրանցից օգտվելը եղել է անհնար՝ օրենքով սահմանված հիմքով Ազգային ժողովի նիստից բացակայության հետևանքով:

Այսպիսով, գտնում եմ, որ Ազգային ժողովի նախագահի ընտրության շրջանակում առաջադրված թեկնածուի (թեկնածուների) բացակայության հետևանքով պատգամավորների հարցերին պատասխանելու, ելույթով և եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքները չիրացնելու յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է պարզել դրա պատճառները և հիմքերը:

1.3. Սահմանադրական դատարանը սույն գործով կայացված ՍԴՈ-1647 որոշմամբ արձանագրել է, որ «օրենսդրի կողմից Ազգային ժողովի նախագահի թեկնածուի ֆիզիկական բացակայությունը (օրբեկտիվ, թե սուբյեկտիվ պատճառներով) որպես Ազգային ժողովի նախագահի ընտրության

պարտադիր ընթացակարգային պայման դիտարկելը կարող էր հանգեցնել Ազգային ժողովի նախագահի թեկնածուի բացակայության (օրելտիվ, թե սուբյեկտիվ պատճառներով) պատճառով Ազգային ժողովի մարմինների ձևավորման գործընթացի արգելակմանը՝ որպես հետևանք հանգեցնելով ամբողջ Ազգային ժողովի գործունեության խաթարմանը: Այդ առնչությամբ պնդումը, թե պատգամավորի՝ իր կամքից անկախ բացակայության պայմաններում Ազգային ժողովի ընդունած ակտը (օրենք, որոշում և այլն) կարող էր և չընդունվել, եթե հիմք ընդունվեր, որ պատգամավորը, նիստերին մասնակցելով, ելույթներ ունենալով, էականորեն կարող էր ազդել համապատասխան որոշման ընդունման վրա, խիստ վերացական է և ոչ հիմնավոր: Ավելին, նշված մոտեցումը հնարավոր է վտանգի իրավական անվտանգությունն ընդհանրապես, քանզի դրա տրամաբանական շարունակությունը հանգեցնելու է թեկուզ մեկ պատգամավորի՝ իր կամքից անկախ (օրինակ՝ հիվանդության պատճառով նիստերին մասնակցելու անկարողությունը) Աժ նիստերին բացակայության պայմաններում Ազգային ժողովի ընդունած ցանկացած ակտի լեգիտիմությունը կասկածի տակ դնելուն՝ ըստ էության նույնպես հանգեցնելով Ազգային ժողովի գործունեության կազմալուծմանը»:

Չհամաձայնելով Սահմանադրական դատարանի վերը նշված դիրքորոշմանը՝ գտնում եմ, որ Սահմանադրական դատարանը հաշվի չի առել, որ իրականում խնդիրը ոչ թե համապատասխան նիստին Ազգային ժողովի նախագահի թեկնածուի փաստացի ներկայությունը կամ բացակայությունն է, այլ գործնականում դրան մասնակցելու հնարավորության ապահովումը: Օրինակ՝ եթե Ազգային ժողովի նախագահի թեկնածուն համապատասխան նիստին մասնակցելու հնարավորություն չի ունենում սահմանադրական դրույթների խախտման պայմաններում ազատությունից զրկված լինելու հետևանքով, նման ընտրության արդյունքում ընդունված իրավական ակտը չի կարող համահունչ լինել սահմանադրական կարգավորումներին: Այսինքն՝ անհրաժեշտ է տարբերություն դնել համապատասխան նիստին Ազգային ժողովի նախագահի թեկնածուի չմասնակցելու հիմքերի միջև: Մինչդեռ Սահմանադրական դատարանը, չտարբերակելով համապատասխան նիստին Ազգային ժողովի նախագահի թեկնածուի չմասնակցելու հիմքերը և պատճառները, Ազգային ժողովի նախագահի ընտրության արդյունքում ընդունված որոշումը ինձ համար անհասկանալի տրամաբանությամբ ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ ըստ էության միայն նորընտիր Ազգային ժողովի անխաթար գործունեությունն ապահովելու պատճառաբանությամբ: Ավելին,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ

իմ գնահատմամբ, Սահմանադրական դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ այս դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե Ազգային ժողովի նիստերին որևէ պատգամավորի բացակայության պայմաններում ընդունված ցանկացած ակտի ընդունմանը, այլ Ազգային ժողովի նախագահի թեկնածուի բացակայության պայմաններում իր իսկ ընտրության հարցի քննարկմանը և որոշման կայացմանը: Նշված իրավիճակների անհամադրելիությունը հաշվի չառնելու հետևանքով Սահմանադրական դատարանը, շեղվելով կոնկրետ գործով ներկայացված իրավիճակի և հարցի տրամաբանությունից, իր որոշմամբ վկայակոչել է Ազգային ժողովի նիստերի իրավազրուության, որոշման ընդունման համար անհրաժեշտ ձայների նվազագույն շեմի վերաբերյալ կարգավորումներ, որոնք, իմ գնահատմամբ, որևէ կերպ չեն վկայում համապատասխան նիստին Ազգային ժողովի նախագահի թեկնածուի մասնակցելու հնարավորությունն ապահովելու պահանջի բացակայության մասին:

Փաստորեն, Սահմանադրական դատարանի որոշմամբ սահմանադրական կարգավորումներին և դրանց լույսի ներքո օրենսդրական դրույթներին տրված մեկնաբանության առանցքում մեկ գաղափար է, համաձայն որի՝ անհրաժեշտ է ապահովել նորընտիր Ազգային ժողովի անխաթար գործունեությունը, ինչը Սահմանադրական դատարանի համար բավարար է սահմանադրական դրույթների խախտումներն անտեսելու համար:

2.1. Սույն հատուկ կարծիքում ներկայացված երկրորդ հարցադրման կապակցությամբ հարկ եմ համարում նշել, որ տվյալ դեպքում Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի նիստից Ազգային ժողովի նախագահի թեկնածուներ Մխիթար Զաքարյանի և Արթուր Սարգսյանի բացակայությունը պայմանավորված է եղել նրանց՝ կալանավորված լինելու հանգամանքով (ինչի մասին են վկայում սույն հատուկ կարծիքում ներկայացված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 42-րդ հոդվածի հիմքով (զեկուցող դատավոր Ե. Խունդկարյանի պահանջով) Սահմանադրական դատարանում ստացված տեղեկությունները): Ուստի սույն հատուկ կարծիքի շրջանակում անհրաժեշտ եմ համարում անդրադառնալ պատգամավորի կալանավորման հարցին՝ պատգամավորի անձեռնմխելիության համատեքստում:

1995 թվականի Սահմանադրության ընդունումից ի վեր Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական մակարդակում երաշխավորվում է պատգամավորի անձեռնմխելիությունը, սակայն պատգամավորի կարգավիճակով պայմանավորված նրա «պաշտպանության» ոլորտը որոշակիորեն փոփոխվել է սահմանադրական փոփոխությունների արդյունքում:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Այսպես՝ 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 66-րդ հոդվածի 3-րդ պարբերությունն ամրագրում էր, որ պատգամավորին չի կարելի կալանավորել, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկել առանց Ազգային ժողովի համաձայնության: Նշված դրույթով քրեական վարույթի շրջանակում պատգամավորին որոշակի պաշտպանություն տրամադրվում էր կալանավորումից (և ոչ թե անձնական ազատության սահմանափակման բոլոր դրսևորումներից) և դատական կարգով քրեական պատասխանատվության ենթարկվելուց, որոնց համար պահանջվում էր Ազգային ժողովի համաձայնությունը:

2005 թվականին կատարված սահմանադրական փոփոխությունների արդյունքում Սահմանադրության 66-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ ամրագրված՝ պատգամավորի անձեռնմխելիությունը սահմանող դրույթի ձևակերպումը փոփոխվեց, և ամրագրվեց, որ պատգամավորին չի կարելի որպես մեղադրյալ ներգրավել, կալանավորել կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել՝ առանց Ազգային ժողովի համաձայնության: Միաժամանակ նշված հոդվածը լրացվեց 4-րդ մասով, որը սահմանեց, որ պատգամավորին չի կարելի ձերբակալել առանց Ազգային ժողովի համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալությունն իրագործվում է հանցագործության կատարման պահին: Այս դեպքում անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը:

Փաստորեն, 2005 թվականին կատարված սահմանադրական փոփոխությունները քրեական վարույթի շրջանակում պատգամավորի անձեռնմխելիությունը կապում էին երեք տեսակի գործողության հետ՝ պատգամավորին պաշտպանություն տրամադրելով որպես մեղադրյալ ներգրավվելուց, կալանավորվելուց և ձերբակալվելուց (բացառությամբ Սահմանադրությամբ ուղղակիորեն նշված որոշակի դեպքերի)՝ նշված գործողությունների կատարումը պայմանավորելով Ազգային ժողովի համաձայնության առկայությամբ:

2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում պատգամավորի անձեռնմխելիությունն ամրագրում ստացավ Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն՝ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանա-

սուներկու ժամից ավելի: Պատգամավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը:

Սահմանադրական վերը նշված կարգավորումների համեմատական վերլուծությունից հետևում է, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով սահմանադիրն էապես ընդլայնել է պատգամավորի պաշտպանության ոլորտը: Եթե 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրությամբ պատգամավորը քրեական վարույթի շրջանակում պաշտպանված էր որպես մեղադրյալ ներգրավվելուց, կալանավորվելուց և ձերբակալվելուց, ապա ներկայումս պատգամավորի անձեռնմխելիությունը տարածվում է քրեական հետապնդում հարուցելու, ինչպես նաև պատգամավորին ազատությունից զրկելու ցանկացած ձևի վրա՝ արգելելով այդ գործողությունների կատարումն առանց Ազգային ժողովի համաձայնության:

Սահմանադրության 96-րդ հոդվածով ամրագրված կարգավորումներին Սահմանադրական դատարանն անդրադարձել է 2021 թվականի դեկտեմբերի 17-ի ՍԴՈ-1619 որոշմամբ՝ արձանագրելով, որ «(...) չնայած հիշատակված հոդվածի «Պատգամավորի անձեռնմխելիությունը» վերտառությանը, դրանով սահմանվում են պատգամավորի սահմանադրական կարգավիճակը պայմանավորող և դրանից բխող երաշխիքներ՝ պատգամավորի ինդեմնիտետը (անպատասխանատվությունը (non-liability) (Սահմանադրության 96-րդ հոդվածի 1-ին մաս) և պատգամավորի անձեռնմխելիությունը (inviolability) (Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մաս):

Ընդ որում՝ ինդեմնիտետը երաշխավորում է պատգամավորի՝ իր պատգամավորական գործունեության արդյունավետ իրականացումը՝ բացառելով պատգամավորի գործունեությունից բխող հայտնած կարծիքի կամ Ազգային ժողովում քվեարկության համար քրեական պատասխանատվությունն ընդհանրապես, հետևաբար նաև քրեական հետապնդումը: Սակայն պատգամավորի՝ իր գործունեության շրջանակներում, իր գործունեությունից բխող կարծիքի համար «արտաքին» պատասխանատվության բացառումն ամենևին չի ենթադրում պատասխանատվության բացառում ընդհանրապես, և հատկապես՝ չի բացառում «ներքին» պատասխանատվությունը՝ կարգապահական պատասխանատվությունը տարատեսակ սանկցիաների տեսքով:

Ինչ վերաբերում է պատգամավորի անձեռնմխելիությանը, ապա վերջինիս տրամադրվում է որոշակի պաշտպանություն իր գործառույթների հետ չկապված արարքների համար քրեական հետապնդման հա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏՈՒԿ ԴԱՏԱՎՈՐ 1/1 (105/1) 2022

րուցումից: Միաժամանակ, դրանով տրվում է պաշտպանություն՝ պատգամավորին ազատությունից զրկելու դեպքերի համար»:

Հարկ եմ համարում նշել, որ պատգամավորներին տրամադրվող վերը նշված երաշխիքներին անդրադարձել են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) և «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Վենետիկի հանձնաժողով): Խորհրդարանականի «անպատասխանատվությունը», ըստ Եվրոպական դատարանի, կոչված է ապահովելու խորհրդարանականի՝ իր պարտականությունների իրականացման ընթացքում քվեարկության կամ կարծիք հայտնելու համար դատական կարգով «անպատասխանատվությունը» (Kart v. Turkey [GC], application no. 8917/05, 03/12/2009, §44): Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ «անպատասխանատվությունը» սերտորեն կապված է պատգամավորական մանդատի հետ և պաշտպանում է պատգամավորներին իրենց պաշտոնական կարգավիճակով հանդես գալիս՝ քաղաքական հարցեր քննարկելիս և որոշումներ կայացնելիս¹:

Ինչ վերաբերում է խորհրդարանականների անձեռնմխելիությանը, ապա ըստ Եվրոպական դատարանի՝ այս տեսակի իմունիտետը կոչված է պաշտպանելու խորհրդարանականներին իրենց պատգամավորական պարտականությունների հետ չկապված գործողությունների, այդ թվում՝ հանցագործությունների համար ձերբակալումից, կալանավորումից կամ քրեական հետապնդումից՝ առանց այն խորհրդարանի համաձայնության, որի անդամն են իրենք (Kart v. Turkey [GC], application no. 8917/05, 03/12/2009, §44): Պատգամավորի իմունիտետի երկու տեսակներն էլ ծառայում են միևնույն նպատակին՝ ապահովելու խորհրդարանի անկախությունն իր առջև դրված խնդիրների կատարման ժամանակ (Kart v. Turkey [GC], application no. 8917/05, 03/12/2009, §90): Խորհրդարանի անդամների դեմ վարույթի հարուցումը կարող է ազդել այն խորհրդարանի գործունեության վրա, որի անդամ են նրանք, և խաթարել խորհրդարանի աշխատանքը: Հետևաբար իմունիտետի այս համակարգը կարող է համարվել իրավաչափ նպատակ հետապնդող (Kart v. Turkey [GC], application no. 8917/05, 03/12/2009, §91): Եվրոպական դատարանն արդեն իսկ ընդունել է, որ պետությունների կողմից, ընդհանուր առմամբ, պատգամավորներին տարբեր աստիճանի իմունիտետ շնորհելու վաղեմի պրակտիկան հետապնդում է խորհրդարանում խոսքի ազատության

¹ Վենետիկի հանձնաժողովի «Խորհրդարանական իմունիտետի շրջանակը և դրանից զրկումը» վերտառությամբ զեկույց, CDL-AD(2014)011, 14/05/2014, §12.

պաշտպանության և օրենսդիր ու դատական իշխանության միջև իշխանությունների տարանջատման օրինական նպատակներ (De Jorio v. Italy, application no. 73936/01, 03/06/2004, §49; Selahattin Demirtaş v. Turkey (no. 2) [GC], application no. 14305/17, 22/12/2020, §256): Անձեռնմխելիությունը (inviolability) օգնում է հասնել խորհրդարանի լիակատար անկախությանը՝ կանխելով քաղաքական դրդապատճառներով քրեական դատավարության ցանկացած հնարավորություն (fumus persecutionis) և դրանով իսկ պաշտպանելով ընդդիմությանը մեծամասնության ճնշումներից կամ չարաշահումներից (Karácsony and Others v. Hungary [GC], application nos. 42461/13 and 44357/13, 17/05/2016, §138):

2.2. Հաշվի առնելով, որ Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի նիստից Ազգային ժողովի նախագահի թեկնածուներ Մխիթար Զաքարյանը և Արթուր Սարգսյանը բացակայել են կալանավորված լինելու պատճառով, անհրաժեշտ էմ համարում պատգամավորի անձեռնմխելիության երաշխիքի առկայության պայմաններում վերջիններիս կալանքի տակ պահելու համար Ազգային ժողովի համաձայնության անհրաժեշտության հարցի կապակցությամբ վկայակոչել Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 17-ի ՍԴՈ-1619 որոշումը՝ կարևորելով սահմանադրական նորմերի մեկնաբանման և կիրառման կայունության ապահովումը: Ընդ որում, հաշվի առնելով Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի նիստից Ազգային ժողովի նախագահի թեկնածուներ Մխիթար Զաքարյանի և Արթուր Սարգսյանի բացակայության պատճառը՝ գտնում էմ, որ Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակում կաշկանդված էր իր՝ 2021 թվականի դեկտեմբերի 17-ի ՍԴՈ-1619 որոշմամբ բացառապես պատգամավորին կալանքի տակ պահելու մասով արտահայտած դիրքորոշումներով: Միաժամանակ հարկ էմ համարում ընդգծել, որ Սահմանադրական դատարանի որոշումը բոլոր պետական մարմինների համար պարտադիր լինելու պայմաններում առաջին հերթին Սահմանադրական դատարանն իր վարքագծով պետք է անվերապահորեն հարգի իր իսկ որոշումները և կաշկանդվի դրանցում արտահայտված իր դիրքորոշումներով:

Այսպես՝ Սահմանադրական դատարանը 2021 թվականի դեկտեմբերի 17-ի ՍԴՈ-1619 որոշմամբ մասնավորապես անդրադարձ է կատարել այն իրավիճակներին, երբ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուց և նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելուց հետո վերջինս ձեռք է բերում պատգամավորի կարգավիճակ: Սահմանադրական դատարանը նշված որոշմամբ ձևավորել է այն դիրքորոշումը, որ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

«(...) այն պարագայում, երբ նույնիսկ անձը պատգամավորի կարգավիճակ ձեռք է բերել քրեական հետապնդման հարուցումից հետո, և մինչ այդ նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդման շարունակության համար անհրաժեշտ չէ Ազգային ժողովի համաձայնությունը, ապա բոլորովին այլ է հարցի լուծումն արդեն անձի՝ պատգամավորի կարգավիճակ ստանալուց հետո նրան ազատությունից զրկելու պարագայում. տվյալ դեպքում Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառիկ դեպքերից բացի, մնացած բոլոր դեպքերում անձի՝ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելն անհրաժեշտաբար պայմանավորում է, որ վերջինիս ազատությունից զրկելու (իսկ մինչ այդ կարգավիճակի ձեռք բերելը ազատությունից զրկված լինելու դեպքում՝ ազատությունից զրկելը շարունակելու, այն պահպանելու) համար անվերապահորեն պետք է Ազգային ժողովի համաձայնությունը, որի բացակայությունը բացառում է պատգամավորի կարգավիճակ ունեցող անձին ազատությունից զրկելու հնարավորությունը:

Ներկայացվածի հակառակ մոտեցման պարագայում կարող է վտանգվել Ազգային ժողովի բնականոն գործունեությունը և Ազգային ժողովի անկախությունը, ինչն ուղղակիորեն կհակասի Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով պատգամավորին տրված պաշտպանությանը՝ պատգամավորի կարգավիճակում գտնվող անձին ազատությունից զրկելը դարձնելով ոչ իրավաչափ:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ պատգամավորը, բացի Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ նախատեսված բացառիկ դեպքերից, չի կարող զրկվել ազատությունից (իսկ մինչ կարգավիճակի ձեռքբերումը ազատությունից զրկված լինելու դեպքում՝ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելուց հետո շարունակել ազատությունից զրկված մնալ), եթե Ազգային ժողովը տվյալ հարցով չի տվել իր համաձայնությունը. Ազգային ժողովից բացի որևէ այլ մարմին իրավասու չէ հաղթահարել պատգամավորին անձեռնմխելիությամբ տրվող այդ պաշտպանությունը»:

Ազգային ժողովի նախագահի թեկնածուներ Մխիթար Զաքարյանը և Արթուր Սարգսյանը, կալանավորված լինելով նախքան Ազգային ժողովի պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելը, 2021 թվականի օգոստոսի 2-ին՝ Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցի քննարկման օրը, շարունակել են գտնվել անազատության մեջ՝ առանց Ազգային ժողովի համաձայնության: Մինչդեռ, ինչպես նշվեց, Սահմանադրական դատարանն իր՝ 2021 թվականի դեկտեմբերի 17-ի ՍԴՈ-1619 որոշմամբ արձանագրել է նման իրավիճակում Ազգային ժողովի համաձայնությունն

ստանալու անհրաժեշտությունը՝ ի կատարումն Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասից բխող պահանջի: Ավելին, նույն որոշմամբ Սահմանադրական դատարանն ուղղակիորեն վկայակոչել է նաև Մխիթար Զաքարյանին և Արթուր Սարգսյանին վերաբերող քրեական գործերը՝ ընդգծելով, որ «(...) իրավակիրառական պրակտիկան (մասնավորապես՝ ՍԴ/0066/01/21, ՍԴ1/0060/01/21, ԵԴ/0886/01/21 քրեական գործերով) զարգացել է սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումներին հակառակ տրամաբանությամբ, ըստ որի՝ անձի՝ մինչ պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելը ազատությունից զրկված լինելու պարագայում պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելուց հետո նրան հետագա ազատությունից զրկելը պահպանելու, ազատությունից զրկելը շարունակելու համար Ազգային ժողովի համաձայնություն ստանալը անհրաժեշտություն չի համարվել: Այս առումով Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակիրառական պրակտիկան չի բխում Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների բովանդակությունից»:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում են, որ Ազգային ժողովի նախագահի թեկնածուներ Մխիթար Զաքարյանը և Արթուր Սարգսյանը 2021 թվականի օգոստոսի 2-ին Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցի քննարկմանը չեն մասնակցել և պատգամավորների հարցերին պատասխանելու, ելույթներով ու եզրափակիչ ելույթներով հանդես գալու հնարավորություն չեն ունեցել իրենց կամքից անկախ և առանց օրենքով սահմանված հիմքի առկայության՝ Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված երաշխիքի խախտմամբ անազատության մեջ գտնվելու պատճառով: Այսինքն՝ պատգամավորների հարցերին պատասխանելու, ելույթով և եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքներն իրացնելու հնարավորությունը փաստացիորեն չի ապահովվել Ազգային ժողովի նախագահի թեկնածուներ Մխիթար Զաքարյանի և Արթուր Սարգսյանի համար, ինչի հետևանքով վերջիններս զրկված են եղել վերը նշված իրավունքների իրացման միջոցով Ազգային ժողովի նախագահի ընտրության հարցում պատգամավորների կարծիքի ձևավորման վրա ազդելու հնարավորությունից՝ ի խախտումն Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի, որի արդյունքում նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 135-րդ և 136-րդ հոդվածների: Ավելին, պատգամավորների հարցերին պատասխանելու, ելույթով և եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքներն իրացնելու հնարավորությունն ապահովվել է թեկնածուներից միայն մեկի՝ Ալեն Սիմոնյանի համար՝ ստեղծելով անհավասար մրցակցային պայմաններ Ազգային ժողովի նախագահի երեք թեկնածուների համար: Հաշվի առնելով, որ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

նշված խախտումն իր բնույթով էական է (անկախ Ազգային ժողովում խմբակցությունների պատգամավորների ներկայացվածության աստիճանի), գտնում եմ, որ նման պայմաններում անցկացված ընտրական գործընթացը չի համապատասխանում Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասին, 96-րդ հոդվածի 2-րդ մասին և 104-րդ հոդվածի 1-ին մասին:

2.3. Սահմանադրական դատարանը, սույն գործով կայացված ՍԴՈ-1647 որոշմամբ անդրադառնալով դիմողի այն փաստարկին, որի համաձայն՝ վիճարկվող որոշումն ընդունվել է Սահմանադրության 96-րդ հոդվածով նախատեսված պատգամավորի անձեռնմխելիության երաշխիքի խախտման պայմաններում, միայն նշել է, որ «որոշման 4.1-4.3. կետերի պատճառաբանություններով ինքնին հերքվում է դիմողի նաև այս փաստարկը», ապա նշել, որ իր՝ 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշումը չունի հետադարձ ուժ և չի տարածվում մինչև Սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելը ծագած իրավահարաբերությունների, տվյալ դեպքում՝ վիճարկվող որոշման ընդունման հետ կապված իրավահարաբերությունների նկատմամբ՝ ազդելով ԱԺՈ-01-Ա որոշման իրավաչափության վրա:

Վերոնշյալի առնչությամբ հարկ եմ համարում նշել, որ Սահմանադրական դատարանի այն դատողությունը, թե որոշմամբ ներկայացված պատճառաբանություններով հերքվում է Սահմանադրության 96-րդ հոդվածով ամրագրված դրույթի խախտման վերաբերյալ փաստարկը, բխում է Սահմանադրական դատարանի այն մոտեցումից, որ Ազգային ժողովի նախագահի թեկնածուի բացակայությունը որևէ դեպքում (այսինքն՝ անկախ այդ բացակայության հիմքերից) չի կարող ազդել այդ գործընթացի շրջանակում կազմակերպված քվեարկության արդյունքում ընդունված որոշման սահմանադրականության վրա: Սահմանադրական դատարանի այս դիրքորոշմանն իմ անհամաձայնությունն արդեն իսկ ներկայացվել է սույն հատուկ կարծիքում: Ուստի ստորև հարկ եմ համարում միայն անդրադառնալ 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշմամբ արտահայտած դիրքորոշումների՝ սույն գործով կիրառելիության հարցին:

Նախ տվյալ դեպքում իմ գնահատմամբ Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշման հետադարձ ուժ ունենալու վերաբերյալ խնդիր առկա չէ, քանի որ հետադարձ ուժի վերաբերյալ կանոններն առնչվում են ժամանակի մեջ Սահմանադրական դատարանի որոշման գործողությանը, այնինչ տվյալ դեպքում հարցը վերաբերում է Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական նորմը միևնույն ձևով մեկնաբանելուն: Մասնավորապես՝ 2021 թվականի

դեկտեմբերի 7-ի ՄԴՈ-1619 որոշմամբ Սահմանադրական դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելիս մեկնաբանել է, թե որն է սահմանադրի իրական կամքն այն պատգամավորի անձեռնմխելիության առկայության հարցի վերաբերյալ, որը ազատությունից զրկվել է նախքան պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելը: Իսկ սույն գործով պետք է պատասխան տրվեր այն հարցին, թե Ազգային ժողովի նախագահի ընտրությունը և դրա արդյունքում ընդունված որոշումն արդյոք համապատասխանում են սահմանադրաիրավական կարգավորումներին, թե՛ ոչ:

Սահմանադրական դատարանը 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՄԴՈ-1619 որոշմամբ արձանագրել է, որ անազատության մեջ գտնվող պատգամավորի կարգավիճակ չունեցող անձը պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու պահից, բացառությամբ Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի, չի կարող պահվել անազատության մեջ:

Արդյունքում, ստրագվում է հետևյալ իրավիճակը. Սահմանադրական դատարանը, վերը նշված որոշմամբ ուղղակիորեն վկայակոչելով նաև Մխիթար Չաքաթյանին և Արթուր Սարգսյանին վերաբերող քրեական գործերը, նշել է, որ իրավակիրառական պրակտիկան չի բխում Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների բովանդակությունից, մինչդեռ նույն անձանց նկատմամբ հակասահմանադրական վարքագիծ դրսևորվելու արդյունքում Ազգային ժողովի նախագահի ընտրությանն իրական մասնակցություն ունենալու հնարավորությունից այդ անձանց (Ազգային ժողովի նախագահի թեկնածուների) զրկված լինելու պայմաններում ընտրության անցկացումը նույն Սահմանադրական դատարանը սույն գործով կայացրած որոշմամբ որակել է սահմանադրական, որպիսի դիրքորոշումն ինձ համար խիստ անընդունելի է:

Իմ գնահատմամբ որպեսզի Սահմանադրական դատարանի որոշումները կատարվեն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, առաջին հերթին Սահմանադրական դատարանն ինքը պետք է առաջնորդվի իր իսկ որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումներով և սահմանադրական նորմերը մեկնաբանի ու կիրառի կայուն և միատեսակ կերպով: Նման պայմաններում Սահմանադրական դատարանը պատգամավորի անձեռնմխելիության հարցի վերաբերյալ սույն գործով պետք է արտահայտեր այն նույն իրավական դիրքորոշումը, որն արտահայտել էր 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՄԴՈ-1619 որոշմամբ, ինչի արդյունքում պետք է արձանագրեր, որ վիճարկվող որոշումն ընդունվել է Սահմանադրության 96-րդ հոդվածով նախատեսված պատ-

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ

գամավորի անձեռնմխելիության խախտման պայմաններում: Մինչդեռ Սահմանադրական դատարանն ըստ էության շեղվել է 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշման տրամաբանությունից՝ անտեսելով նաև այն հանգամանքը, որ Մխիթար Զաքարյանին և Արթուր Սարգսյանին վերաբերող քրեական գործերի շրջանակում դրսևորվող պրակտիկան իր 2021 թվականի դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշման պատճառաբանական մասում համարել էր Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների բովանդակությունից չբխող:

Վերոգրյալի հիման վրա գտնում եմ, որ 2021 թվականի օգոստոսի 2-ին տեղի ունեցած՝ Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացում փաստացիորեն չի ապահովվել Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի խախտմամբ կալանքի տակ գտնվող՝ Ազգային ժողովի նախագահի թեկնածուներ Մխիթար Զաքարյանի և Արթուր Սարգսյանի՝ պատգամավորների հարցերին պատասխանելու, ելույթով և եզրափակիչ ելույթով հանդես գալու իրավունքներն իրացնելու հնարավորությունը, բացի այդ, Ազգային ժողովի նախագահի թեկնածուների համար ապահովվել են անհավասար պայմաններ, ինչը հանգեցրել է Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի, 96-րդ հոդվածի 2-րդ մասի և 104-րդ հոդվածի 1-ին մասի խախտման:

3. Ինչ վերաբերում է սույն գործով ներկայացված դիմումի՝ Ազգային ժողովի նախագահի ընտրությունն ընդհատելուն և քվեարկությունը վերստին սկսելուն վերաբերող հիմքին, հարկ եմ համարում նշել, որ Ազգային ժողովի հաշվիչ հանձնախմբի նախագահին Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի նիստի ընթացքում՝ մինչև քվեարկությունը սկսելը, ներկայացրել է քվեարկության կարգը, այդ թվում՝ Ազգային ժողովի նախագահի ընտրության համար նախատեսված քվեաթերթիկը, որում նշված են Ազգային ժողովի նախագահի թեկնածուների անունները՝ Զաքարյան Մխիթար, Սահակյան Արթուր, Սիմոնյան Ալեն: Հայտարարվել է նաև, որ քվեարկությունն սկսվելու է 16:30-ին և տևելու է 45 րոպե՝ մինչև 17:15-ը: Նույն օրը՝ ժամը 17:10-ին, Ազգային ժողովի նիստում հաշվիչ հանձնախմբի նախագահը հայտարարել է, որ քվեարկությունն ընդհատվել է, քանի որ քվեաթերթիկներում ընդդիմադիր պատգամավորներից մեկի ազգանվան մեջ տեղի է ունեցել տառասխալ, ուստի կսկսվի նոր քվեարկություն (*հիմք՝ ի պատասխան Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի 01.12.2021թ. թիվ ՍԴԴ-96 գրության՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետի՝ 13.11.2021թ. Սահմանադրական դատարան մուտքագրված թիվ 1.13/5777-2021*

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

գրությանը կից ներկայացված՝ Ազգային ժողովի 02.08.2021թ. նիստի սղագրությունը, Ազգային ժողովի հաշվիչ հանձնախմբի 02.08.2021թ. թիվ 2, թիվ 2 Ա, թիվ 4 արձանագրությունները, ինչպես նաև Ազգային ժողովի հաշվիչ հանձնախմբի թիվ 3 արձանագրությունը):

Վերոգրյալի կապակցությամբ հարկ են համարում նշել, որ 2021 թվականի սեպտեմբերի 2-ի ՍԴԱՌ-183 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը որոշել էր գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով (հիմք՝ նաև 2021 թվականի սեպտեմբերի 2-ի աշխատակարգային նիստի թիվ 28 արձանագրություն):

Սահմանադրական դատարանը, քննության առնելով սույն գործով դիմող կողմի ներկայացուցչի՝ սույն գործի դատաքննությունը բանավոր ընթացակարգով անցկացնելու վերաբերյալ միջնորդությունը, 2022 թվականի հունվարի 18-ի ՍԴԱՌ-13 աշխատակարգային որոշմամբ որոշել էր այն բավարարել և սույն գործի դատաքննությունն անցկացնել բանավոր ընթացակարգով (հիմք՝ նաև 2022 թվականի հունվարի 18-ի աշխատակարգային նիստի թիվ 3 արձանագրություն):

Այնուհետև, Սահմանադրական դատարանը, նկատի ունենալով սույն գործի դատաքննության բանավոր ընթացակարգից գրավոր ընթացակարգի անցնելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի դատավորի առաջարկությունը և հաշվի առնելով, որ նշված գործի դատաքննությունը բանավոր ընթացակարգով անցկացնելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված հիմքերը վերացել են, 2022 թվականի մարտի 22-ի ՍԴԱՌ-61 աշխատակարգային որոշմամբ որոշել էր սույն գործով դատաքննության բանավոր ընթացակարգից անցնել գրավոր ընթացակարգի (հիմք՝ նաև 2022 թվականի մարտի 22-ի աշխատակարգային նիստի թիվ 12 արձանագրություն):

Բացի այդ, Սահմանադրական դատարանը, քննության առնելով սույն գործով պատասխանող կողմի՝ սույն գործի դատաքննությունը երկու շաբաթ ժամկետով հետաձգելու վերաբերյալ 2022 թվականի հունվարի 19-ի միջնորդությունը, 2022 թվականի հունվարի 20-ի ՍԴԱՌ-15 աշխատակարգային որոշմամբ որոշել էր սույն գործի քննության ժամկետը երկարաձգել, գործի բանավոր ընթացակարգով դատաքննությունը հետաձգել և նշանակել 2022 թվականի ապրիլի 5-ին (հիմք՝ նաև 2022 թվականի հունվարի 20-ի աշխատակարգային նիստի թիվ 4 արձանագրություն):

Փաստորեն, Սահմանադրական դատարանի վերը թվարկված գործողությունների արդյունքում հնարավորություն չեն ունեցել գործի դատաքննության բանավոր ընթացակարգի շրջանակում հարցեր տալ կողմերին,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

անհրաժեշտության դեպքում հանդես գալ դատական նիստին վկաներ (օրինակ՝ Ազգային ժողովի հաշվիչ հանձնախմբի նախագահին և անդամներին) հրավիրելու և լսելու առաջարկությամբ (որպիսի անձանց հարցաքննությունն իմ կարծիքով անհրաժեշտ էր), ինչն ինձ հնարավորություն կտար դիրքորոշում ձևավորել և արտահայտել դիմումի՝ Ազգային ժողովի նախագահի ընտրությունն ընդհատելուն և քվեարկությունը վերստին սկսելուն վերաբերող հիմքին առնչվող հանգամանքների՝ քննարկվող գործընթացի ընդունված որոշման սահմանադրականության վրա ազդեցության վերաբերյալ: Հետևաբար գործի դատաքննության բանավոր ընթացակարգից գրավոր ընթացակարգի անցնելու պայմաններում գրկված լինելով այդ հնարավորությունից՝ հնարավոր չեմ համարում որևէ դիրքորոշում արտահայտել դիմումի նշված հիմքի վերաբերյալ:

Այդուհանդերձ, հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքում ներկայացված պատճառաբանություններով, իմ գնահատմամբ, արդեն իսկ հիմնավորվում է 2021 թվականի օգոստոսի 2-ին տեղի ունեցած՝ Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացն այնպիսի էական խախտումներով անցկացնելը, որոնք հանգեցնում են Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի, 96-րդ հոդվածի 2-րդ մասի և 104-րդ հոդվածի 1-ին մասի խախտման: Ուստի Ազգային ժողովի նախագահի ընտրության գործընթացում քվեարկությունն ընդհատելուն և վերստին սկսելուն առնչվող հարցի քննարկումը չի կարող ազդել այդ գործընթացի արդյունքում ընդունված իրավական ակտի սահմանադրականության հարցի վերաբերյալ վերջնական եզրահանգման վրա, քանի որ այդ իրավական ակտը սույն հատուկ կարծիքի 1.1-2.2 կետերում ներկայացված խախտումների առկայության հետևանքով, իմ գնահատմամբ, արդեն իսկ չի համապատասխանում Սահմանադրությանը:

4. Ամփոփելով սույն հարուկ կարծիքում ներկայացված դիրքորոշումները՝ կարծում եմ, որ Ազգային ժողովի 2021 թվականի օգոստոսի 2-ի ԱԺՈՒ-01-Ա որոշումն անհրաժեշտ էր ճանաչել Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասին, 96-րդ հոդվածի 2-րդ մասին և 104-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«6» մայիսի 2022թ.

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՊՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ
ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» 2013
ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ԿՆՔՎԱԾ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղ. Երևան

3 մայիսի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության պետ Ա. Ղազարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կա-

ռավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բյուսելում կնքված համաձայնագրի կիրարկման արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2022 թվականի փետրվարի 10-ի N 132-Ա որոշմամբ «2021 թվականի հոկտեմբերի 29-ին Վարչավայում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բյուսելում կնքված համաձայնագրի կիրարկման արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2022 թվականի փետրվարի 14-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի փետրվարի 14-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բյուսելում կնքված համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) կիրարկման արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2021 թվականի հոկտեմբերի 29-ին Վարչավայում՝ Եվրոպական միության երկրներում առանց թույլտվության գտնվող ՀՀ քաղաքացիների վերադարձի, այդ թվում՝ հետընդունման (ռեադմիսիայի) համաձայնագրերի կիրարկման գործընթացն արդյունավետ իրականացնելու նպատակով:

2. Արձանագրությունը նախատեսում է Հայաստանի Հանրապետության և Լեհաստանի Հանրապետության միջև (այսուհետ՝ նաև Կողմեր) Համաձայնագրի կիրարկման վերաբերյալ մանրամասն կանոնակարգումներ:

3. Արձանագրությամբ սահմանվում է, որ օդային ճանապարհով կատարվող հետընդունումը և տարանցումը իրականացվելու է Հայաստանի Հանրապետությունում՝ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում, Լեհաստանի Հանրապետությունում՝ նրա տարածքում գտնվող բոլոր միջազգային օդանավակայանների սահմանային անցակետերում, իսկ սահմանային այլ անցակետեր օգտագործելը կհամաձայնեցվի իրավասու մարմինների միջև՝ փոխադարձ համաձայնությամբ:

Արձանագրության կատարման համար Հայաստանի Հանրապետության պատասխանատու մարմինն է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայությունը:

4. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

1) ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինը հետընդունման և տարանցման դիմումների ներկայացման, ինչպես նաև նման դիմումներին պատասխանելու և Համաձայնագրի կիրարկման հետ կապված այլ նամակագրության համար, ուղիղ համագործակցության ապահովման նպատակով, նշանակի կոնտակտային անձանց (հոդված 2, կետ 2),

2) ապահովել, որ հետընդունման և տարանցման դիմումները, պատասխանները և այլ հարակից հաղորդագրությունները ուղարկվեն Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի միջոցով (հոդված 3, կետեր 1 և 2),

3) երաշխավորել, որ Հայցվող լեհական Կողմի իրավասու մարմնի ճանաչած բոլոր այլ փաստաթղթերը կհամարվեն լրացուցիչ միջոցներ և փաստաթղթեր, որոնք անուղղակի ապացուցում են, որ երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման պայմանները բավարարված են (հոդված 5, կետ 1),

4) ապահովել, որ Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո՝ 14 օրացուցային օրվա ընթացքում, ՀՀ իրավասու մարմինը լեհական Կողմի իրավասու մարմնին գրավոր տրամադրի Համաձայնագրի 1-ին Հավելվածում նշված անձնագրերի և նույնականացման փաստաթղթերի ձևանմուշները (հոդված 5, կետ 3),

5) որպես Հայցող Կողմ՝ սխալմամբ կատարված հետընդունման դեպքում հետ ընդունել Հայցվող լեհական Կողմից հետ ընդունված անձին՝ Համաձայնագրով սահմանված ժամկետում և պայմաններով (հոդված 7, կետ 1),

6) Հայցվող Հայաստանի Հանրապետությանը ներկայացված բոլոր փաստաթղթերը վերադարձնել Հայցող լեհական Կողմին, իսկ եթե տվյալների և փաստաթղթերի փոխանցումը կատարվել է էլեկտրոնային եղանակով, ապա դրանք անմիջապես ջնջել (հոդված 7, կետ 2),

7) ապահովել, որ անձանց հետընդունումը և ուղեկցմամբ տարանցումը իրականացվի Արձանագրությամբ սահմանված կանոններով (հոդված 8),

8) ապահովել, որ Համաձայնագրի համաձայն՝ Հայցվող ՀՀ դիվանագիտական առաքելության կամ հյուպատոսական հիմնարկի լիազորված ներկայացուցիչն անցկացնի հարցազրույց Հայցող լեհական Կողմի իրավասու մարմնի հետ դեպք առ դեպք հիմքով՝ անհատականապես համաձայնեցված վայրում, ինչպես նաև երաշխավորել, որ ՀՀ ներկայացուցիչը հետընդունման ենթակա անձի հետ հարցազրույց վարելիս թույլ կտա, որ լեհական Կողմի իրավասու մարմնի ներկայացուցիչը ներկա լինի հարցազրույցին և հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան հարցազրույցից հետո 3 օրացուցային օրվա ընթացքում, Համաձայնագրով նախատեսված կարգով գրավոր տեղեկացնի Հայցող լեհական Կողմի և Հայցվող հայկական Կողմի իրավասու մարմիններին հարցազրույցի արդյունքների մասին՝ անձի քաղաքացիությունը հաստատելն անհնար լինելու դեպքում՝ նշելով նման անհնարինության պատճառը (հոդված 9, կետեր 1, 2 և 3),

9) որպես Հայցող Կողմ՝ եվրոյով փոխհատուցել Հայցվող լեհական Կողմի Համաձայնագրի համաձայն հետընդունման կամ տարանցման հետ կապված կատարած ծախսերը՝ Հայցվող լեհական Կողմի ներպետական օրենսդրության համաձայն կազմված՝ տվյալ ծախսերը մանրամասնող հաշիվ-ապրանքագիրն ստանալուց հետո՝ 30 օրացուցային օրվա ընթացքում (հոդված 10, կետ 1),

10) որպես Հայցվող Կողմ՝ ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինը, ներկայացնելով Արձանագրությունում նշված համապատասխան հաշվապահական փաստաթղթերը, տրամադրի տեղեկատվություն բանկային հաշվի վերաբերյալ և ցանկացած հավելյալ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է ծախսերի կարգավորման համար (հոդված 10, կետ 2):

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում կնքված համաձայնագրի կիրարկման արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

3 մայիսի 2022 թվականի
ՍԴՈ-1648

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1648 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում կնքված համաձայնագրի կիրարկման արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի մայիսի 3-ի ՍԴՈՒ-1648 որոշմամբ որոշել է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում կնքված համաձայնագրի կիրարկման արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի մայիսի 3-ի ՍԴՈՒ-1648 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրա-

1/1 (105/1) 2022
 ♦ ՏԵՂԵԿՎՈՐ
 ♦ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

գրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1648 որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում կնքված համաձայնագրի կիրարկման արձանագրությունում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով

դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

1/1 (105/1) 2022
 ♦ ՏԵՂԵՎՈՒԹՅՈՒՆ
 ♦ ՍԱԽՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները:

ՍԱՀՄԱՆԱՊՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՊՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ

Սահմանադրական դատարանն ղիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով ղիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով ղիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող ղիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են ղիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով ղիմում, որի վրա առկա չէ ղիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված ղիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով ղիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարանն ղիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա ղիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված ղիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված

լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՊՐԿՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում:

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի

քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱԽՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«3» մայիսի 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ԿԱՊԻ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԱԳԱ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 մայիսի 2022 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե.
Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ պաշտպանության նախա-
րարի տեղակալ Ա. Սարգսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մա-
սին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ռազմական նշա-
նակության արբանյակային կապի համակարգերի օգտագործման և
դրանց հետագա կատարելագործման մասին» համաձայնագրում ամրա-
գրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխա-
նության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՊԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ կառավարությունն իր՝ 2022 թվականի փետրվարի 23-ի N 222-Ա որոշմամբ հավանություն է տվել 2018 թվականի հունիսի 6-ին ստորագրված՝ «Ռազմական նշանակության արբանյակային կապի համակարգերի օգտագործման և դրանց հետագա կատարելագործման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի փետրվարի 28-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022 ՏԵՂԵԿՎՈՐ

1. «Ռազմական նշանակության արբանյակային կապի համակարգերի օգտագործման և դրանց հետագա կատարելագործման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի հունիսի 6-ին Ռուսաստանի Դաշնության Կզըլ քաղաքում՝ Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի կառավարման հուսալիության բարձրացման և դրանց միջև փոխգործակցության կապերի կազմակերպման նպատակով:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2020 թվականի հունվարի 1-ին և Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ցանկացած մասնակից պետության միանալու համար բաց է՝ միանալու մասին փաստաթուղթը ավանդապահին փոխանցելու միջոցով:

2. Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից Համաձայնագրի Կողմերի համար դադարեցվում է 1993 թվականի մարտի 12-ի «Ռազմական նշանակության արբանյակային կապի համակարգերի օգտագործման և դրանց հետագա կատարելագործման մասին» համաձայնագրի գործողությունը:

3. Կառավարության 2022 թվականի փետրվարի 23-ի N 222-Ա որոշման Հավելվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը միանում է Համաձայնագրին վերապահումով՝ պայմանով, որ Հայաստանի Հանրապետությունն առանձին որոշում կկայացնի «Ռազմական նշանակության

արբանյակային կապի համակարգերի օգտագործման և դրանց հետագա կատարելագործման մասին» համաձայնագրի դրույթների տարածման վերաբերյալ այն պետությունների նկատմամբ, որոնք կմիանան Համաձայնագրին:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

4.1. ապահովել Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ռազմական նշանակության արբանյակային կապի ինտեգրված համակարգի ստեղծումը՝ Հայաստանի Հանրապետության սեզմենտի ծավալման միջոցով (հոդված 4, պարբերություն 1),

4.2. Համաձայնագրի Կողմերին փոխադարձ օժանդակություն ցուցաբերել ռազմական նշանակության արբանյակային հաճախականային տիրույթում գործող և ծավալման համար նախատեսվող ռադիոէլեկտրոնային միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիության և միջազգային իրավական պաշտպանության համաձայնեցման հարցերում (հոդված 5),

4.3. տիեզերական համալիրների և ռազմական նշանակության արբանյակային կապի համակարգերի ու դրանց տարրերի կատարելագործմանն ուղղված գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքները զատել հատուկ կարևոր կարգի մեջ և ապահովել դրանց կատարումը գիտահետազոտական կազմակերպություններում և արդյունաբերական ձեռնարկություններում՝ ձևավորված համագործակցության հիման վրա, ինչպես նաև միասնական տեխնիկական քաղաքականության վարման համար մյուս Կողմերին ժամանակին փոխադարձ տեղեկացնել ռազմական նշանակության արբանյակային կապի համակարգերի կազմ-տեխնիկական կառուցվածքում պլանավորվող փոփոխությունների մասին և միջոցներ ձեռնարկել դրանց կատարելագործման ու զարգացման համար (հոդված 6),

4.4. Համաձայնագրի իրագործման ուղղությամբ մյուս Կողմերի հետ համագործակցել Համաձայնագրի մասնակից պետությունների պաշտպանության նախարարությունների միջոցով (հոդված 8, պարբերություն 1),

4.5. տեղեկության փոխանցումը և դրա պաշտպանությունն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (հոդված 9, պարբերություն 1),

4.6. միջպետական գաղտնիքների հետ առնչվելու կարգը և դրանց պաշտպանությունն իրականացնել Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում գործող գաղտնի տեղեկության պաշտպանության մասին միջազգային պայմանագրերին համապատասխան և

գաղտնի տեղեկության (պետական գաղտնիքների) փոխադարձ պաշտպանության (պահպանման) մասին երկկողմ պայմանագրերով (հոդված 9, պարբերություն 2),

4.7. չփոխանցել երրորդ կողմին Համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկությունն առանց այդ տեղեկությունը տրամադրած Կողմի գրավոր համաձայնության (հոդված 9, պարբերություն 3),

4.8. Համաձայնագրի իրագործման ընթացքում հայկական Կողմին տրված տեղեկությունը չօգտագործել ի վնաս այլ Կողմերի շահերի (հոդված 9, պարբերություն 4):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Ռազմական նշանակության արբանյակային կապի համակարգերի օգտագործման և դրանց հետագա կատարելագործման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

3 մայիսի 2022 թվականի
ՍԴՈ-1649

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՈԱԶՄԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ԿԱՊԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԱԳԱ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»
ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1649
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Ռեզոլուցիայի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի մայիսի 3-ի ՍԴՈ-1649 որոշմամբ որոշել է, որ «Ռեզոլուցիայի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի մայիսի 3-ի ՍԴՈ-1649 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված

ՍԱԳՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1/1 (105/1) 2022

պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1649 որոշմամբ «Ռազմական նշանակության արբանյակային կապի համակարգերի օգտագործման և դրանց հետագա կատարելագործման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.
- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.
- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.
- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնար-

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

րավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարանի դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարանի դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ են համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

Էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

Էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապա-

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍՄՅԱՆԱՐԴՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ցույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

սին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:


Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահ-

մանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«3» մայիսի 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ
ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 80-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ
ԵՎ 86-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

6 մայիսի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի պատգամավոր Ա. Վարդևանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Մ. Մոսինյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 9-րդ մասի և 86-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 7-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 10-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից:

Օրենսգրքի՝ «**Բարձրագույն դատական խորհրդի անդամներին ներկայացվող պահանջները**» վերտառությամբ 80-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է.

«9. Ազգային ժողովի կողմից որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամ չի կարող ընտրվել այն անձը, որն ունի սույն օրենսգրքով դատավոր նշանակվելու համար սահմանված որևէ սահմանափակում»:

Ընդունվելուց հետո Օրենսգրքի վիճարկվող հոդվածում փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել:

Օրենսգրքի՝ «**Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների դադարումը, դադարեցումը և կասեցումը**» վերտառությամբ 86-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարում են սույն օրենսգրքի 20-րդ գլխով սահմանված կանոններով»:

Օրենսգրքի 86-րդ հոդվածը լրացվել է 25.03.20 ՀՕ-197-Ն օրենքով: (25.03.20 ՀՕ-197-Ն օրենքն ունի անցումային դրույթ):

Գործի քննության առիթն Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի՝ 2021 թվականի սեպտեմբերի 17-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, վերլուծելով վիճարկվող և վերաբերելի իրավադրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը (այսուհետ՝ նաև Դիմող) նշում է, որ Սահմանադրության

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

166-րդ հոդվածի 8-րդ մասը դատավորների պաշտոնավարման վերին շեմ է նախատեսում մինչև 65 տարին լրանալը, մինչդեռ Բարձրագույն դատական խորհրդի որևէ անդամի տարիքային շեմի վերաբերյալ կարգավորում առկա չէ: Ըստ Դիմողի՝ հիշյալ մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ չնայած Բարձրագույն դատական խորհուրդը բաղկացած է դատավոր և իրավաբան գիտնական անդամներից, սակայն առանցքայինն այն է, որ Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանադիրն արձանագրել է. «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան»:

Դիմողը գտնում է, որ որպես դատարան հանդես գալու վավերապայմանները ենթադրում են նաև հենց Սահմանադրությամբ նախատեսված դատավորին ներկայացվող պահանջները: Ըստ Դիմողի՝ առնվազն պատահական չէ, որ հենց իբրև դատարան հանդես գալու համար է սահմանադիրը նախատեսել տարիքային շեմ, որն իր մեջ ունեցել է «կոնկրետ համաչափ և իրավաչափ նպատակ»:

Վերլուծելով սահմանադրական և օրենսդրական կարգավորումները՝ Դիմողը նշում է, որ Օրենսգրքի 160-րդ հոդվածը (սահմանում է տարիքային շեմի հետ կապված լիազորությունների դադարում) կիրառելի է ինչպես Դատավորների ընդհանուր ժողովի, այնպես էլ Ազգային ժողովի կողմից ընտրված անդամների նկատմամբ:

Օրենսգրքի 80-րդ հոդվածի 5-րդ մասի առնչությամբ Դիմողը նշում է, որ Ազգային ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի անդամ կարող է ընտրվել այն իրավաբան գիտնականը կամ հեղինակավոր իրավաբանը, որն ունի միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, ընտրական իրավունք, օժտված է բարձր մասնագիտական որակներով և ունի մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառություն: Միաժամանակ, ըստ Դիմողի, ի լրումն նշված չափանիշների՝ նույն հոդվածի 9-րդ մասը սահմանում է, որ Ազգային ժողովի կողմից որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամ չի կարող ընտրվել այն անձը, որն ունի սույն օրենսգրքով դատավոր նշանակվելու համար սահմանված որևէ սահմանափակում:

Դիմողի պնդմամբ դատավոր նշանակվելու համար սահմանափակումները սահմանված են Օրենսգրքի 97 և 112-րդ հոդվածներում, և պահանջներից յուրաքանչյուրի բացակայությունը, ըստ էության, անհնարին է դարձնում դատավորի պաշտոնավարումը:

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Դիմողի կարծիքով Օրենսգրքի 80-րդ հոդվածի 9-րդ մասը հղում է կատարում ընդհանուր առմամբ դատավորի համար սահմանված սահմանափակումներին, հետևաբար՝ դատավոր նշանակվելու, ներառյալ դատավորի թեկնածու համարվելու համար սահմանված սահմանափակումները հավասարապես կիրառելի են նաև տվյալ դեպքում:

Դիմողը գտնում է, որ նշված նորմի հետ համակարգորեն կապված է Օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասը, որը սահմանում է Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների դադարման դեպքերը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը հստակ սահմանում է, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարում են Օրենսգրքի 20-րդ գլխով սահմանված կանոններով: Դիմողի պնդմամբ այս հոդվածում չկա որևէ տարբերակում դատավոր հանդիսացող անդամների և իրավաբան գիտնական (հեղինակավոր իրավաբան) անդամների մասով, հետևաբար՝ լիազորությունների դադարման հիմքերը, կանոնները, ընթացակարգերը կիրառելի են նրանց նկատմամբ, և համաձայն Օրենսգրքի 20-րդ գլխում ներառված 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ դատավորի լիազորությունները, ի թիվս այլնի, դադարում են նաև, եթե լրացել է նրա 65 տարին:

Ըստ Դիմողի՝ նշված հոդվածների համակարգային վերլուծությունից և համադրումից հետևում է, որ Օրենսգրքի 160-րդ հոդվածը (որը սահմանում է տարիքային շեմի հետ կապված լիազորությունների դադարում) կիրառելի է ինչպես դատավորների ընդհանուր ժողովի, այնպես էլ Ազգային ժողովի կողմից ընտրված անդամների նկատմամբ:

Դիմողը նշում է, որ իրավական որոշակիության սկզբունքը, լինելով նաև իրավական կայունության երաշխիքներից մեկը, ուղղակիորեն փոխկապակցված է Սահմանադրության իրավական պետության սկզբունքի հետ և գործնականում, երբ ուղղակի անտեսվում է վիճարկվող «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 9-րդ մասը, այն առաջացնում է անհամապատասխանություն Սահմանադրության պահանջներին:

Ըստ Դիմողի՝ վիճարկվող նորմը *prima facie* որոշակիության խնդիր չի առաջացնում, սակայն բոլոր դեպքերում գործնականում դրա տարբերակված մեկնաբանումն արդեն իսկ փաստում է դրա հստակեցման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով, որ այն սահմանադրի կողմից պատվիրակված դրույթ է և բխում է Սահմանադրության 174-րդ հոդվածից:

Դիմողը, վկայակոչելով իրավական որոշակիության վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված մի շարք դիրքորոշումներ, գտնում է, որ պետք է բացահայտվի՝ արդյոք վիճարկվող նորմը

բավարար հստակությամբ և այնպիսի ձևակերպմամբ է ամրագրված, որ բացառում է տարբերակված մեկնաբանման հնարավորությունը և առաջացնում է անհրաժեշտություն նաև բացահայտելու առհասարակ դրա բովանդակությունը:

Դիմողը նշում է նաև, որ դատավոր անդամի և իրավաբան գիտնական անդամի միջև տարիքային շեմի առկայությունը մի դեպքում, իսկ մյուս դեպքում՝ դրա բացակայությունն առաջացնում է նաև խտրականության արգելքի ռիսկեր:

Դիմողի գնահատմամբ՝ Օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթը՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների դադարման մասով, վերաբերում է բոլոր անդամներին՝ դատավոր կամ ոչ դատավոր: Դիմողը գտնում է, որ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների տեսանկյունից և հենց դրա երաշխավորման նպատակով է նման կարգավորում նախատեսվել օրգանիկ օրենքում, և դրա ձևակերպումը թեև առերևույթ հստակ է, սակայն կրկին մեկնաբանվել է այնպես, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամներից մեկի տարիքի անհամապատասխանության դեպքում Բարձրագույն դատական խորհուրդն օբյեկտիվորեն ի վիճակի չլինի հանդես գալ որպես դատարան:

Դիմողը եզրահանգում է, որ սահմանադիրը Բարձրագույն դատական խորհրդի դատավոր հանդիսացող անդամների և ոչ դատավոր անդամների համար Սահմանադրության 174-րդ հոդվածում տարիքային շեմ չի նախատեսում, քանի որ Սահմանադրությունն ինքնաբավ փաստաթուղթ է և կարող է մեկնաբանվել ոչ թե մեկուսի, այլ ամբողջության մեջ, իսկ տարիքային շեմի հարցն արդեն իսկ կարգավորված է Սահմանադրության 166-րդ հոդվածով:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ Դիմողը եզրահանգում է, որ վիճարկվող նորմերն այնքանով, որքանով թույլատրում են որպես դատարան հանդես գալու սահմանադրական լիազորության շրջանակներում դատավորի տարիքային շեմին չհամապատասխանող անդամի մասնակցությունը, չեն համապատասխանում Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներին, ինչպես նաև 174 և 175-րդ հոդվածներին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ազգային ժողովը (այսուհետ՝ նաև Պատասխանող) վկայակոչելով Սահմանադրության և Օրենսգրքի վերաբերելի իրավակարգավորումները, արձանագրում է, որ դատավոր նշանակվելու սահմանափակումների սպառնիչ ցանկը թվարկված է Օրենսգրքի 112-րդ հոդվածում, որոնք տարածվում են նաև Ազգային ժողովի կողմից որպես Բարձրագույն դատական

1/1 (105/1) 2022
 ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ♦ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

խորհրդի անդամ ընտրվող անձի նկատմամբ, և նկատի ունենալով այն, որ տվյալ սահմանափակումների մեջ տարիքային շեմը նախատեսված չէ, ուստի, Պատասխանողի գնահատմամբ, նման սահմանափակում չի կարող կիրառվել խնդրո առարկա կարգավիճակ ունեցող անձանց նկատմամբ: Ավելին, Օրենսգրքի 97-րդ հոդվածը վերաբերում է դատավորի թեկնածուի հավակնորդին ներկայացվող պահանջներին, որոնք որևէ կերպ չեն կարող տարածվել Ազգային ժողովի կողմից ընտրվող Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ:

Վերլուծելով Օրենսգրքի 86-րդ հոդվածի իրավակարգավորումները՝ Պատասխանողը նշում է, որ հիշյալ հոդվածի 2-րդ մասը հղում է կատարում Օրենսգրքի 20-րդ գլխով սահմանված կանոններին, ընդ որում՝ նույն հոդվածի 1-ին մասում տարիքային շեմը՝ որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների դադարման հիմք նախատեսված չէ, իսկ Օրենսգրքի 160-րդ հոդվածում թվարկված են դատավորի լիազորությունների դադարման դեպքերը, որոնք վերաբերելի չեն Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամին:

Պատճառաբանելով, որ օրենսդիրը հստակորեն տարանջատել է «խորհրդի անդամ և դատավոր կատեգորիաները, ինչպես նաև լիազորությունների դադարման դեպքերը», Պատասխանողն այս մասով անհիմն է համարել դիմողի պնդումները:

Վկայակոչելով Սահմանադրական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշումը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առանձին վճիռներ՝ Պատասխանողը պնդում է. «... Սահմանադրությամբ և այլ օրենքներով, այդ թվում՝ Սահմանադրական օրենքով Բարձրագույն դատական խորհրդի համար նախատեսված են դատարաններին բնորոշ բավարար դատավարական երաշխիքներ: Որպես դատարան հանդես գալիս կարևորվում է Բարձրագույն դատական խորհրդի անդամների նշանակման կարգը, նրանց պաշտոնավարման ժամկետը, արտաքին ճնշումների դեմ երաշխիքների առկայությունը, այն հարցը, թե այն ընկալվում է որպես անկախ, ուստի Բարձրագույն դատական խորհրդի իրավաբան գիտնականի համար տարիքային վերին շեմը որևէ կերպ չի կարող մեկնաբանվել որպես դատարան հանդես գալու Բարձրագույն դատական խորհրդին ներկայացվող պահանջ»:

3. Գործի համար էական նշանակություն ունեցող հարցադրումները

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի լուծման համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1. արդյո՞ք Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետ՝ նաև ԲԴԽ) անդամի նշանակման և լիազորությունների դադարման հետ կապված իրավակարգավորումները համահունչ են ԲԴԽ կազմավորմանն ու գործունեությանը վերաբերող սահմանադրաիրավական դրույթներին և համապատասխանո՞ւմ են արդյո՞ք որոշակիության սահմանադրաիրավական պահանջներին.

2. արդյո՞ք այն հանգամանքը, որ ԲԴԽ-ն որոշակի դեպքերում հանդես է գալիս որպես դատարան, դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների արդյունավետ պաշտպանության անհրաժեշտությունից արդեն իսկ հետևում է, որ դատավորների համար Սահմանադրությամբ նախատեսված պաշտոնավարման առավելագույն տարիքը կիրառելի է նաև Ազգային ժողովի կողմից ընտրված ԲԴԽ անդամների նկատմամբ.

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը:

Սահմանադրության 174-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասն անդամից, որոնցից հինգին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող դատավորների կազմից, իսկ մյուս հինգին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Ընդ որում, վերջիններս ընտրվում են միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից:

Միևնույն ժամանակ Սահմանադրության վերոնշյալ դրույթը հստակ նշում է, որ Ազգային ժողովի կողմից ընտրված ԲԴԽ անդամը չի կարող լինել դատավոր: Այսինքն՝ սահմանադրական մակարդակում ԲԴԽ անդամների կարգավիճակները տարանջատվում են՝ դատավոր անդամների և դատավոր չհանդիսացող՝ իրավաբան գիտնական կամ այլ հեղինակավոր իրավաբան հանդիսացող անդամների:

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԲԴԽ անդամների վերաբերյալ տարբերակված մոտեցումն արտացոլվում է նաև նրանում, որ Սահմանադրության 174-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ԲԴԽ-ն իր կազմից Դատական օրենսգրքով սահմանված ժամկետով և կարգով ընտրում է խորհրդի նախագահ՝ հաջորդաբար դատավորների ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված անդամներից:

Հարկ է նշել նաև, որ Սահմանադրության 174-րդ հոդվածի 8-րդ մասին համապատասխան՝ ԲԴԽ կազմավորման մանրամասները սահմանվում են Դատական օրենսգրքով, ընդ որում, նույն հոդվածի 5-րդ մասն Ազգային ժողովի կողմից ընտրված ԲԴԽ անդամների համար անհամատեղելիության պահանջների սահմանման հայեցողությունը վերապահել է Ազգային ժողովին՝ լիազորելով վերջինիս որոշելու նախ անհամատեղելիության պահանջներ սահմանելու կամ չսահմանելու նպատակահարմարությունը, իսկ նման պայմաններ սահմանելու դեպքում՝ որոշելու դրանց ծավալը և բովանդակությունը: Այսինքն, սահմանադիրը չի բացառել իրավիճակներ, երբ Դատական օրենսգրքով չնախատեսվի որևէ անհամատեղելիության պահանջ Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամների համար, իսկ սահմանելու դեպքում պարտադիր չէ, որ այդ պահանջները լինեն նույնական դատավորների համար սահմանված սահմանափակումների հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ Սահմանադրության 173-րդ հոդվածի 3-րդ մասով ուղղակի շեշտվում է, որ Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամը չի կարող լինել դատավոր, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Բարձրագույն դատական խորհրդի կազմը և կազմավորման կարգը» վերտառությամբ հոդվածով Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամի համար սահմանված են բացառապես հետևյալ պահանջները.

- հանդիսանալ միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի,
- ունենալ ընտրական իրավունք,
- լինել իրավաբան գիտնական կամ այլ հեղինակավոր իրավաբան,
- օժտված լինել բարձր մասնագիտական որակներով,
- ունենալ մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառություն:

Սահմանադրաիրավական վերաբերելի կարգավորումները հիմք ընդունելով՝ օրենսդիրը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի «Բարձրագույն դատական խորհրդի անդամներին ներկայացվող պահանջները» վերտառությամբ 80-րդ հոդվածում Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամի համար նախա-

տեսել է, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամ չի կարող ընտրվել այն անձը, որն ունի «սույն օրենսգրքով դատավոր նշանակվելու համար սահմանված որևէ սահմանափակում»:

Վերոգրյալ հանգամանքը հաշվի առնելով՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ դատավոր նշանակվելու համար Օրենսգրքով նախատեսված սահմանափակումներին:

Համաձայն Օրենսգրքի 112-րդ հոդվածի՝ դատավոր չի կարող նշանակվել այն անձը՝

1) որը դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը մարված կամ հանված չէ,

2) որը դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար կամ ազատությունից զրկելու հետ կապված պատիժ է կրել՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից,

3) որն ունի դատավորի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն,

4) որը չի անցել պարտադիր զինվորական ծառայություն կամ այլընտրանքային ծառայություն կամ օրենքով նախատեսված կարգով չի ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից (եթե անձն արական սեռի է),

5) որը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ սնանկ, և սնանկության վարույթը չի ավարտվել,

6) որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում:

Մինևույն ժամանակ, նույն հոդվածի 1.1-ին մասով Հակակոռուպցիոն դատարանի դատավորի համար սահմանված են լրացուցիչ պահանջներ, մասնավորապես՝ Հակակոռուպցիոն դատարանի դատավոր չի կարող նշանակվել այն անձը՝

- որը, լինելով դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննիչ, օպերլիազոր, փաստաբան կամ նախկին դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննիչ, օպերլիազոր, փաստաբան վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից:

Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, որ Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամների նկատմամբ ևս կիրառելի են դատավորի թեկնածուի հավակնորդների համար նախատեսված պահանջները, ապա Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձ կատարել նաև այդ պահանջներին:

Այսպես՝ Օրենսգրքի 97-րդ հոդվածը նախատեսում է դատավորի թեկնածուի հավակնորդին ներկայացվող պահանջներ, համաձայն որոնց՝ «... Դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու համար որակավորման ստուգմանը կարող են մասնակցել **25-ից 60 տարեկան**, ընտրական իրավունք ունեցող անձինք, եթե՝

- 1) ունեն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.
- 2) Հայաստանի Հանրապետությունում ստացել են իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ համապատասխան աստիճան են ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որոնց ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով.

3) տիրապետում են հայերենին.

4) ունեն անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներից առնվազն մեկ՝ ստանդարտացված թեստային համակարգերով ստուգվող լեզվական գիտելիքների՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած համապատասխան մակարդակի իմացություն:

5) միայն իրավագիտության բակալավրի աստիճան ունենալու կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ձեռք բերած լինելու դեպքում ունեն առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն, իսկ իրավագիտության բակալավրի և իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան ունենալու կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան ունենալու կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ձեռք բերած լինելու դեպքում ունեն առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն.

6) առկա չեն դատավոր նշանակվելու՝ սույն օրենսգրքով նախատեսված սահմանափակումները»:

Նախ՝ անհրաժեշտ է նշել, որ վերոհիշյալ հոդվածի 6-րդ կետը հղում է կատարում դատավոր նշանակելու համար Օրենսգրքով նախատեսված սահմանափակումներին, մասնավորապես՝ Օրենսգրքի՝ «Դատավոր նշանակվելու սահմանափակումները» վերտառությամբ 112-րդ հոդվածին: Այսինքն՝ Օրենսգրքի խտակ տարանջատել է դատավորի թեկնածուների հավակնորդների նկատմամբ պահանջները և դատավոր նշանակվելու համար նախատեսված սահմանափակումները՝ դատավոր նշանակվելու համար նախատեսված սահմանափակումները ներառելով դատավորի թեկնածուների հավակնորդների համար սահմանված պահանջներում:

Երկրորդ՝ Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամի և դատավորի թեկնածուի հավակնորդի համար նախատեսված որոշ պահանջներ համընկնում են, մասնավորապես՝ ընտրական իրավունք ունենալը, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալը, իրավաբանի որակավորում ունենալը:

Երրորդ՝ դատավորի թեկնածուի հավակնորդի համար սահմանված են առավել նվազ պահանջներ, քան Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամի նկատմամբ: Մասնավորապես, մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառություն ունենալու պահանջ՝ Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամի համար՝ ի տարբերություն դատավորի թեկնածուի հավակնորդի համար նախատեսված պահանջների, այն է՝ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն՝ միայն իրավագիտության բակալավրի աստիճան կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ունեցող հավակնորդների, ինչպես նաև առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն՝ իրավագիտության բակալավրի և իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ունեցող հավակնորդների համար:

Չորրորդ՝ դատավորի թեկնածուների հավակնորդների համար սահմանված են պահանջներ, որոնք նախատեսված չեն Օրենսգրքի 112-րդ հոդվածով դատավորների համար նախատեսված սահմանափակումների շարքում: Մասնավորապես, 25-ից 60 տարեկան հանդիսանալը, անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներից առնվազն մեկին՝ ստանդարտացված թեստային համակարգերով ստուգվող լեզվական գիտելիքների՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած համապատասխան մակարդակի իմացությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում շեշտել, որ եթե Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամների նկատմամբ կիրառվեն Օրենսգրքի 97-րդ հոդվածով նախատեսված տարիքային սահմանափակումները, ապա 60 տարին լրացած անձինք հնարավորություն չեն ունենա ընտրվել ՀՀ ԲԴԽ անդամ: Մինչդեռ նման սահմանափակումներ գոյություն չունեն դատավորի կարգավիճակ ունեցող ԲԴԽ անդամների նկատմամբ, որոնք կարող են ընտրվել ԲԴԽ անդամ նաև 60 տարին լրանալուց հետո: Նման տարբերակված մոտեցումը չի կարող ունենալ որևէ իրավաչափ նպատակ:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ

Վերոգրյալից ելնելով՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատավորի թեկնածուի հավակնորդի համար նախատեսված պահանջներն Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամի նկատմամբ կիրառելի են միայն դատավոր նշանակվելու համար Օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների մասով:

4.2. Օրենսգրքի 86-րդ հոդվածը, որի՝ սույն գործով վիճարկվող 2-րդ մասի համաձայն՝ «Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարում են սույն օրենսգրքի 20-րդ գլխով սահմանված կանոններով», կարգավորում է ԲԴԽ անդամների լիազորությունների դադարման, դադարեցման և կասեցման հարաբերությունները:

Ակներև է, որ օրենսդրի կողմից հստակ տարանջատվել են ԲԴԽ անդամի լիազորությունների դադարման և դադարեցման **դեպքերը** և **կարգը**: Մասնավորապես, ԲԴԽ անդամի լիազորությունների դադարման դեպքերն սպառիչ կերպով ներկայացված են վերոհիշյալ հոդվածի 1-ին մասում: Դրանք են՝

- 1) լիազորությունների ժամկետն ավարտվելը.
- 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելը կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելը.
- 3) նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը կամ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցնելը.
- 4) նրան անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը.
- 5) նրա հրաժարականը.
- 6) նրա մահը.
- 7) դատավոր հանդիսանալու դեպքում՝ նրա լիազորությունների դադարեցումը կամ դադարումը:

Նույն հոդվածի 3-րդ մասում ևս սպառիչ կերպով նախատեսված են ԲԴԽ անդամների լիազորությունների դադարեցման դեպքերը:

Ընդ որում, եթե լիազորությունների **դադարեցման կարգի** վերաբերյալ իրավակարգավորումները նախատեսված են նույն հոդվածում, ապա լիազորությունների **դադարումը տեղի է ունենում Օրենսգրքի 20-րդ գլխով նախատեսված կանոններով**, այն է՝ դատավորի լիազորությունների դադարման իրավակարգավորումներով, որոնց հղում է կատարվում 86-րդ հոդվածի 2-րդ մասում:

Համաձայն Օրենսգրքի 20-րդ գլխում ներառված 160-րդ հոդվածի՝ դատավորի լիազորությունները դադարում են, եթե՝

1) նա հրաժարական է ներկայացնում.

2) լրացել է նրա 65 տարին.

3) նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու մասին դատարանի վճիռը մտել է օրինական ուժի մեջ.

4) նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ, կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով.

5) կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն.

6) նա մահացել է:

Վերոնշյալ հոդվածների իրավահամեմատական վերլուծության արդյունքում հարկ է նկատել, որ ԲԴԽ անդամի լիազորությունների դադարման 7 հիմքերից 5-ը նույնաբովանդակ են դատավորի լիազորությունների դադարման հիմքերի հետ: ԲԴԽ անդամի լիազորությունների դադարման մյուս երկու հիմքերը վերաբերում են մի դեպքում՝ լիազորությունների ժամկետի ավարտին, այսինքն՝ պաշտոնավարման հինգ տարին լրանալուն, մյուս դեպքում՝ որպես դատավոր լիազորությունների դադարեցմանը կամ դադարմանը:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ 65 տարին լրանալը որպես դատավորի լիազորությունների դադարման հիմք վերաբերելի է միայն ԲԴԽ դատավոր անդամին, քանի որ Օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը վերաբերում է միայն ԲԴԽ դատավոր անդամներին, իսկ 160-րդ հոդվածի 1-ին մասով՝ բացի 65 տարին լրանալու հանգամանքից դատավորի լիազորությունների դադարման որևէ նոր հիմք չի նախատեսվում: Այսինքն՝ Օրենսգրքի 160-րդ հոդվածին հղում կատարելն արդարացված է միայն ԲԴԽ դատավոր անդամների համար:

Այդ առումով՝ վիճարկվող դրույթում Օրենսգրքի 20-րդ գլխի կանոններին հղում կատարելով՝ Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամների լիազորությունների դադարման համար որևէ նոր հիմք չի սահմանվում: Համապատասխան գլխի կանոններով կարգավորվում են ԲԴԽ անդամի **լիազորությունների դադարման ընթացակարգային** հարցերը:

Հաշվի առնելով իրավական որոշակիության վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած մի շարք դիրքորոշումները՝ մասնավորապես այն, որ՝

- «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան

հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (13.05.2008թ. ՍԴՈ-753),

- « ... իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» (02.12.2014թ. ՍԴՈ-1176):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող դրույթները կանխատեսելի են, բավականաչափ հստակ ձևակերպված և չեն առաջացնում իրավական անորոշություն:

4.3. Հաշվի առնելով դիմողի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ որպես դատարան հանդես գալու հանգամանքն արդեն իսկ ենթադրում է, որ Ազգային ժողովի կողմից ընտրված ԲԴԽ անդամներին վերաբերելի են դատավորների համար Սահմանադրությամբ նախատեսված պահանջները, Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ Բարձրագույն դատական խորհրդի իրավական կարգավիճակին և վերջինիս կողմից որպես դատարան հանդես գալու հիմնախնդիրներին:

Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակը սահմանված է Սահմանադրության՝ «Դատարանները և Բարձրագույն դատական խորհուրդը» վերտառությամբ 7-րդ գլխում:

Համաձայն Սահմանադրության 163-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ: Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրաիրավական առաքելությունը դատարանների և դատավորների անկախության երաշխավորումն է: Իր գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար ԲԴԽ-ն օժտված է մի շարք լիազորություններով, այդ թվում՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և դատավորների լիազորությունները դադարեցնելու լիազորությամբ: Նշված հարցերը քննելիս, ինչպես նաև Օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:

Հաշվի առնելով դիմողի դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ԲԴԽ-ի՝ որպես դատարան հանդես գալու հանգամանքը դիտարկել արդար դատաքննության իրավունքի և դրա ապահովման համար առկա երաշխիքների պահպանման տեսանկյունից՝ հաշվի առնելով, մասնավորապես, հետևյալ նկատառումներն ու դիրքորոշումները.

Սահմանադրության՝ «Արդար դատաքննության իրավունքը» վերտառությամբ 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Արդար դատաքննության իրավունքը ենթադրում է ինչպես դատարանի դիմելու հնարավորությունը, այնպես էլ գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքը, ինչը նշանակում է, որ գործը հրապարակայնության սկզբունքի պահպանմամբ քննելու պահանջ ներկայացնելու հնարավորությունն արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրատարր է» (02.04.2019թ. ՍԴՈ-1452):

Բացի դրանից, Սահմանադրական դատարանն իր՝ 2017 թվականի դեկտեմբերի 5-ի ՍԴՈ-1393 որոշմամբ նշել է, որ «... ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջն է, ի թիվս արդար դատաքննության այլ երաշխիքների, դատաքննության իրականացումը կողմերի հավասարության պայմաններում և անկողմնակալ, անաչառ դատարանի կողմից»:

Մյուս կողմից, Սահմանադրական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշմամբ դիրքորոշում է արտահայտվել առ այն, որ « ... Ինչ վերաբերում է Բարձրագույն դատական խորհրդի գործունեության սկզբունքների և ընթացակարգերի տեսանկյունից առկա երաշխիքներին, ապա դրանց հիմնական ակունքը Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասն է, ըստ որի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան այն իմաստով, որ որպես դատարան հանդես եկող անկախ պետական մարմնի թե՛ ձևավորման, թե՛ գործունեության կարգը պետք է համապատասխանի դատարաններին բնորոշ համապատասխան հատկանիշներին»:

Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է. «Այսպիսով, ամփոփելով ամբողջ վերոգրյալը, մասնավորապես, Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունների, ձևավորման կարգի, գործունեության սկզբունքների վերաբերյալ վերլուծություններն ու մեջբերումները՝ Սահմա-

նադրական դատարանը գտնում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարան հանդես գալու դեպքերում Սահմանադրությամբ և այլ օրենքներով նախատեսված են դատարաններին բնորոշ այնպիսի դատավարական երաշխիքներ, ինչպիսիք են, մասնավորապես, բայց ոչ միայն, ողջամիտ ժամկետում գործի քննությունը, օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարությունը, դատական վարույթի հրապարակայնությունը, դատական ակտերի պարտադիրությունը, որոնք իրենց ամբողջության մեջ ուղղված են Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների իրացման ապահովմանը»:

Հարկ է նշել նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Դատարան) «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի վերաբերյալ, համաձայն որի՝ «1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ տրիբունալի կողմից ... լսումների իրավունք: ...», արտահայտել է մի շարք դիրքորոշումներ: Մասնավորապես, Դատարանը նշել է, որ «Այն մարմինը, որը չի դասակարգվում որպես պետության դատարաններից որևէ մեկը, կարող է, այնուամենայնիվ, 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակներով ներառվել «տրիբունալ» հասկացության մեջ՝ տվյալ եզրույթի նյութաիրավական իմաստով (**Sramek-ն ընդդեմ Ավստրիայի, § 36**):

«Դատարան» կամ «տրիբունալ» հասկացությունը բնութագրվում է տվյալ եզրույթի նյութաիրավական իմաստով՝ իր դատական գործառույթով, այն է՝ որոշակի հարցերին լուծում տալն իր իրավասության շրջանակներում՝ հիմնվելով օրենքի նորմերի վրա և սահմանված կարգով վարույթ իրականացնելուց հետո (**նույն տեղում, § 36, Cyprus-ն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], § 233**):

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակներին համահունչ պարտադիր չէ, որ «տրիբունալը» լինի տվյալ երկրի ստանդարտ դատական համակարգում ընդգրկված ընդհանուր իրավասության դատարան: Այն կարող է ստեղծվել այնպիսի կոնկրետ հարցերով զբաղվելու համար, որոնք կարող են պատշաճորեն կարգավորվել սովորական դատական համակարգից դուրս: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ համապատասխանությունն ապահովելու համար կարևոր են գործող երաշխիքները՝ թե՛ նյութական, թե՛ դատավարական (**Rolf Gustafson-ն ընդդեմ Շվեդիայի, § 45**):

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

«Տրիբունալը» պետք է բավարարի նաև մի շարք այլ պահանջներ. անկախություն, մասնավորապես՝ գործադիր իշխանությունից, անաչառություն, դրա անդամների համար սահմանված պաշտոնավարման ժամկետներ, դրա գործունեության կարգով ապահովվող երաշխիքներ, որոնց մի մասը շարադրված է 6-րդ հոդվածի 1-ին կետում (*Le Compte, Van Leuven and De Meyere-ն ընդդեմ Բելգիայի, § 55, Cyprus-ն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], § 233*):

Ինչ վերաբերում է անկախությունը գնահատելու չափորոշիչներին, «Երբ որոշվում է՝ արդյոք տվյալ մարմինը կարող է համարվել «անկախ», Դատարանը հաշվի է առնում, inter alia, հետևյալ չափորոշիչները (*Langborger-ն ընդդեմ Շվեդիայի, § 32, Kleyn-ը և այլք ընդդեմ Նիդեռլանդների [ՄՊ], § 190*)՝

- i. դրա անդամների նշանակման կարգը և
- ii. նրանց պաշտոնավարման ժամկետը,
- iii. արտաքին ճնշումներից պաշտպանության երաշխիքների առկայությունը, և
- iv. արդյոք այդ մարմինն օժտված է անկախության արտաքին հատկանիշներով»:

Հարկ է նշել, որ Դատարանը պաշտոնավարման որևէ կոնկրետ ժամկետ չի նախանշել որոշում կայացնող մարմնի անդամների համար, չնայած ընդհանուր առմամբ համարվում է, որ պաշտոնավարման ընթացքում նրանց անփոփոխելիությունը բխում է նրանց անկախության պահանջից:

Ինչ վերաբերում է Ազգային ժողովի ընտրած ԲԴԽ անդամի պաշտոնավարման առավելագույն տարիքին, ապա հարկ է նշել, որ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ի 40/32 և դեկտեմբերի 13-ի 40/146 բանաձևերով հավանության արժանացած «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքներով» նախատեսվել է, որ՝

«11. Դատավորների լիազորությունների ժամկետը, նրանց անկախությունը, անվտանգությունը, համապատասխան վարձատրությունը, ծառայության պայմանները, թոշակը և թոշակի գնալու տարիքը պետք է պատշաճ ձևով երաշխավորվեն օրենքով:

12. Նշանակված կամ ընտրված դատավորները լիազորությունների երաշխավորված ժամկետ ունեն մինչև պարտադիր թոշակի գնալը կամ լիազորությունների ժամկետի ավարտը, որտեղ այդպիսին հաստատված է»:

Այսինքն՝ դատավորների համար պաշտոնավարման տարիքն ապահովում է դատավորների անփոփոխելիության սկզբունքի իրագործումը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՏԵՂԵԿՎՈՐ ԴԱՏԱՐԱՆ

Այդ առումով առավելագույն տարիքը երաշխիք է, որ մինչև այդ ժամկետը որևէ մեկը չի կարող առանց օրինական հիմքերի դադարեցնել դատավորի պաշտոնավարումը: Ազգային ժողովի ընտրած ԲԴԽ անդամների համար նման երաշխիք է Սահմանադրությամբ նախատեսված պաշտոնավարման հնգամյա ժամկետը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ԲԴԽ-ի՝ որպես դատարան հանդես գալու օրենսդրական պահանջը չի ենթադրում դատավորների ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված ԲԴԽ անդամների կարգավիճակների նույնացում ամբողջ ծավալով, քանի որ նախ՝ դա չի բխում ԲԴԽ-ի սահմանադրաիրավական կարգավիճակից, բացի դրանից, արդարադատության իրականացման կարևոր նշանակություն ունեցող՝ ԲԴԽ անդամի անփոփոխելիության սկզբունքը հստակ արտացոլված է Սահմանադրական մակարդակում որպես ԲԴԽ անդամի պաշտոնավարման ժամկետ: Իսկ դատավորի պաշտոնավարման 65 տարին լրանալը դատավորի կարգավիճակ ունեցող ԲԴԽ անդամի լիազորությունների դադարման հիմք է այն պատճառով, որ Սահմանադրությամբ նախատեսվել է ԲԴԽ կազմում 5 դատավոր անդամի առկայության անհրաժեշտությունը:

Նշված համատեքստում, ԲԴԽ դատավոր անդամների մասով նախատեսված են լիազորությունների դադարման երկու առանձին հիմքեր՝ տարիքը (65 տարին) լրանալը և պաշտոնավարման ժամկետը (5 տարին) լրանալը, մինչդեռ Ազգային ժողովի կողմից ընտրած ԲԴԽ անդամների մասով նախատեսված է լիազորությունների դադարման մեկ հիմք՝ պաշտոնավարման ժամկետը (5 տարին) լրանալը: Ընդ որում, եթե պաշտոնավարման ժամկետը նույնական է ԲԴԽ դատավոր և իրավաբան գիտնական կամ այլ հեղինակավոր իրավաբան անդամների համար, ապա 65 տարին լրանալու պահանջը սահմանադիրը նախատեսել է միայն դատավորի համար:

Հարկ է նշել նաև, որ Բարձրագույն դատական խորհուրդը՝ որպես դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորող պետական մարմին, իրականացնում է բազմաթիվ լիազորություններ, որոնք չեն առնչվում արդարադատության իրականացման հետ: Որպես դատարան ԲԴԽ-ն հանդես է գալիս միայն Սահմանադրությամբ և Դատական օրենսգրքով նախատեսված դեպքերում:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև անդրադառնալ սահմանադրի կողմից դատավորի և ԲԴԽ անդամի կարգավիճակների և նրանց ներկայացվող պահանջների վերաբերյալ կարգավորումների տարբերակման առկայության հարցադրմանը:

Ինչպես դատավորի, այնպես էլ Բարձրագույն դատական խորհրդի անդամի համար ամրագրված սահմանադրական և օրենսդրական կարգավորումներն առաջին հերթին նպատակ են հետապնդում ապահովել դատավորի և ԲԴԽ անդամի գործունեության այնպիսի կարևոր սկզբունքի երաշխավորումը, ինչպիսին անկախությունն է: Հենց վերոնշյալ երաշխիքի ապահովման նկատառումներից ելնելով է սահմանադիրը դատավորի համար նախատեսել պաշտոնավարման հնարավորություն մինչև 65 տարին լրանալը: Պաշտոնավարման նման ժամկետի նախատեսումը կոչված է երաշխավորելու դատավորի անկախությունն ու արդարադատություն իրականացնելիս որևէ հանգամանքով կաշկանդված չլինելը:

Այս առումով հարկ է վկայակոչել Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec (2010)12 հանձնարարականի 49 և 50-րդ պարբերություններով ամրագրված գաղափարներն առ այն, որ՝ «Պաշտոնավարման և անփոփոխելիության երաշխիքները դատավորների անկախության առանցքային տարրերն են: Այսինքն՝ դատավորների պաշտոնավարումը պետք է երաշխավորված լինի մինչև կենսաթոշակային տարիքի հասնելը, եթե այդպիսին սահմանված է: Դատավորների պաշտոնավարման ժամկետները պետք է նախատեսվեն օրենքով»:

Ինչ վերաբերում է ԲԴԽ անդամի պաշտոնավարման ժամկետին, ապա այս առումով սահմանադիրն առաջնորդվել է լիազորությունների ժամկետը հինգ տարի սահմանելու սկզբունքով, որից հետևում է, որ սահմանադիրը ԲԴԽ անդամի գործունեության անկախությունը երաշխավորել է հստակ ժամկետի ամրագրմամբ, ինչպես նաև հետագայում վերընտրվելու արգելքով, որպիսի հանգամանքները ևս կոչված են երաշխավորելու ԲԴԽ անդամի անկախությունն ու գործունեություն իրականացնելիս կողմնակի հանգամանքներով կաշկանդված չլինելու կարևոր երաշխիքների ապահովումը:

Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ԲԴԽ՝ դատավոր և իրավաբան գիտնական անդամների նկատմամբ կիրառվող տարիքային շեմի և այդ հիմքով լիազորությունների դադարման վերաբերյալ կարգավորումները չեն կարող նույնանալ, քանի որ դատավոր անդամի նկատմամբ շարունակվում են կիրառելի լինել Սահմանադրությամբ և Դատական օրենսգրքով ամրագրված կարգավորումները, մասնավորապես՝ մինչև 65 տարին պաշտոնավարելու հնարավորությունը: Ուստի՝ ԲԴԽ դատավոր անդամի 65 տարին լրանալու պարագայում վերջինս չի կարող շարունակել պաշտոնավարել որպես ԲԴԽ անդամ ոչ թե այն հիմքով, որ ԲԴԽ անդամի համար առկա է պաշտոնավարման նման տարիքային սահմանափակում, այլ բացառապես

այն պատճառով, որ ԲԴԽ դատավոր անդամը դարձել է ԲԴԽ անդամ հենց դատավոր լինելու հիմքով, ուստի՝ երբ վերանում է այդ հիմքը, ուղղակիորեն վերանում է նաև որպես ԲԴԽ անդամ պաշտոնավարելու հնարավորությունը: Սակայն նույն մոտեցումը հնարավոր չէ տարածել Ազգային ժողովի կողմից ընտրված անդամի նկատմամբ, քանի որ սահմանադիրը ԲԴԽ այդ անդամի նկատմամբ չի տարածել դատավորի համար սահմանված պաշտոնավարման տարիքային շեմը, ուստի՝ սահմանադրի կամքի բացահայտումը հստակ ցույց է տալիս, որ պաշտոնավարման 65 տարվա շեմը վերաբերում է բացառապես դատավորներին և կոչված է երաշխավորելու վերջիններիս գործունեության անկախությունը:

Որչ փերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սահմանադիրը դատավորի համար նախատեսել է մինչև 65 տարին լրանալը պաշտոնավարելու հնարավորություն, իսկ ԲԴԽ անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանափակել է հինգ տարով, որպիսի կարգավորումներից հետևում է, որ սահմանադիրը հստակ տարանջատել է այս երկու սուբյեկտները և նրաց պաշտոնավարման ժամկետները՝ մի դեպքում դա պայմանավորելով կոնկրետ տարիքով, մյուս դեպքում՝ հստակ ժամկետով, ուստի՝ այս երկու կարգավորումների նույնացումն ու այդ ձևով մեկնաբանումն անթույլատրելի է և չի բխում սահմանադրի կամքից:

Վերոգրյալից ելնելով՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրական կարգավորումներին համապատասխանության տեսանկյունից Ազգային ժողովի ընտրած ԲԴԽ անդամի 65 տարին լրանալը հիմք չէ լիազորությունների դադարման համար և չի խոչընդոտում Բարձրագույն դատական խորհրդին սահմանված դեպքերում հանդես գալու որպես դատարան:

4.4. Ինչ վերաբերում է դիմողի ներկայացրած դիրքորոշմանն առ այն, որ դատավոր անդամի և Ազգային ժողովի ընտրած անդամի միջև տարիքային շեմի առկայությունը մի դեպքում, իսկ մյուս դեպքում՝ դրա բացակայությունը առաջացնում են «խտրականության արգելքի ռիսկեր», հարկ է նշել, որ ԲԴԽ-ի կազմում դատավոր անդամների և Ազգային ժողովի ընտրած անդամների առկայության պահանջն ունի, նախևառաջ, սահմանադրական ամրագրում (Սահմանադրության 174-րդ հոդված), ընդ որում՝ հենց Սահմանադրությամբ են ամրագրվում ինչպես դատավոր, այնպես էլ Ազգային ժողովի ընտրած անդամներին ներկայացվող պահանջները, որոնք իրենց մասնավորեցումն են ստացել նաև օրենսդրական կարգավորման շրջանակներում:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Բացի դրանից, անդրադառնալով Ազգային ժողովի կողմից ընտրված ԲԴԽ անդամի համար պաշտոնավարման առավելագույն տարիք սահմանված չլինելու հանգամանքին՝ ԲԴԽ դատավոր անդամի համար պաշտոնավարման սահմանափակման համեմատությամբ, խտրական վերաբերմունքի վերաբերյալ դիմողի պնդումներին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 29-րդ հոդվածը, ամրագրելով խտրականության արգելքի սկզբունքը, սահմանում է. «խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

Ըստ էության, Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված են այն հիմքերը, որոնցով պայմանավորված տարբերակված մոտեցում ցուցաբերելն արգելվում է: Սահմանադրության 29-րդ հոդվածով պաշտպանվող հիմքի առկայության հարցը պարզելիս Սահմանադրական դատարանը հաշվի է առնում, որ դիմողը բարձրացնում է հանրային ծառայության իրավահարաբերություններում պետական նույն մարմնի՝ ԲԴԽ անդամների ընտրության և պաշտոնավարման տարբեր կարգավիճակով պայմանավորված օրենսդրի կողմից տարբերակված մոտեցման հարց: Այսինքն՝ օրենսդրի դրսևորած տարբերակված մոտեցումը պայմանավորված է տարբեր կարգավիճակ ունեցող անձանց պաշտոնի նշանակման հանգամանքով:

Սահմանադրության 29-րդ հոդվածում թվարկված են խտրականության սահմանադրական արգելքով պաշտպանված հիմքերը, որոնք ունեն հստակ և որոշակի բովանդակություն, բացառությամբ նույն հոդվածում պաշտպանվող հիմքերի թվարկման համար օգտագործված «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ» ձևակերպմանը, որը, ի տարբերություն պաշտպանվող հիմքերի մնացած մասի, ոչ սպառիչ ցանկ է նախատեսում:

Այդուամենայնիվ, թեպետ «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ» ձևակերպումը խտրականության արգելքով պաշտպանվող ոչ սպառիչ ցանկ է նախատեսում, այն խիստ որոշակիորեն սահմանում է այդ ցանկով հնարավոր հիմքերի բնույթը, որոնք պետք է լինեն «անձնական» կամ «սոցիալական»: Այս կապակցությամբ ԲԴԽ անդամների՝ Ազգային ժողովի կամ դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրվելու և որպես դատավոր կամ որպես իրավաբան գիտնական կամ

այլ հեղինակավոր իրավաբան պաշտոնավարելու հանգամանքը Սահմանադրության 29-րդ հոդվածի լույսի ներքո չի կարող գնահատվել որպես «անձնական» կամ «սոցիալական»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 170-րդ հոդվածը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 9-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:
2. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:
3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

6 մայիսի 2022 թվականի
ՍԴՈ-1650

1/1 (105/1) 2022
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
552

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի
«ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 80-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ
86-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»
ԳՈՐԾՈՎ ՍԴՈ-1650 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում ենք հատուկ կարծիք՝ Սահմանադրական դատարանի 2022 թվականի մայիսի 6-ի «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 9-րդ մասի և 86-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՍԴՈ-1650 որոշման (այսուհետ՝ ՍԴՈ-1650 որոշում) վերաբերյալ:

1. Հաշվի առնելով, որ Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական առաքելությունը դատարանների և դատավորների անկախության երաշխավորումն է, մեծապես կարևորվում է Բարձրագույն դատական խորհրդի **օրինական կազմով** գործելու հանգամանքը: Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման սահմանադրորեն ամրագրված կարգի ցանկացած խախտում հարցականի տակ կդնի Բարձրագույն դատական խորհրդի լեգիտիմությունը՝ դրանով իսկ վտանգելով դատարանների և դատավորների անկախության երաշխավորումը:

2. Վերահաստատում ենք մեր այն դիրքորոշումը, որ **Սահմանադրության գերակայությունն ապահովվում է, երբ սահմանադրական արդարադատություն իրականացնելիս լեգիտիմ կազմով գործող Սահմանադրական դատարանը, լինելով անկախ և ենթարկվելով միայն Սահմանադրությանը, ընդունում է այնպիսի որոշումներ և եզրակացություններ, որոնցում առնվազն բացառվում են սահմանադրական արժեքների, սկզբունքների, նորմերի, ինստիտուտների նենգափոխումը և իմաստազրկումը, ապահովվում են Սահմանադրության**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ

միասնականությունը, ինքնաբավությունը և կայունությունը: Սահմանադրական դատարանի որոշումներով և եզրակացություններով պետք է ամբողջ ծավալով լուծվեն քննության առարկա սահմանադրական վեճերը, այլ ոչ հատվածական և աղճատված՝ հարուցելով նոր կամ խորացնելով առկա խնդիրները: Բացի դրանից, Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները պետք է կայացվեն օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննության արդյունքում, որոշումների և եզրակացությունների կառուցվածքային ամբողջականությունը և տրամաբանական միասնականությունը խաթարված չլինեն, զերծ լինեն ներքին հակասություններից, երկիմաստ, սխալ ու խեղաթյուրող դիրքորոշումներից: Պակաս կարևոր չէ, որ այդ որոշումները և եզրակացությունները չլինեն անհարկի ծանրաբեռնված, այդ թվում՝ պարզունակ դատողություններով, ոչ վերաբերելի, ընդհանրական վերլուծություններով և դիրքորոշումների վկայակոչումներով:

3. Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով սույն գործով Սահմանադրական դատարանի մոտեցումներն ու եզրահանգումները՝ ՍԴՈ-1650 որոշումը հիմնավոր, հետևաբար՝ ընդունելի չենք համարում: Այսպես՝

Սահմանադրական դատարանը սույն գործով բարձրացված սահմանադրական վեճի շրջանակներում ՍԴՈ-1650 որոշման մեջ, մեր կարծիքով, պետք է անդրադառնար հետևյալ հարցերին.

1) արդյո՞ք Բարձրագույն դատական խորհուրդը Սահմանադրության իմաստով դատարան է, և արդյո՞ք որպես դատարան հանդես գալու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի անդամներն իրականացնում են արդարադատություն (հանդես են գալիս որպես դատավոր),

2) եթե 1-ին հարցի պատասխանը դրական է, ապա կարո՞ղ է արդյոք նույն դատարանի դատավորների համար նախատեսվել տարբեր պահանջներ, այդ թվում՝ սովորական պայմաններում (չպայմանավորված անցումային դրույթներով՝ կապված դատավորին տրվող երաշխիքների, օրինակ, անփոփոխելիության հետ),

3) արդյո՞ք Սահմանադրությունը նախատեսում է առանձին պահանջներ Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների համար, և արդյո՞ք դրանց մեջ ներառված է պաշտոնավարման տարիքը:

Վերոհիշյալ հարցերի շրջանակներում դատավորի պաշտոնավարման տարիք և/կամ այլ պահանջներ նախատեսող դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման առումով Սահմանադրական դատարանը պետք է անդրադառնար նաև «Հայաստանի Հանրա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

պետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Դատական օրենսգիրք) համակարգային փոխկապակցված դրույթներին վերաբերող հարցերին, մասնավորապես.

1) արդյո՞ք Դատական օրենսգրքում առկա են վիճարկվող իրավակարգավորումներին ուղղակիորեն հակասող դրույթներ,

2) արդյո՞ք Սահմանադրությամբ դատավորի պաշտոնավարման համար նախատեսված պահանջներն իրացված են այնպես, որ օրենքի բացի արդյունքում չառաջանա հակասահմանադրական կիրառություն:

ՄԴՈ-1650 որոշմամբ վերոհիշյալ հարցերի մի մասին ընդհանրապես անդրադարձ չի կատարվել, իսկ առանձին հարցերի վերաբերյալ չեն արտահայտվել հստակ ու ամբողջական իրավական դիրքորոշումներ:

4. Սահմանադրության «Դատարանները» վերտառությամբ 163-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ»:

Ըստ վերոհիշյալ կարգավորման՝ **ինստիտուցիոնալ առումով** Բարձրագույն դատական խորհուրդը չի համարվում դատարան: Հաշվի առնելով նաև, որ Բարձրագույն դատական խորհուրդը սահմանադրական մարմին է, այն որևէ պարագայում չի կարող համարվել օրենքով նախատեսված դեպքում ստեղծված մասնագիտացված դատարան:

Միևնույն ժամանակ, Սահմանադրության «Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները» վերտառությամբ 175-րդ հոդվածը սահմանում է, որ «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան» (2-րդ մաս):

Սույն գործով բարձրացված սահմանադրական վեճի լուծման համար էական էր բացահայտել վերոհիշյալ սահմանադրական դրույթում «**հանդես է գալիս որպես դատարան**» եզրույթի սահմանադրական բովանդակությունը, մասնավորապես, այն առումով, թե նման սահմանումը բավարա՞ր է արդյոք Սահմանադրության կարգավորմամբ **դատարան չհամարվող սահմանադրական մարմնի** կողմից արդարադատություն իրականացնելու համար:

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Նշված հարցի պատասխանի առումով հարկ է անդրադառնալ Սահմանադրության «Արդարադատության իրականացումը» վերտառությամբ 162-րդ հոդվածի կարգավորմանը, համաձայն որի՝

«1. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքների համապատասխան:

2. Արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է»¹:

Վերոհիշյալ կարգավորման սահմանադրական բովանդակությունից բխում է, որ՝

ա) բացի դատարաններից, արգելվում է որևէ այլ մարմնի իրականացնելու արդարադատություն՝ լինի այն քրեական, քաղաքացիական, վարչական թե սահմանադրական՝ դրանով իսկ երաշխավորելով յուրաքանչյուրի համար օրինական, հիմնավորված, պատճառաբանված արդար դատական ակտեր,

բ) եթե որևէ մարմին իրավաչափորեն՝ սահմանադրորեն պատվիրակված դեպքերում, իրականացնում է արդարադատություն, ապա այն դատարան է, որի կազմի անդամները չեն կարող հանդես չգալ որպես դատավոր,

գ) արգելվում է արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն:

Այսպիսով, անհրաժեշտ էր պարզել, Բարձրագույն դատական խորհուրդն արդյո՞ք որևէ դեպքում իրականացնում է (իրավասու է իրականացնել) արդարադատություն, և եթե պատասխանը դրական է, ապա դրանից եզրահանգումն այն է, որ Սահմանադրության իմաստով Բարձրագույն դատական խորհուրդը դատարան է:

Այս համատեքստում անհրաժեշտ էր նաև, որ ՍԴԴ-1650 որոշմամբ բացահայտվեր, արտահայտվեր հստակ և ամբողջական իրավական դիրքորոշում «արդարադատության իրականացում» սահմանադրական եզրույթի վերաբերյալ: Ընդամին՝ սույն գործով բարձրացված սահմանադրական վեճի շրջանակներում այն անհրաժեշտ էր կատարել՝ հաշվի առնելով նաև, որ Սահմանադրության 162-րդ հոդվածով չի տրվել «արդարադատության իրականացում» սահմանադրական եզրույթի բովանդակային ողջ ծավալը (ինչպես վերը նշվեց հիշյալ հոդվածով կանոնակարգվում են արդարադատություն իրականացնող սուբյեկտային շրջանա-

¹ Նույնարժանակ դրույթ սահմանված է նաև Դատական օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասով:

կի, արդարադատություն իրականացնելու սահմանադրաիրավական հիմքերի և դրան որևէ միջամտության արգելքի հարցերը), ինչպես նաև նկատի ունենալով, որ Սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումներով ամբողջությամբ չի մեկնաբանել «արդարադատության իրականացում» սահմանադրական եզրույթի սահմանադրական բովանդակությունը և որպես այդպիսին անդրադարձել է միայն դրա որոշ տարրերին:

«Արդարադատության իրականացում» եզրույթի բովանդակության անդրադարձ կատարվել է դոկտրինալ մեկնաբանություններով: Մենք համակարծիք ենք, որ արդարադատությունը Սահմանադրությամբ ամրագրված պետական գործունեության հատուկ տեսակ է, որն իրականացնում է միայն դատարանը՝ դատական համապարտադիր որոշումների օրինականությունը, արդարացիությունը, հիմնավորվածությունն ապահովող օրենքով սահմանված պահանջների ու կարգի խստագույն պահպանմամբ, համապատասխան դատավարական ձևերով և ուղղված է սահմանադրական, վարչական, քրեական, քաղաքացիական գործեր քննելուն և լուծելուն: Այսպիսով, արդարադատությունը՝ որպես դատարանների բացառիկ լիազորություն, համարվում է դատական իշխանության իրականացման եղանակը, միջոցը: Մենք համակարծիք ենք նաև, որ արդարադատության իրականացումը դատարանների մենաշնորհն է և չի կարող դրվել որևէ այլ մարմնի վրա, իրականացվում է միայն դատավարության (սահմանադրական, քաղաքացիական, քրեական, վարչական) օրենքով սահմանված կարգով և դատավարական որոշակի ձևերով: Արդարադատության իրականացման ձևը դատական նիստն է, որին մասնակցում են գործի ելքով շահագրգիռ անձինք և նրանց ներկայացուցիչները¹:

Սահմանադրական դատարանն իր՝ 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշումներ Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական կարգավիճակի, Բարձրագույն դատական խորհրդի ձևավորման կարգի, գործունեության սկզբունքների ու ընթացակարգերի առանձին հարցերի վերաբերյալ: Մասնավորապես, Սահմանադրական դատարանն ամրագրել է. «Ինչ վերաբերում է Բարձրագույն դատական խորհրդի գործունեության սկզբունքների և ընթացակարգերի տեսանկյունից առկա երաշխիքներին, ապա դրանց հիմնական ակունքը Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասն է, ըստ որի՝ դատավորին կարգապահական պատասխանատվու-

¹ Տես՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան 2010թ., «Իրավունք», էջ 897 և 899

թյան ենթարկելու վերաբերյալ հարց քննարկելու, ինչպես նաև Դատական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս **որպես դատարան** այն իմաստով, որ որպես դատարան հանդես եկող անկախ պետական մարմնի թե՛ ձևավորման, թե՛ գործունեության կարգը պետք է համապատասխանի դատարաններին բնորոշ համապատասխան հատկանիշներին:

(...) Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարան հանդես գալու դեպքերում Սահմանադրությամբ և այլ օրենքներով նախատեսված են դատարաններին բնորոշ այնպիսի դատավարական երաշխիքներ, ինչպիսիք են, մասնավորապես, բայց ոչ միայն, ողջամիտ ժամկետում գործի քննությունը, օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարությունը, դատական վարույթի հրապարակայնությունը, դատական ակտերի պարտադիրությունը, որոնք իրենց ամբողջության մեջ ուղղված են Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների իրացման ապահովմանը:

(...) հաշվի առնելով Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական կարգավիճակը, դրա ձևավորման կարգի, ինչպես նաև գործունեության սկզբունքների առկայությունը՝ **Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումների դատական կարգով բողոքարկման հնարավորություն չնախատեսելը բխում է առկա սահմանադրական իրավակարգավորումներից և չի խախտում անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները»:**

Այսպիսով, Սահմանադրության վերաբերելի դրույթների վերլուծությունից բխում է, որ որպես դատարան հանդես գալու դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդն իրականացնում է արդարադատություն, հետևաբար՝ դատարան է, նրա անդամները հանդես են գալիս որպես դատավորներ, որոնք այդ առումով չունեն (չեն կարող ունենալ) որևէ տարբերակվող կարգավիճակ: Այս համատեքստում նաև շեշտադրման ենթակա է, որ Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամները, ի մասնավորի՝ Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարան հանդես գալու դեպքերում, չեն ներկայացնում այն ատյանի դատարանին, որի դատավոր են հանդիսացել Բարձրագույն դատական խորհրդի անդամ ընտրվելու ժամանակ:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Ավելին, հարկ է նշել, որ Բարձրագույն դատական խորհուրդը որպես դատարան հանդես գալու դեպքերում, թե՛ օրենսդրությամբ և թե՛ գործնականում, մասնավորապես, երբ դատավարական գործընթացը կարգավորված չէ Դատական օրենսգրքով, ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի նորմերով, հրավիրում է դատական նիստեր, այդ նիստերին Բարձրագույն դատական խորհրդի **բոլոր** անդամները, անկախ իրենց ընտրվելու կարգից, մասնակցում են դատավորի պատմունձանով, Բարձրագույն դատական խորհրդի ընդունած որոշումները, բացառությամբ Դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքի, ստորագրում են նիստին ներկա **բոլոր** անդամները, վերջիններս կարող են ներկայացնել հատուկ կարծիքներ և այլն:

Հարկ է նաև նշել, որ Սահմանադրական դատարանի իրավակիրառ պրակտիկայի համաձայն՝ անհատական դիմումների հիման վրա (Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ) գործերը քննության ընդունելիս և որոշումներ կայացնելիս Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարան հանդես գալու դեպքերում կայացրած որոշումները համարվում են որպես դատարանի վերջնական ակտեր, որոնք ընդունվել են արդարադատության իրականացման արդյունքում:

5. Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյո՞ք կարող է նույն դատարանի դատավորների համար նախատեսվել տարբեր պահանջներ, այդ թվում՝ սովորական պայմաններում (չպայմանավորված անցումային դրույթներով՝ կապված դատավորին տրվող երաշխիքների, օրինակ, անփոփոխելիության հետ), ապա պետք է նշել, որ դատավորի կարգավիճակը սահմանող առաջնային նորմը Սահմանադրության «Դատավորի կարգավիճակը» վերտառությամբ 164-րդ հոդվածն է: Հատկանշական է, որ նշված հոդվածը վերաբերվում է ինչպես Սահմանադրական դատարանի դատավորներին, այնպես էլ այլ դատարանների դատավորներին (անկախ նրանից, որ առկա են որոշակի տարբերություններ): Այսինքն՝ սահմանադրական մոտեցումն այն է, որ բոլոր դատավորներն ունեն նույն կարգավիճակը, բացառությամբ, եթե կա հատուկ կարգավորում, ինչի մասին առանձին ամրագրված է Սահմանադրության մեջ: Նույն մոտեցումն է դրսևորվել նաև դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջների (165-րդ հոդված), դատավորների ընտրության և նշանակման կարգի (166-րդ հոդված) առումներով: Մինևնույն ժամանակ, հաջորդող հոդվածներով հատուկ կարգավորումներ կան Սահմանադրական

դատարանի, Վճռաբեկ դատարանի, վերաքննիչ դատարանների, Բարձրագույն դատական խորհրդի մասով:

Այսինքն՝ սահմանադրական լուծումները հետևյալն են. նախ սահմանվում են կարգավորումներ, որոնք վերաբերելի են բոլոր դատավորներին և բոլոր դատարաններին, իսկ երբ որևէ դատարան ունի հատուկ կարգավորում, ապա այդ մասին հաջորդիվ սահմանվում է նաև առանձին:

Սահմանադրության «Դատավորների ընտրության և նշանակման կարգը» վերտառությամբ 166-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Դատավորները պաշտոնավարում են մինչև վաթսուներեք, իսկ Սահմանադրական դատարանի դատավորները՝ մինչև յոթանասուն տարին լրանալը»:

Այսպիսով, Սահմանադրությունը Սահմանադրական դատարանի դատավորներից բացի մնացած բոլոր դատավորների, ներառյալ՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամների պաշտոնավարման համար սահմանել է առավելագույն տարիքային շեմ՝ վաթսուներեք տարի:

Բարձրագույն դատական խորհուրդը Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում հանդես է գալիս որպես դատարան՝ իրականացնելով արդարադատություն (ավելին, ի մասնավորի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, վերջնական են, ենթակա չեն բողոքարկման):

Վերոշարադրյալի հիման վրա գտնում ենք, որ սույն գործով վիճարկվող դրույթները սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց են, և Բարձրագույն դատական խորհրդի բոլոր անդամները կարող են պաշտոնավարել մինչև իրենց վաթսուներեք տարին լրանալը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«12» մայիսի 2022թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022 ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ

ՄԱՅԻՍԻ 6-Ի՝ «ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 80-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 86-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԴՈ-1650 ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, 2022 թվականի մայիսի 6-ին դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 9-րդ մասի և 86-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, ՍԴՈ-1650 որոշմամբ որոշել է.

«1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 9-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

(...):

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում եմ հատուկ կարծիք Սահմանադրական դատարանի 2022 թվականի մայիսի 6-ի ՍԴՈ-1650 որոշման (այսուհետ՝ ՍԴՈ-1650 որոշում) պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի դատավորների մեծամասնության մոտեցումներից տարբերվող հետևյալ դիրքորոշումները.

1. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգա-

1/1 (105/1) 2022
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

մանքները Սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրական դատարանը կաշկանդված չէ սահմանադրական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, բացատրություններով, միջնորդություններով, առաջարկություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

Սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-1650 որոշման 3-րդ կետում սահմանադրաիրավական վեճի լուծման համար պարզման ենթակա հանգամանքների շրջանակում անդրադարձել է, մասնավորապես, այն հարցադրումներին, թե Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամի նշանակման և լիազորությունների դադարման հետ կապված իրավակարգավորումները համահունչ են արդյոք նույն խորհրդի կազմավորմանն ու գործունեությանը վերաբերող սահմանադրաիրավական դրույթներին, և դատավորների համար Սահմանադրությամբ նախատեսված պաշտոնավարման առավելագույն տարիքը Սահմանադրության 175-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումների համատեքստում արդյո՞ք կիրառելի է Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների նկատմամբ:

Սակայն կարծում եմ, որ սույն գործով բարձրացված սահմանադրական վեճի լուծման նպատակով առանցքային կարևորություն պետք է ունենար Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես անկախ պետական մարմնի (Սահմանադրություն, հոդվ. 173) և որպես դատարանի (Սահմանադրություն, հոդվ. 175, մաս 2) սահմանադրական կարգավիճակի քննության առարկա տարրերի՝ լիազորությունների, կազմակերպման ու գործունեության առանձնահատկությունների վերլուծությանը և այդ մարմնի կազմավորման ու գործունեության ինստիտուցիոնալ նշանակության հարցերի պարզումը:

Միաժամանակ, հիշյալ հարցի կապակցությամբ Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական կարգավիճակի երկակի նշանակությամբ պայմանավորված անհրաժեշտ էր պարզել՝

մի կողմից՝ Սահմանադրության «Դատարանները և Բարձրագույն դատական խորհուրդը» վերտառությամբ 7-րդ գլխի 162-րդ (Արդարադատության իրականացումը), 163-րդ (Դատարանները) և 164-րդ (Դատավորի կարգավիճակը) հոդվածները և սահմանադրական այդ նորմերի պահանջները «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում (այսուհետ՝ Սահմանա-

դրական օրենք) որոշակիացված կարգավորումները վերաբերելի՞ են արդյոք Բարձրագույն դատական խորհրդին որպես դատարան հանդես գալու դեպքում, հետևաբար՝ համադրելի՞ են դառնում դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամ դատավորների և Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների պաշտոնավարման տարիքին վերաբերող պահանջները,

մյուս կողմից՝ Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես անկախ պետական մարմնի և Սահմանադրությամբ նախատեսված՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (հոդվ. 194, մաս 1), Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (հոդվ. 195, մաս 1), Հաշվեքննիչ պալատի (հոդվ. 198, մաս 1) և պետական անկախ այլ մարմինների անդամների պաշտոնավարման տարիքը կարգավորող նորմերի բացակայության պայմաններում համադրելի՞ են արդյոք Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների պաշտոնավարման տարիքին վերաբերող պահանջները:

Հիշյալ հարցադրումների շրջանակներում Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամի կարգավիճակը կարգավորող դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման տեսանկյունից Սահմանադրական դատարանը պետք է անդրադառնար նաև նշված անձանց պաշտոնավարման տարիքին առնչվող օրենսդրական կարգավորումների բացի խնդրին և, մասնավորապես, այդ բացի ազդեցության գնահատմանը սահմանադրականության տեսանկյունից: Սակայն ՍԴՈ-1650 որոշմամբ վերոհիշյալ հարցերին մասնակիորեն է անդրադարձ կատարվել:

2. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ էր նաև քննարկել վիճելի իրավակարգավորումների սահմանադրականության հարցը Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչ՝ իրավական որոշակիության սկզբունքի ապահովման տեսանկյունից, որը որպես իրավունքի գերակայության ապահովման առանցքային երաշխիք կանխորոշում է օրենքների որակական այնպիսի հատկանիշներով օժտվածություն, ինչպիսիք են հստակությունը, կանխատեսելիությունն ու մատչելիությունը:

Այսպես՝ Սահմանադրական օրենքի վիճելի 80-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրության 174-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի անդամ կարող է ընտրվել այն իրավաբան գիտնականը կամ

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

այն հեղինակավոր իրավաբանը, որն ունի միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, ընտրական իրավունք, օժտված է բարձր մասնագիտական որակներով և ունի մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառություն:

Միաժամանակ, նույն հոդվածի վիճարկվող 9-րդ մասը սահմանում է, որ Ազգային ժողովի կողմից որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամ չի կարող ընտրվել այն անձը, որն ունի նույն օրենսգրքով դատավոր նշանակվելու համար սահմանված որևէ սահմանափակում:

Այսինքն՝ ի լրումն Ազգային ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի անդամի ընտրության համար նախատեսված սահմանադրական պահանջների՝ Սահմանադրական օրենքը զուգահեռ սահմանում է լրացուցիչ չափանիշներ՝ այդ թվում դատավոր նշանակվելու համար սահմանված սահմանափակումների ձևով:

Այսպես՝ Սահմանադրական օրենքի՝ «**Դատավոր նշանակվելու սահմանափակումները**» վերտառությամբ 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Դատավոր չի կարող նշանակվել այն անձը՝

1) որը դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը մարված կամ հանված չէ:

2) որը դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար կամ ազատությունից զրկելու հետ կապված պարիժ է կրել՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից:

3) որն ունի դատավորի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն:

4) որը չի անցել պարտադիր զինվորական ծառայություն կամ այլ-ընտանրանքային ծառայություն կամ օրենքով նախատեսված կարգով չի ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից (եթե անձն արական սեռի է):

5) որը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ սնանկ, և սնանկության վարույթը չի ավարտվել:

6) որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում:

(....)»:

Իսկ «Դատավորի թեկնածուի հավակնորդին ներկայացվող պահանջները» վերտառությամբ 97-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է:

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՎՄԱՆ ԴԱՏԱՐՈՎՄԱՆ 1/1 (105/1) 2022

«1. Դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվելու համար որակավորման ստուգմանը կարող են մասնակցել 25-ից 60 տարեկան, ընտրական իրավունք ունեցող անձինք, եթե՝

1) ունեն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.

2) Հայաստանի Հանրապետությունում ստացել են իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ համապատասխան աստիճան են ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որոնց ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով.

3) տիրապետում են հայերենին.

4) ունեն անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներից առնվազն մեկ՝ ստանդարտացված թեստային համակարգերով ստուգվող լեզվական գիտելիքների՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած համապատասխան մակարդակի իմացություն:

5) միայն իրավագիտության բակալավրի աստիճան ունենալու կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ձեռք բերած լինելու դեպքում ունեն առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն, իսկ իրավագիտության բակալավրի և իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան ունենալու կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան ունենալու կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ձեռք բերած լինելու դեպքում ունեն առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն.

6) առկա չեն դատավոր նշանակվելու՝ սույն օրենսգրքով նախատեսված սահմանափակումները:

Չնայած այն հանգամանքին, որ ՍԴՈ-1650 որոշման 4.1-րդ կետում Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ՝ «(...) դատավորի թեկնածուի հավակնորդի համար նախատեսված պահանջներն Ազգային ժողովի կողմից ընտրվող ԲԴԽ անդամի նկատմամբ կիրառելի են միայն դատավոր նշանակվելու համար Օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների մասով», այդուհանդերձ, հիշատակված կարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ դատավորի թեկնածուին առաջադրվող պահանջը՝ իր բովանդակային ու գործառնական նշանակությամբ, ինքնին ընկալվում է միա-

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱՂՈՂՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 565

Ժամանակ որպես դատավոր նշանակվելու համար սահմանափակում, ուստի կարծում եմ, որ Սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի վիճարկվող 9-րդ մասի կարգավորման համատեքստում դատավորի համար սահմանված սահմանափակումները և դատավորի թեկնածուին առաջադրվող պահանջները հավասարապես վերաբերելի են դառնում Ազգային ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի անդամ ընտրելու համար:

Այսպիսով, Սահմանադրական օրենքի հիշատակված կարգավորումներից հետևում է, որ վիճարկվող 80-րդ հոդվածի 9-րդ մասը չի բխում Սահմանադրության 174-րդ հոդվածի 3-րդ մասի տրամաբանությունից և իրավական որոշակիության տեսանկյունից ձևակերպված է ոչ բավարար ճշգրտությամբ ու հստակությամբ, ինչով պայմանավորված՝ Ազգային ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի անդամ ընտրվելու և այդ անդամի պաշտոնավարելու վերաբերյալ դրույթներն իրավակիրառ պրակտիկայում կարող են հանգեցնել տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության:

Հենց այս հանգամանքների բացահայտման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Սահմանադրական դատարանը պետք է բացահայտեր Բարձրագույն դատական խորհրդի ու նրա անդամի իրավական կարգավիճակի քննության առարկա տարրերի սահմանադրաիրավական բովանդակությունը և միայն դրա համատեքստում գնահատեր վիճարկվող նորմերի սահմանադրականությունը:

3. Սահմանադրության հիշատակված 174 և 175-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից նաև հետևում է, որ Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների պաշտոնավարման տարիքին վերաբերող սահմանադրական լուծումներն իրենց արտահայտումը պետք է ունենային Սահմանադրական օրենքում:

Ակնհայտ է, որ կարող է խոսք լինել քննության առարկային անմիջականորեն առնչվող օրենսդրական բացի մասին, քանի որ Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամին վերաբերող իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրերից մեկի՝ պաշտոնավարման տարիքի սահմանումը բացակայում է, ինչի հետևանքով ուղղակիորեն կարող է վտանգվել ոչ միայն Բարձրագույն դատական խորհրդի իրավաչափ գործունեությունը, այլև վերջինիս սահմանադրական գործառույթի՝ դատարանների և դատավորների անկախության երաշխավորումը:

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐՈՎՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Միաժամանակ, կարծում եմ, որ Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնավարման տարիքին վերաբերող օրենքի բացը, այնուհետև վիճարկվող նորմերի բովանդակությամբ այդ բացի հետևանքով պայմանավորված իրավական անորոշության առկայությունն իրավակիրառական պրակտիկայում իրենց հերթին կարող են հանգեցնել այդ նորմերի երկիմաստ մեկնաբանությունների:

Ելնելով առանց տարիքի պահանջի սահմանման, Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնավարման իրավակիրառ պրակտիկայից և այդ խնդրի կապակցությամբ առկա օրենսդրական բացի հաղթահարման անհրաժեշտությունից՝ գտնում եմ, որ այդ հարաբերությունների ամբողջական կարգավորված լինելը և դրանց բնականոն իրագործումը կարող էին իրականացվել միայն Սահմանադրական օրենքի համապատասխան դրույթները համակարգելու ու հստակեցնելու արդյունքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 9-րդ մասը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամի սահմանադրաիրավական կարգավիճակի տարրեր սահմանող կարգավորումները խնդրահարույց են, ինչը նաև նշանակում է, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի համապատասխան դրույթները համակարգման ու հստակեցման կարիք ունեն:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ

«13» մայիսի 2022թ.

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՐԿՄԱՆ
ԲԱԶԱՅԻ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄԸ ԵՎ ՇԱՀՈՒՅԹՆԵՐԻ
ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ԱՌՆԶՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԲԱԶՄԱԿՈՂՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղ. Երևան

31 մայիսի 2022 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե.
Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Պողոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի հունիսի 7-ին ստորագրված՝ «Հարկման բազայի խեղաթյուրումը և շահույթների տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրերին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ

կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ կառավարությունն իր՝ 2022 թվականի մարտի 24-ի N 361-Ա որոշմամբ հավանություն է տվել 2017 թվականի հունիսի 7-ին ստորագրված՝ «Հարկման բազայի խեղաթյուրումը և շահույթների տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրերին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիան վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և այդ կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի մարտի 28-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ կոնվենցիան, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հարկման բազայի խեղաթյուրումը և շահույթների տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրերին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրվել է 2016 թվականի նոյեմբերի 24-ին Փարիզում Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հարկման բազայի քայքայումը և շահույթների տեղափոխումը ծրագրի (այսուհետ՝ BEPS ծրագիր) անդամ հանդիսացող երկրների կողմից՝ (Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է 2017 թվականի հունիսի 7-ին) կրկնակի հարկման համաձայնագրերում առկա խնդիրների կարգավորման նպատակով, որոնք վերաբերում են ռեզիդենտության որոշման կանոնների, մշտական հաստատության ձևավորման սկզբունքների հստակեցմանը, փոխկապակցված կազմակերպությունների հայտնաբերմանը, համաձայնագրերի դրույթների տարընկալման արդյունքում կրկնակի հարկման դեպքերի բացառմանը, իրավասու մարմինների միջև վեճերի կարգավորման ընթացակարգերի դյուրինացմանը:

2. Դիմումին կից ներկայացված Կոնվենցիան վավերացնելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հիմնավորման մեջ և Կոնվենցիայի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ տեղեկանքում նշված է, որ Կոնվենցիայի մշակումը հանդի-

սանում է BEPS ծրագրի 15-րդ գործողությունը, որի կիրառությունը թույլ կտա Կոնվենցիան ստորագրած բոլոր երկրների հարկ վճարողների համար սահմանել կրկնակի հարկման համաձայնագրերի մի շարք դրույթների կիրառման միասնական մոտեցումներ, ինչն էլ հարկումից խուսափելը, կանխելը և հարկեր չվճարելու դեմ պայքարը կդարձնի ավելի արդյունավետ:

3. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Կոնվենցիայով փոփոխվում են եկամտի նկատմամբ հարկերի (անկախ այն հանգամանքից՝ այլ հարկեր կարգավորվում են, թե՛ ոչ) գծով կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ համաձայնագրերը (այսուհետ՝ Կարգավորող հարկային համաձայնագիր) (հոդվ. 1 և հոդվ. 2, կետ 1, ենթակետ «ա»):

4. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության սկզբունքով ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

4.1. Կարգավորող հարկային համաձայնագրի նպատակներով այն սուբյեկտի կողմից կամ այն կարգավորման միջոցով ստացված եկամուտը, որը Հայաստանի Հանրապետության հարկային օրենքով ընկալվում է որպես ամբողջովին կամ մասնակի ֆինանսապես թափանցիկ, համարել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի եկամուտ, սակայն միայն այնքանով, որքանով եկամուտը Հայաստանի Հանրապետության կողմից հարկման նպատակներով ընկալվում է որպես Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի եկամուտ (հոդվ. 3, կետ 1),

4.2. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետը (այնպես, ինչպես այն կարող է փոփոխվել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 3-րդ կետով) կիրառել Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթների փոխարեն կամ դրանց բացակայության դեպքում այնքանով, որքանով դրանք անդրադառնում են այն հարցին, թե արդյոք այն սուբյեկտների կողմից կամ կարգավորումների միջոցով ստացված եկամուտը, որոնք երկու Պայմանավորվող երկրներից որևէ մեկի (ընդհանուր կանոնի միջոցով կամ որոշակի փաստական հանգամանքների և սուբյեկտների կամ կարգավորումների տեսակների առնչությամբ վարվելակերպը մանրամասն սահմանելու միջոցով) հարկային օրենքով ընկալվում են որպես ֆինանսապես թափանցիկ, համարվում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի եկամուտ, թե՛ ոչ (հոդվ. 3, կետ 4),

4.3. Եթե Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթների պատճառով անհատ չհանդիսացող անձը մեկից ավելի Պայմանավորվող երկրների ռեզիդենտ է, ապահովել որ Հայաստանի Հանրապետության

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ 1/1 (105/1) 2022

իրավասու մարմինները մյուս կողմի իրավասու մարմինների հետ ջանքեր գործադրեն՝ փոխադարձ համաձայնությամբ որոշելու, թե որ Պայմանավորվող երկրի ռեզիդենտ է համարվելու այդ անձը Կարգավորող հարկային համաձայնագրի նպատակներով՝ հաշվի առնելով դրա արդյունավետ կառավարման վայրը, ինկորպորացված կամ այլ կերպ կազմավորված լինելու վայրը և համապատասխան այլ գործոններ (հոդվ. 4, կետ 1),

4.4. Կարգավորող հարկային համաձայնագիրը փոփոխել այնպես, որ նախաբանի տեքստում ներառվի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված տեքստը՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված պայմանով (հոդվ. 6, կետեր 1 և 2),

4.5. Հնայած Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին՝ Կարգավորող հարկային համաձայնագրով սահմանված արտոնությունը չշնորհել եկամտի կամ կապիտալի տարրի նկատմամբ, եթե հաշվի առնելով բոլոր համապատասխան փաստերն ու հանգամանքները՝ հիմքեր կան եզրակացնելու, որ այդ արտոնությունն ստանալն այդ արտոնությանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանգեցրած ցանկացած պայմանավորվածության կամ գործարքի գլխավոր նպատակներից մեկն էր, եթե չի հաստատվել, որ այդպիսի հանգամանքներում այդ արտոնությունը շնորհելը համապատասխան կլիներ Կարգավորող հարկային համաձայնագրի համապատասխան դրույթների առարկային և նպատակներին. վերոհիշյալ դրույթը կիրառել Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքում (հոդված 7, կետեր 1 և 2),

4.6. Կարգավորող հարկային համաձայնագրի Պայմանավորվող երկրի ռեզիդենտին, անկախ նրանից՝ որակավորված անձ է, թե՛ ոչ, տալ Կարգավորող հարկային համաձայնագրի արտոնությունների իրավունք՝ Հայաստանի Հանրապետությունից ստացած եկամտի տարրի մասով, եթե ռեզիդենտը նշված առաջին Պայմանավորվող երկրում ներգրավված է ակտիվ բիզնես գործունեության մեջ, և Հայաստանի Հանրապետությունից ստացած եկամուտն առաջանում է այդ գործունեությունից կամ առնչվում է դրան. արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթների նպատակներով «ակտիվ բիզնես գործունեություն» եզրույթը չի ներառում Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 10-րդ կետի «ա» ենթակետում շարադրված գործունեությունները կամ դրանց որևէ համակցություն (հոդվ. 7, կետ 10, ենթակետ «ա»),

4.7. Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթները, որոնց համաձայն մի Պայմանավորվող երկրի ռեզիդենտ ընկերության կողմից վճարվող շահաբաժիններն ազատվում են հարկից, կամ նվազեցվում է

դրույքաչափը, որով այդ շահաբաժինները կարող են հարկվել՝ պայմանով, որ փաստացի սեփականատերը կամ ստացողը լինի ընկերություն, որը մյուս Պայմանավորվող երկրի ռեզիդենտ է, և որը տիրապետում, տնօրինում կամ վերահսկում է շահաբաժիններ վճարող ընկերության կապիտալի, բաժնեմասերի, բաժնետոմսերի, ձայնի իրավունքի, քվեարկելու իրավունքի կամ սեփականության իրավունք ենթադրող այլ համանման իրավունքների որոշակի մասից ավելին, կիրառել միայն այն դեպքում, երբ այդ դրույթներով սահմանված՝ սեփականության իրավունքին առնչվող պայմանները գործում են 365-օրյա ժամկետում, որը ներառում է շահաբաժինները վճարելու օրը (այդ ժամկետը հաշվարկելու նպատակով հաշվի չեն առնվում սեփականության իրավունքին առնչվող փոփոխությունները, որոնք կարող են ուղղակիորեն կապված լինել բաժնեմասերը տնօրինող կամ շահաբաժինները վճարող ընկերության ընդհանուր վերակազմակերպման հետ, ինչպես, օրինակ՝ միաձուլման կամ բաժանման ձևով վերակազմակերպման դեպքում) (հոդվ. 8, կետ 1),

4.8. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին հարկելու իրավունքը սահմանափակելու նպատակով Հարկային համաձայնագրերի կիրառման մասով ապահովել Կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված դրույթների կատարումը (հոդվ. 11),

4.9. այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունը ՀՀ ձեռնարկության շահույթի մեջ ներառում և համապատասխանաբար հարկում է այնպիսի շահույթներ, որոնց մասով մյուս Պայմանավորվող երկրի ձեռնարկությունից հարկեր են գանձվել այդ մյուս Պայմանավորվող երկրում, և այդպիսով ներառված շահույթներն այնպիսի շահույթներ են, որոնք Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունը կունենար, եթե երկու ձեռնարկությունների միջև հարաբերությունները լինեին այնպիսին, ինչպիսիք լինում են անկախ ձեռնարկությունների միջև, ապա համապատասխան ճշգրտումներ կատարել այդ շահույթների մասով Հայաստանի Հանրապետության տարածքում գանձված հարկի գումարում (հոդվ. 17, կետ 1),

4.10. Կոնվենցիայի 17-րդ հոդվածի 1-ին կետը կիրառել այն դրույթի փոխարեն կամ բացակայության դեպքում, որով սահմանվում է, որ Պայմանավորվող երկիրը պարտավոր է համապատասխան ճշգրտումներ կատարել իր ձեռնարկության շահույթների մասով իր տարածքում գանձված հարկի գումարում, եթե մյուս Պայմանավորվող երկիրն այդ շահույթը ներառում է այդ մյուս Պայմանավորվող երկրի ձեռնարկության շահույթներում և համապատասխանաբար հարկում է այդ շահույթները, և այդպիսով ներառված շահույթներն այնպիսի շահույթներ

են, որոնք այդ մյուս Պայմանավորվող երկրի ձեռնարկությունը կունենար, եթե երկու ձեռնարկությունների միջև լինեին այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք լինում են անկախ ձեռնարկությունների միջև (հոդվ. 17, կետ 2),

4.11. Կոնվենցիայի 28-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ չկատարել Կոնվենցիայի մասով որևէ վերապահում՝ բացի այն վերապահումներից, որոնք ուղղակիորեն թույլատրվում են Կոնվենցիայի 28-րդ հոդվածի 1-ին կետով (հոդվ. 28, կետ 1) և այլն:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա Կոնվենցիային մասնակից երկրների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2017 թվականի հունիսի 7-ին ստորագրված՝ «Հարկման բազայի խեղաթյուրումը և շահույթների տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրերին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

31 մայիսի 2022 թվականի
ՍԴՈ-1651

1/1 (105/1) 2022
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶՄՅԻ
ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄԸ ԵՎ ՇԱՀՈՒՅԹՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ
ԿԱՆԽԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ
ԱՌՆԶՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»
ԲԱԶՄԱԿՈՂՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»
ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ
ՍԴՈ-1651 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2017 թվականի հունիսի 7-ին ստորագրված՝ «Հարկման բազայի խեղաթյուրումը և շահույթների տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրերին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի մայիսի 31-ի ՍԴՈ-1651 որոշմամբ որոշել է, որ «2017 թվականի հունիսի 7-ին ստորագրված՝ «Հարկման բազայի խեղաթյուրումը և շահույթների տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրերին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի մայիսի 31-ի ՍԴՈ-1651 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 1/1 (105/1) 2022

յացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴԴ-1651 որոշմամբ «2017 թվականի հունիսի 7-ին ստորագրված՝ «Հարկման բազայի խեղաթյուրումը և շահույթների տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրերին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդ-

վածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.
- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.
- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.
- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարանի դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ավաճի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարանի դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄԻ ՂԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՂՈՒՄԻ ՂԱՏԱՐԱՆ

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության

դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայման-

ների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատարանության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«31» մայիս 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«ԽԱՂԱՂ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ
ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՆԿԱԽ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

Քաղ. Երևան

31 մայիսի 2022 թ.

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՀՀ կառավարության ներկայացուցիչ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Ռ. Խաչատրյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում Անկախ պետությունների համագործակցության մասնակից

պետությունների համատեղ գործունեության իրականացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ կառավարությունն իր՝ 2022 թվականի մարտի 24-ի N 378-Ա որոշմամբ հավանություն է տվել 2018 թվականի նոյեմբերի 2-ին ստորագրված՝ «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համատեղ գործունեության իրականացման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի մարտի 28-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համատեղ գործունեության իրականացման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի նոյեմբերի 2-ին՝ խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում բազմակողմ համագործակցության իրավական և կազմակերպական հիմքերը սահմանելու, ինչպես նաև համատեղ տիեզերական գործունեության որոշակի ուղղությունների մասով համաձայնագրեր ու այլ պայմանավորվածություններ մշակելու և դրանք Կողմերի ու համատեղ գործունեության մասնակիցների միջև կնքելու համար իրավական հիմքի ստեղծմանն աջակցելու նպատակով:

2. Կառավարության 2022 թվականի մարտի 24-ի N 378-Ա որոշման Հավելվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը վավերացնում է Համաձայնագիրը վերապահումով՝ պայմանով, որ Հայաստանի Հանրապետությունն իրեն իրավունք է վերապահում առանձին որոշում կայաց-

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ներու «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համատեղ գործունեության իրականացման մասին» համաձայնագրի դրույթների տարածման վերաբերյալ այն պետությունների նկատմամբ, որոնք միացել են Համաձայնագրին 2018 թվականի նոյեմբերի 2-ից հետո:

3. Համաձայնագիրն ունի անբաժանելի մաս կազմող 3 հավելված՝ Հավելված 1. «Կանոնակարգ Տիեզերքի հարցերով միջպետական խորհրդի մասին», Հավելված 2. «Մտավոր սեփականությունը և գործնական խորհրդապահական տեղեկատվությունը» և Հավելված 3. «Արտադրատեսակների և տեխնոլոգիաների պահպանությանն ուղղված միջոցները»:

Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունն իրականացվում է Կողմերի ներպետական օրենսդրության համապատասխան և միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքների ու նորմերի պահպանմամբ:

Համաձայնագրի շրջանակներում համագործակցության կոնկրետ ծրագրերի և նախագծերի իրականացման կազմակերպական, ֆինանսական, իրավական և տեխնիկական պայմանները համատեղ գործունեության մասնակիցների միջև առանձին համաձայնագրերի (պայմանագրերի) կամ (անհրաժեշտության դեպքում՝ նաև հաշվի առնելով Կողմերի պետությունների միջազգային պարտավորությունները) անմիջապես Կողմերի միջև առանձին համաձայնագրերի առարկա են (այսուհետ՝ առանձին համաձայնագրեր):

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարված լինելու մասին ծանուցումն ուղարկելու հետ միաժամանակ Համաձայնագրի ավանդապահին տեղեկացնել նշանակված ՀՀ իրավասու մարմինների մասին և գրավոր ծանուցել ՀՀ իրավասու մարմինների փոփոխությունների մասին (հոդված 7, կետ 1),
- Համաձայնագիրը կիրարկելիս համատեղ գործունեության ֆինանսավորումն իրականացնել շահագրգիռ հայկական և մյուս Կողմի համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների համար նախատեսվող բյուջեի միջոցների սահմաններում, ինչպես նաև արտաբյուջետային աղբյուրներից (հոդված 8, կետ 1),

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

▪ ապահովել Համաձայնագրի շրջանակներում ստեղծվող կամ օգտագործվող՝ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների համարժեք և արդյունավետ պահպանություն՝ ՀՀ օրենսդրությանը, ՀՀ միջազգային պարտավորություններին և Համաձայնագրի դրույթներին համապատասխան (հոդված 9, կետ 1),

▪ ՀՀ իրավասու մարմինների միջոցով աջակցել համատեղ գործունեությանն առնչվող տեղեկատվության փոխադարձ փոխանակմանը՝ Համաձայնագրին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև ապահովել և երաշխավորել, որ համատեղ գործունեության ՀՀ մասնակիցները կապահովեն մյուս Կողմերի և դրանց համատեղ գործունեության մասնակիցների համար գիտական հետազոտությունների և աշխատանքների արդյունքների հասանելիությունը (հոդված 10, կետ 1),

▪ հաշվի առնելով ՀՀ օրենսդրությունը՝ ապահովել մյուս Կողմերից և նրանց համատեղ գործունեության մասնակիցներից յուրաքանչյուրի շահերի պաշտպանումը, որոնք կապված են համատեղ գործունեության շրջանակներում ՀՀ տարածքում գտնվող նրանց գույքի իրավական և ֆիզիկական պաշտպանության հետ, այդ թվում՝ ապրանքների փոխադարձաբար նախատեսված կատեգորիաների պաշտպանություն առգրավման ցանկացած ձևի և տեսակի կամ կատարողական վարույթի նկատմամբ (հոդված 11, կետ 1),

▪ այն ապրանքները, որոնց ներմուծումը և (կամ) արտահանումն իրականացվում են Համաձայնագրի շրջանակներում, ազատել մաքսային մարմինների կողմից գանձվող մաքսատուրքերից և հարկերից, եթե դա նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային այն պայմանագրերի շրջանակներում ունեցած պարտավորություններով, որոնց մասնակից է Հայաստանի Հանրապետությունը (հոդված 13, կետ 1, պարբերություն 1),

▪ Կողմերի հետ փոխադարձ հիմունքներով հրաժարվել պատասխանատվության և վնասի փոխհատուցման վերաբերյալ ցանկացած պահանջ միմյանց ներկայացնելուց, և համապատասխանաբար՝ փոխադարձ հիմունքներով, ցանկացած մյուս Կողմի և նրա համատեղ գործունեության մասնակիցներին չներկայացնել որևէ դժգոհություն՝ կապված ՀՀ սեփական անձնակազմի անձանց և (կամ) սեփական գույքին վնաս հասցնելու հետ՝ Համաձայնագրի շրջանակներում համատեղ գործունեությանն այդպիսի անձանց մասնակցության և այդպիսի գույքի օգտագործման առնչությամբ (հոդված 14, կետ 1),

▪ ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ աջակցություն ցուցաբերել ցանկացած մյուս Կողմի պետության այն քաղաքացիների գործունեությանը, որոնք ՀՀ տարածք մուտք են գործում և Հայաստանի Հանրա-

պետությունում գտնվում են Համաձայնագրի շրջանակներում համատեղ գործունեություն իրականացնելու համար (հոդված 15),

- որպես ընդունող պետություն հանդես գալու պարագայում ապահովել, որ Տիեզերքի հարցերով միջպետական խորհրդի և դրա աշխատանքային մարմինների նիստերի անցկացումը կազմակերպելու հետ կապված ծախսերը կատարվեն ՀՀ համապատասխան պետական մարմինների միջոցների հաշվին (հավելված 1, կետ VI, ենթակետ 6.1., պարբերություն 1),

- ՀՀ օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին համապատասխան՝ ապահովել համագործակցության շրջանակներում ստեղծվող կամ օգտագործվող՝ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների արդյունավետ պաշտպանությունը, ինչը Համաձայնագրի և Համաձայնագրի 7-րդ հոդվածի 4-րդ կետում նախատեսված առանձին համաձայնագրերի առարկա է (հավելված 2, նախաբանի 1-ին պարբերություն),

- ապահովել, որ համատեղ գործունեության ՀՀ մասնակիցները համատեղ գործունեության մյուս մասնակիցներին ժամանակին տեղեկացնեն մտավոր գործունեության բոլոր արդյունքների մասին, որոնք, որպես մտավոր սեփականության օբյեկտ, ենթակա են իրավական պաշտպանության, և անհապաղ փոխգործակցեն այդ պաշտպանությունն ապահովելուն ուղղված այլ ֆորմալ գործընթացների գրանցման և կատարման նպատակներով (հավելված 2, նախաբանի 2-րդ պարբերություն),

- մտավոր գործունեության՝ համատեղ ստեղծված արդյունքների նկատմամբ իրավունքների բաշխման և մտավոր սեփականության օգտագործման մասով կիրառել և ապահովել, որ համատեղ գործունեության ՀՀ մասնակիցները կիրառեն Համաձայնագրի 2-րդ հավելվածի 2-րդ բաժնի 1-ին կետում սահմանված հիմնական սկզբունքները (հավելված 2, բաժին 2, կետ 1),

- ՀՀ իրավասու և լիազորված մարմինների միջոցով ապահովել, որ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների մասով ցանկացած համատեղ գործունեություն ՀՀ ներկայացուցիչների կողմից իրականացվի արտադրատեսակների և տեխնոլոգիաների պահպանության պլաններով նախատեսված ընթացակարգերի համաձայն, և որ այդպիսի պլանները դիտարկվեն որպես պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների պահպանվածության ու անվտանգության ապահովման միջոցների հաշվառման համակարգի անբաժանելի մաս (հավելված 3, բաժին 2, կետ 1),

- Համաձայնագրի կատարման կարգի համաձայն՝ ապահովել հա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022 ՏԵՂԵԿՎՈՐ

մատեղ գործունեության իրականացման շրջանակներում պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների վերջնական օգտագործման համապատասխանությունն այն դիմումներին, որոնք համատեղ գործունեության մասնակիցները, որպես ներմուծողներ և վերջնական օգտագործողներ, տրամադրում են ՀՀ իրավասու և (կամ) լիազորված մարմիններին (հավելված 3, բաժին 4, կետ 1),

- Կողմերի պետություններում տրամադրված արտահանման լիցենզիաների և (կամ) ՀՀ կողմից տրամադրված թույլտվությունների կատարման պայմանների մշտական պահպանումն ապահովելու համար համապատասխան հարցման առկայության դեպքում խորհրդապահությունը պահպանելու դեպքում փոխադարձ հիմունքներով ընձեռել պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների հետ առնչվելու կարգի հետ կապված տեսչական ստուգում անցկացնելու հնարավորություն, որի օպերատիվ կերպով անցկացնելու ղեկավար սկզբունքները և մանրամասն գործընթացները համաձայնեցվում են Կողմերի իրավասու և (կամ) լիազորված մարմինների կողմից բեռն առաքողների հետ համատեղ (հավելված 3, բաժին 5, կետ 1),

- ՀՀ իրավասու և լիազորված մարմինների միջոցով միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համար, որ համատեղ գործունեության միայն այն մասնակիցները, որոնց՝ պահպանվող արտադրատեսակներին և տեխնոլոգիաներին առնչվելու ընթացակարգեր իրականացնելու իրավունքը հաստատված է արտահանող Հայաստանի Հանրապետությունում գործող կարգով, շուրջօրյա հսկվեն արտահանվող պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների հասանելիությունը դրանց տրանսպորտային փոխադրման, պահպանման, դրանց հետ կապված ցանկացած տեխնոլոգիական աշխատանքի կատարման ամբողջ ընթացքում, համապատասխան դեպքերում՝ ներառյալ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների վերադարձն արտահանող Հայաստանի Հանրապետության տարածք կամ արտահանող Հայաստանի Հանրապետության կողմից հաստատված այլ վայր՝ պահպանվող արտադրատեսակների և տեխնոլոգիաների մասով Հայաստանի Հանրապետությունում տրված արտահանման լիցենզիաների (թույլտվությունների) և (կամ) այլ թույլտվությունների պայմաններին համապատասխան (հավելված 3, բաժին 5, կետ 3, պարբերություն 2),

- ապահովել, որ ներմուծող Կողմի պետության մաքսային մարմիններին տրամադրվեն արտահանող ՀՀ լիազորված մարմնի գրավոր երաշխիքներն այն մասին, որ կնքված բեռնարկերում և այլ փաթեթվածքներում չի պարունակվում որևէ բեռ, որը չի վերաբերում Համաձայնագրի

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1/1 (105/1) 2022 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ

շրջանակներում համատեղ գործունեությանը և, որպես այդպիսին, հայտարարագրված չէ (հավելված 3, բաժին 9, պարբերություն 2),

▪ որպես արտահանող Կողմ՝ ապահովել, որ արտահանող ՀՀ ներկայացուցիչներն աջակցեն օրենսդրությամբ սահմանված միջոցառումների օպերատիվ կերպով անցկացմանը և դրանց նպատակների ապահովմանը (հավելված 3, բաժին 12, կետ 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համատեղ գործունեության իրականացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

31 մայիսի 2022 թվականի
ՍԴՈ-1652

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՊԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ԽԱՂԱՂ
ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ
ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ
31-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1652 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համատեղ գործունեության իրականացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի մայիսի 31-ի ՍԴՈՒ-1652 որոշմամբ որոշել է, որ «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համատեղ գործունեության իրականացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի մայիսի 31-ի ՍԴՈՒ-1652 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1/1 (105/1) 2022
591

դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1652 որոշմամբ «Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման և օգտագործման ոլորտում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համատեղ գործունեության իրականացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդ-

ՍԱԳՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏՄԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

վածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարանի հիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարանի հիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱՂՐԱՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 1/1 (105/1) 2022

դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ են համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1/1 (105/1) 2022

մանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:


Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի

մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«31» մայիսի 2022թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՅԼ ՏՈՒՐՔԵՐԻ,
ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ) ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԵԳՐԵԼՈՒ ԵՎ
ԲԱՇԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ՈՐՊԵՍ ԵԿԱՄՈՒՏ ԵՎՐԱՄԻԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲՅՈՒՋԵՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ
ՈՒՂԴՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՄԻՋՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

31 մայիսի 2022 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե.
Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տե-
ղակալ Ա. Պողոսյանի,

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2021 թվականի նոյեմբերի 16-ին ստորագրված՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ կառավարությունն իր՝ 2022 թվականի ապրիլի 22-ի N 551-Ա որոշմամբ հավանություն է տվել 2021 թվականի նոյեմբերի 16-ին ստորագրված՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի ապրիլի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2021 թվականի նոյեմբերի 16-ին Մոսկվայում՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի մասին» արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) 53-րդ կետի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 5 հավելված) իրագործման նպատակներով:

2. Արձանագրությունը հանդիսանում է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 5 հավելվածը, որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 2014 թվականի հոկտեմբերի 10-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի վավերացմամբ (վավերացվել է 2014 թվականի դեկտեմբերի 4-ին Ազգային ժողովի ԱԺՈՒ-132-Ն որոշմամբ):

3. Համաձայնագիրը ստորագրվել է Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև (այսուհետ՝ Անդամ պետություններ):

4. Անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից Արձանագրության դրույթների պահպանման ստուգումն իրականացվում է յուրաքանչյուր տարի՝ անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների կողմից՝ համատեղ վերահսկիչ միջոցառումների շրջանակներում:

Անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից Արձանագրության դրույթների պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների կազմակերպման և անցկացման ժամանակ անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինները ղեկավարվում են Համաձայնագրով, ինչպես նաև անդամ պետությունների օրենսդրությամբ:

Համատեղ վերահսկիչ միջոցառումների աշխատանքային լեզուն ռուսերենն է:

5. Համատեղ վերահսկիչ միջոցառումների հիմնական նպատակներն են՝ անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվին ներմուծման մաքսատուրքերի՝ բաշխման ենթակա գումարների հաշվեգրման նկատմամբ և անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից անդամ պետությունների բյուջեների միջև բաշխման ենթակա՝ ներմուծման

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

մաքսատուրքերի գումարների ամբողջական ու ժամանակին փոխանցման նկատմամբ, ինչպես նաև անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից՝ յուրաքանչյուր անդամ պետության համար սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվների պահպանման նկատմամբ ստուգումն ու վերահսկողությունը:

6. Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու համար կազմվում է համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու ծրագիր (այսուհետ՝ ծրագիր):

Հաշվետու տարվա ծրագիրը մշակվում է այն անդամ պետության պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմնի կողմից, որը համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու տարում նախագահում է Եվրասիական տնտեսական միության մարմիններին՝ համաձայն «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 8-րդ հոդվածի 4-րդ կետի:

Ծրագրով սահմանվում են համատեղ վերահսկիչ միջոցառման առարկան, օբյեկտները, այդ միջոցառման շրջանակներում լուծվող հարցերը, օբյեկտներում դրա անցկացման ժամկետները, անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների ներկայացուցիչներից կազմված՝ վերահսկողության համատեղ խմբի կազմը (այսուհետ՝ վերահսկողության համատեղ խումբ), անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների կոլեգիաների (խորհուրդների, լիազորված անձանց) (այսուհետ՝ համատեղ կոլեգիա) համատեղ նիստի անցկացման ամսաթիվն ու վայրը:

Ծրագիրը համաձայնեցվում է անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների հետ և հաստատվում դրանց ղեկավարների (նրանց կողմից լիազորված անձանց) կողմից՝ հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 1-ից ոչ ուշ:

7. Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագրով ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները.

- ապահովել, որ համատեղ վերահսկիչ միջոցառումների շրջանակներում տեղեկատվությունն ու փաստաթղթերը ներկայացվեն ռուսերենով կամ ՀՀ պետական լեզվով (կցելով դրանց ռուսերեն թարգմանությունը) (Հոդված 1, 3-րդ կետ, երկրորդ պարբերություն),

- ապահովել, որ յուրաքանչյուր տարի ՀՀ լիազորված մարմնում անցկացվեն համատեղ վերահսկիչ միջոցառումներ, որոնք կավարտվեն հաշվե-

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ

տու տարվան հաջորդող տարվա սեպտեմբերի 1-ից ոչ ուշ (Հոդված 3, 1-ին կետ, առաջին պարբերություն),

- ՀՀ պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմնի ներկայացուցիչների՝ համատեղ վերահսկիչ միջոցառումներ անցկացնելու նպատակով գործուղման ծախսերը կատարել ՀՀ բյուջեի միջոցների հաշվին (Հոդված 3, 1-ին կետ, երկրորդ պարբերություն),

- ապահովել, որ ՀՀ պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինները, ՀՀ տարածքում համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացվելու պարագայում, ՀՀ լիազորված մարմիններ ուղարկեն ծրագիրը՝ կցելով նշված միջոցառման կազմակերպման ու անցկացման համար անհրաժեշտ փաստաթղթերը (Հոդված 3, 2-րդ կետ, հինգերորդ պարբերություն),

- ապահովել, որ ՀՀ լիազորված մարմինները վերահսկողության համատեղ խմբի անդամների համար ապահովեն աշխատանքի պատշաճ պայմաններ (կազմակերպեն լիազորված մարմնի տարածք մուտքի հնարավորությունը, տրամադրեն առանձին տարածք, կազմտեխնիկա, կապի ծառայություններ) և աջակցեն համատեղ վերահսկիչ միջոցառման անցկացմանը (Հոդված 3, 3-րդ կետ, առաջին պարբերություն),

- երաշխավորել վերահսկողության համատեղ խմբի ՀՀ անդամների կողմից գտնվելու վայրի պետության օրենսդրության, ինչպես նաև վերահսկիչ միջոցառումների անցկացման՝ այդ պետությունում կիրառվող կանոնների ու ընթացակարգերի պահպանումը (Հոդված 3, 3-րդ կետ, երրորդ պարբերություն),

- ապահովել, որ ՀՀ լիազորված մարմինները վերահսկողության համատեղ խմբի անդամներին տրամադրեն ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվեգրմանն ու բաշխմանը, անդամ մյուս պետությունների բյուջեներ որպես եկամուտ դրանց փոխանցմանն առնչվող տեղեկատվությունն ու փաստաթղթերը (Հոդված 3, 4-րդ կետ, առաջին պարբերություն),

- ապահովել, որ Համաձայնագրի 3-րդ հոդվածի 4-րդ կետի երկրորդ պարբերության համաձայն հարցվող տեղեկատվությունն ու փաստաթղթերը կամ պարզաբանումները (հարցվող տեղեկատվությունն ու փաստաթղթերը տրամադրելու անհնարինության դեպքում) անդամ պետության պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմնի հարցման մեջ նշված ժամկետներում՝ թղթային կրիչով՝ պատճենների տեսքով և (կամ) էլեկտրոնային տեսքով, ուղարկվեն այն անդամ պետության պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մար-

մին, որի տարածքում անցկացվում է համատեղ վերահսկիչ միջոցառումը (Հոդված 3, 4-րդ կետ, երրորդ և չորրորդ պարբերություններ),

- ապահովել, որ պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիքի շարքին դասվող տեղեկություններ պարունակող տեղեկատվության ու փաստաթղթերի՝ թղթային կրիչով և (կամ) էլեկտրոնային տեսքով փոխանցումն իրականացվի այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում անցկացվում է համատեղ վերահսկիչ միջոցառումը (Հոդված 3, 5-րդ կետ, առաջին պարբերություն),

- երաշխավորել, որ Համաձայնագրի 3-րդ հոդվածի 5-րդ կետի առաջին պարբերությունում նշված տեղեկությունները առանց այդ տեղեկությունները տրամադրած լիազորված մարմնի, կենտրոնական մաքսային մարմնի կամ ազգային (կենտրոնական) բանկի գրավոր համաձայնության չեն օգտագործվի դրանց հարցման և տրամադրման նպատակներից բացի այլ նպատակներով. այդպիսի տեղեկությունների հրապարակման համար պատասխանատվությունը սահմանվում է այն պետության օրենսդրությանը համապատասխան, որի քաղաքացին է տվյալ տեղեկությունները հրապարակած անձը, և անդամ պետությունների միջև հարաբերություններում կիրառվող միջազգային պայմանագրերով (Հոդված 3, 5-րդ կետ, երկրորդ պարբերություն),

- ապահովել, որ որպես Համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերության մեջ նշված՝ անդամ պետության պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմին, ֆինանսական վերահսկողության ՀՀ բարձրագույն մարմինը հաշվետու տարվան հաջորդող տարվա նոյեմբերի 1-ից ոչ ուշ, համատեղ վերահսկիչ միջոցառումն անցկացնելու արդյունքներով կազմի ամփոփ հաշվետվության նախագիծ, որում ներառվում են ստուգման ակտերում շարադրված փաստերը, տեղեկատվության և փաստաթղթերի, այդ թվում՝ անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինների հարցումներով ստացված տեղեկատվության և փաստաթղթերի վերլուծության արդյունքները, և անդամ պետությունների լիազորված մարմինների գրավոր առարկությունների (առկայության դեպքում) ուսումնասիրությունները, եզրահանգումները և հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ առաջարկները, ինչպես նաև ոչ ուշ, քան համատեղ կոլեգիայի նիստի անցկացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ, Եվրասիական տնտեսական հանձնաժողով ուղարկի այդ նիստին դրա ներկայացուցիչների մասնակցության հրավեր (նշելով քննարկման համար նախատեսվող հարցերը) (Հոդված 4, 3-րդ կետ, առաջին և երկրորդ պարբերություններ),

- ապահովել, որ ՀՀ պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինը ոչ ուշ, քան համատեղ կոլեգիայի նիստի անցկացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ, ՀՀ լիազորված մարմիններ, կենտրոնական մաքսային մարմիններ, ազգային (կենտրոնական) բանկ ուղարկի համատեղ կոլեգիայի նիստին դրանց ներկայացուցիչների՝ յուրաքանչյուր լիազորված մարմնի, կենտրոնական մաքսային մարմնի, ազգային (կենտրոնական) բանկի իրավասության շրջանակներում մասնակցության հրավերներ (նշելով քննարկման համար նախատեսվող հարցերը) (Հոդված 4, 3-րդ կետ, երրորդ պարբերություն),

- ապահովել, որ ՀՀ կառավարությունն ամփոփ հաշվետվությունն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում այն ուղարկի Հայաստանի Հանրապետության՝ ամփոփ հաշվետվության մեջ նշված պետական մարմիններ՝ կատարման համար (Հոդված 5, 1-ին կետ, առաջին պարբերություն),

- ապահովել, որ ՀՀ պետական մարմինները վերացնեն հայտնաբերված խախտումները, միջոցներ ձեռնարկեն դրանում նշված առաջարկների իրագործումն ապահովելու համար և դրա մասին տեղեկացնեն ՀՀ կառավարությանն ու պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմնին՝ ամփոփ հաշվետվության մեջ սահմանված ժամկետների համապատասխան (Հոդված 5, 1-ին կետ, երկրորդ պարբերություն),

- ապահովել, որ ՀՀ պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմինը ՀՀ պետական մարմինների կողմից տեղեկատվությունն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման և առաջարկների իրագործման արդյունքների մասին տեղեկացնի մյուս անդամ պետությունների պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմիններին և Եվրասիական տնտեսական հանձնաժողովին (Հոդված 5, 1-ին կետ, չորրորդ պարբերություն):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2021 թվականի նոյեմբերի 16-ին ստորագրված՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու

1/1 (105/1) 2022
 ◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ
 ◆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

31 մայիսի 2022 թվականի
ՍԴՈ-1653

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՅԼ ՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ) ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԵԳՐԵԼՈՒ ԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ, ԴՐԱՆՔ ՈՐՊԵՍ ԵԿԱՄՈՒՏ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈՒ-1653 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2022 թվականի մայիսի 31-ի ՍԴՈՒ-1653 որոշմամբ որոշել է, որ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2022 թվականի մայիսի 31-ի ՍԴՈՒ-1653 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ **◆** 1/1 (105/1) 2022 **◆** ՏԵՂԵԿՎՈՐ

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1653 որոշմամբ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և վճարների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի պահպանման հարցերին ուղղված համատեղ վերահսկիչ միջոցառումների անցկացման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չէմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը¹:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

¹ Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված:

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների:

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

տարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու

սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

էլեկտրոնային փաստաթուղթ՝ տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

էլեկտրոնային թվային ստորագրություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝

օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1/1 (105/1) 2022

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվել դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝

◆ 1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փյույվ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փյույվ դեպքում սահմանադրական դատարանի կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է փրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շփոթելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«31» մայիսի 2022թ.

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԵԼԱՌՈՒՍԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆԻՆ**

2022 թվականի հունվարի 19-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Բելառուսի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ալեքսանդր Կոնյուկին:

Ողջունելով դեսպան Կոնյուկին՝ Արման Դիլանյանը հույս է հայտնել, որ հանդիպումը նոր լիցք կհաղորդի երկու երկրների ավանդաբար բարեկամական հարաբերություններին և կնպաստի դատաիրավական ոլորտում երկկողմ և բազմակողմ փոխգործակցության խորացմանը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ Ալեքսանդր Կոնյուկը վստահեցրել է, որ իր դիվանագիտական գործունեության ընթացքում կգործադրի անհրաժեշտ բոլոր ջանքերը՝ երկու երկրների սահմանադրական դատարանների հարաբերությունները և համագործակցությունն էլ ավելի խորացնելու և զարգացնելու համար:



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՐ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ ԼԻՆ ԹՐԵՅՍԻԻ ՀԵՏ

2022 թվականի հունվարի 27-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների արտակարգ և լիազոր դեսպան Լին Թրեյսիին, որին ուղեկցում էին ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության ժողովրդավարության, կառավարման և իրավունքի գերակայության ծրագրերի պատասխանատու Քելի Սթրիքլենդը, ԱՄՆ դեսպանության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության (ԹՊԻՀ) գրասենյակի տնօրեն Ալեքսիս Հաֆթվանին և ԱՄՆ դեսպանության քաղաքական և տնտեսական բաժնի ղեկավարի տեղակալ Քիմբերլի Ջեպֆելը:



Ողջունելով ամերիկացի գործընկերներին՝ Արման Դիլանյանը բարձր է գնահատել հայ-ամերիկյան փոխգործակցությունը և դատաիրավական ոլորտում երկկողմ օրակարգի իրագործման ուղղությամբ շարունակապես տարվող աշխատանքը: Արման Դիլանյանը նշել է, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն ունի ներքին բարեփոխումների հավակնոտ օրակարգ և հաստատակամ է այն կյանքի կոչելու հարցում, և միջազգային գործընկերների, այդ թվում՝ ԱՄՆ օժանդակությունն էլ ավելի կիսթանի դրանց բարեհաջող իրականացումը:

Իր հերթին դեսպան Թրեյսին շնորհակալություն է հայտնել հանդիպման հնարավորության համար և նշել, որ ԱՄՆ վարչակազմը հանձնառու է շարունակել սերտ համագործակցությունը Հայաստանի Հանրապետության հետ՝ արդարադատության, իրավունքի գերակայության և ժողովրդավարական հաստատությունների ամրապնդման ոլորտներում: Այս համատեքստում դեսպան Թրեյսին կարևորել է Բարձր դատարանում մեկնարկած ներքին բարեփոխումների գործընթացը:

Հանդիպման ընթացքում զրուցակիցները մտքեր են փոխանակել համատեղ ծրագրերի իրականացման հեռանկարների շուրջ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ 1/1 (105/1) 2022

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

2022 թվականի հունվարի 27-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆուկուչիմա Մասանորիին:

Ողջունելով հյուրին՝ Արման Դիլանյանը կարևորել է հայ-ճապոնական միջպետական բազմաոլորտ



համագործակցությունը: Արման Դիլանյանը հույս է հայտնել, որ այս հանդիպումը որակապես նոր լիցք կհաղորդի նաև դատախիրավական ոլորտում հայ-ճապոնական երկխոսության ու գործընկերության զարգացմանը:

Դեսպան Մասանորին շնորհակալություն է հայտնել Արման Դիլանյանին հանդիպման հնարավորության համար՝ նշելով, որ ճապոնական կողմը հանձնառու է աջակցել Հայաստանին ժողովրդավարական արժեքների ամրապնդման գործում: Դեսպան Մասանորին կարևորել է նաև հայ-ճապոնական մշակութային ու գիտական կապերի ամրապնդումը:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել իրավական կապերի ակտիվացման շուրջ: Երկուստեք կարևորվել են Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի և Ճապոնիայի գերագույն դատարանի միջև երկխոսության հետագա զարգացումը և փոխադարձ կապերի ամրապնդումը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔ ԷՋԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ



2022 թվականի փետրվարի 4-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը և Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակն իրականացրել են Սահմանադրական դատարանի նոր պաշտոնական կայքէջի շնորհանդեսը:

Շնորհանդեսի ընթացքում և Սահմանադրական դատարանի հիմնադրման 26-րդ տարեդարձի առթիվ միջոցառման մասնակիցներին ողջունի ուղերձով դիմեց Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը: Շնորհավորական ուղերձում Արման Դիլանյանը մասնավորապես նշեց, որ իր գործունեության 26 տարիների ընթացքում Բարձր դատարանն անցել է ինստիտուցիոնալ զարգացման կարևոր ճանապարհի և մշտապես յուրաքանչյուր իրավիճակում հավատարիմ է մնացել իր գլխավոր առաքելությանը՝ սահմանադրական արդարադատության միջոցով Սահմանադրության գերակայության ապահովմանը: Սահմանադրական դատարանի նախագահը շնորհակալություն հայտնեց Եվրոպացի գործընկերներին՝ Սահմանադրական դատարանում իրականացվող ներքին բարեփոխումներին ցուցաբերած աջակցության ու խորհրդատվության համար: Ողջունի խոսքերով հանդես եկան նաև Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Անդրեա Վիկտորինը, Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Մարտինա Շմիդտը և Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 1/1 (105/1) 2022

տնօրինության մարդու իրավունքների իրականացման, արդարադատության ու իրավական համագործակցության չափանիշների վարչության համագործակցության ծրագրերի բաժնի ղեկավարի տեղակալ Լիլիթ Դանեղյանը: Միջոցառմանը մասնակցում էին գործադիր, օրենսդիր և դատական իշխանության ներկայացուցիչներ, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

Սահմանադրական դատարանի նոր կայքը խթանելու է Բարձր դատարանի հանրային կապերը, բարձրացնելու է դրա գործունեության թափանցիկությունը ու հանրային հաշվետվողականությունը՝ հասցնելով դրանք լավագույն Եվրոպական չափանիշներին: Այսուհետ կայքի այցելուները կկարողանան նաև օգտվել Սահմանադրական դատարանի որոշումների որոնման նոր համակարգից ու ընթացիկ գործերի ժամանակացույցից, որոնք ևս պատրաստվել են տվյալ ծրագրի շրջանակներում:

Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը համագործակցում են «Գործընկերություն հանուն լավ կառավարման II» ծրագրային ձևաչափի շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետությունում դատախիրավական բարեփոխումների իրականացմանն աջակցելու և դատական համակարգի նկատմամբ քաղաքացիների վստահությունը բարձրացնելու նպատակով տեղեկատվության մատչելիությունն ապահովելու ուղղությամբ:

Բարձր դատարանի նոր վեբկայքն ստեղծվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից՝ Գործընկերություն հանուն լավ կառավարման (ԳԼԿ II) ծրագրային ձևաչափի շրջանակներում ֆինանսավորվող և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող՝ Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության անկախության և արհեստավարժության ամրապնդումը» ծրագրի ֆինանսական աջակցությամբ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆ ՍԵՐԳԵՅ ԿՈՊԻՐԿԻՆԻՆ

2022 թվականի փետրվարի 14-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինին:



Հանդիպման մեկնարկին Արման Դիլանյանը նշել է, որ Հայաստանի և Ռուսաստանի

սահմանադրական դատարանների համագործակցության օրակարգը բոլոր ոլորտներում հազեցած է, ինչը բխում է երկու երկրների բարեկամական և դաշնակցային հարաբերություններից:

Հանդիպման ընթացքում գրուցակիցներն անդրադարձել են իրավական ոլորտում հայ-ռուսական համագործակցության հեռանկարներին և երկու երկրների սահմանադրական դատարանների միջև բարձր մակարդակի փոխայցելությունների կազմակերպման հնարավորությանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 1/1 (105/1) 2022

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ

ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՎԱՆԱԾՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ



2022 թվականի մարտի 16-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Վանաձորի պետական համալսարանի իրավագիտության բաժնի ուսանողներին:

Սահմանադրական դատարանի նախագահն ուսանողների հետ հանդիպման ընթացքում ողջունել է նրանց՝ Բարձր դատարան ճանաչողական և ուսուցողական այց կատարելու նախաձեռնությունը: Հանդիպման ընթացքում Արման Դիլանյանը պատասխանել է ուսանողների հարցերին և ներկայացրել Սահմանադրական դատարանի լիազորությունները, գործերի քննության կարգը, Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների առանձնահատկությունները, ինչպես նաև անդրադարձել է պետական կառավարման համակարգում դատական իշխանության դերին:

Հանդիպման ավարտին Արման Դիլանյանը հորդորել է երիտասարդներին ապագայում իրենց համալսարանական գիտելիքները ծառայեցնել ի նպաստ Հայաստանի Հանրապետության զարգացման:

1/1 (105/1) 2022

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ



ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 1/1 (105/1) 2022

2022 թվականի մարտի 30-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և հասարակագիտության ֆակուլտետի ուսանողներին, որոնք ճանաչողական այց էին կատարել Բարձր դատարան:

Նիստերի դահլիճում ողջունելով ուսանողներին՝ Արման Դիլանյանը պատասխանել է ուսանողներին հետաքրքրող հարցերին, որոնք մասնավորապես վերաբերել են Սահմանադրական դատարանի սահմանադրական առաքելությանը և լիազորությունների շրջանակին, կառուցվածքին, դիմումների քննությանը, ինչպես նաև պետական կառավարման համակարգում դատական իշխանության դերին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԾԱՂԿԱԶՈՐՈՒՄ



2022 թվականի մարտի 4-ին Ծաղկաձորում մեկնարկել է Սահմանադրության անմիջական կիրառման և դատարանների կողմից Սահմանադրական դատարան դիմելու մեթոդաբանական առանձնահատկությունները խորագրով երկօրյա աշխատաժողովը: Միջոցառումը կազմակերպվել է Սահմանադրական դատարանի նախաձեռնությամբ՝ Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության կողմից ֆինանսավորվող և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) ղեկավարությամբ Կոնսորցիումի կողմից իրականացվող «Արդարադատության համակարգի ամրապնդման» ծրագրի շրջանակներում: Երկօրյա աշխատաժողովին մասնակցում են Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի և այլ ատյանների դատավորներ, ինչպես նաև Սահմանադրական դատարանի աշխատակազմի ներկայացուցիչներ:

Իր բացման խոսքում Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը շնորհակալություն է հայտնել եվրոպացի գործընկերներին նման ձևաչափով միջոցառման կազմակերպմանն աջակցելու համար: Անդրադառնալով աշխատաժողովի քննարկման

թեմաներին՝ Արման Դիլանյանը վստահություն է հայտնել, որ ընտրված աշխատանքային ձևաչափը ստեղծում է լավ հարթակ՝ արդյունավետ մասնագիտական քննարկումներ ու կարծիքների փոխանակում իրականացնելու համար:

Հայաստանում «Արդարադատության համակարգի ամրապնդում» ծրագրի ղեկավար Փիթեր Գյորթլերն իր բացման խոսքում ողջունել է միջոցառման մասնակիցներին՝ շնորհակալություն հայտնելով նման ներկայացուցչական մասնակցություն ապահովելու համար:

Երկօրյա սեմինարի ընթացքում քննարկվելու են սահմանադրական նորմերի անմիջական կիրառման մեթոդաբանական և Սահմանադրության մեկնաբանության մեթոդաբանական առանձնահատկությունները, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրացման մեթոդաբանական առանձնահատկությունները և դատարանների կողմից Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումներին առաջադրվող պահանջները և դրան առնչվող միջազգային փորձը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ Է ԿԱՏԱՐԵԼ ՍՏՐԱՍՔՈՒՐԳ



2022 թվականի մարտի 8-9-ը Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին Սահմանադրական դատարանի դատավոր Վահե Գրիգորյանը և Սահմանադրական դատարանի նախագահի օգնական Արմենակ Մինասյանցը, Եվրոպայի խորհրդի հրավերով աշխատանքային այց է կատարել Ստրասբուրգ: Աշխատանքային այցի շրջանակներում Սահմանադրական դատարանի պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի տեղակալ Բյորն Բերգեի, Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության հարցերով գլխավոր տնօրեն Քրիստոս Զակունոպուլոսի, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի համագործակցության ծրագրերի վարչության տնօրեն Լիլյա Գրետարսոդոտիի և Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի քարտուղարի տեղակալ Շնուց Դյուդի հետ: Հանդիպումների ընթացքում երկուստեք կարևորվել է իրավունքի գերակայության, ժողովրդավարական արժեքների ամրապնդման, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության ոլորտներում Սահմանադրական դատարանի առանցքային դերը: Աշխատանքային այցը նախապատրաստվել էր Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող՝ **«Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը. Հայաստանում դատական իշխանության անկախության և արհեստավարժության ամրապնդումը»** ծրագրի աջակցությամբ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ ◆ 1/1 (105/1) 2022

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 372/2-14 որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈՒՅԱՆ,
Ա. ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ, Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Է.
ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝
Ի.գ.թ., դոցենտ Ա. Փխրիկյան

Խմբագիր՝
Ս. Խաչատրյան


Ստորագրված է տպագրության՝ 20.09.2022թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը՝ 70X100 1/16
Տպաքանակը՝ 100 օրինակ

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81 (189)
E-mail: armlaw@concourt.am
<http://www.concourt.am>

Вестник Конституционного Суда Республики Армения N1/1(105/1)2022
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N1/1(105/1)2022
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N1/1(105/1)2022

Խմբագրության հասցե՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am
www.concourt.am

ISSN 8888-0000



ABC-abc-1234

